ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

11

# ԱԽԱԼՑԽԱ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ














ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Պրոֆ. դր. Ա. Ղազարյան (Մոսկվա), պրոֆ. դր. Ա. Մութաֆյան (Փարիզ), պրոֆ. դր. Հ. Հոֆրիխթեր (Քայզերսլաութերն), պրոֆ. դր. Ժ. Փիփըր (Աախեն), պրոֆ. դր. Հ. Սուրուգյան (Կահիրե), պրոֆ. դր. Լ. Ջեքիյան (Վենետիկ), պրոֆ. դր. Մ. Հասրաթյան (Երևան)

Աշխատությունը հրատարակվում է ՀՃՈՒ (RAA) գիտական խորհրդի երաշխավորությամբ

**ՀՃՈՒ հ/կ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
**Գիրք ԺԱ**

# ԱԽԱԼՑԽԱ

(Սամցխե նահանգ)

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Վրացերեն վիմագրերի և գիտական գրականության քննությունը՝
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱՆԱՆՅԱՆԻ

# AKHALTSKHA

(Samtskhe Province)

SAMVEL KARAPETYAN

Critical study of the Georgian-language lapidary inscriptions and scientific literature by
ALEXANDRE KANANYAN

# АХАЛЦИХЕ

(область Самцхе)

САМВЕЛ КАРАПЕТЯН

Критическое исследование грузиноязычных лапидарных надписей
и научной литературы
АЛЕКСАНДРА КАНАНЯНА

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
2008

ՀՏԴ 941(479.25) : 72
ԳՄԴ 63.3 (2Հ)+85.113(2Հ)
Կ - 294

Գիտական խմբագիր՝ **Պավել Չոբանյան**
*պատմ. գիտ. դոկտոր*

Կ - 294 Կարապետյան Սամվել
**Ախալցխա**.— գիրք ԺԱ.— Եր.: Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպություն, 2008.— 368 էջ

Փաստական նյութի համալիր ուսումնասիրության հիման վրա ներկայացված են պատմական Հայաստանի հյուսիսային սահմանագլխին՝ հայ-վրացական շփման գոտում գտնվող Ախալցխա (Սամցխե) նահանգի բնակավայրերի պատմությունը և պատմական հուշարձանները: Առանձնահատուկ տեղ է հատկացված երկրամասում պահպանված հայերեն վիմագրերի վերծանություններին:

Հասցեագրվում է հայ և վրաց ժողովուրդների պատմությամբ և մշակույթով հետաքրքրվողներին և ընթերցող լայն հասարակությանը:

The work represents a thorough research on the basis of factual material acquired during fieldwork and investigation in various archives. It treats the history of the villages, towns and cultural monuments of Akhaltskha (Samtskhe) District situated on the northern borderline of Historical Armenia, in the contact zone between the Republics of Armenia and Georgia. A special emphasis is laid on the Armenian lapidary inscriptions preserved in the district.

Intended for the general reader and those interested in the history and culture of the Armenian and Georgian nations.

На основе комплексного исследования представлена история расположенной на северной границе исторической Армении - в зоне армяно-грузинских контактов-области Ахалцих (Самцхе) и ее исторических памятников. Особое место в исследовании отведено дешифровке сохранившихся на этой территории армянских лапидарных надписей.

Книга предпослана лицам, интересующимся историей и культурой армянского и грузинского народов, а также широкому кругу читателей.

Կ ԳՄԴ 63.3 (2Հ)+85.113(2Հ)

ISBN 978-99941-875-0-8

© Սամվել Կարապետյան
© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հ/կ

*Նվիրվում է Ախալցխայի հերոսամարտի 90-ամյակին (1918-2008)*

*Посвящается 90-летию героической ахалцихской битвы (1918-2008)*

*Dedicated to the 90th (1918 to 2008) anniversary of the heroic struggle of Akhaltskha*


Աշխատությունը պատրաստվել է ՀՃՈՒ (RAA)
հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ
և «Ազնավուրը Հայաստանին» բարեգործական հիմնադրամի
օժանդակությամբ 1983-2008 թթ. ժամանակահատվածում
իրականացված գիտարշավների, հայ և օտար գրավոր
աղբյուրների հավաքագրման համալիր
ուսումնասիրությունների հիման վրա

Նախահրատարակչական և օժանդակ աշխատանքներն
իրականացվել են «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի
հովանավորությամբ

TUFENKIAN
FOUNDATION

Տպագրությունն իրականացվել է «Գյուլբենկյան»
բարեգործական հիմնադրամի հովանավորությամբ

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

*Հեղինակն իր երախտագիտությունն է հայտնում ծղալթթիլացի Լուիզա Մոսոյանին, ով գրքի ստեղծման ողջ ընթացքում տրամադրած բազմաթիվ նյութերով էապես հարստացրեց սույն աշխատությունը, Խաչատուր Գիչյանին, ով լավագույնս ուղղորդեց մեզ մեր սկսած գործի սկզբից:*

*Տարաբնույթ աջակցության համար պարտական ենք նաև բազմափորձ կյանքով իմաստնացած թանկագին ավագ ընկերոջը՝ Սեպուհ Սաղաթելյանին, մահապարտ ընկերոջս՝ Գագիկ Գինոսյանին, մեր բոլոր այն հայրենակիցներին, ովքեր անցած քառորդ դարի ընթացքում բազմաբնույթ աջակցությամբ սատարել են սույն աշխատության ստեղծման գործին:*

*Շնորհակալություն ենք հայտնում նաև աշխատության գիտական խմբագիր դ-ր Պ. Չոբանյանին, վրացերեն նյութերը մեզ հասու դարձրած Ալ. Քանանյանին և ՀՃՈՒ ՀԿ աշխատակազմին:*

*Մեր խորին երախտագիտությունն ենք ուղղում նաև գրքի հրատարակության հովանավորներին և «Տիգրան Մեծ» հրատարակչատան աշխատակազմին:*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Հեղինակի կողմից ... 7
Նախաբան ... 8
ԱԲԱԹԽԵՎ ... 15
ԱԲԱՍԹՈՒՄԱՆ ... 19
ԱԽԱԼՑԽԱ ... 29
Տեղադրություն ... 29
Անվան ստուգաբանություն ... 29
Բնական աղետներ ... 29
*Երկրաշարժ* ... 30
*Հեղեղումներ* ... 30
*Հրդեհ* ... 30
Պատմություն ... 31
Ախալցխայի իշխանական տան ներկայացուցիչները ... 31
*Սարգիս իշխան* ... 31
*Շալվա* ... 31
*Իվանե (Ղվարղվարե)* ... 32
*Բոցո Ջաղեցի* ... 32
*Դավիթ Իվանյան* ... 32
*Իվանե (Պապա)* ... 32
*Սարգիս Ջաղեցի (Ջաղելի)* ... 32
*Բեքա Սարգսյան* ... 33
Ախալցխան կիսանկախ աթաբեկության ժամանակաշրջանում (1314/1334-1463) ... 33
Ախալցխան ԺԵ դարում ... 34
Ախալցխան անկախ աթաբեկության ժամանակաշրջանում (1463-1580) ... 34
Սաաթաբագոն անկախության վերջին շրջանում ... 35
Ախալցխայի վերջնական նվաճումն ու միացումը օսմանյան տերությանը 1583 թ. ... 36
Թուրքական տիրապետության առաջին տասնամյակներն Ախալցխայում (1583-1626) ... 37
Ախալցխան թուրք-պարսկական փոփոխական տիրապետության շրջանում ... 38
Ախալցխայի փաշայությունը ... 39
Ախալցխան ԺԸ դարի 40-80-ական թվականներին 40
Ռուսական ռազմական առաջին «աջակցությունը» վրացիներին 1770 թ. ... 41
Ռուսների՝ Ախալցխան գրավելու անհաջող փորձերը 1807, 1810 թվականներին ... 42
Ախալցխան 1828-1829 թվականների ռուս-թուրքական պատերազմի նախօրեին ... 42
Ախալցխայի գրավումը 1828 թ. օգոստ. 9-27-ն ընկած ժամանակահատվածում ... 42
Դեկաբրիստների վկայությունները Ախալցխայի գրավման մասին ... 44
Ախալցխան ետ գրավելու թուրքերի փորձը 1829 թ. փետրվարին ... 45
Ադրիանապոլսի պայմանագիրը ... 47
Նվաճված երկրամասերը վերաբնակեցնելու ռուսական ծրագիրը ... 48
Հայրենադավ գաղթի սկզբնավորումն ու ծավալումը .. 49
Գաղթը կասեցնելու ապարդյուն փորձեր ... 51
Գաղթը մերժող հայրենիքին կառչած ուժերը ... 52
Հայրենադավ գաղթի ընթացքը ... 52
Գաղթականների նպաստավորում ... 55
Հայրենադավ գաղթի հետևանքները ... 55
Մեծ գաղթի հետագա անդրադարձները ... 56
Դիմումներ Պասկևիչին ... 56
Կացությունը հայրենադավ գաղթին հաջորդած տարիներին ... 57
Ախալցխան նվաճելու նոր փորձ 1833 թ. ... 59
Սոցիալական ընդվզում 1834 թ. ... 59
Ախալցխայի ճակատամարտը 1853 թ. ... 59
1877 թ. ընդվզումը ... 60
Ռուսական իշխանությունների կեցվածքը 1903-1906 թվականներին և դրանց անդրադարձն ու արձագանքը Ախալցխայում ... 61
Ախալցխայի և գավառի հայերն ու Արևմտյան Հայաստանի ազատագրման գործը ... 61
*Ախալցխացի Մարտո* ... 62
*Ախալցխացի Սերգո* ... 62
*Ախալցխացի Միսակ* ... 62
*Ախալցխացի Վարդան* ... 62
*Աքմաչյան (Էքմեքչյան) Գրիգոր* ... 62
*Հաջի Լևոն* ... 62
*Պուլղուրյան Հովհաննես (Օննիկ)* ... 62
*Սանթոյան-Հովակիմյան Լևոն* ... 63
*Սուճյան Արտաշես* ... 63
Արտակարգ միջոցառումներ ... 63
Ախալցխայի 1917-1918 թթ.ինքնապաշտպանությունը 63
Ախալցխան և Բաթումի պայմանագիրը ... 65
Հիշարժան տարեթվեր ... 66
Կառուցապատում ... 66
Նոր քաղաքամասը ... 68
Բնակելի տներ ... 72
Շուկա ... 74
Քաղաքային այգի Խասպախչա ... 74
Քաղաքագլուխներ ... 74
Բնակչություն ... 77
Հայ առաքելականներ ... 79
Հայ կաթոլիկներ ... 81
Թյուր տեսակետներ ... 85
Վրացիներ ... 85
Թուրքեր ... 86
Հրեաներ ... 87
Հույներ ... 87
Գործածված լեզուները ... 87
Ազգատոհմեր ... 87
Տարազ ... 89
Անվանի ախալցխացիներ ... 90
*Ազնավուրյան Միքայել* ... 90
*Աղաջանյան Ղազարոս* ... 90
*Բագրատունի Հակոբ* ... 90
*Գայֆեջյան Վահրամ* ... 91
*Գինոսյան Գագիկ* ... 91
*Զաքարյան Լուսինե* ... 91
*Էփրիկյան Սուքիաս* ... 91
*Ինճիկյան Արամ* ... 91
*Ինճիկյան Հովհաննես* ... 91

*Լուսինյան Արեգ* .....91
*Խաչվանքյան Կարպ* .....91
*Կոչոյան Հակոբ* .....92
*Ղազարյան Շահում* .....92
*Ղանալանյան Արամ* .....92
*Մալխասյանց Ստեփան* .....92
*Մանանդյան Հակոբ* .....92
*Մանուկյան Մամիկոն* .....92
*Մեսչյան Ստեփան* .....92
*Սաֆրազյան Ալմա* .....92
*Սուջյան Կարո* .....92
*Սուրենյանց Տեր-Զաքարյան Հակոբ* .....92
*Սուրենյանց Վարդգես* .....93
*Վարդանյանց Վարդան աղա* .....93
*Օրբելյանով Մ.* .....93
*Ֆանարջյան Բարդուղիմեոս* .....93
Ախալցխացիներն այլուր .....93
Արհեստ և առևտուր .....94
Տպարաններ .....98
Մամուլ .....99
Լուսանկարչություն .....99
Թատրոն .....99
Կինոթատրոն .....101
Ակումբ .....101
Մանկական ակումբ .....101
Խաղեր .....101
Բարեգործական միություններ .....101
Առողջապահություն, համաճարակներ .....102
Հիվանդանոց .....103
Հակաալկոհոլային ընկերություն .....104
Որբանոց .....104
Դպրոցներ .....104
Հայկական դպրոցներ .....104
*Կարապետյան դպրոց* .....106
*Եղիշե Մեծատունյանցի «Բուրաստան» դպրոց* .....110
*«Նոր Արշալույս» իգական դպրոց* .....110
*Ստեփանոսյան դպրոց* .....111
*Մարտիրոս քահանա Մեծատունյանցի դպրոց* .....111
*Վարդանանց արական դպրոց* .....111
*Ժողովրդական դպրոց* .....113
*Եղիսաբեթյան դպրոց* .....113
*Սբ. Գրիգոր Լուսավորիչ արական դպրոց* .....116
*Շուշանիկյան դպրոց* .....116
*Սահականուշյան դպրոց* .....116
*Արդույթյան դպրոց* .....116
Հայ կաթոլիկե դպրոցներ .....116
*Սբ. Աստվածածնի Վերափոխման դպրոց* .....116
*Սբ. Հովհաննես եկեղեցու հայ կաթոլիկե արական դպրոց* .....117
Պետական դպրոցներ .....117
Գավառային (Քաղաքային) ուսումնարան .....117
Չորսդասյա ուսումնարան .....118
Սբ. Նինայի օրիորդաց դպրոց .....118
Մասնավոր դպրոց .....118
Միջնակարգ դպրոց .....118
Ախալցխայի տարրական բարձրագույն ուսումնարան .....118
Պրոգիմնազիա (գիմնազիա) .....118
Գյուղատնտեսական-արհեստագիտական դպրոց .....119
Կրթական այլ հաստատություններ .....119
Վրաց օրիորդաց ծրիավարժ դպրոց .....119
Հրեական դպրոց .....119
Գրադարաններ .....119
*Սբ. Ստեփանոսյան դպրոցի գրադարան* .....119
*«Ընթերցարան եկեղեցականաց»* .....120
*Հայ կանանց միության գրադարան* .....120
*ԿՀԲԸ գրադարան* .....120
*Աշակերտական գրադարան-ընթերցարան* .....120
*Ախալցխայի քաղաքային չորսդասյա ուսումնարանի գրադարան* .....121
*Վրացական գրադարան* .....121
Հարություն Բայբուրդյանցի մասնավոր թանգարան .....121
Ախալցխան՝ գրչօջախ .....121
Ախալցխայի եպիսկոպոսությունն ու փոխանորդությունը .....123
Ախալցխա – Սբ. Էջմիածին հարաբերություններ .....125
Եկեղեցիներ .....126
Հայ առաքելական եկեղեցիներ .....126
Սբ. Աստվածածին եկեղեցի .....128
Սբ. Քառասունք եկեղեցի .....128
Սբ. Հրեշտակապետաց եկեղեցի .....129
Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի .....129
Զարեհնու Սբ. Նշան (Վարդանանց) եկեղեցի .....129
Սբ. Ստեփանոս եկեղեցի .....137
Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (ի սկզբանե մզկիթ) .....141
Սբ. Փրկիչ (Սբ. Ամենափրկիչ) եկեղեցի .....143
Սբ. Ջրավարաց մատուռ .....148
Հայ առաքելական հոգևորականություն .....148
Հայ կաթոլիկե եկեղեցիներ .....149
Երևման Սբ. Խաչ եկեղեցի .....150
Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի .....160
Սբ. Աստվածածնի Վերափոխման եկեղեցի .....164
Սբ. Աստվածածնի Վերափոխման կամ Սբ. Ռոզալինա եկեղեցի .....166
Գերեզմանոց .....166
Մարդա թաղամասի հայոց գերեզմանոց .....170
Այլազգի հոգևոր աղոթատներ. Վրաց ուղղափառ Սբ. Մարիամ եկեղեցի .....170
Վրաց ուղղափառ Սբ. Աստվածածին եկեղեցի .....172
Վրաց ուղղափառ Սբ. Գևորգ եկեղեցի .....172
Ուղղափառ եկեղեցի .....172
Հունական գերեզմանոց .....172
Մզկիթ .....172
Սինագոգ .....173
Բերդ .....173
Աղբյուր .....182
Բաղնիք .....182
Հուշարձան-կոթող .....182
Սբ. Սաֆա (Սաֆարայի) վանք .....184
ԱԾՂՈՐ (ԱԾՂՎԵՐ, ԱԶՂՈՐ) .....185
ԱՐԱԼ .....193
ԲՈԼԱԶՈՒՐ .....194
ԻՎԼԻՏԱ .....195
ԽԱԿ (ԽԵԿ, ԽՅԱԿ) .....199
ԾԻՆՈՒԲԱՆ .....201
ԾԻՐԱ .....207
ԾՂԱԼԹԲԻԼԱ .....211
ԾՐԻՈԽ .....220
ԾՈՒՂՐՈՒԹ .....221
ՂՈՒԼԱԼԻՍ .....233
ՂՈՒՐԱԹՈՒՄԱՆ .....237
ՃԻԽԵԼ .....240
ՃԼՎԱՆ .....241
ՄԻՔԵԼԾՄԻՆԴԱ (ՄՈՒՔԵԼԾՄԻՆԴԱ) .....242
ՆԱՈՒԽՐԵԲ (ՄՈՒԽՐԵԲ) .....243
ՉԵՉԵՐԵԿ .....249
ՊԱՄԱՃ ՄԵԾ (ՎԱՐԻ ՊԱՄԱՃ) .....252
ՊԱՄԱՃ ՓՈՔՐ (ՊԶՏԻ ՊԱՄԱՃ) .....260
ՋՈՒԼԴԱ (ՃՈՒԼԴԱ) .....266
ՍԱԶԵԼ .....268
ՍՈՒԽԼԻՍ (ՍՈՒՖԼԻՍ) .....275
ՎԱԼԵ (ՎԱԼ, ՎԵԼ) .....285
ՈՒԴԵ .....288
ՕՐԱԼ .....293
Օգտագործված գրականության ցանկ .....299
Տեղանունների ցանկ .....304
Անձնանունների ցանկ .....310
Գունավոր լուսանկարների ցանկ .....331
Բաժանորդների ցանկ .....333

# ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Յուրաքանչյուր հետազոտող, ով առնչվում է Հայաստանի և հայ ժողովրդի անեզր պատմության տարաբնույթ խնդիրներին, իր կամքից անկախ հաճախակի հանդիպում է աշխարհագրական մի տեղանվան, այն է՝ Ախալցխա քաղաքն իր համանուն գավառով (նաև Սամցխե, Սաաթաբագո, Մեսխեթ):

Աշխարհացույցյան Հայաստանի սահմանին կից, նրա հյուսիսային հարևան Վիրքի կազմում գտնվող Ախալցխան բնությունից առանձնաշնորհված աշխարհագրական հանգուցային դիրքի շնորհիվ առնվազն միջնադարից դեպի իրեն է ձգել բնակչության հոծ զանգվածների և ողջ երկրամասում վերածվել առաջնային բնակավայրի:

Սկզբնաղբյուրային բազմաթիվ վկայությունները և ցարդ պահպանված նյութական մշակույթի մեծաթիվ հուշարձանները փաստում են, որ, ի թիվս այլ ազգությունների, հայերը հենց սկզբից եղել են Ախալցխայի նախաբնակ մշակութարար ազգերից մեկը: Այս հանգամանքը սպասելի էր դարձնում հայ մասնագետների լայն ընդգրկվածությունն ու գործնական մասնակցությունը երկրամասի պատմական և մշակութաբանական խնդիրներին նվիրված ուսումնասիրություններում: Մինչդեռ հարկ է խոստովանել, որ բնագավառը մեզանում ցարդ շոշափվել է սոսկ ակնարկաբար կամ առավելագույնս առանձին հոդվածներով:

Նկատի ունենալով առկա իրավիճակը և առաջնորդվելով հայ ժողովրդի պատմությանն անքակտելիորեն կապված Սամցխեի հայկական և հայաբնակ բնակավայրերի պատմության և նյութական մշակույթի հուշարձանների ուսումնասիրության կարևորության գիտակցմամբ՝ 1988 թ. սկզբնավորվեց այն աշխատանքը, որի տևական համալրման և մշակման արդյունքն է սույն աշխատությունը:

Նյութի ընդգրկման և կառուցվածքի առումով անհրաժեշտ ենք համարում նշել, որ աշխատության մեջ ներառվել և մշակութաբանական քննության են ենթարկվել մեզ հասու աղբյուրագիտական տարատեսակ բոլոր այն նյութերը, որոնք առնչվում և մասնավոր տվյալներ են պարունակում երկրամասի հայ բնակչության վերաբերյալ: Բազմաթիվ այլ նյութեր, որոնք, անտարակույս, արժեքավոր են երկրամասի այլ ազգերի պատմության ուսումնասիրության իմաստով, մեր առջև ունեցած նպատակից դուրս նկատելով, քննության ենք ենթարկել մասնակիորեն կամ առհասարակ չենք շրջանառել:

Միևնույն մոտեցումը ցուցաբերվել է նաև նյութական մշակույթի հուշարձանների նկատմամբ, այսինքն՝ մանրամասնորեն ներկայացվել են հայկական հուշարձանները, իսկ այլազգիներից ավանդվածները՝ սոսկ վերջիններիս երկրամասի հայ բնակչության պատմությանն առնչվելու չափով:

Ցանկանում ենք ընդգծել նաև, որ երկրամասում պահպանված հայկական հուշարձանների ընդգրկմամբ աննախադեպ հագեցած սույն աշխատության մեջ, այնուամենայնիվ, չեն ներառվել այլազգիներով բնակեցված կամ 1944 թ.-ից ի վեր անբնակ տասնյակ գյուղեր, որտեղ հայկական հուշարձաններ հայտնաբերելու ուղղությամբ իրականացվելիք նույնքան կարևոր աշխատանքները հուսով ենք լրացնել ապագայում:

# ՆԱԽԱԲԱՆ

**Բնական միջավայրը.** Ախալցխա քաղաքն ու նույնանուն շրջանը (նախկինում համանուն գավառ) զբաղեցնում է ներկայիս Վրաստանի Հանրապետության Սամցխե-Ջավախեթի մարզի կենտրոնական հատվածը և տարածվում պատմական Մեծ Հայքի հյուսիսային սահմանագլխին:

Արևմուտքից երկրամասը հարևանակցում է Աճարային, հյուսիսում՝ Արևմտյան Վրաստանի Գուրիա մարզին, հյուսիս-արևելքում՝ Քարթլիին, հարավում՝ Մեծ Հայքի Գուգարք նահանգի Ջավախք գավառին:

Այստեղ են խաչվում Աջարիայից՝ Բաթումով, Քարթլիից՝ Խաշուրով և Բորժոմով, Շիրակից՝ Ախալքալաքով և Արտահանից՝ Փոցխով գետի հովտով ձգվող հնագույն տարանցիկ ճանապարհները: Աշխարհագրական բարենպաստ դիրքի շնորհիվ առնվազն վաղ միջնադարից տեղում գոյացել է բնակավայր, որը շուտով վերածվել է քաղաքի: Զարգացել են արհեստներն ու առևտուրը:

Երկրամասի պատմական աշխարհագրության, վարչական սահմանների և պատկանելության մասին նշվել է. «Ախալցխայի փաշայությունը Ճորոխ գետով առանձնանալով Կոլխիդայից և Կապադովկիայից հնում կազմել է Հայաստանի հյուսիս-արևմտյան հատվածը...»[1], ինչպես նաև «Ախլցխա կամ Ախալցիխէ գաւառ, որ Սամցխէ կոչի 'ի վրաց ... սահմանի 'ի հարաւոյ՝ Օսմանեան գաւառօք Արտահանայ և Չըլտըրայ Կարուց, յարևմտից՝ Եգերացոց երկրաւ և Կուր գետով, 'ի հիւսիսոյ և յելից՝ լերամբք որ անջրպետեն ընդ Պօռչալու և ընդ Սօմխէթ գաւառս, և Խրամ (Քցիա) գետով...»[2]:

**Կլիմա, բուսական աշխարհ.** «Մինչև Ախալցխա և Փոքր Կովկասը ընդհանրապէս չոր է, ցամաքային. Ախալցխա գաւառին մէջ՝ միջին սև ծովային և ցամաքային, իսկ դէպի հիւսիս և արևմուտք՝ ծովային: Բնականօրէն բուսականութիւնն ալ երկու տարբեր հանգամանք ունի. մինչև Ախալցխա Փոքր Կովկասը կը ներկայացնէ գլխաւորապէս արօտատեղիներ, իսկ անկէ անդին՝ անտառներ...»[3]:

**Վարչատարածքային բաժանումներ.** երկրամասի վարչական նախաօսմանյան շրջանին վերաբերող կառուցվածքի մասին հայտնի է. «Աթաբեկների օրոք նախկին վրացական անունները նորից սկսեցին կիրառվել. հինգ գլխավոր գավառներն էին՝

ա) Օձխրեն, որն ընդգրկում էր Փոցխովի վերին հոսանքը,

բ) Սամցխեն, որն ընդգրկում էր Ախալցիխեն, Ածղվերը, Ասպինձեն, Աբասթումանը, Ախալդաբոն,

գ) Ջավախեթին, որն ընդգրկում էր Կուրի վերին հոսանքը և Չիլդրիի, Խոլայի, Խերթվիսի, Ջեդա-Թմոգվիի և այլ ամրոցներ,

դ) Ճուղուրեթին, որը միայն մի փոքր գավառ էր Խերթվիսից վերև,

ե) Էրուշեթին, որը գտնվում էր Կուրի ձախ ափին»[4]:

---

1 **Легкобытов В.**, Ахалцихский пашалык, “Обозрение российских владений за Кавказом в статистическом, этнографическом и финансовом отношениях”, СПб., 1836, ч. IV, с. 211-212 (բնագրում՝ “Ахалцихский пашалык, отделяясь рекою Чорохою от Колхиды и Каппадокии, составлял в древности северо-западную часть Армении...”).

2 **Ալիշան Ղ.**, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 61: Ավելի կարճ՝ «Սամցխէ-Ախլցխա է...» (**Թօփճեան Յ.**, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 78: Տե՛ս նաև Աշխարհացոյց **Վարդանայ վարդապետի**, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի, Բարիզ, 1960, էջ 17, 37): Թերևս հիշատակության արժանի է այս և պատմական նախորդ դեպքերի վերաբերյալ սույն անդրադարձը ևս. «ԺԳ դարուն Ախալքալակի և Ախալցխայի գաւառները միացան և հողատէր Սարգիսը հռչակեցին աթաբէկ (հայր իշխան) և անկախութիւն յայտարարեցին, որ ճանչցուեցաւ վրաց թագաւորութեան կողմէ: Այդ անկախ Սաաթաբագօն (իշխանայ երկիր) իր առանձին օրէնքներն ունէր (Աղբուտայի օրէնքներ): Այսպէս, Ջաւախքը թէև բաժանուած թաթարական և պարսից լուծին տակ հեծող Հայաստանէն, իր անկախ կեանքը կ'ունենայ Ախալցխայի հետ մինչև 1484 թուականը, երբ նորէն կ'աւերուի պարսից Եագուբ շահին կողմէ: Բայց շուտով երկու գաւառները կը վերահաստատեն իրենց անկախութիւնը, որ կը տեւէ մինչև 1637, երբ չդիմանալով մէկ կողմէ վրաց, միւս կողմէ Իմերէթին և երրորդ կողմէ Թուրքիոյ յարձակումներուն, կ'ընկճուին և կը դառնան թրքական փաշայութիւն: Այնուհետև թէ Ախալցխան և թէ Ախալքալակը կը մնան միշտ Թուրքերու լուծին տակ մինչև Ռուսներու գալը, որոնք 1807-ի, 1810-ի և 1811-ի կռիւներէն յետոյ՝ 1828-ին վերջապէս կը հաստատուին և Ախալքալակն ու Ախալցխան կը վերածեն առանձին նահանգի» (**Ռուբէն**, Ախալքալակի պայքարը, «Դրօշակ», 1926, № 1, էջ 6):

3 **Ռուբէն**, նշվ. հոդվ., «Դրօշակ», 1926, № 1, էջ 8:

4 **F. Dubois de Montpéreux**, Autour du Caucase, tome II, Paris, 1839, էջ 283.

Թուրքական տիրապետության հաստատումից հետո Ախալցխան վարչականորեն լուծվում է Օսմանյան տերության սահմանների մեջ. «Ախալցըխան (Ախասխա, այլ կերպ՝ Ախսկա) Վրաստանի մի մասն է. առաջներում մտնում էր Չըլդըրի էյալեթի մեջ, բայց երբ պատերազմների ընթացքում Չըլդըրը ավերվեց, Ախալցխան վերածվեց անկախ էյալեթի: Սահմաններն են. արևելքից՝ Կարսը, հարավից՝ Չըլդըրը, արևմուտքից՝ Վրաստանի լեռները, հյուսիսից՝ Թիֆլիսը: Սանջակներն են՝ Աջարա, Արտանուշ, Արդահանի Բյուզուրք [մեծ], Արդահանի Քյուչուք [փոքր], Սոքե (Օլթիին ենթակա), Փերքերք (օջաքլըք է), Փենեք, Փոսխով, Թավսքերթ, Չըլդըր, Հաջրեք, Խերթվիս, Շուշատ (օջաքլըք է), Մախջիլ, Նըսֆի-Լեվանե (օջաքլըք է), Մամրվան, Ախալքալաք, Թրիալեթ: Այս էյալեթը 656 կըլըջ է, ունի 97 զեամեթ, թեզքերեով և առանց թեզքերեի 559 թիմար: Ջեբելուների հետ միասին տալիս է 1700 զինվոր»[5]:

1640 թ. Ախալցխայի էլայեթի կամ փաշայության վարչական պատկերը հետևյալն էր. «Չըլդըրի, այսինքն Ախըչկայի (Ախալցխայի) էլայեթը ծառայողներից մայդեֆթերդարի և դիվանի այլ ծառայողներ չունի, սակայն ալայի բեյ և չերիբաշի ունի: Կազմված է 13 սանջաքից՝ Օլթի, Խերթվիս, Արդանուշ, Հաջրեք, Արդահանի Բյուզյուրք, Փոսխով, Մախջիլ, Աջարա, Փենեք: Բացի այդ, 4 սանջաքը յուրթլուքի, օջաքլըքի և սեփականության կարգով են կառավարվում: Դրանք են՝ Փերքքերք, Լիվանե, Նըսֆի Լիվանե և Շեշատ»[6]:

1769 թ. հունիսի 14-ին Հերակլ Բ. Վրաստանին սահմանակից մարզերի նկարագրության մեջ Ախալցխայի վերաբերյալ նշել է. «Ախալցխա քաղաքում տիրում էր նահանգային կառավարում: Այն կազմել է հին Վրաստանի մասը: Ողջ ժողովուրդը հունական հավատքի էր, սակայն մի քանի տարի զավթված լինելով թուրքերի կողմից, որոնց լծի տակ են առ այսօր, ընդունեց մահմեդականություն, բայց որոշ տեղերում քրիստոնյաներ են, և այդ հիմնական տեղն անվանվում է Սաաթաբեգո: Այս տեղանքը լեռնային է՝ ընդարձակ և բարեբեր դաշտերով: ...այս վայրերի սահմանները կից են մեր տիրույթին: Ախալցխա քաղաքում նստում է կառավարիչը՝ երեք նշանների վեզիրը...: Այս նահանգում շատերն աղքատացել են լեզգիների արշավանքի հետևանքով...»[7]:

Ստեղծվում է յուրաքանչյուրը 20-60 գյուղ ունեցող 24 սանջակներից բաղկացած (Աբասթուման, Քոբլիան, Ածղոր, Ասպինձա, Խերթվիս, Ախալքալաք, Նիավա, Ջոբարեք, Ճաճարեք, Մաճախեք, Շավշեք, Արդվին, Լիբան, Արտանուջ, Արտահան, Օլթի, Բանակ, Գյոլե, Չըլդր, Սաքլել, Փոցխով, Աճարա Մեծ, Աճարա Փոքր, Նարիման) Ախալցխայի փաշայությունը համանուն կենտրոնով: 1829 թ.-ից հետո հիշյալ 24 գավառների մի մասը (թվարկված ցանկի առաջին 9-ը) անցնում է Ռուսաստանին: Դրանց հիմքի վրա էլ ռուսները ստեղծում են 4 տեղամասեր (участок)՝ Ածղոր, Քոբլիան, Խերթվիս և Ախալքալաք[8]:

Այլ տեղեկության համաձայն՝ Ռուսաստանին էր անցել 10 սանջակ. դրանք էին՝ Ախալցխայի, Ախալքալաքի, Աբասթումանի, Քոբլիանի, Ածղվերի, Ասպինձայի, Խերթվիսի, Ջաջարակի, Չլդրի և Փոցխովի: Դրանով իսկ Ախալցխան հյուսիսից Կովկասյան լեռնաշղթայով սահմանակից էր դառնում Իմերեթիային, Գուրիային, Մենգրելիային, արևելքից Ցխենցվարի լեռնաշքայով և Բիխնուրա, Թափարավան և Խանխիլագյոլ լճերով՝ Քարթլիին,

---

5 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, կազմեց՝ **Սաֆրաստյան Ա. Խ.**, Երևան, 1964, էջ 27:

6 Թուրքական աղբյուրներ. **Էվլիյա Չելեբի**, հ. Գ, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Ա. Խ Սաֆրաստյանի**, Երևան, 1967, էջ 26:

7 “Армяно-русские отношения в XVIII веке”, т. IV, под редакцией **М. Г. Нерсисяна**, Ереван, 1990, с. 93-94. Բնագրում՝ “Город Ахалцих содержит губернское правление: в нем часть древней Грузии, и народ был весь веры греческаго исповедения, а с нескольких лет завладен турком, под которым игом и ныне состоит, и народ обращен в магометанство, а в некоторых частях состоят и до днесь християня, и генерально место оное называетца Саатабего, расположение сего места гористое и между иных пространные и плодоносные поля. ...граница ж лежит в близости к нашему владению. Во оном городе Ахалцихе правитель – везирь трех знаков... В той же губернии мноие разоренные от лезгинцев...”

8 **Ушаков Н.**, История военных действий Азиатской Турции в 1828 и 1829 годах, часть первая, СПБ, 1836, էջ 56-57: Տե՛ս նաև **Исарлов Л.**, Из Путевых заметок об Ахалцихском уезде, “Кавказ”, 1869, № 107, 12(24) сентября, էջ 1: Ի դեպ, Պյոտր Ալեքսանդրովիչ Բեստուժևը, մասամբ օգտվելով Ուշակովի աշխատությունից, իր հուշագրություններում նույնպես անդրադարձել է Ախալցխայի փաշայության վարչական վիճակին. «Ասիական Թուրքիան քաղաքական տեսակետից բաժանված է մի քանի մասնավոր շրջանների, որոնք կառավարում են փաշաները: Ախալցխայի փաշայությունը, որ Անատոլիայի մի մասն է կազմում, բաղկացած է 24 սանջակներից... Սանջակները կառավարում են բեկերը, որ նշանակվում են այդ պաշտոններում փաշաների կողմից, բայց երբեմն նրանք անզոր են իրենց ենթարկելու անհնազանդներին: Ամբողջ փաշայության մեջ կան երկու լավ քաղաքներ՝ Ախալցխա և Արդահան: Առաջինում կա 4500 տուն: Փաշայությունն ունի 5 ամրոց... Յուրաքանչյուր սանջակ ունի ոչ ավելի, քան 60 և ոչ ավելի պակաս 20 գյուղ...: Ախալցխայի փաշայությունը ունի 34283 ընտանիք: Բնակչությունը կազմում են թուրքերը, լազերը, վրացիները, աջարները, հայերը, հրեաները, վաչկատուն քրդերը և տրուխանցիները» (**Ներսիսյան Մ.**, Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958, էջ 264-265): Նաև «Ակիսկայի շրջանը, որը, ըստ երևույթին, նախկինում եղել է Վերին Քարթլին, մաս է կազմել Վերին Վրաստանի. հայերն այսպես են կոչում երկրի այս մասն աշխարհագրական դիրքի պատճառով: Նշված գավառի մեջ մտնում են 24 գավառամասեր, որոնցում կան բազմաթիվ ավաններ և գյուղեր» (**Chevalier Gamba**, Voyage dans la Russie méridionale et particulièrement dans les provinces situées au-delà du Caucase, fait depuis 1820 jusqu’en 1824, Paris, 1826, p. 401):

Թրիալեթին և Սոմխեթին, հարավից՝ Կարսի փաշայությանը և Թուրքիայի տարածքում մնացած Ախալցխայի նախկին փաշայության մնացած սանջակներին՝ զբաղեցնելով 7.000 քառ. վերստ տարածք[9]:

Հայտնի է, որ Ախալցխայի սանջակը 1830-ական թվականների սկզբներին բաղկացած էր 18 գյուղից՝ 2859 տնով և 7143 արական սեռի բնակիչներով (հիմնական մասը Արևմտահայաստանի գաղթականներ էին)[10]:

1828-1840 թվականներին, հակառակ ռուսական կայսրության մեջ գտնվելու հանգամանքի, վարչական միավորը շարունակում էր կոչվել Ախալցխայի փաշայություն:

Ախալցխայի փաշայությունը ղեկավարում էր երկրամասային վարչությունը՝ փաշայության ղեկավարի նախագահությամբ, իսկ Ռուսական կայսրությանն անցնելուց հետո բնիկ հայկական և վրացական գյուղերը կառավարում էր ավագանին կամ մամասախլիսը, թուրքականը՝ աղսաքալը և գաղթականներով բնակեցված գյուղերը՝ յուզբաշին[11]:

1840 թ. Ախալցխան վրաց-իմերեթական նահանգի կազմում ստանում է գավառական քաղաքի կարգավիճակ[12]:

Ըստ ռուսական իշխանությունների հրապարակած 1846 թ. դեկտեմբերի 14-ի օրենքի՝ Ախալցխայի գավառից առանձնացվում է Ախալքալաքի շրջանը (վերջինս մտնում է Ալեքսանդրապոլի գավառի կազմի մեջ)[13]:

Նույն թվականին Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ձևավորումից հետո Ախալցխան՝ որպես գավառական քաղաք, մտնում է վերջինիս մեջ:

1846-1869 թվականներին գավառական քաղաքի կարգավիճակով մաս է կազմում Քութայիսի նահանգի:

1869-1876 թվականներին նույն կարգավիճակով Ախալցխան մտնում է Թիֆլիսի նահանգի մեջ:

1888-1908 թվականներին Ախալցխան հաղորդակցության ճանապարհների Կովկասյան օկրուգի Կարսի բաժանմունքի 4 ուղեմասերից առաջինի կենտրոնն էր[14]:

Ի վերջո, հիննունամյա ռուսական տիրապետությունից (1828-1918) հետո 1921 թ. Ախալցխան մտնում է Խորհրդային Վրաստանի, իսկ 1991 թ.-ից՝ Վրաստանի Հանրապետության կազմի մեջ: Ներկայումս Ախալցխայի նախկին գավառի տարածքը տրոհված է վարչական մի քանի շրջանների մեջ (Ախալցխա, Ադիգեն, մասամբ՝ Բորժոմ և Ասպինձա):

Ախալցխայի շրջանը զբաղեցնում է 1010,3 քառ. կմ մակերես, իսկ Ադիգենի շրջանը 799,5 քառ. կմ:

Վերջինս 1921 թ.-ից մտել է Ախալցխայի գավառի մեջ, իսկ 1930 թ.-ից ձևավորվել է որպես առանձին շրջան՝ համանուն կենտրոնով:

Բորժոմի և Ասպինձայի շրջանները համապատասխանաբար զբաղեցնում են 1189 և 825,3 քառ. կմ մակերես[15]: Նշյալ երկու շրջանները միայն մասամբ էին ներառված Ախալցխայի գավառի կազմի մեջ: Մասնավորապես Բորժոմի շրջանի մի զգալի մասը մտնում էր Քարթլիի, իսկ փոքրագույն մասով՝ նաև Ջավախքի կազմի մեջ: Պատմականորեն վերջինիս էր միահյուսված նաև Ասպինձայի շրջանի արևելյան հատվածը:

**Տնտեսություն.** երկրամասի բնակչությունն աչքի է ընկել այգեգործական և հողագործական հմտություններով. «Կուրի երկու ափերին կար հզոր մի կառավարություն, որը կարողացավ այդքան զարգացնել արդյունաբերությունը և մշակույթը: Այն բոլոր մշակվող հողերը, որոնք կային զառիթափերին, այդ խորդուբորդ և հրաբխային ժայռերում, պարզապես նվաճվել էին մի քիչ դաժան բնությունից: Կառուցվել էին շատ երկար պատեր, որոնք պահում էին հողի դարավանդները. դրանց վրա հսկայական խաղողի այգիներ և բազում պտղատու այգիներ էին տնկում: Ամեն ինչ բարգավաճում էր այս տարածքում, որտեղ գրեթե ամբողջովին հրաբխի բեկորներ են: Ախալցիխեի, Ածղվերի, Ասպինձեի հովիտներում հացահատիկի առատ բերք էին ստանում»[16]:

Ի դեպ, ինչպես այսօր էլ մատնանշում են երկրամասի տարեց հայ բնակիչները, 1944 թ. իրականացված մահմեդական բնակչության համընդհանուր աքսորից և նրանց այգեվետ գյուղերը Վրաստանի զանազան վայրերից պետական ծրագրով փոխադրված եկվորներով բնակեցնելուց հետո տեղի է ունեցել մրգատու այգիների ոչնչացում: Թվում է, թե անվաստակ հարստությունը ձեռք գցելով՝ նորեկները շնորհակալ պետք է լինեին և իրենց աշխատանքով պահպանեին և բազմապատկեին եղածը, մինդեռ նրանք եղածն էլ ոչնչացրին: Երևույթը թերևս կարելի է բացատրել մշակույթների տարբերությամբ և ժամանակի հոգեբանությամբ:

**Պատմական հուշարձանների ուսումնասիրությունը.** Ախալցխա քաղաքի և գավառի պահպան-

9 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 202: (1 վերստ=500 սաժեն=1.0668 կմ): Վկայություն կա նաև իբր միայն 5 սանջակների Ռուսաստանին անցնելու մասին «Դրանք էին Ախալցիխեի, Ածկվերի, Ասպինձեի, Խերթվիսի և Ախալքալաքի սանջակները» (**F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 284):

10 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 221:

11 Նշվ. աշխ., էջ 232-233:

12 **Գեղամեանց Յ.**, Նամակ Ախալցխայից, «Փորձ», 1876, № 1, էջ 429:

13 **Պարսամյան Վ.**, Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, 1940, էջ 165:

14 Արևելյան Հայաստանի պետական հիմնարկների պատմության տեղեկատու 1801-1917 թթ., կազմ.՝ **Էվոյան Վ.**, «ԲՀԱ», 1986, № 3, էջ 150:

15 Грузинская ССР. административно-территопиальное деление, Тбилиси, 1988, с. 12, 15, 21.

16 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 276:

ված պատմական հուշարձանները, ի դեմս ֆրանսիացի հետազոտողներ Ֆ. Դյուբուայի և Մ. Բրոսեյի, գիտական ուշադրության առարկա են դարձել՝ սկսած ԺԹ դարի 30-ական թվականներից: Ավելի ուշ դրանցով հետաքրքրվել են նաև ռուս և վրացի ուսումնասիրողներ:

Խորհրդային տարիներին և ցայժմ բազմաթիվ ուսումնասիրություններ են հեղինակել հատկապես վրաց հնագետները, պատմաբաններն ու մշակութաբանները: Վերջիններս, սակայն, որպես կանոն, անտեսելով երկրամասի տարածքում պահպանված հայկական պատմական բազմաբնույթ և մեծաթիվ հուշարձանները, ընդհանուր առմամբ հեղինակել են ցավալիորեն միակողմանի, կանխակալ և ըստ այդմ հակագիտական աշխատանքներ: Գրեթե ամբողջությամբ անտեսվել է աղբյուրագիտության համար այնքան էական՝ հայերեն վիմագրերի վերծանության և հրատարակության գործը: Փորձ է արվել գիտական շրջանակներին և հանրությանը թյուրիմացության մեջ գցել՝ իբրև վրացական ներկայացնելով մի շարք հայկական եկեղեցիներ:

Ինչ վերաբերում է Ախալցխայի տարածաշրջանի հայկական պատմական հուշարձանների ուսումնասիրության առումով հայկական կողմի՝ մինչ այժմ ցուցաբերած անհաղորդ ու անտարբեր կեցվածքին[17], ապա ստիպված ենք խոստովանել, որ այս բնագավառի նկատմամբ պետական-ակադեմիական շրջանակներում արդեն ավանդական անտարբերությունը ցարդ ցավալիորեն մնում է անփոփոխ:

Հաշվի առնելով ստեղծված կացությունը՝ գտնում ենք, որ թեկուզ և բավական ուշացումով, այնուամենայնիվ, գիտության, ի մասնավորի՝ հայագիտության, ինչպես և մեր ազգային շահերը պահանջում են ստեղծել և հրապարակ հանել հայ ժողովրդի բազմադարյան պատմության անհամար էջերով ճոխացած երկրամասի պատմությանն ու պահպանված հայկական պատմական հուշարձանների ուսումնասիրությանը նվիրված այնպիսի աշխատություն, որն ի զորու կլիներ գոնե մասամբ լրացնել առկա բացը:

Սույն աշխատությունն ընդգրկում և ներկայացնում է ավելի քան 20 տարիների ընթացքում հավաքագրած աղբյուրագիտական հարուստ նյութի (հետազոտվել են Ազգային դիվանի, Մատենադարանի, Գրականության և Արվեստի թանգարանի հարյուրավոր ֆոնդերը, հայերեն և օտարալեզու գրականություն և պարբերական մամուլ, իսկ դաշտային տևական աշխատանքներն իրականացվել են 1988-1991 և 2007 թթ. ընթացքում) համապարփակ մշակումը:

**Բնակչություն.** Ախալցխայի և նրա գավառի բնակչության թվաքանակի և ազգային կազմի վերաբերյալ, բացառությամբ որոշակի տվյալներ պարունակող 1595 թ. ստեղծված թուրքական դավթարների[18], ըստ էության, ԺԸ դարից ավելի վաղ թվագրվող վկայություններ հայտնի չեն, ուստի խնդրո առթիվ ԺԹ դարի հետազոտողների հրապարակած հաղորդումները սոսկ մասնավոր կարծիքներ են[19]:

Առավել ուշագրավ տեղեկություններ են պահպանվել 1763 թ.-ից. «Միանգամայն այլ էր Ախալցըխայի պատկերը, որտեղ թուրքական փաշայի ենթակայության ներքո գործնականում հավատի ազատություն էր տիրում: Այստեղ կային ընդհանուր առմամբ 7754 կաթողիկե և 13 հայ քահանա, սակայն միայն 150 կաթողիկե վրացի իրենց ծեսին պատկանող մեկ քահանայի հետ միասին: Հայերն ապրում էին 15 «համայնքներով», դրան գումարվում էին 1500 ոչ կաթոլիկ հայ փախստական (վերաբնակիչներ)՝ 5 քահանայի հետ միասին և 180 օտար հույն-վրացի 3 քահանայի հետ միասին[20]:

17 Բացառություն է կազմում թերևս Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժնի ֆոնդերը նոր նյութերով համալրելու նպատակով 1936 թ. հուլիսի 8-ից օգոստոսի 18-ը ընկած ժամանակահատվածում նույն թանգարանի ազգագրական բաժնի վարիչ Ստեփան Լիսիցյանի գլխավորությամբ Ախալցխայի և Ախալքալաքի շրջաններում իրականացված գիտարշավը, որի նպատակն էր հիմնականում ուսումնասիրել Կարինից բերված և նշյալ տարածաշրջանում շարունակված տնայնագործական արհեստները. «Ախալցըխան Անդրկովկասում այն տեղն է, որտեղ ներկայացված են բազմատեսակ բոլոր հին արհեստները: Թիֆլիսում դրանք վաղուց անհետացել են: Մեր նպատակն է գրանցել վարպետների աշխատանքի ընթացքը, ձեռք բերել գործիքների լիակատար հավաքածու և հավաքել նյութ համքարությունների սոցիալական ձևերի վերաբերյալ» (**Варданян Л.**, Степан Лисициан и истоки армянской этнографии, Ереван, 2005, с. 194 (բնագրում՝ “Ахалцха - это то место в Закавказье, где представлены все разновидности старых промыслов. В Тифлисе они давно исчезли. Наша цель - записать тудовой процесс мастеров, приобрести полную коллекцию инструментов и собрать материал о социальных формах амкарств”):

18 გურჯისტანის ვილაიეთის დიდი დავტარი..., თბილისი, 1941.

19 Հետազոտող Զագուրսկին, օրինակ, կարծում է, թե «Այս երկրամասը սկզբնապես բնակեցված է եղել վրացիներով և հեռավոր ժամանակներից մտել է վրացական թագավորության կազմի մեջ» (**Загурский Л.**, Поездка в Ахалцихский уесд в 1872 г., “Записки Кавказскаго отдела императорскаго русскаго географическаго общества”, книжка VIII, Тифлис, 1873, с. 2 (բնագրում՝ “Страна эта искони населена была грузинами и входила с отдаленных времен в состав Грузинскаго царства”): Ֆ. Դյուբուան երկրամասի վրացիներին առավելաբար համարում է Վրաստանի ներքին գավառներից տարբեր ժամանակներում փոխադրվածներ. «Զեմո-Քարթլին իր դիրքի շնորհիվ միշտ ապաստանատեղ է եղել վրացիների համար, որոնք գրեթե մշտապես ենթարկվել են արևելքից եկող ժողովուրդների հարձակումներին: Այս երկիրը, որը վայելում էր ճակատագրի բարեհաճությունը, հաճախ էր խուսափում ավերածություններից, մինչդեռ ներքին նահանգները անընդհատ ենթարկվում էին ավերածությունների և կոտորածների: Զեմո-Քարթլիի մեծ մասը դարձավ Բագրատունիների հարստության սեփականությունը նրանց՝ Աբխազիայի և Վրաստանի գահ բարձրանալուց դեռ շատ առաջ» (**F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 276):

20 **Չոբանյան Պ.**, Հայ-ռուս-վրացական փախհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, էջ 187:

Նախքան ռուսների կողմից Ախալցխայի նվաճումը փաշայության բնակչության թվաքանակը կազմում էր 34283 տուն՝ շուրջ 140000 շունչ ազգությամբ՝ թուրք, աջար, լազ, քուրդ, թուրքմեն, ղարափափախ, հայ, վրացի, հայ կաթոլիկե, հրեա և հայբոշա (վերջիններս՝ Ածղվերի շրջանում) արական սեռի բնակչով[21]:

Նույն ժամանակաշրջանի համար բնակչության ազգային կազմի վերաբերյալ հայտնի են հավելյալ որոշ մանրամասներ ևս. «Թուրքերի օրոք բնակչությունը կազմված էր հույներից, հակոբիկ և կաթոլիկե հայերից, վրացիներից, թուրք ծառայողներից, ղարափափախ թաթարներից, հրեաներից, քրդերից և գնչուներից: Քրդերը պատկանում են երկու ցեղի. նրանք, ովքեր հաստատված են Աջարիայում, դավանում են մահմեդականություն, իսկ նրանք, ովքեր եկել էին Էրզրումից, հայերի կրոնին էին կապված և խոսում էին մի խոսվածքով, որը հայերենի և իրենց սեփական լեզվի խառնուրդ է»[22]:

Ախալցխայի փաշայության՝ Ռուսաստանի կայսրությանը միանալուց հետո ծայր է առնում մահմեդական բնակչության արտագաղթ դեպի օսմանյան տերություն: Արդյունքում 1828-1830 թվականներին կտրուկ նվազում է թե՛ գավառաբնակ և թե՛ մանավանդ քաղաքաբնակ թուրքերի թվաքանակը (այդ թվում սերունդներ առաջ բռնի մահմեդականացած բնակչությունը). «Ախալցիխեի բնակչությունը շատ էր նվազել: Քաղաքի գրավման ժամանակ ամբողջ թուրք կամ մուսուլման բնակչությունը փախել էր քաղաքից: Ախալցիխեի սանջակում այդ ժամանակ կար 5000 ծուխ և երկսեռ մոտ 40000 բնակչություն՝ ինչպես թուրքեր, լազեր, լեզգիներ, վրացիներ, հայեր, հրեաներ, այնպես էլ քրդեր, ղարափափախներ և թուրքմեններ»[23]:

1831 թ. Ախալցխայի սանջակն ուներ 3727 տուն և 10259 բնակիչ[24]: Երկրամասը նորեկ հայերով բնակեցնելու ծրագրի իրագործմամբ հանդերձ՝ բնակչության ընդհանուր նվազումն ակնառու էր. «...ռուսների տիրապետության հաստատումից հետո տեսնում ենք, որ բնակչության թիվը շատ է նվազել, չնայած որ Փոքր Ասիայից գաղթականներ են եկել...»[25]:

Բնակչության նվազման երևույթի կապակցությամբ նշվել է. «Դրա պատճառը հեշտ է գտնել: Բանն այն է, որ Ռուսաստանը ստացավ միայն փաշայության մի մասը, իսկ Արդահանը մնաց թուրքերին: Հետո մուսուլման բնակչության մի մեծ մաս, վախենալով քրիստոնյաներից և նրանց տիրապետությունից, նախընտրեց արտագաղթել: Եվ վերջապես թուրքերը փաշայությունում մշտապես մեծաքիվ զորք ունեին, որոնց թիվը մտնում էր բնակչության մեջ: Ռուսները չավելացրին այդ թիվը, քանի որ նրանք ընդամենը մեկ գունդ ունեին Ախալցիխի, Ածկվերի, Խերթվիսի և Ախալքալաքի բերդերում»[26]:

Ախալցիխեի ռուսական փաշայության բնակչության կազմը 1833 թ. ներկայացրել է հետևյալ պատկերը[27].

| | տուն | 2 սեռի բն. |
|---|---|---|
| Ախալցիխե քաղաք | 2268 | 10894 |
| Ախալցիխեի սանջ. | 2859 | 14286 |
| Ածկվերի սանջակ | 822 | 3478 |
| Ասպինձեի սանջակ | 166 | 1000 |
| Խերթվիսի սանջակ | 1582 | 9752 |
| Ախալքալաքի սանջ. | 970 | 6022 |
| **ընդամենը** | 8668 | 45432 |

1873 թ. Ախալցխայի նահանգն ուներ 83975 բնակիչ, որից հայեր էին 44415 (8642-ը՝ հայ կաթողիկեներ), թուրքեր՝ 28161, հունադավաններ՝ 4678, ղուխորոռներ՝ 4395, հրեաներ՝ 2126 և հռոմեական կաթողիկեներ՝ 200[28]:

1922 թ. Ախալցխայի շրջանն ուներ մոտ 10000 բնակիչ, որից 6900-ը հայ էր, 2170-ը՝ վրացի, 930-ը՝ հրեա, ռուս և հույն[29]:

Ըստ 1926 թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարի՝ Ախալցխայի գավառում բնակվում էր 15565 հայ (գյուղաբնակ էին 8543-ը, մեծամասնությունն էին կազմում Վալեի գյուղական շրջանի հայերը՝ 5858 շունչ): Ընդ որում, գավառի հայ ազգաբնակչության 99,6 տոկոսի համար մայրենի լեզուն համարվում էր հայերենը[30]:

21 **Ушаков Н.**, նշվ. աշխ., էջ 57-58: Նույն ժամանակաշրջանի համար բնակչության փոքր-ինչ նվազ քանակ է նշել Ֆ. Դյուբուան 34000 տուն և 136000 արական սեռի բնակիչ (**F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 284: Ի դեպ, Տրապիզոնում Ֆրանսիայի դեսպանի որդու՝ Ա. Դյուպրեի վկայությամբ՝ ԺԹ դարի առաջին քառորդին Ախալցխայում բնակչության թիվը կազմել է շուրջ 40000 անձ, իսկ մինչ ռուս-թուրքական պատերազմը՝ մինչև 50000 շունչ (**Ушаков Н.**, История военных действий в Азиятской Турции в 1828 и 1829 годах, Варшава, 1843, ч. 1, с. 284): Բնակչության թվաքանակի վերաբերյալ մեկ այլ հետազոտող՝ Վ. Լեխկոբիտովը, նշել է. «Ախալցխայի սանջակն առավել բնակեցված էր, ուներ մինչև 5000 ընտանիք և շուրջ 40000 երկսեռ բնակիչ՝ 98 քառակուսի վերստ մակերեսի վրա, որը կազմում է 408 շունչ յուրաքանչյուր քառակուսի վերստի վրա» (բնագրում՝ “Ахалцихский санджак был самый населенный, имеев до 5 т. семейств и около 40 т. душ обоего пола, на поверхности 98 квадратных верст, что составляло по 408 душ на каждую квадратную верст”. **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 209): Հմմտ. **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 284:

22 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 285:

23 Նշվ. աշխ., էջ 262:

24 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 367:

25 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 284:

26 Նշվ. աշխ., էջ 285:

27 Նշվ. աշխ., էջ 286:

28 **Բզնունի (Գեղամյան Եղիշե քահանա)**, Ախալցխա, «Մեղու Հայաստանի», 1873, № 6, էջ 3:

29 Большая советская энциклопедия, т. 4, Москва, гл. редактор **Шмидт О.**, 1930, с. 158.

30 **Ալեքսանյան Հովի.**, Հայ ազգաբնակչության տեղաբաշխումն Ադրբեջանական և Վրացական ԽՍՀ-ներում (1920-1930-ական թվականներ), «ՊԲՀ», 2006, № 2, էջ 101-102:

*Հայեր.* 1790 թ. Հովսեփ Արղությանը, ելնելով հայ-վրացական հարաբերությունների բարելավման անհրաժեշտությունից, վրաց Գեորգի թագավորին առաջարկել է ախալցխացի հայերին հրավիրել վրաց տերության սահմանները, մասնավորապես Փամբակի և Բորչալուի գավառները. «ԶԼոռին, զոր հաստատ գրով շնորհեալ էք աղայ Շահմիրին, և նա ևս յանձնեալ է ի մէլիք Ապովն, հաստատ պահեսջիք զայն ուխտ, որով ոչ թէ ի հովանավորութիւն ձեր հրավիրէք միայն զհնդկարնակ հայս, այլև Կարսն և Ախլցխայն դատարկեալ բնակչօք նոցա՝ լնանելոց են Փանբակն և Բօրչալուն»[31]:

Համանման խնդիր էր արծածվել նաև 1800 թ. հոկտեմբերին, երբ Բոլնիսի մելիք Աբովը գեներալմայոր Լազարևից խնդրել էր թույլատրել 1000 հայ ընտանիքի փոխադրվելու Ախալցխայի շրջանից[32]:

Ախալցխացի հայերին Հայաստանի հյուսիսային գավառներ փոխադրելու հայ քաղաքական գործիչների ծրագրերն ի վերջո կյանքի չեն կոչվում, և, ընդհակառակը, 1829-1830 թվականներին Ախալցըխան համալրվում է Բարձր Հայքը հայրենադավ գաղթի արդյունքում լքած հայերի հաշվին: Ուշագրավ է վերջիններիս վերաբերող ժամանակակցի բնութագրումը. «Ինչ վերաբերում է Էրզրումից գաղթած հայերին, ապա նրանք, մի քանի հարյուրամյակ տքնելով թուրքական լծի ներքո, հույների նման կորցրել են իրենց ազգությունը՝ պահպանելով միայն կրոնը: Ընդունակություններով գերազանցում են վրացիներին, նրանց, հատկապես քաղաքբնակների մեջ սովորական բան է գրագիտությունը»[33]:

Ինչ վերաբերում է հայ կաթողիկեներին, ապա Ախալցխան եղել է Կովկասի հայ կաթողիկեների կենտրոնը, և նրա ենթակայության ներքո են եղել Ախալքալաքի, Լոռու և Ալեքսանդրապոլի վիճակները:

*Գնչուներ կամ բոշաներ.* բնակչության սակավաթիվ այս խմբի մասին նշվել է. «...չզբաղվելով ոչ երկրագործությամբ, ոչ անասնապահությամբ, իրենց ապրուստը գտնում են մի քանի աննշան, պարզ արհեստների միջոցով: Նրանք ապրում են Ածղվերի սանջակում, հետևում հայոց դավանանքին, սակայն խոսում են անմաքուր հայերենով»[34]:

*Վրացիներ.* երկրամասի նախաբնակ ազգերից են վրացիները, ինչպես նաև ԺԳ դարի սկզբներից Վրաստանի քաղաքական գերիշխանության պայմաններում քաղկեդոնականացած և ժամանակի ընթացքում վրացիներին ձուլված հայերը (այդ թվում՝ Սամցխեին տիրապետող Ջաքարյան իշխանական տան ներկայացուցիչները): Սաաթաբագոյի անկախության կորստից և թուրքական տիրապետության հաստատումից հետո ինչպես երկրամասի վրացի, այնպես էլ վրացիներին ձուլված ծագումով հայ քաղկեդոնական ազգաբնակչության հիմնական մասը բռնի մահմեդականացվեց: Ախալցխայի փաշայության՝ Ռուսաստանի գրավումով մահմեդականացած բնակիչների որոշ մասը վերստին քրիստոնեություն ընդունեց:

*Թուրք-թաթարական ցեղեր.* ԺԹ դարավերջին նշվել է, որ «...նրանք Անդրկովկասի ներկայ սահմանների մէջ զանցառելի թիւ են կազմում միայն: Փոքրաթիւ տաճիկներ ապրում են Ախալցխայի եւ Բաթումի շրջաններում»[35]:

*Ղարափափախներ.* թարաքյամա թաթարներն են, որոնք ԺԸ դարավերջին փոխադրվել են Բորչալուից և Շամշադինից. «Սկզբում նրանք վարել են բացարձակապես քոչվոր կյանք, սակայն աստիճանաբար սկսեցին վարել հողը, զբաղվել այգեգործությամբ և, բացառությամբ քչերի, դարձան նստակյացներ: Փաշաների օրոք նրանք ոչինչ չէին վճարում, պարտավոր էին զինվել և առաջին իսկ հրամանի դեպքում ներկայանալ»[36]: Բացի թարաքյամա թաթարներից՝ Ախալցխայի Խերթվիսի սանջակում Ռուսաստանին միանալուց հետո բնակվում էր նաև 50 ընտանիք ղարափափախ էմիրասան: Նրանք ևս փոխադրվել էին այլ տարածաշրջաններից և վարում էին միայն քոչվոր կյանք[37]:

*Քրդեր.* Ախալցխայում կային բնիկ և գաղթական քրդեր: Ի դեպ, բնիկները մահմեդականներ էին և հիմնականում ապրում էին Ջաջարակի սանջակում քոչվոր կյանքով, իսկ Էրզրումից եկած գաղթականները դավանում էին հայոց հավատքը և խոսում էին հայ-քրդերեն խառն խոսվածքով[38]:

---

31 **Չորանյան Պ.**, Հայ քաղաքական կողմնորոշման պատմությունից, «ՊԲՀ», 1995, № 2, էջ 155:

32 "Акты Кавказской археографической комиссии" (այսուհետև՝ АКАК համապատասխան հատորի և էջերի նշումով), Тифлис, 1866, т. 1, с. 637.

33 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 211 (բնագրում՝ "Что касается армян, переселенных из Арзрума, то стенав несколько столетий под игом турков, они, подобно, грекам, утратили свою национальность, сохранив только религию; способностями превосходят грузин; между ними грамотность обыкновена, особенно между городскими жителями").

34 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 214 (բնագրում՝ "...не занимаясь ни хлебопашеством, ни скотоводством, находят пропитание от незначительных простых ремесл. Они живут в селениях Ацхверскаго санджака, придерживаются армянскаго исповедения, но говорят не чистым армянским языком"). Հմմտ. «Գնչուները կամ բոշաները դեռ ապրում են Ածկվերի սանջակում և դավանում են հայերի կրոնը, բայց նրանց լեզվով շատ անմաքուր են խոսում» (**F. Dubois de Montpéreux**, Autour du Caucase, tome II, Paris, 1839, p. 285):

35 **Արեղեան Արտ.**, Կովկասի ժողովուրդները, «Հայրենիք», Պոսթըն, 1924, № 11, էջ 123-124:

36 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 213 (բնագրում՝ "Сначала они вели жизнь совершенно кочевую, но мало по малу стали пахать землю, заниматься садоводством, и сделались оседлыми, исключая не многих. При пашах они не платили ничего, а обязаны были вооружаться и выходить по первому требованию...").

37 Նշվ. աշխ., էջ 213-214:

38 Նշվ. աշխ., էջ 214:

**Դպրոց.** 1834 թ. Ախալցխայի փաշայության 15 գյուղերում գործում էր մասնավոր 18 դպրոց, որից հայ առաքելական էր 7-ը (7 ուսուցիչ և 76 աշակերտ), հայ կաթողիկե՝ 5-ը (8 ուսուցիչ և 82 աշակերտ), մահմեդական՝ 5-ը (5 ուսուցիչ և 54 աշակերտ)[39]։

Նույն թվականին Ախալցխայի գավառում (ներառյալ Ախալցխա քաղաքը) հաշվում էին 5 արական և 2 օրիորդաց դպրոցներ, համապատասխանաբար առաջինները՝ 20 ուսուցչով և 394 աշակերտով, իսկ երկրորդները՝ 8 ուսուցիչ-ուսուցչուհիներով և 102 աշակերտուհիներով[40]։

1834-1835 թվականներին Ախալցխայի գավառում գործում էր մասնավոր 24 դպրոց (9-ը՝ հայկական, 6-ը՝ վրացական, 4-ը՝ թուրքական, 3-ը՝ հրեական և 2-ը՝ վրաց-հայկական)՝ 413 աշակերտով (175 հայ, 125 վրացի, 93 թուրք, 20 այլազգի)[41]։

1895 թ. կառավարության կարգադրությամբ փակվում են կայսրության ողջ տարածքում գործող հայոց դպրոցները։ Ռուսական իշխանությունները փորձ են անում տիրապետել նաև եկեղեցական հասույթներին. «Թէ Գօլիցին, թէ Եանօվսկի և թէ ներքին գործերի մինիստր Գօրեմիկին, որ հաւանութիւն տւեց նրանց քայլերին, քաջ գիտեն, որ հայոց դպրոցների կալւածքները կամ եկեղեցու սեփականութիւն են և կամ յատուկ կտակներով ամրապնդած գոյք: Օրինակ, Թիֆլիզի, Ալեքսանդրօպօլի, Ախալցխայի, Բագւի և ուրիշ տեղերի շատ դպրոցներ ունեն մեծ կալւածքներ, որ ստացել են յատուկ կտակներով. և այդ կտակ անողները իրենց հարըստութիւնը նւիրել են հայոց եկեղեցական դպրոցին և ոչ թէ առհասարակ որևէ դպրոցի, նրանց գործադրութիւնը յանձնել հայոց հոգևոր իշխանութեան իրաւասութեան և ոչ թէ առհասարակ որևէ մարմնաւոր իշխանութեան...»[42]։

1905 թ. դպրոցների վերաբացման թույլտվությունից հետո՝ 1911/1912 ուստարում, Ախալցխայի գավառում գործում էր ընդամենը 6 եկեղեցականծխական դպրոց[43]։

1931/1932 ուստարում Ախալցխայի շրջանում գործում էր ընդամենը 85 դպրոց (56 թուրքական, 18 հայկական, 9 վրացական և 1 հունական)[44]։

39 **Երիցեանց Աղ.**, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի, հ. 1, Թիֆլիզ, 1898, էջ 275։
40 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 38, թ. 5, 19։
41 **Մաթևոսյան Լ.**, Ախալցխայի հայկական դպրոցը, Երևան, 2007, էջ 14։
42 **Ակնունի Է.**, Կովկասեան խաբրիկներ, «Դրօշակ», 1899, № 5, էջ 73։
43 «Արարատ», 1913, էջ 81։
44 **Մաթևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 76։

# ԱԲԱԹԽԵՎ



Աբաթխև. գյուղի հարավային թաղը և եկեղեցին

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 10 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1280-1360 մ բարձրության վրա, արևմտահայաց լեռնալանջին:

**Բնակչություն.** 1830 թ. Սիմոն քահանա Սիմոնյանի գլխավորությամբ Կարինի Խաշուտ[1] գյուղից երեք տոհմի (Գոզորենք, Յաղոյենք, Սիմոնենք) 50 անձ բնակություն է հաստատում Աբաթխևում[2]:

Այլ տեղեկության համաձայն՝ 1830 թ. գյուղում բնակություն են հաստատել 5 տոհմի ներկայացուցիչներ՝ Սահարը և Պողոսն իրենց որդիներ Մարգարի և Գոզորի (այսօր՝ Փիլիջենք և Գոզորենք), Երվանդ Սերոբյանն իր եղբոր՝ Միքայելի (այսօր՝ Յաղոյենք և Միքայելենք), Սիմոնն իր որդու՝ Հովհաննեսի հետ (այսօր՝ Փաշայենք, Նազարենք և Պոլոյենք), Հովհաննես և Մկրտիչ Սիմոնյանները (այսօր՝ Գափոյենք, Կոնոյենք, Մերոյենք և Տյատյայենք) և Արքին ու Գրիգոր եղբայրները (այսօր՝ Մոսենք, Հաջիմարենք, Արքենենք և Կատարենք)[3]:

*Վիճակագրություն.* առկա տվյալների համադրումը ցույց է տալիս, որ մինչև 1990-ական թվականների սկզբները ընդհանուր առմամբ բնակչության անընդմեջ աճ արձանագրած Աբաթխևում վերջին տարիներին հիմնականում դեպի Ռուսաստան ծայր առած արտագաղթի հետևանքով նկատվում է գյուղաբնակների կտրուկ նվազում: Ասվածն ակնառու է դարձնում ստորև ներկայացվող աղյուսակը.

1 Պատմական Խաշուտ կամ Խաշուտվանք (Խոշուտվանք) գյուղը գտնվում էր Տայքի Ոքաղե, հետագայում՝ Թորթում գավառում՝ գավառանիստ Թորթումից 18 կմ հյուսիս-արևմուտք: Ներկայումս պաշտոնապես կոչվում է Մեյդանլար (Meydanlar):

2 **Հակոբյան Հ.**, Ախալցխա. Էրզրումյան գաղթից մինչև մեր օրերը, Երևան, 2002, էջ 175:

3 **Մարգարյանց Մ.**, Իմ բնօրրան Խաշուտ, Երևան, 2005, էջ 65:

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1884[4] | | | | 122 |
| 1913[5] | 30 | 122 | 129 | 251 |
| 1915[6] | | | | 251 |
| 1916[7] | 30 | 137 | 140 | 277 |
| 1983[8] | 130 | | | 455 |
| 1989[9] | 135 | | | 458 |
| 1991[10] | | | | 480 |
| 2006[11] | 124 | | | 322 |
| 2007[12] | 125 | 110 | 171 | 281 |

**Երկրորդ աշխարհամարտ.** գյուղաբնակներից մասնակցել է 69 անձ (այլ տեղեկությամբ՝ 57), որից 27-ը զոհվել է[13]:

1978 թ. Աբաթխևում կառուցվել է Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան (ճարտ.՝ Վաչագան Թաղևոսյան, վարպետներ՝ Արշակ Գոգորյան, Լևոն Դարբինյան և Սարգիս Յաղոյան)[14]:

**Դպրոց.** 1850 թ. վարդապետ Գրիգոր Մարգարի Սահարյանի (ավարտել է Վիեննայի Մխիթարյան միաբանության ճեմարանը) նախաձեռնությամբ գյուղում բացվում է մասնավոր դպրոց[15]:

Դասավանդումն ընթանում էր գյուղի բնակիչներ Սիմոնենց Սահակի և Գալստյանի (Քաշվածի) գոմում[16]:

1912 թ.-ից Աբաթխևում գործել է տարրական դպրոց, որի առաջին ուսուցիչը եղել է ախալցխացի Վարդան Վարդանյանցը[17]:

1913 թ. գործել է 1 ուսուցչով և 27 աշակերտով (12-ը աղջիկ)[18], 1916 թ.՝ 55 աշակերտով (20-ը աղջիկ)[19]:

1989/1990 ուստարում դպրոցի առաջին դասարանն ուներ 6 աշակերտ:

**Սբ. Խաչ եկեղեցի.** գտնվում է գյուղի արևելյան եզրին՝ արևմտահայաց թեք սարալանջին: Ունի բարձր և իշխող դիրք: Կառուցվել է 1870 թ. «ծախիւք Տէր Գրիգոր քահանայ Սահարեանի և ծխականաց»[20]:

Մինչ եկեղեցու կառուցումը աբաթխևցիները հոգևոր ծիսակատարությունները կատարել են Յաղենց աղբյուրի մոտ գտնվող մատուռում, որն առ այսօր ծառայում է որպես ուխտատեղի[21]:






**Աբաթխև. Երկրորդ աշխարհամարտում զոհված աբաթխևցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը (լուս.՝ 1989 թ.)**

4 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:
5 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:
6 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 78:
7 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 31:
8 **Դավթյան Ա.**, Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, Երևան, 1997, էջ 14:
9 Գյուղական խորհրդից առնված տվյալները մեզ է փոխանցել ծղալթբիլեցի Մելիք Մկրտչի Մոսիկյանը:
10 Ըստ գյուղապետարանի տվյալների:
11 Համաձայն նույն աղբյուրի:
12 Ըստ գյուղապետարանի լիազորված անձ Պետրոս Միսակի Վարդանյանի:
13 **Մարգարյանց Մ.**, նշվ. աշխ., էջ 181: Ի դեպ, մեկ այլ աղբյուրով՝ մասնակցել է 65 հոգի (**Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 175):
14 **Մարգարյանց Մ.**, նշվ. աշխ., էջ 181:
15 Նշվ., աշխ., էջ 186:
16 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 13:
17 Նշվ. աշխ., էջ 14:
18 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:
19 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 31:
20 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 78: Տե՛ս նաև «Արձագանք», 1885, № 26, էջ 368:
21 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 13:







**Աբաթխև. Սբ. Խաչ եկեղեցու տեսքը հյուսիսից, հարավից, ներքին տեսքը դեպի արևելք և հատված գերեզմանոցից**

1920 թ. հոգևոր իշխանությունը եկեղեցու տանիքը նորոգելու թույլտվություն է տալիս. «...թէև ցանկալի չէ այս թանկութեան ատէն եկեղեցոյ նորոգութիւններ ընել, սակայն որպէս զի Ձեզ յանձնեալ եկեղեցին աւելի ևս չվնասուի անձրևէն Հոգևոր ատեանս թոյլ կուտայ Ձեզ եկեղեցոյ տանիքի (կռիշի) համար ընել այն նորոգութիւնները, որ անհրաժեշտ են...»[22]:

1930-ական թվականներին վերածվել է պահեստի:

1980 թ. աբաթխեցի Մկրտիչ Միքայելյանի ջանքերով եկեղեցին վերսկսել է իր գործունեությունը, և մինչև 1991 թ. եկեղեցական արարողություններն իրականացրել է տիրացու Փաշայենց Տեփանը (Ստեփան Սիմոնյան)[23]:

1995 թ. գյուղի հասարակության միջոցներով վերանորոգվել է և դարձել գործող եկեղեցի[24]:

Եկեղեցու արտաքին չափերն են՝ 15,62 x 9,32 մ:

**Քահանա.** *Գրիգոր վարդապետ Սահարյան* (1826-1886)[25]. աբաթխեցիները երախտաշատ այս

22 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 83, թ. 4:

23 **Մարգարյանց Մ.**, նշվ. աշխ., էջ 252-253:

24 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 101:

25 Հայտնի է, որ 1872 թ. տեր Գրիգոր Սահարյանը նաև Ածղորի և Կոբլիանի տեղամասի հայ կաթողիկեների ներկայացուցիչն էր (“Кавказский календарь на 1873 г.”, с. 77):







Աբաթխև. Գրիգոր վարդապետ Սահարյանի տապանաքարը և Սբ. Խաչ եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Յակոբյանի)

հոգևորականին պարտական են գյուղում 1850 թ.-ին դպրոց, իսկ 1870 թ.-ին ցարդ կանգուն եկեղեցու կառուցման համար: Անյունն ամփոփված է եկեղեցու արևմտյան մուտքի առջև կառուցված սրահի հյուսիսարևմտյան անկյան մոտ:



Աբաթխև. աղբյուր գյուղամիջում

Տապանաքար, մարմարե սալիկին՝ 9 տող.

*Այս է տապան դամբարան | տէր Գրիգոր վարդապետ Սահա|րեան, 60 ամաց հասակի, | զի ատեաց զկեանս աշխար|հի, ջանք եւ ճիգ քրտնա|թոր ոչ խնայեաց զոր ի | զոր, հիմնադիր այս տաճա|րիս փոխեաց զկեանս հան|գիստ 1886 ամի 28 յունուարի:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Հակոբ քահանա Սահարյան.* հիշվում է 1914, 1915 («Փոխ-Աւագ-քհնյ. Տէր Յակոբ Սահարեան, ժողովրդապետ Աբաթխևի հայ-կաթ. եկեղեցւոյ»)[26], 1916, 1920 թվականներին[27]:

*Էմմանուել վարդապետ Տապպաղյան*[28]. հովվել է 1994-2003 թվականների ընթացքում: Հովվում էր նաև Ծինուբան, Ղուլալիս, Նաոխրեբ և Սուխլիս գյուղերին մինչև 2003 թ.:

Այժմ ժողովրդապետն է Պողոս Գրիգորյանը:

**Անվանի աբաթխևցիներ.** *Պողոսյան Եփրեմ* (Փոնչոյան Սարգիս)՝ 14.3.1897, Աբաթխև - 20.5.1972, Վիեննա, հայ բանասեր: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, 1910 թ.-ին ուսանել է Վիեննայի միաբանության դպրոցում և 1917 թ.-ից դարձել Մխիթարյան միաբանության անդամ: Հեղինակել է «Պատմություն Հայ Մշակութային Ընկերություններու» (3 հատոր, 1957-1969), «Տատյան գերդաստանը» (1968), «Համբարձման տոնն և հայ ժողովրդի վիճակախաղը» (1956) և այլն:

26 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 70:

27 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 30, թ. 49: Տե՛ս նաև Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 78: ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 83, թ. 4:

28 «Մասիս», 2007, № 17, էջ 16:

# ԱԲԱՍԹՈՒՄԱՆ



**Աբասթուման. ընդհանուր տեսքը**

**Տեղադրությունը.** գտնվում է Ադիգեն շրջկենտրոնից ուղիղ գծով 14 կմ հյուսիս-արևելք, իսկ Ախալցխայից 18 կմ հյուսիս-արևմուտք՝ Փոցխով գետի ձախ վտակ Քոբլիանի՝ նույնպես ձախակողմյան վտակ Օծխորայի (նաև՝ Օծխե կամ Աբասթուման) անտառածածկ ձորահովտում, ծովի մակերևույթից 1280-1320 մ բարձրության վրա. «Աբաս-Թումանը գտնվում է Ախալցխայի գաւառում, Թիֆլիսի նահանգում: Նա ձգված է մի նեղ ձորի մէջ, որի շրջապատող սարերը ծածկված են մայրի ծառերով: Աբաս-Թումանը ծովի մակերևոյթից բարձր է 4170 ֆ., նա պարունակում է իւր մէջ 13 արքունի և 80-ից աւելի առաւել մասնաւոր շինութիւններ, որոնք դասաւորված են Օծխէ անուանեալ, փոքրիկ գետակի ափերում»[1]:

Աբասթումանի բնակլիմայական պայմաններն իրենց առողջարար ազդեցությամբ վաղուց են հայտնի դարձել և արժևորվել. «Իր դիրքով ու կլիմայական պայմաններով գերազանցում է նոյնիսկ աշխարհահռչակ Դաւոսին ու Լէյզէնին. եթէ Աբասթումանը յետ ընկած և մոռացուած Կովկասում չլինէր, անշուշտ տիեզերահամբաւ կը դառնար»[2]:

**Անվան ծագումը.** հայտնի է, որ իբր «Աբաս-թուման խոսքը ծագել է աբասի և թուման բառերից, որ կը նշանակէ քսան կօպէկ և տասը րուբլ: Տեղացիները սորան տալիս են յետագայ մեկնութիւնը: –Երբ ռուսները գրաւեցին այս կողմերը, այսինքն 1829 թ., տեղական բնակիչները տեսան, որ ռուսաց մի աբասին տաճկաց թումանից լաւ է և կենսական բոլոր միջոցները հեշտացան ու քաղցրացան: Իսկապէս ոչ թէ այս ջերմուկատեղերն են Աբաս-թուման, այլ սոցա մօտ եղած թուրքաբնակ փոքրիկ գիւղը, որից և ստացել են Աբաս-թուման անունը»[3]:

---

1 **Կանկանեանց Պ.**, Նամակ Աբաս-Թումանից, «Մշակ», 1875, № 41, էջ 2:

2 **Պարոյր**, Տպաւորութիւններ Աբասթումանից, «Հովիտ», 1914, № 39, էջ 619:

3 «Արձագանք», 1887, № 28, էջ 416:

Ավանդաբար վկայվել է, թե «Յարևմտակողմն Ախըլցխայ 'ի ձախմէ գետոյն կայ՝ Սմբատ Բիւրատեան սպարապետ Արտաշիսի Բ կառոյց զՏեմոդ բերդ ընդդէմ արշաւանաց հիւսիսայնոց»[4]:

**1918-1919 թվականների անցքերը.** հայտնի է, որ 1918 թ. սկզբին թուրքերի՝ Աբասթումանի գրավումով տեղի քրիստոնյաները հայտնվել էին ծայրահեղ ծանր դրության մեջ[5]: Ըստ էության՝ գերու կարգավիճակում գտնվող աբասթումանցի քրիստոնյաներին ազատելու համար Ախալցխայի քաղաքագլուխ Ձ. Զորյանը մարտի 21-ին համաձայնել էր բավարարել թուրքերի՝ միայն մի քանի անասունները վերադարձնելու ծիծաղելի առաջարկը[6]:

1918 թ. հունվարի 12-ից աբասթումանցի հայերն Ախալցխայի թուրքերի զինված ցույցից հետո խուճապահար փախուստի են դիմում. «եթէ այդպիսի թափով շարունակեն փախչել, մի շաբաթից յետոյ շատ քչերը մնացած կը լինեն: Խուճապին աւելի նպաստեց այն, որ պահապան զինուորներ չը կան: Դեռ պատերազմից առաջ միշտ, երկու հարիւր զինուորներ էին մնում և մի հարիւրակ կօզակներ, այժմ և ոչ մէկը: Հրաւիրում ենք Կովկասեան Կոմիսարիատի ուշադրութիւնը: Հարևան թուրք ազգաբնակչութիւնն էլ քնած չէ, ամեն փախչողի խուզարկում են և խլում նրանց զէնքերը: Ո՞ւր է իշխանութիւնը: Եթէ թուրքերը իրաւունք ունեն զէնք կրելու, ինչո՞ւ հայերն էլ իրաւունք չը պիտի ունենան»[7]:

Աբասթումանը գրավելուց հետո հայերի նկատմամբ թուրքերի գործադրած բռնությունների և ստեղծված կացության մասին նշվել է. «Կտրուած է ճանապարհը մինչև Ախալցխա, կտրուած է պօստային հաղորդակցութիւնը...: Աբասթումանում մնացած հայ ազգաբնակութիւնը կրիտիկական րոպէներ է ապրում. յուսահատութիւնը հասել է ծայր աստիճանի. թուրքերը բոլոր տղամարդկանց ձերբակալեցին և միևնոյն ժամանակ խուզարկութեան ենթարկեցին բոլոր հայ տները: Որոնում էին զէնքեր, որի ժամանակ գտել էին մի երկու հրացաններ և ատրճանակներ: Խուզարկութեան ժամանակ կատարվում էին և գողութիւններ...: Ձերբակալուածներին արձակեցին 12 ժամ պահելուց յետոյ...: Թուրքական այս գործողութիւններից յետոյ սարսափը Աբասթումանում այնքան է մեծացել, մանաւանդ հայերի մէջ, որ այս վերջին երկու ամիսների ընթացքում զաղթել են 82 հայ ընտանիքներ, չը հաշւելով եկւոր հայ ընտանիքներին, որոնք նոյնպէս բաւական մեծ թիւ են կազմում. մնում են հայերից դարձեալ 15 ընտանիքներ, որոնք նոյնպէս հեռանում են: Գաղթում են և միւս ազգութիւններից, միայն քիչ թւով, որովհետև նրանք հաւատացած են, թէ թուրքերը իրանց դէմ ոչինչ չունեն: ...Զարմանալի է այստեղի ռուս ազգաբնակութեան վերաբերմունքը, մանաւանդ ռուս բժիշկների, որոնք առանց խոր ուսումնասիրելու այս անցուդարձի ուղղուծութը՝ մեղադրում են հայերին և զարմանք յայտնում, որ հայերը այդպիսի գործելակերպով գրգռում են թուրքերին իրանց դէմ ու իրանց դրութիւնը վատթարացնում»[8]:

Հայտնի է, որ 1918 թ. մարտի սկզբին Ախալցըխայում պահվող մոտ 200 թուրք գերիներին ազատ արձակելուց հետո «թուրքերը բռնել են Աբասթումանի ճանապարհը և տեղի հայերին թոյլ չեն տալիս դուրս գալու՝ պատճառաբանելով, որ իրենք Ախալցխայում անասուններ և ապրանք ունեն, այս վերջիններն ստանալու դէպքում միայն կը թողնեն հայերին դուրս գնալու Աբասթումանից: ...Աբասթումանի հայերն ապրում են սարսափի ու անակնկալների օրեր: Թուրքերը թալանել են ...երեցփոխի նոյնքան արժեցող ինչքը (իմա՛ 10.000 ռուբ.) և այլ մասնաւոր մարդկանց: Փորձ է եղել պալատը թալանելու...»[9]: Ախալցխայի քաղաքագլուխ Ձ. Զորյանը Աբասթումանում տեղի ունեցող վայրագություններին վերջ տալու համար բազմիցս դիմել է Կաջարին և Էրիսթովին, որոնք էլ խոստացել են այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկել[10]:

1918 թ. մարտի 30-ին թուրք գերիներին Փարախա գյուղի մոտ փոխանակում են Աբասթումանի հայերի հետ[11]: Սակայն 1918 թ. ապրիլի սկզբի դրությամբ թուրքերը 15 հայերի արգելել էին հեռանալ Աբասթումանից[12]: Ի վերջո, ապրիլի 11-ին բոլոր հայերը, բացի ինքնակամ այնտեղ մնացած 2 հոգուց, ազատ են արձակվում և գալիս են Ախալցըխա[13]:

1919 թ. փետրվարին թուրքերը կրկին գրավում են Աբասթումանը. «Երկրորդ աւերումից յետոյ՝ քաղաքը սոսկալի պատկեր է ներկայացնում: Բազմաթիւ բնակիչներ են կոտորուել: Բոլորովին քանդւել են հանքային ջրերը, որոնք անվնաս էին մնացել տաճիկների կողմից քաղաքի առաջին գրաւման ժամանակ: Աբասթումանի պալատի պատերից փլցըուած ու տարուած են յուշաքարերը»[14]:

**Կառուցապատում.** «...իրականում այս անունով երկու բնակավայր կայ: Մէկը հռչակաւոր առողջարանն է՝ հիմնադրուած 19-րդ դարի 2-րդ կէսին, ուր նոյնպէս աստիճանաբար հաւաքւում է հայութիւն, հիմնում դպրոց ու եկեղեցի, բայց մեծ մասամբ փոխադրուած հարևան Ախլցխայից, գործի մարդիկ եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու զաւակ-

4 **Ալիշան Ղ.**, Տեղագիր Հայոց..., էջ 61:

5 **Աւագեան Ա.**, Դարձեալ Աբասթումանի դրութիւնը, «Շարժում», 1918, № 19, էջ 1:

6 Նոյն տեղում:

7 **N.**, Աբասթումանը դատարկւում է, «Մշակ», 1918, № 13, էջ 4:

8 **N.**, Թուրքական բռնութիւնը Աբասթումանի շրջանում, «Մշակ», 1918, № 62, էջ 4:

9 «Շարժում», 1918, № 18, էջ 1-2:

10 Նոյն տեղում, էջ 2:

11 «Շարժում», 1918, № 21, էջ 2:

12 «Շարժում», 1918, № 23, էջ 1:

13 «Շարժում», 1918, № 24, էջ 2:

14 **Վ. Հ. Գ.**, Դրութիւնը Ախալցխայում, «Յառաջ», 1919, № 40, էջ 3:



Աբասթուման. Ա. Ա. Ռեմմերտի գերեզմանը և հայ կաթողիկե եկեղեցին

ներ: Երկրորդը՝ հնից եկող Աբասթումանի գիւղն է իր բերդով, որն ընկած է առողջարանից 5 կմ հարաւ, նախ դէպի Զեկարի լեռնանցք, իսկ այստեղից՝ Կոլխիդա ու ծովափ տանող հին ճանապարհի վրայ»[15]:

Տակավին 1875 թ., երբ Աբասթումանի առողջարանային համբավն արդեն սկսել էր տարածում գտնել ողջ կայսրության մեջ, բնակավայրը շարունակում էր կառուցապատված մնալ հնամենի խղճուկ շինություններով. «Աբաս-Թումանի բնակարանները շինուած են ասիական ձևով և այդ պատճառաւ բնակութեան համար շատ անյարմար են, նամանաւանդ անձրևի ժամանակ, երբ բոլոր սենեակները դառնում են բնական դուշ»[16]:

Մինչդեռ տասը տարի անց (1884 թ.) պատկերն արդեն միանգամայն այլ էր. «Շինութիւններն առ հասարակ շատ փառաւոր են և շքեղ»[17]:

Հայտնի է, որ ամառանոցավայրի հայտնի հյուրանոցներից մեկը, որի բոլոր 50 համարները 1886 թ. ամբողջությամբ զբաղեցված էին, պատկանում էր տփղիսեցի վաճառական Ալելովին[18]:

ԺԹ դարավերջին Աբասթումանում կար 110-130 տուն, որոնք հիմնականում պատկանում էին Ախալցխայի, Թիֆլիսի և Բաքվի մեծահարուստներին[19]:

Նույն ժամանակաշրջանում ավանում հիշվում են երեք թաղեր՝ Վերին մաս, Վերին թաղ և Ներքին թաղ:

Վերին մասում էին գտնվում ռուս թագաժառանգի՝ Գեորգի Ալեքսանդրովիչի և իշխանուհի Քսենյա Ալեքսանդրովնայի շքեղ պալատները, Վերին թաղում հիմնականում բնակվում էին մեծահարուստները, իսկ Ներքին թաղում առևտրի կետերն էին[20]:

1899 թ. Աբասթումանն արդեն հիմնականում կառուցապատված էր պալատական, հյուրանոցային, առողջարանային բազմաթիվ շինություններով, ուներ զբոսայգիներ, աղբյուրներ[21]:

1907 թ. բացվել է Ա. Միրաքյանի առաջին կարգի հյուրանոցը[22]:

**Բնակչություն.** հայտնի է, որ տակավին 1851 թ. Աբասթումանի ողջ բնակչությունը բաղկացած էր ընդամենը 40 տնից[23]:

Համաձայն 1905 թ. իրականացված մարդահամարի՝ Աբասթումանն ուներ 208 բնակիչ, որից հայեր էին 159 շունչ (72 ար. և 87 իգ.), վրացիներ՝10 (4 ար. և 6 իգ.), ռուսներ՝ 16 (7 ար. և 9 իգ.), հույներ՝ 7 (4 ար. և 3 իգ.) և լեհեր ու գերմանացիներ՝ 16 (7 ար. և 9 իգ.)[24]:

---

15 **Յակոբեան Պ.**, Հրաւէր ողջմտութեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1993, էջ 82:
16 **Կաճկաճեանց Պ.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1875, № 41, էջ 3:
17 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
18 “Кавказ”, 1886, № 209, с. 3.
19 **Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903-1905, էջ 236-237:
20 Նշվ. աշխ., էջ 237:
21 «Նոր-Դար», 1899, № 136:
22 “Тифлисский листок”, 1907, № 91, с. 4.
23 “Кавказский календарь на 1852 г.”, Тифлис, 1851, с. 76.
24 “Кавказский календарь на 1908 г.”, Тифлис, 1907, с. 326.

1926 թ. աբասթումանաբնակ շուրջ 1250 շնչից 506-ը կամ 40,6 %-ը հայ էր[25]:

1969 թ. ուներ 5000 (վրացի, հայ և ռուս)[26], 1979 թ.՝ 2182 բնակիչ (1087-ը՝ վրացի, 320-ը՝ հայ, 318-ը՝ ռուս և 157-ը՝ այլազգի)[27]:

**Հայերն Աբասթումանում.** հայտնի է, որ արդեն 1830 թ. ավանում բնակություն էին հաստատել կարինահայ փոքրաթիվ գաղթականներ[28]:

1913 թ. աբասթումանաբնակ հայ կաթողիկեները կազմում էին 20 տուն (35 ար., 39 իգ.)[29]:

1914 թ. արդեն կար մոտ 200 տուն հայ բնակիչ. «...մեծամասնութիւնը Ախալցխայից գաղթածներ են. տեղական առևտուրը նոյնպէս նրանց ձեռքին է...»[30]:

1915 թ. ավանում բնակվում էր 154 հայ կաթողիկե[31], իսկ 1916 թ. նրանք կազմում էին 30 տուն՝ 156 շունչ (76 ար., 80 իգ.)[32]:

Ինչ վերաբերում է աբասթումանաբնակ հայ առաքելականներին, ապա դիվանական զանազան վավերագրերում առկա տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | տուն | արական | իգական | միասին |
|---|---|---|---|---|
| 1884[33] | | | | 27 |
| 1899[34] | 15 | | | |
| 1899[35] | | 166 | 133 | 299 |
| 1900[36] | | 175 | 139 | 314 |
| 1901[37] | | 176 | 140 | 316 |
| 1901[38] | | 167 | 146 | 313 |
| 1905[39] | | 182 | 159 | 341 |
| 1906[40] | | 161 | 137 | 298 |
| 1907[41] | | | | 298 |
| 1908[42] | 65 | 150 | 141 | 292 |
| 1909[43] | | 171 | 140 | 311 |
| 1910[44] | | 185 | 151 | 336 |
| 1912[45] | 88 | 190 | 170 | 360 |
| 1913[46] | | 186 | 161 | 347 |
| 1914[47] | | 190 | 170 | 360 |
| 1916[48] | | 201 | 187 | 388 |

Աբասթումանաբնակ հայերի (առաքելական և կաթողիկե) ընդհանուր թվաքանակի տեսակարար կշռի վերաբերյալ ավելի հստակ պատկերացում կազմելու նպատակով ստորև համադրաբար ներկայացնում ենք նաև վերոնշյալ տեղեկագրերից քաղված հետևյալ տվյալները.

| տարեթիվ | Աբասթումանի ամբողջ բնակչությունը | հայերի թվաքանակը և % | |
|---|---|---|---|
| 1905 | 208 | 159 | 76,44 % |
| 1926 | մոտ 1250 | 506 | 40,6 % |
| 1979 | 2182 | 320 | 14,66 % |

**Առողջարանային հարմարություններ.** 1869 թ. կայսեր հրամանով Աբասթումանի հանքային ջրերը դրվում են Կովկասի կառավարության բժշկական հսկողության տակ ինչպես այնտեղ, այնպես էլ Բորժոմում և Ուրավելում առողջարաններ ստեղծելու համար: Տարեկան 6000 ռուբ. հիմնադրամով, ըստ նախագծի, Աբասթումանը պետք է համապատասխաներ եվրոպական առողջարանների չափանիշներին[49]: Նույն թվականից սկսած՝ «Տէրութիւնը յատուկ գումար նշանակեց և երևելի բժիշկ Պ. Րէմմէրտի ձեռքով, քաղաքաւանիս հանքային ջրերու նախկին խրճիթները այլափոխեցան և զարդարուեցան Եւրոպայի նշանաւոր ջերմկաց շինութիւններով»[50]:

1880-ական թվականների սկզբներին պետությունը շարունակում էր հատուկ ուշադրության արժանացնել առողջարար բնական հարմարություններով օժտված Աբասթումանին և զգալի միջոցներ էր ներդրել. «Հանքային ջրերի վերայ վերջին տարիներում կէս միլիոնաչափ ծախք է եղած գանձարանից բժշկապետ Ռէմերտի ձեռքով, աւազաններ, մեքենաներ և ջրանցք-խողովակներ պատրաստելու համար և ամեն տարի էլ դեռ շարունակւում են յարմարութիւնների համար շատ թէ քիչ ծախսեր լինել...»[51]:

Բուժական բազմաթիվ հաստատություններից առաջինը հիմնվում է 1865 թ. «1865 թ. զինուորական վարչութիւնը հիմնել է այստեղ իրա ծառայողների համար հիւանդանոց, որի մէջ պարունակւում է ուղղափառների փոքրիկ եկեղեցին և հիւանդանոցի դեղատունը»[52]: Հիվանդանոցն անմիջապես ձեռք է

25 **Ալեքսանյան Հովհ.**, Հայ ազգաբնակչության տեղաբաշխումն Աղրբեջանական և Վրացական ԽՍՀ-ներում (1920-1930-ական թվականներ), «ՊԲՀ», 2006, № 2, էջ 101:
26 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 15:
27 Նշվ. աշխ., էջ 15:
28 «Արձագանք», 1891, № 21:
29 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:
30 **Պարոյր**, նշվ. հոդվ., «Հովիւ», 1914, № 39, էջ 619:
31 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 80:
32 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 31:
33 «Արձագանք», 1885, № 26, էջ 368 (տվյալը ցույց է տալիս միայն հայ կաթողիկե բնակչության թվաքանակը):
34 «Արձագանք», 1885, № 4, էջ 58: Ի դեպ, նույն թվականին Աբասթումանում, բացի 15 տուն հայերից, բնակվում էին 15-20 տուն ռուսներ:
35 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3903, թ. 83-84:
36 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, թ. 58:
37 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 133-134:
38 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, թ. 16-17:
39 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3912, թ. 259-260:
40 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 42:
41 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
42 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 39: Ի դեպ, համաձայն մեկ այլ տեղեկագրի, 1908 թ. Աբասթումանն ուներել է 270 հայ բնակիչ ("Кавказский календарь на 1910 г.", с. 405):
43 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 109-110:
44 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 35-36:
45 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3920, թ. 49: Տե՛ս նաև ֆ. 53, ց. 1, գ. 832, թ. 4:
46 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, 950, թ. 269-270:
47 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, 1020, թ. 170-171:
48 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 43, թ. 16-17:
49 **Կանկանեանց Պ.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1875, № 41, էջ 2:
50 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 236:
51 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
52 **Կանկանեանց Պ.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1875, № 41, էջ 2:

բերում համապետական նշանակություն. «Ամբողջ Ռուսիոյ մէջ նշանաւոր է քաղաքաւանիս պետական հիւանդանոցը»[53]:

Ահա թե ինչ է գրել 1890 թ. Աբասթուման այցելած ֆրանսիացի հետազոտողը. «Կովկասի այս գեղատեսիլ անկյունը միշտ լի է հանգստացողներով, որոնց այստեղ են բերում հանքային աղբյուրները: Այդ աղբյուրները մեծ համբավ ունեն բնիկների՝ հայերի, իմերների, թուրքերի և այլոց շրջանում, որոնք երբեմն այն աստիճան են չարաշահում լոգանքները, որ ուշաթափություններ կամ մահվան դեպքեր են լինում»[54]:

1910 թ. սկզբի դրությամբ նշվել է. «Կովկասի մէջ ընկերութիւն մը կազմուած է թոքախտի դէմ կռուելու նպատակաւ: Ընկերութիւնը ազդու կոչ մը հրատարակելով օգնութիւն կը խնդրէ հասարակութենէն, Աբասթումանի մէջ թոքախտաւորներու յատուկ հիւանդանոց մը կառուցանելու համար: Կոչը կը կրէ ստորագրութիւնը Իշխանուհի Մ. Թումանեանի՝ որ նախագահն է սոյն բարենպաստ հաստատութեան վարիչ մարմնոյն»[55]:

Կոչը, իրոք, ազդու է եղել: Այդ է վկայում հիվանդանոցի կառուցման կոչին արձագանքած և դրամահավաքի մասնակիցների ստվար թիվը[56]:

Այլ հաղորդագրության համաձայն՝ նույն թվականին Աբասթումանում թոքախտավորների բուժարան կառուցելու գործում իր ներդրումն ուներ նաև կոմսուհի Ելիզավետա Վորոնցովա-Դաշկովան, որին անսալով՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը նվիրաբերում է 300 ռուբ.[57]:

**Գևորգյան դպրոց.** «Աբասթումանի երկդասարանեան Գէորգեան դպրոցը» բացվել է 1895 թ. հոկտեմբերի 15-ին[58], որը, սակայն, հաջորդ տարում չի գործել կայսերական հրամանի՝ հայկական բոլոր դպրոցները փակելու պատճառով:

1910 թ. գարնանը երկար տարիներ Ռուսաստանում բնակվող պարսկահպատակ վաճառական մահտեսի Սիմեոն Թումանյանցը նախատեսել էր, ի հիշատակ վախճանված երկու երեխաների, «Հայկական ուսումնարան մը կառուցանելու նպատակաւ»[59] նվիրաբերել 10000 ռուբլի:

Դեռևս 1914 թ. ավանը զուրկ էր հայոց դպրոցից. «...ծխական դպրոց չունին, հայ աշակերտ-աշա-

53 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 237:

54 **Madame B. Chantre**, A travers L’Arménie Russe, Paris, 1893, p. 346 (բնագրում՝ “Dans ce coin pittoresque du Caucase, se presse une foule de baigneurs attirés par des sources thermales salines. Celles-ci jouissaient d’une grande réputation chez les indigènes: Arméniens, Imères, Turcs, etc., usent et abusent des bains, paraît-il, jusqua’à l’évanouissement et même jusqu’à la mort”).

55 Ռուսահայ լուրեր, «Կոչնակ», 1910, № 12, էջ 286:

56 Ստորև ներկայացնում ենք թոքախտի դեմ կռվող Կովկասյան ընկերության (նախագահ՝ Թումանյանց Մ. Մ.) ջանքերով Աբասթումանում հիվանդանոց կառուցելու նպատակով նյութապես օժանդակած անձանց անունները. Ռաևսկի Ն. Վ.՝ 100 ռուբլի (“Тифлисский листок”, 1910, № 27), Անանյանց Մ. Գ.՝ 3 ռ. (“Т-л”, 1910, № 30), Վարվառա Սմբատյանց՝ 10 ռ., Թումանյանցներ Մ. և Գ.՝ 25 ռ., դ-ր Օստրովսկի՝ 15 ռ. (“Т-л”, 1910, № 31), Սարգսյանց Կ. Ս.՝ 45 ռ., Բաբանով Ա. Ա.՝ 45 ռ (“Т-л”, 1910, № 32), Մելիք-Ղարագյոզյան Ե. Գ.՝ 5 ռ., Ջաչինյան Պ. Ի.՝ 10 ռ. (“Т-л”, 1910, № 33), Շահբուդաղյանց՝ 6 ռ. (“Т-л”, 1910, № 34), Քամոյանց Ն. Ի.՝ 15 ռ., Դոլուխանյանց Մ. Ի.՝ 100 ռ. (“Т-л”,1910, № 36), Մղեբրյանց Լ. Յա.՝ 15 ռ. (“Т-л”, 1910, № 37, 76), Գոպաձե Ի. Ջ.՝ 15 ռ. (“Т-л”, 1910, № 40), Կաճկաճյանց Ի. Ա.՝ 6 ռ. (“Т-л”, 1910, № 42), Դեպրեյսկ Վ. Ա.՝ 5 ռ., Փիթոյանց Ն. Գ.՝ 10 ռ., Ջանշյանց Ա. Ա.՝ 10 ռ., Ղայթմազյանց Կ. Օ.՝ 6 ռ. (“Т-л”, 1910, № 45), Կաճկաճյանց Գ. Ի՝ 25 ռ. (“Т-л”, 1910, № 46), Մոսկվայից Գրեցով և Ջայցև եղբայրներ՝ 25 ռ. (“Т-л”, 1910, № 47), Բաբանով Ա. Ա.՝ 30 ռ. (“Т-л”, 1910, № 48), Բելոուսով Ս. Վ.՝ 15 ռ., Գանձակից Մելիք-Հովսեփյանց Գ.՝ 15 ռ. (“Т-л”, 1910, № 49), Գանձակից դ-ր Մելիք-Բեգլարյանց Գ. Բ.՝ 15 ռ., Խաչմազից դ-ր Մելիք-Մկրտչյանց Մ. Ս.՝ 5 ռ. (“Т-л”, 1910, № 51), նույն անձը՝ ևս 6 ռ. 40 կոպ. (“Т-л”, 1910, № 63), Մարգարյանց Կ. Ի.՝ 15 ռ., Ասլամազյանց Մ. Մ.՝ 5 ռ., Շանշյանց Ե. Ջ.՝ 17 ռ. 80 կոպ. (“Т-л”, 1910, № 53), նույն անձը ևս 12 ռ. (“Т-л”, 1910, № 60), Յանովսկի Ե. Կ.՝ 10 ռ. (“Т-л”, 1910, № 49), Գանձակից Մելիքյանց Ե. Ա.՝ 18 ռ., Թումանյան Հովհ.՝15 ռ., Կուլիջանյանց Ե. Գ.՝ 5 ռ., (“Т-л”, 1910, № 55), Պուտինով Ե. Ի.՝ 50 ռ. (“Т-л”, 1910, № 56), Ալդադանով Վ. Մ.՝ 4 ռ. (“Т-л”, 1910, № 59), Բայտողոլյանց Ս. Ի՝ 6 ռ. (“Т-л”, 1910, № 60), Նարիմանյանց Գր. Դավ.՝ 30 ռ., Բեհբուդյանց Ա. Ի.՝ 15 ռ., N. N.՝ 30 ռ. (“Т-л”, 1910, № 69), Շաղինյանց Պ. Ի.՝ 25 ռ., Մոնին Լ. Մ.՝ 15 ռ., Մելիք-Բախտամյան Ն. Ի.՝ 15 ռ., Մարտիրոսյանց Ա.՝ 15 ռ. (“Т-л”, 1910, № 76), Նավրոցկի Ա. Ա.՝ 67 ռ., դ-ր Մալինովսկի Ս. Մ.՝ 25 ռ., Ջամիսլովսկի Ե. Կ.՝ 13 ռ., Կորշ Ա. Գ.՝10 ռ., Ճավճավաձե Մ. Ջ., Կուցով Ա. Ա., Կուդրյավցև Ա. Ա.՝ 3-ական ռ. (“Т-л”, 1910, № 80), Ֆիշեր Մ. Օ.՝ 25 ռ. (“Т-л”, 1910, № 84), Բաքվից Թաղիև Հաջի-Զեյնալ-Աբդին՝ 2500 ռ., Դադաշև Աղա-Յուսուֆ՝ 1500 ռ., Բեկկենդորֆ., Նադիև Աղա-Մուսա՝ 1000-ական ռ., Մանթաշյանց Ա., Ղուկասյանց Ա. Օ., Բադր-Հուսեյնով Մամեդ, Յուզբաշև Դ. Բ., Մուխթարով Մ.՝ 500-ական ռ., Դադաշև Հաջի-Շիխալի, Սաֆար-Ալիև Ի. Բ., Լեսներ՝ 300-ական ռ., Մելիքով Տ., Պլակսին՝ 200-ական ռ., Դոլուխանով և Ռասուլով Հաջի-Մուստաֆա՝ 100-ական ռ., ինժեներ Երեմյանց՝ 25 ռ (“Т-л”, 1910, № 84; նաև «Մշակ» 1910, № 81), Արզումանյան Խ. Բ.՝15 ռ., Օկոլ Ն. Մ.՝ 15 ռ., Չերքեզով Ա. Յա.՝ 10 ռ., Ջավրյանց Պ. Ա.՝ 12 ռ. (“Т-л”, 1910, № 90), Միլով Ա. Ն.՝ 15 ռ., Գորիից Ալդադանով Բլ. Մ.՝ 32 ռ. 90 կոպ. (“Т-л”, 1910, № 91), Իզմիրլյան կաթողիկոս՝ 300 ռ. (“Т-л”, 1910, № 92), Լիսիցյան Ս. Դ.՝ 15 ռ., Վալտեր Ե. Ի.՝ 15 ռ., Սարգսյան Ե. Ա.՝ 15 ռ., «Մշակ» թերթի խմբ.՝ 1 ռ. 40 կոպ., Կաֆիև Գ. Գ.՝ 6 ռ. 60 կոպ., Ջարգարյանց Ա. Ա.՝ 10 ռ., Արղությանց Ա. Մ.՝ 4 ռ., Միրիմանյանց Մ. Ա.՝ 5 ռ. (“Т-л”, 1910, № 95), Բաքվի քաղաքային խորհուրդ՝ 23000 ռ., “Голос Кавказа” թերթի խմբ.՝ 1 ռ. 80 կոպ., Օտտեն Ֆ. Կ.՝ 15 ռ., դ-ր Ֆեոդորով՝ 15 ռ., դ-ր Կրեստնիկով՝ 15 ռ., Լանգոֆ՝ 12 ռ. 80 կոպ., Թամամշյանց Ս. Մ.՝ 10 ռ., Առաջին օրիորդաց գիմնազիայի ուսուցչակազմ՝ 5 ռ. 21 կ., դ-ր Գոզդանով 60 ռ., դ-ր Սինասյանց՝ 4 ռ., Ռոտինյանց՝ 50 կոպ., դ-ր Ստեֆանիդիս՝ 50 ռ., Շահպարոնյանց Նատալյա՝ 100 ռ. (“Т-л”, 1910, № 275), Բաքվի քաղաքային ինքնավարությունից Թումանյանց Մ. Մ.-ի միջոցով՝ 10000 ռ., Բաքվից վաղամեռիկ դստեր հիշատակին՝ ծխախոտի գործարանատեր Միրզաբեկյանց Գևորգ Ռ.՝ 1500 ռ. (“Кавказ”, 1911, № 174, “Т-л”, 1912, № 17), Կոնստանտին Ստրաժևսկու հիշատակին՝ 25 ռ., Նազարեթ Սինասյանի հիշատակին՝ Քեշիշյան Ա. և Իսկանդարյան Գ.՝ 25-ական ռ., Ռեշել Վ. Ա.՝ 15 ռ. (“Т-л”, 1912, № 37), իշխ. Աբամելիք Դ. Ե.՝ 10 ռ. (“Т-л”, 1912, № 47):

57 «Արարատ», 1910, էջ 300, 394:

58 «Մշակ», 1895, № 122, 24 հոկտ., էջ 2:

59 Ռուսահայ լուրեր, «Կոչնակ», 1910, № 24, էջ 574-575: Տե՛ս նաև «Մշակ», 1910, № 26:



**Աբասթումանի Սբ. Գևորգ եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ի դարի սկիզբ)**

կերտուհիները սովորում են յանուն Գէօրգի քաղաժառանգի հիմնած միսիոնարական դպրոցում, ուր տեղական քահանան շաբաթական 6 ժամ հայերէն և կրօն է պարապում»[60]:

**Գրադարան-ընթերցարան.** հայտնի է, որ 1913 թ. գործել է Կովկասյան հայոց բարեգործական ընկերության (ԿՀԲԸ) Ախալցխայի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանը, որին նույն թվականին ախալցխացի Վարդան Վարդանյանը նվիրել էր հայերեն և ռուսերեն գրքեր[61]:

**Թատրոն.** ըստ Տ. Տոնոյանի վկայության՝ 1913 թ.-ից սկսել է գործել սիրողական թատերախումբ, որը 1914 թ. փետրվարի 14-ին, հօգուտ ԿՀԲԸ տեղի մասնաճյուղի, բեմադրել է «Սիբիրական» կատակերգությունը և Մարությանի «Կըռթ-կըռթ» զավեշտախաղը[62]:

**Հայ առաքելական Սբ. Գևորգ եկեղեցի.** գտնըվում է ավանի հարավային կողմում տարածված Ներքին թաղում՝ անտառներով շրջապատված ծըրակի արևմտահայաց լանջին:

Տակավին 1877 թ. ախալցխաբնակ սղնախեցի Ալեքսանդր Աբելյան Միրաքյանցը 1000 ռուբլի է նվիրել Աբասթումանում եկեղեցի կառուցելու համար[63], իսկ 1878 թ. հոկտեմբերի 28-ին դիմել է Ախալցխայի հոգևոր իշխանություններին կառուցվելիք եկեղեցու տեղի և հողահատկացման հարցը լուծելու, ինչպես նաև իրեն դրամահավաք կատարելու թույլտվության խնդրանքով[64], սակայն գործն ընթացք չի ստացել:

1882 թ. արծարծվել էր «...յանուն սբ. Աստուածածնայ նորոգ կառուցանելի եկեղեցւոյն հայոց ամարանոցին Ապասթումանի» խնդիրը[65]:

1885 թ. վկայվել է. «Հայերը չունին եկեղեցի հաստատուն և կառավարվում են մի փոքրիկ աղոթատնով, ունենալով իրանց հովուող Ախալցխայից երթևեկող քահանայ. եկեղեցու պէտքը զգալի է»[66]:

1887 թ. հոկտեմբերի 18-ին (այլ տեղեկագրի համաձայն՝ նոյեմբերի 17-ին)[67] հաստատվում է մինչ այդ արդեն երկու անգամ (1881, 1884 թվականներ)[68] ետ վերադարձված կառուցվելիք եկեղեցու նախագիծը[69]:

1891 թ. եկեղեցի կառուցելու նպատակով հողակտոր էին նվիրել Աբասթումանի կալվածատերերից

---

60 **Պարոյր**, նշվ. հոդվ., «Հովիտ», 1914, № 39, էջ 619:

61 «Մշակ», 1913, № 7, էջ 4:

62 **Էվոյան Ս.**, **Հովհաննիսյան Ջ.**, Փաստաթղթեր նախասովետական շրջանի հայ սիրողական թատերախմբերի մասին, «ԲՀԱ», 1974, № 1, էջ 68:

63 «Արձագանք», 1887, № 28, էջ 417:

64 **Ղազազեան Գ.**, Աբասթումանում հայոց եկեղեցի կառուցանելու պատմութիւնը, «Նոր-Դար», 1897, № 153:

65 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3329, թ. 17:

66 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:

67 **Ղազազեան Գ.**, նշվ. հոդվ., «Նոր-Դար», 1897, № 153:

68 Նույն տեղում:

69 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 8984, թ. 10:

կումայրեցի Զիրոյղյանները[70]: Նույն թվականին դեռևս գոյություն չունեցող եկեղեցու առթիվ նշվել է. «Միակ պակասութիւնը, որ զգում է ամեն մի հայ այս հրաշալի ամարանոցում, դա հայոց եկեղեցու բացակայութիւնն է, որ միանգամայն ամօթաբեր է Աբասթումանում մեծամասնութիւն կազմող հայ հասարակութեան համար, եթէ աչքի առաջ ունենանք, որ հայերից շատ սակաւ ռուսներն ու կաթոլիկները ունեն իրանց եկեղեցիները: Լուր կայ թէ պ. պ. Փրիդոնեան և Իւզբաշեան կամենում են իրանց ծախսով կառուցանել մի եկեղեցի: Այդ նպատակով վաղուց արդէն հանգանակված է 1000 րուբլի»[71]:

Ըստ երևույթին, այս վերջին հույսերն էլ չէին արդարացել, ուստի Ախալցխայի փոխանորդի նախաձեռնությամբ սկիզբ էր դրվել հանգանակությանը: Վերջինս ընդհատվել էր, երբ բաքվաբնակ Հակոբ և Հովակիմ Իսահակյան Աղամյանց եղբայրները[72] հանձն էին առել ոչ թե մասնակցել հանգանակությանը, այլ ամբողջովին ստանձնել եկեղեցու կառուցման ծախսերը. «1892 թուականին բարեպատէհ հանգամանքներում հիւր լինելով Աբասթումանում բարեպաշտ Յակովբ և Յովակիմ Աղամեանց եղբայրները յօժար ցանկութեամբ յանձն առան սեփական ծախսով հայկական եկեղեցի կառուցանելը»[73]: Ընդ որում, բարեգործ եղբայրները պարտավորվել էին իրենց միջոցներով կառուցել նաև եկեղեցուն կից դպրոցի շենք և քահանայի ու տիրացուի համար բնակարաններ[74]: Նվիրաբերված գումարն էր 10000 ռուբլի[75]:

Լուծված չէր եկեղեցու կառուցման տեղի հարցը, որն էլ ակամա պատճառ էր դարձել շինարարական աշխատանքների ձգձգման:

1894 թ. վավերագրերը, այն է՝ գրագրություն Վրաստանի թեմական կոնսիստորիայի և Էջմիածնի սինոդի միջև դեռևս հեռու էին գործնականությունից[76]: Անճարակությունից տեղի հայերն օգտագործում են նույն տարում կայսեր մոր՝ Աբասթուման գալու առիթն ու գոնե վարչական արգելքները վերացնելու ակնկալությամբ ներկայացնում մի խնդրագիր[77]:

Արդյունքը երկար սպասեցնել չի տալիս, և արդեն հաջորդ՝ 1895 թ., եկեղեցու՝ դեռևս 1887 թ. հաստատված նախագիծը տեսնելու ցանկություն է

70 «Արձագանք», 1891, № 21:
71 «Մշակ», 1891, № 81, 20 յուլիս, էջ 1:
72 Հայտնի է, որ եղբայրներից Հակոբը 1-ին կարգի վաճառական էր և Բաքվի ժառանգական պատվավոր քաղաքացի, իսկ Հովակիմը՝ 2-րդ կարգի վաճառական: Եկեղեցու կառուցումը ստանձնել էին ի հիշատակ իրենց ծնողների՝ Իսահակ և Ծաղիկ Աղամյանցների («Արձագանք», 1892, № 107, էջ 2):
73 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3329, թ. 76:
74 «Նոր-Դար», 1892, № 137, էջ 1:
75 «Արձագանք», 1892, № 107, էջ 2:
76 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8984, թ. 1, 5: Տե՛ս նաև ՎԱԴ ֆ. 204, ց. 1, գ. 959, թ. 1-37:
77 **Ղազազեան Գ.**, նույն տեղում:



**Աբասթուման. Սբ. Գևորգ եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ի դարի սկիզբ)**

հայտնում Կովկասի նահանգապետը[78]: Նույն թվականին Թիֆլիսի նահանգային իշխանությունը Վրաստանի հայոց թեմի առաջնորդին հաղորդել է, որ «...թագաւոր կայսրը բարձրագոյն բարեհաճել է թոյլատրել Աբասթումանում հայկական եկեղեցի կառուցանել»[79]:

Ամենատարբեր պատճառներով եկեղեցու կառուցման գործի ձգձգումից ձանձրացած և գրեթե հուսահատված՝ Հակոբ Աղամյանցը, որի Հովակիմ եղբայրն արդեն վախճանվել էր, 1897 թ. մի գրությամբ խնդրում է շուտով կատարել հողահատկացումը, որպեսզի ինքն ի վերջո կարողանա կատարել իր և արդեն հանգուցյալ եղբոր խոստումը[80]:

Վերջապես նույն թվականի օգոստոսի 19-ին բժշկական և ոստիկանական վարչությունները վավերացնում են 628 քառակուսի սաժեն հողամասի հատկացումը, որը գտնվում էր «...96 համար հողաբաժնի դէմ խճուղու ձախ կողմը, լեռան զառիվայրի վրայ: Թէև սոյն գետինը գտնւում է Աբասթումանի կենտրոնից հեռու դրանով ներկայիս ժողովրդի համար անյարմարութիւններ է առաջացնում, բայց տեղի դիրքը լինելով բարձրաւանդակի և ճանապարհի վրայ, ապագային ունենալու է մի գեղեցիկ և աչքի ընկնող շինութեան տեսք»[81]: Մի քանի օր անց

78 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8984, թ. 10:
79 «Արձագանք», 1895, № 148, էջ 2:
80 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3329, թ. 99:
81 **Ղազազեան Գ.**, Աբասթումանի հայոց եկեղեցու հիմնարկէքի հանդէսը, «Նոր-Դար», 1897, № 147, էջ 1:







**Աբասթուման. Սբ. Գևորգ եկեղեցու նախագիծը և հացի փռի վերածված ժամանակակից տեսքը հյուսիս-արևմուտքից և հյուսիս-արևելքից**

Վրաստանի թեմի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոսի գլխավորությամբ և Ախալցխայի 1897 թ. թեմակալ Պետրոս վարդապետ Այվազյանցի[82] մասնակցությամբ տեղի է ունենում («...տասնևութ տարուայ ընթացքում այս և այն կողմը խփուելով, այժմս կատարումն ստացաւ...»[83]) երկար սպասված եկեղեցու հիմնարկեքը. «Ի 24 ամսոյս օծի զհիմն նորոգ կառուցանելի եկեղեցւոյն հայոց Աբասթումանի յանուն սրբոյն Գէորգայ, ըստ ծիսի Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ»[84]:

Շինարարական աշխատանքները տևում են ընդամենը մեկ տարի, և 1898 թ. օգոստոսի 16-ին «...յաւուր տօնի վերափոխման սուրբ Աստուածածնի օծի զնորակառոյց սուրբ Գէորգ եկեղեցին»[85]:

Ճարտարապետն էր 1877 թ. Կարինից Աբասթուման փոխադրված Գրիգոր Կիրակոսյանը[86]:

Կառուցման ավարտի կապակցությամբ եկեղեցու ներսում ագուցվում է միևնույն բովանդակությամբ երկլեզվյան՝ հայերեն և ռուսերեն արձանագրությամբ մարմարե սալիկ:

82 «Նոր-Դար», 1897, № 147, էջ 1-2:
83 **Ղազազեան Գ.**, նույն տեղում:
84 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3329, թ. 126:
85 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3329, թ. 135: Տե՛ս նաև «Նոր-Դար», 1898, № 147, էջ 2; № 150, էջ 2:
86 ՀԱԴ, ֆ. 227, ց. 1, գ. 27, թ. 4:





**Աբասթումանի. խաչքարանդակ Սբ. Գևորգ եկեղեցու արևելյան պատին, շինարարական արձանագրությունը**

Արձանագրություն. 11 տող.

*Յանուն հօր և որդոյ և սրբոյ հոգւոյն ամէն. / հազար ութ հարիւր իննսուն և ութ ամի (1898) ի թագաւորու(թ)ե(ա)ն / նորին մեծութեան Նիկօլա II Ալէքսանդրովչի / ինքնակալ կայսերն համայն ռուսաց և ի հայրապետութեան / S.S. Մկրտչի սրբազնագոյն կաթողիկոսի և ծայրագոյն / պատրիարգի ամենայն հայոց կառուցեալ է եկեղեցիս այս / ի փառս ամենաբարձրեալոյն ա(ստուծո)յ, արդեամբ և ծախիւք / առևտրական տան բազուաբնակ եղբարց Յակոբայ և Յովակիմայ Աղամեանց / և ի յիշատակ յապատև բնակութեան յաւանիս Աբասթուման օգոստա/փառ թագաժառանգին նորին կայսերական բարձրութեան / Գէորգի Ալէքսադրովչի տաճարս կոչի անուամբ սրբոյն Գէորգի զօրավարի:*

Հրատ. առաջին անգամ:

Հայտնի է, որ 1918 թ. մարտին թուրքերը թալանել են եկեղեցին[87] և հափշտակել երեցփոխի մոտ պահվող 10000 ռուբլի արժողությամբ եկեղեցական բազմաթիվ իրեր[88]:

Եկեղեցին մեզ է հասել կանգուն, սակայն խիստ ձևափոխված վիճակով: Ունեցել է արևմուտքից կից եռահարկ զանգակատուն, որն այժմ հիմնավեր վիճակում է: 1989 թ. շենքը օգտագործվում էր որպես հացի փուռ:

**Քահանա (հայ առաքելական).** 1882 թ. Աբասթումանի համար քահանա է կարգվում Ախալցխայի Սբ. Փրկիչ եկեղեցու միաբան *Ղազարոս Բաղդասարյան Պահլավունին* (ծնվ. 1846 թ., ձեռն. 1879 թ.)[89], տիրացու՝ դպիր Հ. Հակոբյանցը[90]: Ի դեպ, Պահլավունին վախճանվել է 1907 թ. և թաղվել նույն եկեղեցու բակում[91]:

Մինչ 1912 թ. քահանայազուրկ ավանի համար քահանա է ընտրվում և ձեռնադրվում ախալքալաքցի ուսուցիչ *Տիգրան Մկրտչյան Տոնականյանցը* (ծնվ. 1860 թ.)[92]:

**Վերափոխման ամենասուրբ Կուսին Մարիամու հայ կաթոլիկե եկեղեցի.** գտնվում է ավանի հարավկողմում: Ի սկզբանե փայտաշեն կառույց էր: Այն կառուցել էր ախալցխաբնակ Կարլո Ողբաթովը 1866 թ.[93]: Հիշվում է նաև 1887 թ.[94]:

87 «Մշակ», 1918, № 27, էջ 3: Տե՛ս նաև **Սանոսյան Ա.**, Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918-ի ինքնապաշտպանությունը, Երևան, 1992, էջ 51:

88 «Շարժում», 1918, № 18, էջ 1:

89 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 795, թ. 30:

90 **Ղազազեան Գ.**, նշվ. հոդվ., «Նոր-Դար», 1897, № 153:

91 "Тифлисский листок", 1907, № 279.

92 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 832, թ. 1, 12, 18, 25:

93 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 80: Տե՛ս նաև «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

94 «Արձագանք», 1887, № 28, էջ 417:

ԺԹ դարավերջին հիշատակվում է հայ կաթոլիկական փոքրիկ մատուռը[95]:

1905 թ. վերակառուցվել է ծխականների և բարերարների միջոցներով[96]: Հիշվում է նաև 1916 թ.[97]:

Սրբատաշ քարերով կառուցված միանավ թաղածածկ շենք է:

**Քահանա կամ ժողովրդապետ (հայ կաթոլիկե).** 1866 թ. հիշվում է եկեղեցու հիմնադիր *Կարլո քահանա Մղեբարովը*[98], իսկ 1916 թ.-ին՝ ժողովրդապետ *Անտոն Հակոբովը*[99]:

**Անվանի աբասթումանցիներ.** ծնունդով աբասթումանցի էր ճարտարապետ Գրիգոր Կիրակոսյանը: 1877 թ. նրա ստեղծած նախագծով հիմնովին վերակառուցվել է Ջավախքի Արակովա գյուղի Սբ. Գևորգ եկեղեցին[100]:

**Ռուսական եկեղեցի.** գտնվում էր հիվանդանոցի տարածքում: Հիշվում է 1887 թ.[101]:

ԺԹ դարավերջին հիշատակվում է որպես փոքրիկ կառույց[102]:

1905 թ. հունիսի 28-ին մեծ իշխան Գեորգի Ալեքսանդրովիչի գերեզմանի տեղում օծվել է կառուցվելիք եկեղեցու հիմքը[103]:

**Կամուրջ.** կոչվել է բժիշկ Ռեմմերտի անվամբ[104]:

**Աստղադիտարան.** գործել է 1892 թ.-ից[105]:



**Աբասթուման. հայ կաթոլիկե Վերափոխման Սբ. Մարիամ եկեղեցին (լուս.՝ 1988 թ.)**

95 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 237:
96 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 80:
97 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 31:
98 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 80:
99 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 80:
100 ՀԱԴ, ֆ. 227, ց.1, գ. 27, թ. 4:
101 «Արձագանք», 1887, № 28, էջ 417:
102 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 237:
103 “Кавказский календарь на 1913 г.”, Тифлис, 1912, с. 173-174.
104 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 237:
105 Նշվ. աշխ., էջ 237:

# ԱԽԱԼՑԽԱ



**Ախալցխա. ընդհանուր տեսքն արևելքից**

**Տեղադրությունը.** գտնվում է Կուր գետի ձախ վտակ Փոցխովի ափերին՝ վերջինիս՝ Կուր գետի հետ միախառնման տեղից գրեթե 5 կմ արևմուտք, ծովի մակերևույթից 940-1120 մ բարձրության վրա: Արևելք-արևմուտք ուղղությամբ ունի շուրջ 3 կմ երկարություն և գրեթե նույնքան էլ լայնություն[1]:

**Անվան ստուգաբանություն.** Ախալցիխե անունը վրացերեն է և նշանակում է նոր բերդ. «Բնիկ վիճակ Ախալ-ցիխէ քաղաքի, որ թարգմանի Նոր Բերդ...»[2]: Հիշատակվում է ԺԳ դարից սկսած, երբ վրացիները, գրավելով հնամենի բերդը, նորոգելուց հետո կոչել են այդ անվամբ: Հայերը, քիչ աղավաղված, կոչել են Ախալցխա[3], իսկ թուրքերն անվանել են Աղսիխա, Ակիսկա կամ Ախիսկա[4]:

**Բնական աղետներ.** իր բազմադարյան պատմության ընթացքում Ախալցխան բազմիցս վնասվել

1 Քաղաքի տեղադրությանն անդրադարձած հեղինակները նշել են. «...Փոցխովի և Կուրի միախառնման տեղից վերև գտնվում է Ախալցիխե նշանավոր քաղաքը» (**F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 257): Տե՛ս նաև «Ախլցխայ քաղաքը հիմնած է Փոցխով գետի ձախ կողմումը վեց վերստ հեռու այն տեղից, ուր նա միանում է Կուր գետի հետ» (**Հազարապետեանց Ի.**, Ախալցխայու սուրբ Վարդանայ եկեղեցու օծման հանդէսը, «Մեղու Հայաստանի», 1864, № 18, էջ 148): Նաև «Ախալցիխը... ռազմավարական կարևոր կետ է՝ որպես սահմանային քաղաք և Կովկասի և Թուրքիայի միջև առևտրական գլխավոր պահեստ-քաղաք: Գտնվում է Սև ծովի մակարդակից ավելի քան 1000 մ բարձրության վրա և ընդգրկում է երկու առանձին մաս, մեկը՝ հին, մյուսը՝ նոր, որոնք իրարից բաժանված են Կուրի վտակ Փոցխով գետով» (բնագրում՝ “Akhaltzikh... est un point stratégique important comme ville frontière, et un des principaux entrepôts du commerce de la Caucasie avec la Turquie. Elle est située à plus de 1000 mètres au-dessus de la mer Noire, et comprend deux parties distinctes, l’une ancienne, l’autre neuve, séparées par le Poskov-tchaï, affluant de la Koura”. **Madame B. Chantre**, A travers L’Arménie Russe, Paris, 1893, p. 340):

2 **Ալիշան Ղ.**, Տեղագիր Հայոց..., էջ 61:

3 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Գ, Երևան, 1955, էջ 179-180:

4 **Тифлисский старожилъ**, Географическая загадка, “Тифлисский листок”, 1900, № 20, с. 4.

է ոչ միայն թշնամական արշավանքների, այլև բնական տարբեր աղետների՝ երկրաշարժերի, հեղեղումների, երբեմն նաև հրդեհների հետևանքով:

*Երկրաշարժ.* գրավոր աղբյուրները Ախալցխայի՝ երկրաշարժից վնասվելու մասին տեղեկություններ են պարունակում՝ սկսած միայն ԺԳ դարից: Այդպիսիք են, օրինակ, 1270-1281 թվականների միջակայքում տեղի ունեցած երկրաշարժը, որը պատուհաս էր դարձել առավելապես Սամցխե երկրամասի համար. «...տիրոջ չարչարանաց շաբաթն էր, ավագ չորեքշաբթի երկիրը ուժգին խաղաց՝ ի ցուցումն մեր անհավատությունների: Հինգշաբթի երկիրը նորից քիչ խաղաց, ոչ ոք գլխի չընկավ, որ ողորմած աստված գթաց մեզ: Երբ հասավ տիրոջ չարչարանաց ուրբաթը, նորից շարժվեց երկիրը, ցնցեց ու անցավ: Երբ շաբաթ եկավ, դարձավ օրվա երրորդ ժամը, ...աստված այնպիսի զայրույթով նայեց երկրին՝ մեր անհավատությունների բազմության համար, որ երկիրը հիմն ի վեր ցնցվեց, այնպես ցնցվեց, որ խորտակվեցին տաճարներն ու վանքերը, եկեղեցիները, բերդերը, տները, կառույցները ավերվեցին, սարերն ու բարձունքները իջան, ժայռերը փոշու պես փլվեցին. գետինը ճեղքվեց ու կուպրի պես սև ջուր ցայտեց, բարձր ծառերը տապալվում էին ու խառնվում գետնի տարուբերումից: Ուստի փլվեց Ածղուրի տաճարը, իսկ աղոթք-աղերսանքով հանգչող Ածղուրի ամենասուրբ Աստվածածինը տաճարի կենտրոնումն էր գտնվում: Գմբեթը վար իջավ, բայց ինչպես մարդու գլխարկ՝ դրվեց [հանգստարանի] գլխին, անվնաս մնաց՝ իր զորությամբ: Այս սարսափելի զայրույթը միայն Սամցխեին հասավ, տևեց մինչև մեկ ամիս, իսկ այլուր չվնասեց, Մցխեթի տաճարը ևս փլվեց: Սամցխեում անթիվ մարդիկ կոտորվեցին, ոչ մի տեղ անվնաս տաճար, եկեղեցի, բերդ չմնաց»[5]:

Դարերի տևական ընդմիջումից հետո՝ միայն ԺԹ դարի առաջին կեսին ենք հանդիպում Սամցխե գավառի տարածքում երկրաշարժերի մասին վկայությունների: Մասնավորապես հիշարժան են 1845 թ. մայիսի 13-ի գիշերվա ժամը 12-ին Ախալցխայում և համանուն գավառում գրանցված 30 վայրկյան տևողությամբ երկրաշարժի երեք հարվածները: Առավել ուժգին առաջին հարվածի հետևանքով շատ տների պատերում ճաքեր են գոյանում[6]:

Տարերային աղետն Ախալցխան ցնցել է նաև 1847 թ. և պատճառել մեծ վնասներ[7]:

1853 թ. հոկտեմբերի 3-ից 4-ը Ախալցխա քաղաքում և համանուն գավառի տարբեր վայրերում գիշերվա ժամը 00.30-ին գրանցվել է մի քանի վայրկյան տևողությամբ երկրաշարժ[8]:

1874 թ. փետրվարի 25(13)-ին՝ երեկոյան ժամը 10.30-ին, Ախալցխայում գրանցվել է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ երկրաշարժ[9]:

1899 թ. դեկտեմբերի 31-ին ողջ Ջավախքը ցնցած և բազմաթիվ զոհերի և ավերումների պատճառ դարձած երկրաշարժը բավականաչափ զգացվել է նաև հարևան Ախալցխայի գավառում, ինչպես և Աբասթումանում և Բորժոմում[10]:

*Հեղեղումներ.* հայտնի է, որ 1877 թ. օգոստոսի 2-ին երկու ժամ տևած տեղումները մեծապես վնաս են պատճառել գավառի ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչությանը. «...օգոստոսի 2-ին քաղաքի հիւսիսային կողմից համարեա երկու ժամի տեւողութեամբ կարկտախառն սաստիկ յորդ անձրև գալով, մեծ վնասներ տուեց թէ քաղաքին և թէ մերձակայ գիւղերին, այնպէս որ Ախալցխայի մէջ շատ տներ քանդվեցան: Քաղաքի դիրքը զառիվայր լինելով, տները մեծ մասամբ շինված լինելով զառիվայրի ստորոտների վրա, ջրով լցվեցան մինչև այն աստիճան, որ բնակիչներ օգնութիւն չը կարողանալով հասցնել, ստիպված թոյլ տուին, որ ջուրը տների միջով անցնի և միջի կարասիներին վնասելով մասամբ էլ դուրս տարաւ տներից և գցեց ընդհանուր հոսանքի մէջ: Մի քանի երեխաներ խեղդվեցան և մի երիտասարդ հայ, որ ուրիշներին օգնում էր հեղեղից ազատվելու, ինքն զոհ գնաց ջրերի կատաղի հոսանքին: Այդ սարսափելի հեղեղից քաղաքին պատճառած վնասների գումարը, ասում են 100.000 րուբլից աւելի է...»[11]:

Մոտ քառորդ դար անց ախալցխացիները նոր փորձության ենթարկվեցին և կրկին պատժվեցին ջրահեռացման խնդիրներն անուշադրության մատնելու պատճառով: Մասնավորապես 1903 թ. հուլիսի 31-ին քաղաքը բավական վնասվում է Մարդա գետի խիստ վարարման հետևանքով. «Յուլիսի 31-ին գիշերը սարսափելի անձրև եկաւ: Քաղաքիս միջով հոսող Մարդա-չայ առուակն արագօրէն բարձրացաւ ափերից, և ջուրն սկսեց ողողել շրջակայ շինութիւնները, տները, խանութները, ագարակները, պարտէզները, ջրի կատաղի հոսանքն արմատախիլ արաւ շատ ծառեր, քանդեց տարաւ կամուրջներ, պարիսպներ, փայտաշէն և քարաշէն խարխուլ տներ: Վնասներն ահագին են»[12]:

*Հրդեհ.* 1887 թ. փետրվարի 5-ին՝ երեկոյան 9.30-ին բռնկված հրդեհը հասցրել է մոտ 100000 ռուբլու

---

5 Վրաց ժամանակագրություն. 1207-1318, թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Պարույր Մուրադյանի**, Երևան, 1971, էջ 146-147: Սույն երկրաշարժի մասին խիստ համառոտ վկայություն ունի նաև Այրիվանեցին. «Շարժն եկն ի Վրացտուն եւ բազում վնաս արար» (**Մխիթար Այրիվանեցի**, Պատմութիւն, Մոսկուա, 1861, էջ 68):

6 “Кавказский календарь на 1852 г.”, с. 61.

7 **Сегаль И.**, Очерки Кавказских городов: город Ахалцих, “Обзор”, 1878, № 222, с. 1.

8 “Кавказский календарь на 1855 г.”, с. 99.

9 “Кавказский календарь на 1876 г.”, с. 51.

10 «Հանդէս Ամսօրեայ», 1900, փետրուար, էջ 61:

11 «Մշակ», 1877, № 58, էջ 2:

12 «Նոր-Դար», 1903, № 136, էջ 1:

վնաս: Հրդեհից տուժածներին օգնելու նպատակով գավառապետ Մեսխիևի կարգադրությամբ փետրվարի 13-ին բեմադրվել են հայերեն, վրացերեն և ռուսերեն լեզուներով ներկայացումներ[13]:

150000 ռուբլու վնաս է հասցրել 1914 թ. Ախալցխայում բռնկված հրդեհը, որը «...մոխիր դարձուցեր է բազմաթիվ հայերու խանութներ»[14]:

**Պատմություն.** «Աշխարհացույցի» գիտական մեկնությունների հեղինակ-պատմաբանները ցարդ Ախալցխայի՝ Մեծ Հայքի թագավորության վարչական սահմանների մեջ ընդգրկված-չընդգրկված լինելու հարցում միակարծիք չեն: ԺԹ դարի հասարակական ենթագիտակցության մեջ կարծրացած տեսակետի համաձայն՝ Ախալցխան Մեծ Հայքի Տայք նահանգի մաս էր կազմում. «Ախալցխան իւր գաւառովը մեր ազգային պատմութեան մէջ յայտնի՝ Տայոց աշխարհ, Տայքաստան և երբեմն լոկ Տայք անուններով և է Հայաստանի Մեծ Հայք կոչուած մասի զերեքտասաներորդ նահանգը»[15]:

Նույն համոզմունքն ուներ նաև անվանի պատմաբան Լեոն: Ըստ նրա՝ Ախալցխան, ներառելով ավելի ուշ շրջանում ձևավորված Չուխուրեթ, Էրաշեթ և Ախալցխա գավառամասերը, համապատասխանում էր 14-րդ նահանգ Տայքի Ճակք կամ Ճակատք գավառին[16]:

Տարածաշրջանի նորագույն ժամանակաշրջանի հեղինակները, սակայն, հերքում են առկա տեսակետները և գտնում են, որ Սամցխեն կամ Ախալցխայի գավառը Մեծ Հայքի սահմաններից դուրս, հարևանակից գավառ էր:

Երկրամասը երբեմն նույնացվել է Վարդան Արևելցու հիշատակած Իշխանաց երկրի հետ, որն Իշխան գյուղն է, այլ ոչ Ախալցխան[17]:

**Ախալցխայի իշխանական տան ներկայացուցիչները.**

*Սարգիս իշխան,* հայր՝ Շալվայի և Իվանեի, «Վրաց ծառայության էր և շատ տեղեր խլեց Պարսիկներից»[18]:

*Շալվա*[19]. որդի Սարգսի, եղբայր՝ Իվանեի, 1194/1195 թ. հիշվում է Շալվա Ախալցխացին, որը

---

13 **Հրազն**, Նամակ Ախալցխայից, «Արձագանք», 1887, № 6, էջ 85:

14 «Կոչնակ», 1914, № 13, էջ 309:

15 **Գեղամեանց Յ.**, Նամակ Ախալցխայից, «Փորձ», 1876, № 1, էջ 428: Հմմտ. «Այս գավառը հաճախ է ներառվել Տայքի երկրամասի մեջ, որը գտնվում է Բարձր Հայքից հյուսիս-արևելք, Արարատի գավառից հյուսիս, Գուգարքի գավառից արևմուտք, Խաղդիքի (հունարեն՝ Կելդիր) երկրից և Լազերի երկրից արևելք և վերջապես դեպի հարավ Կոլխիդայի և Իվերիայի այն մասից, որը կազմում էր Գուրիելի թագավորությունը մինչև ռուսների նվաճումը: Հայաստանի թագավորության անկումից հետո Տայքի երկիրն անցավ բյուզանդական կայսրերի տիրապետության տակ: Սակայն Մամիկոնյան իշխանները, որոնք ժառանգական տիրույթներ ունեին այնտեղ, և նրանցից հետո էլ՝ վրացիները, երբեք չթողեցին, որ նվաճողները հանգիստ վայելեն նվաճածը» (բնագրում՝ “Cette province fut souvent comprise dans celle de Daïkh, située au nord-est de la Haute-Arménie, au nord de la province d’Ararat, à l’ouest de celle de Koukarkh, à l’est du pays de Khadghdigh (le Keldir des Grecs), et de celui des Lazes, et enfin au sud de la partie de la Kolchide et de l’Ibérie qui formoit le royaume de Gouriel avant sa conquête par les Russes. Après la destruction du royaume d’Arménie, le pays de Daïkh passa sous la domination des empereurs de Constantinople; mais les princes Mamigoniens qui y avoient une partie de leurs possessions héréditaires, et après eux les Géorgiens, ne leur en laissèrent jamais la jouissance paisible”. **Chevalier Gamba**, Voyage dans la Russie méridionale et particulièrement dans les provinces situées au-delà du Caucase, fait depuis 1820 jusqu’en 1824, Paris, 1826, t. I, p. 401): Նաև «Մ. թ. I դարի վերջերին Փոքր Հայքի թագավոր Երվանդը (Erovant), որը տիրել էր Մեծ Հայքին, նվաճեց նաև Զեմո-Քարթլին և միացրեց իր տարածքներին: Նա բնակեցրեց վայրենի ժողովուրդներին՝ նրանց տեղավորելով նաև Ծունդայում: Նրա և հաջորդի օրոք վրացիներն ամեն ջանք գործադրեցին, որպեսզի ետ ստանան իրենց իրավունքները և այդ բանին հասան միայն արյունալի ճակատամարտերի գնով» (բնագրում՝ “Vers la fin du premier siècle de notre ère, Erovant, roi de la petite Arménie, s’étant emparé de la grande Arménie, fit aussi la conquête du Sémo-Karthli qu’il ajouta à ses états; il y colonisa des peuples sauvages dont il peupla entre autres Tzounda. Les Géorgiens sous lui et sous son successeur firent tous leurs efforts pour rentrer dans leurs droits, et n’y parvinrent qu’après de sanglants combats”. **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ. 275): Նաև «Ին՜-որ ժամանակ մտնելով հայկական թագավորության մեջ՝ Ախալցխայի մարզը հետագայում անցավ արևելյան կայսրությունների տիրապետություններին և վերջապես նվաճվեց վրաց թագավորներից» (բնագրում՝ ”Составляя некогда достояние Армянскаго Царства, Ахалцых в последствии перешел во власть Восточных Императоров, а наконец был завоеван Грузинскими Царями”. **Ушаков Н.**, նշվ. աշխ., часть первая, СПБ, 1836, էջ 58): Տե՛ս նաև “Кавказский календарь на 1850 г.”, с. 36. Նաև «Ախլցխայ՝ հին ժամանակումը Հայաստանի քաղաքներից մինն էր եւ այս կողմերս կոչվում էր Տայք, յետոյ ընկաւ Բիւզանդիոյ կայսերաց իշխանութեան ներքեւ եւ վերջապէս տիրեցին նրան Վրաց թագաւորները, զոր յետոյ նուաճեցին պարսիկները, իսկ 1635 ամին ընկաւ նա թուրքերի իշխանութեան ներքեւ եւ հուսկ ուրեմն 1829 թուին միացաւ Ռուսաստանի հետ Ադրիանուպօլի դաշանց զօրութեամբ» (**Հազարապետեանց Ի.**, նշվ. հոդվ., էջ 148): Նաև «...Ախալցխայի մարզը Ք. ա. Բ դարում՝ հայոց Վաղարշակի օրով, սկզբում կազմել է 15 նահանգների բաժանված հայկական թագավորության Տայք նահանգի մի մասը: Ք. հետո՝ ԺԲ դարում, այն անցել է Վրաստանի իշխանության ներքո և ստացել Զեմո Քարթլի (Վերին Քարթլի) անունը» (բնագրում՝ ”...ахалцихская область сначала составляла часть провинции Далкх, одной из пятнадцати, на которыя было разделено армянское царство Вагаршаком, во II веке до Р. Х. В XI в по Р. Х., она перешла по власть Грузии и получила название Земо-Картли (верхняя Карталиния)...” **Сегаль И.**, նշվ. հոդվ., “Обзор”, 1878, № 222, էջ 1). Նաև «Ըստ աշխարհագրական բնական բաժանումին, Ախլցխա հին ժամանակներէ ի վեր Հայաստանի մաս կազմած էր, սակայն քիչ անգամ մեր իշխանները եւ թագաւորները կրցած են հոն երկար ժամանակ մնալ: Այդ քաղաքին իշխանները շատ անգամներ վրացական տան հարկատու եղած են» (**Յովհաննիսեան Մ.**, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 602-603):

16 **Լեո**, Երկերի ժողովածու, հ. Ա, Երևան 1966, էջ 163:

17 **Յովհաննիսեան Մ.**, նշվ. աշխ., էջ 602:

18 **Աճառյան Հր.,** Հայոց անձնանունների բառարան, հատոր Դ, Երևան, 1948, էջ 417:

19 **Աճառյան Հր.,** նշվ. աշխ., էջ 101:

մասնակցել էր Շամքորի գրավման հաղթական ճակատամարտին[20]:

1204 թ. տեղի ունեցած Բասենի ճակատամարտում Զաքարիա ամիրսպասալարի հրամանատարության ներքո գործող հայ-վրացական միացյալ զորքի կազմում առաձնահատուկ դեր էին կատարել Ախալցխայի տերերը. «Զորքերը շարժվեցին: Առաջամարտիկը ամիրսպասալար Զաքարիա Երկայնաբազուկն էր և Ախալցխացի երկու եղբայրները՝ Շալվան ու Իվանեն, ընդ որում Շալվան մանդատուրթ-ուխուցես էր...»[21]:

Շալվա Ախալցխացին գերի է ընկել 1224 թ. Ջալալեդդինի դեմ արշավանքի ժամանակ:

Վրաց եկեղեցին Շալվա Ախալցխացուն սրբացրել է[22]:

*Իվանե (Ղվարղվարե).* որդի՝ Սարգսի, եղբայր՝ Շալվայի, 1206/1207 թվականներին հիշվում է Ախալցխայի տեր Իվանեն («Սամցխեի սպասալար և մեճուրճլեթ-ուխուցես...»)[23], որի տիրույթներին էր միացվել նաև Կարսը. «...և թողեց որպես Կարիի պաշտպան Իվանե Ախալցխացուն և նշանակեց սահմանակալ և շնորհեց աթաբագություն ու ամիրայից-ամիրայություն»[24]:

Մոնղոլական արշավանքների ժամանակ, երբ Հայաստանի և Վրաստանի բազմաթիվ իշխաններն իրենց իշխանության ներքո գտնվող գավառներն ավերածություններից փրկելու համար ճարահատյալ հպատակվում էին և դառնում հարկատու, «...մեսխերը թագուհի Ռուսուդանի արժանապատվության համար չհպատակվեցին: Դրանից կատաղած Չաղաթա նոյինը արշավեց Սամցխեն, իսկ վախից ստիպված՝ մեսխերը ներփակվեցին բերդերում: Այսպիսով, Սամցխեում բազմաթիվ մարդիկ գերվեցին ու կոտորվեցին, բյուր ժողովուրդ սպանվեց: Երբ այլևս զորություն չկար, Իվանե Ցիխիսջվարել-Ջաղեցին, որին նաև Ղվարղվարե էին կոչում, դիմեց թագուհի Ռուսուդանին, եթե կհավանի, երկիրը ավերումից ազատելու համար ինքը նույնպես ապավինի Չաղաթային, [դիմեց], որովհետև մեճուրճլեթ-ուխուցեսի պատիվ (պաշտոն) ուներ և Սամցխեի իշխանն էր: Համաձայնեց թագուհին և ուղարկեց: Ապա գնաց Իվանեն և հանդիպեց Չաղաթային, որը պատվով ընդունեց և երկրի պաշտպաններ նշանակեց»[25]:

*Բոցո Ջաղեցի.* 1210-ական թվականներին «Սամցխեի էրիսթավ ու սպասալար նշանակեցին Բոցո Ջաղեցուն»[26]:

*Դավիթ Իվանյան.* Ավագի սենեկապետն (հեջութ) էր, որի հետ ներկայացել է մոնղոլ Բաթույին. «...Ավագ աթաբեկն իր հետ այնտեղ էր տանում Իվանե Ախալցիխելու որդուն՝ Դավիթ անվամբ, որ Ավագի էջիբն էր»[27]:

*Իվանե (Պապա).* թոռ՝ Իվանեի (Ղվարղվարեի)[28]:

*Սարգիս Ջաղեցի (Ջաղելի) - Ցիխիսջվարելի.* թոռ՝ Իվանեի (Ղվարղվարեի). «...որ Սամցխեի սպասալարի պատիվն ուներ...»[29] և «...արի ու խիզախ, բազմափորձ, մարտերում անվանի, թիկնեղ, վարպետ հեծյալ կռվող, քաջ նետաձիգ և նշանակալի որսերի անվրեպ կոտորող մարդ էր»[30]: Դավիթ թագավորի (Դավիթ Է Ուլու, 1247-1270) հանդեպ հավատարիմ ծառայության համար «Թագավորն այնքան շնորհակալ եղավ, որ Սամցխեում Քուաբուլիանի (անձավավոր) մի թեմ և Շավշքում Տբեթի տաճարը հրովարտակով նրան որպես կալված շնորհեց»[31], իսկ Շապորան դաշտում մոնղոլ Բեքայի բանակի նկատմամբ տարած հաղթանակից հետո նաև ստանում է «Կարնո քաղաքն ու շրջակա երկիրը»[32], որը, սակայն, նախանձի և խարդավանքի արդյունքում նրանից շուտով ետ է վերցվում[33]:

1261 թ. մայիսին մոնղոլ Ուլու (Խուլաղու) խանը «...Արղունին ուղարկեց [վրաց թագավորին] (հմմ՝ Դավիթ Է Ուլու - Ս. Կ.) փնտրելու և հետապնդելու: Նրա հետ էին նաև խանին հարող վրացիներ: Հունիս ամսին եկավ Սամցխե: Մեսխերից ոմանք դիմավորեցին Արղունին, ոմանք էլ դեպի թագավորը գնացին: Սկսեց ավերել ու գերել Սամցըխեն...»[34]: Սակայն խանի հրամանով մոնղոլները Սամցխեից հեռանում են դեպի Խորասան. «Այսպես ազատեց աստված Սամցխեի երկիրը այդ արհավիրքներից. Արղունը քսան օր հազիվ մնաց Սամցխեում: Դավիթ թագավորը վերստին Շավշք ու Սամցխե եկավ և, տեսնելով Սամցխեն ավերված, կանչեց խոհակիցներին ու հարցրեց, թե ինչ անեն, որովհետև թաթարների հետ այլևս մարտ չէր սպասվում: Այն ժամանակ Սարգիս Ջաղել-Ցիխիսջվարելին զեկուցեց, թե «Սամցխեն փոքր էր ոչ լավ թագավորանիստ...»[35]:

1266 թ. սպասալար Սարգիս Ջաղեցու (Ջաղելի) գլխավորությամբ և մոնղոլ Աբաղա խանի աջակցությամբ Սամցխեն անջատվում է Վրաստանից և ձեռք բերում անկախություն[36]:

---

20 **Թորոսյան Խ.**, «Թագակիրների պատմությունն ու զովաբանությունը» որպես Զաքարյան Հայաստանի ու Զաքարյանների պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1992, էջ 373, տե՛ս նաև էջ 412:

21 Նշվ. աշխ., էջ 373, տե՛ս նաև էջ 433:

22 სახალხო გაზეთი, 1996, № 19.

23 Վրաց ժամանակագրություն. 1207-1318, էջ 79:

24 **Թորոսյան Խ.**, նշվ. աշխ., էջ 373, տե՛ս նաև էջ 430-431:

25 Վրաց ժամանակագրություն. 1207-1318, էջ 76:

26 **Թորոսյան Խ.** նշվ. աշխ., էջ 373, տե՛ս նաև էջ 388:

27 Վրաց ժամանակագրություն. 1207-1318, էջ 80:

28 Նշվ. աշխ., էջ 92:

29 Նշվ. աշխ., էջ 111:

30 Նշվ. աշխ., էջ 112:

31 Նշվ. աշխ., էջ 119:

32 Նշվ. աշխ., էջ 122:

33 Նույն տեղում:

34 Նշվ. աշխ., էջ 114:

35 Նույն տեղում:

36 **Бердзенишвили Н., Джавахишвили И., Джанашиа С.**, История Грузии, часть I, Тбилиси, 1950, с. 270.

Անկախացման առնչությամբ վկայվել է, որ նաև «...վերցրին Ածղուրը, Սամցխեն, որ իբրև կնոջ [օժիտ] պատկանում էր Փարմանին (իմա՝ Հունաստանի սուլթան էր. ամուսնացել էր Ռուսուդանի աղջիկ Գուրջի-խաթունի հետ), և պարգևեցին Սարգիս Ջաղելուն ու նրա որդի Բեքային»[37]:

*Բեքա Սարգսյան,* որդի՝ Սարգիս Ջաղեցի-Ցիխիսջվարեցու. «Պարթևահասակ էր այս Բեքան, գեղատես, խաժ ու գեղեցիկ աչքերով և մազերով, լայնակուռ, զորեղ ուժով, պատերազմում քաջ մարտնչող, արի հեծյալ, որսորդի պես վարժ նետաձիգ, զգոնամիտ, շինարար, եկեղեցիներին ու վանքերին, աստվածահաճորդ մարդկանց պատիվ տվող, աղոթող, որ չէր թերանում լուսաբացի, ցերեկվա ու երեկոյան աղոթքներից, ինչպես մաշտոցն էր կարգ հաղորդում...: Բեքան գրավեց Տասիսկարիից մինչև Կարնո քաղաք ընկած երկիրը, Սամցխեն, Աճարան, Շավշքը, Կղարջքն ու Տայքի մեծ մասը, Վաշլովանը, Նիգալիսխևին, Արտանուջը, տասներկու անապատները, Կողան, Կարնիփորն ու երկու Արտահանները, բազմաթիվ գյուղեր Ջավախքում»[38]: Իր հոր նման հավատարիմ էր և փոխադարձաբար հովանավորված Դեմետրե Բ թագավորից (1271-1289). «Այս ընթացքում ուժեղացան Սամցխեի սպասալար և մեճուրճլեթուխուցես Սարգիս Ջաղելին ու նրա որդի Բեքան, որոնք իշխում էին Սամցխեում»[39]:

1280-ական թվականներին «...ինչ-որ գործի պատճառով թաթարների դեմ ըմբոստացան Սարգիսն ու նրա որդի Բեքան: Սարգիսը ծերացել էր՝ ոտնացավով բռնված: Թուալ կոչվող Բուղա նոյինը ուղարկեց եղբորը՝ Արուխային՝ Սամցխեն ավերելու: Եկավ Արուխան քսան հազարանոց բանակով...: Զորքը եկավ, մտավ Սամցխե, բայց ոչինչ չվնասեց: Մնացին քսան օր և գնացին, իսկ երկիրը խաղաղությամբ մնաց»[40]:

Հայտնի է, որ ԺԴ դարասկզբին թուրքերը «...մտադիր էին Բեքայի երկիր գալ. Սամցխե, [ինչպես և] Քարթլի ու Սոմխիթ»[41]: Սակայն Վաշլովանի մոտ Բեքայի զորքերը կարողանում են ջախջախել թուրքերին և կանխում նրանց մուտքը Սամցխե:

Հաղթական ելքով մեկը մյուսին հաջորդած ճակատամարտերի շնորհիվ Բեքան ձեռք է բերում բացառիկ հեղինակություն: Այդ է վկայում Քարթլիում տևական անիշխանությունից հետո Դեմետրե Բ թագավորի որդի և Դավիթ թագավորի (մահ. 1293) եղբոր՝ Գեորգի Ե-ին թագավոր (1314-1346) հաստատելու գործում նրա էական դերակատարությունը. «Բեքայի տանն էր, որովհետև Բեքան հզորացել էր և նրան էր պատկանում Տասիս-Կարիից մինչև Սպեր ու մինչև ծով. Սամցխեն, Աճարան, Շավշքը, Կղարջքը, Նիգալիսխևին...: Սրանից (Բեքայից) խնդրեցին պատանի Գեորգիին, որ տա և իր եղբայր Դավթի փոխարեն Քարթլիի թագավոր դարձնեն»[42]:

Մոտավորապես 1310-ական թվականներին 66-ամյա Բեքայի մահը սգում է ողջ Սամցխեն. «...վախճանվեց Սամցխեի իշխան Բեքան՝ ամենայն ինչում կատարյալ, բարելեցուն, աստվածային և երկրային գործերում, առավել՝ արդարադատությամբ, վանքերի ու եկեղեցիների կառուցմամբ, երկրի վրա բարի հավատով, աղքատներին անչափ ողորմացողությամբ: Իսկ նրա սիրեցյալ կինը բարերար էր եպիսկոպոսների ու վանականների, ողջ հոգևորականների ու եկեղեցական սպասավորների հանդեպ: Երբ լսում էր, թե ինչ-որ տեղում լավ գործիչ, գիտուն եպիսկոպոս կամ վանական կա, իր մոտ էր կանչում-բերում, բազում պարգևներով ու պատվով վարձատրում նրանց: ...վաթսունվեց տարեկան հասակում վախճանվեց (իմա՝ Բեքան) և անչափ ողբ ու կական թողեց Սամցխեի բնակիչներին»[43]:

**Ախալցխան կիսանկախ աթաբեկության ժամանակաշրջանում (1314/1334-1463).** Բեքայի մահից հետո Սամցխեն անցավ նրա որդիներին՝ Սարգսին, Ղվարղվարեին և Շալվային[44]:

Օգտվելով Վրաստանի թուլացումից՝ իշխանական հարստության ներկայացուցիչ Սարգիս Բ-ն (1306-1334) Գեորգի Ե-ից ստանում է աթաբեկության տիտղոս և Սամցխեն կիսով չափ անկախ հռչակում. «Վրաստանի թագավորներն այս երկրում նշանակում էին կառավարիչներ, որոնք սկսեցին կոչվել աթաբեկներ»[45]:

Հայտնի է, որ կիսանկախ Սաաթաբագոյի հիմնադիր Սարգիս Բ-ն ժառանգել էր արդեն որպես տոհմական բնութագիր նկատված խիզախությունը. «Սարգիսը թեև պատանի էր, բայց քաջաբար էր կռվում, քանզի արիությունն ու խիզախությունը հայրական-պապական իր տոհմից էր ժառանգել»[46]:

Մինչև ԺԵ դարի կեսերն իրարահաջորդ կիսանկախ աթաբեկների ցանկում հիշվում են.

1334 թ. Սարգսին փոխարինում է իր որդի Կվարկըվարեն (Ղորղորե) Գեորգի Զ-ի հրամանով:

1361 թ. Բեքան՝ Կվարկվարեի որդին, նշանակվում է Բագրատ Ե-ի կողմից:

37 Վրաց ժամանակագրություն. 1207-1318, էջ 141:

38 Նշվ. աշխ., էջ 143, 165:

39 Նշվ. աշխ., էջ 143:

40 Նշվ. աշխ., էջ 147:

41 Նշվ. աշխ., էջ 177:

42 Նշվ. աշխ., էջ 169-170:

43 Նշվ. աշխ., էջ 187:

44 Նշվ. աշխ., էջ 187:

45 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 277 (բնագրում՝ “Les rois de Géorgie firent gouverner ce pays par des chefs qui prirent le nom d’Atabeg”.): Հմմտ. **Загурский Л.**, Поездка в Ахалцихский уезд в 1872 г., “Записки Кавказскаго отдела императорскаго русскаго географическаго общества”, книжка VIII, Тифлис, 1873, с. 2. **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 56-57:

46 Վրաց ժամանակագրություն. 1207-1318, էջ 178:

1391 թ. Իվանեն[47] նշանակվում է Գեորգի Է-ի կողմից:

1444 թ. Աղբուղան՝ Իվանեի որդին, նշանակվում է Վախթանգ Դ-ի (1443-1446) կողմից:

1451 թ. Կվարկվարեն՝ Աղբուղայի եղբայրը, նշանակվում է Գեորգի Ը-ի (1446-1466) կողմից[48]:

**Ախալցխան ԺԵ դարում.** ԺԵ դարն Ախալցխայի պատմության առավել փոթորկահույզ ժամանակաշրջաններից էր: Ողջ հարյուրամյակը նշանավորվում է քաղաքի և երկրամասի պարբերաբար ավերումներով և միջանկյալ վերակառուցումներով. «(Բագրատի որդի Կոստանտինե թագավորի օրոք) թուրքմենների անթիվ բազմություն եկավ Սամցխե և մոտեցավ Տաշիրին...»[49]:

Քաղաքի համար ողբերգական էր հատկապես 1416 թվականը: Օրհասն իբր սկսել էր մի կողմից տեղի վրացիների և հայերի, իսկ մյուս կողմից պանդուխտ պարսիկների միջև ծագած հակամարտությունից և Ատրպատականի տիրակալ Յուսուֆ ամիրային վերջիններիս փոխանցած գանգատից[50]: Քաղաքաբնակ քրիստոնյաների համար աղետալի վախճան ունեցած անցքն առանձնապես լայն արձագանք է գտել հայ պատմագրության մեջ. «Եւ գնացեալ ի քաղաքն Ախըլցխէ, եւ ժողովեալ զմանկունս քրիստոնէից՝ վրաց եւ հայոց...»[51] կամ «...բռնաւորն Թաւրիզու գնաց գաղտաբար ի վերայ Վրաց քաղաքին Ախըլցխու, էառ զքաղաքն եւ զմեծամեծսն կոտորեաց, եւ զկին եւ զորդիսն գերեաց՝ աւելի քան զՁՌ. (6000) ոգիս: Եւ լցաւ երկիր լալով եւ կոծով, եւ ազգս ամենայն յուսահատ եղեն, թէ վասն է՞ր մատնէ Աստուած զհաւատացեալս իւր ի ձեռն անհաւատից»[52], կամ «...գնացեալ անօրէն բռնաւորն Խարա-Ուսուփ կոչեցեալ, վառեալ չարութեամբ, և մտեալ ի Տունն Վրաց, և առեալ զքաղաքն յԱղլծխա, և զամենեսեան, առհասարակ, զարսն ի սուրն սուսերի մաշեալ, և զկանայս և զմանկունս գերի վարեալ...»[53]:

Չափածո ստեղծագործությամբ արհավիրքին անդրադարձել է նաև Գրիգոր վարդապետ Խլաթեցին.

«Եղև գընալ խան Ուսուֆին
յԱխըլծըխէ Վրաց քաղքին,
Արար ղազայ և գերութիւն,
Անթիւ վնաս և չարութիւն»[54]:

Քառորդ դար անց, սակայն, քաղաքը հասցնում է վերագտնել իր նախկին փառքը և արդեն 1441 թ. հիշվում է «...ի մեծահռչակ նահանգէն և յանուանի և յականաւոր քաղաքէն Ախըլցխոյ...»[55]:

Նոր արհավիրքներն իրենց երկար սպասեցնել չեն տալիս: Նախ 1444 թ. Ախալցխան կրում է պարսից ավերիչ և կործանաբեր արշավանքի հետևանքները. «Թուին ՊՂԳ Ջահնշէն զԱխլցխայ գերեցոյց»[56]:

Ապա մոտավորապես 1462 թ. շատ այլ վայրերի հետ միասին Ախալցխան գրավում է Լալա փաշան[57]:

**Ախալցխան անկախ աթաբեկության ժամանակաշրջանում (1463-1580).** մինչև 1463 թ. կիսանկախ դրություն ունեցող «...աթաբէկները կը հաստատուէին Վրաց թագաւորներէն, այդ տարին Կուարկուարէ աթաբէկը ինքզինքը բոլորովին անկախ ըրաւ: Զուր տեղ Վրաց թագաւորներն աշխատեցան հպատակեցընել աթաբէկները, որով և առիթ եղան ոչ սակաւ արիւնահեղութեանց և պատերազմաց»[58]:

Հայտնի է, որ Ախալցխայի տերերին վերստին հպատակեցնելու նպատակով վրաց թագավորները կարողանում են ստանալ նաև պարսիկների օժան-

47 Հիշատակարաններից մեկում Իվանեն վկայված է 1396 թ. «...ի պարոնութեան աթապակ Իւանին...» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 614: Այսուհետ՝ ԺԴ, համապատասխան էջերով):

48 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 278:

49 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները..., Գ., էջ 16: Կոստանտինե Ա-ն գահակալել է 1407-1411 թվականներին:

50 **Միքայէլ Չամչեանց**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, Գ, Վենետիկ, 1786, էջ 458 (թվականը դնում է 1413/1414-ի միջակայքում, որը ճիշտ չէ):

51 **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն, Երևան, 1999, էջ 127:

52 Նշվ. աշխ., էջ 236: Տե՛ս նաև Թովմա Մեծոփեցու յիշատակարանը, հրատարակեց իւր յառաջաբանով **Կարապետ Կոստանեանց**, Թիֆլիզ, 1892, էջ 62: Քաղելով Մեծոփեցուց՝ Գրիգոր Դարանաղցին գրել է. «Ի թվ ՊԿԵ (1416) բռնաւորն Թավրիզու գնաց գաղտ ի վերայ Ախլցխու եւ զամենայն մեծամեծսն կոտորեաց, զկին եւ զորդիս նոցա գերեաց՝ վեց հազար ոգիս եւ լցաւ ամենայն աշխարհս մեր աղաղակաւ (Ժամանակագրութիւն **Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ**, հրատ. Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 309):

53 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա, Երևան, 1955, էջ 186-187 (այսուհետ՝ ԺԵԱ, համապատասխան էջերով):

54 ԺԵԱ, էջ 280: Տե՛ս նաև **Ալիշան Ղ.**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 567:

55 ԺԵԱ, էջ 518:

56 **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք Պատմութեանց, Երևան, 1990, էջ 473: Տե՛ս նաև Մանր ժամանակագրություններ, Բ, Երևան, 1956, էջ 515 (այսուհետ՝ ՄԺԲ, համապատասխան էջերով):

57 Նույն դեպքերի առնչությամբ «...ի դառնացեալ ժամանակիս, ի թագաւորութեան Ջհանշայի, որ ի յայսմ ամի գնաց բազում զօրօք յԱխլցխայ և բազում քրիստոնեայս գերի արար...» (ԺԵԱ, էջ 584): Նաև «...ի յայսմ ամի (1445 թ.) գնաց բազում զօրօք յԱխլցխայ և բազում քրիստոնեայս գերի արար, զոր տեսաք աչօք մերովք զխիղճ և զկսկիծ սոցա...» (ԺԵԱ, էջ 473):

58 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 56-57: Ի դեպ, «Կվարկվարեն իրեն անկախ հայտարարեց Դադիանի և Գուրիելի հետ գրեթե միաժամանակ՝ Ալեքսանդր Ա-ի չարաբաստիկ բաժանումից հետո, որը Վրաստանի և Իմերեթի թագավորների տարբեր շառավիղներին զրկել էր ամեն իշխանությունից» (**F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 279 (բնագրում՝ Kouarkouaré se déclara indépendant à peu près en même temps que le Dadian et le Gouriel à la suite du malheureux partage d'Alexandre I, qui avait ôté toute puissance aux différentes branches des rois de Géorgie et d'Iméreth"):

դակությունը. «Վրաստանի թագավորները ձգտում էին աթաբեկներին նորից վասալացնել, բայց նրանց ջանքերն անպտուղ էին: Պարսիկ տիրակալները օգնության եկան թագավորներին, բայց նրանց էլ ոչինչ չհաջողվեց: Նրանց ներխուժումները ընդամենը անհանգստություն էին պատճառում աթաբեկներին, որոնք, շատ չանցած, կրկին հայտնըվում էին ասպարեզում՝ առաջվա նման չցանկանալով ենթարկվել»[59]:

«1463 թ. Վրաստանից բոլորովին անկախացած Կվարկվարեին հաջորդում են հետևյալ աթաբեկները.

1466 թ. Բահադուրը՝ Կվարկվարեի որդին,

1475 թ. Մանուչարը՝ Բահադուրի եղբայրը,

1487 թ. Կվարկվարեն (Ղորղորե)՝ Աղբուղայի որդին՝ վախճանված 92 տարեկան հասակում[60],

1500 թ. Քայխոսրովը՝ Կվարկվարեի որդին,

1502 թ. Մզեճաբուկը՝ Քայխոսրովի որդին,

1516 թ. Կվարկվարեն՝ Մզեճաբուկի որդին՝ վախճանված Գելաթիում,

1535 թ. Քայխոսրովը՝ Կվարկվարեի որդին՝ մահացած Թազմինում, 51 տարեկան հասակում[61],

1573 թ. Կվարկվարեն՝Քայխոսրովի որդին. 1580 թ. թուրքերը բանտարկել են նրան, և միայն քրիստոնեությունից հրաժարվելուց հետո է նա վերադարձել իր տարածքները՝ իրեն ճանաչելով Թուրքիայի վասալը[62]:

1553-1580 թվականներին այս դժբախտ երկրում միայն ճակատամարտեր, պաշարումներ և ավերածություններ էին տեղի ունենում: Վարձիան, Զեդա-Թմոգվին, Ածկվերը, Խերթվիսը և այլն, հաճախ են նվաճվում և վերանվաճվում»[63]:

**Սաաթաբագոն անկախության վերջին շրջանում.** առանց այն էլ մեծ զոհողությունների գնով անկախությունը պահպանած և արդեն նաև Տփղիսի և Գորիի կողմից թուրքերին հպատակված տիրույթներով շրջապատված Սաաթաբագոյի իշխանության համար ԺԶ դարի կեսերից ստեղծվում է օրհասական վիճակ: Բոլոր կողմերից օրավուր սաստկացող անհամեմատ ահեղ թշնամական ուժերի հարձակումների հետևանքով Սաաթաբագոն ներքաշվում է հարատև պատերազմների մեջ. «Պայքարն ավելի թեժացավ, երբ երկու հերոսներ՝ Կվարկվարեն և Մանուչարը, հաջորդեցին իրենց հորը՝ Քայխոսրովին: Այս երկրի ավանդություններում շատ են հիշվում այս երկու քաջ ռազմիկների ճակատամարտերը թուրքերի դեմ յոթ տարի շարունակ. նրանց հաղթանակները միայն մի քանի օրով հետաձգեցին իրենց կործանումը. ի՞նչ կարող էին անել նրանք ամբողջ օսմանյան բանակի դեմ: Բացի դրանից՝ Վրաստանի Դավիթ-խան իշխանը հայտարարել էր, որ թուրքերի կողմն է և նրանց առջև բացել էր Թիֆլիսի և Գորիի դռները: Թիֆլիսը դարձել էր մի փաշայության գլխավոր քաղաքը, իսկ Գորին՝ մի սանջակի, իսկ դժբախտ Սաաթաբագոն ասես խեղդված լիներ թուրքական տիրույթների մեջ»[64]:

59 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 279 (բնագրում՝ “Les rois de Géorgie cherchèrent à faire rentrer les atabegs dans leurs devoirs de vassaux; leurs efforts furent infructueux; les Perses suzerains de la Géorgie vinrent aider aux rois; ils ne réussirent pas mieux. Leurs incursions ne faisaient que fatiguer ls atabegs qui reparaissaieint bientôt après sur la scène, aussi peu disposés à se soumettre qu’auparavant”):

60 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 278 (բնագրում՝ “1463 - Kouarkouaré se rend indépendant des rois de Géorgie. 1466 - Bahadour, fils de Kouarkouaré. 1475 - Manoutchar, frère de Bahadour. 1487 - Kouarkouaré, fils d’Aghbougha, meurt âgé de 92 ans.”): Ղորղորե վրացին Սամցխեի իշխան է հիշվում 1483-1498 թվականներին: Հայտնի է, որ այս իշխանն Արարատյան գավառն ասպատակելու և թալանելու ժամանակ որպես ավար ձեռք գցած մի Ավետարան վաճառել էր ոմն Մուրատի (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Գ, Երևան, 1967, էջ 280, 619): Այս իշխանի օրոք՝ 1497 թ. Ախալցխան հիշվում է որպես թուրքերի դեմ անհաջող ընդհարումից հետո Ռուստամ թագավորի ապաստանավայր. «ՌԴՃՂԷ (1497) թվին Ուղուրլու Մահմատին որդին, սօլթան Ահմատն Ստըմբօլ էր դուս էրեկ, Ռըստամն գնաց դէմ, կռիլ չկարաց, եթող փախեաւ Ախլցխայ...» (Մանր ժամանակագրություններ, Ա, Երևան, 1951, էջ 195. այսուհետ՝ ՄԺԱ, համապատասխան էջերով):

61 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 279 (բնագրում՝ “1500 - Kaikhosrov, fils de Kouarkouaré. 1502 - Mzédchabouk, fils de Kaikhosrov. 1516 - Kouarkouaré, fils de Mzédchabouk, meurt à Ghélathi.1535 - Khaikhosrov, fils de Kouarkouaré, meurt à Tazmin, âgé de 51 ans.”): Հայտնի է, որ «1547-ին, երբ թուրքերը սկսան յառաջ խաղալ Ճորոխի և Կուրայ հովտաց մէջ, Շահ Թահմազ-խանը օգնութեան եկաւ նոյն ժամանակ իշխող Քէյխոսրով աթաբէկին» (**Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 57):

62 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 279 (բնագրում՝ “1573 - Kouarkouaré, fils de Kaikhosrov. Il est fait prisonnier par les Turcs en 1580, et ce n’est qu’après avoir abjuré le christianisme qu’il rentre dans ses états en se reconnaissant vassal de la Turquie.”):

63 Նշվ. աշխ., էջ 280 (բնագրում՝ “De 1553 à 1580, ce ne fut que combats, sièges et ravages dans ce malheureux pays. Vardsie, Zéda-Tmogvi, Atskver, Kherthvis, etc., furent souvent pris et repris.”):

64 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 280 (բնագրում՝ “La lutte devint encore plus vive quand les deux héros Kouarkouaré et Manoutchar eurent succédé à leur père Kaikhosrov. Les traditions du pays sont riches en souvenirs des valeurex combats de ces deux guerriers contre les Turcs pendant sept années consécutives; leurs victoires ne firent que retarder leur ruine de quelques jours; qu’auraient-ils pu faire contre toute l’armée ottomane! D’ailleurs le prince de Géorgie David-khan s’était déclaré pour les Turcs et leur avait ouvert les portes de Tiflis et de Gori; Tiflis était devenu le chef-lieu d’un pachaik, et Gori celui d’un sandjak, et le malheureux Sa-atabago était comme noyé dans les domaines de la Turquie”): Ակներև է, որ Դյուբուայից քաղելով՝ հայր Էփրիկյանը նշել է. «1553-էն 1580, այս երկրի մէջ շարունակաբար անպակաս եղան պատերազմք, կոտորածք և աւերմունք: Կռիւն դեռ աւելին սաստկացաւ երբ Կուարկուարէ և Մանուչար դիւցազունք՝ յաջորդեցին իրենց Քէյխոսրով հօրը:

Ի վերջո, 1579 թ. Սաաթաբագոն թեև կորցնում է պատերազմների և թանկագին զոհերի գնով մի կերպ պահպանած անկախությունը, այնուամենայնիվ, թուրքերը գնահատում են իրենց նվաճած հակառակորդին և հենց նրան էլ հաստատում են երկրամասի փաշայի պաշտոնում. «Այդքան դիմադրությունից և ճակատամարտերից հետո, Կվարկվարեին և Մանուչարին այնուամենայնիվ նեղեցին, մեկուսացրին, բոլոր կողմերից շրջապատեցին և ծայրահեղ ծանր դրության մեջ գցեցին: Նրանք ի վերջո հարկադրված էին ենթարկվել թուրքերին, ովքեր նրանց հետ բավական մեծահոգաբար վարվեցին: Երբ 1579 թ. Մանուչարը և իր եղբայրը մեկնեցին Կոնստանդնուպոլիս, նրանց այնտեղ շատ լավ ընդունեցին, հատկապես Մանուչարին, քանի որ նրա քաջությունը և անձնական որակները հիացրել էին թուրքերին: Սուլթանը նրան նույն տարին հետ ուղարկեց Սաաթաբագո՝ փաշայի կոչումով: Ինչ վերաբերում է Կվարկվարեին, նրան թույլ տվեցին հետ դառնալ քրիստոնեությունից հրաժարումից հետո»[65]:

Այս կերպ Սաաթաբագոն, փաստորեն, ձեռք է բերում կիսանկախ մի վիճակ, որը շատ շուտով թուրքերին սկսում է չբավարարել. «...ըստ երևույթին թուրքերը շուտով զղջացին, որ անկախության նման մի բան են տվել Մանուչարին: Նրանք վերջինիս համար ծուղակ լարեցին՝ նրանից ազատվելու համար: Բայց նա դրանից հաղթանակած դուրս եկավ՝ ծանր վիրավորելով և փախուստի մատնելով երկու փաշայի»[66]:

**Ախալցխայի վերջնական նվաճումն ու միացումը օսմանյան տերությանը 1583 թ.** ըստ էության 1579 թ. Ախալցխային իշխող կարգելով Մանուչարին՝ «Թուրքերը այդպես էլ չէին զգում, որ այս քաղաքի լիիրավ տերն են, քանի դեռ նախկին իշխանների հետնորդն էր իշխում այնտեղ»[67], քանի որ «Այս փաշաները, հեռու լինելով Կոստանդնուպոլսից, պահպանեցին մի տեսակ անկախություն, որը շատ էր չարացնում սուլթաններին: Վերջիններս երբեմն իրենց սովորական միջոցներով փորձում էին ազատվել այդ մարդկանցից, որոնցից վախենում էին»[68]:

---

Աւանդութիւնը շատ բաներ կը պատմէ այս կրկին քաջաց՝ եօթը տարիներու մէջ ընդդէմ թրքաց մղած յաղթող պատերազմներու վրայ. բայց ափսո՜ս որ իրենց քաջութիւնն միայն քանի մը տարի ուշացուց իրենց կործանումը. և ի՞նչ կարող էին ընել ամբողջ Օսմանեան բանակին դէմ: Վերջապէս 1579-ին թուրքերը Ախալցխային տիրեցին. նոյն տարին Կուարկուարէ և իր եղբայրն Մանուչար Կ. Պոլիս երթալով, պատուով ընդունուեցան: Մանուչարի կարգէ դուրս քաջութիւններն և անձնական ձիրքերը, իրեն ձգած էին թրքաց զարմանքը. այդ պատճառաւ, սուլտանը զինքը իւր հայրենիքը դարձուց, և փաշայութեան տիտղոս տուաւ: Սակայն, ինչպէս կ'երեւի, շուտ զղջացին թուրքերը, Մանուչարի այս կերպով տեսակ մը անկախութիւն տրուելուն, և փորձեցին իրեն վնասել, բայց չյաջողեցան» (**Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 57):

65 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., նույն տեղում (բնագրում՝ "Ainsi après tant de résistance et de combats, Kouarkouaré et Manoutchar se trouvèrent pressés, coupés, cernés de toutes parts et réduits à la dernière extrémité. Force leur fut de se soumettre aux Turcs qui les traitèrent avec une certaine générosité; car Manoutchar et son frère étant partis en 1579 pour Constantinople, ils y furent fort bien reçus, surtout Manoutchar, tant sa bravoure et ses qualités personnelles lui avaient attiré l'admiration des Turcs. Le sultan le renvoya dans le Sa-atabago la même année avec le titre de pacha. Quand à Kouarkouaré, ce ne fut qu'après son abjuration, qu'on lui permit de s'en retourner".): Խնդրո առթիվ մեկ այլ ֆրանսիացի հետազոտող նշել է. «...վրացիները մնացին որպես այս երկրի տերերը մինչև 1580 թ., երբ Մենուջեհերը՝ Գազեհի որդին, որն այդ ժամանակ նրա միապետն էր, պարտություն կրեց թուրքերից և հարկադրված եղավ ենթարկվել նրանց: Ընդունելով իսլամը՝ նա վերցրեց Աթա-Բեյ անունը և նշանակվեց Ակիսկայի փաշա» (**Chevalier Gamba**, նշվ. աշխ., էջ 401 (բնագրում՝ "Ces derniers en restèrent enfin les maîtres jusqu'en 1580, époque à laquelle Menoudjeher, fils de Gazeh, qui en étioit alors souverain, vaincu par les Turcs, fut contraint de se soumettre à leur puissance; ayant embrassé l'islamisme, il prit le nom d'Atta-Bey, et fut élévé à la dignité de pacha d'Akiska"):

66 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 281 (բնագրում՝ "... il paraît que les Turcs se repentirent bientôt d'avoir donné une espèce d'indépendance à Manoutchar; ils lui tendirent une embuscade pour s'en défaire; mais il en sortit victorieux, ayant blessé grièvement et mis en fuite deux pachas"):

67 Նշվ. աշխ., էջ 281 (բնագրում՝ "Les Turcs ne se sentaient toujours pas assez maîtres du pays tant qu'un descendant des anciens princes y régnait"):

68 Նշվ. աշխ., էջ 282 (բնագրում՝ "Ces pachas éloignés de Constantinople conservèrent une espèce d'indépendance, non sans exciter souvent la jalousie des sultans qui voulurent employer quelquefois leurs moyens ordinaires pour se débarasser de ces têtes qu'ils craignaient"): Ի դեպ, սուլթանները երբեմն կենտրոնախույս նկրտումներ էին նկատում անգամ այնպիսի անմեղ, սակայն ինքնագլուխ արարքների մեջ, ինչպիսիք էին շինարարական ինքնագլուխ նախաձեռնությունները. «Հաճախ ամենափոքր մանրուքն իսկ սուլթանների աչքին հանցագործություն էր թվում: Այսպես, նշանավոր Սուլեյման փաշայի՝ Սաֆար փաշայի հետնորդի առատաձեռնությունը մեկնաբանվեց որպես մեծ դավաճանություն կամ կատարյալ անկախություն. նա մեծ գումարներ էր ծախսել մի ջրանցույց կամուրջ կառուցելու համար, որը շատ հեռվից ջուր պետք է մատակարարեր Ախալցիխեին: Նման ծախսեր անելու իրավունքը միայն սուլթանն ուներ: Սուլեյմանը դատապարտվեց, ապա ապստամբելով իր թագավորի դեմ՝ քաշվեց մի պալատ, որի ավերակները մեր օրերում ցույց են տալիս Փոցխովի աջ ափին: Այնտեղ նա երկար պաշտպանվեց և, ի վերջո, զոհվեց: Թուրքերի, պարսիկների և վրացիների միջև այն բոլոր պատերազմները, որոնց թատերաբեմն էր եղել Սաաթաբագոն, նրան մահացու հարված էին հասցրել, որից նա ուշքի չկանգնեց թուրքերի ճնշող կառավարության ժամանակ: Երբ շրջում ենք Քուռի ափերով, որոնք անցյալում այնպե՜ս հարուստ էին և բնակեցված, ամենուրեք տեսնում ենք միայն ավերածություններ և ամայություն...» (**F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 282 (բնագրում՝ "Souvent la moindre bagatelle devient un crime à leurs yeurs yeux: c'est ainsi qu'on sut représenter comme une haute trahison et comme un acte de pleine souveraineté la générosité du fameux Pacha Souleyman, descendant de Saphar Pacha, qui avait dépensé des sommes considérables à l'établissement d'un aquéduc qui devait fournir de fort loin des eaux à Akhaltshikhé; le sultan seul pouvait fournir à des dépenses pareilles. Souleyman fut condamné; révolté contre son souverain, il se retira dans un palais dont on montre de nos jours les ruines sur la rive droite du Potskho; il s'y défendit longtemps et succomba enfin. Toutes ces guerres des Turcs, des Persans, des

Ուստի արդեն 1580 թ. ուժեղացնելով ճնշումը՝ թուրքերը նվաճում են Ախալցխայի անկախ իշխանությունը և բռնությամբ տարածում մահմեդականություն. «Ախալցխան վիլայեթի կենտրոնն է: Այս վիլայեթը եղել է վրացական ցեղերի տիրակալներից Ղազեի որդի Մանուչեհրի և ժառանգական պատրիարքի մայրաքաղաքը: 988 (1580) թվականին վեզիր Մուստաֆա փաշան, այն ժամանակ, երբ սուլթան Մուրադ խանը (1574-1595) նրան հանձնարարել էր գրավել Շիրվանը, իբրև օջաքլըք, ժառանգական կարգով ստացավ այս վիլայեթը, որտեղ մի քանի ականավոր մարդիկ արդեն ընդունել էին իսլամությունը»[69]:

Աթաբեկության անկումից և թուրքական տիրապետության հաստատումից հետո Ախալցխայի տիրակալները աթաբեկի փոխարեն ստանում են փաշա տիտղոսը:

1583 թ. սուլթան Մուրադի հրամանով Ֆարհատ (Ֆերհադ) փաշան հին բերդեր է նորոգում և նույնիսկ նորերն է կառուցում ոչ միայն սահմանամերձ թրքապատկան կարևոր վայրերում, այլև նույնն անում է պարսիկներից խլած-նվաճած բազում գավառներում. «...ի թվականիս ՌԼԲ (1583) ամին ելաւ Ֆարհատ փաշայն ի Ըստընպալու, հրամանաւ սուլթան Մուրատին իջաւ ի քաղաքն Երեւան եւ փախոյց տէր երկրին ըզՄահամատ խանն Պարսից թագաւորութեանն Խուտաբանդա շահին, որ շինեցին ամուր բերդս ի Տփխիս, ի Գաւրի, եւ ի Թամանիս, ի Թավրէզ եւ ի Գանջայ, ի Շամախի եւ այլ տեղիս բազումս, որ էր թուով ԻԵ բերդ, տիրեցին բոլոր աշխարհիս ի Կարսայ մինչև ի դուռն Ալանաց, ի Ախալցըխոյ մինչև ի Թավրէզ, Ի (20) ամ»[70]:

Մասնավորապես Ախալցխայում Ֆարհատ փաշան «...նորոգում է Ախալցխայի սպիտակ մարգարիտի նման բերդը, մեջը 3000 զինվոր է թողնում: Թեմրիս խան-օղլիին, վեզիրության աստիճանով, Ախալցխայի կառավարիչ է նշանակում և ինքը վերադառնում է Ստամբուլ»[71]:

Հայտնի է նաև, որ 1584 թ. «Քրոնիկոնի 272-ին ...սարդար Վարադ-փաշան եկավ Ախալցիխեն շինելու, բայց չդիմացավ, գնաց և թեմը մեզ (վրացոց) մնաց...»[72]:

**Թուրքական տիրապետության առաջին տասնամյակներն Ախալցխայում (1583-1626 թթ.).** Մանուչարի իշխանության ներքո գտնվող երկրամասի վիճակը, հակառակ թուրքական տիրապետության սահմանած հարկային ծանր պարտավորությունների, ընդհանուր առմամբ տանելի էր. «Խաղաղությունը վերջապես հաստատվեց 1587 թ.: Թուրքերը տիրեցին Ախալցիխեն, որը վերակառուցեցին, ինչպես տեսնում ենք այսօր, և Մանուչարը հանգիստ մնաց որպես փաշա և աթաբեկ: Աթաբեկները վերակառուցել էին տվել Սաֆարի նշանավոր վանքը: Նրանք կարգադրում էին, որ իրենց այդտեղ թաղեն, և Մանուչարը նույնպես թաղվեց այդտեղ, իր հայրերի կողքին: Այնտեղ դեռ մնացել է նրա գերեզմանը: Մանուչարը մահացավ 1614 թ., և նրա որդի Մանուչարը հաջորդեց նրան»[73]:

ԺԷ դարի սկզբից պարսիկներն են ցանկանում տիրել Ախալցխային: Մասնավորապես Երևանն ու Կարսը գրավելուց հետո Շահ-Աբասը փորձում է նվաճել նաև Ախալցխան, սակայն անհաջողության է մատնվում. «Շահը նպատակ ուներ գրավել նաև Ախասխան [Ախալցխան]: Այդ ժամանակ Ախասխայի իշխողը Կարակաշ փաշան այնտեղ էր. և Աստծո օգնությամբ կարողացաւ բերդը պահպանել»[74]:

1618 թ. Սերավի դաշտում կնքված թուրք-պարսկական պայմանագրի համաձայն՝ Ախալցխան մնում է թուրքերին. «Տեղի ունեցած բանակցությունների հետևանքով Ախասխայի էլայեթն օսմանցիներին մնալու, իսկ Բաղդատի սահմանում երկու սանջակ պարսիկներին տալու պայմանով. ստորագրվում է խաղաղության պայմանագիրը»[75]:

Ախալցխան քաղաքական նոր ալեկոծության է ենթարկվում 1624 թ., երբ, օգտվելով սուլթան Օսմանի (1618-1623) սպանությունից, քաղաքը գրավում է Կարինի (Էրզրում) Աբազա փաշան.

«Մէկ մեծ իշխան մի յայտնեցաւ,
Ապազա անուն կոչեցաւ,

---

Géorgiens dont le Sa-atabago avait été le théâtre, lui avaient porté un coup mortel, dont il ne se releva pas sous le gouvernement oppresseur des Turcs. Nous ne verrons, en parcourant les bords du Kour si riches et si peuplés jadis, que ruine et désolation partout...”):

69 Թուրքական աղբյուրները..., հ. Բ, էջ 27-28:

70 Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, Ա, կազմեց **Սմբատ Տէր-Աւետիսեան**, Վիեննա, 1970, էջ 67: Տե՛ս նաև ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա, Երևան, 1976, էջ 217 (այսուհետ՝ ԺԷԱ, համապատասխան էջերով):

71 Թուրքական աղբյուրները..., հ. Գ, էջ 82:

72 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բ, Երևան, 1936, էջ 138:

73 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 281 (բնագրում՝ “La paix se fit enfin en 1587; les Turcs prirent possession d’Akhaltsikhé qu’ils reconstruisirent comme on la voit aujourd’hui, et Manoutchar resta paisible possesseur de la place de pacha et d’atabeg. Les atabegs avaient fait construire le fameux monastère de Saphar; et c’est là que Manoutchar alla rejoindre ses pères; on y montre son tombeau. Manoutchar mourut en 1614. Son fils Manoutchar lui succéda”): Հայր Էփրիկյանի մոտ՝ «1587-ին խաղաղութիւն հաստատուեցաւ, և Ախլցըխան Թրքաց ձեռքէն ելաւ, և Մանուչար իշխեց այնուհետեւ մինչեւ 1614 թուականը, և մեռնելով յաջորդ թողուց իր համանուն որդին Մանուչար» (**Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 57):

74 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց՝ **Ա. Խ. Սաֆրաստյան**, Երևան, 1961, էջ 75:

75 Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 81: Ի դեպ, այն տեսակետը, թե 1603 թ.-ից Ախալցխան անցել էր պարսից ձեռքը (տե՛ս **Веиденбаум Е.**, Путеводитель по Кавказу, Тифлис, 1888, с. 379) աղբյուրներով չի հաստատվում:

Ի Կարնոյ քաղաքէն ելաւ,
Մինչ Ախըլծըխէ ինքն հասաւ:
Բազում զօրօք զնա պաշարեաց,
Մեծ մեծ թօփերն յորժամ ձգեաց,
Զդուռն և զդրանդիքն ի բաց մերժեաց,
Ախըլծխէու ինք տիրեաց...»[76]:

Հատկանշական է, որ մինչև 1626 թ. Ախալցխայի տիրակալները, հակառակ տակավին 1580 թ.-ից ծայր առած կրոնական հալածանքների, կարողացել էին հավատարիմ մնալ նախնիներից ավանդված քրիստոնեական հավատքին, և միայն Բեքա Գ-ն, իշխանությունը պահպանելու համար այլ ելք չգտնելով, մահմեդականություն է ընդունում և վերանվանվում Սաֆար փաշա[77]:

**Ախալցխան թուրք-պարսկական փոփոխական տիրապետությունների շրջանում.** 1626 թ. պարսիկներին հաջողվում է կոտրել պաշարման մեջ ակընկալված օգնությունից զրկված թուրքերի դիմադրությունը և գրավել Ախալցխան. «Այդ ժամանակ Աջեմի սահմանում եղող Ախասխա բերդից օգնություն խնդրողներ էին եկել և հայտնել, որ հազարի չափ կըզըլբաշ զինվորներ պաշարել են վերոհիշյալ բերդը: Այդ պատճառով Դիարբեքիրի բեյլերբեյի՝ Խուսրեվ փաշան, Հալեբի վալի՝ Նուզայ փաշան, Մարաշի վալի՝ Չոր փաշան, Ռումելիի վալի՝ Սյուլեյման փաշան, Դիարբեքիրի կուլի աղաներ՝ Չալաբ-Մուհամմեդ աղան խորհրդակցեցին և որոշեցին 4-5 հազարի չափ զինվորներով հավաքվել: Այդ բոլոր բեյլերբեյիներին Սերասքեր նշանակվեց Անադոլուի վալի՝ Դիշլենկ-Հիւսեին փաշան: Սրանք Զիլհիջջէ ամսի 5-ին շարժվեցին դեպի Ախասխա: Մեծ Սերդարն էլ վճռեց նրանց հետևից գնալ դեպի այդ կողմը: Նախապես Բոստան փաշան ուղարկվեց Էրզրում՝ Աբազա փաշայի մոտ, որպեսզի նա էլ գնա Ախասխային օգնություն ցույց տալու»[78]: Ներքին անհամաձայնությունների արդյունքում (փաշաները ծրագրել էին սպանել Էրզրումի Աբազա փաշային) թուրք փաշաների օգնությունը տեղ չի հասնում և «...հնարավորություն չեղավ Ախասխային օգնություն հասցնել. կըզըլբաշն արագ կերպով գրավեց Ախասխայի բերդը և ընդհանուր կոտորածի ենթարկեց բերդում եղող իսլամ բնակչությանը...»[79]:

Ըստ ամենայնի, թուրքերին հաջողվում է շատ շուտով վերստին տիրանալ Ախալցխային, քանզի հայտնի է, որ 1634 թ. պարսիկներն օգտագործում են ընձեռված հարմար առիթն ու վերագրավում քաղաքը. «Այն ժամանակ, երբ [էյալեթը] ամեն տեսակետից բարեշեն վիճակումն էր, 1044 (1634) թվականին կըզըլբաշը, առիթը գտնելով, գրավեց [այս էյալեթը]»[80]:

Ընդամենը մեկ տարի անց քաղաքը կրկին անցնում է թուրքերի իշխանության ներքո. «...1045 (1635) թվականին Սուլթան Մուրադ խանը վեզիր Քենան փաշային որոշ քանակությամբ զինվոր տալով, ուղարկեց այս կողմերը: 23 օրվա պաշարումից հետո բերդը խաղաղությամբ հանձնվեց: Այդ շրջանում նվաճված վեց բերդերն էլ օջաքլըքի կարգով հանձնվեցին Սեֆեր փաշային: Ներկայումս դրանք գտնվում են այդ գերդաստանի տիրապետության տակ: Կառուցվել են բազմաթիվ ջամիներ, բաղնիքներ, մեդրեսեներ և խաներ: Այդ վայրերում կան մի շարք հին գերեզմաններ, որոնց մասին վիլայեթի ժողովուրդը ասում է, որ դրանք հին մուսուլմանական գերեզմաններ են»[81]:

Քաղաքին վերստին տիրանալուց հետո թուրքերը ձեռնամուխ են լինում քաղաքի և առանձնապես բերդի վերաշինության գործին. «...սուլթան Մուրադ IV-ը[82], Երևանը Աջեմից գրավելուց հետո, Ախալցըխան էլ գրավեց: Ներկայումս վերաշինվում և բարեշինվում է»[83]:

1636 թ. «Անադոլուի բեյլերբեյի՝ Գյուրջի-Մուհամմեդ փաշային հանձնարարվում է Ախասխայի պարիսպների նորոգման գործը»[84]:

Հենակետ ունենալով Ախալցխան՝ 1630-ական թվականների վերջերին թուրքերն արշավում են

76 ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Բ, Երևան, 1978, էջ 125 (այսուհետ՝ ԺԷԲ, համապատասխան էջերով): Հմմտ. էջ 325:

77 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 3:

78 Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 92:

79 Նշվ. աշխ., էջ 93:

80 Թուրքական աղբյուրները..., հ. Գ, էջ 111:

81 Թուրքական աղբյուրները..., հ. Բ, էջ 27-28: Այլ տեղեկությունների համաձայն՝ Ախալցխան 23-օրյա պաշարումից հետո գրավվել է 1625 թ. «1625 թ. 23-օրյա պաշարումից հետո Ախալցխան գրավում է Սուլթան Մուրատի ուղարկած Սաֆար փաշան, որն էլ, որպես պարգևատրում, ժառանգական իրավունքներով ստանում է Ախալցխան և նվաճված Սաաթաբագոն, որը վերանվանվում է Ախալցխայի փաշայություն: Ախալցխան թուրքական տիրապետության ներքո մնում է 203 տարի՝ մինչև 1829 թ.» (**Сегаль И.**, նշվ. հոդվ., № 222, էջ 1) կամ 1636 թ. (ԺԷԲ, էջ 670) և կամ 1637 թ. «23-օրյա պաշարումից հետո քաղաքը պարսիկներից խլած Հասան փաշան ժառանգական իրավունքներով կարգվում է Ախալցխայի փաշա» (բնագրում՝ "Гасан-Паша, военачальник турецкий, овладевает Ахалцыхом после 23-х дневной осады, и с потомством своим наследует титул тамошних Пашей". Տես՝ **Ушаков Н.**, նշվ. աշխ., часть первая, СПБ, 1836, էջ 59): Այս մասին հիշատակություն ունի նաև Դյուբուան. «Ամուրաթ IV-ի հրամանով Սաֆար փաշան (Հասան փաշա) 1625 թ. պաշարեց Ախալցիխեն, որը գրավեց 23 օրում: Որպես վարձատրություն՝ Սաֆար փաշան նշանակվեց Ախալցիխեի փաշա և այդ կոչումը փոխանցեց իր հետնորդներին» (**F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 281 (բնագրում՝ "Amurath IV fit assiéger Akhaltsikhé en 1625 par Saphar Pacha (Hassan Pacha) qui la prit en 23 jours. Pour sa récompense, Saphar pacha fut nommé au pachalik d'Akhaltsikhé qu'il transmis à ses descendants"):

82 Սուլթան Մուրադ խան Դ-ն գահակալել է 1623-1640 թվականներին:

83 Թուրքական աղբյուրները..., հ. Գ, էջ 111:

84 Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 109:

պարսից տիրապետության ներքո գտնվող խանությունների, մասնավորապես և առաջին հերթին Երևանի վրա. «Էրզրումի վալի՝ Վեզիր Քենան փաշան և Ախասխայի իշխան՝ Սեֆեր փաշան, թշնամու երկիրը կողոպտելու պաշտոն ունեցող թաթարական զինվորներով գնում են Երևանի վրա: Հաղթում են վերջինիս, կոտորածով և ավարով ետ վերադառնում»[85]:

**Ախալցխայի փաշայությունը.** երկրամասի մահմեդական տիրակալների պատմությունը սկիզբ է առնում 1626 թ.-ից՝ Բեքա Գ-ի՝ մահմեդականություն ընդունելու և Սաֆար (Սեֆեր, Հասան) փաշա վերանվանվելու ժամանակաշրջանից:

1640 թ. այս Սաֆար փաշայի մասին թուրք պատմիչը վկայել է. «...վիլայեթի վալի՝ վեզիր Սեֆեր փաշան, որ ծագումով վրացի է, խելացի, հնարամիտ և քաջ անձնավորություն է...»[86]:

Սաֆար փաշային հաջորդում է որդին՝ Յուսուֆ փաշան, որն աչքի է ընկնում քրիստոնյաներին հալածելով[87]:

1647 թ. հիշվում է Յուսուֆի որդի Ռուստոմը[88], որը մահապատժի է ենթարկվում 1662 թ. «...և Ռուստամ փաշայն ի Ախըլցխայ գլուխն կտրեցին»[89]:

1659 թ. հիշվում է Ռուստոմի որդի Սելիմ փաշան[90]:

Նույն թվականին «Ասլան-փաշան իմերների ցանկությամբ եկավ Իմերեթ, թագավոր նստացրեց Բագրատ կույրին, կալանավորեց Դարեջանին և Վախտանգին, բերեց նրանց ու եկավ Ախալցիխե, ապա նրանց Օլթիսում բնակեցրեց...: Ախալցիխեում և Օլթիսում աթաբակ էր Ախալցիխեի փաշա կոչեցյալը...» (անունն էր՝ Ասլան փաշա)[91]: Վերջինս սպանվում է 1679 թ.[92] կամ 1680 թ. Էրզրումի փաշայի ձեռքով. «...Ասլան փաշէն, որ էր Ախլցխու փաշէն...: Առզռումայ Իբրահիմ փաշէն գայ Ախլցխայ, Ասլան փաշի գլուխն կտրի...»[93]: Այլ տեղեկության համաձայն՝ Ասլան փաշային սպանել է Բագրատ Իմերեթցին[94]:

1679 թ. հիշվում է Ասլան փաշայի որդին՝ Յուսուֆ փաշան[95]:

1690 թ. հիշվում է Յուսուֆ փաշայի եղբայրը՝ Սալիմ (Սելիմ) փաշան[96]:

1701-1718 թվականներին մի քանի անգամ միմյանց են փոխարինում եղբորորդիներ Իսահակ և Ասլան Բ փաշաները[97]:

Մասնավորապես 1701 թ. հիշվում է Յուսուֆ փաշայի որդին՝ Իսահակ փաշան[98]:

1705 թ. Սալիմ փաշան՝ Ասլանի որդին, փոխարինում է Իսահակին, որին հեռացրել էին պաշտոնից[99]:

1707 թ. փաշայությունը կրկին վարում են եղբորորդիներ Իսահակ և Ասլան Բ փաշաները, քանի որ նույն թվականին նրանք գլխավորում էին Ախալցխայի բերդի վերակառուցման աշխատանքները[100]:

1708 թ. Իսահակ փաշան փոխարինում է Սալիմ փաշային[101]:

1716 թ. Ասլան Բ փաշան փոխարինում է Իսահակ փաշային, որին հեռացրել էին պաշտոնից[102]: 1725 թ. Ախալցխայի բերդի աղան (հավանաբար փաշան) իր զորքով կամավոր մասնակցում է Գանձակի գրավմանը[103]:

1732 թ. Ախալցխայի փաշայությունը ստանձնում է Ուսա-փաշան. «Իսաղ-փաշային տվին Քարթլին, սրա որդի Ուսա փաշային՝ Ախալցիխեն և Օսման փաշային՝ Ա(ր)զրումը...»[104]:

1752 թ. Ախալցխայի բերդում ցարդ կանգուն մզկիթի և այլ շինությունների կառուցման առթիվ հիշվում է Հաջի Ահմեդ փաշան[105]:

1754 թ. հունվարին հիշվում է Ափուզ-Մահմատ փաշան. «Ախալցիխեից լուր եկավ, որ խոնթքարը մեռել է և նրա տեղ ուրիշի են նստեցրել: Նախկին խոնթքարը Ախալցիխեի փաշային փոխել էր և Ախալցիխեի փաշայությունը տվել նրա եղբորը, որը Ափուզ–Մա(հ)մադ–փաշա է կոչվում: Իսկ նրան՝ նախկին փաշային, Վանի փաշայությունն էր հանձնել...»[106]:

1765 թ. Հասան «...փաշայն Ախլցխայու էր սարասկեար և գլուխ ամենայն զօրացն Օսմանցոց հրամանաւ թագաւորին»[107]:

1772 թ.-ից հիշվում է «Ախլցխայու Սուլէյման փաշայն...»[108]:

1780 թ. ևս հիշվում է Ախալցխայի Սուլեյման փաշան[109]: Ի դեպ, նույն թվականին Սուլեյման

---

85 Նշվ. աշխ., էջ 110:

86 Թուրքական աղբյուրները..., հ. Գ, էջ 112: Ի դեպ, Ախալցըխայի փաշաների անվանացանկ է հեղինակել (առանց աղբյուրներ մատնանշելու) նաև Շ. Լոմսաձեն (տես՝ **ლომსაძე შ.**, სამცხე-ჯავახეთი XVIII საუკუნის შუაწლებიდან XIX საუკუნის შუაწლებამდა, თბილისი, 1975, էջ 252-253):

87 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 281: Ի դեպ, ըստ Դյուբուայի, փաշայությունը Սաֆարից Յուսուֆ փոխանցվել է 1635 թ., որ քիչ հավանական է:

88 **F. Dubois de Montpéreux**, նույն տեղում:

89 ՄԺԱ, էջ 243:

90 **F. Dubois de Montpéreux**, նույն տեղում:

91 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները..., Գ, էջ 73: Հմմտ. նշվ. աշխ., էջ 208:

92 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. աշխ., էջ 76:

93 **Զաքարիա Ագուլեցու** օրագրությունը, Երևան, 1938, էջ 152:

94 **F. Dubois de Montpéreux**, նույն տեղում:

95 Նույն տեղում:

96 Նույն տեղում:

97 **Загурский Л.**, նշվ., հոդվ., էջ 13-14:

98 **F. Dubois de Montpéreux**, նույն տեղում:

99 Նույն տեղում:

100 **Загурский Л.**, նշվ., հոդվ., էջ 13:

101 **F. Dubois de Montpéreux**, նույն տեղում:

102 Նույն տեղում:

103 Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 154:

104 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները..., Գ, էջ 26:

105 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 14:

106 Նշվ հոդվ., էջ 108:

107 Դիւան Հայոց Պատմութեան, գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ 347 (այսուհետ՝ ԴՀՊ, համապատասխան հատորով և էջերով):

108 ԴՀՊ, գիրք Ը, Թիֆլիս, 1910, էջ 290, 311:

109 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա, Երևան, 1984, էջ 55, 136 (այսուհետ՝ ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, համապատասխան հատորով և էջերով):

փաշան Ղուկաս Կարնեցուն կաթողիկոսանալու առթիվ շնորհավորական նամակ էր հղել[110]:

Նույն փաշան հիշվում է նաև 1786 թ. «...Սուլէհման փաշայն Ախլցխայու...»[111]:

1807 թ. մայիսին Ախալցխան գրավելու փորձ կատարած ռուսներին հաջող դիմադրություն ցույց տալու առթիվ հիշվում է փաշա Խամըշ օղլին[112]:

1811 թ. հիշվում է Ախալցխայի Շարիֆ փաշան, որը թալան ձեռք բերելու նպատակով արդեն ինքն է ցանկանում հարձակվել 1801 թ.-ից ի վեր ռուսական տիրույթներին միացված Սոմխիթ (Հայաստան) մարզի վրա. «Երևանի պետ Հուսեյն <–ղուլի խանը> Պարսկաստանից գնաց երկու հազար պարսկական զորքով ու հասավ Ջավախեթի Ախալքալաքը. այնտեղ նա սպասում էր Ախալցիխեի փաշա Շարիֆին զորքով և Ալեքսանդրե (արքայազն)ին. և մտադիր էր հարձակվել Սոմխիթի վրա, (որ սակայն չհաջողվեց)...: Ապա սարդարը վերադարձավ Երևան: Իսկ Ղաենի որդի (Աբաս–միրզան) կանգնած էր Գառնիում, որտեղից Գիորգի թագավորի որդի Թեյմուրազը փախավ <խաչվերացի օրը՝ սեպտեմբերի 14-ին>...»[113]:

1815 թ. հունիսին Բաբա փաշան Ախալցխայում կտրում է Խամըշ օղլի Սելիմ փաշայի գլուխը. «մայիսի 17. Բաբա փաշան գնաց Ախալցխա. հունիսի 4. լուր հասավ Ղարս, որ Խամըշ օղլի Սելիմ փաշայի գլուխը կտրել են: Հունիսի 6. կյուրակե, Ղարա բեգի գլխու ֆարմանը Բաբա փաշան Ախալցըխայից ուղարկել էր Ղարս, որով պատվիրել էր Ղարա բեգի գլուխը կտրել և ուղարկել յուրյան...: Հունիսի 29. երեքշաբթի. Բաբա փաշան Ախալցխայում կտրեց Ղարա բեգի գլուխն և ուղարկեց Սուլթանին»[114]:

**Ախալցխան ԺԸ դարի 40-80-ական թվականներին.** 1741 թ. Նադիր շահը քաղաքական հարաբերությունների մեջ է մտնում Ախալցխայի փաշայի հետ և վերջինիս պատվիրում աջակցել Իմերեթի թագավոր Ալեքսանդրին[115]:

1744 թ. պարսիկները «...ավերեցին Ախալցիխեի երկիրը և գրոհ տվին Ղարսին...»[116]:

1745 թ. Նադիր շահը Քարթլիի թագավոր Թեյմուրազ Բ-ին կարգադրում է ազատել Ախալցխայի բերդը[117]:

1746 թ. «...Ուռումների և լեզգիների զորքը, որ Ախալքալաքումն էր կանգնած, արշավանքներ էր կազմակերպում դեպի Քարթլիի երկիրը: Այստեղից և Քարթլիից արշավելով՝ ավերում են Ախալցիխեի երկիրը: Երկու կողմից էլ լինում է գրոհ և պատերազմ, ավերվում է ամբողջ երկիրը: Բերդերից և ամրոցներից դուրս (ժողովուրդը) ոչ մի տեղ չէր մնում՝ ո՛չ Ղարսի և ո՛չ էլ Ախալցիխեի երկրների մարդ(իկ)...»[118]:

Փոփոխական հաջողություններով առավելապես ավարառման նպատակով միմյանց նկատմամբ իրականացվող տեղային պատերազմական գործողություններն առանձնապես ԺԸ դարի 2-րդ կեսին ողջ Այսրկովկասում ստեղծել և խորացրել էին անիշխանության այնպիսի անտանելի մթնոլորտ, որից օգտվելու գայթակղությանը, անշուշտ, առաջին հերթին չէին կարող դիմանալ հատկապես թյուրքական խաշնարած և լեռնական ցեղերը:

Եվ ահա 1752 թ. լեզգիները «...հասան նույնիսկ մինչև Ախալցիխե (Akalsiké)՝ իրենց ստրուկներին Մեծ Պարոնի հողատարածությունների վրա վաճառելու համար փաշայից արտոնություն ստանալու նպատակով: Փաշան իր համաձայնությունը չտվեց, ասելով, որ Դռնից խիստ հրաման է ստացել այդ գործին չմասնակցելու համար: Զայրացած այդ բացասական պատասխանից, նրանք թալանեցին թրքական տարածքի վրա գտնվող գյուղերն ու քաղաքները...»[119]:

Հարևան տիրույթները թալանելու և հարստանալու անհեռանկար գայթակղությանը չի դիմանում նաև ծագումով Ախալցխայից Չլդրի Վեզիր-Էլհաջ-Ահմեդ փաշան: 1759 թ. նա ինքնագլուխ արշավում է Վրաստանի վրա, որի համար նախ պաշտոնանկ է արվում, ապա գլխատվում[120]:

1765 թ. ապրիլի 4 թվակիր գրությունից երևում է, որ դեպի Ախալցխայի և հարակից գավառներ թալանի էին դուրս եկել թյուրքական ծագմամբ ղազախլի և բորչալու անուններով հայտնի ցեղերը. «...յազգէ ղազախացն և Բօռչալուացն, յաղագս անդադար ասպատակութեան պիղծ ազգին լէկզեաց ...աւերեալ և անմարդաբնակ լեալ էին գաւառք բազումք ...մինչև ի սահմանս Կարսայ, և Ախլցխայու...»[121]:

Տակավին 1772 թ. հիշյալ ցեղերը պարբերաբար կրկնում էին ավարառու արշավանքները. «...բորչա-

110 Նշվ. աշխ., էջ 136:

111 Դիվան Հայոց Պատմության, նոր շարք, գիրք առաջին, h. Բ, Երևան, 2003, էջ 141-142, 179 (այսուհետ՝ ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, համապատասխան հատորով և էջերով): Տե՛ս նաև Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, աշխատասիրությամբ **Ռ. Տ. Տիտանյանի**, Երևան, 1981, էջ 170:

112 **Ավետիս քահանա**, Ժամանակագրություն, «Վավերագրեր-2», կազմողներ՝ **Ա. Ղազիյան, Ա. Քալանթարյան**, Երևան, 2001, էջ 23:

113 **Մելիքսեթ-Բեկ Լ.,** Վրաց աղբյուրները..., Գ, էջ 208:

114 **Ավետիս քահանա**, նշվ. աշխ., էջ 28-29: Ի դեպ, 1815 թ. սուլթանն էր Մահմուդ խան Բ-ն, որը գահակալել է 1808-1839 թվականներին:

115 “Тбилисская коллекция персидских фирманов”, том II, Тбилиси, 1989, с. 1024.

116 **Մելիքսեթ-Բեկ Լ**., Վրաց աղբյուրները..., Գ, էջ 119:

117 “Тбилисская коллекция персидских фирманов”, նշվ. հատորը, էջ 1028:

118 **Մելիքսեթ-Բեկ Լ**., Վրաց աղբյուրները..., Գ, էջ 122:

119 **Զուլալյան Մ**., Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների XIII-XVIII դարեր, գիրք Ա, Երևան, 1990, էջ 332:

120 Թուրքական աղբյուրները..., h. Ա, էջ 216:

121 ԴՀՊ, գիրք Գ, էջ 162:

լուեցի և մեր այլ քոչվորները ահ ու սարսափ գցեցին Ախալցիխեի և Ղարսի կողմերում»[122]:

Հատկանշական է, որ Ախալցխայի երկրամասը թալանելու գայթակղությունից զերծ չէին մնացել նաև վրացիները: Այդ մասին է պատմում Սիմեոն կաթողիկոսի՝ 1774 թ. գրությունը. «...վրացին և բաշաչուխն գնացին ի վերայ Ախլցխայու: Եւ սակաւ ինչ մատուցեալ ընդ օսմանունցն, յաղթեցին նոցա. և բազում աւարաւ դարձան ի տեղիս իւրեանց»[123]:

Մեկ տարի անց Սիմեոն կաթողիկոսը փորձել է Ախալցխայի Սուլեյման փաշային և վրաց Հերակլ թագավորին միմյանց հետ հաշտեցնել, ուստի այդ առթիվ 1775 թ. հունվարի 1-ին մի նամակ է հղել փաշային. «Զի Հերակլ արքայն վրաց կամելով հաշտիլ ընդ Սուլէյման փաշային, վասն որոյ՝ քան զայս յառաջ ընդ Գեօրկին Միրզային զգերիսն Ախլցխայու (զորս զօրքն իւր գերեալ էին ի պատերազմին) յետս դարձոյց առ նա»[124]:

1785 թ. դարձյալ Ախալցխա են արշավում լեզգիները: Եղելության մասին Դավիթ Բագրատիոն արքայազնը նշել է. «...երևաց Օմար խան Ավարցին, որն անցավ Իորին և Ղարայազի կողմերը, անցավ Կուրը, մոտեցավ Ախտալային, որն գրավեց, ապա գնաց Ախալցիխե»[125]:

Իրավիճակի մասին 1785 թ. փետրվարի 10-ին գեներալ Պ. Ս. Պոտյոմկինին է ահազանգել Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը. «...երեք հազար լէկզի, որպէս Վրացտուն, նմանապէս Ախլցխայ, քանդեալ ապականեն, զորս բերելն թէպէտ և ինքեանք են փոշիման, բայց երկնչին դուրս առնուլն: Լէկզի Չօն Քութլի Ահմատ խանն, որ է փոքրիկ եղբայր Ալի սուլթանին, հազար հինգ հարիւր ձիաւորօք գնացեալ է ի յԱխլցխայ յամսեանն նոյեմբերի և այժմ անդ են, մեծ պատուով է ընկալեալ զսա փաշայն, և սա առաւել քանդէ զՎրացտուն»[126]:

Ութ օր անց Հովսեփ արքեպիսկոպոսը հավելել է. «...լակզիքն լցեալք են ի յԱխլցխայ, ուստի գերեն և ի սուր սուսերի մաշեն: Գրեն, որ եթէ մինչև եօթն ամիս այսպէս մնայ, և ողորմած թագուհին մէկ հատուկ օգնութիւն չարար Վրացտուն ոչինչ»[127], իսկ փետրվարի 25-ին՝ «Երեք հազար լէգզի կայ յԱխըլցըխայ, օրն մէկ ռուբլի փող է տալիս փաշայն և իւրաքանչիւր շաբաթ իւր ձեռամբն Ծ-Կ (յիսուն-վաթսուն) ղուռուշ և մեծ յոյս, որպէս թէ Վրաց տուն տիրեսցեն, և սմա հասուցանելոց (է) մեծ մասն երկրին որպէս ազգականի: Ըստ որում, նոքա Լս հռչակեն, որ նախնոյն մերոյ Զաքարիայ սպասալարի եղբայր Իւանէ Աթաբէգից են...»[128]:

Այն, որ Ախալցխա թափանցած լեզգիների թվաքանակը, իրոք, 3000 էր, վկայվել է նաև այլ տեղեկագրերում[129]:

Լեզգիների՝ Ախալցխայում գտնվելն արդեն իսկ խուճապային իրավիճակ էր ստեղծել հարևան Երևանի խանության բնակչության շրջանում: 1785 թ. տարեվերջին՝ մինչև ձմեռնամուտ, շուրջ 3 ամիս ստիպված Երևանի բերդում էին պատսպարվել նաև Ղուկաս կաթողիկոսն ու Սբ. Էջմիածնի միաբանության մեծագույն մասը[130]:

Լեզգիներն Ախալցխայում ձմեռելուց հետո՝ միայն 1786 թ. ապրիլի վերջին են հեռանում դեպի իրենց երկիրը[131]:

Ախալցխայի վրա կատարված լեզգիների հերթական արշավանքն իրեն երկար սպասեցնել չի տալիս: 1789 թ. սեպտեմբերին «Ախալցխայու հնացեալ մովպետն, որ իբր հաշտութիւն արար ընդ Վրաց պետին, վերստին եւս դարձեալ ի խռովութիւնն, ի քանի ամիսս զաւազակազունդ զօրս արձակէր ի յերկիրն Վրաց եւ զբազում աւարս եւ գերիս վարեցուցանէր եւ արքայն Վրաց լռէր երկար համբերութեամբ: Այժմ ի յաճախել նոցա զաւերագործութիւնս, եւ արքայն Վրաց զզօրս արձակեաց եւ յաւարի առնուլ ետ զքանի գիւղորայս ի յԱխլցխայու եւ ի Կարսայ...»[132]:

Հայտնի նաև, որ 1789 թ. «...Լեզգիները Ախալցիխեից եկան Միքել Արղութաշվիլու առաջնորդությամբ և գրավեցին Գ(յաուրարխը)...»[133]:

**Ռուսական ռազմական առաջին «աջակցությունը» վրացիներին 1770 թ.** 1769 թ. ամռան վերջին Վրաստան ժամանած ռուսական բանակի զորահրամանատար գեն. Տոտլեբենը, 1770 թ. ապրիլին Ախալցխայի ամրոցի պաշարման ժամանակ դրժելով վրացիների հետ ունեցած դաշնակցային համաձայնությունը, ռազմի դաշտից դուրս է բերում իր հրամանատարության ներքո գտնվող ռուսական զորամասը, սակայն օսմանյան բանակի դեմ միայնակ մնացած վրացիները նահանջում են միայն մինչև Ասպինձա և ապրիլի 20-ին տեղի ունեցած ահեղ ճակատամարտում գրեթե ամբողջապես ոչնչացնում են ոգևորությամբ արշավող թուրքական 4000-անոց զորամասը[134]:

**Ռուսների՝ Ախալցխան գրավելու անհաջող փորձերը 1807, 1810 թվականներին.** 1807 թ. մայիսի

122 **Մելիքսեթ-Բեկ Լ.,** Վրաց աղբյուրները..., Գ, էջ 200:
123 ԴՀՊ, գիրք Ը, էջ 289:
124 ԴՀՊ, գիրք Ը, էջ 311:
125 **Մելիքսեթ-Բեկ Լ.,** Վրաց աղբյուրները..., Գ, էջ 201: Տե՛ս նաև Жизнь **Артемия Араратскаго**, СПБ, 1813, с. 82.
126 **Աբրահամյան Ա.,** Վավերագրեր հայ-ռուսական հարաբերություններից (XVIII դարի վերջին քառորդ), «ԲԵՀ», 1978, № 2, էջ 59:
127 Նշվ. հոդվ., էջ 61:
128 Նշվ. հոդվ., էջ 62:
129 “Армяно-русские отношения в XVIII веке”, т. IV, с. 331.
130 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա, էջ 536, 541:
131 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ, էջ 184: Տե՛ս նաև նշվ. աշխ., էջ 27, 536:
132 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ, էջ 491:
133 **Մելիքսեթ-Բեկ Լ.,** Վրաց աղբյուրները..., Գ, էջ 202:
134 **Չորանյան Պ.,** Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, էջ 361:

14-ին «Ախալցխայի փաշա Խամըշ օղլին Յուսուֆ փաշային Կարս ուղարկել էր 263 գլուխ, որովհետև ռուսն Ախալցխայի վերա էր հարձակվել և Խամըշ օղլին նորանց հաղթել, ջարդել, ցրել էր և կտրած գլուխներն ուղարկել էր...»[135]:

1807 թ. օգոստոսի 5-ին «Ախալցխայի փաշա Խամըշ օղլին յուր ասկյարներով մտավ Կարս...»[136]:

1810 թ. ռուսական բանակը գեներալ Տորմասովի գլխավորությամբ փորձում է գրավել քաղաքը, սակայն ստիպված է լինում ձեռնունայն դադարեցնել տասնօրյա ապարդյուն պաշարումը:

**Ախալցխան 1828-1829 թվականների ռուս-թուրքական պատերազմի նախօրեին.** մինչ պատերազմը Ախալցխան աչքի էր ընկնում իր բարգավաճ վիճակով. «...1828-ին Ասիոյ Տաճկաստանի ամենէն ճոխ քաղաքներէն մէկն էր, և ուր հարստութիւնը մեծաւ մասամբ հայ վաճառականաց ձեռքն էր...»[137]:

**Ախալցխայի գրավումը 1828 թ. օգոստ. 9-27-ն ընկած ժամանակահատվածում.** քաղաքի գրավման մանրամասները լուսաբանող թե՛ ականատեսների և թե՛ հետագա հետազոտողների գրչին պատկանող գրավոր ժառանգությունը չափազանց հարուստ է, ուստի ստիպված ենք նախապատվությունը տալ դրանցից առավել փաստալից և համապարփակ տեղեկագրերին:

Հայտնի է, որ «Կարսին տիրելուց յետոյ՝ ռուսները առանց դժուարութեան տիրեցին Ախալքալակի և Խրթվիզի բերդերին և ապա անցան պաշարեցին Ախալցխան...»[138]:

Հետախուզական աշխատանքից հետո «Ռուսները դուրս եկան Բորժոմի հովտով և միևնույն ժամանակ հետախուզական զորամիավորում ուղարկեցին Քութայիսի ճանապարհով: Նրանք նախ կանգ առան այն ծիրանաքարե սև բլրի ստորոտում, որը Փոցխովի ձախ ափին է և բաժանված է քաղաքից 2-3 վերստ գոգահովտով: Նրանց մարտկոցները, որոնք տեղակայված էին գագաթին, սկսեցին գնդակոծել ամրոցի կողամասերը և քաղաքը, բայց ոչինչ չստացվեց. տարածությունը չափազանց մեծ էր: Այդ ժամանակ ռուսներն իրենց հարձակման կետը տեղափոխեցին գետի աջ ափին գտնվող մի բարձր սարահարթ: Նրանք որքան հետ էին մղում թուրքերին քաղաք, այնքան ավելի էին մոտեցնում իրենց մարտկոցները և վերջապես կարողացան հաստատվել նույն ափի մի այլ բլրի գագաթին, որն ամրոցի դեմ դիմաց է և մասամբ բարձր է նրանից: Այս դիրքից ռուսները բավական մոտիկից էին գնդակոծում քաղաքը, և դրա շնորհիվ նրանք Քութայիսի հետախուզական զորամիավորումը, որին միացել էր պաշարող զորքի մի մասը, դուրս բերեցին քաղաքի վրա իշխող բարձունքներով... Թուրքերը նրանց սպասում էին քաղաքից դուրս՝ բարձունքի վրա: Նրանք ընդունեցին ռուսների հարձակումը շատ մեծ քաջությամբ: Թե՛ մեկ, թե՛ մյուս կողմից շատ մարդիկ ընկան, մինչև ռուսները կարողացան մոտենալ պարսպի դռանը, որը գրավեցին սվինամարտով: Թուրքերը, ինչպես հատուկ է իրենց, չէին հանձնվում. նրանք նախընտրում էին զոհվել: Հայկական և կաթոլիկե եկեղեցիները զբաղեցնում են այդ դիրքի ամենաբարձր կետը, և նրանց շրջակայքը ծածկված էր դիակների կույտերով: Ամենասարսափելի ճակատամարտը տեղի ունեցավ երկու եկեղեցիների միջև»[139]:

Ախալցխայի համար կռվում թուրքերը, իրոք, հարգեցին իրենց խոսքը. «Մենք ոչ երևանցիներ ենք և ոչ էլ կարսեցիներ, մենք ախալցխացիներ ենք...: Մենք որոշել ենք մեռնել մեր քաղաքի պատերի տակ»[140]:

Թուրքերը «...կենդրոնացրել էին իրանց ույժերը՝ սաստիկ ընդդիմադրելու նպատակով: Բացի տէրութեան զօրքերից՝ ռուսներին դիմադրելու հարկադրած էր կառավարութիւնը նաև տեղական ժողովրդին, որ էին հայեր, հայ կաթոլիկներ և վրացիներ, որոց ամենի ընտանիքները ապահով վայրերում պատսպարելով՝ իրանց զինաւորել էին, գրեթէ կանոնաւոր զօրքի հաւասար:

135 **Ավետիս քահանա**, նշվ. աշխ., էջ 23:

136 Նշվ. աշխ., էջ 25:

137 **Նուրիխան Մ. (Նուրիխանյան Մինաս վարդ.)**, Ախլցխայի պատերազմներն (1828-1829), «Բազմավէպ», 1880, էջ 101-102:

138 **Գեղամեանց Ե.**, Պատմական քաղուածքներ, «Հովիւ», 1908, № 32, էջ 507:

139 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 258-259 (բնագրում՝ "Les russes débouchèrent par la vallée de Bardjom, pendant qu'ils envoyaient un corps d'observation par la route de Koutaïs. Ils s'arrêtèrent d'abord au pied de cette colline noire de porphyre qui borde la rive gauche du Poskho et qu'un bas-fond de 2 à 3 verst séparait de la ville. Leurs batteries érigées sur le sommet, commencèrent à battre les flancs de la forteresse et à tirer sur la ville, mais ce fut sans succès; la distance était trop grande. Les Russes transportèrent alors leur point d'attaque sur un plateau élevé de la rive droite de la rivière. Rapprochant toujours davantage leurs batteries, à mesure qu'ils refoulaient les Turcs dans la ville, ils trouvèrent enfin moyen de s'établir sur le sommet d'une autre colline de la même rive, qui regarde en face la forteresse et la domine en partie. Maîtres de cette position, d'où ils canonnaient la citadelle d'assez près, les Russes firent déboucher le corps d'observation de Koutaïs, auquel se joignit une partie de l'armée de siège, par les hauteurs qui maîtrisent la ville... Les Turcs les attendaient sur la hauteur hors de la ville; ils soutinrent le choc des Russes avec la plus grande bravoure; il tomba beaucoup de monde de part et d'autre, avant que ces derniers pussent s'approcher de la porte du rempart qu'ils fallut emporter à la baïonnette. Les Turcs, selon leur coutume, ne se rendaient pas; ils préféraient périr. Les alentours de l'église arménienne et de l'église catholique qui occupent le point le plus élevé de cette position, furent jonchés de morts entassés; le plus terrible combat se livra entre les deux églises"):

140 **Պարսամյան Վ.**, նշվ. աշխ., էջ 97: Այս հիմքի վրա մինչև իսկ ծնունդ էր առել սույն առածը. «...մէկ Կարսեցի՝ երեք Երևանցի կ'արժէ, և երկու Կարսեցի՝ մէկ Ախլցխացի...» (**Նուրիխան Մ.**, նշվ. հոդվ., էջ 102: Տե՛ս նաև **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 56):

Բայց տաճիկները դրանով էլ չօգտուեցան: Զինուած ժողովրդականք՝ մեծ մասամբ կամ չէին պատերազմում, կամ ռուսաց բանակն էին փախչում: Անճարացած տաճիկ կառավարութիւնը յետ վերցրեց ժողովրդից՝ նրանց տրուած զէնքերը և խիստ հսկողութեան տակ էր պահում:

Ախալցխայի պաշարումը մի քանի օր տևեց: Պաշարուած տաճիկ զօրքի և տաճիկ ժողովրդի ցոյց տուած ընդդիմութիւնը՝ միանգամայն զարմացրեց ռուսներին: Մինչև այժմ նրանք ոչ մի տեղ այդպիսի դիմադրութեան հանդիպած չէին: Տաճիկ կնանիքն անգամ զէնքը ձեռին՝ կատաղաբար կռվում էին ռուսների դէմ...»[141]:

Ռուսներին աննկուն դիմադրություն ցույց տալու մասին ուշագրավ վկայություն է թողել նաև թուրք տարեգիր Ահմեդ Լութֆին (1815-1907). «Ախալցխա ուղարկված օսմանյան զինվորները կանգ էին առել Թաշ-թեփե կոչված վայրում: Ոչ կանոնավոր զինվորական խմբերը, տեսնելով նրանց տեղաշարժը, կարծում են, թե ռուսները հարձակվում են, սկսում են փախչել. հրամանատար Սվազի վալի Մեհմեդ փաշայի զինվորներն էլ հետևում են փախչողներին: Ռուսները, իմանալով այդ, հեշտությամբ գրավեցին թողնված 9 թնդանոթները: Զինվորական պետերը որոշ քանակությամբ զինվորներով ամրացան բերդում: Ախալցխայի ժողովուրդը միանալով բերդում ամրացած զինվորներին, հաստատակամորեն կռվեց և արյունալի մարտեր մղեց: Ամբողջ ժողովուրդը, նույնիսկ կանայք, գիշեր-ցերեկ անդադար կռիվ էին մղում: Մեծ էր երկուստեք տված զոհերի թիվը: Այդ ժամանակ լիվանեցի (աջարացի) Ալի բեյ անունով մեկը, 1500 զինվորներով օրը ցերեկով բերդից դուրս գալով, փորձեց փախուստի դիմել: Թշնամին, նկատելով այդ, տարբեր կողմերից կրակ բացեց, շրջանի բազմաթիվ վայրեր կրակի մատնեց: Ժողովրդից շատ մարդիկ, կանայք և երեխաներ զոհվեցին կրակների մեջ և խորտակված տների փլատակների տակ, իսկ ողջ մնացած զինվորների մեծ մասը գիշերով փախուստի դիմեց: Ռուսները սովորական երթով գրավեցին բերդը: Այս ծանր վիճակը թեև «հավատացյալ զինվորներին» վիշտ և հուսահատություն պատճառեց, բայց նախապես իրենց տված երդման համաձայն, հաշվի չառնելով անգամ իրենց անձին սպառնացող վտանգը, դուրս եկան մերկացրած սրերով և կոտորեցին իրենց դեմ կանգնածներին. նրանցից շատերը նահատակվեցին: Թշնամին բազմամարդ էր: Մեհմեդ փաշան Ահմեդ փաշայի հետ միասին որոշ թվով զինվորներով, Թուզչու-ղաղեի զինվորների և նրանց սպաների հետ, ընդամենը 200 հոգով փակվեցին բերդում: Սակայն, ուժասպառ լինելով, ստիպված եղան վիրայով[142] դուրս գալ դեպի Օլթի»[143]:

Թուրքերի դիմադրությունն ընկճելու այլ ելք չգտնելով՝ Պասկևիչը ստիպված հրամայում է հրդեհել քաղաքը. «Տեսնելով, որ կռուելով անկարելի է քաղաքին տիրելու.– ռուսները սկսեցին կրակ ձգել, հրդեհել քաղաքը այս և այն մասերում: Քամին ձեռաց հրդեհեց ամբողջ քաղաքը: Տների հետ և նրանց մէջերում ու նեղլիկ փողոցներում այրվում էին և բնակիչները, որոց 4000-ի չափ խանձուած ու այրուած դիակները լեցրել էին փողոցները:

Կրակը հանգչելուց յետոյ՝ ռուսները յաղթական կերպով ներս մտան քաղաքը և սկսեցին կողոպտել ու անխնայաբար կոտորել կենդանի մնացած ժողովրդին, առանց խնայելու թէ մեծին և թէ փոքրին: Սարսափելի էր նամանաւանդ հայոց թաղի կրածն ու տեսածը»[144]:

Թուրքերն իրապես ամեն ինչ անում են քաղաքը պահելու համար, սակայն, ի վերջո, մեծ կորուստներով տեղի են տալիս. «Բնակիչները, որոնցից յուրաքանչյուրը մի ռազմիկ էր, համառությամբ նետվում էին բոցերի մեջ: Մի շարք կանայք կամովին իրենց նետում էին կրակի մեջ... մի մզկիթում այրվեցին մոտ 400 մարդ: Վերջապես քամին ուժեղացավ և հրդեհը տարածեց դեպի հարավային ու արևմտյան արվարձանները և պաշտպանվողներին հարկա-

141 **Գեղամեանց Ե.**, նշվ. հոդվ., էջ 507-508:

142 Վիրա բառացի նշանակում է անձնատուր լինել:

143 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Դ, թարգմանություն բնագրից՝ **Ա. Խ. Սաֆրաստյանի** և **Գ. Հ. Սանթուրջյանի**, Երևան, 1972, էջ 21:

144 **Գեղամեանց Ե.**, նշվ. հոդվ., էջ 508: Ներքո հիշատակման արժանի է նաև դեպքերի սույն անդրադարձը. «Պասկևիչը յառաջ տարաւ իր զօրքերը Ախալցխան պաշարելու: Այստեղ տաճիկները կենդրոնացրել էին իւրեանց ոյժը սաստիկ ընդդիմանալու մտքով: Բնակչաց ընտանիքները ուղարկուած էին անառիկ տեղեր, իսկ քաղաքում մնացողները, որոց մէջ բաւականաչափ հայք, հայ կաթոլիկներ և վրացիք կային, բոլորն էլ զօրաց հետ հաւասար զինուորուած էին ու պատրաստ պատերազմելու: Քանի մի օր տևեց քաղաքի պաշարումը և այդ միջոցին քրիստոնեայ բնակիչներից ոմանք դուրս փախան, եկան ռուսաց բանակը: Վախենալով, որ մնացած քրիստոնեայքն էլ չդաւաճանեն, թուրքերը խլեցին հայոց և վրաց զէնքերը և նոցա խիստ հսկողութեան տակ էին պահում: Վերջապէս, օգոստոսի 15-ին ռուսաց զօրքը յարձակուեց և գիշերուայ դէմ վեր առաւ Ախալցխան: Պաշարուածների ցոյց տուած ընդդիմութիւնը զարմանալի էր: Տաճկաց կանայք անգամ զէնքը ձեռքին կատաղի կռվում էին: Ռուսները պարտաւորուեցան նախ այրել քաղաքը և ապա յաղթել: Մօտ 3500 հոգիք, որոց մէջ և բազմաթիւ քրիստոնեայք, լցրել էին իւրեանց դիակներով քաղաքի նեղ փողոցները: Ռուսաց զօրապետները քանի մի ժամ չէին կարողանում զսպել իւրեանց զօրաց զայրոյթը և սոքա անխնայ ջարդում էին մեծին ու փոքրին: Սարսափելի էր մանաւանդ հայոց թաղի կրածն ու տեսածը: Թէև յաղթութիւնը կատարեալ էր, բայց ռուսներն էլ այդ օրը նշանաւոր վնաս կրեցին, քանի մի հարիւր հոգի կորցնելով: Հայ սպաներից սպանուեցաւ Բէժանեանը և մի քանիսը վիրաւորուեցան: Նշանաւոր քաջութիւն ցոյց տուին այդ օրը սպայք՝ Ղորղանեանը, Շամիր Մելիք-Բէգլարեանը և այլք» (**Երիցեանց Ալ.**, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք, մասն Ա (1800-1832), Թիֆլիզ, 1894, էջ 401-402):

դրեց նահանջել...: Բերդը և միջնաբերդը բավական քանդվել էին. դիակների կույտերը փակել էին փողոցները: Թշնամին գրոհի ժամանակ կորցրեց մինչև 5000 մարդ: 400 հրետանավորներից միայն 50 հոգի մնացին կենդանի, 100 հոգի ենիչերիներ ընկան իրենց տեղերում, 1800 լազերից սպանվեցին 1300-ը, բնակիչներից սպանվեցին ավելի քան 3000 հոգի»[145]:

1828 թ. օգոստոսի 9-ին կոմս Պասկևիչի գլխավորությամբ ռուսական տասնմեկհազարանոց զորամիավորումների ծավալած գործողությունները օգոստոսի 16-ին պսակվում են հաղթանակով: Ախալցխայի Քյոսա-Մահմատ փաշան ռուսների ձեռքն է թողնում 67 հրանոթ և կայազորի 4000 զինվորներով հեռանում Արտահան[146]: Ռուսական բանակի կորուստը կազմում է 128 զոհված և 471 վիրավոր[147]:

Քաղաքի վերջնական գրավումը տեղի է ունենում օգոստոսի 15-ին. «Քաղաքը գրավվեց ֆելդմարշալ իշխան Պասկևիչի կողմից, 1828 թ. օգոստոսի 15-27-ին»[148], որից հետո «Քաղաքի և նրա շրջակայքի կառավարիչ նշանակուեցաւ իշխան Վասիլ Բեհբութով գեներալը»[149]:

**Դեկաբրիստների վկայությունները Ախալցխայի գրավման մասին.** հայտնի է, որ 1825 թ. դեկտեմբերի 14-ին ցարիզմի դեմ ապստամբություն բարձրացրած ռուս ազնվականության ներկայացուցիչներից շատերին պատերազմների մեջ ոչնչացնելու նպատակով Կովկաս էր աքսորել Նիկոլայ Ա-ն՝ Կովկասյան հատուկ կորպուսում զինվորական ծառայության:

Ախալցխայի համար մղված մարտերին մասնակցել են Մ. Ի. Պուշչինը, Ա. Ս. Գանգեբլովը, Ն. Սեմիչևը, Ն. Ռաևսկին, Ֆ. Վիշնևսկին, Դ. Իսկրիցկին, Վ. Սուխորուկովը, Ա. Դորրինսկին, Ա. Վեղենյապինը, Ա. Ֆոկը, Պյոտր և Պավել Բեստուժև եղբայրները, Պյոտր Կոնովնիցինը, Ի. Բուրցովը, Ա. Միկլաշևսկին և այլք[150]: Ի դեպ, նրանցից շատերն այդ մասին թողել են հուշագրություններ: Այսպես, օրինակ, Պյոտր Ալեքսանդրովիչ Բեստուժևը գրել է. «Օգոստոսի 15-ին վճռված էր գնալ գրոհի: Ընտրությունն ընկավ մեր գնդի վրա...: Լուսամուտներից, ծխնելույզների հետևից անտեսանելիորեն մեզ վրա էր թափվում գնդակների տարափը, ամեն մի անցքից հարվածում էին մեզ և նրանց յուրաքանչյուր կրակոցը դիպուկ էր: Երբեք մոտալուտ վտանգը և հուսահատությունը չեն ծնել այնպիսի արիություն, ինչպիսին նկատելի էր պաշարվածների մոտ: Սպառելով բոլոր փամփուշտները՝ գազազած թուրքերը, յաթաղանները սպառնագին ճոճելով, նետվում էին շարքերի մեջ, կոտորում ու վայրագություններ անում և զոհ էին գնում իրենց տաքարյունությանը...: Մինչև ուշ մթնշաղ շարունակվում էին կոտորածն ու փոխհրաձգությունը. մերոնք քիչ առաջ էին շարժվել. վերջապես հրամայվեց հրկիզել քաղաքը, և հավանաբար դա էր, որ փրկեց մեր երերուն հաղթանակը...: Քաղաքն այրվում էր հարյուրավոր կետերում, թանձր ծուխը ձգվում էր մինչև երկինք...: Քաղաք մտցված մեր մարտկոցները անդադար գնդակոծում էին միջնաբերդը...: Փրկված կանանց ու երեխաների բազմությունը լացով ու աղաղակով քարշ էր գալիս դեպի ճամբարը...: Առավոտվա դեմ ամեն ինչ հանդարտվեց»[151]:

Ախալցխայի բերդի գրավման ժամանակ աչքի է ընկել նաև Իվան Գրիգորևիչ Բուրցովը (1794-1829): Հայտնի է, որ Պասկևիչը նրան նշանակել էր խրամատների պետ: Օգոստոսի 15-ին Ի. Բուրցովի մարտական սխրանքի մասին հայտնի է հետևյալը. «Երբ ուժգին թնդանոթաձգության որոտի տակ Շիրվանյան գունդը, որին առաջնորդում էր քաջ գնդապետ Բորոդինը... տիրեց բաստիոնը և սկսեց առաջ շարժվել դեպի ձորը, նրա հետևից ընթացող Բուրցովը դուրս բերեց կացիններով զինված սակրային վաշտը և հրամայեց նրան կտրատել ցցապատնեշները...: Տեղի ունեցավ արյունահեղ մի մարտ, և անվեհեր Բորոդինը, անձամբ ղեկավարելով հրաձգային շղթան, ամուր ոտք դրեց գերեզմանատանը և շինությունների միջև՝ կաթոլիկական եկեղեցուց 15 քայլ հեռավորության վրա... Բայց մի փոքր անց, երբ երկու կողմից էլ թուլացել էր փոխհրաձգությունը, մահացու գնդակը խոցեց նրան: Բուրցովը, մնալով որպես ամենաավագը, կարողացավ մնացած թնդանոթները ճեղքից անցկացնել, մոտեցնել գրոհող զորասյունին և մի մասը ուղարկեց դեպի եկեղեցին, իսկ մյուս մասը՝ դեպի ձախ, դեպի ձորը, որտեղ կայազորի խմբերը համառ դիմադրություն էին ցույց տալիս... Բուրցովը շարունակեց ակտիվ մասնակցություն ունենալ գործերի տնօրինմանը այնքան ժամանակ, մինչև հաղթական դրոշը ծածանվեց բերդի պարիսպների վրա»[152]:

145 **Պարսամյան Վ.**, նշվ. աշխ., էջ 97:

146 Այլ վկայության համաձայն՝ թուրք բանակը կազմում էր 25000 մարդ (**Веиденбаум Е.**, նշվ. աշխ., էջ 379):

147 **Персваленко В.**, Ахалцих, “Кавказский календарь на 1852 г.”, с. 282. Տե՛ս նաև **Веиденбаум Е.**, նշվ. աշխ., էջ 379:

148 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 260 (բնագրում՝ “La ville fut prise par le feld-maréchal prince Paszkévitz le 15/28 août”): Հմմտ. «...Վրաստանի կառավարչապետ կոմս Պասկևիչը գնաց Ղարսով Ախալցիխեն գրավելու համար: Պասկևիչը Ղարսը պաշարեց և կռվով վերցրեց այն հունիսի 30-ին: ...Իսկ հուլիսի 14-ին Պասկևիչը կռվով վերցրեց Ջավախեթի Ախալքալաքը...: Օգոստոսի 15-ին Պասկևիչը վերցրեց Ախալցիխեն» (**Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները..., Գ, էջ 279):

149 **Գեղամեանց Ե.**, նշվ. հոդվ., էջ 508: Տե՛ս նաև **Երիցեանց Ալ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 401-402:

150 Մանրամասն տե՛ս **Ներսիսյան Մ.**, Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958:

151 Նշվ. աշխ., էջ 86-87:

152 Նշվ. աշխ., էջ 114-115:

**Ախալցխան ետ գրավելու թուրքերի փորձը 1829 թ. փետրվարին.** Ախալցխայի կորստյան հետ տակավին չհաշտված՝ ընդամենը 6 ամիս անց՝ 1829 թ. փետրվարի 20-ին, 18000-անոց (որոշ տվյալներով՝ 20000) զորաբանակի գլուխ անցած աջար Ահմեդ փաշայի գլխավորությամբ թուրքերը պաշարում են քաղաքը. «1829 թուականին Օսմանցիք Աճառացի Ահմետ-Բէգի առաջնորդութեամբ 18 հազար հոգով յարձակուելով Ախալցխայի վերայ, թէև փորձեցին յետ առնել կրկին ռուսներից, բայց չը յաջողեցան»[153]:

Ախալցխայի գլխին պայթած այս նոր արհավիրքը նույնպես բավականաչափ լուսաբանվել է ինչպես ականատեսների, այնպես էլ տարեգիրների և պատմաբանների երկերում. «Ռուսները, տիրելով Ախալցիխեին, այն կառուցեցին, ինչպես կարող էին: Ամրոցում տեղավորեցին զինվորների մի գումարտակ, որի հրամանատարն էր գնդապետ իշխան Վասիլ Օսիպովիչ Բեյբութովը, որն այսօր գեներալ է և Հայաստանի կառավարիչը: Կարսի և Էրզրումի փաշաները, լսելով Ախալցիխեի գրավման մասին, վտանգ զգացին. այս ամրոցը այդ կողմից Անատոլիայի բանալին է: Նրանք շտապ հավաքեցին 18000-անոց զորք՝ բոլոր տեսակի զենքերով և հանդերձանքով, և մինչ ֆելդմարշալ Պասկևիչը զբաղված էր այլ տեղ, նրանք հանկարծ հեղեղի նման հարձակվեցին Ախալցիխեի վրա: Բայց նրանք դուրս էին եկել քաջ և հմուտ հրամանատարի և ռուսական կարգուկանոնի դեմ: Նրանք ստիպված եղան հետ քաշվել՝ չկարողանալով ոչինչ անել այդքան մեծ բանակով, որը, սակայն, հմուտ չէր և վերին աստիճանի անկարգապահ էր, հատկապես պաշարման գործում: Քաղաքից հեռանալուց առաջ նրանք բազմաթիվ ավերածություններ կատարեցին այնտեղ՝ քանդելով այն, ինչ ռուսները խնայել էին: Այսպես իրենց հուսախաբության համար նրանք վրեժխնդիր եղան քարերից»[154]:

Չհաշտվելով իր կորցրած տիրույթների, այդ թվում նաև Ախալցխայի կորստյան հետ՝ Մահմուդ Բ սուլթանի (1808-1839) հրամանով և Կարինի գլխավոր զորահրամանատար Հաջի Սալեհ փաշայի կարգադրությամբ 60000 աջարացիներ, քրբուլեթցիներ, լազեր 40 թնդանոթով պետք է Տրապիզոնի կողմից հարձակում գործեին Ախալցխայի վրա[155]: 1829 թ. փետրվարի 17-ին «...տաճիկները և աջարացիք ահագին քանակութեամբ իջան Աջարիայի լեռներից և, թափուելով Ախալցխայի շուրջը գտնուող հայոց գիւղերը, սկսեցին թալանել և կողոպտել բնակչաց: Իշխ. Բէհբութեանը, որ երկու վաշտ զօրքով մնացած էր Ախալցխայի պաշտպանութեան համար, հրամայեց քաղաքիս քրիստոնէից և հրէից իւրեանց ընտանիքները և թանկագին իրեղէնները զետեղել բերդի մէջ, իսկ տղամարդկանց զէնք բաժանելով պատուիրեց մնալ քաղաքում և պաշտպանել իւրեանց տները:

Փետրուարի 19-ին գիշերը մօտ 20.000 տաճիկ և աջարացի թափուեցին քաղաքը և սաստիկ արիւնհեղութիւն արին: Նոքա կոտորեցին քրիստոնէից և թալանում էին սոցա տները: Քաղաքի թուրքերը անցան թշնամու կողմը: Մինչև մարտի 4-ը շարունակվում էր Ախալցխայի բերդի պաշարումը, սակայն բերդը զարմանալի քաջութեամբ դիմացաւ և վնասուեցին միայն քաղաքի քրիստոնեայքը: Մարտի 4-ին վրայ հասան Վրաստանի օգնութեան հասած զօրքերը և թշնամին շտապ հեռացաւ գնաց Աջարիայ: Ախալցխայի կրած այդ 12 օրուայ պաշարման միջոցին հայք ոչ միայն զրկուեցին կեանքից, տներից և ունեցած-չունեցածից, այլև նշանաւոր քաջութիւններ արին և շատ օգնեցին ռուսաց: Մանաւանդ հռչակ ստացաւ իւր քաջութեամբ և մատուցած ծառայութեամբ ախալցխացի Ազնավուրեանը»[156]:

12 օր տևած պաշարման ժամանակ «...բերդից թշնամու վրայ ձգեցին 8693 թնդանօթի գնդակ, ճեռքով նետեցին 1354 ռումբ և բերդի պարիսպներից արձակեցին 72,880 հրացանի փամփուշտ: Սակայն այդ հրազէնքներից աւելի ժողովուրդը և նրա տներն էին փչանում, քան թշնամին: Այնպէս որ առաջուան շէն Ախալցխան՝ այժմ աւերակների կոյտ էր ներկայացնում և այս երկրորդ անգամն ահա ամբողջապէս այրուած խանձուած էր:

Ահմէդ փաշան շատ աշխատեց բերդին տիրել, փորձեց բերդի ջրի ճանապարհը գոցել, 3 ականներով ուզեց բերդը օդ ցնդեցնել,– սակայն նրա բոլոր ճեռնարկութիւններն ապարդիւն անցան...: ...բերդում տեղի ունեցած զինուորական խորհուրդը վճռել էր ժողովրդին օգնելու նպատակով՝ բերդից քաղաք զօրք չհանել:

Այդ պատճառով 12 օր շարունակ ժողովուրդը ինքն էր միայն իրան պաշտպանում և միևնոյն ժամանակ, բերդին էլ այլ և այլ օգնութիւններ հասցը-

153 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 429:

154 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 260 (բնագրում՝ “Les Russes maîtres d’Akhaltsikhé, la ménagèrent tant qu’ils purent. On logea dans la forteresse un bataillon de soldats commandé par le colonel prince Basile Ossipovitche Béboutof, aujourd’hui général et gouverneur de l’Arménie. A l’ouïe de la prise d’Akhaltsikhé, les pachas de Kars et d’Arzeroum ne se crurent pas en sûreté; cette forteresse est la clé de l’Anatolie de ce côté-là. Ils se hâtèrent de réunir un corps de 18,000 hommes de toutes armes et de tous costumes, et pendant que le feld-maréchal Paszkévitch était occupé autre part, ils tombèrent tout à coup comme une avalanche sur Akhaltsikhé. Mais ils avaient à lutter contre un brave et habile commandant et contre la discipline russe; ils furent forcés de se retirer sans avoir rien fait avec une armée aussi nombreuse, mais maladroite et indisciplinée au possible, surtout pour un siège. Ils n’abandonnèrent pas la ville, sans y causer beaucoup de dégâts, dévastant ce que les Russes avaient épargné, et se vengeant ainsi sur les pierres de leur désappointement”):

155 **Երիցեանց Աղ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 415: Տե՛ս նաև **Գեղամեանց Ե.**, Պատմական քաղուածքներ, «Հովիւ», 1908, № 33, էջ 519:

156 **Երիցեանց Աղ.**, նույն տեղում: Հմմտ. **Գեղամեանց Ե.**, նշվ. հոդվ., էջ 520:

նում: Իրերի այդ դրութիւնն էր պատճառը, որ Ախալցխայի 25,000 ազգաբնակութիւնից կենդանի մնացին միայն 750 քրիստոնեայ ընտանիք,– նրանք, որոնք բերդումն էին տեղաւորուած թշնամու գործած յարձակումից առաջ»[157]:

Ախալցխայի բերդի պաշտպանության գործը ստանձնած գեներալ-մայոր Բեհբությանցն առերևույթ դաժան, բայց, ըստ էության, հաշվենկատ գործողություններով ի վերջո մինչ օգնական ուժի ժամանումը կարողանում է աննված պահել բերդը. «Քաղաքի ազգաբնակության մի մասը կազմում էին քրիստոնյաները (հայեր՝ լուսավորչական և կաթոլիկ, վրացիները) և հրեաները: ...Ոչ մահմեդական ազգաբնակության ընտանիքները, թվով 700-ից ավել, Բեհբությանը փաղօրոք տարել էր բերդը, ուր և նրանք պաշտպանված էին: Եվ որովհետև չէր կարելի այնտեղ տեղավորել և տղամարդկանց, ուստի նրանք ստացան զենքեր և թողնվեցին դրսի քաղաքում: Երբ աջարացիները գիշերով ներս թափվեցին և հարձակվեցին բերդի վրա, այս զինված քաղաքացիները կազմակերպեցին ինքնապաշտպանություն, կռվի բռնվելով թշնամու հետ: Կռիվն այսպիսով ստանում էր փողոցային կերպարանք, պաշտպանողների մի մասը կոտորվում էր, մյուսը՝ ամրանում մի քարվանսարայի մեջ, որի շուրջը բոլորվում էր կատաղի պատերազմ: Բերդի պարիսպների վրա կռվող ռուս զինվորները քաջարի դիմադրություն էին ցույց տալիս և ետ շպրտում սաստիկ համառությամբ պարիսպները մագլցող աջարացիներին:

Լուսանում էր աջարական հարձակման սարսափելի գիշերը, և բացվում էր փետրվարի 20-ի վաղ առավոտը: Միջնաբերդի բարձր պատերի վրա կանգնած ռուս զինվորների առաջ տարածվում էր սարսափելի տեսարան: Թշնամու խմբերն ալիքների նման ծփում էին դժբախտ քաղաքի փողոցներում: Ամեն տեղ արյուն, հառաչանքներ, զոհերի հուսահատական ճիչեր, դահիճների վայրենի աղաղակներ: Տների տափակ կտուրները դարձել էին մի-մի սպանդանոց: Այդտեղ էին բերվում մարդիկ և դանդաղ հոշոտվում էին խանչալներով: Քարվանսարան, որի մեջ փակված էին զինված պաշտպանները, վերցվեց, և բոլոր պատսպարվածները սրի քաշվեցին: Առավոտից բերդի պարիսպի տակ հավաքվել էին մոտ երկու հարյուր կանայք և քիչ էլ տղամարդիկ, որոնք կարողացել էին փախչել արվարձաններից և աղաչում, պաղատում էին զինվորներին, որ իրենց ներս առնեն: Դժբախտներից շատերը դեպի վեր էին բարձրացնում իրենց հետ բերած խաչելությունները, սրբերի պատկերները, որպեսզի ավելի ևս համոզիչ դարձնեին իրենց թախանձանքները: Բայց իզուր: Բերդի դռները պինդ ամրացված էին քարերով, զինվորները խնդրում էին, որ իրենց թույլ տան դուրս հարձակվել և փրկել թշնամուն քաղաքից, բայց զինվորական խորհուրդը, որ գումարեց իր մոտ Բեհբությանը, մերժեց այդ միտքը՝ չպակասացնելու համար պաշտպանների թիվը, որ առանց այն էլ շատ փոքր էր: Այնպես որ պահպանված մնաց միայն բերդը, իսկ նրանից դուրս ամեն ինչ մատնվեց կատաղի թշնամու կամքին: Ահմեդ Բեյը չկարողանալով վերցնել Ախալցխան գրոհով, պաշարման ենթարկեց նրան, որ տևեց 12 օր, մինչև որ Վրաստանից օգնության եկավ մի զորաբաժին: Ահմեդ Բեյը շտապով հեռացավ, բայց թուրքական զորաբաժինը, նախքան նահանջելը, համառ դիմադրություն ցույց տվեց ռուսական զորքին, որ դուրս եկավ բերդից և հարձակվեց նրա վրա: Նորից քաղաքը հրդեհվեց: Մահմեդական ազգաբնակչությունը, վախենալով ռուսների վրեժխնդրությունից՝ փախավ, այնպես որ քաղաքի տերն էին մնում բերդում փակված 700 ընտանիքները, բայց նրանք էլ կորցրել էին իրենց ունեցածը և մատնվել ետին աղքատության»[158]:

Հայտնի է, որ գեներալ Բեհբությանցն Ախալցխայի բերդի պաշտպանությունը կազմակերպել էր իր հրամանատարության ներքո ունեցած ռուսական կայազորի՝ ընդամենը 9 վաշտով, ընդ որում, մարտի 4-ին խիզախել էր 5 վաշտով դուրս գալ բերդից և հակահարված տալ թշնամուն[159]: Գեներալին ժամանակին կարողանում է օգնություն հասցնել գնդապետ Բուրցովը[160]: Քաղաքի պարիսպների տակ և նրա մատույցներում աջարական զորաբանակին պատճառված կորուստն ահռելի էր. «Այս պաշարման միջոց Աճարաց կողմանէ 3,000 մը ինկեր էին և Ռուսաց պահանորդներէն ալ 100 հոգի ըստ իրենց համարոյն»[161]:

Նշյալ անցքերի մասին նույնքան ուշագրավ է նաև թուրք տարեգրի վկայությունը. «Որոշ ժամանակ հետո Ախալցխան ետ առնելու համար հավաքվեց մեծ քանակությամբ զորք, պատրաստվեց ռազմամթերք և ուղարկվեց: Երբ մոտ էր Ախալցխայի գրավումը, որոշ թվով իսլամ զինվորներ ցանկացան հափշտակել Ախալցխայի մոտ բնակվող քրիստոնյա և հրեա համայնքների ընտանիքներին ու զավակներին և ստրկացնել նրանց: Այդ դեպքը մյուս հավատարիմ զինվորական դասերի հետ թշնամանալու պատճառ դարձավ: Հափշտակվածները վերադարձվեցին: Նման բռնությունները արգելելու համար միջոցներ ձեռք չառնելու հետևանքով ոչինչ չարվեց, և բավական մարդ զոհ գնաց, ռազմամթերք ոչնչացավ...»[162]:

157 **Գեղամեանց Ե.**, նույն տեղում:

158 **Լեո**, Հայոց պատմություն (XIX դարի առաջին կես), Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984, էջ 469:

159 **Сегаль И.**, նշվ. հոդվ., № 222, էջ 1:

160 "Кавказский календарь на 1850 г.", с. 37. Տե՛ս նաև **Персваленко В.**, նշվ. հոդվ., էջ 281-282: **Сегаль И.**, նույն տեղում:

161 **Նուրիխան Մ.**, նշվ. հոդվ., էջ 108:

162 Թուրքական աղբյուրները..., հ. Դ, էջ 23:

Ի վերջո, մարտի 4-ին Ախմեդ փաշան, տեղեկություն ստանալով Ախալցխայից օգնության եկող ռուսական զորքի մասին, հեռանում է Աջարիա:

Ախալցխան հետ գրավելու թուրքերի մեկ այլ փորձ էլ կանխվում է 1829 թ. հունիսի 2-ին: Ընդ որում, մայիսի 30-ին Կարս ժամանած Պասկևիչին հայտնի է դառնում, որ մոտ 30000 զորքով թուրքերը նոր հարձակում են ձեռնարկել, բայց հունիսի 2-ին Փոցխով գետի ափին գտնվող Դիղուր գյուղի մոտ ռուսներին հաջողվում է ետ մղել թուրքական զորքի՝ նաև այս հարձակումը[163]:

Ընդհանուր առմամբ, 1828-1829 թվականների ընթացքում պատերազմական գործողությունների հետևանքով Ախալցխան այն աստիճան էր տուժել, որ շուրջ կես դար անց՝ 1880 թ., տիրող կացության առթիվ ականատեսը նշել է. «Վրահայոց այս ճոխ և հարուստ քաղաքը յետ հարիւրաւոր տարի Օսմանեան պետութեան մէջ կէս անկախութեամբ մ'ապրելու, անցաւ յետին պատերազմներով Ռուսաց ինքնակալութեան. կրելով ցայսօր այն աղետալի վէրքերը զորս ստացաւ պատերազմին միջոց, և որք մինչև ցայսօր չեն բժշկուած...: Եթէ Ախլցխա այսօրուան օրս աննշան կամ երկրորդական քաղաք մ'է, պատճառը պատերազմունքն են, որոնք աւերեցին և այրեցին քաղաքը և բնակչաց շատին փախստեան պատճառ եղան»[164]:

**Ադրիանապոլսի պայմանագիրը.** հայտնի է, որ պատերազմը հաղթական ավարտին հասցրած Պասկևիչը, հաշտության պայմանագրի համար որպես առաջարկություն, մշակել էր երեք նախագիծ. «...նախ հնարավորին պայմաններում Ռուսաստանի ձեռքում պահել Բաթումը, Քոբուլեթը, Ախալցխայի և Կարսի փաշայությունները, Բայազեդը, Դիադինը՝ մինչև Եփրատի նշանավոր կամուրջը: Այնուհետև, եթե այդ անհնարին լինի, ապա վերցնել Բաթումը, Քոբուլեթը, Կարսի և Ախալցխայի Ռուսաստանին սահմանակից մասերը և Բայազեդը, իսկ եթե այդ էլ չհաջողվի, ապա Ախալցխան վերադարձնել թուրքերին, բերդը հիմնովին քանդելու պայմանով...»[165]:

Հաշտության պայմանագիրը կնքվում է Ադրիանապոլսում 1829 թ. սեպտեմբերի 2-ին: Համաձայն հաստատագրած և 16 հոդվածներից բաղկացած պայմանագրի 4-րդ հոդվածի՝ Ախալցխան իր մերձակա հողատարածքներով անջատվում է Օսմանյան տերությունից և միացվում Ռուսական կայսրությանը. «Վրաստանը, Իմերեթիան, Մինգրելիան, Գուրիան և Անդրկովկասի շատ այլ մարզեր, արդեն վաղուցվանից առհավետ միացված են Ռուսական կայսրությանը. 1828 թվականի փետրվարի 10-ին Պարսկաստանի հետ կնքված պայմանագրով սույն Տերությանն են զիջված նաև Երևանի և Նախիջևանի խանությունները: Ուստի երկու Բարձր պայմանավորվող կողմերը անհրաժեշտ համարեցին երկու կողմերի տիրույթների միջև, հիշյալ գծի ամբողջ երկայնքով, հաստատել ճշտորոշ սահմանագիծ, որն ընդունակ լինի ապագայում կանխելու ամեն տեսակ թյուրիմացությունններ: Նույն կերպով նրանք նկատի առան այն միջոցները, որոնք կարող են անհաղթահարելի խոչընդոտ դառնալ սահմանակից ցեղերի ասպատակումների և ավարառությունների դեմ, որոնք ցայսօր այնքան հաճախ խախտում են երկու Կայսրությունների բարեկամական և բարիդրացիական կապերը: Այս պատճառով որոշված է սրանից հետո Ասիայում Ռուսական կայսերական արքունիքի և Օսմանյան Բարձր դռան տիրապետությունների միջև սահման համարել այն գիծը, որը Սև ծովից սկսած Գուրիայի այսօրվա սահմանագծի երկայնքով առաջանալով, հասնում է Իմերեթիայի սահմանին, և այնտեղից ուղիղ գծով՝ այն կետին, որտեղ Ախալցխայի և Կարսի փաշայությունների սահմանագծերը միանում են վրացական հետ, այնպես, որպեսզի Ախալցխա քաղաքը և Ախալքալաք ամրոցը մնան հիշյալ գծից դեպի հյուսիս, և նրանից առնվազն երկու ժամվա ճանապարհի հեռավորության վրա:

Վերը նշված սահմանագծից հարավ և արևմուտք՝ դեպի Կարսի և Տրապիզոնի փաշայությունների, մեծ մասամբ Ախալցխայի փաշայության կողմն ընկած բոլոր հողերը կմնան Բարձր դռան առհավետ տիրակալության ներքո, իսկ այն հողերը, որոնք հիշյալ գծից ընկած են հյուսիս և արևելք՝ դեպի Վրաստանի, Իմերեթիայի և Գուրիայի կողմը, ինչպես նաև Սև ծովի ափը՝ Կուբանի գետաբերանից մինչև ներառեալ Ս. Նիկոլայի նավահանգիստը կմնան Ռուսական կայսրության առհավետ տիրակալության ներքո:

Սրա հետևանքով Ռուսական Կայսերական արքունիքը Մեծ դռանը տալիս է և վերադարձնում Ախալցխայի փաշայության մնացած մասը, Կարս քաղաքը՝ իր փաշայությամբ հանդերձ, Բայազետ քաղաքը՝ իր փաշայությամբ հանդերձ, Էրզրում քաղաքը՝ իր փաշայությամբ հանդերձ, ինչպես նաև այն բոլոր վայրերը, որոնք գրաված են ռուսական զորքերի կողմից և որոնք գտնվում են վերը նշված

163 **Երիցեանց Աղ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 417-418:

164 **Նուրիխան Մ.**, նշվ. հոդվ., էջ 101-102:

165 **Պողոսյան Ա.**, Ռուս-հայ բարեկամության պատմությունից, Երևան, 1974, էջ 107-108: Ի դեպ, ռուսական զորքերը թուրքերին հետ էին շպրտել մինչև Գյումուշխանե: Ախալցխայի հիշատակությանը հանդիպում ենք ԺԶ-ԺԷ դդ. «Ոսկեփորիկ»-ի հետագա հիշատակարանում՝ կապված ռուս-թուրքական պատերազմի հետ. «Ի թիւն Հայոց ՌՄՀԷ (1828)-ին Ըռուսաց արքայ Նիկոլա Պավլովիչը յարէւէլից դիհէն դիմելով տաճկաց ազքին, պատէրազմունք տալով, հալածէլով, կոտորէլով, անպատմէլի արիւնահեղութիւն անէլով, Ղարս քաղաքէն, Ախըլցըղա քաղաքէն, Կարնոյ քաղաքէն մինչեւ Կիմիշխանա քաղաքն երթալօվ, էտ նորայ Բ (2) արքայն Նիկոլա Պավլովիչը, Սուլդան Մահմուտը հաշտութիւն անէլով, մէկ տարի Կարնոյ քաղաքը կէցաւ, յետքը ելաւ ու գնաց, շատ ալ հայ գնաց...» (**Քյուրտյան Հ.**, Համառոտ ցուցակ հայերեն գրչագիրներու Քյուրտյան հավաքածոյի ի Ուիչիտա, Կանզաս, ԱՄՆ, «Բանբեր Մատենադարանի», հ. 10, էջ 415):

սահմանագծից դուրս»[166]: Այլ խոսքով, դաշնագրի համաձայն՝ «...Անդրկովկասին է կցւում պատմական Ջավախքը կամ Ախալքալաքի գաւառը, ինչպէս նաեւ Ախալցխան»[167]:

**Նվաճված երկրամասերը վերաբնակեցնելու ռուսական ծրագիրը.** ռուսական կայսրությունն իր սահմանները դեպի հարավ ընդարձակելուն զուգահեռ ջանում էր պատերազմների հետևանքով ամայացած նորանվաճ երկրամասերում հաստատել քիչ թե շատ հուսալի և ստեղծագործ բնակչություն: Սույն ծրագրի շրջանակներում արդեն ԺԸ դարի երկրորդ կեսին ռուսական իշխանությունները քայքայել էին Ղրիմի հայկական հզոր գաղութը և թերակղզու բազմահազար հայերին փոխադրել Դոնի գետաբերանին հարող առափնյա ճահիճները (հետագայի Նոր Նախիջևանն ու հարակից գյուղերը), իսկ Ղուբա-Շիրվանի հայությանը տեղ էր հատկացվել Հյուսիսային Դաղստանի կիսաանապատները և Կուբան-Թերեքյան միջասահմանը (Ղզլար, Եղեսիա, Մոզդոկ, Մաջառ և այլ բնակավայրերը):

Ռուս-թուրքական հերթական պատերազմը ռուսներին կանգնեցրել էր ծանոթ կացության առջև. մի կողմից կայսրությանն էր անցել պատերազմի հետևանքով ավերված և մեծ մասամբ փախուստի մատնված բնակչությամբ Ախալցխայի փաշայության ընդարձակ երկրամասը, որը ռուսական իշխանությունները ցանկանում էին բնակեցնել տերության նկատմամբ համակրանք տածող և վստահելի ազգաբնակչությամբ, մյուս կողմից առկա էր օսմանցիներին վերադարձվելիք գավառների հայ բնակչության ընդհանուր անհանգստությունը: Վերջիններս, պատերազմի ընթացքում չեզոք դիրք գրավելու փոխարեն, անխոհեմաբար և բացահայտ կերպով ռուսների կողմն անցնելով, պատերազմի ավարտից հետո, ըստ էության, իրենց դավաճանական արարքի համար հնարավոր խստությունների և պատժի ենթարկվելու կանխատեսումով հակված էին գաղթի՝ դրանով իսկ պարարտ հող դառնալով ռուսական ծրագրերի իրագործման համար. «...տաճկահայոց գաղթականութեան միտքը ներշնչողը եղաւ նոյն իսկ Պասկևիչը: Չնայելով, որ կոմսը առհասարակ շատ չէր համակրում հայերին, իսկ Ներսէսի պատճառով մինչև անգամ հակակրութիւն էր զգում դէպի յիշեալ ազգութիւնը, այնուամենայնիւ նորան շատ հաճելի թուացին օսմանեան հպատակ հայք: Նա իր աչքով տեսաւ հայերի թէ արիութիւնը և թէ ջանասիրութիւնը: Շնորհիւ տեղացի հայ երկրագործների նորա զօրքերը երկու տարի կերակրվում էին նոցա հացով, առանց որոյ ռուսները չպիտի կարողանային այնպիսի արագութեամբ յառաջ ընթանալ: Նա տեսաւ նմանապէս, թէ որպիսի ընդունակութեամբ ծաղկացնում էին արհեստները քաղաքացի համեստ հայք: Ունենալ մի այդպիսի ժողովուրդ, որոնք կարող էին գալ և ծաղկացնել Կովկասի ամայի տեղերը,– ահա Պասկևիչի այն ցանկութիւնը, որի իրագործմանը նա հետամուտ էր տակաւին օսմանեան պատերազմի սկզբներից: Շարունակ արծարծելով այդ միտքը, սպարապետը յետաձգում է գաղթականութեան խնդիրը մինչև հաշտութեան օրը, վախենալով, որ չլինի թէ հայք դեռ կռուի ժամանակ դուրս գան Արզրումի հեռաւոր երկրներից և ռուսական զօրքը մնայ այնտեղ շրջապատուած թշնամութեամբ նայող մահմեդական տարրով»[168]:

Անտարակույս, ռուսական կողմն առավելագույնս օգտագործում էր օսմանահպատակ քրիստոնյաների կրոնական զգացումները և բազմազան միջոցների ներգործությամբ հենվում ծրագրին հաջողություն խոստացող ազդեցիկ անձերի վրա. «...ճեներալ Բասգեւիչ գուցէ Ռուսիոյ հարաւային կողմանց անբնակ գաւառները բնակիչներով լեցնելու եւ այն կողմերը բարգաւաճեցնելու դիտմամբ, թէ մեծամեծ խոստումներով եւ թէ սպառնալիքով ալ համոզելով եւ դրդելով զՀայերը ի գաղթականութիւն կը շարժէ, որոնք երկու ազդեցիկ անձանց՝ էջմիածնականաց Կարապետ Առաջնորդի եւ Կաթողիկէ Մխիթարեան ուխտէն Սէթեան Հ. Եփրեմի յորդորանքէն եւ քիչ մ'ալ էջմիածնական գռեհիկ երիտասարդաց ցոյց տուած անտեղի վարմունքներէն ստիպուած, ոչինչ գնով ծախելով իրենց շարժական ինչքը, անշարժները անտերունչ վիճակի մեջ թողլով, բիւրաւոր ընտանիքներ Կարնոյ, Բասենի, Ալաշկերտի, Թորթումի եւ այլ գաւառներէն կը գաղթեն Լոռի, Շիրակ եւ Ախալցխայի կողմերը»[169]:

Արդեն 1829 թ. հոկտեմբերի 10-ին Պասկևիչը գրություն է հղում Նիկոլայ Ա թագավորին Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող հայերից 10000 ընտանիքի Ռուսաստանի տարածքում բնակության տեղ հատկացնելու առաջարկով. «Այն ընտանիքների թիվը, որոնց անխուսափելի վտանգ է սպառնում, կարող է հասնել մինչև 10 հազարի: ...մի թույլ տվեք, որ օսմանցիների ինքնիշխանությունը վրեժ լուծի նրանցից այն հավատարմության համար, որ նրանք ցույց տվին Ռուսաստանին»[170]: Նի-

166 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբագիր՝ **Ջ. Կիրակոսյան**, Երևան, 1972, էջ 75-76:

167 **Աբեղեան Արտ.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», Պոսթըն, 1924, № 9, էջ 125-127:

168 **Երիցեանց Աղ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 432-433:

169 **Քօսեան Հ.**, Բարձր Հայք. Կարին քաղաքը, հ. Ա, Վիեննա, 1925, էջ 435-436: Տեղեկությունը վերցրած է Կարնո կաթողիկե առաջնորդ Ստեփանոս Մելիքսեդեկյանի կենսագրականից:

170 **Дарбинян М.**, Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830 гг, «ԲՀԱ», 1977, № 3, էջ 12 (բնագրում՝ “Число семейств сих, которым угрожают неизбежные опасности, может простираться до 10-ти тысяч. ...недопустить совершиться, чтобы самовластие оттоманов мстило им за ту привязанность, какую оказали они к России”): Տե՛ս նաև **Դարբինյան Մ.**, Էջեր Ախալցխայի և Ախալքալաքի հայերի 1829-1830 թթ. գաղթի պատմությունից, «ԲԵՀ», 1973, № 2, էջ 213: **Գեղամեանց Ե.**, Պատմական քաղուածքներ, «Հովիւ», 1908, № 36, էջ 570:

կոլայ Ա, գաղթեցնելու ծրագրին հավանություն տալով, նոյեմբերի 10-ին առաջարկում է նաև «...մեր նոր սահմանների պաշտպանության համար» նրանց մի մասին բնակեցնել Ախալցխայում և նրա մերձակայքում[171]:

Զավիլևսկու գլխավորությամբ ստեղծվում է Թուրքիայից քրիստոնյաների տեղափոխության համար հատուկ կոմիտե[172]:

Հայերի անխոհեմ և կարճատես առաջնորդների շրջանում գաղթելու գայթակղություն առաջ բերելու նպատակով ռուսների գործադրած ջանքերն անմիջապես տալիս են իրենց պտուղները. «...Կարին քաղաքի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը խնդիր տուեց գլխաւոր սպարապետին հրաման տալու, որպէսզի ժողովուրդը գաղթէ ռուսաց կայսրութեան սահմանները, նոյնպիսի խնդիր տուին նաև կաթոլիկ հայերը իրանց վարդապետի ձեռքով: Կարնեցիների թիւը 3000 տուն էր, իսկ կաթոլիկներինը 300, բացի գիւղացիներից: Չորս օրից յետոյ սպարապետը իրաւունք տուեց, որ ցանկացողները կարող են գաղթել և պատուիրեց միանգամայն, որ ամենքը միասին չշտապեն, որպէսզի ցրտից առանց օթևանի չնեղանան, այլ քիչ քիչ գաղթեն, քանի որ ռուսաց զօրքը դեռ ութն ամիս մնալու է այնտեղ...: Եւ այսպէս 1829 թուի հոկտեմբերի 14-ին թողին իրանց հայրենիքը և սկսան քաղաքից հեռանալ...: Յիշեալ խմբի գնալուց յետ՝ ձմեռուայ խստութիւնը հասնելուն պէս դադարեցին ճանապարհորդութիւնները, և ամենայն մարդ սկսաւ հանդարտ մտածել տեղափոխութեան տեղերի ու հանգամանքների մասին, գրեթէ բոլոր ժողովուրդը, քաղաքացիք և գիւղացիք իրանց անունները արձանագրել տուին Բանգրատն զօրավարին և նա հայերին ու կաթոլիկներին ցոյց տուեց գլխաւոր սպարապետի ուղարկած թղթի պատճէնը, որի մէջ նշանակուած էր այն տեղերի անունները, ուր կարելի էր ժողովրդին փոխադրել. և առաջարկեց ազատ կերպով ընտրել որն էլ կամենան: Կարապետ արքեպիսկոպոսը իւր 38 պատուաւոր ազգայիններով ստորագրութեամբ խնդրեց Ախալցխան, նոյնպէս կաթոլիկներն էլ բազմիցս խորհուրդ անելով ընտրեցին իրենց համազգիներից չբաժանուիլ, և յօժարեցան Ախալցխա տեղափոխուել, որպէս զի փոքրաթիւ լինելով օտարութեան մէջ չդժուարանան ապրել, մանաւանդ որ կրօնի խտրութիւնը ամենևին չէ վնասում «քաղաքական բարեզարդութեանց». և նոցա վարդապետները այս բանը յայտնեցին Բանգրատն գեներալին...: Կարապետ արքեպիսկոպոսն էլ երեք մարդ ուղարկեց զննելու քաղաքի և շրջակայ գաւառների գիւղերը: Ուղարկած դեսպանները յետ դարձան, և բարի համբաւ բերին տեղի մասին, տեղի դրութեան նկարներով, որը տեսան Բանգրատնի մօտ և շատ գովասանքներ լսեցին ցանկացած տեղի մասին. շուտով Բանգրատնը հրատարակեց հայոց ազգի ամեն մի դասակարգի մէջ, որ գարնան բացուելուն պէս պատրաստ լինին ճանապարհ ընկնելու»[173]:

Հարկ է խոստովանել, որ Օսմանյան տերության ներսում քրիստոնյա բնակչության նկատմամբ առկա կրոնական որոշ սահմանափակումներն ու անհանդուրժողականության դրսևորումները, այնուամենայնիվ, հայրենիքը զանգվածաբար լքելու լուրջ դրդապատճառ չէին կարող դառնալ: Այդ անելու համար, ըստ էության, հարկ էր կազմակերպել նրբորեն քողարկված դավադրություն: Թերևս այստեղ է, որ չկա ոչ մի զորեղ կռվան՝ հակադարձելու թուրք հեղինակի այն պնդմանը, թե գաղթը կատարվել է «...ոչ թե անտանելի թրքական դժոխքից ազատվելու նպատակով, այլ ռուսների „կեղծ քարոզչության„ հետևանքով»[174]:

**Հայրենադավ գաղթի սկզբնավորումն ու ծավալումը.** հազարամյակներով բնօրրանին կառչած և միայն վերջին՝ շուրջ երեք դարերի ընթացքում օսմանահպատակ դարձած հայերի մի մասին իրենց պատմական հայրենիքից տեղահանելու և հոծ զանգվածներով գաղթեցնելու համար անհրաժեշտ էր գտնել անփառունակ այդ գործը ստանձնող քիչ թե շատ հեղինակավոր այնպիսի անձ կամ անձեր, որոնք քարոզչական լուրջ և ծավալուն աշխատանքով ի զորու լինեին գաղթի տրամադրություն և հակվածություն սերմանել ժողովրդի լայն զանգվածների շրջանում: Ցավալիորեն պատմության այս հոլովույթում ևս գտնվում է եսականության գերի այն մեկը, որը մի յուրօրինակ «Շահ-Աբաս» դարձավ հարազատ հոտի գլխին. «Կարապետ արքեպիսկոպոսը սկզբում հակառակ էր գաղթականության և այս մասին գրել-տեղեկացրել էր պատրիարքարանը: Սրբազան Կարապետ պատրիարքը Բարդուղիմեոս եպիսկոպոսին ուղարկում է Էրզրումի ժողովրդին համոզելու՝ չգաղթել: Կարապետ արքեպիսկոպոսը վշտանալով, որ պատրիարքարանը իր վրա վստահություն չունեցավ, ուրիշին նշանակեց, վճռում է գաղթել և գաղթեցնել տալ հայ ժողովրդին: Ուստի իր իրավարանի մեջ դնում է սուր և խաչ, կանչում է գյուղերի քահանաներին և քեհաներին, քարոզում է նրանց գաղթել և ամփոփում է իր քարոզը հետևյալ խոսքերով. «Ահա սուր և խաչ, ով ուզում է խաչը՝ թո՛ղ հետևի ինձ, ով ուզում է սուրը՝ թող մնա»: Քահանաներն ու քեհաները համաձայնում են գաղթել նրա հետ և գնում են իրենց ժողովուրդներին ևս քարոզելու: Հետո Թադեոս և Հարություն վարդապետ-

171 **Дарбинян М.**,նշվ. հոդվածը, նույն տեղում:

172 **Тунян В.**, Проекты экономического освоения Закавказья (1826-1834), «ԼՀԳ», 1989, № 12, էջ 19:

173 **Աղանեանց Գ.**, Կարնոյ գաղթը, «Արձագանք» 1891, № 11, էջ 166:

174 **Զուլալյան Մ.**, Էնվեր Կոնուկչու. Էրզրումը սելջուկներից մինչև Հանրապետությունը (գրախոսություն), «ՊԲՀ», 1997, № 1, էջ 267:

ների ու Զինիս գյուղի Տեր-Գրիգոր քահանային ուղարկում է գյուղերը, նույնը քարոզելու: Թադեոս վարդապետը, Տեր-Սարգիս քահանան և Խաչատուր Գրիգորյանցը Կարապետ եպիսկոպոսից ուղարկված էին Ախալցխայի և Գյումրու կողմերը՝ երկրի մասին տեղեկություններ բերելու. սոքա էլ երևի կաշառված՝ վերադարձին համբավ են բերում, թե «այնպիսի բարելից երկիր է, որ դոշակիդ բուրդը թափե, բամբակ (լից) կոխե, կորկոտի տեղ՝ բրինձ կե, Թամազ արուկի տեղ՝ Օրդուբադու արուկ կե»: Ժողովուրդը հավատալով սոցա խոսքին, շտապում է թողնել իր հայրենական բնակավայրը, իր դարավոր աշխատանաց արգասիք՝ հայրենական բնակարաններն ու կալվածները վայր թափել՝ տան կահկարասիքը և գաղթել: 1830 թ. մայիսի 15-ին գաղթականների մի մեծ բազմություն Կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ ճանապարհ է ընկնում դեպի Ռուսաստան: Բոլոր գաղթականների թիվը հասնում էր 14000 ընտանիքի, մոտ 95000 հոգու[175], որոնցից 6500 ընտանիքը Էրզրումից և նորա փաշայությունից էին, 4200 ընտ[անիք]՝ Բայազետից ու նրա փաշայությունից, 2264 տուն Ղարսից և նորա վիճակից, իսկ մնացածները՝ զանազան կողմերից...: Էրզրումի գաղթականները Կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ գալիս են Ախալքալաք, Ախալցխա և Ծալկա, Ղարսա գաղթականները մնում են Գյումրի և Փամբակ»[176]:

Հայտնի է նաև, որ «Կարնոյ նոյն ժամանակի 4000 տուն հայերն նս կը փափագին գաղթել գիւղերու հետ, գալիք երկիւղներէն պաշարուած, սակայն նոյն ժամանակի առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Հնուտցի ժողովրդեան այս տրամադրութիւնք գիտնալով՝ գեղեցիկ հեռատեսութեամբ՝ կը գրէ ի

175 Դեպի ռուսական կայսրության սահմանները գաղթած բնակչության թվաքանակի մասին մոտավորապես նույնպիսի տվյալներ է հաղորդում Լ. Զագուրսկին, այն է՝ 14000 ընտանիք, մոտ 90000 շունչ (**Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 9): Այլ տեղեկության համաձայն՝ Կարինի փաշայությունից գաղթել էր 7298 գերդաստան (**Գեղամեանց Ե.**, նշվ. հոդվ., «Հովիւ», 1908, № 36, էջ 571): Վկայություն կա նաև այն մասին, թե Ախալցխա քաղաքում հաստատվել էր շուրջ 2500, իսկ մերձակայքում և Ախալքալաքի շրջանում՝ մոտ 2607 հայ ընտանիք (**Դարբինյան Մ.**, նշվ. հոդվ., «ԲԵՀ», 1973, № 2, էջ 214):

176 **Դարբինյան Մ.**, Ուշագրավ տեղեկագիր Կարնո գավառի հայության և 1829-1830 թթ. գաղթի վերաբերյալ, «ԲՀԱ», 1974, 3, էջ 94-95: Հարկ է նշել, որ այս հուշագրությունը գրի է առել ազգագրագետ Երվանդ Լալայանը. ձեռագիրը հայտնաբերվել է 1973 թ. Ե. Լալայանի անձնական արխիվում (հրատարակվել է՝ **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, Երևան 1983, էջ 439-440): Գաղթի սկզբնավորման վերաբերյալ ուշագրավ են նաև հետևյալ մանրամասները «Անսահման ատելութիւն զգալով դէպի օսմանեան տէրութիւնը, հայք կարծում էին, թէ ահա ժամանակ է վրէժխնդիր լինելու: Կարնոյ առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը շատ յորդորներ և քարոզներ կարդաց իւր ժողովրդին՝ վերջ տալու այդ չարութիւններին, անմիտ և վտանգաւոր վարմանցը, բայց այդ ամենը ապարդիւն անցաւ: Հիմա ռուսները պիտի վերադառնային, մատնելով բազմաթիւ հայ ազգաբնակութիւնը տաճկական վրէժխնդրութեան: Մնալ օսմանեան սահմաններում այլևս անհնարին էր հայոց համար և ահա յառաջացաւ գաղթականութեան խնդիրը» (**Երիցեանց Ալ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 432): «Կարնո Հայոց Առաջնորդարանում պահպանված գրություններից մեկում, որն ընդօրինակվել է հավանաբար 1913 թ., տեղեկություններ կան հայրենադավ գաղթի վերաբերյալ. «Բագրատունիի ժամանակ, այս միջոցիս (1829), երբ Ռուսիա պատերազմեցաւ Թուրքիոյ հետ, զօրաց սպարապետ եւ ընդհանուր հրամանատար Պասքեւիչը յաղթանակաւ յարձակեցաւ քաղաքիս վրայ, երբ քաղաքիս մերձեցաւ, իր բանակը Սուրբ Նշան լեռը կեդրոնացուց, եւ իր զօրքով քաղաքս մուտ առնել պատրաստուեցաւ. իսկոյն Կարապետ եպսկ. դիմաւորեց եւ առաջին տեսութեան՝ Պասքեւիչը հրամայեց եպիսկոպոսին ըսելով, թէ՝ ժողովուրդդոցդ կը պատուիրես, որ այսուհետեւ իրենց տաճիկ դրացիներուն հետ սիրով եւ խաղաղութեամբ վարուին, մենք այսօր թէպէտ կը մնանք, բայց կը նայիս վաղը յանկարծ հրաման կուգայ ետ դառնալ: Իրեն հրամանին ենթարկեալ մայեօր մը իբրեւ քաղաքիս կուսակալ (նաչարնիկ) կարգեց. միջոց մը ետքը քաղաքէս մեկնեցաւ ու գնաց...: Դժբաղդաբար կարճ միջոցին սորա փոխուիլը պատահեցաւ. Բանդրատ անուն ժեներալը յաջորդեց. եկածին պէս Սրբազան Առաջնորդին եւ իշխանաց հրամայեց, թէ առ այժմ երեք հարիւր մարդ Տեսեթնիկի համար կ’ուզեմ՝ իբրեւ ոստիկան, որպէս զի մեր զօրաց հետ քաղաքիս հսկեն, պահպանութիւն ընեն. մի գուցէ գէշութիւն կա խռովութիւն չծագի Հայոց եւ Տաճկաց մէջ. ըստ որում մեր զօրքը ոչ թաղ գիտէ եւ ոչ հրապարակ անկիւն, եւ այդ անձինք տէրութենէն ամսական պիտի ստանան եւ ոչ թէ ձրի ծառայեն, որոնց ժրագլուխ եւ ճարպիկ գլխաւոր մը պիտի որոշուի, եւ նաչարնիկին ներկայացնէ անուններին արձանագրել տալով: Ուստի Տիրկէր օղլի Միհ. Սարգիս աղա անուն մէկը որոշուեցաւ, Առաջնորդին եւ Ազգայնոց որոշմամբ: Բայց այս Տեսեթնիկ գրուած անձինք սրիկա արբեցող եւ ազգին անուան արատ բերող, որք տեսակ գէշութիւններ եւ չարիք չմնաց եւ խայտառակութիւն տաճկաց գլուխը չը հասցնեն իբրեւ վրիժառու եւ ազգայնոցմէ ոմանք եւս նոցա չար ընթացից հետեւեցան: Թէ տաճկաց կողմէն բողոքներ կ’ընէր նաչարնիկը եւ աչք կը գոցէր, որով որպէս թէ մէկ կողմէն ազգը յուսահատի, գաղթականութեան միտումն ունենան, եւ միւս կողմէն ալ ժողովուրդը գաղթեն եւ ասով յաչս կայսեր սիրելի եւ հաճելի ըլլայ: Միւս կողմանէ առաջնորդը թէպէտ ի սկզբան կը խրատէր տաճկաց հետ լաւ ապրիլ, բայց երբ որ զգաց թէ ազգային եւ իշխանք եւ ժողովուրդք գաղթելը երբեք չեն ուզեր՝ գուշակելով մեծ կորուստ է ազգին գաղթականութիւնը, որուն առաջն առնելուն համար նախ եւ յառաջ Առաջնորդին պաշտօնանկ ընել կը խորհէին: Երբ Կարապետ Սրբազան զգաց ազգայնոց այսպիսի խորհուրդ յղանալը եւ ժողովրդոց ընդդէմ տաճկաց հակառակ վարմունքը, այս անգամ ինք առաջին գաղափարը փոխեց, ամենայն զօրութեամբ սկսեց ճիգը թափել եւ աշխատիլ, քարոզել՝ ժողովրդեան ըսելով. «Դուռն ողորմութեան է բացուել». եւ քահանայից ալ խստիւ պատուիրել, որ իւրաքանչիւր քահանայ իր ծուխերուն խրատէ, համոզէ, թէ գաղթեն անպատճառ: Իշխանաց եւ հասարակութեանց ողջամիտ մասը այս անգամ բազմակնիք հանրագրութեամբ, Շէքէրճեան Գրիգոր վարժապետ պատուելին՝ ազգին կողմէն իբրեւ երեսփոխան ընտրելով, փութացուցին Պոլիս, որ ուրիշ մը կարգուի Առաջնորդ քաղաքիս, հրաժարուեցուի Բագրատունին, որով ժողովուրդը տեղերէն չը շարժին, գաղթականութենէ բոլորովին ետ կենան: Բայց իզուր. գաղթականութիւնը տեղի ունեցաւ: Կարապետ եպսկ., որ լսած էր, թէ Շէքէրճեան Գրիգոր վարժապետ Պոլիս գնացեր եւ քաղքիս ազգային ընդհանրութենէն հանրագիր հետ տանելով Սրբազան պատրիարքին եւ գերագոյն ժողովոյ տնօրէնութեամբ եւ հրամանաւ պոլսեցի Բարդուղիմէոս ծ. վրդ. քաղաքիս առաջնորդ ընտրուած կու գայ եւ իրեն հրաժարիլը, իսկոյն գիր կը գրէ Բարդուղիմէոս վրդ.-ին, թէ չգաս, եթէ գալու ըլլաս, կեանքդ վտանգի ներքեւ կ’ենթարկես խազախներու ձեռքով, եւ նա երկիւղէն Շէքէրճեանի հետ դէպի Երզնկա չուեց, մինչեւ Ռուսաց զօրքը քաղաքէս մեկնեցաւ» (**Քօսեան Հ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 92-94):

պատրիարքարան կանխապէս դարման մը տանիլ կամ ազգու միջոց մը խորհիլ ժողովրդեան գաղթականութեան առաջքն առնելու համար, նոյն ժամանակուան պատրիարքն և ամիրայքն խորհուրդ ընելով որոշում կը տան, փոխանակ այդ ազնիւ եպիսկոպոսին աջակցելու կամ խորհուրդ մը տալու, անմիջապէս պաշտօնանկ կընեն զանի, այդ լուրն տուած լինելուն համար և թէ ի՞նչ պատճառաւ եպիսկոպոսն իւր անձնանուիրութեան զոհ կերթայ չգիտեմք, միայն թէ զինքն պաշտօնանկ ընող գիրն պատրիարքարանն կը յղէ իրեն, որոյ յաջորդ ընտրուած Իսրայէլ անուն վարդապետ մը ճամբայ կը հանէն ի Կարին: Կարապետ եպիսկոպոսն իւր պաշտօնանկութեան լուրն առածին պէս սաստիկ կը յուզուի և կը ցաւի ասելով թէ «իմ տիրող կառավարութեան և ազգին ծառայութիւն մը մատուցանելու բաղձանքով իմաց տուի պատրիարքարանին գաղթականաց առաջքն առնել տալու համար և պատրիարքարանն զիս քաջալերելու փոխան, պաշտօնանկ ընելով իմ տեղ ուրիշ մարդ կը կարգէ, կեցի՛ր ուրեմն, որ ես զԿարին աւերակ դարձուցանեմ, թող պատրիարքարանէն խրկուած նոր առաջնորդն (Իսրայէլ վարդապետ) աւերակաց վերայ առաջնորդ լինի». այս խօսքին վերայ ինքն ևս մղում կը տայ գաղթականութեան իմաց տալով ամեն կողմը թէ «պատրաստուեցէք գաղթելու և ես ընդ ձեզ եմ». ամենք կը պատրաստուին և միահամուռ կը գաղթեն ի Ռուսաստան և երբ կը հասնին Հասան-Գալէ բուռած գիւղաքաղաքն Իսրայէլ վարդապետն ետևնուն կը հասնի զիրենք «զգաղթականս» վերադարձնելու. սակայն Կարապետ եպիսկոպոսի թելադրութեամբ լաւ ծեծ մը կուտէ գաղթականներէն և նորէն կը վերադառնայ ի Կարին, ուր 20 տուն միայն հայ կը գտնէ, զոր իրեն համար քիչ ժողովուրդ համարելով չ'կենար ի Կարին, այլ վերադարձ կընէ ի Պօլիս»[177]:

**Գաղթը կասեցնելու ապարդյուն փորձեր.** հայտնի է, որ 1829 թ. հոկտեմբերի 4-ին Կարինի «...հայք սաստիկ յուզուած՝ միաբերան գոչում են՝ «գաղթո՜ւմ ենք և այլևս չենք մնում օսմանցոց ձեռքին»: Հինգ օրուանից յետոյ սպարապետը (իմա՝ Պասկևիչը) դիմեց կայսեր նամակով և խնդրում էր թոյլտուութիւն հայերին գաղթեցնելու մասին: Բայց հայք առանց այդ թոյլտուութեան արդէն շարժուել էին տեղերից և նոցա սայլերը երկար ու ձիգ ընթանում էին Բասէնի ճանապարհով դէպի Կարս: Մեծ ջանք գործ դրեց Կարնոյ առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը, որ յետաձգուի ճանապարհորդութիւնը մինչև գարունք, որպէսզի ժողովուրդը ժամանակ ունենայ կարգի բերել իւր գործերը, վերջացնել հաշիւները և ծախել իւր կալուածները կամ աւելորդ գոյքը: Այնուամենայնիւ շատերը չսպասեցին արհւոյն և նոյնիսկ ձմեռ ժամանակ շտապեցին դէպի ռուսաց սահմանը...: Սակայն գաղթականաց մեծ հոսանքը պիտի կատարուէր 1830 թուի գարնանը: Պասկևիչի սկզբնական հաշուով գաղթողների թիւը պիտի լինէր ընդամենը մօտ ութ հազար գերդաստան, բայց այդ թիւը շուտով հասաւ 14 հազար գերդաստանի և սորանով մեծամեծ դժուարութիւններ պատճառեց ռուսական իշխանութեանը, որ չգիտէր, թէ ինչպէս տեղաւորէ նոցա:

Հայոց այդպիսի ահագին հոսանքը դէպի ռուսաց սահմանները, իհարկէ, շատ անհաճելի էր օսմանեան պետութեան, որովհետև նոցա թողած վայրերը գրեթէ ամայանում էին...: Այժմ հայոց գաղթելովը փակւում էին վաճառականաց և արհեստաւորաց խանութներն ու անմշակ էին մնում տաճկաց պտղաւէտ դաշտերը: Սկզբում օսմանցիք կարծում էին, թէ ժողովրդին խելքից հանողը ռուսաց մեծամեծներն են և սորանցից կաշառուած Կարապետ եպիսկոպոսը: Բաբերդցի մահտեսի Գէորգ աղա հարուստ վաճառականը մի քանի երևելի անձանց հետ այդ միջոցում Կ.Պօլսից գալով, սուլթան Մահմուդից հրովարտակ բերեց յատկապէս հայերի համար, համոզելով սոցա, որ չգաղթեն և շատ բարիքներ խոստանալով ապագայում: Երբ այդ չօգնեց, Պօլսոյ հայոց պատրիարքարանը, սուլթանի հրամանաւ, ուղարկեց Արզրում Բարդուղիմէոս եպիսկոպոսին, որ հասկացնէ ժողովուրդին, թէ որքան վնասակար և ազգակործան քայլ են անում նոքա՝ փոխելով իւրեանց ներկայ կացութիւնը անյայտ ապագայի հետ: Կամենալով ապացուցանել, թէ հայք գաղթում են ոչ թէ ռուսաց դրդելով, այլ իւրեանց յօժար կամքով, Արզրում մնացող գեներալ Պանկրատիէվը հրաւիրեց Բարդուղիմէոս եպիսկոպոսին, որ ուղեկցէ իւրեան մինչև Բասէն և եթէ կարող է համոզէ գնացող ժողովուրդին վերադառնալ իւր տեղը: ...եպիսկոպոսը գրեթէ ամեն հայերից ստանում էր հետևեալ նշանաւոր պատասխանը – «Եթէ Քրիստոս ինքը իջնէ երկնից համոզելու մեզ մնալ օսմանցոց ձեռքում, նորա խորհուրդին էլ չենք լսիլ»: Մօտ եօթը հազար քրիստոնեայ չուեց Արզրումից և սորա շրջակայից ռուսաց սահմանը»[178]:

Գաղթելու խելացնոր մտքին տրամաբանական բացատրություն չգտնելով՝ ժամանակագիր Իսահակ Սահրադյանը նշել է. «...ազգք Հայոց բնակեալք ի Կարին և ի շրջակայս նորա, ի Ղարս և ի շրջակայս նորա գաղթեցան ի կողմն ռուսաց. *ինձ թուի անհեւոյթ կոչմամբն Աստուծոյ եղև թէ այս չուել* (ընդգծումը՝ մերն է), որք և կալան զտեղի բնակութեան, ոմանք և մանաւանդ բազում Կարնեցի յԱխալցխա և ի յԱխալքալաք. և ոմանք ի յանկոյս կոչեցեալ Շիրակ որոյ գլուխ է Գիւմրի որ այժմ է մեծ և ամրապարիսպ բերդ և քաղաք այն է Ալեքսանդրապօլ և ոմանք ի Փէմբէկ և յայլ սահմանս ռուսաց բնակեալ ի խաղաղութեան»[179]:

177 **Միրախորեան Մ.**, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, մասն Գ, Կ.Պօլիս, 1885, էջ 140:

178 **Երիցեանց Աղ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 437-439:

179 ԴՀՊ, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 450-451:

Մեծ գաղթի նախապատրաստության ընթացքում Կարապետ եպիսկոպոսը ոչ թե հավաքում, այլ, ըստ էության, թալանում էր Կարնո վանքերն ու եկեղեցիները՝ չգաղթող հայերին ոչինչ չթողնելով. «...հրեշային ոգւով կարծես, թալլած է այս վանքին (իմա՛ Կարինի Հնձուց կամ Կարմիր վանք) տաճարն ու գրադարանը, ձեռագիր մագաղաթէ հարստութիւններն, ոսկի եւ արծաթ սրբազան խաչ ու անօթ, վանքին գանձարանը եւ նոյն իսկ եկեղեցւոյ զանգակն ի միասին ժողովրդեան հետ տանելով»[180]:

**Գաղթը մերժող հայրենիքին կառչած ուժերը.** հայտնի է, որ գաղթի ընդհանրական դարձած տրամադրության պայմաններում էլ եղել են առանձին անհատներ, որոնք ըմբռնել են գաղթի անխուսափելի կորստաբեր էությունը և արել են հնարավորը արհավիրքի առաջն առնելու համար: Այդպիսիններից էր Ագարակ գյուղի գյուղապետը. «Կարնոյ ընդհանուր գաղթականութեան ժամանակը միմիայն այս Ագարակ գիւղի հայերն իրենց տեղէն չշարժեցան, ըստ որում Քահեա-Թորո (Թորոս) Խաչիկեանն կարող կը լինի տեղւոյ Հայերն հանդարտեցնել և միանգամայն դիմադրել Կարապետ Եպիսկոպոսի կրից բռնութեան, որով գաւառիս համայն հայերն կամէր տանիլ ի Ռուսաստան. յիշեալ եպիսկոպոսն երբ զԹորոն կրկին համոզմամբ և մասամբ մը սպառնալեօք կուզէ իւր նպատակին բերել, այս անգամին մեր ազնիւ Թորոն բարկութենէն Բաբելոնեան հուր կտրած ոտքերն գետնին կը զարնէ, նման ճշմարտախօս Գալիլէին երկրագնդիս դառնալու վկայութեանն, և կը գոչէ ասելով «մենք աւելի նախապատիւ կը համարիմք մեռնիլ Օսմանցու հողին վերայ և չթողուլ զՀայրենիս քան թէ երթալ օտարին հպատակ լինելով՝ չունենալ տուն և տեղիք»[181]:

180 **Շեհրեր**, Հնձուց կամ Կարմիր վանք, «Բիւրակն», 1899, № 28, էջ 445:

181 **Միրախորեան Մ.**, նշվ. աշխ., Մասն Գ, էջ 159-160: Նույնքան ուշագրավ է Կարապետ եպիսկոպոսի՝ գաղթելու կոչին գյուղապետ Թորոսի նշյալ պատասխանի արձագանքը, որ մինչև սուլթան էր հասել. «Այս վեհանձն պատասխանն համբաւ կը հանէ գաւառիս մէջ՝ մինչև որ կը հասնի ճէնէթ մէքեան Սուլթան Մահմուտի ականջը և անմիջապէս հրաման կընէ Կարնոյ նոյն ատենուան կուսակալ հռչակաւոր Իսէթ փաշային, որ պատուէ զհայ Թորոն, որոյ հաւատարմութեան հոգին զիւր համբաւն, որպէս ասացի, մինչև կայսեր ականջը հասուցած էր: Կուսակալն կը կոչէ առ ինքն դանի (հայ Թորոն) և շատ մը խալէթներ (պարգև) այս ազնիւ հայուն տալէն ետքը անոր կը հագցունէ կարմիր և գեղեցիկ ծերանի մը և կը վերադարձնէ յիւր գիւղ ու մունետիկ հանելով ամեն կողմերը կը պատուիրէ թէ «ով որ Ագարակ գիւղի բնակչաց, որք իրենց հայրենի օճախ սիրելով չեն գաղթած, վնաս մը հասցնելու լինի չարաչար պիտի պատժուի» այսպէս ահա մեր հայրենասէր Թորոն առօք և փառօք ի գիւղն կը վերադառնայ և դրացի մահմետականացմէ ամեն տեսակ արգանք ընդունելոյ բաղդին կը հանդիպի և ահաւասիկ իր վերջի կտակն, զոր ըրած է մեռած պահուն «իմ մահուանէն սօնրա եթէ աշխարհիս գործերն դարձեալ պատերազմ կը բերեն մեր այս երկրին վերայ, դուք սիրեցէք հոգւով և մարմնով զօսմանցին, սիրեցէք ձեր Հայրենիք, որոյ օճախ քակողին դէմն իմ չորացեալ ոսկրոտիք պիտի բողոքեն՝ այս աշխարհի մէջ սուլթանին առջև, և ի հանդերձելումն արդարոյն՝ և թող նա (գաղթող) երևի թէ մեր տէրութեան, թէ մեր ազգին և թէ մեր այս Ագարակին, ուր ծնած և սնած եմք գիւղովին»:

**Հայրենադավ գաղթի ընթացքը.** համաձայն Ադրիանապոլսի դաշնագրի 13-րդ հոդվածի՝ «...արգելւում էր, որ Թիւրքիան կամ Ռուսաստանը հալածեն և պատժեն առհասարակ իրանց այն հպատակներին, որոնք պատերազմի ժամանակ միացել են թշնամուն և վնասներ պատճառել իրանց պետութեան: Այդպիսիններին թոյլատրւում էր 18 ամսուայ ընթացքում իրանց ընտանիքներով ու շարժական կայքով փոխադրուել միւս պետութեան սահմանները[182]: Գաղթը սկսվում է 1829 թ. հոկտեմբերի 14-ից և տևում է մինչև 1830 թ. հունիսի 5-ը[183]:

Մեծ գաղթի պատրաստության, դժվարին և կորստաբեր ընթացքի, ռուսական տերության տարբեր գավառներում պատահական ընտրությամբ բաշխվելու և ուշագրավ այլ դրվագների մասին հայ կաթողիկե հոգևորական Եփրեմ Սեթյանը (Եփրեմ Սեթ)[184] նշել է. «Զմերոյ ժողովրդեան ընտրութիւն զԱխլձխա այլեւայլ թղթովք գրեցի առ հատուածն արզրումցի ուղղափառաց իբրեւ յիսուն տունք եւ այն հարստագոյնք, որոց յանցելում աշնան ի լինել հաշտութեան եւ ի դառնալ Բասքեւիչին ի ձմեռոց անցեալ էր ի Լոռի, գրեցի առ նոսա առանձնական եւ միաբանական թուղթս յղեալ արքունի թղթատարաւ. ամենայնն ասացին կորեան ու չհասին ուր ուղղեալ էին...: Նոքա ոչ հաճեցան եւ մեղադիր լինէին մեզ թղթովք, թէ չյազեցա՞յք տակաւին ի չարափառ կողմանէ, եւ զի երկիրն այն նշաւակ է արշաւանաց թշնամեաց, եւ զի աւերակ է, քանզի զառաջինն քայքայեցաւ յառնուլ ռուսաց զքաղաքն հրձիգութեամբ եւ արեան ճապաղեօք, երկրորդ յարշաւանս աճարացւոյն, եւ երրորդ ի ճարակել անդ ժանտախտին, յորում հրով դատէր ռուսն զտունս եւ զկարասիս, ուր բունեալ էր ախտն, այսպէս եւ այլովք պատճառօք մեղադիր լինէին մեզ: Յաղագս այսորիկ եկեալ նոքա ի զմին տեղեաց ի Լոռի եւ ի Շիրակ եւ ի Փամպակ ընտրեցին զՂարաքիլիսէ աւան աւերակ, որ ի Փամպակ, զոր եւ կալեալ էր դարսցոց, եւ գնացեալ ի Թիֆլիս չորք ի նոցանէ յանուն ամէն կարնեցի ուղղափառաց խնդրէի ի Ստռէքալօֆ կուսակալէ զՂարաքիլիսէ Փամպակու: Պատասխանի առնէ նոցա

182 **Լէօ**, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 40:

183 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 13:

184 Մխիթարյան միաբանության անդամ Եփրեմ վարդապետ Սեթյանը (Սեթ) ծնվել է 1791 թ. սեպտեմբերի 21-ին Կ.Պոլսում: 1814 թ. քահանա է ձեռնադրվել Սբ. Ղազար կղզում, 1829 թ. հայ կաթողիկեներին հովվելու նպատակով Վենետիկից ուղևորվել է Ղրիմ, որտեղ նույն միաբանության անդամ Մինաս վարդապետ Բժշկյանին հանդիպելուց հետո նոյեմբերի 25-ին «Չոքաւ հ[այր] Եփրէմ ընդ հ[այր] Եսայեայ յԱխըլցըխա»: Գլխավորել է Բարձր Հայքի հայ կաթողիկեների գաղթը: Վախճանվել է 1838 թ. մայիսի 3-ին Ախալցխայում և ամփոփվել իր իսկ կառուցած եկեղեցում: Երկրորդ աշխարհամարտի տարիներին եկեղեցին քանդելուց հետո Եփրեմ Սեթյանի աճյունը վերահուղարկավորվել է Սուֆլիսի եկեղեցու գավթում (**Կարապետյան Մ.**, Եփրեմ Սեթը արևմտահայության 1829-1830 թթ. գաղթի մասին, «ՊԲՀ», 1997, № 2, էջ 285): Տե՛ս նաև **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 87:

Սղռէքալօֆ կուսակալք (զի Բասքեւիչ գնացեալ էր ի Բեղռօպուրկ) զՂարաքիլիսէ Փամպակաւ: Պատասխանի առնէ նոցա Սղռէքալօֆ՝ թէ կարնեցւոց տուաւ Ախլձխա, իսկ դուք զի վաճառական էք եւ արհեստագէտք, զի՞ խնդրէք յաւերակս Փամբակու: Նոքա իբրեւ ի խնդրոյ իւրեանց չկասեցան, շնորհէր նոցա իշխանն զխնդրելին: Այլ առ նմին տեսեալ նոցա զի չմարթացան արքունի ուժով զկարնե[ցիս] յիւրեանս կորզել, եւ զի ինքեանք սակաւոր մնան ի մէջ բազմախուռն կարսեցւոց ժանտաբարոյից, գրեն թուղթ միաբանական առ Արզռումցիս եւ առ իս, յորդորելով չգնալ յԱխլձխա, այլ փոխիլ առ նոսա ի Փամպակ: Տուաք միաբանութեամբ պատասխանի՝ թէ անհնարին է փոփոխել իրան յետ ընտրութեանն եղելոյ բազմապատիկ քննութեամբք, եւ խոստմանն եղելոյ առ պետութիւնն, եւ արձանագրութեանն յարքունի դիւանին: Իբրեւ զյոյս հատին նոքա ի կարնեցւոց զաւ[թ]եալ որոշեցան դէմ եդեալ գնալ ի Փամպակ տունք յիսուն եւ երկու, որոց գլխաւորքն Չլենց Կարապետ, Ստեփանեան Յարութիւն, յորս յաւելաւ եւ Ղարա Կեաւուրեան Գրիգոր՝ նորոգ դարձ արարեալ ի Պօլսոյ ի վերջին աւուրս մեկնելոյ ռուսաց յԱրզռումայ, վասնզի խնամութիւն էր նորա ընդ Ստեփանեանին: Եղեն եւ ոմանք, որ ի նոցանէ անցին յԱխլձխա, որոց առաջինն Սայօղլու Գրիգոր: Յետ այսր ամենայնի կանուխ պատրաստութեանց զհասարակածաւ մայիս ամսեանն սկիզբն եղեւ չուոյ ժողովրդեան բազում աշխատութեամբ: Քանզի զայս ամ ըստ ոչ սովորութեան յապաղեաց անձրեւն ու ձիւն, որպէս ի դաշտս չգտանել ճարակ անասնոց, եւ տիղմն ի ձեանց եւ յանձրեւաց դեռ ունէր զամենայն ճանապարհս: Սակայն նայեցեալ ընդ բազմութիւն գաղթական ժողովրդեան բազմագոյն սայլից պէտք էին խաղաղուցանել զնոսա ի դէմ եդեալ, եւ պետութեան չէր իշխելի բուռն առնել շրջակայ գեղջէից հայոց փութալ յայս աշխատութիւն, զի եւ նոքա ուղւոյ լինել հանդերձեալ էին, թէպէտեւ յօժարելոցս չկային արգելք, որք եւ օժանդակեցին ոչ սակաւ յօգնուտ իւրեանց: Յաղագս որոյ ճարտարամտեաց Բանգրատիեւ կուսակալ Կարնոյ եւ հրամանատար Հայաստանեայց, պատուէր յղեաց ի Կարս, զի բովանդակ գաւառին որչափ եւ սայլք իցեն հայոց եւ թուրքաց առհասարակ շարժեցին յԱրզռում, որով ի բռնակրութիւն սակ արկ Առաջնորդն Կարնոյ Կարապետ վ[ա]րդ[ապետ] ութսուն դրուշ ի դանթար, եւ երեք ոգիք մի դանթար, թէպէտեւ յետոյ նուազեաց զինն: Ել եւ յարքունուստ ողորմութիւն աղքատաց քսան եւ հինգ մանէթ առ մէն մի տուն քաղաքացեաց եւ գեղջէից բաշխեալ յիմ ձեռն, զերրորդ մասն տալով յսկիզբն ճանապարհին եւ զմնացեալն ի կատարածին (երեք մանէթ մի պաճախլի ոսկի է): Այսպէս եւ ալիւր ըստ պիտոյից ճանապարհին: Սակայն եւ ի ժողովրդենէն մերմէ հանգանակեցաք, որոց արտաքոյ մնային ցուցակին տուելոյ յարքունիս: Յանգէտս իմն մեծապէս վրիպեաց Առաջնորդն, զի համարելով թէ սայլքն պատրաստեալք, որ բաւեն տանել զժողովուրդն՝ համայնգամայն ետ հրաման հանել, զի սայլորդքն վարձուորք տարեալ ի Կարս թողցեն զժողովուրդն եւ դարձին ի բառնալ զմնացեալսն: Հասանեն սայլք ի Կարս, եւ զի յետուստ ոչ մնայր ժողովուրդ առ ի գալ, ցրուին սայլքն իւրաքանչիւր տեղիս եւ ժողովուրդն մնայր ի գետնի. որով ընդ ամիս յերկարեաց այս ճանապարհորդութիւն, եւ ի ծանր աղքատութիւն անկաւ ժողովուրդն: Այլ վասն այս ամենայն պատրաստութեանց մինչ կատարումն ելանելոյ ժողովրդեան, եւ ցվերջին օրն դատարկելոյ քաղաքին պար[տք] ի վերայ ինձ աւուր ընթանալ ի դուռն Բանգրադիէւին, որ եւ միշտ քաղցրութեամբ ընդունէր զխնդրուածս իմ, եւ զկարեւորսն ուսուցանէր եւ պատուիրէր մեզ: Այսպէս էր ինձ միշտ աշխատ առնել եւ զերկու ի գլխաւոր գործավարաց նորա. մին էր Խաչատուր պէկ Շահնազարեան՝ նախկին թարգմանն, եւ միսն եւս Պէճան Կօռկանով երիտասարդ հայազուն թիֆլիզցի: Յայս ամենայն նախաշաւիղ արարս դիպողագոյն դատեալ եղեւ համաձայնութեամբ ուղղափառաց եւ այլափառաց յղել յԱխլձխա գործակալս ոմանս ի դիմաց ժողովրդեան պատրաստել գնացողացն տեղի բնակութեան: Եւ առաքեցան երկու ի հայոց եւ երկու ի մէնջ, մին յատուկ Ախլձխացի Յոհաննճան անուն, որ ի բազմաց հետէ վաճառական էր եւ բնակէր յԱրզռում, եւ երկրորդն քեռորդի նորա Գրիգոր Էփրիկեան վաւերական թղթովք զօրավարին մերոյ առ հրամանատար տեղւոյն եւ ընծայական թղթովք ի մէնջ առ ժողովուրդ քաղաքին: Ուղւոյ եղեալ զնոս բուռն հարաք ուղւոյ դնել եւ զժողովուրդն:

Իսկ որ ի Կիւմրի նստի Առաջնորդ Շիրակայ Մկրտիչ լոկ վարդապետ, ձեւանայ ասել, թէ նա նոր ժողովրդեան խնամ տարցէ եւ ինքն հնոյն. այլ որպէս թի հնարի խարդաւանել զնա եւ յինքն կորզել զանչափ ժողովուրդ: Ըստ դմին օրինակի շինականք, որ ի բդեշխութենէ Կարսայ անցին այսր սփռեցան կէսք խմբովին եւ կէսք ցիրուցան ի մօտակայ գիւղօրէս մինչեւ Ապարան: Այսպէս եւ ոմանք ի գիւղից Կարնոյ, զի այլքն զետեղեցան շուրջ Ախլձխա քաղաքաւ, եւ յԱզղոր եւ ի Խըրդզ եւ յԱխալքէլէք, եւ որ այլ եւս: Եղեն եւ ոմանք եւ լինիցին, որ նեղեալ յառժամանակեայ կարօտութենէ հացի յետս անդր դարձան յերկիր իւրեանց յառաջին, ընդունելութիւն մեծ գտեալ յօսմանցոյն: Սակայն ընդհանուր տեսեալ Կարս ոչ այնչափ հաւատարիմ գտաւ ի խոստմանն որչափ Կարին եւ Պայազիտ:

Դառնամ այժմ յափունս Ախուրենայ ի բանակտեղ կարնեցւոց, որք յամեցին մնացին անդր իբրեւ երկու ամիսս երկու, զի ոչ գտանէին սայլք յուղարկել զնոսա վասն վերահաս արդիւնաբեր աւուրցն մշակաց, որք ի քակտել եւ ի հերկել կային զանդաստանս իւրեանց, եւ ոչ էր իշխան պետութիւնն բուռն

առնել հաւաքել զսայլս նոցա. զի առ փոքր վնասու ժողովրդեան եկելոյ, մեծագոյն վնաս ի վերայ հասանէր, եթէ պահակ ունելով զսայլսն ոտնահար լինէին հնձոց, ուստի զեան էր համօրէն գաւառացն: Վասն որոյ մխիթարական բանիւք արգահատէին ոստիկանք եւ իշխանք, ժոյժ ունելով վայր մի մինչեւ հասցեն սայլք ի Վրաստանէ, ուր կանուխ վճարին հունձք, թէպէտեւ ի նոցանէ չեղեւ ինչ շահ, զի յետ հնձոցն խմբովին իջանէին ի Կողբ յաղահատս: Վասն որոյ որք կարողք էին գտին եւ վարձեցին սայլս եւ գնացին. անկարողք մնացին. ի մերոց հարիւր յիսուն տունք, եւ յայլափառաց տասնապատիկ քան զմերն, միահամուռ իբրեւ հազար ութհարիւր տունք, տարածեալ ընդ բազմափեղկ կարկատուն վրանօք առ հոսանօք ջրոյն, արեւակէզ ի տօթի եւ ջրողող յանձրեւսն...:

Յայսմ ժամանակի գրէ ինձ հ[այր] Նիկողայոս յԱխլձխայէ ի դիմաց բնիկ եւ նորահաւաք ժողովրդեան քաղաքին, զի ի կարգի եղեալ զգործ զուոյն անյապաղ փութացայց հասանել առ նոսա վասն լաւ եւս խորհել եղեալ զգործ հասարակաց: Քանզի որովհետեւ առաջին խորհուրդ իմ էր անցանել ի Շիրակայ Լոռի եւ ի Փամբակ, տեսանել զմերսն, եւ խորհել վասն որոց բուռն հարին, ուր չկարէի գնալ վասն միջանկեալ քառանդինին զաւուրս չորեքտասան մինչեւ գլխաւորեալ զիրս ժողովրդեան. եւ զի անտի խնդրէի անցանել ի Թիֆլիս եւ հանդիպել կուսակալին, եւ ապա գնալ յԱխլձխա: Այժմ ստիպաւ կոչեն զիս անդր, յառաջ քան զամենայն տեղիս:

Յաւուրս յայսոսիկ յօգոստոսի 2 եհաս նոր վերակացու գաղթական ժողովրդեան մայօռ Անօսով, ում յանձն էր խնամ ունել եկաց յամենայն սահմանաց Օսմանեանց մինչեւ հասցնեն ուր երթալոցն: Որոյ յայց ելեալ ի բանակն պատուէր ետ ամենեցուն ընտրել ազատօրէն այր իւրաքանչիւր ուր եւ գրեցան ի համար Փամբակու. սակայն ոմանք եւ ի մերոց, եւ առ սակաւ սակաւ զորս սայլիւք եւ զորս եզամբք եւ գրաստուք եղեւ հասուցանել ի տեղի իւրեանց, եւ զյոլովս ցրուել ի մօտակայ գիւղօրէս մինչեւ տուն մի նորոգեսցի Ախլձխա: Եւ զի ի մօտել աւուրց ցրտութեան մի մնասցեն բացօթեայ: Եւ իմ կատարեալ ի Շիրակ զտօն Իսկուհւոյն անցի փութապէս յԱխլձխա, զորոյ զհանգամանսն լիագոյնս գրեցից ի դէպ ժամու:

Զուգաւոր համարիմ գրելոցս յիշեցուցանել եւ վասն Սերոբէի վ[ա]րդ[ապետի], որ երբեմն դպրոցական էր եւ այժմ վարդապետ Հայոց եւ արքունի խորհրդական ի դրան Բասքեւիչին. ծանօթ անգղիացի եւ գաղիացի եւ ռուս բարբառոյ, թող եւ զիտալերէն եւ զայլս: Եւ ի տեղափոխել ժողովրդեանս մին էր ի չորից խորհրդականաց հրամայելոց ի Կռաֆէն վասն այսր: Շնորհէ սմա Բասքեւիչ պատիւ եպիսկոպոսութեան, որոյ յամսեանն մայիսի գնացեալ յԷջմիածին ձեռնադրի եպիսկոպոս, եւ դառնայ ըստ հրամանին ընդունելոյ ելանել յայց եւ ի քննութիւն վիճակի նորեկ ժողովրդոց: Շրջեալ կարգաւ եհաս այժմ ի քաղաքս: Յետ ի գլուխ հանելոյ զգործ կարծեմ ակն ունի հասանել դատարկ Աթոռոյ Թիֆլիզու»[185]:

185 **Կարապետյան Մ.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1997, № 2, էջ 288-289, 292-294: Սույն տեղեկագիրը շրջանառել է նաև Գ. Աղանյանցը. «...1830 թուի մայիսի կէսին մեծ աշխատութեամբ սկսուեցաւ ժողովրդեան գաղթականութիւնը, վասն զի այդ տարին սովորութեան հակառակ անձրևն ու ձիւնը ուշացաւ, այնպէս որ դաշտում կերակուր չէր ճարւում անասունների համար. և ձիւնից ու անձրևից գոյացած ցեխը դեռ բոլոր ճանապարհների վրա բռնած ունէր: Սակայն գաղթող ժողովրդի բազմութեան նայելով բազմաթիւ սայլերի կարեւորութիւն կար նոցա առաջ շարժելու համար. և տէրութիւնը իրաւունք չունէր շրջակայ գիւղեր քրիստոնեաներին ստիպել այդ պակասը լրացնելու, մանաւանդ որ նոքա էլ ճանապարհ ընկելու համար էին պատրաստուած, թէպէտ ցանկացողներին արգելող չկար օգնելու, որոնք բաւական նպաստեցին գաղթականների տեղափոխութեան: Այդ պատճառով Բանգրատևը պատուէր ուղարկեց Ղարս, որ ամբողջ գաւառում ինչքան հայերի թէ թուրքերի սայլեր կան՝ բոլորը Արզրում քշեն, որոնց բեռնակրութեան համար Կարապետ արքեպիսկոպոսը սակարկեց դանթարին 80 ղռուշ, և երեք մարդ մի ղանթար, թէպէտ յետոյ գինը պակասեց: Տէրութիւնը նս իւր կողմից նպաստ բաժանեց աղքատներին, իւրաքանչիւր տանը քսանուհինգ մանէթ թէ քաղաքացիներին և թէ գիւղացիներին, որից երրորդ մասը տուաւ ճանապարհորդութեան սկզբին, և մնացեալը խոստացաւ տալ վերջը. նմանապէս ճանապարհին իւրաքանչիւր բանակատեղը հասնելուն պէս՝ ալիւր և ցորեն բաշխուեցաւ, սակայն կաթոլիկները փող ժողովեցին իրանց մէջ և բաժանեցին այն աղքատներին, որոնք մնացել էին տէրութեան ցուցակից դուրս...: Այս ամենի հետ լուսաւորչական և կաթոլիկ հայերը համաձայնութեամբ յարմար համարեցին ժողովրդի կողմից մի քանի գործակալներ ուղարկել Ախալցխա, որ գնացողների համար բնակութեան տեղ պատրաստեն քաղաքում և գիւղերում. և ուղարկուեցան հայերից՝ Եազճի օղլի Պօղոս և մահտեսի Կարապետը, իսկ կաթոլիկներից՝ Լալօղլու Յօհանջանը և նորա քեռորդի Էփրիկեան Գրիգորը, զօրավարի վաւերական թղթով այնտեղի հրամանատարի անուանը և մի ընծայական թղթով կաթոլիկների կողմից քաղաքի ժողովրդի անունով...: Մայիսի 15-ին ժողովուրդը սկսաւ հեռանալ իւր սեպհականութիւնից՝ և մինչև յունիսի հինգը դատարկուեցաւ ամբողջ Կարինը, Կարնոյ շրջակայ դաշտը, Դերճանը, Թորթումը, Վերին և Ներքին Բասենը, Դէքմանը, Խնուսը, և խմբովին ազատաղէմ և համարձակ գնում էին իրանց ճանապարհը» (**Աղանեանց Գիւտ**, նշվ. հոդվ., «Արձագանք» 1891, № 11, էջ 167): Հայտնի է նաև, որ «...այն գիւղացիները, որոնք Կարսի նահանգից անցան այս կողմը, տարածուեցան կէսը խումբ խումբ և կէսը ցրուեցան մօտակայ գիւղերը մինչև Ապարան. այսպէս նաև Կարնոյ գիւղերից ոմանք, իսկ ուրիշները տեղաւորուեցան Ախալցխայի գաւառներում՝ Ազղոր, Խրդզ, Ախըլքալակ և ուրիշ տեղեր: Ոմանք էլ հացի առժամանակեայ կարօտութիւնից նեղանալով յետ դարձան իրանց երկիրը՝ օսմանցիներից լաւ ընդունելութիւն գտնելով, սակայն Կարսը այնքան հաւատարիմ չգտնուեցաւ իւր խոստման մէջ, ինչպէս Կարինն ու Պայազիտը...: Հայերից մօտ հազար վեց հարիւր հիսուն տուն, իսկ կաթոլիկներից հարիւր հիսուն տուն, ընդամենը մօտ հազար ութն հարիւր տուն կարկատած վրանների տակ տարածուեցան ջրի հոսանքի ընդարձակութեամբ, տօթից արևակէզ և անձրևից ողողուած: Թէպէտ տէրութիւնը չէր դադարում հաց մատակարարել նոցա, աժան էր նմանապէս և ուտելիքը, սակայն գանգատներն ու բողոքները խիստ մեծացան...: Պասկևիչ սպարապետը ...ուղարկեց նոր գաղթականների կառավարութեան համար սահմանած խորհրդականնե-

Դեպքերի ականատես Ղազարոս վարժապետ Վահանյանը գրել է. «Մինչ ռուսաց զօրքը Կարնոյ քաղքէն մեկնեցաւ, զօրաց բանակին հետ թէ քաղքէս, թէ շրջակայ գաւառներէն եւ գիւղերէն 96.000 մարդ կամ 10.000 տուն գաղթեցին դեպի ռուսաց հողը: Բոլոր ստացուածքնին շարժական կամ անշարժ կալուածներ, այսինքն՝ տունք, խանութք, վաճառանոցք, արտեր՝ չայիրներ, խաներ, տան կահկարասիք ընդ ամէն աչքի չերեւցած արժան կէս գնով, կէս գնէն ալ վար մաս մը ծախեցին, մաս մ'ալ երեսի վրայ ձգեցին գնացին, որոնց ապացոյց մէկ սինի փախլավայի տուն ծախուեցաւ Ռուսիոյ կողմէն Ասլան պէյի ձեռքով, ինչու որ առնողներ ալ շատ քիչ կը գտնուէր...: Կարնոյ գաղթականք բաւական ալ նեղութիւն կը քաշեն ճամբան, երկու ամիսէն աւելի Կարս, Արփայ չայ ըսուած գետի եզերքը խումբ խումբ վրանաբնակ կը կենան. խմբակներու հրամանատար մը ափիցար մը դրուած էր, որ չէր թողուր ոչ յառաջ երթալ եւ ոչ յետ դառնալ. ասոր վրայ ժողովուրդը լի զայրացմամբ, մեծ յուզմունք հանելով նորա դէմ՝ մաքառեցան...»[186]:

րից մէկին՝ այն է Սերովբէ արքեպիսկոպոսին, այցելութիւն նորեկ ժողովրդին, անձամբ զննելու նոցա բոլոր պիտոյքները և իրան տեղեկութիւն տալու: Սերովբէն սկսաւ շրջել բոլոր ժողովրդի մէջ, սկսած Փամբակի կողմերից, ուր կարսեցիքն էին բնակւում, մինչև Գիւմրի, և զննելով ժողովրդի մնացած մասն էլ, եկաւ հասաւ Ախալցխա օգոստոսի 22-ին. երբ այնտեղ հասաւ՝ տեսաւ, որ երկրի կառավարութիւնը խառնափնդոր և կնճռոտած էր՝ հացի կարօտութեան, տների սակաւութեան, և ամենից աւելի հրամանատարի և նորեկ ժողովրդի մէջ եղած անհամաձայնութեան պատճառով նոր քաղաքի շինութեան առթիւ: Վասնզի Տրեշեռ հրամանատարը մնացել էր անշարժ և Պասկևիչի հրամանները չէր կատարում, հին քաղաքը թողնելու և նորի շինութեան ձեռնարկելու վերաբերութեամբ, ոչ ոքին չէր թողնում ոչ տուն շինել հին քաղաքում և ոչ կրպակ, որի պատճառով ժողովուրդը նեղութեան մէջ հեծում էր. և չէին իմանում թէ ինչ անեն: Սերովբէ արքեպիսկոպոսը իրան տուած իշխանութեամբ հոգ տարաւ, հացի համար զանազան տեղեր մարդիկ ուղարկեց և բաւական ցորեն հաւաքեց ժողովրդի համար, իսկ կարօտեալներին արքունի ցորեն բաժանեց, այսպէս նաև անհրաժեշտ բնակարանների վերաբերեալ կարևոր բարեկարգութիւններ արեց և մի առ ժամանակ խեղճերը շունչ առան: Իսկ քաղաքի շինութեան մասին շատ մտածելուց և խորհրդակցելուց յետոյ՝ նկատելով, որ ժողովուրդը դեռ չէր կարող նոր քաղաքի շինութեան ձեռնարկել, մինչև որ կանցնէին այն ծանր վնասները, որ մինչև այդ ժամանակ տուժեցին, և որովհետև սպարապետի պատուէրը ստիպողական չէր, հրամայեց կրպակներ կառուցանել, և ահա կարճ ժամանակի մէջ հարիւրաւոր կրպակներ շինուեցան, և ժողովրդի ձեռագործը փոքր առ փոքր սկսեց արդիւնք բերել: Այս բոլորի մասին Սերովբէն գրեց Պասկևիչին և Թիֆլիզ գտնուած կառավարութեան ատենին: Այդ պատճառով քաղաքական կառավարիչ Կռուզենցկին ինքը եկաւ քննելու գաղթականութեան դրութիւնը, հոկտեմբերի 16-ին եկաւ Ախալցխա քաղաքը, տեսաւ, հարց ու փորձ արաւ, քննեց, ամեն բան իմացաւ և ընդունեց բոլոր ժողովրդի թէ եկաւորների և թէ բնիկների խնդիրները: Այնուհետև հոկտեմբերի 23-ին հանդէս կազմեց նոր քաղաքի հիմնարկութեան, որոց հետ նաև հայոց, կաթոլիկաց և ռուսաց եկեղեցիների հիմնարկութեանց, որ դիպող ժամանակին կառուցուին...» (**Աղանեանց Գիւտ**, նշվ. հոդվ., «Արձագանք» 1891, № 12, էջ 183-184):

186 **Քօսեան Յ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 96:

Որոշ տվյալների համաձայն՝ սեփական հոտին արմատախիլ արած և դեպի ռուսական տերություն ձգտած Կարապետ եպիսկոպոսն ի սկզբանե նույնիսկ չգիտեր, թե ինքն ու իր բազմահազար հոտը որտեղ պետք է հանգրվան գտնի. «...իշխանութիւնը Ախալցխայ գաղթուածների համար նշանակած էր Թիֆլիզու այժմեան «Նեմեցկայա Կօլօնիա» կոչուած արուարձանը, բայց ժողովուրդը զանազան պատճառներով չէ կամեցել այնտեղը և իր բնակութիւնը հաստատել է Ախալցխայի միջին Տափարակ գետի եզերքում, ուր 12-15 հայ բնիկ գերդաստան կայ եղել տաճկաց ժամանակից»[187]:

Այն, որ Կարապետ եպիսկոպոսն ինքը վերաբնակության հարցում նախապատվությունը տվել էր Ախալցխային և շրջակա գյուղերին, այլ ոչ տփղիսամերձ գաղութին, երևում է Կարին քաղաքի և նահանգի հայության անունից 29 պատվավոր քաղաքացիների ստորագրությամբ 1829 թ. դեկտեմբերի 15-ին ֆելդմարշալ Պասկևիչին հղած նրա իսկ մի գրությունից[188]:

**Գաղթականների նպաստավորում.** անշուշտ, առկա չափազանց մեծ կարիքի համեմատ տերության կամ մասնավոր ընկերությունների և կազմակերպությունների ցույց տրված օժանդակությունը միանգամայն անբավարար էր, սակայն փոքր օգնությունն էլ արժանի է հիշատակման, ընդ որում, գաղթող յուրաքանչյուր ընտանիքին նախատեսվել էր նպաստավորել 25 արծաթադրամի չափով[189]:

Ախալցխայում բնակություն հաստատած ընտանիքներին էլ Հայոց մարզային վարչությունը հատկացնում է բամբակ 1829 թ. համար[190]:

Գաղթից երկու տարի անց դեռևս ողջ մնացած ընտանիքներին, ցորենից և բամբակից զատ, բաժանվում է բնավ անբավարար մի որոշ գումար բնակարաններ կառուցելու նպատակով. «Ռուսաց կայսեր ըրած բարիքն ու ողորմածութիւնը չուրացուիր, որ գթալով գաղթական ժողովրդոց՝ առատօրէն ցորեն, բամպակ ցրուեց, արհեստաւորաց կամ հասարակութեան պարապ չմնալու համար աշխատին վաստակ ըրեն. եւ ըստ մարդաթուի իւրաքանչիւրին 50 կամ 100 մանէթ ցրուեց, որպէսզի նոր շինուելիք Պլանը տուն շինեն...»[191]:

**Հայրենադավ գաղթի հետևանքները.** հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ գաղթերը՝ բռնի թե կամավոր, առանց բացառության, կործանյան են մատնել գաղթողների հիմնական մասին: Կարապետ եպիսկոպոսի գլխավորած գաղթականությունն էլ չէր կարող զերծ մնալ գաղթողին հետապնդող օրհասից:

187 **Գեղամեանց Յ.**, Նամակ Ախալցխայից, «Մշակ», 1872, № 23, էջ 3:
188 Մատենադարան, թղթ. 257, մաս 3, վավ. 41:
189 **Գեղամեանց Ե.**, նշվ. հոդվ., «Հովիւ», 1908, № 36, էջ 570:
190 **Тунян В.**, նշվ. հոդվ., էջ 19:
191 **Քօսեան Յ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 97:

Մարդկային ահռելի կորուստներն ու ողջ մնացողների մի նշանակալի մասի ցիրուցան լինելը ցավալիորեն անխուսափելի էին, որոնք հատկանշական դարձան նաև այս գաղթի համար: Գաղթականների սոսկալի վիճակի, անհաշիվ զոհերի, ծայրահեղ հուսահատության մեջ բարոյական անկման տարբեր դրսևորումների մասին հայտնի են ականատեսների կամ ժամանակակիցների բազմաթիվ վկայություններ: Ներքո ծանոթանանք դրանցից մի քանիսին:

Այսպես, ականատես Ղազարոս վարժապետը Ախալցխայում հաստատված հայ գաղթականության մասին նշել է. «Երբ Ախլցխայ կ'երթան, պատերազմէն վառուած փլած քաղաք, տուն չկայ, աւերակ, երկու ամիսի չափ եւս գետին եզերք խմբովին վրանաբնակ կը մնան. օդին՝ կլիմային չվարժուած, խորշակահար դիպուածով եւ արեւակէզ շատեր գերեզմանին եւ մահուան բաժին եղան. ջերմէ բռնուողներ անթիւ, Եանիդարայ ըսուած ցաւէն բռնուած յանկարծամահ, առաւօտ բռնուածը երեկոյին, երեկոյեան բռնուածը առաւօտ կը մեռնին, թողում ջուրը ընկող խեղդուողներ, Նիլիթ մէյտանի ըսուած գետին եզերքը, որոնք գաղթականութեան հետեւութիւնն եւ արդիւնքն է. ասոնցմէ զատ հասարակութեան շատ մեծ կորուստը եւ տնաւէրութիւնը. ի բաց առեալ շատերը հացակարօտ խեղճ ողորմելի եւ անպատմելի թշուառ վիճակի մէջ երերեալ տատանեալ, անպատմելի: Գաղթականութիւնը երկար տեւեց, արդէն կահք ու կարասիք բան չմնաց ծախեցինք...»[192]:

Հետևանքների մասին մեկ այլ հեղինակ՝ Ա. Բեստուժևը, 1832 թ. դեկտեմբերի 14-ին նշել է. «...Ոսկե սարեր խոստացան, և նրանք շարժվեցին... Եկան և չգտան հացի հատիկ, գլուխ դնելու տեղ, ճյուղ՝ կյանք պահպանելու համար: Ոչինչ չէր պատրաստվել: Նրանց տվեցին կորստաբեր կլիմա, անբերրի հող և դրա հետ աննշան դրամական օգնություն, այն էլ մի մասին: Նրանցից կեսը կոտորվեց, քառորդը ցրվեց, վերջին քառորդը իր թշվառ գոյությունն է քարշ տալիս օտարության մեջ...»[193]:

**Մեծ գաղթի հետագա անդրադարձները.** 1828-1829 թվականներին, երբ «Ռուսներ ... թէ՛ յորդորանքով եւ թէ՛ այլով ճանապարհաւ 15 հազար գերդաստան քրիստոնեայ հետերնին գաղթեցուցին թէ՛ այս քաղաքէն թէ՛ ի շրջակայ գիւղօրէից...: Ղազարոս վրժպ. Վահանեան՝ որ նոյնպէս տարիները ապրած էր եւ գաղթականաց հետ ընկեր եղած, սոյն տողերը կը գրէ. «Մինչ ռուսաց զօրքը Կարնոյ քաղաքէն մեկնեցաւ, զօրաց բանակին հետ թէ՛ քաղաքէն թէ՛ շրջակայ գաւառներէն եւ գիւղերէն 96.000 մարդ կամ տասը հազար տուն գաղթեցին դէպի ռուսաց հողը»[194]:

Մեծ գաղթից գրեթե 130 տարի անց Բարձր Հայքին բաժին հասած օրհասի առնչությամբ համառոտաբար նշվել է. «1829 յունիսի մէջ ռուս բանակը կը մտնէ Կարին, բայց մէկ քանի ամիս յետոյ կը պարպէ քաղաքը, ու զայն կը յանձնէ դարձեալ Օսմանեան կայսրութեան, համաձայն Ադրիանապոլսի՝ Կիւլ Հանէի դաշնագրի պայմաններուն...: Մէկ քանի ամիս միայն տեւող ռուսական գրաւման շրջանին, հայութիւնը ազատ կեանք կ'ունենայ: Իսկ պարպումը ծանր հիասթափութեան մը կ'ենթարկէ Կարնոյ եւ շրջանի հայութիւնը, որոնք զանգուածօրէն կը հետեւին ռուսական բանակին եւ կը գաղթեն Կովկաս, ազատուելու համար թուրք բռնակալութեան հալածանքներէն եւ վրէժխնդրութենէն: Մեծ չափանիշով տեղի ունեցած այս գաղթը շէն ու ծաղկեալ Կարինը կ'ենթարկէ նոր աւերի մը»[195]:

**Դիմումներ Պասկևիչին.** 1830 թ. օգոստոսի 21-ին Ախալցխայում հաստատված կարինցի հայերը դիմում են կոմս Պասկևիչին՝ ճանապարհին իրենց կրած դժվարությունների և նոր քաղաք հիմնադրելու մասին. «Մեք ազգովին քահանայիւք և ժողովրդովք ելաք ի Կարնոյ ի մայիս ամսոյ սկսեալ՝ ի Ղարս և ի Գիւմրի, օր անցուցանելով՝ յուլիսի Ա (1) առաք յԱխալցխայ գիւղական բազմութեամբ: Մեք յԱխալցխայ քաղաքն նստեալ նեղութեամբ ի վերայ միմեանց և զգիւղականս հանգոցանելով ի շրջակայ սորա ի գիւղօրեայ, բայց ի քաղաքացեաց, մերոց իբր հազար տուն մնացեալ են տակաւին ի դաշտն Գիւմրոյ:

Յորէ անտի մտանելոցն մերոյ ի քաղաքս, խօսէր մեզ պայծառ կամենդանտն տեղւոյս վասն շինման նոր քաղաքի, և մեք գովեցաք և գովեմք զբարեհաճութիւն զայդ, զի բարեվայելուչ է տեղին և զուարճալի, ուստի և զօգոստոս 3 մեծաւ հանդիսի և հոգևորականաց դասուք մեք և քրիստոնեայ եղբայրքն մեր, որք աստ կան, թափօրիւ գնացեալ ի տեղին տեառնագրեցաք և օրհնեցաք զհիմն նոր քաղաքին: Եւս և 15 օգոստոս յաւուր առման սոյն քաղաքիս կամենդանտն մեր մեծ հանդէս արար ի նոյն տեղին յառաւօտէ մինչև յերեկոյ...:

Բայց, սակայն, յայտնի է ձերդ գերազանցութեան, զի երեք և չորս ամիս է ժողովուրդ մեր արտաքոյ կան, սոցա ոչ փող մնաց և ոչ ստացուած և ոչ ու-

192 **Քօսեան Յ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 97:

193 **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 262:

194 **Քօսեան Յ.**, նշվ. աշխ. հ. Ա, էջ 29-30:

195 **Ղազար Չարըգ**, Յուշամատեան Բարձր Հայքի. Կարինապատում, Պէյրութ, 1957, էջ 45: Վերջին անդրադարձների թվում են. «1830-ին, երբ ռուսները Կարինը թողլով ետ կը քաշուին, 90,000 հայեր Կարինէն, Կարսէն և Պայազիտէն կ'անցնին ռուսաց սահմանը և Աղեքսանդրապոլ, Ախալցխա և Ախալքալաք կը հաստատուին» (**Ալպօյաճեան Ա.**, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Գ, մաս Ա, Գահիրէ, 1961, էջ 106) կամ «...Ախալցխա և Ախալքալաք ռուսաց ձեռքն անցան, Կարինէն, Կարսէն, և Պայազետէն 90.000 հոգի թողուցին Տաճկաստանը և գաղթեցին Շիրակի և Սևանայ լճի շրջաններ, Ախալցխայի և Ախալքալաքի գավառներ» (**Աճառյան Հր.**, Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 32):

նին կարողութիւն ինքեանց ապրուստ ճարել, քանզի գործել և վաստակի չկայ, ուստի աղաչեմք գթածաբարոյ այցելութիւնդ մեր զգերազանցութեան ձեր և խնդրեմք յատկապէս զողորմութիւն ներեսջիք մեզ մինչև ի գարուն, զի յայսպիսի նեղութեան ժամանակիս ոչ ի գլուխ ելանէ այդ գործ, ...զի մեք աղքատիկ ստրուկ գոլով՝ զի արդ կարեմք քաղաք շինել, եթէ ոչ դու ինքն ողորմած տէրդ մեր խնամս մեծամեծս արասցե մեզ:

Վասն որոյ աղերսեմք հրամայել այժմ տեղւոյս կամենդանտին, զի և սա թոյլ տացէ մեզ ի հին քաղաքի զաւերական ըստ իւրաքանչիւր տանուտեառն մի աչք տեղի շինել, եթէ որ օրինաւոր տեղի և տուն, գեթ իբր պատսպարան, զի ձմեռային ժամանակս ի բացի մնացեալ ժողովուրդն մեր աստ եկեալ՝ տեղի գտցեն հանգչիլ յերեսաց տօթոյ և ցրտոյ»[196]:

Իշխանությունների հետ ունեցած իրենց հարաբերություններին առնչվող հարցերով մտահոգ՝ ակնկալվող իրավունքների մասին 10 կետից բաղկացած մի խնդրագիր էլ կոմս Պասկևիչին են ներկայացնում Ախալցխայում հանգրվանած արհեստավորները 1831 թ. հունվարի 10-ին, որտեղ ի մասնավորի նշել են. «Խնդրեմք, զի տեղին անուանեալ Նոր քաղաք տուեալ լիցի միայն ի բնակութիւն Արզրումցի քաղաքացւոց հայոց, առնել անդ տանց և վաճառանոցաց և այլն և լիցի այն բնակութիւն նոցա անխառն յայլոց ազգաց: ...եթէ կարելի է, զի տէրութիւն շնորհս արասցէ իւրով օգնութեամբ շինել վասն աղքատաց տունս բաւականս, մինչև յետ ամաց կարողութիւն ստացեալ նոցա հատուսցեն տէրութեան...: Նորեկ ժողովուրդքս ունիցեն զազատաբար վաճառականութիւն թէ ի նահանգս իւրեանց և թէ ռահագնացութիւն ի Ռուսաստան, ի Պարսկաստան, ի Թուրքաստան և յԵվրոպա ըստ առաջին սովորութեան իւրեանց, զոր ունէին ի մէջ օսմանցւոց և այս երթևեկութիւն նոցա միշտ փաշփօրթիւ տէրութեան...:

Խնդրեմք, զի երևելիք նորեկաց կարող լիցեն ստանալ զգիւղս, և այլք հասարակութեան կարող լիցին ստանալ ըստ իւրաքանչիւր կարողութեան զանդաստանս, ջրաղացս, զպարտէզ և զայլ անշարժ կալուածս, և կառավարութիւն Ախալցխայու առանց դժուարութեանց արձանագրեսցէ առ ի հաստատութիւն և ոչ առնել որպէս արար մինչև ցայժմ: Բազումք ՚ի գաղթական ժողովրդոցս այսոցիկ պատճառաւ սաստկութեան եղանակի ձմռան ցիր ու ցան մնացին ոմանք ի գիւղօրեայս և ոմանք ՚ի գիւղաքաղաքս ՚ի Գիւմրի կամ յայլ տեղս. ցանկամք, զի նոցա ոչ լիցի արգելումն, որոց կամիցեն գալ յԱխլցխայ կամ ՚ի վիճակս նորա: Վասն ջուլհակաց և վասն աղքատ բանւոր կանանց խնդրեմք բամբակ շնորհել, զի նովաւ գործեալ զգործս՝ ապրուստ առնիցեն. նոյնպէս և ապրշմեալ գործաւորաց դազգզից ապրեշում շնորհել, որք կարող լինելն հատուսցեն»[197]:

Գլխավոր ցանկություններից էր ազգային դատարան ունենալու և առևտրի համար նախատեսված բոլոր հարկերից ազատվելու արտոնագրերի ձեռքբերումը[198]: Բավարարվում է միայն այն պահանջը, որով 7 տարով վերացվում են պետական տուրքն ու մաքսը[199]:

10 կետից շարադրված խնդրագրի առնչությամբ ուշագրավ մեկնաբանություն ունի հետազոտող Զագուրսկին. «1831 թ. ախալցխայի վերաբնակիչները կոմս Պասկևիչին հղել էին 10 կետից բաղկացած խնդրագիր: Գլխավոր կետերն էին. ա) որպեսզի հայերի հետ այլ ազգություններ չբնակեցվեին, բ) վերաբնակիչներին իրավունք տրվեր ունենալ ազգային դատարան, գ) իրենց ազատ և անտուրք առևտրի իրավունք տրվի: Ավագանիներն իրենց մասին էլ չէին մոռացել. նրանք խնդրել էին, որպեսզի պատվավոր ընտանիքները և նրանց ժառանգները կարողանային օգտվել տոհմական իրավունքներից, նրանք իրավունք ունենային գյուղեր գնելու: Պարզ է, որ նման խնդիրներ կառավարությունը չէր կարող բավարարել»[200]:

**Կացությունը հայրենադավ գաղթին հաջորդած առաջին տարիներին.** հայտնի է, որ գաղթի երկրորդ տարվա վերջին ևս Ախալցխայում հաստատված նորաբնակ հայերի տնտեսական վիճակը շարունակում էր մնալ գրեթե օրհասական դրության մեջ: Մինչև իսկ ծայր էր առել գաղտնի իրականացվող վերադարձի շարժում դեպի հայրենի լքված օջախները, սակայն «...ռուս կառավարութեան խիստ հսկողութիւնը ազատ չէր թողուր՝ սոյն գաղթական Հայոց վերադառնալ իրենց տեղը. թէպէտ եւ շատ մը ընտանիքներ՝ նոյն իսկ գաղթականութեան յաջորդ տարին, յաջողած են փախչելով վերադառնալ, եւ յաջորդ տարիներու մէջ եւս շատեր իրենց

196 **Դարբինյան Մ.**, Վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828-1830 թթ. գաղթի վերաբերյալ, «ԲՀԱ», 1973, № 2, էջ 141:

197 **Դարբինյան Մ.**, նշվ. հոդվ., «ԲՀԱ», 1973, № 2, էջ 142-144: Տե՛ս նաև Մատենադարան, թղթ. 163ե, վավ. 48-V:

198 **Ղաֆադարյան Կ.**, Նյութեր Ախալցխայի հայ համայնքի պատմության վերաբերյալ, 1967, «ՊԲՀ», № 1, էջ 121:

199 **Ղաֆադարյան Կ.**, Մի փաստաթուղթ Ախալցխայի հայերի կենցաղի վերաբերյալ, «ԲԵՀ», № 3, 1967, էջ 167:

200 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 10 (բնագրում՝ “В 1831 г. ахалцихские поселенцы подали прошение гр. Паскевичу, состоявшее из 10 пунктов. Главные пункты: а) чтобы с армяно-григорянами не были поселены другия народности, б) чтобы переселенцы имели право учредить свой особый националный суд, в) чтобы им предоставлено было право свободной и безпошлиной торговли. Старшины не забыли и о себе: они просили, чтобы почетныя семейства и их наследники могли пользоваться преимуществами и родовыми отличиями, чтобы они имели право покупать деревни. Ясно дело, что правительство не могло удовлетворить подобных просьб”).

կրած թշուառութեանց հետեւութեամբ կամ հայրենի ծոցին տենչով՝ կրցած են գալ եւ գտնել իրենց աւեր թողուցած տեղն ու տունը, սակայն մեծամասնութիւնը մնացած է հոն՝ ուր որ գացած է...»[201]:

Եվ չնայած ձեռնարկված միջոցներին և խստացված հսկողությանը, այնուամենայնիվ, գտնվում էին դեպի հայրենիք գաղտնի փախչողներ: Այս կարգի տեղեկություն ենք գտնում, օրինակ, ոմն Կիրակոսովի՝ 1832 թ. մայիսի 28-ին Կարապետ եպիսկոպոսին հղած գրության մեջ. «Մինչ 'ի 27-ըն մայիսի հանդարտ էր քաղաքս 'և ժողովուրդք առ 'ի նմին, բայց 'ի 28-ըն սկսեաց յայլ եղանակ դառնալ. զի 'ի միում աւուր չորս տուն և 'ի միւսում աւուր երեք փախեան...»[202]:

Նույնի մասին վկայել են նաև քաղաքաբնակ վաճառականները մայիսի 31-ին հղած գրության մեջ. «Մինչ 'ի 27-ըն մայիսի հանդարտ էին ժողովուրդք մեր, բայց 'ի նոյն աւուր սկսեցին փախուստ առնել ոմանք տունք»[203]:

Դեպի Կարին եւ փախչողների մասին վկայություն ունի նաև Զագուրսկին. «...նրանցից ոմանք (այդպիսիք չափազանց քիչ էին) հետ փախան Թուրքիա...»[204]: Ավելի ուշ խնդրո առթիվ նշվել է. «... 1829 թուին Կովկաս գաղթող հայութեան մէկ մասն ալ, չդիմանալով գաղթական կեանքի լքուած ու թըշուառ վիճակին, կը դառնան Կարին, տէր դառնալու համար իրենց սեփականութեանց եւ գործերուն»[205]:

Հայրենադավ գաղթի պատճառով ծայրահեղ չըքավորության ճիրաններում հեծող նորաբնակները արդեն հունիսի 10-ին շարադրած հերթական աղերսագրով (20 մարդու ստորագրությամբ) Կարապետ սրբազանին հայտնել են. «...ճշմարտապէս գիտասջիք 'զի ժողովուրդք առհասարակ ցիր և ցան լինին, և յետոյ աւելի խեղճութեան դիպեալ յուսահատութեամբ ոչընչանան: ...մեծաւ ջանիւ տնօրէնութիւն իմն գործեցէք, զի ժողովուրդք մեր եղեալ կիսակենդան...»[206], իսկ հարազատ հոտին արմատախիլ արած և «Ռուսիո տերության» սահմաններն իբրև «փրկության ափ» առաջնորդած գաղթի կազմակերպիչ Կարապետ Բագրատունին տարիներ անց (1850 թ.) պետք է խոստովաներ. «...թողեալ զհայրենիս իւրեանց ի խնդիր ազատ Աստուածապաշտութեան դիմեցին ի հովանաւորութիւն ռուսաց կայսերութեան...»[207]:

Նոր բնակավայրերում հաստատված գաղթականների հույսերն առաջին իսկ ամիսներից ի դերև ելան: Առաջին հերթին դա վերաբերում էր նրանց բնակության տեղին և 6 տարով հարկատվությունից ազատվելուն: Այսպես, Պասկևիչի հրամանով նրանք պետք է բնակվեին արքունի հողերում, սակայն «...Ախալցխայի շրջանի կառավարիչ գնդապետ Դրեշերնը, օրինակի համար, մի կողմից գաղթականական յանձնաժողովին ցուցակ էր ուղարկում թէ Ախալցխայում այսքան ու այն ինչ արքունի ազատ հողերը կան, որոց տէրերը Տաճկաստան էին գաղթել և այլևս յետ դառնալու չեն, միւս կողմից այդ հողերի նախկին տէրերի անձնական ներկայութեամբ կամ նրանց հաւատարմաթղթերով տեղի ունեցած վաճառքների թղթերն էր հաստատում և վաւերացնում:

Գաղթականական յանձնաժողովը՝ հիմնուելով Դրէշէրնի նախկին գրութիւնների վրայ, հիմնուելով նրա ներկայացրած իբր թէ արքունի, ազատ հողերի ցուցակների վրայ,– գաղթականների մի մեծ խումբ Ախալցխա ուղարկեց, թւով 1600 գերդաստան: Դրէշէրնը իսկոյն նրանց տեղաւորեց իր և յանձնաժողովի մատնանշած հողերի վրայ: Եւ գաղթականները, ի շնորհս կառավարութեան կողմից իրանց տրուած նպաստներին թէ՛ դրամով, թէ նիւթերով, անասուններով, ձեռաց սկսեցին իրանց համար բնակարաններ շինել, արհեստանոցներ հիմնել, իրանց համար տնտեսութիւն կազմել, իրանց տրուած արքունի, ազատ հողերը վարել, ցանել:

Բայց ահա հետզհետէ, մեկզմէկու ետքնից, կարծես նախամտածուած ծրագրով, այդ հողերի իսկական տէրերը լոյս են ընկնում և գնդապետ Դրէշէրնին ցոյց տալով՝ նրա իսկ ձեռքով վաւերացրած կալուածագրերը՝ պահանջում են, որ նա,– Դրէշէրն իշխանաւորը,– կամ նորեկ գաղթականներին դուրս հանէ իրանց պատկանեալ տեղերից և կամ նրանց պարտաւորեցնէ սահմանեալ հարկն ու տուրքը վճարել կալուածատէրերին:

Օրինապահ իշխանաւորը դիմում է գաղթականներին և ստիպում է անշուշտ բաւականութիւն տալ կալուածատէրերի զէթ երկրորդ և աւելի օրինական պահանջին:

Գաղթականները մերժում են՝ յայտնելով, որ կայսերական խոստման համաձայն՝ նրանք 6 տարի արքունի հարկերից և 3 տարի կոռ ու բեգեառից ազատ պէտք է լինին»[208]: Ի վերջո, հարցին միջամտում է Պասկևիչը, և գաղթականները 6 տարով ազատվում են հարկերի մուծումից, իսկ կալվածատերերից էլ հողը գնվում է ավելի բարձր գնով, քան նրանք գնել էին նախկին տերերից[209]:

Բավական ծանր էր նաև Ախալցխայում և Ածղորում հաստատված արհեստավորների ու առևտրականների վիճակը: Օրհասական դրության մեջ

201 **Քոսեան Յ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 99:
202 Մատենադարան, թղթ. 163ե, վավ. 77:
203 Մատենադարան, թղթ. 163ե, վավ. 78:
204 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 10 (բնագրում՝ "...некоторые из них (таких было весьма немного) бежали обратно в Турцию...").
205 **Ղազար-Չարըգ**, Յուշամատեան Բարձր Հայքի. Կարինապատում, Պէյրութ, 1957, էջ 180:
206 Մատենադարան, թղթ. 163ե, վավ. 82-I:
207 Մատենադարան, թղթ. 147, վավ. 61, թ. 1:
208 **Գեղամեանց Ե.**, Պատմական քաղուածքներ, «Հովիւ», 1908, № 37, էջ 585-586:
209 Նոյն տեղում, էջ 586:

հայտնվելով՝ գաղթից երկու տարի անց՝ 1832 թ. մայիսի 16-ին, նրանք բողոքագիր են հղում Այսրկովկասի գլխավոր կառավարիչ բարոն Ռոզենին. «Երկու տարի է եկեալ եմք յԱխալցխայ, ոմանք արհեստանոց չունենալով զկարողութիւն և ոչ զգործիք արհեստից իւրեանց այլ կան մնան անգործ և կեսք թեպետ գործեն ըստ կարի զգործս իւրեանց այլ ոչ են կարող վաճառել, զի մերձակայ սահմանաց և կամ յօսմանցւոց երկրէ ոչ գան աստ վասն առևտրի վասն որոյ նոքա համարին անգործ որով և ամենեքեան օր քան զօր աղքատանան»[210]:

1833 թ. ականատեսը նկատել էր, որ «Ամենադժգոհը այդ հայերն էին՝ նորեկները, ովքեր կարծել էին, թե Ախալցիխեում ոսկե սարեր են գտնելու»[211]:

Գաղթականների անսպառ բողոքները և դժգոհությունները ի վերջո սկսեցին լրջորեն ծանձրացնել և նույնիսկ զայրացնել նրանց հոգսերի և ցանկությունների մեծագույն մասին անհաղորդ իշխանություններին. «Ախալցիխեի այդ նոր բնակիչները առևտրականներ կամ բանվորներ էին, և բոլորը ցանկանում էին ապրուստի միջոցներ վաստակել...: Նրանք բողոքեցին ռուսական կառավարությանը՝ առանց մտածելու, որ պետք է իրենք իրենց մեղադրեն սեփական թշվառության համար, որը գնալով աճում էր: Բոլորն ուզում էին առևտուր անել, ոչ մեկը չէր ուզում գյուղատնտեսությամբ զբաղվել: Իսկ Ռուսաստանին միայն աշխատող ձեռք էր պետք՝ հողը մշակելու համար»[212]:

Ծուտով բողոքներից հոգնած՝ կառավարությունը ընդունում է նաև «...նորեկների՝ Անատոլիա վերադառնալու ցանկությունը: Ամեն կերպ հեշտացրին նրանց մեկնումը, նույնիսկ գումար հատկացրին, այնքան ուրախ էին նրանցից ազատվելու համար»[213]: Նույն ժամանակ, սակայն, նկատվել է, որ բողոքողների թվում գյուղաբնակներ չկային. «Ի դեպ, միայն առևտրական հայերն էին բողոքում: Գյուղատնտեսությամբ զբաղվողները շատ լավ էին զգում իրենց նոր բնակավայրում»[214]:

**Ախալցխան նվաճելու նոր փորձ 1833 թ.** հակառակ Ադրիանապոլսում 1829 թ. սեպտեմբերի 2-ին կնքված դաշնագրի՝ թուրքերը որևէ կերպ չէին կարողանում հաշտվել Ախալցխան մեկընդմիշտ կորցրած լինելու մտքի հետ և անարդյունք ավարտված 1829 թ. փետրվարյան արշավանքին հաջորդած նախապատրաստությունից հետո՝ 1833 թ., նրանք ձեռնարկում են Ախալցխան վերանվաճելու մի փորձ ևս. «Մի այդպիսի անյաջող փորձ օսմանցիների կողմից կրկնուեցաւ և 1833 թուականին, երբ տեղական հայ ժողովուրդը առանձին հայկական բանակ կազմելով, սակաւաթիւ ռուս զինուորների հետ ազատեցին դարձեալ քաղաքը...»[215]:

**Սոցիալական ընդվզում 1834 թ.** արհեստավորների և վաճառականների ուժերով հին քաղաքում վաճառակետեր և արհեստանոցներ բացելու նախաձեռնության արգելումը (մարտի 5-ին) վրդովմունքի և խառնակչության պատճառ էր դարձել: Քաղաքացիներին հանդարտեցնելու նպատակով մարտի 23-ին Գաղթականական կոմիտեի նախագահ Ն. Փալավանդովը դիմել է ախալցխացիներին. «Սոյն մարտ ամսոյ 5-ին, որ էր առաջին օր պահոց, Ախալցխու բնակիչք, մոռանալով քրիստոնէական սերն, ժողովեալ են մեծ բազմութեամբ, սկսել են կռուել սաստիկ: Երբ որ տեղւոյս կառավարութիւնն հրամայեալ է սոցա ցրուեալ, միայն Ախալցխոյ երլի բնակիչքն հնազանդեր են պօլիցիու հրամանին: Միայն Արզրումցիք անհնազանդ լինելով համարձակուել են, մինչև իւրեանց ձեռն բարձրացուցանել պօլիցիու չինովնիկներու վերայ և սկսեր են գնալ ի բնակութիւն հին երլիքին և կոտորել նոցայ դուռներ և մտել են դահիճներն, համարձակուել են առնել աւազակութիւն»[216]:

**Ախալցխայի ճակատամարտը 1853 թ.** հայտնի է, որ 1853-1856 թվականներին ռուս-թուրքական պատերազմի հենց սկզբին «Անատոլիայի բանակի հրամանատար Չերփանելի Աբդուլքերիմ Նադիր փաշան հարձակումներ գործելով Ախալցխայի և Արփաչայի վրա, բանակի հրամանատար Նաջերլի Ահմեդ փաշայի օգնությամբ գրոհով գրավում է Գյումրիի բերդը. քանի որ այդ շրջանում եղած ռուսական զինվորները փակված մնացել էին Ախալցխայում, փաշան սկսեց ճնշում գործել այդ քաղաքի վրա»[217]:

1853 թ. հոկտեմբերի սկզբներին թուրքական 18000-անոց զորքը Ալի (Աբդի) փաշայի գլխավորությամբ ասպատակում է Ախալցխայի շրջակայքը, իսկ արդեն ամսվա վերջին մոտենում է քաղաքին և նախապատրաստվում հարձակման: Ախալցխայում գտնվում էին գեներալ Անդրոնիկովի հրամանատարությամբ շուրջ 7000 զինվոր և տեղական ոստիկանության օժանդակ ուժեր:

Դրությունն էլ ավելի է սրվում տեղացի թուրքերով համալրված ոստիկանության շարքերում

---

210 **Դարբինյան Մ.**, նշվ. հոդվ., «ԲԵՀ», 1973, № 2, էջ 215:

211 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 261 (բնագրում՝ “Les plus mécontents étaient ces Arméniens, nouveaux venus qui croyaient trouver à Akhaltsikhé des monts d’or à gagner”):

212 Նշվ. աշխ., էջ 264 (բնագրում՝ “Ces nouveaux habitants d’Akhaltsikhé sont tous marchands ou ouvriers, et veulent tous gagner de quoi vivre... Ils se plaignirent du gouvernement russe, sans songer à s’en prendre à eux-mêmes de leur misère qui allait toujours en croissant. Tous voulaient négocier, trafiquer; aucun ne voulait se livrer à l’agriculture, et c’étaient des bras pour cultiver la terre que la Russie demandait”):

213 Նույն տեղում (բնագրում՝ “...le désir de s’en retourner en Anatolie; on leur a facilité de toutes manières leur départ; on leur a avancé de l’argent, tant on était aise de se débarasser d’eux”):

214 Նույն տեղում (բնագրում՝ “Au reste, il y a eu que les Arméniens négociants et brocanteurs qui se sont plaints; les agriculteurs se sont très bien trouvés de leurs colonisations”):

215 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 429:

216 **Դարբինյան Մ.**, նշվ. հոդվ., «ԲՀԱ», 1973, № 2, էջ 144:

217 Թուրքական աղբյուրները..., հ. Դ, էջ 76:

ապստամբական նկրտումներ ի հայտ գալու հետևանքով. «...ապստամբութիւն միլիցայից յԱխալցըխու թէպէտ հասարակաբար չէ երևեալ բայց յայտնի երևեալ է առ գլխաւորս նոցա որք են որդիքն Միւֆտի բեկի, մինչ վօիսկի նաչալնիկն փոխեալ ի պաշտամանց առաջարկեալ է մեռուցանել հրացանիւ»[218]:

Ցուտով թշնամու կողմն են անցնում նաև Քոբլիանի և Ածղորի մահմեդականները. «...այնու զի մահմետական բնակիչք Քօպլիանու և Ածղօրու սահմանաց բոլորովին միացան ընդ նոսա և զինեալ ընդ նոսա ետուն պատերազմ ընդ մեզ մինչև Սէֆէր բէկն վերակացուն պահապան զօրաց գիւղօրէից և մէլիցայն Մայիօր Ալիբէկի բաժանեալ ի նմանէ դարձան առ նոսա»[219]:

Հանկարծակի հարձակումով վերջիններիս հաջողվում է Ճաղզմանի մոտ ոչնչացնել կոզակների ոչ մեծ մի պահակախմբի իր հարյուրապետով. «...այլ իմն խումբ հեծելազօրաց նոցուն դիմեալ ի փօստայն Ճաղզման արարին նոյնպէս եղեռնագործութիւնս ոչ սակաւ, ուր և սպանին զհարիւրապետն ղազախաց աստիճանաւոր Մավրիտովն հանդերձ քանի մի ղազախօք»[220]:

Քաղաքի վրա թուրքերի ընդհանուր գրոհը տեղի է ունենում նոյեմբերի 1-ին. «...ի մէկն նոյեմբեր ամսոյս բազմութիւն թշնամեաց յարձակեցան կրկին ի հարաւակողմանէ քաղաքիս ի լերանց և ի դաշտաց ի ձորամիջին Մարտայի և ի գլուխս լերանց և յ2-րդ ժամէ սկսան պատերազմիլ յընթացս երից ժամուց թնդանօթք մեր որ յամրոցէն և թէ յարևելեան կողմանէ քաղաքագլխոյն յարձակեցան ոչ սակաւ. զօրք մեր ոչ միայն պահպանէին զշրջակայս քաղաքիս այլ և խումբ խումբ պատերազմեցան ի կողմ Մարտայի ընդ Հայազգի մանկանց որք գովանի ջերմեռանդութեամբ ինքնակամ յառաջ խաղացեալ օգնութիւն ետուն զօրաց մերոց որպէս յ30-ն հոկտեմբեր ամսոյ, յորպիսի քաջասրտութիւն նոցա ուրախացաւ և նորին գերազանցութիւն. յ7-րդ ժամու դադարեցաւ պատերազմ...»[221]:

Քաղաքը պաշտպանելու նպատակով անմիջապես հրավիրվում է ռազմական խորհուրդ, որից հետո գեն. Անդրոնիկովը հայտարարում է ընդունված որոշումը. «...կատարել հետախուզություն և ապա ամբողջ զորքով հին քաղաքից դուրս գալ ընդդեմ թուրքերի, իսկ բնակիչներին, ով զենք ունի, զենքով, ով չունի, ձողափայտերով մնալ իրենց տներում»[222]: Գլխավոր հրամանատարի կոչին անմիջապես արձագանքում են տեղի հայ և վրացի բնակիչները, որոնք հաջորդ օրը համատեղ ուժերով գրոհում են Սուխլիս գյուղի ուղղությամբ և պարտության մատնում թշնամուն[223]:

Ճակատամարտը տեղի է ունենում նոյեմբերի 14-ին երեք անգամ գերակշիռ թուրքական ուժերի դեմ: Թշնամու կորուստները կազմում են 1500 զոհ, մոտ 2000 վիրավոր, 120 գերեվարված: Ռուսների ձեռքն է անցնում գրեթե ողջ հրետանին, պարենի հսկայական պաշարները, 5 դրոշ և այլ ռազմավար, իսկ ռուսական զորքից և աշխարհազորայիններից զոհվում է 61, վիրավորվում 365 հոգի[224]:

Հաղթական ճակատամարտում աչքի ընկած հայ մարտիկներից պարգևատրվում են փոխգնդապետ Օսիպովը Գեորգիևյան 4-րդ աստիճանի, փոխտեղակալ Կորգանովը՝ Ս. Աննայի 3-րդ աստիճանի և ոստիկան Հակոբ Հարությունյանը՝ Փառքի 4-րդ աստիճանի շքանշաններով[225], իսկ Ի. Անդրոնիկովը՝ Սբ. Գիորգիի 3-րդ աստիճանի շքանշանով[226]:

**1877 թ. ընդվզումը.** 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Ախալցըխայի (նույնպես և Ախալքալաքի) հայերն ապստամբում են իշխանությունների դեմ: Պատճառը պատերազմական օրերին վիճակահանությամբ զորակոչության հրամանն էր. «Յայտնի է, որ վիճակահանութեամբ սովորական զօրաժողովներն են լինում: Եւ եթէ կովկասեան իշխանութիւնը այժմ այդ եղանակով զինուորներ է պահանջում ազգաբնակութիւնից,– նշանակում է, որ ուզում են սովորական զինուորագրութիւն մտցնել, ուզում են մեր երիտասարդներին «սալտաթ» տանել, այն էլ պատերազմի այս օրերում, ուզում են մեզ... Աջարացիների ձեռքը մատնել:

Քաղաքային վարչութեան մէջ՝ մասնաւոր կերպով ժողոված քաղաքացիների մի փոքրիկ խումբ,– հայեր, վրացիներ, հրէաներ,– միաբերան և դրականօրէն ինձ (իմա՛ քաղաքագլուխ Եղիշե Գեղամյանցին) յայտնեցին, որ Փոխարքայի այդ կարգադրութեան իրագործումը անկարելի է: Իսկ եթէ ստիպեցին անպատճառ իրագործել,– այն ժամանակ արիւնհեղութիւնը անխուսափելի կը դառնայ»[227]: Ցնորհիվ քաղաքագլխի ձեռնարկած քայլերի՝ հարցը խաղաղ լուծում է ստանում, և բացի վիճակահանությամբ զորակոչված երիտասարդներից՝ զինվորագրվում են նաև նույնքան կամավորներ[228]:

---

218 Դիւան Հայոց Պատմութեան, գիրք ԺԳ, Թիփլիս, 1915, էջ 26-27 (այսուհետ՝ ԴՀՊ, համապատասխան հատորով և էջերով):
219 Նշվ. աշխ., էջ 21:
220 Նշվ. աշխ., էջ 19:
221 Նշվ. աշխ., էջ 20-21:
222 **Պողոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 146:

---

223 **Сегаль И.**, նշվ. հոդվ., № 222, էջ 1: Տե՛ս նաև ԴՀՊ, գիրք ԺԳ, էջ 43-44:
224 Ախալցխայի ճակատամարտի մասին մանրամասն տե՛ս **Потто В.**, Ахалцых, “Кавказ”, 1903, № 334, с. 2; № 336, с. 2. **Ибрагимбейли Х. М.,** Кавказ в Крымской войне 1853-1856 гг. и международные отношения, Москва, 1971, с. 194-198.
225 **Պողոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 147:
226 **Ибрагимбейли Х. М.,** նշվ. աշխ., էջ 196:
227 **Գեղամեանց Ե.**, Պատմական քաղուածքներ, «Հովիւ», 1908, № 41, էջ 650:
228 Նոյն տեղում: Տե՛ս նաև **Գեղամեանց Ե.**, նշվ. հոդվ., «Հովիւ», 1908, № 42, էջ 665-666:

**Ռուսական իշխանությունների կեցվածքը 1903-1906 թվականներին և դրանց անդրադարձն ու արձագանքը Ախալցխայում.** Ռուսաստանում ճորտատիրական կարգերի վերացման (1861 թ.) ժամանակից սկսած՝ հաշված տասնամյակների ընթացքում ողջ Այսրկովկասում տնտեսական հզորությունների նշանակալի մասն իր ձեռքում կենտրոնացրած հայկական կապիտալը, որն օրավուր առավել ակնառու դարձող ազգերի ազգային զարթոնքի և ինքնագիտակցության դրսևորման պայմաններում մի օր կարող էր ի սպաս դրվել Հայաստանի վերականգնման գործին, արդեն ԺԹ դարի վերջերին սկսել էր լուրջ անհանգստություն պատճառել ցարական իշխանություններին:

Բորչալուի, Թիֆլիսի, Թելավի, Սղնախի, Գորու, Ախալցխայի գավառներում եկամուտ ապահովող ճորտերից զրկված և ծուլությունից սնանկացած ազնվականների՝ վաճառքի հանած կալվածքները գնելով, ավելի ու ավելի տիրապետելով Բաքվի նավթահանքերին, ստանձնելով այսրկովկասյան գրեթե բոլոր քաղաքների (մեծ մասամբ հայազգի էին քաղաքագլուխներն ու քաղաքային խորհուրդների անդամների հիմնական մասը) և դրամատների կառավարումը՝ հայերը, իրոք, տարածաշրջանում իրենցից հետ էին թողել անխտիր բոլոր ազգություններին, այդ թվում՝ ռուսներին: Ահա սա էր, որ հանդուրժելի չէր ցարական իշխանությունների համար, իսկ Ռուսաստանում որևէ ազգի կրթական և տնտեսական առաջընթացին լուրջ և ծանր հարված հասցնելու հաճախ կիրառվող, փորձված, առավել արդյունավետ և նախապատվելի միջոցը, ճնշումների բազմազան ձևերից զատ, ազգամիջյան ընդհարումների հրահրումն էր:

Հայոց դպրոցների գործունեության արգելումը (1885, 1895-1905 թթ.), հայոց եկեղեցու կալվածքների բռնագրավումը (1903 թ.), հայ-թաթարական ընդհարումների հրահրումը (1904-1906 թթ.), արևմտահայ եղբայրներին օգնության մեկնող կամավորական զինյալ խմբերի ջարդերը ռուս-թուրքական սահմանի վրա, հայրենասեր երիտասարդության և մտավորականների պարբերական ձերբակալությունները, դատավարություններն ու աքսորը՝ ահա ռուսական իշխանությունների հակահայ գործունեության՝ բնավ ոչ լրիվ ցանկը: Այս բոլոր իրողություններն իրենց անխուսափելի արձագանքն էին գտնում Ախալցխայի հայ բնակչության շրջանում: Օրինակ, 1903 թ.՝ եկեղեցական կալվածքների բռնագրավման ժամանակ, «Ախալցխայում ամբողջ հասարակութեան ներկայութեամբ քահանաները պատարագ են արել և, ինչպէս լսում ենք, նզովք են կարդացել կառավարութեան հասցէին: Յուզմունքը սաստիկ է: Սպասում են մեծ ցոյցեր»[229]:

Օրավուր ահագնացող խտրական հալածանքը, առանց բացառության, հայերի դեմ էր. «Թիւրքահայերին քշում են, իսկ կովկասահայերին տանում դէպի բանտ կամ դէպի աքսոր: Ահա թւեր, քաղած մի մասնաւոր նամակից. «Ախալքալաքի գաւառից աքսորւած են Ռուսաստան 24 հոգի. 40 հոգի էլ բանտումն են: Ախալցխայից աքսորւած են առ այժմ 18 հոգի. իսկ բանտերում եղածները բազմաթիւ են»[230]:

1904 թ. փետրվարի 9-ին դրությունը կտրուկ սրվում է. «Ախալցխայ և Ախալքալաք քաղաքները խիստ հսկողութեան տակ են գտնւում, որովհետև ենթադրւում է, թէ այդ կողմի ժողովուրդը կողոպտելով Ալէքսանդրապոլի փամփուշտների պահեստը՝ պատրաստւում է յարձակւում գործել կառավարութեան վրայ»[231]:

Ազգային անվտանգության հարցերով մտահոգ՝ գավառի և մասնավորապես Ախալցխա քաղաքի հայերը մշտարթուն և գործուն մասնակցություն են ունենում զանազան կարևոր ձեռնարկումներին:

Օրինակ, հայ-թաթարական ընդհարումները դադարեցնելու նպատակով 1906 թ. հունվարին գումարվելիք խորհրդակցությանը մասնակցելու համար ընտրվում են հայ կաթողիկե 5 պատգամավորներ (նրանց թվում՝ Պողոս Գուրգենյանցը)[232]: Նույն թվականի օգոստոսի 17-ին Սբ. Էջմիածնում գումարված Ռուսահայոց առաջին կենտրոնական ժողովի 46 մասնակիցների թվում հիշվում է Ախալցխա գավառի և քաղաքի հայ աշխատավորության շահերը ներկայացնող Հակոբ Մանանդյանը[233], որն էլ օգոստոսի 19-ի նիստում նշել է. «Ես այստեղ ներկայացնում եմ իբրև պատգամաւոր Ախալցխա քաղաքի և գաւառի աշխատաւոր հայ ազգաբնակչութեան, որին ես ճանաչում եմ մանկութիւնից: Այդ աշխատաւոր ժողովուրդը գտնւում է ամենաթշւառ և կեղեքւած դրութեան մէջ և նրա կենսական և էական պահանջներն են հաց, կրթութիւն և իր քաղաքական և քաղաքացիական բնական իրաւունքների յաղթանակ: Ռուսահայ Կենդրոնական ժողովը կարող է որոշ բարւարարութիւն տալ այդ աշխատաւոր, կեղեքւած ու թշւառ ժողովրդի շահերին: Արդ՝ այդ բաւարարութիւնը շատ թերի ու սահմանափակ է և վերաբերում է էապէս տնտեսական և դպրոցական խնդիրներին»[234]:

**Ախալցխացի հայերն ու Արևմտյան Հայաստանի ազատագրման գործը.** արևմտահայ զարմից սերող ախալցխաբնակ հայերը, ներշնչված նախնյաց

229 Գաւառներում, «Դրօշակ», 1903, № 8, էջ 118:

230 **Ականնի Է.**, Կովկասեան խաբրիկներ, «Դրօշակ», 1904, № 4-5, էջ 67:

231 **Մ-ՊԵՏ**, Նամակներ Կովկասից, «Հնչակ», 1904, № 1-2, էջ 6-7:

232 Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան. Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը (1903-1907 թթ.), գիրք Է, Երեւան, 2000, էջ 413, վավ. 383:

233 Նույն տեղում, էջ 516, վավ. 434:

234 Նույն տեղում, էջ 540:

օրրանի ազատագրման նվիրական գաղափարով, իրենց գործուն մասնակցությամբ մշտապես հաղորդակցվել են խնդրին. «Մենք, ախալցխացիներս, որպէս տաճկահայ ժողովրդի մի զանգուած, որ դեռ չի մոռացել տաճկաց տիրապետութեան սարսափները, զիտէ եւ զգում է, թէ ինչ ասել է տաճկահայ ժողովրդի դրութիւն, չի կարող անտարբեր եւ սառնասիրտ վերաբերմունք ցոյց տալ դէպի իր եղբայրակիցների ներկայ դրութիւնը»[235]:

Կամավոր մասնակցությամբ հարյուրավոր ախալցխացիներ են մարտնչել Արևմտյան Հայաստանի ազատագրման համար: Նրանցից շատերն իրենց կյանքը նվիրաբերեցին երազած հայրենիքին:

*Ախալցխացի Մարտո*. 1904 թ. մասնակցել է Սասունի Սեմալ և Ալիանք գյուղերի կռիվներին[236]: Ալիանքի մարտում վիրավորված Մարտոյի մասին հայտնի է. «Կիրճի կուին մէջ ծնկներէն ծանր կերպով կը վիրաւորի ախլցխացի Մատոն (Մարտիրոս). երբ որ ընկերներէն մէկը կը մօտենայ անոր, թևը կը մտնէ և կ'ուզէ դուրս տանել կուէն, նա կը պատասխանէ. «Դուք ինձնով մի զբաղիք, յաղթութեանը նայեցէք դուք, յաղթութեանը, եթէ թշնամիներ գան, ես կարող եմ զիս քարէ մը վար նետել»[237]:

*Ախալցխացի Սերգո (Սարգիս Յազանյան)*. ծնվել է 1877 թ. Ախալցխայում: Զոհվել է 1897 թ. Խանասորի արշավանքի ժամանակ[238]:

*Ախալցխացի Սիսակ*. նահատակվել է 1904 թ. Օլթիի շրջանի Զարդանիսի կռվում: «Որսկան» մարտական խմբի երկու բժիշկներից մեկն էր[239]:

*Ախալցխացի Վարդան*. Արաբոյի զինակից ընկերներից էր: Նրա հետ էլ զոհվել է 1893 թ. Մշո դաշտի մոտակայքում[240]:

*Արմաչյան (Էրմեքչյան) Գրիգոր*. 1890 թ. սեպտեմբերին մասնակցել է Սարգիս Կուկունյանի արշավանքին և Կուկունյանի խմբի դատավարության ժամանակ աքսորվել Սիբիր: Մահացել է Բաքվի բանտում[241]:



Արտաշէս Սուճյան

*Հաջի Լևոն*. հիշվում է որպես 1905 թ. Արամ Մանուկյանի հեղափոխական գործընկերներից մեկը: Երկիր է մտել 1904 թ. Փելի ջոջ աղայի հետ: Զինագործ էր և իր 5 հոգիանոց հեծյալ խմբով (Ասլան, Ուսուլ Խեչո, Աշըգ, Մաշտակցի Գասպար և Ավետ) զենք է փոխադրել Երկիր: 1903 թ. Սալմաստից Վարազ 19 մոսին, հրացանի մասեր և թերթեր փոխադրելիս իր խմբով կռվի է բռնվել քրդերի հետ, պարտության մատնել նրանց և զինամթերքը հաջողությամբ տեղ հասցրել[242]: Արամը երկրորդ անգամ հանդիպում է նրան 1915 թ., երբ նա Քեռու կամավորական խմբի հետ մտնում է Վան: Քեռու ձիավոր խմբի ղեկավարն էր, «նրա խմբի զրոհների առջեւ տեղի տուեց թշնամին դէպի Ոստան, Սարէ եւ Ջէյվա, ուր եղաւ հռչակաւոր ճակատամարտը»[243]:

*Պուլղուրյան Հովհաննես (Օննիկ)*. կռվել է Քեռու կամավորական IV խմբում, զոհվել է Ռևանդուզի կռվում: 1916 թ. հունիսի 26-ին նրա հիշատակը հավերժացնելու համար Սբ. Փրկիչ եկեղեցում տեղի է ունեցել հոգեհանգիստ: Ի հիշատակ իր եղբոր որդու՝ ազատամարտիկի հորեղբայր Հարություն Պուլղուրյանը 25-ական ռուբլի է նվիրել որբանոցին, ԿՀԲԸ Ախալցխայի ճյուղին, հայ փախստականներին և ռազմի դաշտում վիրավորվածներին[244]:

---

235 Քաղվածքն առնված է Արևմտյան Հայաստանի հայերին աջակցելու խնդրով մտահոգ 1913 թ. հունիսի 16-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին (1847-1930) հղված խնդրագրից (Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԳ, Երևան, 2005, էջ 178): Ի դեպ, ախալցխացիներն Արևմտյան Հայաստանի հայերին աջակից էին նաև կրթական ոլորտում: Հայտնի է, օրինակ, որ 1879 թ. Միքայել Տեր-Միքայելյանցն Աբասթումանի առողջարաններում հանգըստացող անձանցից, հօգուտ Արևմտյան Հայաստանում ուսումնական գործը խթանելու նպատակով ստեղծված «Արարատյան», «Արևելյան Դպրոցասիրաց» և «Կիլիկյան» ընկերությունների, հավաքել է 116 ռուբ.50 կոպեկ (Նվիրատուների ցանկը տե՛ս **Տէր-Միքայէլեանց Մ.**, Նամակ խմբագրին, «Մշակ», 1879, № 157, էջ 2):

236 **Վահան**, Սասունի երեք կռիւը. Շէնըք-Սէմալի կռիւները, «Դրօշակ», 1904, № 4-5, էջ 58:

237 Կռիւներ Սասնոյ եւ Մշոյ դաշտին մէջ, «Դրօշակ», 1905, № 3, էջ 35:

238 Յուշամատեան Հայ Յեղափոխական դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, հ. Ա, Լոս Անճելըս, 1992, էջ 58:

239 «Որսկան» խմբի կռիւը Զարդանիսի մօտ, «Դրօշակ», 1904, № 8, էջ 111:

240 Յուշամատեան Հայ Յեղափոխական դաշնակցութեան, հ. Ա, էջ 244:

241 Կուկունեան խմբի դատավարութիւնը, «Դրօշակ», 1912, № 6, էջ 164: Տե՛ս նաև Յուշամատեան Հայ Յեղափոխական դաշնակցութեան, հ. Ա, էջ 26:

242 Յուշամատեան Հայ Յեղափոխական դաշնակցութեան, Ալբոմ-ատլաս, հ. Բ, Լոս Անճելըս, 2001, էջ 18:

243 **Արամ**, Յուշեր, «Հայրենիք», Պոսթըն, 1923, № 7, էջ 200-201: Տե՛ս նաև Արամը (Արամի յուշերը), Երևան, 1991, էջ 270-271:

244 «Համբաւաբեր», 1916, № 29, էջ 903:



Հաջի Լևոն (Ախալցխացի Լևոն)



Ախալցխացի Վարդան

*Սանթոյան-Հովակիմյան Լևոն.* 1897 թ. մասնակցել է Խանասորի արշավանքին: Նահատակվել է 1902 թ. Մակվի Արաբլու գյուղում քրդերի դեմ մղած պայքարի ժամանակ[245]:

*Սուճյան Արտաշես.* ծնվել է հավանաբար 1882 թ.: Ուսանել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում Ռուբեն Տեր-Մինասյանի հետ: Առաջին աշխարհամարտին Անդրանիկի կամավորական ավագ գնդի վաշտապետն էր, մասնակցել է Դիլմանի ճակատամարտին: Զոհվել է 1916 թ. Բաղեշի գրավման ժամանակ[246]: Նույն թվականի ապրիլի 24-ին Ախալցխայի Սբ. Փրկիչ եկեղեցում տեղի է ունեցել Արտաշես Սուճյանի հոգեհանգիստը[247]:

Ախալցխացի ռազմիկները հատկապես մեծաթիվ էին հրամանատար Քեռու ջոկատում: Հայտնի է, որ Ռևանդուզի կռվում Քեռու կողքին էին նրա ախալցխացի զինեղբայրները: Տեղին է հիշել 1916 թ. հունիսի 5-ին Ախալցխայի մայր եկեղեցում կատարված Ռևանդուզի կռվում զոհված Քեռու և նրա զինակիցների հիշատակը հավերժացնող հոգեհանգստի մանրամասները. «Դիասեղանի վրայ դրուած էր Քեռու պատկերը...: Դիասեղանի գլխավերևը կանգնել էր իր սիրած ու ղեկավարած կամաւորական գնդի տեղացի յայտնի զինուորներ: Երգում էր քառաձայն երկսեռ խումբը Պօղոս Տէր-Կարապետեանի ղեկավարութեամբ...: Քեռին ծանօթ ու սիրելի էր մեր ախալցխացիներին. մեր կամաւորների մեծ մասը նրա խմբի մէջ էին ծառայում...: Ռևանդուզի կռւում իր հետ միասին ընկած կամաւոր զինւորների որոշ մասը տեղացի կամաւորներից էին»[248]:

Ախալցխացիներն անտարբեր չէին նաև թուրքերի դեմ պատերազմում զոհված այլազգի մարտիկների հիշատակի հանդեպ: 1916 թ. մարտի 6-ին, օրինակ, տեղի է ունեցել Արտահանի գրավման ժամանակ (1914 թ. դեկտեմբերի 12) ծանր վիրավորված և Ախալցխայում մահացած Սիբիրի կազակների 6-րդ գնդի փախմիստր Ստեփան Կրյուկովի մահարձանի բացումը, որը կառուցվել էր ախալցխացիների օժանդակությամբ[249]:

**Արտակարգ միջոցառումներ.** արդեն 1917 թ. օգոստոսի վերջին քաղաքային իշխանությունները հարկադրաբար ձեռնարկում են որոշ արտակարգ միջոցներ՝ ելնելով իրավիճակից: Օրինակ, որոշում է ընդունվում արգելել գաղտնի և քարտային համակարգով զինեվաճառությունը քաղաքում, ընդ որում, գաղտնի զինեվաճառների պատժաչափն առաջին անգամ 1000 ռուբլի էր, երկրորդ անգամ նրանք պետք է ենթարկվեին եռամսյա, իսկ երրորդ անգամ՝ վեցամսյա բանտարկության[250]:

Հայտնի է, որ 1918 թ. փետրվարին երկու շաբաթով ընդհատվել է նաև «Շարժում» թերթի տպագրությունը, քանի որ տպարանի բոլոր աշխատողները զտնվում էին ինքնապաշտպանության դիրքերում[251]:

**Ախալցխայի 1917-1918 թթ. ինքնապաշտպանությունը.** արդեն 1917 թ. դեկտեմբերից, երբ թուրքական զորամասերն ընդհուպ մոտեցել էին Ախալցը-

245 Յուշամատեան Հայ Յեղափոխական դաշնակցութեան, էջ 18:

246 «Դրօշակ», 1902, № 8, էջ 123: Տե՛ս նաև Յուշամատեան Հայ Յեղափոխական դաշնակցութեան, հ. Ա, էջ 58:

247 «Համբաւաբեր», 1916, № 19, էջ 587-588:

248 «Համբաւաբեր», 1916, № 26, էջ 819:

249 «Համբաւաբեր», 1916, № 13, էջ 396:

250 «Շարժում», 1917, № 9, էջ 2:

251 «Շարժում», 1918, № 17, էջ 3: Տե՛ս նաև **Մաղալյան Վ.**, Ախալցխայի «Շարժում» թերթը (1917-1918 թթ.), «ԲԵՀ», 1998, № 2, էջ 143-156:

խային, գավառի մահմեդական բնակչության շրջանում նկատելի էր դարձել համընդհանուր ոգևորություն և ակնկալվող թալանից օգտվելու բուռն մղումով թելադրված թուրքական բանակին միանալու անթաքույց ձգտում: Անկանխատեսելի հետևանքներով լի կացությունը կարողանում է հավասարակշռել Փոցխովի կոմիսար Ասլան բեկը, որն իր հորդորներով կարողանում է զսպել Փոցխովի ազգաբնակչությանը և արգելել վերջիններիս արշավելու Ախալցխայի վրա[252]:

1917 թ. դեկտեմբերի 27-ին քաղաքը շրջապատվում է թուրքական 15000-անոց զորքով, որը խուճապ է առաջացնում բնակիչների շրջանում. «Խանութներն անմիջապէս փակեցին և քաղաքացիները խումբ խումբ հաւաքուած փողոցներում աշխատում էին լուրը ճշտել և տեղեկութիւններ հաւաքել: Պաշարումը փաստ էր: Անմիջապէս կազմակերպւեց «Քաղաքի ինքնապաշտպանութեան գվարդիա» և հմուտ ու փորձւած հրամանատարների ղեկավարութեամբ ուղարկւեց քաղաքի դիրքերը բռնելու...: Առաւօտեան ժամը 10-ին քաղաքի ներկայացուցիչները՝ քաղաքագլուխ Զ. Զօրեանի գլխաւորութեամբ հրաւիրւեցին պաշարող թուրքերի ներկայացուցիչների կողմից՝ քաղաքի մի ընատորանում: Թուրքերի պարագլուխ Օմար Էֆենդին յայտնեց, որ քաղաքը պաշարւած է 15 հազար թուրքերով, որոնք միտք ունեն մտնել քաղաք և գրաւել զինարանը և հաշւի առնելով քաղաքի ազգաբնակութեան թիւը, նրանց հետ արսենալը և առհասարակ զինուորական ինչքը պաշտպանել: Յայտնեց նոյնպէս, որ քաղաքի ազգաբնակութեան նկատմամբ ոչ մի պրիտենզիա չունեն, մանաւանդ հայերի դէմ: Սակայն թուրքերը գտնում են, որ Ախալցխան թրքական կանտօն է լինելու և եթէ որևէ խնդիր լինի այդ ուղղութեամբ, դա կլինի վրացիների հետ»[253]: Ի պատասխան թուրքերի պահանջների՝ քաղաքագլուխը նշում է, որ եթե փորձեն քաղաք ներխուժել, կհանդիպեն դիմադրության: Թուրքերն էլ իրենց հերթին վերջնագիր են ներկայացնում մինչև հաջորդ օրվա ժամը 3-ը:

Ստեղծված կացության թելադրանքով քաղաքում ստեղծվում է Հայկական բատալիոն, որին նվիրված միջոցառումը տեղի է ունենում հունվարի 28-ին քաղաքային այգում[254]:

Ի դեպ, համաձայն նախնական պայմանավորվածության, Ախալցխայի պետական ունեցվածքն ու հաստատությունները պաշտպանելու համար տեղի ռուս զինվորները պետք է տեղում մնային մինչև նոր զորամասերի գալը, սակայն արդեն 1918 թ. հունվարի սկզբին նրանք «չը պահպանեցին իրանց որոշում-խոստումը և խումբ-խումբ սկսեցին հեռանալ քաղաքից: Սրանցից շատերը տանում էին նաև իրենց հրացանները, որ ինչպէս տեղեկացրին, թուրքերը ճանապարհին նրանցից գնում էին, կամ խլում էին ձեռքերից...: Ռուս զինւորների քաղաքից հեռանալու խնդիրը բաւական մտահոգիչ էր, ուստի քաղաքացիները օգտւելով բարձր իշխանութեան ներկայացուցիչների տեղումս լինելուց, որոշեցին հարց բարձրացնել, արտակարգ կերպով՝ ժամանակաւորապէս զօրամաս հրաւիրելու գարնիզոնի ծառայութեան համար, մինչև վերջնականապէս կը որոշւի տեղումս մշտական զօրքի առկախ խնդիրը»[255]: Հայտնի է դարձել, որ հունվարի 9-ին Ախալցխայից հեռացած ռուս զինվորներին Ածղորում թուրքերը զինաթափել են և վերցրել 115 հրացան ու մոտ 20000 փամփուշտ[256]:

1918 թ. մարտի վերջին հաշվի առնելով Ախալցխայի շուրջ ստեղծված բավական ծանր կացությունը, Քաղաքային խորհրդի հրավիրած արտակարգ ժողովում հրապարակվում է համաքաղաքացիներին ինքնապաշտպանության դիմելու հետևյալ կոչը. «Բոլոր զինուորական և ոչ զինուորական քաղաքացիները, որոնք ընդունակ են զէնք կրելու, կամ կարող են օգտակար լինել ազատութեանը, յեղափոխութեանը եւ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը պաշտպանելու գործին, պարտաւոր են հպատակւել զինուորական հրամանատարական կազմին եւ անտրտունջ կատարել նրա բոլոր կարգադրութիւնները:

Բոլոր դասալիքները եւ իրենց պարտականութիւններից խուսափողները կենթարկւեն յեղափոխական դատի, որը նրանց նկատմամբ կարող է արձակել մինչեւ իսկ մահուան դատավճիռ:

Քաղաքացիներ, կազմակերպւեցէք ինքնապաշտպանութեան համար. դրա մէջ է ձեր փրկութիւնը»[257]:

Տիրող կացության և դեպքերի հետագա զարգացումների մասին ուշագրավ դիտողություններ ունի հայտնի հեղափոխական Ռուբենը. «Այսօր քիչ բան փոխուած է երկու քոյր գաւառներուն մէջ: Եթէ ուշադրութեամբ դիտենք դէպքերը, պիտի տեսնենք թէ նոյն պատմութիւնն է, որ կը կրկնուի: Երբ ռուս իշխանութիւնը կը վերնայ 1917-ին և հայկական իշխանութեան վերածնունդի հաւանականութիւնները կ'աւելնան, այդ գաւառներուն մէջ ուժեղ հոսանք մը կը նկատուի դէպի Հայաստան: Անոնք կ'ուզեն ամէն գնով միանալ մայր հայրենիքին: Երբ թուրք զօրքերը յաղթական կ'արշաւեն դէպի նորածին Հայաստան, ուրքի տակ կ'առնեն (1918) Կարսն ու Ալէքսանդրապօլը և այդպիսով կապակցութիւնը կը կտրուի Հայաստանի հետ, բնազդօրէն այդ երկու քոյր գաւառները կը միանան իրարու, ինչպէս ԺԳ

252 «Շարժում», 1918, № 16, էջ 4: Ինքնապաշտպանության մասին տե՛ս **Սիմոնյան Ե.**, Ախալցխան կրակե օղակում, Երևան, 2000:

253 **Աւագեան Ա.**, Ախալցխայի անցքերը, «Շարժում», 1918, № 1, էջ 2:

254 «Շարժում», 1918, № 8, էջ 3:

255 **Աւագեան Ա.**, նշվ. հոդվ., «Շարժում», 1918, № 2, էջ 1:

256 «Շարժում», 1918, № 2, էջ 4:

257 «Շարժում», 1918, № 20, էջ 1:

դարում և կը փորձեն ինքնավար հանրապետութիւն ստեղծել ու իրենց գլխուն ճարը տեսնել: Անոնք միացած ուժերով կը ջանան թումբ կանգնել թուրքին առջեւ: Ժամանակաւոր կառավորութիւն կը ստեղծուի տեղական զինուորներով. կը կառավարուին ազատ և անկախ քանի մը ամիս: Յետոյ Ախալքալակը աւելի դժբախտ կ'ըլլայ քան Ախալցխան: Կը տապալի թուրք բանակին կողմէ և կը հարկադրուի ծանր զոհերով նահանջել դէպի հիւսիս, ուր Բակուրեանի լեռներուն վրայ իրեն կըսպասէր նոր աղէտ մը, վրաց զօրքին սուինը, որ թուրքին չափ վնաս պատճառեց սառնապատ Թրիալէթի, Բակուրեանի շղթաներուն մէջ: Իսկ Ախալցխան նախնի աթաբէկներու արժանի փառքով ինկաւ, դիմադրեց մինչեւ վերջին հնարաւորութիւնը. ի վերջոյ թուրք բանակին հետ համաձայնեցաւ դադրեցնելու դիմադրութիւնը, պայմանով որ ժողովուրդին վնաս չտրուի և կռուող մարտիկներն իրենց զէնքերով և թնդանօթներով անցնին Վրաստան: Այդ հերոսները երբ կ'անցնին Աղջոռի ձորը, հոն կը շրջապատուին վրաց զօրքերուն կողմէ և զինաթափ կ'ըլլան: Այս փաստերուն վրայ, ի հարկէ Ախալքալակցին և Ախալցխացին ուզեն-չուզեն պիտի եզրակացնեն թէ թուրքին պակասը վրացին լրացուց»[258]:

1918 թ. ապրիլի 1-ին Ախալցխայի Քաղաքային դումայի շենքում տեղի է ունենում կանանց ընդհանուր ժողով, որի նպատակն էր խորհրդակցել դրության մասին և նյութական միջոցներով սատար կանգնել քաղաքի պաշտպանության գործին: Առավելապես զենք գնելու համար կանանց մեծ մասը նվիրում է զարդեր, ճակատի ոսկիներ (ճակատանոց) ու գումար[259]:

Հայտնի է, որ ապրիլի 7-ի երեկոյան թուրքական մի ջոկատ Աբասթումանի ուղղությամբ մոտենում է Ախալցխային, սակայն հարձակում չի լինում[260]: Ավելի ուշ՝ ապրիլի 14-ին, թուրքերը հարձակում են գործում վրացաբնակ Անդրեածմինդա գյուղի ուղղությամբ, որտեղ հայկական ինքնապաշտպանական ուժերը տալիս են երկու զոհ[261]:

Այնուհետև ախալցխացիներին ջրից զրկելու և դրանով իսկ նրանց անձնատուր լինելու նպատակով թուրքերն ապրիլի սկզբին կտրում են քաղաքի մի մասին ջուր մատակարարող Ջիլ-Բուխարի ջրանցքը, սակայն պաշտպաններին հաջողվում է նրանց ետ շպրտել և ջրանցքը վերստին բացել: Ապրիլի 13-ին ջրանցքը սկսում է գործել[262]:

**Ախալցխան և Բաթումի պայմանագիրը.** 1918 թ. հունիսի 3-ին՝ առավոտյան ժամը 4-ին, Վրաստանի և Թուրքիայի միջև Բաթումում կնքված պայմանագրի համաձայն՝ «...Ախալցխայի գաւառից Վրաստանին մնում է Ացխուր-Աբասթուման-Զէքար շըրջանը, իսկ Ախալցխա գաւառի մնացած մասը, ինչպէս և ամբողջ Ախալքալաքի գաւառը՝ անցնում են Թիւրքային»[263]: Ի դեպ, հունիսի 11-ի տեղեկատվությամբ, քայլեր են արվում Ախալցխայի, Ախալքալաքի գավառները և Բաթում քաղաքը պատերազմից հետո Գերմանիայի ճնշման ներքո Վրաստանին վերադարձնելու համար[264]:

Բաթումի պայմանագիրը կնքելուց հետո հայկական զորամասը հեռանում է Բորժոմի ուղղությամբ[265]: Նույն ժամանակ Ախալցխայի արևմտյան կողմից քաղաք է մտնում օսմանյան 3000-անոց զորամասը[266]:

Թուրքերի՝ քաղաք մտնելուց հետո ախալցխացի հայերի շրջանում սկիզբ է առնում արտագաղթը, որը կասեցնելու նպատակով Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախաձեռնությամբ Ստեփան Մալխասյանցը և Հ. Բաղդասարյանը մեկնում են Ախալցխա և բանակցելով օսմանյան կառավարության ներկայացուցիչների հետ՝ կարողանում են զաղթողների թվաքանակը նվազեցնել[267]:

Մոտ 6-ամսյա իշխանությունից հետո՝ 1918 թ. դեկտեմբերին՝ գերմանական բլոկի պարտությունից հետո, թուրքերը ստիպված հեռանում են նաև Ախալցխայից[268]:

1919 թ. հունվարի սկզբից թուրքական գործակալներն Օմար-Ֆայիկ Նեյման զադեի գլխավորությամբ Ախալցխայի գավառում արդեն ծավալել էին քարոզչական գործունեություն՝ ապստամբություն բարձրացնելու նպատակով: Դավադիրների գլխավոր կենտրոնը Փոցխովի շրջանն էր, ռազմական ղեկավարը՝ Շուրուտ բեյը: Հունվարի 19-ին սահմանն անցնելով՝ նրանք գրավում են Խոնա, Ծարիասթուբան, Ուդե, Ցկիսե, Ջաղիսման, Ինձեկալ և Չատլու գյուղերը: Ապստամբությունն անհա-

258 **Ռուբէն**, նշվ. հոդվ., «Դրօշակ», 1926, № 1, էջ 7:

259 **Եպրաքսէ**, Ախալցխայի հայ կանանց և օրիորդների ընդհանուր ժողովը, «Շարժում», 1918, № 22, էջ 1:

260 «Շարժում», 1918, № 24, էջ 2:

261 Նրանցից մեկն էր Արմենակ Սարայտարյանը (ծնվել է 1889 թ. Ախալցխայում, զոհվել 1918 թ. ապրիլի 14-ին Անդրեածմինդա վրացական գյուղը թուրքերի հարձակումներից պաշտպանելու ժամանակ: Հուղարկավորությունը տեղի է ունեցել նույն օրը: Նույն կռվում զոհվել է նաև ախալցխացի գիմնազիստ Գարեգին Մուրադյանը: Ա. Սարայտարյանը նախնական կրթությունը ստացել է քաղաքային դպրոցում, ապա շարունակել Ելիսավետգրադի Բոնչ-Բրուևիչի առևտրական դպրոցը: Առաջին աշխարհամարտի տարիներին զինվորագրվել է և ավարտել Թիֆլիսի զինվորական դպրոցը: Զինվորական գերազանց ծառայությունների համար ստացել էր շտաբս-կապիտանի աստիճան և պարգևատրվել շքանշաններով: Մասնակցել է Էրզրումի, Երզնկայի, Քյոփրիքյոյի, Բայբուրդի և Հասան-Ղալայի կռիվներին (**Ստեփանեան Մ.**, Արմենակ Սարայտարեան, «Շարժում», 1918, № 26, էջ 2-3):

262 «Շարժում», 1918, № 25, էջ 2:

263 Վրաստանի և Թիւրքիայի հաշտութիւնը, «Մշակ», 1918, № 105, էջ 1:

264 «Մշակ», 1918, № 109, էջ 2:

265 Հաշտութեան կնքման մանրամասնութիւնները, «Մշակ», 1918, № 103, էջ 1:

266 **Ղաֆադարյան Կ.**, Ախալցխայի 1917-1918 թթ. ինքնապաշտպանական կռիվները, «ԲՀԱ», 1988, № 1, էջ 159:

267 «Մշակ», 1918, № 118, էջ 3:

268 **Ղաֆադարյան Կ.**, նշվ. հոդվ., «ԲՀԱ», 1988, № 1, էջ 160:

ջողության է մատնվում, ներկայացվում է վերջնագիր, որով Ախալցխայի շրջանից հեռանալու համար թուրքերին տրվում է 24 ժամ, իսկ պայմանը չկատարելու դեպքում սպառնում էին զինված ղիմադրությամբ: Վերջնագիրն ընդունվում է. հունվարի 22-ին ապստամբները հեռանում են Ախալցխայի սահմաններից[269]:

Սակայն թուրքերը միայն ժամանակավորապես են հեռանում և փետրվարի 12-ին գրավում են Ախալցխան: Բորժոմում հանգրվանած աբասթումանցի երկու փախստականների վկայությամբ՝ «Փետր. 12-ին Ախալցխա է մտել Փոցխովի զորքը՝ Սերւէր բէկ Կորլեանսկու առաջնորդութեամբ: Ռազմական գործողութիւնները ղեկավարել է Լաթիֆ բէյը, Ացխուրի և շրջակայքի զորքերի նախկին հրամանատարը:

Ղարսի կառավարութեան զորքերի միջև կան բազմաթիւ տաճիկ սպաներ: Նրանք Ախալցխա մտնելուն պէս՝ ձերբակալել են այն բոլոր վարչական պաշտօնեաներին, որոնց չէր յաջողել մէկնել քաղաքից, և տեղական միլիցիային: ...զաւառում տիրում է լիակատար անիշխանութիւն, ժողովրդին թալանում են, կողոպուտներ են կատարում և Ախալցխայում»[270]:

Նույն թվականի մարտի 7-ին վրաց զորքերն առանց կռվի մտնում են Ախալցխա[271]:

**Հիշարժան տարեթվեր.** 1837 թ. հոկտեմբերի 2-ին Ախալցխա է ժամանել Նիկոլայ Ա կայսրը (1825-1855) և «...իջաւ նոյն արքեպիսկոպոսի (իմա՛ Կարապետ արքեպիսկոպոս) կառուցած Հայոց առաջնորդարանում: Նորին Մեծութեանը ցոյց տուած ընդունելութեան մասին Կարապետ արքեպիսկոպոսը գրում է Յովհաննէս կաթողիկոսին՝ «Ն.Կ. Մեծութիւն 2 հոկտեմբերի յերեկոյան հասեալ ժամու զործեաց զԲարձրագոյն զիւր մուտ ՚ի քաղաքն Ախալցխա և ետես սուրբ աչօք զփոքրագոյն զայս քաղաք, կեղրոն ինչ արդարև արժանի տեսանելոյ, զի ՚ի միում կողման՝ ՚ի Հին քաղաքի համարեա թէ խառնափնդոր աւերակք տակաւին ծխէին ճենճեր անողորմ հրոյ Հագարեան բռնաւորաց... բայց ՚ի միւսում կողման՝ ՚ի Նոր քաղաքի տեսնէր թագաւորեալ խաղաղութիւն և անդորրութիւն, որում նոյն ինքն էր պատճառ և յառաջացուցիչ, բնակիչք որոյ տակաւին փոշոտեալ մուրճ և փայտատ ՚ի ձեռին տառապէին ՚ի շինութիւն իւրեանց քաղաքի...: Իսկ յառաւօտուն՝ ՚ի վեցերորդում ժամու ընծեռեաց և մեզ զամենաքաղցր տեսութիւն սուրբ պատկերի իւրոյ, և յետ յարգարակն ողջունմատուութեան արժանի արար զիս առանձնախօսութեան ըստ բաւականին միով ևեթ թարգմանաւ, զիետ որոյ եթող և առ մեզ զիւրն բարեհաճութիւն շնորհեալ ինձ զոսկի խաչ ոսկի շղթայիւք յեռեալ ադամանդ ակամբք»[272]:

1858 թ. սեպտեմբերի 6-ին Ախալցխա են այցելել Ռուսաստանի արքայազն եղբայրներ Նիկոլայ և Միխայիլ Նիկոլաևիչները[273]:

1867 թ. հուլիսի 25-ին քաղաք է այցելել Ամենայն Հայոց Գևորգ Դ կաթողիկոսը[274]:

1895 թ. Ախալցխա է այցելել Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը[275]:

**Կառուցապատում.** մինչև 1829-1830 թվականներն Ախալցխայում գոյություն ուներ միայն հին՝ Ռաբաթ կոչված թաղամասը, հետևաբար մինչ այդ ժամանակաշրջանի հեղինակների մոտ առկա քաղաքի նկարագրությունները վերաբերում են սոսկ նշյալ թաղամասին:

Քաղաքի կառուցապատման ձևն ու առանձնահատկություններն ուշադրության արժանացրած առաջին հեղինակներից մեկը 1640 թ. նկատել է. «Բերդում մոտ 1100 հողածածկ, առանց այգիների ու պարտեզի տներ կան: Մի դարպասը բացվում է դեպի արևելք, մյուսը՝ արևմուտք: Ունի 28 մեհրաբ...: Այս քաղաքում կապարով ծածկված շինություններ չկան»[276]:

Նկարագրական ավելի մանրամասներ է հաղորդում 1820 թ. քաղաք այցելած ճանապարհորդը. «Քաղաքը գտնվում է մի բլրի լանջին և մի հովտում, որն աջ կողմում հատում է նույնանուն գետը. այն սկիզբ է առնում Աշիկ-Բաշի լեռներից և խառնվում է... Կուրին: Նրա աջ ափը գեղեցկացնում են անսահման այգիները: Այնտեղ դեռ երևում են Սուլեյման անունով մի փաշայի պալատի ավերակները: Սուլեյմանը ապստամբել էր իր տիրակալի դեմ և երկար ժամանակ պաշտպանվելուց հետո զոհվել: Բուն քաղաքը շրջապատված է խրամներով, երկու շարք ատամնավոր պարսպով, որի կողքերին կան քառակուսի և կլոր աշտարակներ: Քաղաքի վրա բարձրանում է մի բերդ: Կառավարչի պալատի մոտ կա մի գեղեցիկ մզկիթ»[277]:

Տակավին օսմանյան տիրապետության տակ գտնվող ասիական քաղաքներին բնորոշ տեսք և կառուցապատում ունեցող Ախալցխայի հին կամ

269 **Վ. Հ. Գ.**, Դէպքերն Ախալցխայի շրջանում, «Յառաջ», 1919, № 12, էջ 2:

270 **Վ. Հ. Գ.**, Դրութիւնը Ախալցխայում, «Յառաջ», 1919, № 40, էջ 3:

271 «Յառաջ», 1919, № 45, էջ 4:

272 **Երիցեանց Ալ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 432-433:

273 «Մեղու Հայաստանի», 1858, № 41, էջ 324:

274 «Մեղու Հայաստանի», 1867, № 32, էջ 273:

275 «Արարատ», 1895, էջ 270:

276 Թուրքական աղբյուրները..., հ. Գ, էջ 111:

277 **Chevalier Gamba**, նշվ. աշխ., էջ 402 (բնագրում՝ "Elle est située sur le penchant d'une colline et dans un vallon, coupé à droite par une rivière qui porte son nom, et, prenant sa source dans les montagnes d'Achik-Bach, mêle ses eaux... au Cyrus. Sa rive droite est embellie par une infinité de jardins. On y voit encore les débris du palais d'un pacha nommé Suleyman, qui, s'étant révolté contre son souverain, s'y défendit longtemps, et enfin succomba. La ville proprement dite est entourée de fossés, et d'un double rang de murailles crénelées et flanquées de tours carrées et rondes; un fort la domine. Auprès du palais du gouverneur est une belle mosquée"):

Ռաբաթ կոչված թաղամասի վերաբերյալ 1820-ական թվականների վերջերին վկայվել է. «Ախալցխայի ամենամեծ տրամագիծն արևելքից արևմուտք չի գերազանցում 600 սաժենը, իսկ փոքրը՝ հյուսիսից հարավ՝ մինչև 400 սաժեն: Չնայած բնակչության զբաղեցրած այդքան փոքր տարածությանը՝ այն իր մեջ ներառում էր մինչև 4500 տուն՝ կառուցված այնքան կից, որ քաղաքը չուներ ո՛չ հրապարակներ, ո՛չ փողոցներ, իսկ մեկը մյուսի վրա կախված տները միմյանցից առանձնանում էին միայն ոչ մեծ նրբանցքներով, որոնք լեռնային կածանների նման ձևավորում էին ներքին հաղորդակցությունը...»[278]:

1828 թ. ականատեսը քաղաքի կառուցապատման առնչությամբ նշել է. «Ախալցխայի բնակչության մեծամասնությունը տեղաբաշխված էր երկու ձորակների միջև, և այստեղ գլխավորապես բնակվում էին հիմնադիրների բնիկ հետնորդները: Արևելյան ձորակը կտրում էր քաղաքային շինությունների գրեթե հինգ մասը, իսկ արևմտյան ձորակը բաղկացած էր ոչ ավելի քան երկու թաղամասից, որոնք հավասար էին, ինչպես հյուսիսային կողմը...»[279]:

Այլ հեղինակի գրչին պատկանող 1833 թ. նկարագրության մեջ կարդում ենք. «Թուրքերի ժամանակ քաղաքի անկանոն, ցածր, հողե տանիքներով տները ցրված կամ, ավելի շուտ, անկանոն կուտակված էին բազմաթիվ ալիքաձև բլուրների լանջերին, Փոցխովի ձախ ափին, պիրոքսենային ծիրանաքարի բազմաթիվ ժայռերի վրա, որոնց ստորոտը ողողում էր գետը»[280]:

Նույն ժամանակի այլ հեղինակ հավելել է. «...գտնվում է կավե բավական ուղղաձիգ լեռան լանջին՝ մինչև Փոցխով գետը: Շինությունները որևէ ուշադրության ենթակա չեն, քանի որ քաղաքի մեծ և լավագույն մասը բոլորովին ավերված է և ոչնչացված ռուսական զորքերի պաշարման և աջար փաշայի հարձակման ժամանակ»[281]:

Հայտնի է, որ քաղաքն իրենց ձեռքում պահելու ապագա ռազմավարական նկատառումներով իշխանությունները բոլորովին քանդել էին ամրոցամերձ շինությունները. «Այն տները, որոնք կառուցվել էին ամրոցի շուրջը, մեծ չարիք դարձան ռուսների համար, քանի որ թուրքերը այնտեղ էին տեղավորվել՝ պաշարվածների վրա կրակելու համար: Երբ նրանք հեռացան, ռուսները ստիպված եղան մաքրել տեղանքը՝ վերացնելով ամրոցի շուրջը եղած բոլոր տները և ավերակները: Այդ ժամանակ այլ հատակագիծ կազմեցին, որպեսզի քաղաքը տեղափոխեն Փոցխովի աջ ափը: Այնտեղ տարածքներ հատկացրին Կարսից և Էրզրումից փախած հայերին, և երբ ես 1833 թ. եկա այդտեղ, արդեն մի մեծ թաղամաս կառուցված էր նրանց համար»[282]:

Ինչպես երևում է հետագա հաղորդումներից, հին քաղաքի մի նշանակալի մասը, այնուամենայնիվ, անձեռնմխելի էր մնացել, քանի որ շուրջ 40 տարի անց (1872 թ.) նշվել է. «Բերդին... կից է հին քաղաքը: Նրանում շինությունները մեծ մասամբ հյուղակներ են... այստեղ նույնպես հարկ է շրջել մի քանի հարկանի դարավանդաձև շինությունների, այլ հյուղակների համար հիմք ծառայող տանիքներով, և այստեղ նույնպես հաճախ հանդիպող փոքր բացվածքով ծխնելույզները ճամփորդին մշտապես հիշեցնում են, որ քայլում է ոչ թե հրապարակով, նրբանցքներով, այլ տների տանիքներով: Անհարթ տեղանքը զբաղեցնող հին քաղաքը ձգվում է արևմուտք-արևելք ուղղությամբ: Այդ ուղղությամբ էլ ընդհանրապես ցածրանում է տեղանքը՝ զբաղեցնելով քաղաքի նշյալ հատվածը»[283]:

---

278 **Ушаков Н.**, նշվ. աշխ., часть первая, СПБ, 1836, էջ 285-286 (բնագրում՝ “Наибольший поперечник Ахалцыха, от востока к западу, не превышал 600 сажень, а меньший, от севера к югу, имел их до 400. Столь малозначительное пространство населения заключало в себе однако же до 4500 домов, отстроенных с такою теснотою, что город не представлял ни площадей, ни улиц, и жилища, висящие одно над другим, разделялись только небольшими переулками, которые подобно узким горным тропинкам, образовали внутреннее сообщение): Տե՛ս նաև **Марутян А.**, Город Ахалцха. Вопросы этнической истории и традиционного жилища, «ԼՀԳ», 1990, № 6, էջ 25:

279 **Ушаков Н.**, նշվ. աշխ., Варшава, 1843, ч. 1, с. 285 (բնագրում՝ “Самое большое население Ахалцыха заключалось между двумя оврагами; и здесь преимущественно обитали коренные потомки его основателей. Овраг восточный отрезывал почти пятую долю городских жилищ, а овраг западный не более двух кварталов, которые, равно как и северная сторона...”).

280 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 257 (բնագրում՝ “Du temps des Turcs, ses maisons irrégulières, basses, recouvertes de terre, étaient semées ou plutôt entassées sans ordre sur les pentes et revers de plusieurs collines ondulées, accolées sur la rive gauche du Poskho, à plusieurs jets de porphyre pyroxénique, dont la rivière baignait le pied”):

281 **Обозрение Российских владении за Кавказом. Легкобытов В.**, Ахалцихский пашалык, СПБ, 1836 (այսուհետ՝ **Легкобытов В.**, համապատասխան էջերով) էջ 218 (բնագրում՝ “Старый город расположен по скату довольно крутой глинистой горы до реки Посхо. Строения не заслуживают ни какого внимания, потому что большая и лучшая часть города совершенно раззорена и уничтожена осадами во время взятия русскими войсками и при нашествии адарсого паши”).

282 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 260 (բնագրում՝ “Les maisons qu'on avait ménagées autour de la forteresse, causèrent beaucoup d'embarras aux Russes, parce que les Turcs s'y logèrent pour tirer sur les assiégés. Quand ils furent partis, on fut obligé de nettoyer la place, en rasant tout ce qu'il y avait de maisons et de ruines autour de la forteresse. On fit alors un nouveau plan pour transporter la ville sur la rive droite du Poskho. On y assigna des terrains aux Arméniens qui s'enfuyaient de Kars et d'Arzeroum, et quand j'y arrivai en 1833, un vaste quartier était déjà achevé”):

283 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 15 (բնագրում՝ “К крепости... примыкает старый город. Постройки в нем по большей части ветхи... здесь тоже приходится странствовать по несколько-этажным террасообразным по



**Ախալցխա. բերդը և Ռաբաթ թաղամասը, հեռվում՝ Երևման Սբ. Խաչ եկեղեցին (նկարի աջ կողմում)**

Այլ հեղինակի՝ նույն թվականին տրված նկարագրությունն ավելի է ամբողջացնում պատկերը. «...գտնուած շինութիւնները ասիական շինութեան տպերն են, տներն շինուած են անկարգ և անկանօն կերպով, փողոց էլ եթէ կայ այնքան նեղ և ծուռումուռը, որ անցնողը չէ գիտում ուսկից եկաւ և ուր է գնում: Սովորաբար մէկ տան կտուրը մին ուրիշ տուն է կազմում: Այս մասը առհասարակ կեղտոտ և մթնոլորտը ապականող մասն է քաղաքի: Բարձր ժայռերի վերայ գետի եզերքում այս տեղ գտնուում է և Ախալցխայի բերդը»[284]:

Կառուցապատման առումով հին քաղաքամասի վիճակն անփոփոխ էր նաև 1878 թ. «Հին քաղաքը տեղադրված է ամֆիթատրոնաձև լեռան զառիվայրին, այնպես որ մի տան տանիքը մյուսի համար ծառայում է հարթակ, որտեղ կարելի է հասնել զանազան ոլոր-մոլոր արահետներով...»[285]:

Նույն թվականին նշվել է, որ քաղաքի «Տների առավել մեծ մասը կառուցված էր քարից: Դրանց հիմնական մասը, աննշան բացառություններով, երկհարկ էր, ըստ էության՝ միահարկ: Փողոցների թիվն Ախալցխայում 48-ն էր, հրապարակները՝ 5 և կամուրջները՝ 6»[286]:

1890 թ. այցելուն նշել է. «Հին թաղերի վրա բարձրանում է բերդը, որն այսօր հիվանդանոցի է վերածված: Այդ թաղերն առանձնանում են իրենց կիսագետնափոր և կիսավեր տներով, որոնք գտնվում են մի բլրի վրա...: Այդտեղ են բնակվում վրացիները, մուսուլմանները և հրեաները»[287]:

**Նոր քաղաքամասը.** Ախալցխայի նոր թաղամասի հիմնադրման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել 1830 թ. օգոստոսի 15-ին Ախալցըխայի գավառապետ Դրեշերնի, Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու, Եփրեմ վարդապետ

---

стройкам, по крышам саклей, служащих основою для других саклей; и здесь тоже попадающийся часто маленькие отверзтия для выхода из саклей дыма постоянно напоминают путнику, что он прогуливается не по площади, не по переулкам, по а крышам домов... Старый город, занимаюший взволнованную местность, расположился по направлению от запада к востоку. В этом направлении понижается вообще и местность, занимаемая означенною частью города”):

284 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1872, № 23, էջ 3:

285 **Сегаль И.**, նշվ. հոդվ., № 222, էջ 1 (բնագրում՝ “Старый город расположенный амфитеатром на покатости горы так, что крыша одного дома служит в то же время террасой другому, к которому можно добраться чуть-ли не ползком по различным зигзагообразным тропинкам...”).

286 **Сегаль И.**, նշվ. հոդվ., “Обзор”, 1878, № 223, էջ 1 (բնագրում՝ “Самое большое число домов выстроено из камня. Почти все они, за исключением самаго незначительнаго числа двухэтажных, суть одноэтажные. Улиц в Ахалцихе 48, площадей 5 и мостов 6”).

287 **Madame B. Chantre**, նշվ. աշխ., էջ 340 (բնագրում՝ “Les vieux quartiers, que domine la forteresse, aujourd’hui transformé en hôpital, se distingent par leurs maisons à demi souterraines et en partie ruinées, étagées contre une colline... C’est là qu’habitent les Géorgiens, les Musulmans et les Juifs”):



**Ախալցխա. Փոցխով գետի աջ ափին կառուցված քաղաքի նոր թաղամասը**

Սեթյանի, գաղթականների և զինվորականների մասնակցությամբ[288]: Ի դեպ, նորաբնակների ցանկությունը՝ քաղաքը կոչել Նոր Էրզրում, Պասկևիչը մերժել է:

Նորահիմն քաղաքամասի տեղում ի սկզբանե եղել էր Մարդա անունով մի փոքրիկ գյուղ, որը հիշվում է 1810 թ. պատերազմական գործողությունների առնչությամբ[289]:

Շինարարական աշխատանքները սկսվում են 1831 թ. նոր քաղաքամասի համար մշակված և ռուսաց կայսեր կողմից հաստատված նախագծի («պլան»-ի) հիման վրա, որի պատճառով էլ ստանում է Պլան անունը[290]: Այդ նախագիծն աչքի էր ընկնում լայն և ուղիղ փողոցներով, հավասարաչափ և կանոնավոր բաշխված հողահատկացումներով[291]:

Արդեն 1833 թ. Պլան թաղամասում վերաբնակիչ հայերը հասցրել էին մեծ ծավալի աշխատանք կատարել, բայց և անպակաս էին դժգոհությունները. «...հին քաղաքի բնակիչները չէին կարողանում լքել այն. նրանք այնտեղ մեծ շուկա ունեին, իրենց եկեղեցիները, սինագոգները, գերեզմանատներն այնտեղ էին, և ոչինչ չէր կարող ստիպել նրանց գնալ և բնակվել նոր քաղաքում: Իսկ նոր քաղաքի բնակիչները բողոքում էին, որ այնքա՞ն զոհողություններ են արել, բավականին մեծ նոր շուկա են կառուցել, տներ, իջևանատներ, և ոչ մի օգուտ չեն ստանում»[292]:

1830-ական թվականների սկզբին քաղաքի այդ հատվածի մասին նշվել է. «Նոր քաղաքը՝ հիմնադրված ռուսական կառավարության օրոք, գտնվում է Փոցխով գետի աջ կողմում՝ բավական հարմարավետ տեղում, առատ է մաքուր ջրով, ինչից զուրկ է հին քաղաքամասը: Բավական լայն և ուղիղ փողոցները զետեղված են ամրոցի աշտարակների ելուստների երկայնքով: Քարի անբավարարության հետևանքով տների մեծ մասը կառուցված է արևի տակ չորացրած ցեխի սալիկներից: Չնայած դրան՝ բավական ամուր են, բայց տգեղ և տեղի կլիմային (սաստիկ շոգեր չեն լինում, իսկ ձմեռը երկարատև է և ցուրտ) ոչ հարմար»[293]:

288 **Դարբինյան Մ.**, նշվ. հոդվ., «ԲԵՀ», 1973, № 2, էջ 215:

289 “Акты собранные Кавказскою археографическою коммиссиею”, том 4, Тифлис, 1870, с. 808 (այսուհետ՝ AKAK համապատասխան հատորի և էջերի նշումով, բնագրում՝ “...против кр. Ахалциха при дер. Марди...”).

290 AKAK, том 7, с. 851, док. 836. Տե՛ս նաև **Марутян А.**, նշվ. հոդվ., էջ 27:

291 **Ղաֆադարյան Կ.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1967, №1, էջ 120-121:

292 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 261 (բնագրում՝ “...les habitants de l’ancienne ville ne pouvaient se résoudre à l’abandonner; ils y avaient un grand bazar, leurs églises, leurs synagogues, leurs cimetières, et rien ne pouvait les engager à aller peupler la nouvelle ville, dont les habitants se plaignaient d’avoir fait tant de sacrifices, d’avoir établi un nouveau bazar assez considérable, des logements, des caravanserais, et de n’avoir nul profit”):

293 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 221 (բնագրում՝ “Новый город, получивший основание при русском правительстве, находится на правой стороне реки Посхо, на



**Ախալցխա. տեսարան**

1834 թ. նոյեմբերի 14 թվակիր նամակից երևում է, որ քաղաքի նոր մասում հաստատված հայերը ցանկանում էին կամուրջ կառուցել[294]:

1840-ական թվականների վերջերին նշվել է. «Ախալցիխեն ամբողջովին կառուցված է եղել բերդի կանոններով, մի գետի ձախ ափին: Քաղաքի անունը անցել էր նաև գետին: Այն այսօր բաժանված է երկու առանձին մասերի՝ հին քաղաքը՝ մի փոքր հեռու պարիսպներից՝ հրեական թաղամասով, որն ամբողջովին թաքնված է լեռան ծալքում, և նոր քաղաքը, որը հնի հետ միանում է փայտե կամրջով»[295]: Նոր թաղամասն արդեն ուշադրություն էր գրավում՝ որպես ավելի բարեշեն մաս. «Մյուս ափին նոր քաղաքն է՝ իր գեղեցիկ եվրոպական տներով, շուկայով և վարչական շենքերով»[296]:

1851 թ. քաղաքում կար 2363 տուն (այդ թվում 2236-ը՝ քարաշեն, 127-ը՝ փայտաշեն), 625 կրպակ, 18 փողոց, 4 հրապարակ և 7 կամուրջ[297]:

1872 թ. Ախալցխայի՝ արդեն շուրջ 40-ամյա թաղամասն այցելուին ներկայանում է հետևյալ կերպ. «Ճարտարապետության տեսանկյունից հին քաղաքամասի նկատմամբ քաղաքի նոր մասն ունի անվիճելի առավելություններ: Վերջին ժամանակներում հայտնվել են բավականին բարեկարգ տներ: Սակայն տների մեծ մասն ունի ասիական տեսք»[298]:

Հիշատակության արժանի է նույն թվականին վերաբերող մեկ այլ նկարագրություն ևս. «Շինութիւնները այստեղ ևս ըստ մեծի մասին ասիական ճաշակով շինուած են, բայց աւելի կանոնաւոր, փողոցները ընդարձակ, գրեթէ ամէն տուն ունի իւր մեծ կամ պարտէզը, մաքրութիւն երևում է ամէն մի փողոցում: Կան բաւականին լաւ շինութիւններ եւրոպական ճաշակով շինուած: Նոր մասի զարդերից

весьма выгодном месте, изобилующем чистою водою, — чего лишень старый город; довольно широкия и ровныя улицы расположены под продольными выстрелами крепостных батарей. Большая часть домов, по недостатку камня, выстроены из плиток грязи, высушенной на солнце,несмотря на это, они довольно прочны, но некрасивы и неудобны в тамошнем климате, где сильных жаров не бывает, а зимы продолжительны и холодны”).

294 Մատենադարան, թղթ. 1637, վավ. 1434, թ. 685:

295 Rapports (II) sur un voyage archéologique dans la Géorgie et dans l’Arménie executé (en 1847-1848) par **Brosset M.**, livre 2, St-Pb., 1850 (այսուհետ՝ **Brosset M.,** համապատասխան էջերով), էջ 118 (բնագրում՝ “Akhal-Tzikhé, construit autrefois tout entier sous le canon de la citadelle, sur la gauche d’une rivière à qui elle donnait son nom, se compose aujourd’hui de deux parties distinctes: la vieille ville, qui est un peu éloignée des remparts, avec le quartier juif, tout entier caché dans un pli de la montagne, et la nouvelle ville, commuiquant à l’ancienne par un pont de bois”):

296 **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 119 (բնագրում՝ “Sur l’autre rive est la nouvelle ville, avec ses jolies maisons européennes, son bazar et toutes les administrations”):

297 **Персваленко В.**, նշվ. հոդվ., էջ 283:

298 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 21 (բնագրում՝ “В архитектурном отношении новая часть города имеет неоспоримое преимущество пред старою. В последнее время явились довольно порядочные дома. Но большинство домов имеет азиятский характер”):



**Ախալցխա. տեսարան**

մինն էլ շատ փողոցներում վազած աղբյուրներն են, որոնք և գետից հեռու բնակողներին մեծ դյուրություն են տալիս»[299]:

Անցնող ժամանակի հետ քաղաքն ավելի ու ավելի էր բարեկարգվում: Այդ են վկայում տարբեր տարիներին ականատեսների գրավոր վկայությունները: 1884 թ. քաղաքի մասին նշվել է. «...կանոնաւոր փողոցներով և կիսով չափ հոյակապ շինուածներով. քաղաքի միջով անցնում է Փոցխով գետն, որ փոքր ինչ ներքև միանում է Կուրի հետ, Փոցխովի ձախ ափին է հին քաղաքն, ուր գլխաւորապէս բնակում են վրացիք, հրեայք և հայ կաթոլիկներ, այդ մասումն է և հին բերդը: Գետի աջ կողմը նոր քաղաքամասն է, ուր գլխավորապէս բնակում են հայերը»[300]:

ԺԹ դարի 80-ական թվականներին Ախալցխան բաղկացած էր հետևյալ թաղամասերից՝ Ռաբաթ (հրեական թաղամասն է եղել), Բախչա-սարայ, Վերին և Ներքին Մարդաներ, Վերին Պլան, քաղաքի Նոր մաս և երկու արվարձան[301]:

Հարկ է նշել, որ որոշ այցելուների, հակառակ քաղաքի դրական ակներև փոփոխությունների, իրականությունն այնքան էլ վառ գույներով չի ներկայացել. «Քաղաքն ունի միանգամայն արևելյան տեսք. տները փոքր են, ցածր, փայտաշեն կամ քարաշեն, հարթ տանիքներով, դեպի փողոցները ծածկված ելուստներով, ճակտոններում հարդարված ծանր քարերով: Ամենուրեք կրպակներ են, բացօթյա խոհանոցներ, փռեր, դերձակների արհեստանոցներ, վարսավիրանոցներ՝ տեղադրված բաց փեղկերի առջև ցածր կրպակ-վրաններով: Տների շուրջը փարթամ կանաչություն է՝ բազմաթիվ բրգաձև բարդիներով, բայց ընդհանուր առմամբ քաղաքն աչքի չընկնող է և կեղտոտ»[302]:

ԺԹ դարավերջին ավելի բարետես դարձած Պլան թաղամասի վերաբերյալ գրվել է. «Փոցխով գետի վրայ ձգուած փայտեայ կամուրջ մը կը միացնէ հին քաղաքը նորի (Պլան) հետ, ուր կան բաւական թւով նոր շինուած պալատներ, գեղեցիկ և ճաշակաւոր տներ, հարիւրաւոր կրպակներ, կարգաւորեալ փողոցներ, սրբատաշ քարէ եկեղեցիներ, բազմաթիւ աղբիւրներ, կարաւանատներ, բաղնիքներ, վարժարաններ, հասարակաց պարտէզ և այլն»[303]:

ԺԹ դարի վերջերին Ախալցխայում եղել է 20 փողոց, որոնցից գլխավորը կրում էր Միլիոնային

299 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1872, № 23, էջ 3:
300 «Արձագանք», 1885, № 4, էջ 57:
301 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 165:
302 “Материалы по археологии Кавказа”, выпуск IV, Москва, 1894, с. 75 (բնագրում՝ “Город с виду совершенно восточный: дома маленькие, низенькие, деревянные или каменные, с плоскими крышами, выступающими на улицу в виде навеса, с тяжелыми камнями в виде фронтона. Везде лавки под открытым воздухом: кухни, пекарни, портные, бородобреи, расположенные пред открытыми ставнями, на низких лавках-палатях; кругом домов значительное количество зелени, много пирамидальных тополей, но в общем город незначительный и грязный”).
303 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 59:



**Ախալցխա. տեսարան**

անունը: Վերջինս, որ բավական ուղիղ էր, խոնավ և կեղտոտ, ձգվում էր քաղաքի նոր հատվածով՝ կամրջից մինչև զինվորական հավաքատեղին[304]:

Հայտնի է, որ Ի դարասկզբին քաղաքում դեռևս կային «...շատ նշանաւոր փողոցներ, որոնք սալատակուած չեն» և անձրևների ժամանակ դառնում են անանցանելի[305]:

**Բնակելի տներ.** 1830-ական թվականներին քաղաքի բնակելի տներն իրենցից ներկայացնում էին հետևյալ պատկերը. «Համարյա բոլոր շինությունները երկհարկ էին և մասամբ կառուցված էին գերաններով, մասամբ էլ՝ չթրծած աղյուսով՝ դրսից սվաղված կավի հաստ շերտով: Դրանց հարթ տանիքները, որն ասիական շինությունների առանձնահատկությունն էր, տալիս էին բարձրադիր դարավանդի տեսք: Ընդհանրապես տները չունեին ոչ միայն դարպասներ, այլև դրանցից շատերը դրսի կողմից, հակառակ խանդոտ մահմեդականների սովորույթների, բացի պատուհաններից, հավելված էին բաց պատշգամբասրահներով: Ձիանոցները, ցախանոցները և ամեն տեսակի տնտեսական շինությունները զետեղված էին հատուկ կողաշենքերում՝ սերտորեն կցված գլխավոր կառույցին: Այսպիսով, առանձին վերցրած ցանկացած շինություն նմանվում էր ոչ մեծ ամրոցի...»[306]:

1880-ական թվականների վերջերին հին քաղաքամասում դեռևս գերակշռում էին հողե հարթ տանիքներով միահարկ տները[307]:

ԺԹ դարավերջին քաղաքի՝ հիմնականում միահարկ, փոքր բակերով և պարտեզներով քարաշեն տների կողքին եղել են նաև աղյուսե և փայտե սակավաթիվ շինություններ:

Պահպանված սակավաթիվ գլխատները, անընդհատ փոխարինվելով բնակելի նոր շենքերով, արդեն Ի դարի կեսերին բոլորովին անհետացել էին: 1980-ական թվականներին դրանցից այլևս ոչ մեկը գոյություն չուներ[308]:

---

304 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 166:

305 «Նոր-Դար», 1903, № 201, էջ 2:

306 **Ушаков Н.**, նշվ. աշխ., Варшава, 1843, ч. 1, էջ 285-286 (բնագրում՝ “Почти все строения возвышались в два яруса и были сложены, частью из деревянных срубов, частью из невыжженного кирпича и толсто обмазаны снаружи глиною. Горизонтальные их крыши, всегдашняя отличительность азиатских зданий, давали им вид возвышенных террас. Домы вообще не только не имели заборов, но многие с наружной стороны, вопреки обычаю ревнивых мусульман, были снабжены, кроме окошек открытыми галереями. Конюшни, сараи и всякого рода хозяйственные службы, помещались в особых флигелях, плотно сомкнутых с главным строением, таким образом, что всякое жилье, взятое отдельно, уподоблялось небольшому замку...”): Ըստ Պասկևիչի՝ Երևման Սբ. Խաչ եկեղեցու շրջակա տներն ունեին հարթ տանիքներ, իսկ քաղաքը բաղկացած է փողոցներ և հրապարակներ չունեցող, մի քանի հարկ կազմող միմյանց հետ կապված տներից (АКАК, т. 7, էջ 764-765): Գրեթե նույն տեղեկությունն է հաղորդել նաև Ի. Բուրցովը (”Кавказский сборник”, т. XXXI, Тифлис, 1911, էջ 147):

307 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 165:

308 **Марутян А.**, նշվ. հոդվ., էջ 26:



**Ախալցխա. գլխատուն, չափագրությունները արտատպված են** ***Сумбадзе Л.**, Архитектура грузинского народного жилища дарбази, (Тбилиси, 1984)* **աշխատությունից**







**Ախալցխա. քանդված գլխատներից մնացած բուխարու (օջախի) քարեր թանգարանի բակում**

Ախալցխայի բնակելի տների ուսումնասիրությամբ 1930-ական թվականներին զբաղվել են Լ. Սումբաձեն[309] և Ստ. Լիսիցյանը[310], 1980-ական թվականներին` Ա. Մարությանը [311] և այլք:

Ստորև ներկայացնում ենք Ախալցխայի տների արձանագրություններից մի քանիսը.

Արձանագրություն. Ճավճավաձե № 20 հասցեում գտնվող 1879 թ. կառուցված տան ճակատին` մարմարե սալիկին, հայերեն և ռուսերեն լեզուներով փորագրված է.

*Ի 1879 15ն մայիսի շինվեց այս տունըն մինչէվի սէկտնբէրի 15ն ավարտեցավ ի շինութիւնըս շինէցի Արութին Քացախեանցն ի սէփականիս համար:*

*Постройка собственнаго дома Арутюна Кацахова.*

*Հրատ.* **Марутян А.**, նշվ. հոդվ., էջ 32, ծան. 90:

Արձանագրություն. Օրբելիանի № 9 հասցեում գտնվող տան ճակատին.

*ՎԳԲ (Վահան Գրիգորի Բայբուրդյան). 1905:*

*Հրատ.* **Марутян А.**, նշվ. հոդվ., էջ 31-32:

Արձանագրություն. Մեսխեթի № 4 հասցեում գտնվող տան ճակատին.

*ԳԳ (Գրիգոր Գեղամյան):*

*Հրատ.* **Марутян А.**, նշվ. հոդվ., էջ 32:

Արձանագրություն. Ջափարիձե № 17 հասցեում գտնվող տան ճակատին.

*ԿՀԲ (Կարապետ Հարությունի Բազոյան):*

*Հրատ.* **Марутян А.**, նշվ. հոդվ., էջ 32:

Արձանագրություն չունեցող, սակայն անվանի ախալցխացիների տներից քաղաքում տակավին կանգուն են Լուսինե Զաքարյանի հայրական տունը (նախկին Չկալով, այժմ` Ե. Թաղիաշվիլի փ., տուն № 7), ինչպես նաև զինագործ Չիֆթալարյանների (նախկին Էնգելս, այժմ` Գամսախուրդիայի փ., № 34), Վարդգես Սուրենյանցի (նախկին Սաֆարյան, այժմ` Ծմինդա Քեթևան դեդոփլիսա, № 32) տները:

**Շուկա.** ԺԹ դարավերջին հին և նոր քաղաքամասերում գործել է մեկական շուկա, որոնք ներկայացրել են ասիական և եվրոպական շուկաների խառնուրդ[312]:

**Քաղաքային այգի Խասպախչա.** հիմնվել է 1900 թ.[313]:

**Քաղաքագլուխներ.** դարեր շարունակ և մինչև ռուսական տիրապետության հաստատումն Ախալցխայում քաղաքի կառավարիչը, ըստ էության,

309 **Сумбадзе Л.**, Архитектура грузинского народного жилища дарбази, Тбилиси, 1984.

310 **Варданян Л.**, նշվ. աշխ.:

311 **Марутян А.**, նշվ. հոդվ.:

312 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 197:

313 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 56:

եղել է կա՛մ իշխանը, կա՛մ փաշան, այն նույն անձը, որը, նստելով քաղաքում, տիրապետում էր ողջ գավառին կամ երկրամասին, ուստի քաղաքագլուխ երևույթն Ախալցխայում ի հայտ է գալիս միայն բնակավայրերի կառավարման ռուսական կարգերի հաստատումից հետո:

Սկզբում սոսկ քաղաքային ավագ, իսկ ավելի ուշ ուղղակի քաղաքագլխի պաշտոն վարած անձերի մասին մեզ հասու տվյալները սկիզբ են առնում 1843 թ.-ից՝ մահտեսի *Գևորգ Բաղդասարյանի* և *Հովհաննես Էփրիկյանի* մասին թռուցիկ հիշատակություններով[314]:

1875 թ. Ախալցխայի քաղաքային ավագն էր *Նիկոլայ Ալանղերը*[315]:

1876-1880 թվականներին Ախալցխայում քաղաքագլխի պաշտոնը վարում է ընդգծված ազգային նկարագրի և խոր գիտելիքների տեր *Հովակիմ Գեղամյանը*. «...Կովկասի փոխարքայի գլխաւոր կառավարութիւնը հիմնուելով պ. նահանգապետի միջնորդութեան վերայ պ. Յովակիմ Գեղամեանցին նշանակել է Ախալցխայում քաղաքագլուխ ի կողմանէ Տէրութեան՝ մինչև չորս տարի լրանալը (1876–1880). ժողովրդեան իրան իրաւունքն է տրվում ընտրել քաղաքագլուխ»[316]:

Հայրենիքի նկատմամբ տածած ջերմ սիրով և այն ավելի ու ավելի խորը ճանաչելու անսպառ ձգտումով ներշնչված՝ Հովակիմ Գեղամյանցը շրջագայել է հայրենիքի զանազան վայրերում և ժամանակի պարբերականների էջերում կամ առանձին գրքույկներով, գրքերով հրատարակել իր հավաքած այնքան արժեքավոր և ուսանելի նյութերը. «Հայկունի որ բուն անուամբ Յ. Գեղամեան կը կոչուի (երբեմն Ախլցխայի քաղաքագլուխն էր), գրած է բազմաթիւ ճանապարհորդական տպաւորութիւններ, որ կը պարունակեն պատմական կարեւոր տեղեկութիւններ այլ եւ այլ տեղերու Հայոց վրայ: Բաց աստի գրած ունի վէպ մը, Գինեդեւ, որ կը նկարագրէ Էրզրումի Հայոց գաղթականութիւնն դէպի Ախլցխա եւ Ալեքսանդրապոլ, եւ այլ պատմական կարեւոր տեղեկութիւններ»[317]:

Ի դեպ, 1879 թ. ապրիլի 30-ին Ախալցխայի զինվորական ակումբում, հօգուտ «Արարատյան» ընկերության, բեմադրվել է «Ջէնիաք-Դէնիաք» ողբերգությունը, որի «շնորհալի հեղինակը նոյն պ. Գեղամեանն էր, Ախալցխայի այժմեան քաղաքագուխը»[318]:

Հայկունու բարեկամներն իր գաղափարակից և հոգեհարազատ ընկերներն էին՝ ժամանակի մտավորականության սերուցքը: Նրա մասին նրանք թողել են բազմաթիվ վկայություններ իրենց հուշերում: Օրինակ, Գրիգոր Նիկողոսյանը (Մազդա Նեյման), իր հուշերում անդրադառնալով 1880 թ. Ախալցխայում անցկացրած զինվորական ծառայության օրերին, նշել է, թե հյուրընկալվել էր «Ախալցխայի քաղաքագլուխ՝ Յովակիմ Գեղամեանցի (այժմ՝ արժ. Եղիշէ ա. ք. Գեղամեանց)»-ի՝ տանը[319]:



Յովակիմ (Եղիշէ ավագ քահանա, Յայկունի) Գեղամյանց

1881 թ. հունվարի 8-ին հաջորդելով Հովակիմ Գեղամյանցին՝ Ախալցխայի քաղաքագլուխ է ընտրվում *Հովհաննես Մութաֆյանը*. «Յունուարի 8-ին Ախալցխայի քաղաքային խորհրդարանում 33 իրաւասուների ներկայութեամբ կայացաւ նոր քաղաքագլխի ընտրութիւնը: Կանդիտատներ առաջարկուեցան պպ. Յովակիմ Գեղամեանց (հին քաղաքագլուխը) 20 ձայնով, Յովհաննէս Մութաֆեանց 7 ձայնով, Կոստանդին Մեփիսով 5 ձայնով, Գրիգոր Պուտուզեանց և Պաւլէ Բեքանով մէկ մէկ ձայնով: Պպ. Գեղամեանց, Պուտուզեանց և Բեքանով քուէարկուելից հրաժարուեցան, իսկ քուէարկութեան ենթարկուող պպ. Մութաֆեանից և Մեփիսովից առաջինը ստացաւ 18 սպիտակ, 15 սև զնդակ, իսկ երկրորդը՝ 22 սև և 10 սպիտակ: Այդպէ-

314 **Ղաֆադարյան Կ. Գ.**, նշվ. հոդվ., «ԲԵՀ», 1967, № 3, էջ 173:

315 “Кавказский календарь на 1876 г.”, с. 28.

316 «Մեղու Հայաստանի», 1879, № 11, էջ 4:

317 **Պ. Տ.**, Թիֆլիս կէս դար առաջ եւ այժմ, «Մասիս», 1886, № 3809, էջ 679:

318 **Նիկողոսեան Գ.**, Նամակ Ախալցխայից, «Մշակ», 1879, № 69, էջ 1: Ներկայացման մասին տե՛ս նաև **Ոմն** (Գեղամյան Եղիշե քահ.), Նամակ խմբագրին, «Մշակ», 1879, № 72, էջ 2:

319 **Նիկողոսեան Գ.**, Իմ յիշողութիւններից, «Հովիտ», 1910, № 9, էջ 136: Տե՛ս նաև **Գեղամեանց Ե.**, նշվ. հոդվ., «Հովիւ», 1908, № 41, էջ 650:

սով, պ. Յովհաննէսեան Մութաֆեանցը ընտրուեցաւ Ախալցխայի քաղաքագլուխ»[320]:

1881 թ. փետրվարի 25-ին Ախալցխայի քաղաքային խորհուրդը նորընծա քաղաքագլխին հաստատում է իր պաշտոնում, իսկ վարչության անդամներ ընտրում Հովակիմ Գեղամյանցին, Հարություն Հարությունյանցին և Մկրտիչ Ալիխանյանցին[321]:

1890 թ. հունվարի 11-ին քաղաքագլուխ է ընտրվում *Նիկողայոս Եսայան Տեր-Գրիգորյանցը*[322]: Հայտնի է, որ 1891 թ. նա ընտրվել է Սբ. Ստեփանոս եկեղեցու վերաշինության համար ստեղծված հոգաբարձուների խորհրդի կազմում[323]: Քաղաքագլխի պաշտոնը վարել է մինչև 1894 թ., երբ իշխանություններն Ախալցխայում լուծարում են այդ պաշտոնը՝ այն փոխարինելով քաղաքային ավագի պաշտոնով. «Ինչպէս յայտնի է, Ախալցխայում իշխանութեան կարգադրութեամբ, այլ ևս քաղաքագլուխ չէ լինելու, այլ դրա փոխարէն ընտրուելու է քաղաքային աւագ...»[324]:

Կարգավիճակի փոփոխությունից հետո, արդեն որպես քաղաքային ավագ՝ Ն. Տեր-Գրիգորյանցը շարունակում է իր պաշտոնավարությունը մինչև 1896 թ.[325], երբ նշյալ պաշտոնում նրան փոխարինում է *Գրիգոր Մովսեսյանը*[326]: Վերջինիս վերապահված էր քաղաքը կառավարել բացառիկ տևական մի ժամանակահատված՝ ավելի քան երկու տասնամյակ:

1901 թ. քաղաքային ավագ Գրիգոր Մովսեսյանի օգնականն էր Հարություն Բաղդասարյան Ղազարոսյանցը, իսկ 1899 թ.-ից 15 անդամով հաստատված Քաղաքային խորհրդի կազմում հիշվում են հետևյալ անձինք՝ քաղ. ավ. Գրիգոր Մովսեսյանը, Գրիգոր Հակոբյան Չաքալբաշյանցը, Մանուկ Նիկիտյան Մովսեսյանցը, Հարություն Բաղդասարյան Ղազարոսյանցը, Գրիգոր Հովհաննիսյան Բագրատունին, Հակոբ Կարապետյան Ղասաբաշյանցը, Գրիգոր Հովհաննիսյան Բուդաղյանցը, Կարապետ Մարտիրոսյան Մարուքյանցը, Մանուկ Գալստյան Կանցյանցը, Եվգենի Դմիտրյան Աքաբեկյանցը, Վաղարշակ Հովհաննիսյան Հակոբջանյանցը, Մանուկ Մինասյան Կյուլբենկյանցը, Դավիթ Մեծոյան Կուփալյանցը, Մկրտիչ Գրիգորյան Ղալամքարյանցը և Գեորգ Կոստանտինի Կսանտոպուլոն (վերջինս ողջ կազմի միակ այլազգին էր)[327]:

Մերթ քաղաքային ավագի, մերթ քաղաքագլխի պաշտոնի վարման կապակցությամբ Գրիգոր Մովսեսյանը հիշվում է 1903[328], 1910[329], 1913 թվականներին[330], իսկ 1914 թ. «Թիֆլիսի նահանգապետը Ախալցխայի քաղաքագլխի պաշտօնում հաստատել է Գրիգոր Մովսիսեանին, իսկ նրա օգնական՝ Յարութիւն Ղազարոսեանին, չորս տարի ժամանակով»[331], որը, սակայն, 1916 թ. սկզբին հրաժարվում է պաշտոնից[332]:

Գրիգոր Մովսեսյանը քաղաքային ավագի (քաղաքագլուխ) պաշտոնը վարում է մինչև 1917 թ. նոյեմբերը[333]:

1917 թ. հոկտեմբերին քաղաքագլխի օգնական է ընտրվում հարկային տեսչի գործավար Միքայել Այվազյանը[334], իսկ նոյեմբերի վերջին քաղաքագլխի պաշտոնը ստանձնում է Ջորի Ջորյանը[335]: Նա այդ պաշտոնում ընտրվում է 1917 թ. նոյեմբերի 7-ին կայացած Քաղաքային դումայի նիստում (ներկայացված միակ թեկնածուն էր. անցնում է գաղտնի քվեարկությամբ՝ 17 կողմ, 1 դեմ, 2 ձեռնպահ)[336], իսկ մինչ այդ թեկնածու բժիշկ Գր. Սաղյանը հրաժարվել էր (թեկնածուների թվում էին նաև երդվյալ հավատարմատար Գ. Խատիսյանը, իրավաբան Հ. Յաղջյանը և Կ. Ղազազյանը)[337]: Նոյեմբերի 24-ին նորընտիր քաղաքագլուխը ժամանում է Ախալցխա, որտեղ նրան ցույց են տալիս ջերմ ընդունելություն[338]:

1918 թ. Ջորի Ջորյանը կարողանում է կազմակերպել և գլխավորում է Ախալցխայի ինքնապաշտպանությունը[339]: Հայտնի է, որ «...Ջորեանը մնացել է իր պաշտօնի մէջ մինչև թիւրքերի քաղաք մտնելը:

320 «Մեղու Հայաստանի», 1881, № 3, էջ 3: Ամենայն հավանականությամբ, սա այն Մութաֆյանն էր, որն ուղեկցել էր ճանապարհորդ-հետազոտող տիկ. Շանթրին. «Այս քաղաքում բնակվող հայերի մեծ մասը ծագումով Էրզրումից են: Պ. Մութաֆյանը, որի ընտանիքը գաղթել է հենց Թուրքիայից, այստեղ դեռ ունի իր հայրական տունը, որտեղ ջերմ հյուրասիրություն է ցույց տալիս մեզ» (**Madame B. Chantre**, նշվ. աշխ., էջ 341 (բնագրում՝ “La plupart des Arméniens fixés dans cette ville sont originaires d’Erzeroum. M. Moutaffian, dont la famille a précisément émigré de Turquie, y possède encore la maison paternelle, où il nous offre une cordiale hospitalité”):

321 «Մեղու Հայաստանի», 1881, № 35, էջ 3:

322 «Մշակ», 1890, № 6, էջ 3:

323 «Արձագանք», 1891, № 12, էջ 179:

324 «Նոր-Դար», 1894, № 135, 13 օգոստոս:

325 “Кавказский календарь на 1897 г.”, с. 108.

326 “Кавказский календарь на 1899 г.”, с. 118.

327 “Кавказский календарь на 1902 г.”, с. 148.

328 «Նոր-Դար», 1903, № 79, էջ 2:

329 “Закавказье”, 1910, № 146, էջ 3: Տե՛ս նաև “Кавказский календарь на 1909 г.”, с. 162.

330 «Մշակ», 1913, № 263, էջ 3:

331 «Մշակ», 1914, № 45, էջ 3:

332 «Համբաւաբեր», 1916, № 7, էջ 209:

333 «Համբաւաբեր», 1917, № 6, էջ 137:

334 «Շարժում», 1917, № 20, էջ 4:

335 Ջորի Ջորյանը ծնվել է 1886 թ, Թիֆլիսում: Հայրը Գողթնի Ցղնա գյուղից էր, մայրը՝ թիֆլիսեցի: Մինչ Ախալցխայի քաղաքագլուխ հրավիրվելն ու ընտրվելը Ջ. Ջորյանն ութ տարի եղել է Թիֆլիսի Քաղաքային դումայի ձայնավոր: Ստալինյան բռնատիրության տարիներին աքսորվում է՝ աքսորավայրում անցկացնելով 3 տարի: Ջոհվել է 1943 թ.-ին ավտովթարից Թբիլիսիում (Ով ով է. հայեր, կենսագրական հանրագիտարան, հ. 1, Երևան, 2005, էջ 402):

336 «Շարժում», 1917, № 25, էջ 2:

337 «Շարժում», 1917, № 21, էջ 4 և № 23, էջ 2:

338 «Շարժում», 1917, № 29, էջ 2:

339 **Սանոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 24-25:

Թիւրքերը քաղաքը տիրելով՝ շնորհակալութիւն են յայտնել նրան, որ իր պաշտօնը չի թողել ուրիշ քաղաքների քաղաքագլուխների նման, և խնդրել են մնալ իր պաշտօնում»[340]:

Զ. Զորյանը քաղաքագլխի պաշտոնը վարում է մինչև 1921 թ. գարունը:

**Բնակչություն.** ենթադրելի է, որ Ախալցխան հայ բնակչություն ունեցել է իր սկզբնավորման ժամանակից ի վեր: Համենայն դեպս այդ են փաստում քաղաքի տարածքում ցարդ պահպանված հայկական միջնադարյան մի քանի գերեզմանոցները:

Հայերն Ախալցխայում հաստատված կարող էին լինել նաև ի հաշիվ հարևան հայաբնակ Ջավախքից փոխադրվածների, իսկ ԺԴ դարից հետո նաև, ինչպես ավանդաբար վկայվում է, այն անեցիների, որոնք նախ հաստատվել էին Գորիում, ապա մի մասով փոխադրվել Ախալցխա[341]:

Համաձայն 1595 թ. օսմանյան կառավարության կազմած հարկացուցակի՝ Ախալցխան մասամբ հայաբնակ էր: Դա երևում է ցանկում առկա հետևյալ անձնանուններից՝ Ներսես քահանայի որդի Յասա, Ջանիդարի որդի Ռոստոմ, նրա որդիներ Անդրանիկ և Աղդգոմել, Միհրանի որդի Ծահվել, նրա որդի Աստվածատուր, Դավթի որդի Աստվածատուր, նրա եղբայր Միրվել, Գաբեղի որդի Մանվել, նրա որդի Աղդգոմել, Սարգսի որդի Գոզալ, Հուսիկի որդի Ղուզան, նրա եղբայր Գրիգոր, Ազարի որդի Սիմանգուլ, նրա եղբայր Մկրտիչ, նրա որդի Իսկանդար, Խուդադի որդի Հովհան, նրա եղբայրներ Արտաշես և Յասա, Խաչատուրի որդի Գոզալ, Ծամալի որդի Բաքար, նրա որդի Աստվածատուր, եղբայր Վարազգուլ, Ավագի որդի Աստվածատուր, նրա եղբայրներ Բայանդուր և Մայսուր, Գոզալի որդի Թոռնիկ, Դուրալի որդի Խաչատուր, նրա որդի Իսկանդար, Ղանդուլայի որդի Յարալ, նրա եղբայր Աստվածատուր, Աստվածատուրի որդի Միքենդեր, Սարգսի որդի Մինաս, նրա եղբայր Աստվածատուր, Ղազարի որդի Արմեն, նրա եղբայր Գոզալ, Սարգսի որդի Մայսուր, նրա եղբայր Գոզալ, Պարոնի որդի Հովսեփ, Մուրվազի որդի Ղազար և այլն[342]:

Քաղաքի բնակչության ազգային կազմի մասին թերևս առաջին ուղղակի հիշատակությունը գտնում ենք 1745 թ. վրաց արքայազն Վախուշտի Բագրատիոնի մոտ. «Ախալցիխեի բնակիչներն են մեծամեծ և երևելի մահմեդականներ և վաճառականներ: [Այստեղ] բնակվում են նաև հայեր, հրեաներ և մասամբ մեսխեր ևս...»[343]:

ԺԸ դարի վերջերին Ախալցխա քաղաքն ուներ շուրջ 30000 շունչ բնակիչ, «որք են տաճիկք, վիրք, և յազգէս հայոց առաւել քան զվիրս»[344]: «...սակաւ ըստ մեծութեան նորա, յորս ըստ մեծի մասին երևին ցայժմ մենաստանք և եկեղեցիք մեծաշէնք, այլ կամ լքեալք և կամ քայքայեալք: Բնակիչք նոցա ըստ մեծի մասին տաճիկք, դարձեալ գրեթէ առհասարակ կամ ՚ի հայոց և կամ ՚ի վրաց»[345]: Ի դեպ, այնուհետև շեշտվել է, որ Ախալցխայի քրիստոնեաբնակ գյուղերի բնակիչների զգալի մասը ծագումով հայ է. «...գիւղօրէք բնակեալք մինչև ցայժմ ՚ի քրիստոնէից հայոց, նաև ՚ի վրաց, որք գրեթէ առհասարակ սերեալ երևին ի հայկազեանց»[346]:

ԺԹ դարի առաջին քառորդի ընթացքում ինչպես ողջ սանջակն ընդհանրապես, այնպես էլ և հատկապես Ախալցխան Օսմանյան տերության արևելյան առավել աչքի ընկնող բարգավաճ, վաճառաշահ և մարդաշատ քաղաքներից էր:

1806 թ. քաղաքի բնակիչների թվում, ըստ թվաքանակի, հիշվում են թուրքերը, հայերը և վրացիները[347]:

1820 թ. Ախալցխան ուներ շուրջ 40000 բնակիչ. «Այս քաղաքի բնակչության թիվը կարող է կազմել 40000: Բնակչության մեծ մասը թուրք է: Հայերը, վրացիները և հույները փոքրաթիվ են ինչպես քաղաքում, այնպես էլ շրջակա գյուղերում: Նրանք ունեն իրենց եկեղեցիները և սինագոգները, իրենց քահանաները և ռաբբիները»[348]:

1828 թ. ականատեսը քաղաքի բնակչության կազմի մասին նշել է. «...բնակեցված էր բացառապես հրեաներով, հայերով և կաթոլիկներով»[349]:

Ինչ վերաբերում է ոչ մահմեդականներին, ապա նրանցից «...Ախալցխայում մնացին միմիայն 10 տուն լուսաւորչական, 40-50 տան չափ հռովմէական (կաթոլիկ) հայեր, 200 տան չափ հրէաներ և մի քանի տուն էլ վրացիներ»[350]:

1831 թ. քաղաքաբնակների ազգային կազմը ներկայացրել է հետևյալ պատկերը[351].

| *Բնակչության կազմը* | *ծուխ* | *ար.* |
|---|---|---|
| հունադավան վրացիներ | 44 | 94 |
| հայ կաթողիկեներ | 385 | 623 |
| հայ առաքելականներ | 26 | 64 |

340 «Մշակ», 1918, № 117, էջ 2:

341 **Ղաֆադարյան Կ.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1967, № 1, էջ 118:

342 გურჯისტანის ვილაიეთის დიდი დავტარი ..., თბილისი, 1941, էջ 22-24:

343 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները..., Գ, էջ 84:

344 **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Վենետիկ, 1806, էջ 124:

345 Նույն տեղում, էջ 125:

346 Նույն տեղում, էջ 123:

347 «Նոր-Դար», 1903, № 19, էջ 1:

348 **Chevalier Gamba**, նշվ. աշխ., էջ 403 (բնագրում՝ “La population de cette ville peut s’élever à quarante mille âmes. Les Turcs en forment la majeure partie. Les Arméniens, les Géorgiens et les Juifs sont en petit nombre, soit dans la ville, soit dans les villages environnants. Les uns et les autres ont leurs églises et leurs synagogues, leurs prêtres et leurs rabbins”):

349 **Ушаков Н.**, նշվ. աշխ., Варшава, 1843, ч. 1, էջ 285 (բնագրում՝ “...населены были исключительно жидами, армянами и католиками”).

350 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 29:

351 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 219: Տե՛ս նաև **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 263): **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 58: «Նոր-Դար», 1903, № 19, էջ 1:

| | | |
|---|---|---|
| իրեաներ | 117 | 327 |
| մահմեդականներ | 24 | 42 |
| գաղթական հայ առաք. | 1542 | 4001 |
| գաղթական հայ կաթոլիկե | 130 | 296 |
| *ընդամենը* | 2268 | 5447 |

1831 թ. Ախալցխա քաղաքն ուներ 2734 տուն և 5864 բնակիչ[352]:

1835 թ. Ախալցխայում կար 13000 բնակիչ[353], ներառյալ կայազորը՝ 16000 շունչ[354]:

1851 թ. քաղաքն ուներ 12376 բնակիչ[355], այդ թվում.

| *Ազգությունը* | *շունչ* | *%* |
|---|---|---|
| Հայեր | 7811[356] | 63,1 |
| Հրեաներ | 733 | 5,9 |
| Վրացիներ, ռուս. | 3814 | 30,8 |
| Թուրքեր | 18 | 0,1 |

1865 թ. Ախալցխան ուներ 11617[357], իսկ 1866 թ.՝ 16116 բնակիչ[358]:

1868 թ. Ախալցխայի նահանգի (նույնն է, թե Ախալցխա քաղաքի, քանի որ նահանգի տարածքում ուրիշ քաղաք դեռևս չկար) քաղաքային բնակչությունը կազմում էր 13545 շունչ (7095 ար., 6450 իգ.)[359]:

1872 թ. «Հին քաղաքում բնակում են հրէայք 1500 թուով, վրացիք 200 թուով, կաթօլիկներ 1800 թուով և բաւական հայ գերդաստան, որոց թիւը միացրած է նոր քաղաքի հայերի թուի հետ»[360]:

1873 թ. քաղաքաբնակների ազգային կազմի մասին նշվել է. «Ախալցխայի բնակչության հիմնական մասը հայեր են, բայց քիչ չեն հրեաները և օսմանցիները...»[361]:

Նույն թվականին քաղաքն ուներ 2600 տուն՝ 13265 շունչ բազմազգ բնակչություն[362]:

| *Ազգությունը* | *շունչ* | *%* |
|---|---|---|
| Հայեր | 10702 | 80,6 |
| Հրեաներ | 1972 | 14,8 |
| Վրացիներ | 364 | 2,7 |
| Ռուսներ | 138 | 1,0 |
| Հույներ | 57 | 0,4 |
| Թուրքեր | 30 | 0,2 |
| Լեհ | 2 | 0,01 |

1876 թ. Ախալցխայում կար 2599 տուն՝ 13111 շունչ բազմազգ բնակչություն[363]:

| *Ազգությունը* | *տուն* | *շունչ* | *%* |
|---|---|---|---|
| Հայեր | 2031 | 10420 | 74,5 |
| Հրեաներ | 379 | 1986 | 15,1 |
| Վրացիներ | 89 | 383 | 2,9 |
| Ռուսներ | 41 | 80 | 0,6 |
| Հույներ | 13 | 57 | 0,4 |
| Թուրքեր | 4 | 25 | 0,2 |
| Ազնվ. և աստիճ. | 42 | 160 | 1,2 |

1878 թ. քաղաքում հիշվում է 2600 տուն[364]:

1881 թ. Ախալցխայում բնակվում էր 12000 հայ բնակիչ (6310 ար. և 5690 իգ.), իսկ գյուղերում՝ 1298 ար. և 1250 իգ. հայ: Արդյունքում՝ Ախալցխա գավառում 1881 թ. հայերի թիվը կազմում էր 14548 անձ (7608 ար. և 6940 իգ.)[365]:

1884 թ. քաղաքն ուներ 2827 տուն՝ 14216 շունչ բազմազգ բնակչություն[366]: Ըստ ազգությունների բաշխման՝ պատկերը հետևյալն է.

| *Ազգությունը* | *տուն* | *շունչ* | *%* |
|---|---|---|---|
| Հայեր | 2508 | 11878 | 83,5 |
| այդ թվում՝ հայ կաթոլիկեներ | | | |
| | 509 | 2938 | 20,6 |
| Հրեաներ | 377 | 1812 | 12,7 |
| Վրացիներ և ռուս. | 138 | 501 | 3,5 |
| Թուրքեր | 4 | 25 | 0,2 |

1886 թ. քաղաքն ուներ 2500 ընտանիք՝ 12500 բնակիչ, այդ թվում՝ հայեր՝ 1699 տուն՝ 8502 (4291 ար. և 4211 իգ.), վրացիներ՝ 436 տուն՝ 2239 (1082 ար. և 1157 իգ.), իրեաներ՝ 340 տուն՝ 1655 (846 ար. և 809 իգ.), ռուսներ՝ 11 տուն՝ 46 (20 ար. և 26 իգ.) և այլազգիներ՝ 14 տուն՝ 58 (34 ար. և 24 իգ.) անձ[367]:

1891 թ. «Բնակչաց ճիշտ 4/5 մասը, այն է 80% հայ է Ախալցխայում, ուր 16,116 բնակչից 12,496-ը հայեր են»[368]:

Հայտնի է, որ Ախալցխայի հայ բնակչության թվաքանակի նվազումը կապված էր նաև արտագաղթի հետ: Այսպես, 1892 թ. թղթակից Հ. Մալխասյանը գրել է, որ Խաշուրի շրջանի Սուրամի հայերի թիվն ավելացել է նաև ախալցխացիների շնորհիվ և ավելացրել է, թե «Ախալցխայից գաղթողներ թէև ուշ-ուշ, բայց շարունակ նկատւում են...»[369]:

1897 թ. քաղաքն ուներ 15387 բնակիչ[370]:

Նույն թվականի մեկ այլ աղբյուրի մեջ քաղաքի բնակչության վերաբերյալ գրվել է, որ «...Ռաբա-

352 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 367:

353 **Евецкий О.**, Статистическое описание Закавказского края, СПБ, 1835, с. 187-188. Տե՛ս նաև **Махарадзе Ф.**, Грузия в XIX столетии, 1933, с. 68.

354 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 263:

355 **Персваленко В.**, նշվ. հոդվ., էջ 285:

356 Այդ թվում 521 շունչ հայ կաթողիկեներ:

357 **Махарадзе Ф.**, նշվ. աշխ., էջ 68:

358 Նույն տեղում:

359 “Кавказский календарь на 1870 г.”, с. 406-407.

360 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1872, № 23, էջ 3:

361 “Кавказ”, 1873, № 115 (ընդգրկում՝ “Население Ахалциха главным образом армянское, но есть не мало евреев и осман...”).

362 **Сегаль И.**, նշվ. հոդվ., “Обзор”, 1878, № 223, էջ 1:

363 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 430:

364 **Сегаль И.**, նույն տեղում:

365 «Մեղու Հայաստանի», 1881, № 15, էջ 3:

366 «Արձագանք», 1885, № 4, էջ 57-58: Հրատարակության մեջ առկա է տպագրական բացահայտ վրիպակ, այն է՝ հայերի թվաքանակը, փոխանակ 11878-ի՝ սխալմամբ տպված է 3278:

367 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 204:

368 **Ա. Յ.** (Հովհաննիսյան Արզար), Անդրկովկասի քաղաքների հայ ազգաբնակությունը, «Արձագանք», 1891, № 2, էջ 18:

369 «Նոր-Դար», 1892, № 14, էջ 3:

370 **Махарадзе Ф.**, նույն տեղում:

ԺԹ-Ի դարերում Ախալցխա քաղաքում բնակչության թվաքանակի փոփոխությունները, ըստ վիճակագրական մի քանի տվյալների համադրման, ներկայացնում են հետևյալ պատկերը.

| Տարեթիվ | հայեր | % | վրացիներ | % | ռուսներ | % | հրեաներ. | % | ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1820[371] | | | | | | | | | 40000 |
| 1833[372] | | | | | | | | | 11000 |
| 1835[373] | | | | | | | | | 13000 |
| 1851[374] | 7811 | 63,1 | | | | | | | 12376 |
| 1865[375] | | | | | | | | | 11617 |
| 1873[376] | 10702 | 80,6 | 364 | 2,7 | 138 | 1,0 | 1972 | 14,8 | 13265 |
| 1876[377] | 10420 | 74,5 | 383 | 2,9 | 80 | 0,6 | 1986 | 15,1 | 13111 |
| 1884[378] | 11878 | 83,5 | | | | | 1812 | 12,7 | 14216 |
| 1886[379] | 10417 | 64,6 | 2730 | 16,9 | 146 | 0,9 | 2545 | 15,8 | 16116 |
| 1893[380] | 12495 | 78,0 | | | | | 2540 | 15,9 | 16004 |
| 1896[381] | | | | | | | | | 17900 |
| 1897[382] | | | | | | | | | 15387 |
| 1916[383] | 18165 | 71,3 | | | | | | | 25470 |
| 1917[384] | 15031 | 78,2 | 1075 | | 470 | | 2322 | | 19220 |
| 1979[385] | 10278 | 52,5 | 5714 | 29,2 | | | | | 19587 |

թում բնակվում են ուղղափառ վրացիներ և կաթոլիկներ, հրեաներ, հույներ, նաև՝ հայեր, իսկ քաղաքի նոր թաղում՝ հայեր, ռուսներ և սակավաթիվ վրացիներ: Թվապես նախ գալիս են հայերը, ապա վրացիները, հրեաները, ռուսներն ու հույները»[386]:

1905 թ. Ախալցխայում կար 19220 բնակիչ, որից հայերը կազմում էին 15031 շունչ (7862 ար. և 7169 իգ.), հրեաները՝ 2322 (1296 ար. և 1026 իգ.), վրացիները՝ 1075 (544 ար. և 531 իգ.), ռուսները՝ 470 (260 ար. և 210 իգ.), հույները՝ 116 (60 ար. և 56 իգ.), գնչուները՝ 111 (60 ար. և 51 իգ.), թաթարները՝ 30 (18 ար. և 12 իգ.), լեհերն ու գերմանացիները՝ 29 (18 ար. և 11 իգ.), չեչենները՝ 16 (10 ար. և 6 իգ.), լեզգիները՝ 10 ար. և քրդերը՝ 10 ար.[387]:

1908 թ. Ախալցխան ուներ 20780 բնակիչ[388]:

1913 թ. քաղաքում կար 18000-ից ավելի հայ, շուրջ 2000 վրացի, 3000 վրացախոս հրեա, 26 թուրք և 733 այլազգ (ռուս, հույն, լեհ, եզդի և այլն)[389]:

1926 թ. Ախալցխայում բնակվում էր 6.516 հայ: Նրանք կազմում էին քաղաքի բնակչության 52.8 տոկոսը[390]:

1939 թ. Ախալցխան ուներ 55490 բնակիչ, որից 28428-ը (51,2 %) թուրքեր էին, 16454-ը (29,7 %)՝ հայեր, 5836-ը (10,5 %)՝ վրացիներ, 1538-ը (2,8 %)՝ ռուսներ, 1423-ը (2,6 %)՝ քրդեր[394]:

1959 թ. քաղաքն ուներ 50430 բնակիչ, որից 25753-ը (51,1 %) հայեր էին, 18878-ը (37,4 %)՝ վրացիներ, 3684-ը (7,3 %)՝ ռուսներ և 2115-ը (4,2 %)՝ այլազգիներ[392], իսկ 1979 թ.՝ 19587 բնակիչ (10278 հայ և 5714 վրացի)[393]:

**Հայ առաքելականներ.** ինչպես գրավոր, այնպես էլ նյութական մշակույթի հուշարձանները փաստում են, որ հայերը քաղաքում հաստատվել են քաղաքի սկզբնավորման ժամանակներից ի վեր: Առնվազն ԺԵ դարում հայերն Ախալցխայում արդեն հոծ թիվ էին կազմում: Հարևան երկրամասերի հետ առևտրատնտեսական հարաբերություններ

371 **Chevalier Gamba**, նշվ. աշխ., էջ 403: Տե՛ս նաև **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 15:
372 **Լինչ Ֆ.**, Հայաստան. ուղևորութիւններ և ուսումնասիրութիւններ, հ. Ա, թարգմ.՝ Լ. Լարենցի, Կ.Պոլիս, 1913, էջ 31:
373 **Евецкий О.**, նշվ. աշխ., էջ 187-188:
374 **Персваленко В.**, նշվ. աշխ., էջ 285:
375 **Махарадзе Ф.**, նշվ. աշխ., էջ 68:
376 **Сегаль И.**, նշվ. հոդվ., "Обзор", 1878, № 223, էջ 1:
377 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 430:
378 «Արձագանք», 1885, № 4, էջ 57-58:
379 "Кавказский календарь на 1897 г.", Тифлис, 1896, с. 52-53; "Кавказский календарь на 1894 г.", Тифлис, 1893, с. 154; "Кавказский календарь на 1898 г.", Тифлис, 1897, с. 22-23.
380 **Լինչ Ֆ.**, նշվ. աշխ., էջ 29: Ի դեպ, նույն թվականին քաղաքբնակ վրացիներն ու ռուսները միասին կազմում էին 872 շունչ, լատինները կամ հռոմեական կաթողիկեները՝ 97 շունչ: Ինչ վերաբերում է հայերին, ապա 12495 շնչից 9620-ը հայ առաքելականներ էին, իսկ 2875-ը՝ հայ կաթողիկեներ:
381 "Кавказский календарь на 1898 г.", Тифлис, 1897, с. 22-23.
382 **Махарадзе Ф.**, նույն տեղում:
383 "Кавказский календарь на 1917 г.", Тифлис, 1916, с. 190-193.
384 "Кавказский календарь на 1908 г.", с. 325-326.
385 Ըստ համամիութենական մարդահամարի տվյալների:
386 ივერია, 1897, № 178, էջ 2-3:

387 "Кавказский календарь на 1908 г.", Тифлис, 1907, с. 325-326.
388 "Кавказский календарь на 1910 г.", с. 1910.
389 **Ղաֆադարյան Կ.**, նշվ. հոդվ., «ԲՀԱ», 1988, № 1, էջ 143:
390 **Ալեքսանյան Հովհ.**, նշվ. հոդվ., էջ 101:
391 **Մինասյան Ս.**, Ջավախքի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը ներկա փուլում, «21-րդ դար», 2005, № 1, էջ 49:
392 Նույն տեղում, էջ 50:
393 Ըստ Համամիութենական մարդահամարի տվյալների:

ծավալելու շնորհիվ նրանք ձեռք էին բերել ոչ միայն նյութական կարողություններ, այլև ծաղկեցրել էին էին մշակույթը, ի մասնավորի՝ հայ դպրությունը:

Խնդրո առթիվ ֆրանսիացի հետազոտողը նշել է. «Թիմուրի կյանքի բազմաթիվ դրվագները հայ հեղինակ Թովմա Մեծոփեցու գործերում վկայում են, որ հայերը, եթե ոչ կաթողիկեները, ԺԵ դարի վերջում մեծ թիվ էին կազմում Ախալցիխեում Ալեքսանդրե թագավորի օրոք: Քանի որ, ըստ հեղինակի, այդ թագավորը խիստ վատ էր վերաբերվում հայ Օրբելյաններին, հնարավոր է, որ նրա հալածանքները ստիպեցին նրանց քաշվել դեպի Վրաստանի արևմուտք»[394]:

Առաքելադավան հայերը նշանակալի թիվ էին կազմում նաև ԺԸ դարում: Սա երևում է Ախալցխայի հայերին ուղղված զանազան թղթերից: Օրինակ, 1780 թ. սեպտեմբերին Սիմեոն կաթողիկոսի մահվան և Ղուկասի կաթողիկոս ընտրվելու մասին իրազեկող թղթում նշվել է. «...ի վերայ Ախալցխայու և շրջակայից նորին մերազնեայ ուղղափառ ժողովրդեանն...»[395]:

1787 թ. Ղուկաս կաթողիկոսի թղթերից մեկը հղղվել էր «...առ մերազնեայ ժողովուրդսն...» Ախալցխայի[396] կամ նույն թվականի ապրիլին գրված կոնդակը «...ի վերայ Ախալցխայու միաբնադաւան ժողովրդեանն վասն յեկեղեցւոյ արգելեալ չհաս կնառու Նիկողայոսին եւ նօցին պսակօղ Դաւիթ երիցուն ներողութեան...: Անդ լեալ մերայնիքն ուղղափառք յոյժ սակաւք էին մնացեալք եւ այնպիսի չհասութիւնք վասն այն լինիւր առ ոմանս ի նոսա...»[397]:

1791 թ. հիշվում է «...յԱխլցխայու մերայնոցն խղճալեաց...»[398]:

ԺԸ դարավերջին Ախալցխայի հայ բնակչությունը հայտնվել էր անմխիթար կացության մեջ: Այդ են վկայում Ղուկաս կաթողիկոսի դիվանում պահպանված վավերագրերը:

Առաքելադավան հայերի շրջանում կաթողիկե հավատքի տարածման երևույթից խիստ անհանգստացած՝ 1792 թ. ախալցխացիներին հղված հերքական կոնդակում նշվել է. «Կոնդակ մի օրհնութեան ու մխիթարութեան ի վերայ մերայնոցն անդանօր եղելոց վասն նեղսակրութեանցն ի չարափառացն մոլորեցելոց»[399]:

ԺԸ դարավերջի և ԺԹ դարասկզբի պատմական անցքերի բերումով (ավարառությամբ և թալանով ուղեկցվող լեզգիների արշավանքները, Ախալցխան գրավելու ռուսների անհաջող փորձերը և այլն) հայերի թվաքանակը կտրուկ նվազել է. «Գրիգորյան հայերը մինչև ռուսների՝ Ախալցխայի գրավումը քիչ էին»[400]:

Հայտնի է, որ 1830 թ. Կարնո հայ գաղթականությունից շուրջ 6000 ընտանիք բնակություն է հաստատել Ախալցխայում և հին քաղաքի դիմաց՝ Փոցխով գետի աջ ափին, հիմնել նոր բնակավայր[401]:

Ինչպես գյուղական բնակավայրերում, Ախալցխայում ևս հայ ծխերը բաշխված էին ըստ եկեղեցիների և ըստ ծխատեր քահանաների: 1896 թ. քաղաքի Սբ. Վարդանանց եկեղեցու 347 ծխերից 256-ին սպասավորում էր Գևորգ քահանա Սիսակյանցը, իսկ 91 ծխին՝ ծերունազարդ Գրիգոր քահանա Վանանդյանցը[402]:

1840 թ.-ից իշխանությունների պարտադրմամբ և թեմական առաջնորդների ջանքերով ստեղծվել են աննախընթաց մանրամասնությամբ վիճակագրական տեղեկագրեր: Հայ բնակչության թվաքանակն արտացոլող այդօրինակ տեղեկագրերի աչքի ընկնող պակասությունն է առաքելադավան և կաթողիկե հայերին ոչ միատեղ, այլ առանձին տեղեկագրերում ներկայացնելը: Այդպիսով մենք ևս ստիպված ենք հավատքի պատճառով երկու մասի տրոհված հայ բնակչության թվաքանակը ներկայացնել զատ-զատ: Բազմաթիվ վավերագրերի համադրմամբ ստորև նախ ներկայացնում ենք քաղաքաբնակ առաքելադավան հայ բնակչության թվաքանակը.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1840[403] | | 3265 | 3501 | 6766 |
| 1841[404] | | 3130 | 3216 | 6346 |
| 1842[405] | | 3290 | 3109 | 6399 |
| 1844[406] | | 3298 | 3201 | 6499 |
| 1845[407] | | 3278 | 3137 | 6415 |
| 1847[408] | | 3776 | 3278 | 7054 |
| 1849[409] | | 3890 | 3360 | 7250 |
| 1851[410] | 1440 | 3256 | 3242 | 6498 |
| 1853[411] | | 3586 | 3465 | 7051 |
| 1854[412] | | 3598 | 3476 | 7074 |
| 1857[413] | | 3698 | 3564 | 7262 |

394 **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 144 (բնագրում՝ “Divers passages de la vie de Timour par l’auteur arménien Thomas de Medzop, prouvent, du reste, que les Arméniens, sinon les catholiques, abondaient à Akhal-Tzikhé dans la première moitié du XV siècle, sous le règne du roi Alexandré; et comme il attribue à ce prince de forts mauvais procédés envers les Orbélians arméniens, il serait possible que ces persécutons les eussent fait refluer dans l’O. de la Géorgie”):
395 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա, էջ 100:
396 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Բ, էջ 218:
397 Նշվ. աշխ., էջ 235:
398 Նշվ. աշխ., էջ 631:
399 Նշվ. աշխ., էջ 743:
400 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 20 (բնագրում՝ “Армяно-григориан, до взятия русскими Ахалцихa, было немного”):
401 **Ղաֆադարյան Կ.**, նշվ. հոդվ., «ԲԵՀ», 1967, № 3, էջ 165:
402 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 566, թ. 5:
403 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:
404 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67:
405 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, թ. 76-77:
406 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, թ. 14:
407 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 70-71:
408 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 33:
409 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 39: Տե՛ս նաև “Кавказский календарь на 1852 г.”, Тифлис, 1851, с. 272.
410 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 23-25:
411 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 37-38:
412 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, թ. 47-48: Տե՛ս նաև գ. 3830, թ. 204-205:
413 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, թ. 27-28: Տե՛ս նաև գ. 3874, թ. 159-160:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1860[414] | | 3850 | 3667 | 7517 |
| 1861[415] | | 3311 | 3065 | 6376 |
| 1862[416] | | 3342 | 3108 | 6450 |
| 1863[417] | | 3398 | 3125 | 6523 |
| 1864[418] | | 3448 | 3158 | 6606 |
| 1865[419] | | 3462 | 3117 | 6579 |
| 1866[420] | 1220 | 3428 | 3199 | 6627 |
| 1867[421] | 1224 | 5638 | 4819 | 10457 |
| 1868[422] | 1224 | 5675 | 4880 | 10555 |
| 1869[423] | 1224 | 5621 | 4911 | 10592 |
| 1870[424] | 1230 | 5710 | 4915 | 10625 |
| 1871[425] | | 5719 | 4915 | 10639 |
| 1872[426] | | 5760 | 4530 | 10290 |
| 1873[427] | | 6895 | 5575 | 12470 |
| 1874[428] | | | | 12580 |
| 1876[429] | | 6090 | 5300 | 11390 |
| 1877[430] | | 6115 | 5450 | 11565 |
| 1878[431] | | 6140 | 5590 | 11730 |
| 1880[432] | | 6310 | 5690 | 12000 |
| 1881[433] | | 6217 | 6210 | 12427 |
| 1882[434] | | 6285 | 6355 | 12640 |
| 1883[435] | | 3858 | 4230 | 8088 |
| 1884[436] | 1999 | | | 8940 |
| 1886[437] | 1699 | 4291 | 4211 | 8502 |
| 1887[438] | | 4207 | 4507 | 8714 |
| 1888[439] | | 4300 | 4586 | 8886 |
| 1889[440] | | 4145 | 4411 | 8556 |
| 1893[441] | | 4251 | 4556 | 8807 |
| 1894[442] | | 4321 | 4628 | 8949 |
| 1897[443] | | 4429 | 4621 | 9050 |
| 1899[444] | | 4538 | 4684 | 9222 |
| 1900[445] | | 4618 | 4752 | 9370 |
| 1901[446] | | 4815 | 4842 | 9657 |
| 1902[447] | | 4644 | 4798 | 9442 |
| 1905[448] | 1500 | 4777 | 4984 | 9761 |
| 1906[449] | | 4562 | 4245 | 8807 |
| 1907[450] | | | | 8807 |
| 1908[451] | 1566 | 4441 | 4523 | 8964 |
| 1909[452] | | 4570 | 4260 | 8830 |
| 1910[453] | | 4605 | 4325 | 8930 |
| 1912[454] | | 4725 | 4420 | 9145 |
| 1913[455] | | 4700 | 4350 | 9050 |
| 1914[456] | | 4750 | 4435 | 9185 |
| 1916[457] | | 4786 | 4845 | 9631 |

**Հայ կաթոլիկներ.** կաթոլիկե քարոզչության մուտքն ու տարածումը Վրաստանում ընդհանրապես վերագրվում է ԺԳ դարին. «...հայտնի է, որ ԺԳ դարի սկզբում Վրաստանի թագավորները նամակագրական կապի մեջ էին պապերի հետ, որ վերջիններս շարունակում էին հաջորդ դարում գրել նրանց և քարոզիչներ ուղարկել, որպեսզի նրանց գրավեն դեպի իրենց»[458]:

Ինչ վերաբերում է Ախալցխային, ապա առկա գրավոր աղբյուրները փաստում են, որ այստեղ կաթոլիկե քարոզչությունը տարածում է գտել միայն ԺԸ դարի սկզբներից:

Մասնավորապես 1764 թ. Բարձր Հայքի Կարմիր վանքի Գևորգ եպիսկոպոսի՝ Ախալցխա ժամանելու առթիվ նշվել է, թե «Ախալցխա քաղաքն արդէն անկէ յիսուն տարի յառաջ մուտ գտած էր կաթոլիկէութիւնը եւ այնչափ առաջացած, որ կաթոլիկէ հայերն երեք եկեղեցի ունէին, կային կաթոլիկեայ վարդապետներ ու քահանաներ»[459]:

Ինչպես այլուր, Ախալցխայում ևս առաքելադավանությունից կաթոլիկե դարձած հայ բնակչության և նրանց հոգևորականության նկատմամբ Ամենայն Հայոց կաթողիկոսությունն անզիջում պայքար է

414 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 3:
415 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3839, թ. 14:
416 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3836, թ. 26:
417 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 60-61:
418 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3846, թ. 2-3:
419 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 19-20:
420 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 73:
421 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3851, թ. 19, 24:
422 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3853, թ. 27:
423 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3856, թ. 36-37:
424 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 85-86, 98-99:
425 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 201-202:
426 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3859, թ. 34:
427 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, թ. 76-77, 94-95:
428 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3864, թ. 25-26:
429 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 29-30:
430 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, թ. 39:
431 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 204-205:
432 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 69, 84:
433 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 47:
434 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 105:
435 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:
436 «Արձագանք», 1885, № 4, էջ 57: Ի դեպ, ներկայացված տվյալը չի ներառում 509 տուն՝ 2938 շունչ հայ կաթոլիկներից:
437 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 204:
438 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 3-4:
439 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 46-47:
440 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 115-116:
441 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8595, թ. 33-34:
442 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 54-55:
443 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, թ. 139-140:
444 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3903, թ. 83-84:
445 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, թ. 58:
446 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 132-133:
447 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, թ. 15-16
448 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3912, թ. 258-259: Տե՛ս նաև ֆ. 35, ց. 1, գ. 148, թ. 21-22:
449 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 42:
450 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
451 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 39:
452 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 108-109:
453 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 35-36:
454 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3920, թ. 49:
455 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, 950, թ. 268-269:
456 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, 1020, թ. 169-170:
457 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 43, թ. 16-17:
458 **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 143 (բնագրում՝ “On sait seulement qu’au commencement du XIII siècle les rois de Géorgie furent en correspondance avec les papes, que ceux-ci continuèrent de leur écrire, dans le siècle suivant, et de leur envoyer des missionnaires, pour les attirer à eux”):
459 **Գալէմքարեան Գ.** Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու եւ ժամանակին հայ կաթոլիկեայք, Վիեննա, 1915, էջ 105: Հայ կաթոլիկե համայնքի ձեռքում երեք եկեղեցիների առկայությունը վավերացրել է նաև Լ. Զագուրսկին. «Կաթոլիկ բնակչությունը համախմբվել էր երեք եկեղեցիների շուրջ» (**Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 16 (բնագրում՝ “Католическое население сосредоточилось около трех церквей”):

ծավալում: Ցավոք, նպատակին հասնելու համար առաքելադավան հոգևոր առաջնորդները չէին խորշում և հաճախ դիմում էին նաև արտաքին ուժերին[460]: 1718-1719 թվականներին Պոլսո պատրիարքը ձեռք էր բերել «Սուլթան Ահմեդի հրամանը, որը գրում է Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի խնդրագրի համաձայն ախթարմա Հարություն վարդապետի՝ Ախալցխայի առաջնորդի վերաբերյալ, որպեսզի այնտեղից աքսորեն...»[461]:

ԺԸ դարում Ախալցխան ընդգրկված էր Կարինի Կարմիր վանքի թեմի մեջ: Վանքի միաբաններից Գևորգ վարդապետը, 1760 թ. եպիսկոպոս ձեռնադրվելով, 1764 թ. Կարմիր վանքի առաջնորդ Հակոբ վարդապետի հրամանով մեկնում է Ախալցխա՝ վանքի հասույթը հավաքելու: Նա բացահայտում է կաթոլիկե եկեղեցու նկատմամբ իր համակրանքը. «Մանավանդ որ Ախալցխա քաղաքը նույնպես հիսուն տարի առաջ ապականված էր եղել մեծ մասամբ այդ նույն աղանդով: Ուստի եւ Ոչ-Գեորգը այնտեղ այնքան համարձակություն է գտնում, որ մինչև անգամ (տեղի) հայերին եւ եկեղեցին քարշ է տալիս դատարան եւ վատաբանում, պապի անունն է հիշում եկեղեցու մեջ եւ այլն: Այս մասին բողոքը հասնում է Կարին, եւ կարնեցիները շատերի կողմից ստորագրված նամակով տեղեկացնում են Սիմեոն կաթողիկոսին: Որից հետո արիասիրտ հայրապետը, մանավանդ որ նախանձախնդիր էր Հայաստանյայց ուղղափառ հավատքի մեջ, գրում է Պոլիս եւ բերել է տալիս երեք հրաման Սուլթան Մուստաֆայից (1757-1774), մահմեդական 1179 եւ 1181 թվերին[462], երկուսը՝ հատուկ Ախալցխայի վերաբերյալ, իսկ մեկը՝ բոլոր (մյուս) վայրերին վերաբերող, խիստ հրամանով եւ պես-պես սպառնալիքներով: Այն է՝ ֆռանկ հայերը, որտեղ էլ որ լինեն, պիտի մեկնեն իրենց երկիրը, իսկ որտեղ որ հայեր լինեն՝ ֆռանկացած, պիտի շատ մեծ տուգանք կրեն...», իսկ մասնավորապես Ախալցխայի համար սուլթանի սպառնալից հրամանագրում նշված էր. «...Պողոս, Ստեփան եւ Հովհաննես սեւագլուխները, որոնք աղանդավորներ են՝ բնակություն գտած Ախալցխայում, երկրին աղտեղություններ հարուցողներ են»[463]:

Գևորգ եպիսկոպոսը, սակայն, հետագայում էլ շարունակում է քարոզչությունը: Սրա համար Սիմեոն կաթողիկոսը բանադրում է ոչ միայն Գևորգ եպիսկոպոսին, այլև նրան Ախալցխա ուղարկած Կարմիր վանքի առաջնորդ Հակոբ վարդապետին[464]:

Արդեն ԺԸ դարի կեսերից Ախալցխայի հայոց թեմը բաժանվել էր երկու մասի՝ հայ առաքելական և հայ կաթոլիկե: Ստեղծված դրությունից անհանգիստ՝ Սիմեոն կաթողիկոսը 1769 թ. նոյեմբերին դիմում է կաթոլիկե քարոզիչներին. «...ահա ունիք դուք զճոխ թագաւորութիւնս և զշէն աշխարհս և զանթիւ բազմութիւնս ժողովուրդս և զմուտս նոցին: Ընդէ՞ր ոչ բաւականանայք այնու, քան եկեալ մտանէք իբրև զգող ի մէջ հօտից մերոց, և գողանայք զոչխարս մեր և օտարացուցանէք ի մէնջ և ձերացուցանէք, փեռեկտէք ի միմեանց իբրև զյափշտակօղ գայլս և զայլայլութիւնս և զյաւիտենական խռովութիւնս արկանէք ի մէջ սոցա: Զինչ գոյր ձեզ ի յԱխլցխա, հայրենի քաղա՞ք է ձեր, եթէ ունէիք անդ զբնիկ ժառանգութիւնս և զժողովուրդս, զի այնքան երկար մնայիք անդ»[465]:

Նույն թվականին նա գրել է. «...Ախլցխա հայոց երկիր է և ո՛չ ֆռանկաց»[466], նաև Ախալցխայի կաթոլիկեացած հայերին հորդորել վերստին վերադառնալ Մայր եկեղեցու գիրկը. «...բաւական համարեսջի՛ք, որքան մինչև ցայժմ ընթանայք ընդ անկոխ անպէտս, թողլով զուղիղ և զհայրենաւանդ պողոտայն, և դարձջիք՝ ի յուղղութիւն»[467]:

Կաթողիկոսի՝ 1769 թվակիր գրություններից մեկով հայտնի է դառնում, որ հայ կաթոլիկե քարոզիչների դեմ մղած պայքարի արդյունքում ձերբակալվել է ախալցխացի 4 հոգևորական, սակայն «Ախլցխայու չորեքին աստ աքսորեալ կարգաւորքն՝ Պօղոս և Յովաննէս վարդապետքն, Տէր Ստեփաննն և Տէր Յակոբն, ...յորժամ ի յուղիղ կրօնս և ի դաւանութիւնս մեր դարձան, և ձեռագրով և երդմամբ միամտեցուցին զսրբազան վեհն, վասն որոյ՝ և սրբազան վեհն զիթլախն նոցա բերել ետ ի Պօլսոյ... և զմինն ի նոցանէ զՊօղոս վարդապետն առաջնորդ արարեալ ի վերայ Ախլցխայու, և առաջնորդական կոնդակ տուեալ...: Եւ մարդ եղեալ ընդ մահտեսի Յօնանին՝ յղեցէ զնոսա ի յԱխլցըխա: Եւ խնդրեաց ևս, զի գրեցէ Սուլէյման փաշային, և այնպէս բան հոգացէ, որ ուղղեցին մնացեալ ախթարմայքն Ախլցխայու»[468]:

Մեկ տարի անց՝ 1770 թ. հուլիսին, Սիմեոն կաթողիկոսը Կ.Պոլսի պատրիարք Գրիգոր վարդապե-

460 Նյութին առնչվող վավերագրերի քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ Ամենայն Հայոց կաթողիկոսների և հոգևոր մյուս առաջնորդների մղած սուր պայքարի էությունն ընդդեմ հայ կաթոլիկեների ցավալիորեն ոչ թե ազգի հավաքականությունն ամուր պահելն էր, այլ սոսկ բնակչությունից ստացվող եկեղեցական հասույթներին և տուրքերին տիրապետելու մտահոգությունը: Ի դեպ, նույն կերպ հայ կաթոլիկե հոգևորականությունն էլ կաթոլիկե քարոզչության տարածման մեջ էր տեսնում հասույթներն ավելացնելու հնարավորությունը:

461 **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, Ջամբռ, Երևան, 2003, էջ 335: Ի դեպ, Սուլթան Ահմեդ խան Գ-ն գահակալել է 1703-1730 թթ.:

462 Հիջրայի 1179 և 1181 թվականները համապատասխանում են 1765/66 և 1767/68 թվականներին:

463 **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, նշվ. աշխ., էջ 56: Տե՛ս նաև **Գալէմքարեան Գ.**, նշվ. աշխ., էջ 115:

464 **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, նշվ. աշխ., էջ 344:

465 Документы по истории армяно-грузинских взаимоотношений и общественной жизни Грузии (II пол. XVIII в.), сост. **Мартиросян В. М., Чобанян П. А,** “Кавказ и Византия”, вып. 3, Ереван, 1982, с. 240. Տե՛ս նաև ԴՀՊ, գիրք Գ, էջ ճխթ-ճծ, 347-352, 617-618, 622:

466 ԴՀՊ, գիրք Ը, էջ 112:

467 Նույն տեղում, էջ 77:

468 Նույն տեղում, էջ 151:

տին իր մտահոգությունն է հայտնում առ այն, որ հակառակ ձեռնարկված միջոցների՝ կաթոլիկե քարոզչությունը տարածվում է նաև Ախալցխայից հեռու ընկած վայրերում. «...Ախլցխայու ախթարմայքն հանելոց են զիքլախս աքսորեալ չիք սևագլխացն իւրեանց, որք են աստ: ...Զի այնուհետև ոչ թէ Ախլցխա միայն, այլև ամենայն մօտակայ տեղիք և շրջակայք նորին մինչև ցԿարս և ցԿարին, համարձակապէս զախթարմայութիւնս են առնելոց և ամենայն վաստակն և ջանն մեր, զորս մինչև ցարդ արարաք, զուր և ընդ վայր է լինելուց...: Զի յԱխլցխա և թէ ուր և հանդիպեսցին սոքա, առանց կարծեաց հոտեցուցանելոց են չարապէս, քան զառաջինն: ...չիք Ախլցխայի ախթարմայքն զսոցա իքլախն ընդ՞ր հանել ջանան, զի սոքա Ախլցխացի չեն: Միայն չիք Պօղոս վարդապետն է Ախլցխացի և էրէց մի»[469]:

1772 թ. հունվարին Ախալցխայի հայ կաթոլիկե համայնքը երեսփոխաններ է ընտրում Պստի Սիմոնին, Նուրալենց Պետրեին, Ովակենց Հովսեփին, Նարոյենց Այվազին, Գուլասարենց Օհաննեսին և Աբինենց Եսանին[470]:

1790 թ. փետրվարի 18-ին գրիչ տեր Սահակի հեղինակած մի գրության մեջ Ախալցխայի հայ կաթոլիկե թեմի վերաբերյալ նշվել է. «Զօրութիւն գրոյս այս է, որ հրամանաւ Թէոդորոս արքեպիսկոպոսին եւ մեծի նուիրակին սրբոյ Երուսաղէմին եւ գիտութեամբ Եփրիկենց մահտեսի Յակոբ աղային կացուցեալ փոխանուիրակ Աղսխու թեմին, որ եւ ի Աղսխայ բնակեալ կաթօլիկ հայերէն՝ ըստ նախնեաց իւրեանց սովորութեան զնուիրական ողորմութիւն առի, զկնի Ստեփան վարդապետին, փոխանորդին Գէորգքայ... սաղ ստակ, որոյ կէսն կանէ ԾԵ (55) ղուրուշ, եւ տուի զայս ղափս...»[471]:

Հաջորդ ուշագրավ վավերագիրը վերաբերում է 1794 թ. մարտի 20-ին. «Զօրութիւն գրոյս այս է, որ ես՝ մեղսամած Ղեւոնդ վարդապետ, շնորհիւ տեառն եւ՛ առաջնորդ եւ՛ տեսուչ Կարմիր վանք կոչեցեալ սուրբ Աստուածածնից եւ համայն թեմի եւ վիճակի նորին, արքունական բարձր հրամանով թագաւորին, եւ սրբազան պատրիարքին՝ տեառն Զաքարիա արքեպիսկոպոսին, օրհնութեան նամականվ վերոգրեալ մարտի 1-ին ի վիճակն իմ Ախըլխայ քաթոլիկ հայ ժողովրդեան պտղին ԺԸ (18) ամսոյ անկեալն հեսապս տեսի, եւ առի տէր Օհաննէսին իւրեանց աւագ քահանայ, տէր Գրիգորէն եւ խօջայ Յօհաննէսէն եւ պարոն Անտօնէն, եւ միւս իրեցփոխան քուրքչի պաշի պարոն Օհաննէսէն, եւ մամասախլի պարոն Յէսայէն, նաեւ այս քահանայից եւ իշխանաց խնդրանօք վերոգրեալ թուվն, անցելոյն պայմանաւորեցանք պտղի հատուցմանէն յամէ յամ, մարտ ամսոյ մէջ, Կ (60) ղուրուշ, Ախըլցխայ, Իլիտա, Վալէ, Արալ, Ուտէ եւ Ապասթումանն...»[472]:

1795 թ. փետրվարի 11-ին Կ.Պոլսի Ղալաթիո Սբ. Գէորգ եկեղեցում «փոխանորդ ըստ կամաց մերոց ի վերայ թէմին Ախսխայու...»[473] ձեռնադրվում է քարոզիչ ոմն Հովասափը:

Նախքան ռուսական տիրապետության հաստատումը Ախալցխա քաղաքն ու գավառի գյուղերը միասին ունեին շուրջ 1000 ընտանիք հայ կաթոլիկե բնակչություն, ըստ առնվազն 5-6000 շունչ և բազմաթիվ եկեղեցիներ. «Ակիսկայում (Ախալցխայում) 500 կաթոլիկե ընտանիք կա և այդքան էլ՝ ցրված Յոլիտա (Իվլիտա), Զղրաթի, Վալեհ (Վալե), Արալ, Ուդեհ (Ուդե), Աբասթաման (Աբասթուման), Արդահան, Վելի (Վել), Արդանուջի (Արտանուջ), Բարա, Արտվին, Խերթվիս, Ախալքալաք և Խզաբավրա գյուղերում: Կաթոլիկեները Ակիսկայում ունեն երկու եկեղեցի, որոնցում ծառայում են վեց քահանա և պատարագներ են մատուցում հայերենով»[474]:

Ինչ վերաբերում է հոգևոր ենթակայության կառուցվածքին, ապա հայտնի է, որ համայն Ռուսիո հայ կաթոլիկեների առաջնորդ Հովսեփ Քրիստափորյանի մահից (վախճանվել է 1816 թ. և թաղվել Մոզդոկ քաղաքի եկեղեցում) հետո Ս. Ժողովն առաջադրել էր «Հռոմայ Ուրբանեան դպրանոցի աշակերտ՝ եւ Ախալցխայի (տակաւին թրքաց իշխանութեան տակ) փոխանորդի տեղապահ (vice vicarius) էր, Պօղոս վարդապետ Շահղուլեանի թեկնածութիւնը», սակայն ռուսական իշխանությունների հովանավորությունը վայելում էր Անտոն արքեպիսկոպոս Մուրադյանը[475]:

Այնուամենայնիվ, հակառակ ձեռնարկված բազմաթիվ միջոցների և միջնորդությունների, մինչ Ախալցխայի՝ ռուսներին անցնելը, ըստ էության, հայ կաթոլիկեներն այդպես էլ ոչ միայն տեղի չտվեցին, այլև ընդարձակեցին իրենց գործունեությունը. «...ռուսների՝ Ախալցխան վերցնելուց մեկ տարի առաջ Ախալցխայում հաշվվում էր ավելի քան 20 քահանա: Ընդ որում, կաթոլիկե քարոզիչները, դժգոհ հայ կաթոլիկե եկեղեցու նկատմամբ հայ-գրիգոր-

469 Документы по истории..., նշվ. աշխ., էջ 234-244:

470 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 92-93:

471 Նշվ. աշխ., էջ 74: Ի դեպ, վավերագրում հիշված Թեոդորոս արքեպիսկոպոսը 1800-1818 թվականներին եղել է Երուսաղեմի պատրիարքը:

472 Նշվ. աշխ., էջ 75: Ի դեպ, վավերագրում հիշված Զաքարիա արքեպիսկոպոսը 1773-1799 թվականներին Երուսաղեմի պատրիարքն էր, իսկ Ղևոնդ վարդապետը 1770-1790-ական թվականներին եղել է Կարինի Կարմի վանքի առաջնորդը: Հեսապ թարգմանաբար՝ հաշիվ:

473 **Քոսեան Յ.**, նշվ. աշխ., էջ 417-418: Տե՛ս նաև **Երիցեան Աղ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 442:

474 **Chevalier Gamba**, նշվ. աշխ., էջ 403 (On compte à Akiska cinq cents familles catholiques, et autant d’éparses dans les villages d’Yolita, de Zghrati, de Valeh, d’Aral, d’Udeh, d’Abastaman, d’Ardahan, Veli, Ardanoudgi, Bara, Artvin, Chertoïs, Akhor-Kelek et Chisabavra. Les catholiques ont à Akiska deux églises desservies par six prêtres, qui officient en langue arménienne”):

475 **Գալէմքարեան Գ.**, նշվ. աշխ., էջ 115:

յաններն մեծ մասի վերաբերմունքից, մտադրվել էին նրանց էլ կաթոլիկե դարձնել: Թվում է այսպես պետք է դիտարկել կապուցին քարոզիչների գործունեությունը: Այդ քարոզիչներից առանձնապես աչքի էր ընկնում պատեր Թադեոսը, որի մասին հիշողությունները Ախալցխայում թարմ են մինչև հիմա»[476]:

Ընդամենը «Մի քանի ամիս առաջ նախքան ռուսների՝ Ախալցխան նվաճելը Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքի դրդմամբ հրապարակվեց սուլթանական ֆերման, որի ուժով Ախալցխայում ավագ հինգշաբթի օրը կնքվեցին կաթոլիկե եկեղեցիները և ձերբակալվեցին հայ կաթոլիկե բոլոր քահանաները: Վերջիններիս սկզբում ուղարկեցին Էրզրում, իսկ հետո հետ դարձրին և բանտարկեցին Ախալցխայի բերդում: Պահանջներ ներկայացնելու համար նրանց ուղարկում էին պահակազորի ուղեկցությամբ: Սա շարունակվել է մինչև ռուսների՝ Ախալցխայի գրավումը»[477]:

Հայտնի է, որ Բարձր Հայքից հայ գաղթականության՝ Ախալցխայում հաստատվելու նախօրեին պաշտամունքով երկու մասի պառակտված քաղաքբնակ հայերի հարաբերությունները, մեղմ ասած, բարեկամական չէին: Զորահրամանատար Ն. Ուշակովն այս առթիվ նշել է, թե «Իսկական հայեր Ախալցխայում այնքան էլ շատ չեն եղել, նրանց մեծ մասը տարբեր ժամանակներում ընդունել է կաթոլիկեություն: Այս վերջինները չեն հանդուրժում բնիկ հայերին և համարելով իրենց պարզապես կաթոլիկեներ՝ վիրավորվում են հայ անունից»[478]:

Պակաս ուշագրավ չէ նաև 1831 թ. Վասիլի Լեխկոբիտովի վկայությունը. «Բնիկներից առավել քիչ են հայերը: Քանի որ նրանք հիմնականում կաթոլիկեներ են, չեն հանդուրժում իրենց ազգակիցներին և անգամ իրենց չեն համարում հայեր, առավելապես խոսում են թաթարերեն և վրացերեն, բնույթով նման են այնտեղի վրացիներին, միայն թե նրանցից խելացի են և շրջահայաց»[479]:

1830 թ. Ախալցխայի հայ կաթոլիկե բնակչությունը, ի հաշիվ Բարձր Հայքից Եփրեմ վարդապետ Սեթյանի[480] առաջնորդությամբ գաղթած բնակչության, զգալի համալրում է ստանում:

Հարկ է նշել, որ հայ կաթոլիկե և առաքելադավան առաջնորդների միջև առկա կրոնական տարաձայնությունները երբեմն ցավալիորեն հանգում էին հակամարտության: Այդօրինակ դրսևորման ցայտուն օրինակն է 1836 թ. Եփրեմ Սեթյանին հղված Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսի գրության մեջ տեղ գտած հետևյալ արտահայտությունը. «...ձեր այդպիսի ներգործութիւն ունիմ փութով կարճել և ձեր որջն ամայի կացուցանել...»[481]:

Հայտնի է, որ «Հայ կաթոլիկե եկեղեցու ծխական վարչությունը երկար ժամանակ չէր հաստատվում: Առաջնորդության հավակնող անձանց թվում առանձնապես հիանալի էր Պողոս Շահղուլյանը՝ վախճանված 1855 թ.[482]: Նրան ենթակա էին Այսրը-

476 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 16-17 (բնագրում՝ “...за год до взятии русскими Ахалциха, одних священников в Ахалцихе насчитывалось более 20-ти. Между тем католические миссионеры, не довольствуясь обращением значительнаго числа армяно-григориан в лоно армяно-католической церкви, подумывали подчас и об обращении их в настоящих католиков. Так, кажется, надо смотреть на деятельность миссионеров из ордена капуцинов. Из этих миссионеров довольно видное место занимает патер Фома, память о котором до сих пор живо сохранилось в Ахалцыхе”): Ի դեպ, «1838 թ. վախճանված և Սբ. Ռոզալինա եկեղեցու մոտ թաղված հայր Թադեոսի մահից հետո՝ մինչև 1845 թ., Ախալցխայի հռոմեական կաթոլիկե հոտը գլխավորել են կապուցին պատերները, որոնք ենթարկվում էին Կովկասի և Անդրկովկասի հռոմեական կաթոլիկե եկեղեցիների առաջնորդին (առաջնորդն իր հերթին ենթարկվում էր Սարատովի կաթոլիկ եպիսկոպոսին)» (**Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 17; բնագրում՝ “После смерти патера Фомы, скончавшагося в 1838 г. и погребеннаго возле церкви св. Розалии, ахалцихскою римско-католическою паствою заведывали другие патера из ордена капуцинов до 1845 г., в котором они были вывезаны св. Розалии подчинен был визитатору римско-католических церквей на Кавказе и за Кавказом (визитатор-же, в свою очередь, подчиняется саратовскому католическому епископу”):

477 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 17 (բնագրում՝ “За несколько месяцев до взятия русскими Ахалциха, по проискам константинопольскаго армянскаго патриарха, вышел султанский фирман, в силу котораго, в страстной четверг, в Ахалцихе были опечатаны католическия церкви и арестованы все армяно-католические священники. Последние сперва были отправлены в Эрзрум, а потом, по возвращении оттуда, засажены в ахалцихскую крепость. Для совершения треб отправлялись они под конвоем солдат. Это продолжалось до взятия русскими Ахалциха”).

478 **Ушаков Н.**, նշվ. աշխ., Варшава, 1843, ч. 1, էջ 62-63 (բնագրում՝ “Армян настоящих было в Ахалцихе весьма не много; большая часть из них в разные времена приняла католическую веру. Сии последние не терпят коренных армян, и называя себя просто католиками, обижаются именем армянина”).

479 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 211 (բնագրում՝ “Из коренных жителей весьма немного армян; как они в большей части католики, то не терпят своих единоплеменников, даже не называют себя армянами; говорят более на татарском и грузинском языках; характером сходны с тамошними грузинами, однако же умнее их и оборотливые.”).

480 **Երիցեանց Աղ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 442: Ի դեպ, հայտնի է, որ 1830 թ. հունվարի 19-ին Եփրեմ Սեթյանը (Սեթ) Կարինում հեղինակել է չափածո «Յազատութեան Հայաստանեայց» ստեղծագործությունը (Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ, բնագրերի պատրաստումը, ներածությունը և ծանոթագրությունները՝ **Պ. Հակոբյանի**, Երևան, 1978, էջ 148-151): Հայտնի է նաև, որ Եփրեմ Սեթյանի հեղինակությունն ու սերն այնքան մեծ է եղել ախալցխացիների շրջանում, որ նրա գերեզմանը դարձրել են ուխտատեղի: Այդ մասին Ի դարասկզբին գրվել է. «Հ. Սէթեանցի յիշատակն դեռ վառ է քաղաքիս բնակչաց սրտերու մէջ. նորա գերեզմանն է եկեղեցիէն դուրս անմիջապէս խորանի ետեւը, հանդերձ յատուկ քանդակազարդ տապանաքարով, և ուխտատեղի եղած է, «եւ որպէս սրբոյ տանին զհողն ի շիրմէն վասն ախտաժետաց, և ասեն լինի բժշկութիւն» (**Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 60):

481 Մատենադարան, թղթ. 163ե, վավ. 159:

482 1830-ական թվականների վերջերին Ախալցխայի հայ կաթոլիկե թեմի առաջնորդ է նշանակվում Պողոս Շահղուլյանը (АКАК, т. 9, Тифлис, 1884, с. 113, 117):

կովկասի հայ կաթողիկեները: Նրա մահից հետո ախալցխացի երեք գլխավոր քահանաներ սկսեցին ղեկավարել հայ կաթողիկե եկեղեցին: Այս կերպ կազմավորվեց Սարատովի եպիսկոպոսի ենթակայության ներքո գտնվող հայ կաթողիկե վարչությունը: Վարչության որևէ անդամի մահից հետո կաթողիկե եկեղեցու նվիրակի ներկայությամբ հայ կաթողիկե քահանաներն ընտրում են փոխանորդ: Հարկ է ավելացնել, որ 1830 թ. Թուրքիայից Ախալցխա է վերաբնակվել հայ կաթողիկեների ոչ մեծ թիվ: Նրանք հաստատվել են նոր քաղաքում, խոսում են հայերեն, վրացերեն չեն իմանում»[483]:

Ախալցխա քաղաքի հայ կաթողիկե բնակչության թվաքանակն արտացոլող վիճակագրական մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1824[484] | 505 | | | 2050 |
| 1845[485] | | 1150 | 1205 | 2355 |
| 1882[486] | | | | 3366 |
| 1885[487] | | | | 2899 |
| 1913[488] | 339 | 1132 | 1116 | 2248 |
| 1915[489] | | | | 1839 |
| 1916[490] | 281 | 817 | 817 | 1634 |

**Թյուր տեսակետներ.** բնավ առանց բավարար սկզբնաղբյուրային հիմնավորման՝ հետազոտող Զագուրսկին ենթադրել է, թե Մեփիսով և Ազնավուրյան ազգատոհմերը հավանաբար ի սկզբանե եղել են վրացազգի տոհմեր, սակայն թուրքական ճնշումներից խուսափելու հույսով իբր միացել են հայ կաթողիկե եկեղեցու հոտին[491]: Գոնե Ազնավուրյան ազգանունը հայոց մեջ լայնորեն տարածված Ազնավուր հատուկ անունից է ծագել, որը նշանակում է հսկա, դյուցազն և ըստ այդմ չի առնչվում հին վրացական անունների հետ:

Ինչ վերաբերում է հայ կաթողիկեների «ի հայտ գալու» վրացական պնդումներին, ապա, ցավոք, այստեղ իշխում են պատմագիտության համար միանգամայն անօգուտ, մեկը մյուսից անհեթեթ տեսակետներ, որոնք քննության առնելու ենթակա չեն: Սակայն դրանց մասին մի որոշ պատկերացում ստանալու համար անդրադառնանք 1898 թ. հրապարակված մի հաղորդման: Հոդվածագիրը, «ուսումնասիրելով» կաթողիկե գերեզմանոցներում պահպանված վրացագիր տապանագրերը, հանգել է այն եզրակացության, որ Ախալցխայում հայ կաթողիկեները հայտնվել են միայն 1850-ական թվականներից[492]:

**Վրացիներ.** «Վրացական ցեղը կամ Քարթլին միշտ պնդել է, որ Ախալցիխեի փաշայությունն իրենց տիրույթների մի մասն է: Քուռի և Փոցխովի բարձր հովիտը հնում կոչվել է Վերին Քարթլի (Զեմո-Քարթլի): Բորժոմի հովիտը բաժանում էր այն Միջին Քարթլիից (Շիդա-Քարթլի), որտեղ գտնվում էին այդ ցեղի թագավորների նստավայրերը: Այդտեղով էր կատարվում երկու երկրների միջև հաղորդակցությունը: Հետևաբար վրացիներն իրենց տարեգրության մեջ իրենց են վերագրում այս բարձր հովիտների գրեթե բոլոր քաղաքների հիմնումը և առաջին տիրապետությունը»[493]:

Հակառակ վրացիների շրջանում արմատացած այս տեսակետի, այնուամենայնիվ, պատմական իրողություն է, որ Սամցխեն այն երկրամասն էր, դեպի ուր պարբերաբար ապաստան էր գտնում Քարթլիի վտանգված ազգաբնակչությունը:

Մասնավորապես հայտնի է, որ Դեմետրե Բ և Դավիթ Զ (1293-1311 թթ.) թագավորների օրոք, երբ Վրաստանը դարձել էր իրար անընդհատ հաջորդած մոնղոլ-թաթարական ավերիչ արշավանքների

483 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 17 (բնագրում՝ “Управление армяно-католическою паствою долго не устанавливалось. В числе лиц, заведывавших этою паствою, по чистоте своих нравов, был особенно замечательен Погос Шахулиан, умерший в 1855 г. Ему подчинены были закавказские армяно-католики. После его смерти три главных ахалцихских священника стали управлять армяно-католическою церковью. Таким образом и образовалось армяно-католическое управление, состоящее в зависимости от саратовскаго епископа. После смерти какого-нибудь из членов управления, армяно-католические священники избирают, в присутствии визитатора католических церквей, вакантнаго члена. Следует прибавить, что в 1830 г. переселилось из Турции в Ахалцихи незначительное число армяно-католиков. Они поселились в новом городе; говорят по-армянски, грузинскаго языка не знают”):

484 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 82:

485 ՎԱԴ, ֆ. 16, ց. 1, գ. 8622, թ. 31, 45:

486 «Մշակ», 1883, № 70: Տե՛ս նաև **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 59: Ի դեպ, ըստ գործող եկեղեցիների՝ ծխերը բաժանված էին հետևյալ կերպ՝ Սբ. Մկրտիչ եկեղեցի՝ 1180, Սբ. Խաչ՝ 748, Սբ. Աստվածածին՝ 740, Երևման Սբ. Խաչ՝ 708 ծխական:

487 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

488 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:

489 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 77: Ծխերը բաշխված էին գործող երեք եկեղեցիների միջև (Վերափոխման, Սբ. Հովհաննես Մկրտիչ, Վերացման Սբ. Խաչ):

490 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 31: Ծխերը կառավարվում էին երեք եկեղեցիներով:

491 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 4 (բնագրում՝ “Можно предположить также, что часть грузинскаго населения, не желавшая принимать ислам, вошла в лоно армяно-католической церкву, которая, как неопасная для Турции, пользовалась под турецким превительством большею веротерпимостью. В пользу этого предположения говорят ни чисто грузинския фамилия большей части ахалцихских католиков (Меписовы, Азнауровы и т. д...):

492 ცნობის ფურცელი, 1898, № 850.

493 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 274 (բնագրում՝ “Le pachalik d’Akhaltsikhé a toujours été réclamé par la race géorgienne ou Karthli comme faisant partie de ses domaines. La haute vallée du Kour et du Poskho s’appelait dans l’antiquité le Karthli supérieur (Sémo-karthli); la vallée de Bardjom qui le séparait du Karthli moyen (Chida-Karthli) où se trouvaient les résidences des rois de cette race était la porte naturelle qui établissait la communication entre les deux pays. Les Géorgiens s’attribuent par conséquent dans leurs chroniques la possession première et la fondation de presque toutes les villes de ces hautes vallées”):

քատերաբեմ, ինչպես նաև Քարթլիում տարածված սովի հետևանքով «...բնակչության մեծ մասը գնում էր Սամցխե՝ Բեքայի երկիր, ուր ծախու հաց էր ճարվում»[494]:

Ախալցխայի փաշաների շարունակական արշավանքների հետևանքով Վրաստանի տարբեր շրջաններից գերեվարված և փաշայության սահմաններում վերաբնակեցված վրացիները, Վախուշտի Բագրատիոնիի վկայությամբ, անմիջապես մահմեդականանում էին. «Քրիստոսի 1705 թ. և վրաց 393 թ. եկավ Ասլան փաշան և նստեց Ախալցխայում... կառուցվում էին գյուղերն ու ավանները, քանի որ այս ժամանակ այդ հողերի վրա խաղաղություն էր տիրում: Եվ Քարթլիից և Սոմխիթից քշվածներն այստեղ էին բնակություն հաստատում, իսկ ավելին՝ Ջավախեթիում հիմնականում գերեվարված իմերները և խիստ բազմանում էին և ընդունում մահմեդականություն, քանի որ հարկ վճարելուց բացի գյուղացիներն այլ կորուստ չէին կրում»[495]:

Քաղաքական ապակայունության հերթական շրջան թևակոխած Քարթլիից դարձյալ դեպի Սամցխե արտագաղթի նոր հոսանք է սկիզբ առնում 1724 թ.-ից ի վեր, երբ երկիրը վերածվել էր թուրքական և հյուսիսկովկասյան ցեղերի ասպատակությունների թատերաբեմի. «Այս Իսակ փաշան Եսեի մահից հետո սուլթանի կողմից կարգվել է ողջ Վրաստանի կառավարիչ և տեր, այսինքն՝ Սամցխե-Սաաթաբագոյի, ողջ Իմերեթի, Քարթլիի, Լոռե-Ղազախ-Շամշադիլոյի և Կախեթի: Իսկ քանի որ Քարթլին մեծ աղետի մեջ էր, Ջավախեթին և Սամցխեն բնակեցվեց և կառուցապատվեց այնտեղից եկածներով»[496]:

Հատկանշական է, որ նորահաստատ վրացիներն իրենց համար բնակության վայրեր էին ընտրում առավելապես գյուղական վայրերը, ուստի հասկանալի է, թե ԺԹ դարասկզբին երկրամասում տիրող ազգաբաշխական կացությանն անդրադարձած հետազոտողն ինչու է նշել «...ինչ վերաբերում է ժողովուրդներին, ապա, պարզվում է, որ Ախալցխայում և Գորիում վրացիներ համարյա չեն եղել»[497]:

Սույն դիտարկմանը հակընդդեմ կարծիք է հայտնել ֆրանսիացի հետազոտողը. «...բնիկ ցեղը միլիոնավոր տարիներ ի վեր վրացիներն են»[498]:

1831 թ. երկրամասում բազմաբնույթ հետազոտություններ իրականացրած Վասիլի Լեխկոբիտովն էլ նշել է. «Վրացիներից քչերն են պահպանել իրենց կրոնը... մեծամասամբ ընդունել են մահմեդականություն՝ հետևելով Օմարի ուսմունքին: Չնայած այդ ամենին՝ նրանք ամբողջությամբ պահպանել են իրենց լեզուն, բնատուր բարությունը և նախնիների սովորույթները»[499]:

Հայտնի է, որ ախալցխաբնակ փոքրաթիվ վրացիները քաղաքում բնակվում էին հավաքական առանձին թաղամասում՝ խմբված իրենց եկեղեցու շուրջ. «Թուրքական բազմազգ քաղաքներում յուրաքանչյուր հավատքի բնակիչները զբաղեցնում են քաղաքի հատուկ մասը. նույնն է և հին Ախալցխայում: Այսպես, օրինակ նրա արևմտյան կողմում՝ Սբ. Մարինե եկեղեցու շուրջն էին տեղավորվել ուղղափառ բնակիչները»[500]:

**Թուրքեր.** Սամցխե երկրամասում և մասնավորապես Ախալցխա քաղաքում թուրք բնակչությունը երևան է գալիս՝ սկսած միայն ԺԶ դարից (երկրամասն Օսմանյան կայսրությունը նվաճեց 1583 թ.):

Հետամուտ տեղաբնիկներին բռնությամբ մահմեդականացնելու և այդ կերպ թուրք ինքնության մեջ ձուլելու քաղաքականությանը՝ Ախալցխային տիրող փաշաները համեմատաբար կարճ ժամանակահատվածում կարողանում են արմատապես փոխել նվաճած երկրամասի ազգաբաշխական պատկերը հօգուտ թուրքերի:

1829 թ., երբ երկրամասն անցնում է տարածաշրջանում իրենց հզորությամբ թուրքերին գերազանցած նոր նվաճողների՝ ռուսների ձեռքը, երկրամասի ազգային ինքնագիտակցությամբ առաջնորդվող մահմեդական թուրք բնակչության զգալի մասը լքում է քրիստոնյա տերությանը միացած փաշայության սահմանները և վերահաստատվում Օսմանյան տերության ներքին գավառներում:

Հարկ է նշել, որ երկրամասի տարածքից դեպի օսմանյան տերություն համանման արտագաղթեր տեղի են ունեցել նաև ռուս-թուրքական հաջորդ պատերազմների ընթացքում և դրանց հաջորդած տարիներին:

1861 թ. օսմանյան կառավարությունը «Ակխիսկեցի» 2500 թուրք ընտանիքների ցանկացել է ընդունել իր երկիրը, ուստի թույլտվություն ձեռք բերելու համար հիշյալ խնդրով դիմում է հղել Ռուսաստանի

494 Վրաց ժամանակագրություն. 1207-1318, էջ 175:

495 ქართლის ცხოვრება, IV, **ს. ყაუხჩიშვილის** რედაქციით, თბილისი, 1973, էջ 736: Տե՛ս նաև **Вахушти Багратиони**, История Царство Грузинского, перевел, снабдил предисловием, словарями и указателем **Накашидзе Н.**, Тбилиси, 1976, էջ 216:

496 ქართლის ცხოვრება, IV, նշվ. աշխ., էջ 738: Տե՛ս նաև **Вахушти Багратиони**, նշվ. աշխ., էջ 217:

497 **А. К-дзе**, Этническое состояние Грузии в XIX веке, “Тифлисский листок”, 1900, № 61 (բնագրում՝ “Что же касается народов: Ахалцихе и Гори, то там, оказывается, почти не было грузин”).

498 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 275 (բնագրում՝ “...la race indigène, la race autochtone pour ainsi dire, malgré les milliers d’années, est toujours géorgienne”):

499 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 211-212 (բնագրում՝ “Из грузин немногие сохранили религию свою... большая часть грузин сделалась мусульманами, следуя учению Омара. Несмотря однако же на все это, они сохранили вполне язык свой, природную доброту и обычаи предков...”).

500 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 15 (բնագրում՝ “В турецких городах со смешанным населением жители каждаго вероисповедения занимают особенную часть города,- тоже было и в старом Ахалцыхе. Так, напр., на западе его поместилось православное население, которое сосредоточилось вокруг церкви св. Марины...”):

ԱԳ նախարարությանը: Վերջինս մի քանի տարի շարունակ ողջ Կովկասում իրենց համար անծանոթ Ակիսկա տեղանունը որոնելուց և չգտնելուց հետո առանց հարցմանը պատասխան տալու 1867 թ. գործը հանձնում է դիվանատուն[501]:

Սկսած 1891 թ.-ից՝ գավառի շատ գյուղերում ծայր է առնում մահմեդականների զանգվածային գաղթ դեպի Օսմանյան կայսրություն[502]: Երևույթն իրեն զգացնել է տալիս նաև 1892-1893 թվականներին. «Մեր գաւառի տաճիկները շտապ-շտապ առանց աջ ու ձախ նայելու անհաւատալի աժան գնով ծախում են իրանց բոլոր ունեցածը և ահագին խմբերով գաղթում են Տաճկաստան: Ափսոս, որ հայ գիւղացիք չեն կարողանում գնել նոցա թողած ընդարձակ ու բերրի հողերը, սքանչելի պարտէզներն ու այլ պարագաները»[503], սակայն 1894 թ.-ից արձանագրվում է հակառակ շարժը, այսինքն՝ շատ թուրքեր վերադառնում են իրենց նախկին բնակավայրերը[504]:

Երկրամասի մահմեդական բնակչության համատարած բռնագաղթը, սակայն, իրականացնում է Խորհրդային Միությունը Երկրորդ աշխարհամարտի վերջում՝ 1944 թ.:

Բռնագաղթի ենթարկված բնակչությունից թափուր մնացած մի քանի տասնյակ գյուղերի մեծագույն մասը հաշված տարիների ընթացքում վերաբնակեցվում է Վրաստանի ներքին շրջաններից պետական զանազան արտոնություններով խրախուսված և հովանավորված վրացազգի բնակիչներով:

Պայմանականորեն «մեսխեթցի թուրքեր» անունը ստացած Սամցխեից արտաքսված մահմեդականները Խորհրդային Միության փլուզումից հետո հայրենիք վերադառնալու ցանկություն են հայտնել:

Վրաց քաղաքագետները, վերջին տարիներին ավելի ու ավելի հաճախ անդրադառնալով թուրք-մեսխերի՝ Ախալցխա վերադառնալու խնդրին, առաջարկում են տարբեր լուծումներ, բայց դրանցից և ոչ մեկը չի ենթադրում արդեն շուրջ վեց տասնամյակ թուրք-մեսխերի բնակավայրերը զբաղեցրած վրաց ազգաբնակչության տեղահանում: Մյուս կողմից ընդգծված ծայրահեղական մոտեցումներով են հանդես գալիս թուրք-մեսխերի շահերը ներկայացնող որոշ ներկայացուցիչներ: Այս իմաստով ուշագրավ է «...Բիշկեկի ,,թուրք-մեսխերի,, համագումարի բանաձևը, որտեղ նրանք գրում են. «Մենք թուրքեր ենք, ուզում ենք վերադառնալ ոչ թե Վրաստան, այլ Թուրքիա՝ Ախալցիխեի փաշայություն, որը խլել է Վրաստանը ռուս գեներալ Պասկևիչը 1828-29 թվականներին՝ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Հետագայում թուրքական այդ տարածքը Վրաստանի սահմաններում հայտնվեց, որի հետևանքով էլ մենք հետապնդվում ենք ու տանջվում: Կվերադառնանք այնտեղ միայն այն դեպքում, եթե Ախալցիխեի փաշայությունը կմիանա իր մայր հայրենիք Թուրքիային, ոչ մի դեպքում չենք սովորի վրացերեն լեզուն, չենք հաճախի վրացական դըպրոց և ոչ էլ վրացական եկեղեցի»[505]:

**Հրեաներ.** Ախալցխայում հրեաների հաստատման ժամանակաշրջանի վերաբերյալ ստույգ տեղեկություններ հայտնի չեն, սակայն նրանց գոյությունը վկայված է առնվազն ԺԸ դարից: 1833 թ. քաղաքաբնակ հրեաները կազմում էին 117 տուն[506]: Նրանց մասին նշվել է, որ խորամանկ էին, շրջահայաց և արդյունաբերող[507]:

**Հույներ.** 1831 թ. Ախալցխայում հաստատվել են Գյումուշխանեից գաղթած 50 տուն հույներ, որոնք խոսել են միայն թուրքերեն և հայերեն[508]:

**Գործածված լեզուները.** ազգերի պատմությունը ցույց է տվել, որ փոխհարաբերության և շփման առումով մշտապես գերակա է եղել տիրող տերության լեզուն: Այս իմաստով բացառություն չէր նաև Ախալցխան, որտեղ օսմանյան տիրապետության շրջանում գերիշխող լեզու է եղել թուրքերենը. «Այս գավառում ամենատարածված լեզուն թուրքերենն է, բայց վրացերեն նույնպես շատ են խոսում»[509]:

Կացությունն էապես փոխվել է 1840-ականներին. «Խանութներում խոսում են միայն թաթարերեն և հայերեն, հազվադեպ են հանդիպում վրացերեն խոսողներ»[510]:

Մեր օրերում գնալով տիրապետող է դառնում վրացերենը, որը և միանգամայն բնական է:

**Ազգատոհմեր.** Ախալցխայում հաստատված հայ ազգատոհմերի անունները և մականունները մոռացության վտանգից ազատելու նպատակով հավաքագրական խիստ շահեկան աշխատանք է կատարել վարպետ Սեպուհ Սաղաթելյանը: Ստորև ներկայացնում ենք նշյալ ցանկը.

| | |
|---|---|
| Աբրահամ աղան | Ախչիկ Ակոն |
| Աբուլենց Արտաշը | Ախչիկ Մոկուլը |
| Աբուլենք | Ածկարոն |
| Աղոյանենք | Աղալարովենք |
| Ազնավուրեց տերտերը | Աղալոենք |
| Ազնավուրովենք | Աղաճանովենք |
| Ալաֆտարովենք | Աղամբեկյանենք |
| Ալչուճոնք | Աղինենք |
| Ալվառովենք | Աղիքչոնց Վարդանը |
| Ալուր ծախողենք | Աղիքչոնք |

501 “Тифлисский листок”, 1900, № 20.

502 «Մշակ», 1896, № 23, էջ 3:

503 «Արձագանք», 1893, № 91, էջ 2:

504 «Մշակ», 1896, № 23, էջ 3:

505 “ალია”, 2005, № 12.

506 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 266:

507 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 214: Հրեական սինագոգների, դպրոցների մասին տե՛ս սույն աշխ., էջ 119, 173:

508 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 210:

509 **Chevalier Gamba**, նշվ. աշխ., էջ 404 (բնագրում՝ “La langue la plus généralement répendue dans cette province est la langue turque; mais on y parle beaucoup le géorgien”):

510 **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 119 (բնագրում՝ “Dans les boutiques, on ne parle guère que le tatar ou l’arménien; rarement trouve-t-on à employer la langue géorgienne”):

Աղվես Կարոն
Աճամ Գասպարենք
Այլավարապայենք
Այծիկը
Այվազենք
Այվազովենք
Անթառովենք
Անիսոնենք
Անճելովենք
Անոթոնք
Անուշենց Լևոնը
Անուշջան
Աշենողենք
Աշխեն Խանումենք
Առաքելովենք
Առյոլը
Առվանովենք
Ասլանովենք
Ավագենք
Ավետենք
Արապաճի Գոքորենք
Արապաճովենք
Արապենք
Արզումանենք
Արոյենք
Արջ Գոքորենք
Աֆեռիստ Մանուկը
Բագրատունովենք
Բազոյենք
Բալասանովենք
Բախչիենք
Բայբուրդոնք
Բարսամենք
Բարսեղենք
Բեթանովենք
Բեժանենք
Բիրտանաղայենք
Բղվենք
Բնգլենք
Բոմոնթենք
Բոշա Սարոն
Բոշենք
Բռաֆեսոռենք
Բրղենք
Բրթին Կարոն
Բրուտ Արտեմենք
Բուդուղյան
Գագիկենք
Գադուկենք
Գաթլեթենք
Գելենք
Գեղամենք
Գզրբալենք
Գնդենք
Գող Թորոյենք
Գող Կարոյենք
Գևորիկենք
Դալողլանենք
Դամշոյենք
Դամրչի Չախալը
Դապուլճի Կարոյենք
Դավա Կարոյենք
Դավչի Խաչոն
Դարչոյենք-Դիվլիենք
Դարտակ Օնեսը
Դարտակ Օննիկը
Դիլբարովենք
Դոշոյենք
Դրախտիրճի Գոքորենք
Ելեկանթենք
Եղանովենք
Եղբայրը (Չարուխչյան)
Եղիկենք
Եղիշողլենք (թանտարճի)
Եշչոպատավայենք
Երամճի Մամիկոնենք
Երկան Անկճենք
Երևանցոնք
Զաքարյաններ
Զեյթոնցոց գազար մա...
Զեյիթոնցոնք
Զեփեթենք
Զոպտոյենք
Զոռբայենք
Զոռբայենց Կարոն
Զռատկաղը
Զուլիենք
Զուռնաճի Վարթը
Թալալ Մելիքը
Թամամենք
Թամբալ Ավենը
Թամբալ Ակոն
Թամբաջենք
Թանաքաճի Արութը
Թարզի Կարապետենք
Թարթալանք
Թաքտանայենք
Թեխմիշճովենք
Թեքմաճի Ներսեսը
Թիթեռնիկենք
Թիթինճոնք
Թիլքը Գևորգը
Թիվանքչի Սկոյենք
Թիք գլխենք
Թղթե Պողոսը
Թորգոմենք
Թփմաղազայենք
Թևոյենք
Ժախենք
Ժամկոչենք
Ժիղը
Ժիոնի Ժովենք
Իգիթխանյանենք
Ինճիկովենք
Իոռդանովենք
Իսկանենք
Լազիևենք
Լալայանենք
Լալենք
Լաղամճոնք
Լանկոնկենք
Լանջ Աշոն
Լիլաճոնք
Լիսանենք
Լոթի Թորոյենք
Լոլոն
Լոկանդան
Լոպազ Խաչոն
Լոպազ Կարոն
Խալֆենք
Խակցոնք
Խաղաղորթենք
Խանդութենք
Խաչատուր աղա
Խավլճի Կարո
Խելառ Աննան
Խզարճոնք
Խնիկ Համոյենք
Խնձորենք
Խսումենք
Խումարենք
Ծիտիկենք
Ծիրացոնք
Ծուրդութծոնց Սկոն
Ծուրդութծոնք
Կալմանտարենք
Կանյուշնիկ Սերգոն
Կանցոնք
Կավալերենք
Կարճ Ակոյենք
Կարճ Մանուկենք
Կարտոն Ռուբենը
Կծոտ Արամը
Կճանենք
Կոթը
Կոլո Պոտոյենք
Կոնտիկենք
Կոշտոյենք
Կոջոյան
Կոռոյենք
Կոստանենք
Կորկոտենք
Կուզիկենց Կարոն
Կուզիկենք
Հազարնոցենք
Հաճի Առաքելենք
Հաճի Արութ
Հաճի Գասպարենք
Հաճի Լևոնենք
Հաճի Կարոյենք
Հաճի Մաթոսենք
Հաճիվարը
Հաճուտղան
Հաճի Գարան
Հաճի Տիգրան
Համալ Սարգիսենք
Համբարենք
Հաշտենք
Հապիպենք
Հապոն
Հավատովենք
Հավկթի Կարոն
Հափշտակենք
Հեթումը
Հեռի իշենք
Հերսոտենք
Հնկչի Սկոն
Հոլիկենց Գարանը
Հոտած պատլիճանենք
Հռե Միսաքը
Հուդայենք
Հուսնենք
Ձկնորս Գևոն
Ղազանճի Արամենք
Ղազանճի Սերգոյենք
Ղազրոյենք
Ղալայճի Արամը
Ղալանանենք
Ղանթարճոնք
Ղանտիլճոնք
Ղաչաղ Սկոն
Ղաչաղ Պետրոսենք
Ղասապպաշովենք
Ղարագյեզենք
Ղարապաղցի Խաչոն
Ղարսեցոնք
Ղզրպաշենք
Ղոբիեցցի Արութը
Ղոբոյենց Ակոբը
Ղոճուլենք
Ղոմիփո Գոգորենք
Ղոչիենց Արշակը
Ղոռխմազ
Ղուկասենք
Ղուրպանենք
Ճանճուլենք
Ճառակենք
Ճարպիկենք
Ճարպիկ Սաշոն
Ճերմակյանենք
Ճզմարճոնց Կարոն
Ճինակենք
Ճիվալակենք
Ճլխտին
Ճնոյենց Ռուբենը
Ճոլո Ակո
Ճոլո Արտաշ
Ճոլո Համո
Ճոպխնցի Խորենենք
Ճոռուխենք
Մալայանենք
Մալխասյանցենք
Մալխասովենք
Մախաթչոնք
Մակարենք
Մաղմանդենք
Մանասովենք
Մանեթնոցենք
Մանուսաճովենք
Մառանճոնք
Մառկոզովենք
Մաստեռ Խաչոյենք
Մատինենք
Մարոյենց Լալը
Մարտիրոսենք
Մարուքովենք
Մեծազիզենք
Մեծատունովենք
Միրաքովենք
Միրուք Մամիկոնը
Մկիտանչի Ակոբը
Մոսեիչը
Մոսեսովենք
Մոքոզենք
Մշեցունք
Մսոտենք

Մրոտենք
Մուգեյը
Մուշա Պաղդոյենք
Մուշա Սաքոյենք
Մուշա Սեթոյենք
Մուրադովենք
Յոզ Կարոն
Նազարենք
Նալբանդ Արութենք
Նալբանդովենք
Նալճի Մանուկենք
Նաղալենք
Նաշխուն թոփենք
Նորընծա Տերտերը
Նռանենք
Նունիկովենք
Շաշվերտցոնք
Շաքարողլենք
Շեկոյենց Մանոն
Շեկոյենք
Շիմշատենք
Շիրինովենք
Շլխտին
Շունշնվորենք
Շուն Պողոսը
Ոհանջանենք
Ոճուխը (դիրկար Արութ)
Ոջլոտենք
Ռռալցի Արութը (փայլիվան)
Չաթալպաշովենք
Չախալենք
Չախուլենք
Չամադան շինող Կարոն
Չամթնող Մաթոսը
Չամոն
Չանթենք
Չանչի Մարտինը
Չապիճենք
Չարչողլի Գոքորը
Չարչ-Ողլոյենք
Չարուխճի Խաչո
Չարուխճի Վարդգես
Չարուխճյաններ
Չափառ Մկոյենք
Չեմբերլեն Ռուբենը
Չեմբերլինը
Չեշմաճոնք
Չիլ Օվակենք
Չիֆլիկենք
Չիֆտալարենք
Չլուղենք
Չլփոյենք
Չոլաղ Համբոն
Չոլաղ Սերգոյենք
Չոռնի Գոռողենք
Չոփե Կծիկենք
Չպուխչոնց Լևոնը
Պազոյենք
Պախալ Ալեքսան
Պախալ Խաչոն
Պախալ Գարեգին
Պայպուրթցոնց Կարապետ աղան
Պապաղայենք
Պապաշենց Համոն
Պապոյենք
Պաստեղը
Պատվելճիկ Ստեփը
Պզանենք
Պզտի Սերգոյենք
Պզտկենք
Պիլին
Պիճի Կարոյենք
Պիճիմենք
Պիշայիչի
Պիչախչի Սիմոնը
Պիպըլենք
Պոզուխ-Ողլոնք
Պոյաճի Միսաքը
Պոյաճոնք
Պոչով Արմենը
Պուլանենք
Սաթչի Ռափայելը
Սաթչոնք (բաղնիք)
Սալտղենք
Սաղաթելենք
Սանթոսենք
Սապոնճոնք
Սառաչ Կարոն
Սառճոնք
Սարի Պողենք
Սարուխանենք
Սիրականյանենք
Սողոմոնովենք
Ստամպոլցոնք
Սուլթանենք
Սուճի Վանոն
Սուճոնք
Սուրեն աղան
Սուրենյան Վարդգես
Սև Ակոյենք
Սև Աշոյենք
Սև Սաթոյենք
Սևենք
Վայրատենք
Վանցոնք
Վառվառենց Տեփան
Վառվառենք
Վասակենք
Վարթենք
Վարժապետ Պողոսը
Վարժապետենք
Վարով Գիլանկիենք
Վիրապենք
Վռամենք
Վռթանեզենք
Վռթանեսեան Անդռոն
Վռնիկենց Աշոն
Վռնիկենք
Տաճկաճի Ստեփանենք
Տամալացոնք
Տապղենք
Տեծենք
Տերտերանք
Տլոզենք
Տկճի Սենոն
Տնկոզենք
Տոնոյենք
Տռուղենք
Տտռան Աշոտը
Ցեցենք
Ցիցիլիկենք
Ութանենք
Ուլի Կարոյենք
Ունանենք
Ուչուլենք
Փալանչոնք
Փահլևան Կարոն
Փանչոյենք
Փեչնիկ Եռնքը
Փեչնիկենք
Փիճ Գոքորը
Փիմփիլոնք
Փիսիկը
Փիսիկենց Սաքոն
Փոկացոնք
Փոչտին Կարոն
Փորսուղ Կարոն
Փսփս Խաչոն
Փուշուճոնք
Քալ Ակոն
Քալ Աշիկը
Քալ Լևիկը
Քալ Խաչոն
Քալ Կարոն
Քաչա Արամը
Քաչա Համիկը
Քարտուղարենք
Քացխենք
Քացոյենք
Քաք Կլորողենք
Քաք Սապոնենք
Քաքչոնք
Քեշիշյանենք
Քեսաճի Աստոն
Քեսաճի Ավճանը
Քեսաճի Մոկուլը
Քթենց Անդռոն
Քթենք
Քիշմոյենք
Քիրիմը
Քիրիշճովենք
Քիփալենք
Քոթքոթենք
Քոռտեփանենք
Քոսենք
Քրթենք
Քրիստաֆորենք
Քրիստոստուրենք
Քուլա Սեթոն
Քուչուրենք
Քուռկզոնք
Քուրթ Կարոյենք
Ֆայտոնճի Պապոնք
Ֆանարճոնք
Ֆառմնենք
Ֆոլոսովենք

**Տարազ.** Ախալցխայի հայկական տարազը գրավել է բազմաթիվ հետազոտողների ուշադրությունը: Առանձնակի գրավչություն է ունեցել կանանց ու աղջիկների հագուկապը: ԺԹ դարավերջին քաղաք այցելած ֆրանսիացի հետազոտող տիկ. Շանթրը հիացմունքով նշել է. «Ոչինչ այնքան վայելչագեղ է ինձ համար, որքան Ախալցխայի հայ կանանց տարազը: Գործածուած պաստառներու գեղեցկութիւնը, զգեստուց հիանալի պարզութիւնը, գոհարեղինաց ճաշակաւոր հարստութիւնը, այնպիսի յարմար և ներդաշնակ ամբողջութիւն մը կը կազմեն, որ այս յիրաւի նշանաւոր կանանց կերպարանքին աւելի փայլ մը կ'ընծայեն: Իրենց գլխազարդը, մանաւանդ հանդիսաւոր օրերուն, ոսկի դրամներով յեռեալ վարսակալը, ուսկից քուքերուն երկայնութեամբ մինչև լանջաց վրայ կը կախուին մարգարիտներ՝ հին ոսկի դրամներով վերջաւորուած, յիրաւի ամենավայելուչ զարդ մ'է: Ձեռքս անցած գոհարներուն մէջ կար ոսկի մանեակ մը գեղեցիկ ճաշակով և հին ոճով յօրինուած, որ շատ մը իրարու վրայ դրուած ձկնաձև ազնիւ քարերէ բաղկացած էր»[511]:

Այլ տեղում տիկ. Շանթրը նշել է. «Ախալցիխի գեղեցիկ հայուհիները նախանձախնդրությամբ են վերաբերվում իրենց շքեղ տարազին և խնամքով պահպանում են նրա մենաշնորհը: Խիստ դժվար է ձեռք բերել թե՛ գործվածքներ, որոնք բացառապես

511 «Բազմավէպ», 1896, էջ 365:





Ախալցխա. հայուհիների տարազը

տեղական են, թե՛ զարդեր, որոնք պետք է պատվիրել, քանի որ վաճառքում հազվադեպ են հանդիպում: Այստեղ, ինչպես Հայաստանի ցանկացած այլ վայրում, կանայք գերազանց տնտեսուհիներ են: Նրանց տները, որոնք տարօրինակ կառուցվածք ունեն և ընդհանրապես թույլ են լուսավորված, աչքի են ընկնում արտակարգ մաքրությամբ»[512]:

**Անվանի ախալցխացիներ.** ԺԵ դարի առաջին կեսին հիշվում է Երուսաղեմ մեկնած ախալցխացի մահտեսի Ամիրը. «Այր ոմն ազնուական Ամիր-փաշայ անուն մահդասի...»[513]:

*Ազնավուրյան Միքայել* (1897-1978). որդի՝ Միսաք Ազնավուրյանի, մայրն ազատամարտիկ Արտաշես Սուճյանի քույրն էր: Մասնակցել է Ախալցխայի ինքնապաշտպանությանը, ապա տեղափոխվել քրոջ մոտ՝ Բաքու: Բաքվի ջարդերից ազատվել է Հովհաննես Աբելյանի շնորհիվ, որի դերասանական խմբի հետ էլ մեկնել էր Կ.Պոլիս: Այնտեղ հանդիպել է Քնար Բաղդասարյանին, ամուսնացել և 1920-ական թվականների սկզբին մեկնել Փարիզ: Այստեղ էլ 1924 թ. ծնվել է աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրը, որն էլ 2005 թ. մայիսի 29-ին այցելել է հոր ծննդավայրը[514]:

*Աղաջանյան Գրիգոր-Պետրոս (աշխարհիկ անունը՝ Ղազարոս).* կարդինալ (1946 թ.): Ծնվել է 1895 թ.: Ուսանել է Հռոմում: 1917 թ. ձեռնադրվել է քահանա: 1919-1921 թվականներին Թիֆլիսի հայ կաթողիկեների առաջնորդն էր: 1921-1932 թվականներին դասավանդել է Հռոմի Լևոնյան վարժարանում: 1937 թ. ընտրվել է հայ կաթողիկեների պատրիարք՝ ստանալով Գրիգոր-Պետրոս անունը: Վախճանվել է 1971 թ. և թաղվել Հռոմի Լևոնյան վարժարանի եկեղեցում[515]:

*Բագրատունի Հակոբ* (1879, Ախալցխա - 1943, Լոնդոն). 1917 թ. ստացել է գեներալ-մայորի կոչում: Մասնակցել է ռուս-ճապոնական պատերազմին և

512 **Madame B. Chantre**, նշվ. աշխ., էջ 343 (բնագրում՝ “Jalouses de leur splendide costume, les belles Arméniennes d’Akhaltzikh en gardent soigneusement le monopole. Il est fort difficile de se procurer soit des tissus absolument locaux, soit des bijoux, qu’il faut faire fabriquer sur commande, car on en trouve rarement dans le commerce. Ici, comme partout ailleurs en Arménie, les femmes se montrent des ménagères parfaites. Leurs maisons, de construction bizarre et faiblement éclairées en général, sont d’une propreté exquise”):

513 ԺԷԱ, էջ 518:

514 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 154-155:

515 Ով ով է. հայեր, հ. 1, էջ 72:





**Ախալցխա. երգչուհի Լուսինե Զաքարյանի հայրական տունը**

Առաջին աշխարհամարտին: Եղել է «Պետրոգրադի զինվորական օկրուգի գլխավոր շտաբի պետ, ապա գլխավոր հրամանատար: Միաժամանակ Պետրոգրադի հայկական զինվորական կոմիսարն էր: Մեծ աշխատանք է կատարել հայ զինվորներին Կովկասյան ճակատ տեղափոխելու, թուրքական զավթիչներից Հայաստանը, Ղարաբաղը, Բաքուն պաշտպանելու գործում: Եղել է ԱՄՆ-ում Հայկական զինվորական առաքելության ղեկավար, Հայաստանի Առաջին Հանրապետության դեսպանը Անգլիայում»[516]:

*Գայֆեճյան (Գայֆեջյան) Վահրամ* (14.4.1879, Ախալցխա - 30.11.1960, Երևան*)*. 1912-1923 թվականներին Ախալցխայում եղել է դրամատիկական թատրոնի ղեկավարը: Նրա անհատական ցուցահանդեսը բացվել է նաև ծննդավայրում 1922 թ.: Ուշագրավ են «Ախալցխայի հրեաների թաղը», «Ախքալա», «Եղրևանի», «Պարահանդեսից հետո», «Երևանյան տեսարան» և բազմաթիվ այլ գործեր:

*Գինոսյան Գագիկ* (1966, Ախալցխա). ինժեներկիբեռնետիկ, ազգագրական համույթների միջազգային փառատոնի դափնեկիր, Ա. Իսահակյանի անվան երիտասարդ ստեղծագործողների գրական առաջին մրցանակի դափնեկիր (2001): 1992 թ. մասնակցել է Արցախյան ազատամարտին՝ ընդգրկվելով Ալեքսանդր Թամանյան-Կրտսերի գլխավորած «X» գաղտնի ջոկատի Մահապարտների «Արծիվ» գումարտակում: Ոչնչացրել է թշնամու երկու տանկ, մասնակցել հայկական նորաստեղծ զենքի փորձակմանը: 1994-1996 թվականներին ծառայել է Հայոց բանակում՝ հատուկ նշանակության առանձին գումարտակում: 1995-1996 թվականներին սովորել և ավարտել է Մոսկվայի մարշալ Շապոշնիկովի անվան Դաշտային ռազմական ակադեմիան: «Կարին» ազգագրական համույթի ղեկավարն է: Պարգևատրվել է «Արծիվ մահապարտ» (1998) և «Արիության համար» (2000) մեդալներով: 2006 թ. լույս է ընծայել «Ողջույն, տղե՛րք» գիրքը[517]:

*Զաքարյան Լուսինե* (1.6.1937, Ախալցխա - 31.12.1992, Երևան). երգչուհի (քնարական սոպրանո):

*Էփրիկյան Սուքիաս* (1873, Ախալցխա - 1952, Վենետիկ). աշխարհագետ: Կազմել է աշխարհագրական հանրագիտարանային պատկերազարդ «Բնաշխարհիկ բառարան» և «Գրպանի ատլաս»:

*Ինճիկյան Արամ* (29.12.1910, Ախալցխա - 22.3.1975, Երևան). գրականագետ, 1980 թ. հետմահու արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի: Հեղինակել է «Ծատուրյանի կյանքը», «Հովհաննես Թումանյան. կյանքի և ստեղծագործության պատմությունը, 1869-1899», «Ավետիք Իսահակյան» և այլ աշխատություններ[518]:

*Ինճիկյան Հովհաննես* (25.9.1913, Ախալցխա - 5.4.1990, Երևան). պատմաբան, արևելագետ: Հեղինակել է «Բոգդան Կնունյանց», «Օսմանյան կայսրության անկումը», «Սոցիալական հոգեբանությունը և ցեղասպանությունը» և այլ աշխատություններ[519]:

*Լուսինյան Արեգ* (20.3.1935, Ախալցխա). երգահան, մանկավարժ: Գրել է 2 սիմֆոնիա, «Միշտ քեզ հետ» օպերետը, դաշնամուրային մանրանվագներ, վոկալ, մանկական երգեր և այլն[520]:

*Խաչվանքյան Կարպ* (23.1.1923, Ախալցխա - 29.11.1998, Երևան). դերասան, ռեժիսոր: 1967 թ. ստացել է ՀՀ ժող. արտիստի կոչում, 1998 թ. շնորհվել է Մեսրոպ Մաշտոցի շքանշան: Խաղացել է Ա. Պապայանի «Մեծ հարսանիք», Պսաֆասի «Պահանջվում է ստախոս», Ժ. Անանյանի «Տաքսի-տաքսի» և այլ բեմադրություններում: Նկարահանվել է նաև կինոյում («Պատվի համար», «Ճանապարհ դեպի կրկես»), բեմադրել է Լոռի «Իմ չքնաղ լեռի», Ա.

516 Մանրամասն տե՛ս **Аветисян Г.**, Генерал Акоп Багратуни, «ՊԲՀ», 1997, № 1, էջ 41-56:

517 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 175-176:

518 Ով ով է. հայեր, հ. 1, էջ 459:

519 Նշվ. աշխ., էջ 459:

520 Նշվ. աշխ., էջ 486:



Ախալցխա. զինագործ Չիֆթալարյանների տունը



Ախալցխա. կարդինալ Գ. Պ. Աղաջանյանի տունը

Այվազյանի «Սեր աստղերի տակ» ներկայացումները և այլն[521]:

*Կոջոյան Հակոբ.* (1883, Ախալցխա - 1959, Երևան). նկարիչ: 1935 թ.-ից ՀԽՍՀ ժողնկարիչ: Գործերը պահվում են Հայաստանի ազգային պատկերասրահում և Կոջոյանի տուն-թանգարանում (տուն-թանգարանը գործում է 1973 թ.-ից) և այլ թանգարաններում[522]:

*Ղազարյան Շահում* (22.9.1932, Ախալցխա - 2007, Երևան). ՀՀ վաստակավոր արտիստ: 1981 թ. արժանացել է ՀՀ Պետական մրցանակի, 1999 թ. պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով: Խաղացել է Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ», Վ. Սարոյանի «Մի գավաթ բարություն», Մ. Գալշոյանի «Մամփրե արքա» և այլ ներկայացումներում: Նկարահանվել է կինոյում («Կյանքի լավագույն կեսը», «Հին օրերի երգը» և այլն)[523]:

*Ղանալանյան Արամ* (12.02.1909, Ախալցխա - 09.06.1983, Երևան). բանագետ-բանասեր: Հեղինակել է «Հայ շինականի աշխատանքի երգերը» (1937), «Հայկական առածանի» (1951), «Ավանդապատում» (1969) և այլ աշխատություններ:

*Մալխասյանց Ստեփան* (25.10.1857, Ախալցխա - 21.7.1947, Երևան). բանասեր, լեզվաբան, բառարանագիր: Նախնական կրթությունը ստացել է Կարապետյան դպրոցում, ապա ուսումը շարունակել է ռուսական գավառական ուսումնարանում: 1874 թ. ավարտել է և դարձել Էջմիածնի նորաբաց Գևորգյան ճեմարանի առաջին սաներից: Տեւուչ է աշխատել նաև իր ծննդավայրի Կարապետյան դպրոցում: Հեղինակել է «Ուսումնասիրություն Փավըստոս Բուզանդի պատմության» (1896), «Գրաբարի համաձայնությունը» (1892), «Հայերեն բացատրական բառարան» 4 հատորով (1944-1945) և բազմաթիվ այլ աշխատություններ:

*Մանանդյան Հակոբ* (10.11.1873, Ախալցխա - 4.2.1952, Երևան). պատմաբան, աղբյուրագետ, բանասեր: Հեղինակել է ավելի քան 100 աշխատություն՝ նվիրված Հայաստանի հին և միջնադարյան պատմությանն ու բանասիրությանը, սոցիալ-տնտեսական հարաբերություններին, պատմական աշխարհագրությանը, առևտրական ճանապարհներին, վիմագրությանը և այլն:

*Մանուկյան Մամիկոն* (1927-1995). ՀՀ վաստակավոր արտիստ (1972): 1981 թ. արժանացել է ՍՍՀՄ պետական մրցանակի: Խաղացել է Երևանի պատանի հանդիսատեսի և Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, նկարահանվել է «Սայաթ-Նովա» և այլ ֆիլմերում[524]:

*Մեսչյան Ստեփան* (1922, Ախալցխա). 2006 թ. արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակին՝ «Կավային գետնահողերի փորձարարական հոսքաբանություն» աշխատության համար: ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտում հիմնել է գետնահողերի ռեոլոգիայի լաբորատորիաներ: Որդին է ճարտարապետ, կոմպոզիտոր, երգիչ Արթուր Մեսչյանը[525]:

*Սաֆրազյան Ալմա* (Գելոյան Վարդանուշ՝ 8.11.1859, Ախալցխա - 18.11.1932, ք. Աղդաշ). դերասանուհի, թատերական գործիչ: Բեմական գործունեությունը սկսել է Ախալցխայում 1881 թ.: Խաղացել է Օֆելյայի դերը Շեքսպիրի «Համլետ»-ում (Համլետի դերակատարն էր Պետրոս Ադամյանը):

*Սուջյան Կարո.* 1909-1910 թվականներին իր միջոցներով Սուխլիս գյուղի մոտ կառուցել է առաջին էլեկտրակայանը և լուսավորել Ախալցխան[526]:

*Սուրենյանց Տեր-Զաքարյան Հակոբ.* հայտնի է եղել որպես եկեղեցական գործիչ և պատմաբան: Հեղինակել է ճեռագրեր և Լազարյան ճեմարանի պատմությանն ու Լազարյանների տոհմագրությանը նվիրված աշխատություններ: Աշխարհահռչակ նկարիչ Վարդգես Սուրենյանցի հայրն է: Քահա-

521 Նշվ. աշխ., էջ 512:

522 Մեր անվանի դասախոսները, առաջին մաս, Երևան, 1970, էջ 117-118:

523 Ով ով է. հայեր, հ. 1, էջ 700:

524 **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, Երևան, 1981, էջ 293: Տե՛ս նաև **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 220-222:

525 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 226-228:

526 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 71:



Ախալցխա. Վարդգես Սուրենյանցի տունը



Ախալցխա. Ինճիկյան եղբայրների տունը

նայագործել սկսել է Ախալցխայում: 1853-1856 թվականներին Ղրիմի պատերազմի ժամանակ Հակոբ քահանան «...տեղի հայ երիտասարդներից կազմել էր պարտիզանական հեծյալ ջոկատ, ծիերի սմբակներին քաղիք փաթաթած՝ անաղմուկ անցել էր Ախալցխային մոտեցած թուրքական մի զորամասի թիկունքը, անակնկալ հարձակումով թշնամուն կոտորել ու խուճապի մատնել, քաղաքը փրկել հնարավոր ներխուժումից և իր այդ քաջության համար պարգևատրվել ռուսաստանյան մարտական շքանշանով»[527]:

*Սուրենյանց Վարդգես* (27.2.1860, Ախալցխա - 6.4.1921, Յալթա). նկարիչ, թարգմանիչ, արվեստի տեսաբան: Ախալցխայում ապրել է մինչև 1867 թ.: Հեղինակն է «Սալոմե», «Ոտնահարված սրբություն», «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ», «Զաբել թագուհու վերադարձը գահին», «Հռիփսիմեի վանքը Էջմիածնի մոտ», «Ասպետ կինը» և այլ բազմաթիվ կտավների:

Առ այսօր Ախալցխայում պահպանվում է Վարդգես Սուրենյանցի հայրական տունը. «Մեկ հարկանի քարե տուն է՝ հողածածկ հարթ տանիքով, կամարավոր դուռ ու լուսամուտով»[528]:

*Վարդանյանց Վարդան աղա.* Ախալցխայի բարեգործական ընկերության անդամ, պատվավոր քաղաքացի: Նրա նյութական աջակցությամբ 1863 թ. կառուցվել է Մարդայի Սբ. Նշան Վարդանանց եկեղեցին: Վախճանվել է 1887 թ. ապրիլի 21-ին և ամփոփվել Սբ. Նշան եկեղեցու գավթում[529]:

*Օրբելյանով Մ.* Արտահան-Թիֆլիս առևտրական ընկերության տնօրեն: 1884 թ. կառուցել է Ախալցխայի առաջին երկհարկանի շենքը, որը խորհրդային տարիներին ծառայել է նախ շրջկոմ, ապա երաժշտական դպրոց:

Շենքի ճակատին գրված է.

1884 թ. Մ. Օ.:

*Հրատ.* **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 70:

*Ֆանարջյան Բարդուղիմեոս* (1.9.1898, Ախալցխա - 9.4.1976, Երևան). Հայաստանի ռենտգենառադիո-ուռուցքաբանական ծառայության հիմնադիրն է[530]:

**Ախալցխացիներն այլուր.** 1813 թ. հիշվում է «....Ուրբանեան դպրոցի աշակերտ ախալցխացի Պետրոս վրդ. Կուսճիճեան (Couozizan), որ Հնդկաստանէն Պասրա հասած է 20 յունիս 1813ին, ու հիւանդանալով վախճանած է յուլիս 20ին, 50 տարեկան»[531]:

Կարինի Սբ. Աստվածածին եկեղեցու մուտքերից մեկի «...թեւերուն վրայ գտնուած հրեշտակաձեւ արոյրէ զարդերուն վրայ փորագրուած կը տեսնենք...».

*Յիշատակ է ախլցխացի յուստայ Կարապետ միսի. Գալուստեան, 1846:*

*Յիշատակ է ախլցխացի մախաբչի Կարապետ Նազարէթեան, 1846[532]:*

Կարինի հայոց գերեզմանոցի տապանաքարերին.

*Ղուկասու Տէրազարեան, ծն. 1830 յԱխլցխա, մեռ. 1891, փետ. 6[533]:*

*...Ղազարոս Տութինեան, ծն. յԱխլցխա, 1882, հնգ. 1902 մրտ. 9[534]:*

Դուշեթի հայոց գերեզմանոցի տապանաքարերից մեկի վրա.

527 **Հարությունյան Վ.**, Այս տանն է աշխարհ եկել Սուրենյանցը, «Հայրենիքի ձայն», 1985, № 8, էջ 4:

528 **Հարությունյան Վ.**, նույն տեղում:

529 **Հրազն**, Նամակ Ախալցխայից, «Արձագանք», 1887, № 15, էջ 226-227: Տե՛ս նաև **Նահատակյան Ռ.**, Ախալցխայի պատվավոր քաղաքացին, «Գարուն», 1988, № 9, էջ 19-20:

530 Մեր անվանի դասախոսները, առաջին մաս, էջ 260-261: Տե՛ս նաև **Կանցյան Լ.**, Լույսի և հույսի կանթեղներ, Երևան, 2003, էջ 31-37:

531 **Ալպօյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 288:

532 **Քօսեան Յ.**, նշվ. աշխ., հ. Ա, Վիեննա, 1925, էջ 152:

533 Նշվ. աշխ., էջ 302:

534 Նշվ. աշխ., էջ 317:

*Ïîìåùèêú ...*

*Յայսմ տապանի հանգ/չի մարմին Ախալ/ցխաբնակ Մկրտչի Պե/տրոսեան, որ արքու/նական պաշտօնիւ / ոչ հասեալ իւրոց / բաղձանաց, 31 ամաց / վախճանեցաւ յ1-ն / յունիսի 1859 ամի, / օտար ի հայրենեաց / հանդիպօղք Ա(ստուա)ծ ո/ղորմի ասացէք:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Ծանոթ.* սկզբում վեց տողով ռուսերեն:

Բագարան գյուղի (Կարսի մարզ, Ախուրյան գետի աջ ափին) եկեղեցու հյուսիսային պատին՝ 4 տող.

*Ախլցխացի / Ակոփ Սալքանեն/ան Բախչինեան, / 1903 թ.:*

*Հրատ.* առաջին անգամ:

Խորվիրապ վանքի եկեղեցու որմերին ևս պահպանվել են ախալցխացիների նմանօրինակ հիշատակագրություններ:

**Արհեստ և առևտուր.** Ինչպես այլուր, Ախալցխայում ևս արհեստներն ու առևտուրը միմյանց սերտաճած և իրարից մեծապես կախում ունեցող զբաղմունքի ոլորտներ էին:

Աշխարհագրական հարմարավետ դիրքով պայմանավորված՝ Ախալցխան դարեր շարունակ կարողացել է պահպանել վաճառաշահ քաղաքի իր համբավը:

Նախքան 1828-1829 թվականներին ծայր առած պատերազմը քաղաքը առևտրական հանգուցակետ էր բազմաթիվ քարավանների համար. «...Ախըլցխա ամենօրեայ յարաբերութիւններ ունէր Երևանու, Կարնոյ, Տփղիսի և Տրապիզոնի հետ: Անոնց միջոցով կ'ընդունէր Ռուսիոյ և Եւրոպիոյ բերքեր, և ինքն ալ պարսիկ, թաթար և կովկասեան վաճառներ կը յուղարկէր անոնց՝ բազմաթիւ կարաւաններով»[535]:

Մինչև ռուսների մուտքն ընդհանուր առմամբ քաղաքի բարգավաճ վիճակը շեշտել է նաև ֆրանսիացի հետազոտողը. «Այս քաղաքը թուրքերի օրոք բավականին մեծ առևտուր էր վարում: Այն վիլայեթի գլխավոր քաղաքն էր և անընդհատ կապ ուներ Կարսի և Էրզրումի հետ, և դրա շնորհիվ արդյունաբերությունը զարգացած էր այնտեղ: Բացի դրանից՝ Ախալցիխեն գերիների մեծ շուկա էր: Այդքան մոտ լինելով Վրաստանի՝ ռուսական տիրապետության տակ գտնվող վայրերին, որոնց հետ կապված էր Բորժոմի հովտով, այն մատչելի էր լեզգիների համար, որոնք ոչ միայն գալիս էին ծառայելու փաշաների դրոշի տակ, այլև օգտվում էին ամեն առիթից՝ վրացիներին առևանգելու համար. նրանց հեշտությամբ անցկացնում էին թուրքական սահմանից՝ թաքնվելով անտառներում, որոնց ամենածուռումուռ արահետներն անգամ գիտեին: Գորիի և Քարթլիի մյուս քաղաքների ու գյուղերի համար այս առևանգումները իսկական չարիք էին դարձել»[536]:

«Երբ Ախալցիխեն դարձավ ռուսական, այս բոլոր ավազակությունները դադարեցին: Լեզգիները, որ նախկինում խմբերով էին գալիս, արդեն միայն մեկ-մեկ և այն էլ մեծ դժվարությամբ են կարողանում հասնել թուրքական սահմանին: Էլ ավելի դըժվար է գերիներ տեղափոխելը, և նույնիսկ եթե դա պատահի, Ախալցիխեն այլևս գերիների շուկա չէ: Ռուսական բազմաթիվ մաքսատների պատճառով այդ քաղաքը նոր վնաս կրեց. այն լիովին մեկուսացավ, ասես մոռացության տրվեց և զրկվեց Անատոլիայի իր հարևանների հետ հեշտ հաղորդակցությունից: Բացի դրանից՝ այն ոչ մի առևտրական ճանապարհի վրա չի գտնվում, իսկ ամենամոտ նավահանգստից՝ Բաթումից, բաժանված է բարձր լեռնաշղթայով, որը նույնքան դժվար է անցնել, որքան Սախերիի լեռնաշղթան»[537]:

Ախալցխան առևտրական կապեր ուներ Դոնի Ռոստովի, Թավրիզի, Թիֆլիսի, Կարինի, Կոստանդնուպոլսի, Մարսելի, Մոսկվայի, Նիժնի Նովգորոդի, Վարշավայի, Վիեննայի, Օդեսայի և այլ քաղաքների հետ[538]: Հիմնականում ներմուծում էին

535 **Նուրիխան Մ.**, նշվ. հոդվ., էջ 102:

536 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 261 (բնագրում՝ “Cette ville faisait sous les Turcs un commerce assez considérable. Chef-lieu d'un pachalik, et en communication continuelle avec Kars et Arzeroum, l'industrie s'y était développée. D'ailleurs, Akhaltsikhé était un marché important d'esclaves. Si voisine des possessions russes de la Géorgie avec lesquelles elle communiquait par la vallée de Bardjom, elle se trouvait à la portée des Lesghiens qui non seulement venaient s'enrôler sous les drapeaux des pachas, mais qui profitaient de toutes les occasions possibles pour enlever des Géorgiens, qu'ils transportaient facilement au delà de la frontière turque en se cachant dans les bois dont ils connaissaient les senriers les plus détournés. Gori et les autres villes et villages de la Karthli, souffraient cruellement de ces enlèvements”.): Ի դեպ, ֆրանսիացի հետազոտող Գամբան 1820 թ. քաղաքի առևտրական նշանակությունն ավելի համեստ է նկարագրել. «Ակիսկայում առևտուրը շատ չէ, և շուկան էլ մեծ չէ: Այնտեղ որոշ ապրանքներ են բերում Պարսկաստանից, և հարաբերությունները միայն Երևանի, Էրզրումի և Թիֆլիսի հետ են» (**Chevalier Gamba**, նշվ. աշխ., էջ 404 (բնագրում՝ “Le commerce d'Akiska est peu considérable, et son bazar n'est pas grand. On y porte quelques marchandises de la Perse, et ses rapports ne sont qu'avec Irevân, Arzroum et Tiflis”):

537 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 262 (բնագրում՝ “Akhaltsikhé devenue russe a fait cesser tous ces brigandages. Les Lesghiens qui passaient par troupes, ne peuvent plus que un à un, et très difficilement, atteindre les frontières des Turcs. Les difficultés sont encore plus grandes pour transporter des esclaves, et quand cela serait, Akhaltsikhé n'en est plus le marché. Par son incorporation dans la ligne des douanes russes, cette ville a fait une nouvelle perte; elle se trouve tout isolée et comme jetée dans un coin, etant privée de toute communication facile avec ses voisins de l'Anatolie; d'ailleurs, elle n'est sur aucune grande route naturelle de commerce, le port le plus rapproché d'Akhaltsikhé, Batoum, en est séparé par une haute chaîne de montagnes, aussi pénible à traverser que celle de Sakhéri”):

538 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 196-197:

գործվածքեղեն, նպարեղեն, հագուստեղեն, կոշկեղեն և սպասք, արտահանում էին արծաթե, ոսկեկար, կաշվե, մետաքսե իրեր և առավելապես մըրգեր, կարտոֆիլ, կաղամբ, կաթնամթերք, երկաթե առարկաներ և այլն:

1831 թ. Ախալցխայում աշխատում էր 1236 արհեստավոր, այդ թվում՝ 85 պղնձագործ, 45 ծխախոտագործ, 249 դերձակ, 52 նպարավաճառ, 153 դարբին, 40 կաշեգործ, 74 հյուսն, 142 կոշկակար, 75 այծի մազից թել մանող ու պարկ գործող, 14 մոմագործ և այլք[539]: 1839 թ. նրանց թվաքանակը ներկայացրել է հետևյալ պատկերը՝ 40 պղնձագործ, 33 ծխախոտագործ, 26 կաշեգործ, 15 սափրիչ, 48 հյուսն, 41 ճոթավաճառ, 14 օղեվաճառ, 57 կոշկավաճառ, 8 փականագործ, 27 այծի մազից թել մանող ու պարկ գործող, 11 մոմագործ, 8 չիթ պատրաստող և այլք[540]:

Քաղաքում հաստատված արհեստավորներն արդեն 1830-ական թվականներին ստեղծում են համքարություններ (ցեխեր), որոնք կառավարում էր ավագանին կամ համքարության ղեկավարը[541]:

Արհեստավորների համար ստեղծված դժվարին պայմանների պատճառով գաղթից կարճ ժամանակ անց նրանց թիվն աստիճանաբար սկսում է նվազել: Ախալցխայից հեռացող արհեստավորները կա՛մ վերստին հայրենիք էին վերադառնում, կա՛մ էլ փոխադրվում այլ քաղաքներ՝ Թիֆլիս, Դոնի Ռոստով և այլն:

Հայտնի է, որ նույն տարիներին բնիկ քաղաքաբնակներից 66 հոգի զբաղվում էր առևտրով, 121-ը՝ արհեստագործությամբ, իսկ կարնեցի գաղթականներից 200-ը առևտրական էր, 1130-ը՝ արհեստավոր[542]:

Հետագա տարիներին գործարանային արտադրանքի էժան սպառման հետևանքով արհեստավորների աշխատանքը գրեթե ամբողջությամբ հետին պլան է մղվում (օրինակ՝ Մոսկվայի ոսկերչական գործարաններում պատրաստել են Ախալցխայի արհեստավորների ստեղծած ոսկե և արծաթե իրերի նմանօրինակներ և վաճառել բավական մատչելի). խանութները փակվում են, արհեստավորներն էլ միայն պատվերներ են ընդունում[543]:

Քաղաքի արհեստների վերաբերյալ պահպանվել է բավական ուշագրավ վավերագիր, որն է «Հաստատութիւն վասն բարեգոյն կարգադրութեան գաղթականացս»: Կազմվել է 1843 թ. մարտի 15-ին և ունի 61 ստորագրություն: Ի դեպ, վերջին հատվածը կարևոր է թե՛ ազգատոհմերի և թե՛ արհեստների տեսակների պատմությունն ուսումնասիրելու առումով.

«Կլավա միհ [մահդեսի] Գէորգ Բաղդասարեան
Յօհաննէս Եփրիկեան
Յարութիւն Մութաւօվ
Միհ Սիմոն Մութաւօվ
Միհ Աղապապ միհ Վարդանօվ
Միհ Մնացական միհ Սաղաթելօվ
Սարգիս Յ(ա)կ(ո)բ(ջան)եան (գուցե՝ Յակոբեան)
Միհ Կարապետ Ազնաւուրեան
Միհ Աղայբէկ միհ Սիմոնեան
Ակոբ Սահարօվէս
Ղայթանճի (տրեզագործ) Սահակ Ղարայլանօվ
Մկրտիչ Սաղօեան
Սարգիս Քէշիշով
Մանուկ Պախչինեան
Պէռպէռ (սափրիչ) Կարապետ Աղապապեան
Մկիտան (ոգելից խմիչքներ պատրաստող) Գրիգոր Յավայքօվ
Մօմճի (մոմագործ) Կարապետ Ոզկանովն է
Ուստապաշի Սահակ Խօյիկովս
Ուստաբաշի Նազարէթ Կարապետեան
Միհ Միքայէլ միհ Աւաջեան (գուցե՝ Աւագեան)
Յակոբ Էլչիդրամօվ
Նազարէթ Ռափայէլօվ
Միհ Նահապետ Կարապետովս
Միհ Կարապետ միհ Սարգիսով
Միհ Սիմաւոն Շահանօվ
Ներսէս Մըըլեանց
Յակոբ Տօնականօվ
Յօհաննէս Տէր Յակօբօվ
Միհ Յակոբ Օսկանովս
Աւետիս միհ Գասպարօվս
Միհ Ասլան Էզեկով
Միհ Մկրտիչ Մարաքեանց
Աղապապ Սուզէնայճեան
Յօհաննէս Մնտօեան
Էլպակ Անանիկեան
Կարապետ Յակօբէս Քացղեան
Յուստաբաշի տապաղ (կաշեգործ) Սաղաթէլ Յարութէնօվ
Յուստաբաշի չուլֆօկ (գուցե՞ երկրագործ) Գրիգոր, յօպաճի (՞)
„ պայռպառ (սափրիչ) Յակօբ Յակոբեան
„ դուրկեր (հյուսն) Ստեփան ...
„ Չախօյ Յօհաննէսեանս
„ հայճի Գէյորք Օքզուզեանցս, թէզազ
Մկիտան Պետրոս Ղազարօվ
Ուստաբաշի Մարկոս Ժախիհօվ, ղազանճի (պղնձագործ)
Գէվորք Քէշօվ, յուստաբաշի, թիթինճի (ծխախոտագործ)
Ուստաբաշի Սերոբ Ղեվենով, թէրզի (դերձակ)
Ուստաբաշի Սէրգիս Մարտիրոսով, պախալ (նպարավաճառ)
Ուստաբաշի Տէփան Մանասով, դարբին
Ուստաբաշի էթեր (մանրավաճառ խանութպան) Յեղիայ միհ Առաքելօվ
Ուստաբաշի Աղայպակ միհ Յակոբով, փանպխճի (բամբակագործ)

539 **Ղաֆադարյան Կ.**, նշվ. հոդվ., «ԲԵՀ», 1963, № 3, էջ 169-170:
540 Նույն տեղում:
541 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 233:
542 Նշվ. աշխ., էջ 220:
543 **Гулишамбаров С.**, Город Ахалцих, “Сборник материалов для описания местностей и племен Кавказа”, вып. XI, Тифлис, 1891, с. 210-211.

Ուստաբաշի ղայթանճի (տրեզագործ) Սիրական Արթէնով

Ուստաբաշի միտ Նազարէթ Սաղաթէլով, թոզմաճի (ձուլման միջոցով պղնձե իրեր պատրաստող)

Ղասապպաշի (մսագործ) Կարապետ Յակոբով

Ղաֆավայճի (կոշկավաճառ) Պետրոս Վարայֆտով

Ուստաբաշի ...

Ուստաբաշի Սըրապ Մինաս, մութաւ (այծի մազից թել մանող և մազե պարկ գործող)

Ղըլչոց (փականագործ) ուստաբաշի Օվակիմ Պուռնուսուզով

Մոմճի ուստաբաշի Նիկօղոս Երսէլիօվս

Ուստաբաշի սառաճ (ձիասարքի կաշվե իրեր պատրաստող) միի Եղիեա Նազարեթօվ

Չըքչոնց (չիք կտոր պատրաստող) ուստաբաշի Համպար Օվանէսօվ

Թէլալ (առևտրի միջնորդ) ուստաբաշի Աղապալէ Սերգեսով»[544]:

Ախալցխայի՝ առանց այն էլ ոչ փոքրաթիվ արհեստավորների թվաքանակը 1866-1876 տասնամյա ժամանակամիջոցում ավելացել է գրեթե 50 %-ով՝ 413-ից հասնելով 607-ի[545]:

«1872 թ. Ախալցխայում հաշվում էր ուստաբաշիներ ունեցող 18 համքարություն: Մնացած համքարությունները իրենց փոքրաթիվ անդամներով չունեին իրենց ուստաբաշիները և միավորված էին միատեսակ համքարությունների գլխավորների հետ: Արհեստավորների ընդհանուր քանակը (վարպետների, ենթավարպետների և աշակերտների հետ) ընդհանրապես անցնում էր 1500-ից»[546]:

Նույն տարիներին արհեստագործության և առևտրի բնագավառում տիրող կացության առթիվ նշվել է. «...Ախալցխայի հայերը իրենց օրական պարէնը ձեռք ձգում են գլխաւորապէս երկու միջոցով՝ արհեստներով և մանրավաճառութեամբ: Առաջինների թիւը աւելի շատ է: Ախալցխեցիք այս արհեստները բերած են իրենց հետ Էրզրումից և մինչև հիմայ մինևոյն ընթացքով շարունակում են...: Դերձակների մի քանիսի մօտ միմիայն գտնվում են այժմեան նոր մեքենաներ: Չնայելով այսքան դժուարութիւններին, մեր արհեստաւորները այնքան ջերմեռանդ և բարեխիղճ են դէպի իրենց արհեստները, որ նրանց մէկ քանիսի ձեռագործները գրեթէ կատարելագործուած են և եւրոպական քաղաքների արուեստահանդեսներում գովասանական թերթերի և պատուանշանների արժանացած...: Այժմ նրանց ձեռագործները տեղական կարօտութիւնները լեցնելից յետոյ մեծ քանակութեամբ գնում են Երևան, Աղէքսանդրոպոլ, Քութայիս և շրջակայ գիւղերը»[547]: Ի դեպ, արհեստավորներն ունեին գլխավոր և առանձին արհեստապետներ[548]:

1876 թ. Ախալցխայում զարգացած առևտրի ճյուղերը և դրանցով զբաղված վաճառականների և արհեստավորների թվաքանակը ներկայացրել է հետևյալ պատկերը. «...կան այժմ 68 մեծ վաճառական, 125 մանրավաճառ, 107 նպարավաճառ, 50 օղեվաճառ, 80 կոշկակար և մաշկակար, 24 հիւսն, 35 հացթուխ, 65 երկաթագործ, 23 ոսկերիչ, 62 դերձակ, 22 պղնձագործ, 16 սափրիչ, 15 սրճավաճառ, 10 ներկարար, 8 կաշեգործ, 10 զինագործ, 16 ոստայնագործ, 10 ծխափայտ և ծխափող շինող, 28 մետաքսագործ, 10 թամբագործ, համետագործ և պարկագործ, 1 ծխախոտի գործարան, 2 սանդր շինող, 6 անագագործ, 10 մսավաճառ, 4 մոմավաճառ, 5 կղմինդրի գործարան և 2 օճառի գործարան»[549]:

Հակառակ արհեստագործական արտադրանքի ստեղծման նախապետական եղանակների՝ նույն ժամանակ դրանք բարձր գնահատականի էին արժանանում արտերկրի ցուցահանդեսներում. «...Ռուսաստանի և Եւրոպայի զանազան արուեստահանդէսներում ձայն են ունեցել և պարգևների արժանացել, կաշեգործները, ոսկերիչները, դերձակները, մի տեսակ ոսկեթել բանուածքով, գլխանոցի համար, զինագործները և մետաքսագործները»[550]:

Առերևույթ և առաջին հայացքից միանգամայն դրական ցուցանիշներին հակառակ՝ խորաթափանց ժամանակակիցն արդեն նույն տարիներին ապագայի համար ուրվագծել էր ոչ այնքան արգասաբեր հեռանկար[551]:

1878 թ. Ախալցխայում տարածված արհեստների վերաբերյալ նշվել է. «Արհեստագործությունն Ախալցխայում բավական լավ է զարգացած...: Բացառությամբ փոքրաթիվ վրացիներից, որոնք կազմում են մոտ 100 մարդ, բոլոր արհեստագործները 1829 թ. պատերազմից հետո այստեղ հաստատված հայեր են և առանձնանում են ընդհանրապես արհեստների նկատմամբ հակվածությամբ...: Ախալցխայում գերիշխող և գլխավոր արտադրատեսակներից կարող են համարվել ոսկերչությունը, արծաթագործությունը, երկաթագործությունը, ռսկեկարությունը և կաշեգործությունը: Սակայն դրանց մեջ հատուկ ուշադրության են արժանի ոմն Մելքոն Չիլինգարովի ոսկեթել, Արութին Տեր-Մարգարովի մետաքսե, Աղաբաբովների արծաթե, Չիֆթալարովների զենքի և մահտեսի Ջառաբովի կաշվե

544 **Ղաֆադարյան Կ.**, նշվ. հոդվ., «ԲԵՀ», 1967, № 3, էջ 173-174: Ի դեպ, հոդվածագիրը 1930 թ. վավերագիրը տեսել է Բայբուրդյանների տուն-թանգարանում:

545 “მაცნე”, 1967, № 4 (37), էջ 135:

546 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 25 (բնագրում՝ “В 1872 г. в Ахалцихе насчитывалось 18 цехов (аснафов), имеющих своих устабашей. Остальные цехи, по малочисленности своих членов, не имели своих устабашей и входили в состав главных, однородных с ними цехов. Общее число ремесленников (мастеров с подмастерьями и учениками) простиралось вообще более 1500 человек”):

547 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1872, № 23, էջ 3:

548 Նույն տեղում:

549 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 430:

550 Նշվ. հոդվ., էջ 431-432:

551 Նշվ. հոդվ., էջ 433, 444:

աշխատանքները: Նրանք բոլորն ունեն խրախուսական շքանշաններ և բացի դրանից՝ փարիզյան և լոնդոնյան ցուցահանդեսներից պատվոգրեր: Որոշ վարպետներ Համառուսական մանուֆակտուրային ցուցահանդես ուղարկված իրենց արտադրանքի համար պարգևատրվել են բրոնզե շքանշաններով և և պատվոգրերով:

Իրենց բարձրորակությամբ առանձնանում են օրինակ ոսկով և մետաքսով ասեղնագործած գլխանոցները, կանացի թամբատակի թաղիքները, բազմագույն սեկերը (իմա՛ այծի կաշի), կանացի չադրաները, պղնձե մոմակալներն ու կաթսաները, արծաթե դրամապանակները, ծխախոտատուփերը, շաքարամանները, ակահակները, գույնզգույն թելերը և այլն»[552]:

Պատրաստի արտադրանքը, բացի տեղում իրացվելուց, արտահանվել է նաև Թուրքիա, Այսրկովկաս, իսկ ոսկեթել ասեղնագործությամբ մետաքսե իրերի մի մասն ուղարկվել է Ռուսաստան և Արևմտյան Եվրոպա[553]:

1886 թ. նշվել է, որ Թիֆլիսից հետո Ախալցխան արհեստավորների թվով Թիֆլիսի նահանգում զբաղեցնում էր երկրորդ տեղը: 1876 թ. պաշտոնական տվյալներով՝ քաղաքում աշխատում էր շուրջ 2000 արհեստավոր, իսկ տասը տարի անց, նրանց թիվը նվազելով, հասել է 1115 մարդու[554]:

Ախալցխայի արհեստավորներն առանձնապես աչքի են ընկել ոսկեթել ասեղնագործությամբ, արծաթե ցանցկեն իրերի պատրաստմամբ, կաշվի մշակմամբ: 1886 թ. նշվել է, որ նրանց՝ մետաքսի և մահուդի վրա կատարված ոսկեթել ասեղնագործությունն ու արծաթե առարկաների նրբարվեստ մշակումը բազմաթիվ ցուցահանդեսներում արժանացել է տարբեր մրցանակների ու պարգևների[555]:

1886 թ. քաղաքում 63 բանվորների մասնակցությամբ աշխատում էր 15 գործարան, այդ թվում՝ 6 աղյուսի, 3 օճառի, 3 կաշեգործական, 1 հանքային ջրերի, 1 գարեջրի, 1 ծխախոտի[556]:

Ախալցխայում բավականաչափ զարգացած էր ոսկերչությունը, սակայն արդեն 1884 թ.-ից ավելի շատ անկում էր ապրում. «Ախալցխան նշանաւոր է իւր արհեստներով մանաւանդ ոսկերչութիւնով, բայց այդ արհեստները կամաց կամաց ընկնում են պահանջի պակասութիւնից և աղքատութիւնը տարածուում է արհեստաւոր դասակարգի մէջ»[557]:

1890 թ. քաղաք այցելության ժամանակ ոսկերիչների աշխատանքներով հիացել է ֆրանսիացի ճանապարհորդ-հետազոտող տիկ. Շանթրը. «Նոր թաղամասերում, որտեղ մեծ մասամբ բնակվում են հայեր, տեսնում ենք լավ կառուցված տներ, այգիներ, շուկա, որտեղ միշտ աշխուժություն է տիրում, և որտեղ հատկապես ուշադրություն են գրավում ոսկերիչների կրպակները. ոսկերիչներն այնքա՜ն հմուտ են նուրբ իրեր պատրաստելու գործում»[558]:

Գործագործության ոլորտում հայտնի էր քաղաքի հայոց եկեղեցիներից մեկի բակում հիմնված արհեստանոցը: Ի դեպ, 1890 թ. «Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Եանովսկին օգոստոսի 19-ին Ախալցխա գնալով, այցելել է այն տեղի Հայոց եկեղեցիներից մինի բակում գտնուած գործգործութեան արհեստանոցը, որտեղ 25 հոգի հայ աշակերտուհիներ են աշխատում, և գործուածները դիտելով շատ գոհ է մնացել, որի համար և շնորհակալութիւն է յայտնել համեստ հայ ուսուցչուհուն»[559]:

Փայտամշակման ոլորտում հայտնի էր Մովսիսյանցի սղոցարանը, որը 1903 թ. հոկտեմբերի 31-ին ծագած հրդեհի հետևանքով կրել է շուրջ 10000 ռուբլու վնաս. «Հոկտմբերի 31-ին ցերեկուայ ժամը 3-ից անց, հրդեհ ծագեց Մովսիսեանցի սղանոցում, այրուեց ամբողջ գործարանը իւր մէջ պարունակած բոլոր տախտակներով, փայտերով և կտրիչ շոգեմեքենայով: Վնասը հասնում է մօտ 10 հազար րուբլու: Գործարանն ապահովագրուած չէր: Հանդէս էին բերել քաղաքիս անյիշատակ ժամանակներից ի վեր մնացած միակ հրշէջ մեքենան... հաւաքուած ամբոխին զվարճացնելու համար»[560]:

---

552 **Сегаль И.**, նշվ. հոդվ., “Обзор”, 1878, № 223, էջ 1 (բնագրում՝ “Ремесленный труд в Ахалцихе развит достаточно хорошо. ...За исключением небольшого числа грузин, примерно человек около 100, все ремесленники армяне водворизшиеся здесь после войны 1829 года и отличающиеся особенною склонностью к ремесленному труду вообще. ...Преобладающими и главнейшими родами изделий в Ахалцихе могут считаться: золотыя, серебряныя, железныя, золотошвейныя и кожевенныя; но между всеми этими особенное внимание заслуживают золотошвейныя работы некого Мелкона Чилингорова, шелковая – Арутина Тер-Маркарова, серебряныя – Агагабовых, оружейныя – Чифталаровых и кожевенныя – Мегдиси Зарапова. Все они имеют поощрительныя медали и сверх того почетные отзывы от парижской и лондонской выставок. Некоторые мастера удостоены бронзовыми медалями и почетными отзывами за изделия, посланныя ими на бывшую всероссийскую мануфактурную выставку. По своей доброкачественности отличаются напр. башлыки, вышитые золотом и шелком, потники под дамския седла, сафьяны разных цветов, женския чадры, медные подсвечники и кастрюли, серебряные портмоне, порт-сигары, сахарницы, вазы, разноцветныя шелковыя нитки и т. п.”).

553 Նույն տեղում:

554 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 199:

555 Նույն տեղում:

556 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 199-200:

557 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:

558 **Madame B. Chantre**, նշվ. աշխ., էջ 340 (բնագրում՝ “Dans les quartiers neufs, occupés surtout par les Arméniens, se voient des maisons bien bâties, des jardins, un bazar où règne une certaine activité, et où le regard est attiré particulièrement par les boutiques des bijoutiers si habiles à travailler le filigrane”):

559 «Ճաղիկ», 1890, № 1, էջ 5:

560 «Նոր-Դար», 1903, № 201, էջ 2:

Մի քանի տարի անց այս ոլորտում երևան է գալիս Թադևոս և Հակոբ Քյուրքչյանցների շոգետողացարանը, որի արտադրանքն արտահանվում էր[561]:

Ախալցխացիների ուշադրությունից դուրս չի մնացել նաև մեղվապահության բնագավառը, որն էլ ավելի խթանելու համար 1908 թ. քաղաքային իշխանությունները որոշում են ընդունել մեծ թվով լորենու ծառեր տնկել քաղաքից մինչև Իվլիտա գյուղն ընկած հատվածում և Քոռդարա տեղամասում[562]:

Արձանագրված մասնավոր հաջողություններով հանդերձ՝ ընդհանուր առմամբ, քաղաքային արհեստագործության բնագավառները, արտադրական միջոցների արդիականացման գործընթացներից հետ մնալով, դանդաղ, սակայն հետընթաց էր ապրում[563], իսկ հետևանքներն ակնառու էին արդեն 1890-ական թվականներին. «Առևտուրն ընկած է. աղքատութիւնն օրըստօրէ աճում է. աւելի յուսահատական և անմխիթար է արհեստաւորների դրութիւնը. Ախալցխայի մի ժամանակ ճարտար և իր բանուածքներով յայտնի հայ վարպետը այսօր մոլորուած, ձեռքերը ծոցին՝ չգիտէ ինչ անէ, ո՞ւր վաճառք հանէ իր ձեռագործ աշխատանքը: Արհեստաւորների թիւը շատ է, իսկ նոցա գործուածքների վերայ եղած պահանջը սակաւ»[564]:

Արհեստագործության և առևտրի ոլորտներում տիրող անկումային կացությունը զգացվել է նաև Ի դարասկզբին. «Արհեստները, ոսկերչութիւն, կօշկակարութիւն, դարբնութիւն, և այլն, գլխաւորաբար Հայոց ձեռքն են. իւրաքանչիւր արհեստի զբաղողաց կրպակներն կառուցուած են միմեանց մօտ. արհեստաւորներն ունին իրենց յատուկ դրօշներն, զորս կը գործածեն հանդիսաւոր օրեր: Վաճառականութեան և առուտուրի նուազութեան պատճառաւ, շատեր թողած են քաղաքս և ուրիշ քաղաքներ գացած իրենց ապրուստն ճարելու»[565]:

**Տպարաններ.** առաջին տպարանն Ախալցխայում հիմնադրել է Մկրտիչ Ղալամքարյանցը 1880-ական թվականների սկզբին[566]: 1885 թ. Խորեն ծայրագույն վարդապետ Ստեփանենն այդտեղ տպագրել է «Մանկավարժանոց» ամսագիրը[567]:

561 “Тифлисский листок”, 1909, № 36, с. 3.

562 “Кавказ”, 1908, № 110, с. 3.

563 Այս առիթով 1878 թ. նշվել է. «...այն արտադրանքը, որը մի քանի տարի առաջ միանգամայն բավարարում էր գնորդին, ներկայումս դժվարությամբ է գոհացնում». բնագրում. “...то изделие, которое несколько лет назад вполне удовлетворяло покупателя, с трудом удовлетворяет его в настоящее время” (**Сегаль И.**, նշվ. հոդվ., “Обзор”, 1878, № 223, էջ 1).

564 «Արձագանք», 1895, № 100, էջ 1:

565 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 62-63:

566 Նշվ. աշխ., էջ 62: Տե՛ս նաև **Մաղալյան Վ.**, Հայկական տպագրությունը Վրաստանում (XIX դար - XX դարի սկիզբ), «ԲԵՀ», 1993, № 1, էջ 173:

567 **Մաղալյան Վ.**, Վրաստանի սովետահայ տեղական ու շրջանային մամուլը (1921-1941 թթ.), «ԲՀԱ», 1987, № 2, էջ 162-163:

1885 թ. այս տպարանում «Մանկավարժանոց»-ի հավելվածի համար տպվել է Խորեն ծ. վրդ. Ստեփանենի թարգմանությամբ «Մի կողով ելակ» պիեսը[568], 1889 թ.՝ Հարություն Մարաղյանի «Քանդած օջախ»-ը (հրատարակիչ՝ Հովհաննես Ս. Գրիգորյան)[569], 1891 թ.՝ Կ. Տ. Ս.-ի «Որբուկի օրը»[570]:

Ախալցխայում Խորեն Ասմարյանցի հիմնադրմամբ գործում էր ևս մեկ տպարան, որտեղ 1896 թ. Տիգրան Վարդանյանցի թարգմանությամբ լույս է տեսել Հենրիկ Սենկևիչի «Գնանք նորա յետևից» պատմվածքը[571], 1900 թ.՝ Շահան Սիմոնի «Պատարագի երգեցողութիւն»-ը[572]:

1906 թ. տպագրվել է Կ. Կաուցկու «Աւստրիայի ճգնաժամը» (թարգմ՝ Գար. Պապովյան) և այլ գրքեր[573], Շահան Սիմոնի «Ս. պատարագի երգեցողութիւն»-ը, 1907 թ.՝ Ն. Հովհաննիսյանի «Լիզա» 3 գործողությամբ կատակերգությունը և 1912 թ.՝ Շահան Սիմոնի «Հաշիւ Արմաւրի հայոց եկեղեցական քառաձայն խմբի 1900-1910 թթ.» գիրքը և այլն[574]:

Ախալցխայում գործող մյուս տպարանը պատկանում էր եղբայրներ Մարտիրոս և Հայկ Մարտիրոսյաններին, որոնք 1905-1910-ական թվականներին հրատարակել են «Արյան վրեժ», «Նոր վեպիկ» գրքերը, բազմաթիվ ժողովածուներ, Սիոն Տեր-Մանվելյանցի «Եզեղի կուրմանժ» ուսումնասիրությունը և այլն[575]:

1905 թ. լույս են տեսել Սարգիս Խաչատրյան Խոջայանցի «Նոր-վեպիկ», Ս. Կլայեկչյանի «Բարի ընկեր», 1906 թ.՝ Պերճ Գայֆեճյանի «Հովիկ», «Երգարան ազգային քնարի», 1907 թ.՝ Պ. Գ.-ի խմբագրությամբ և թարգմանությամբ՝ «Մարդկային կրքերի դաստիարակութեան կանոններ», 1910 թ.՝ Սիոն Տեր-Մանվելյանի «Եզիդի կուրմանժ» գրքերը[576]:

Նշյալ տպարանում 1917-1918 թվականներին շաբաթը երկու անգամ «Ծրջապատման ժամանակ, ծանր պայմաններում...» լույս է տեսել «Շարժում»[577] ՀՅԴ օրգան շաբաթաթերթը (խմբագրական կազմ՝ Ա. Ավագյան, Մ. Զարաֆյան, Մ. Սի-

568 Հայ գիրքը 1851-1900 թվականներին, հ. Գ, կազմ.՝ **Ոսկանյան Ն., Սավալյան Ա., Սողոմոնյան Մ., Գյուլումյան Օ., Սահակյան Ա., Թադևոսյան Ս.**, Երևան, 1999, էջ 351:

569 Նշվ աշխ., էջ 411:

570 Նշվ աշխ., էջ 446:

571 Նշվ աշխ., էջ 561:

572 Նշվ աշխ., էջ 636:

573 **Մաղալյան Վ.**, նշվ. հոդվ., «ԲԵՀ», 1993, № 1, էջ 174:

574 Հայ գիրքը 1901-1920 թվականներին, հ. Դ, Երևան, 2007, էջ 160, 166, 198, 412:

575 **Մաղալյան Վ.**, նույն տեղում:

576 Հայ գիրքը 1901-1920 թվականներին, հ. Դ, էջ 129-131, 153, 155, 196, 326:

577 «Շարժում»-ը Հայ հեղափոխական դաշնակցության Ախալցխայի կազմակերպության թերթն էր: Ունեցել է «Հաց, լույս և ազատություն» նշանաբանը: Առաջին համարը լույս է ընծայվել 1917 թ. օգոստոսի 3-ին: Թերթը հիմնականում նվիրված էր Ախալցխայի, Ախալքալաքի և շրջակա գավառների բնակիչների կյանքին, նրանց հուզող խնդիրներին, հողային

նասյան, Գ. Չիֆլիկյան, Մ. Ստեփանյան, հրատարակիչ՝ Հ. Բուլանյան)[578]:

1907 թ.-ից Ախալցխայում գործում էր նաև Մ. Թ. Ճուլարտյանցի տպարանը, որտեղ 1907 թ. հրատարակվել են «Հեզական մանկանց: Առաջին կանոն սաղմոսաց Դաւթի», Պողոս Քաչորյանցի «Սգոյ զիշեր», 1908 թ.՝ «Կանոնք աթոռակալաց ընտրութեան եւ անոնց իրաւանց եւ պարտականութեանց նկատմամբ տուեալ ի Տիրասպոլու հոռվմէական կօնսիստօրիայէ ի 29 նոյեբերի 1907 թ.», «Տեղեկագիր Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցների հոգաբարձութեան գործունէութեան (1906-1908), 1909 թ.՝ Հակոբ Բազրատյանի «Ճառ դամբանական ի սգալի մահ վաղամեռիկ Անտոն կիսասարկաւագի Փիլոսեան Արդուինցւոյ աշակերտին քահանայապետական Լեւոնեան հայ դպրոցի, որ ի Հռովմ...: Տպագրեցաւ կարգադրութեամբ Սարգիս վարդապետ Տէր-Աբրահամեանի» գրքերը[579]:

1917 թ. գործում էր նաև Հեպիպյան եղբայրների տպարանը (այստեղ է տպվել 1917 թ. սեպտեմբերի 14-ին լույս ընծայված «Շարժում» թերթի ներդիրը)[580]:

1920-ական թվականների վերջերին Ախալցխայում սկսել է գործել հայկական նոր տպարան[581]:

**Մամուլ.** 1931 թ. հոկտեմբերի 17-ից հայերեն և ադրբեջաներեն լեզուներով հրատարակվել է «Դեպի սոցիալիզմ» շրջանային հնգօրյա թերթը[582], որը 1934 թ.-ից վերանվանվել է «Կոմունիստ», 1938-ից՝ «Ունոր կյանք», իսկ ադրբեջաներենը՝ «Կարմիր դրոշ»: Վերջինս հրատարակվել է մինչև 1941 թ., որից հետո լույս է ընծայվել վրացերեն լեզվով՝ «Ծիթելի դրոշա» խորագրով: 1944 թ. հուլիսի 7-ից հայերեն և վրացերեն լեզուներով հրատարակվող թերթերը միավորվում են և տպագրվում միասնական «Ծիթելի դրոշա – Կարմիր դրոշ» անվամբ[583]: Թերթի հոբելյանական՝ 6000-րդ համարը լույս է տեսել 1982 թ. ապրիլի 6-ին[584]:

**Լուսանկարչություն.** 1886 թ. Վարդան Սիմոնի Ավետիսյանն Ախալցխայում հիմնել է լուսանկարչական առաջին արհեստանոցը[585]: Հետագայում նրան ընկերակցել է նաև եղբայրը՝ Հարությունը:



**Ախալցխա. Ավետիսյան եղբայրների թողարկած լուսանկարներից մեկի հակառակ երեսը**

Բարձրորակ լուսանկարների համար Ավետիսյան եղբայրները բազմիցս արժանացել են ոսկե մեդալի, իսկ 1914 թ.՝ Վ. Ավետիսյանին շնորհվում է Փաբերժեի արծաթե զավաք[586]:

**Թատրոն.** ինչպես այլուր, Ախալցխայում ևս մշակութային կյանքում կարևոր դեր է ունեցել թատրոնը, որն այստեղ մուտք է գործել 1866 թ. Միհրդատ Ամերիկյանի միջոցով և «Ախալցխու քաղաքացի» դարձած կարնեցի Հակոբ վարժապետի՝ «Շուշանիկ»-ի բեմադրումով:

1870-ական թվականների սկզբից թատերական ներկայացումներ են տրվել Կարապետյան դպրոցի դահլիճում:

1874 թ. ուսուցիչ Հովակիմ Գեղամյանցը ստեղծում է թատերախումբ: Հայտնի են առաջին «դերասանութէն էնողների» անունները՝ Գարեգին Ղազազյանց, Նիկողայոս Կոպազյան, Ալեքսանդր Սարայատյան, Ավետիս Ավդյան, Մանուկ Մովսիսյան, Աբրահամ Բեորկճյան, Խաչատուր Քոյյան, Գևորգ Վարդանյանց, Սարգիս Հազարապետյան, Հակոբ Հազարապետյան[587]: Բեմադրվել են «Ար-

հարցին, զավառի հասարակական-քաղաքական, կրթական, մշակութային կյանքին, Ախալցխայի ինքնապաշտպանությանը և այլն: 1917 թ. լույս է տեսել 37, 1918 թ.՝ 33 համար (մայիսի 20-ից թերթն այլևս չի հրատարակվել) (տե՛ս **Մաղալյան Վ.**, նշվ. հոդվ., «ԲԵՀ», 1998, № 2, էջ 143-156):

578 **Մաղալյան Վ.**, նշվ. հոդվ., «ԲԵՀ», 1998, № 2, էջ 163:

579 Հայ գիրքը 1901-1920 թվականներին, հ. Դ, էջ 194, 208, 223, 235-236, 247:

580 «Շարժում», 1917, № 11, ներդիր:

581 **Մաղալյան Վ.**, նշվ. հոդվ., «ԲՀԱ», 1987, № 2, էջ 174:

582 Նշվ. հոդվ., էջ 173:

583 Նշվ. հոդվ., էջ 174:

584 Նույն տեղում:

585 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 56: Ի դեպ, Ավետիսյան եղբայրները լուսանկարչական արհեստանոց են հիմնել նաև Բորժոմում:

586 Նույն տեղում:

587 **Հովհաննիսյան Հ.**, Հայ թատրոնի պատմություն. XIX դար, Երևան, 1996, էջ 406-407:





**Ախալցխա. Ավետիսյան եղբայրների թողարկած լուսանկարներից**

շակը», «Ծուշանիկը» և բազմաթիվ կատակերգություններ, այդ թվում՝ Հ. Գեղամյանի հեղինակած «Որդի չեղաւ, որդունք եղավ», «Նոր հավեր նոր հավկիթ կածեն» և այլն:

1870-ական թվականների վերջերին ստեղծվում է քաղաքային ակումբ՝ 250 տեղով ու բեմով փոքր դահլիճ: Հայտնի էր Թատրոն անվամբ (այդ շենքը կանգուն էր մինչև 1970-ական թվականները)[588]:

1877 թ. հունվարի 30-ին քաղաքային ակումբում բեմադրվել է Գ. Սունդուկյանի «Պեպո»-ն վրացերեն լեզվով[589]:

1880-ական թվականների սկզբից Ախալցխան հայ թատրոնի հյուրախաղային կենտրոններից էր: Այդ կարգավիճակը «...շարունակվում է մինչև դարավերջ և մեր դարի առաջին տասնամյակները: Գրեթե բոլոր հայ նշանավոր դերասանները լինում են այս փոքրիկ քաղաքում...» (օրինակ՝ 1880-1881 թվականներին Ախալցխա ժամանած Պետրոս Ադամյանը տեղի թատերական խմբի և Թիֆլիսի սկսնակ դերասանների հետ մեկտեղ բեմադրել է «Արյան բիծ», «Լյուսի Դիդիե» մելոդրամաները, «Երկու քաղցածներ», «Վայ իմ կորած հիսուն ուսկին» կատակերգությունները, «Համլետ» ողբերգությունը և այլն)[590]:

1900 թ. Ա. Բուղուղյանի[591] ջանքերով կառուցվում է թատրոնի շենք, որը գոյատևում է մինչև 1964 թ. (տեղում կառուցվում է վրացական պետական թատրոնի շենքը)[592]:

1916 թ. հունվարի 30-ին արևմտահայ գաղթականներին նյութապես օժանդակելու նպատակով Ախալցխայի Հայ կանանց բարեգործական ընկերության նախաձեռնությամբ քաղաքային ակումբում բեմադրվում է 5 գործողությամբ «Եղբայր և քույր» դրաման[593]:

588 Նույն տեղում, էջ 407:

589 «Մշակ», 1877, № 8, էջ 3:

590 **Հովհաննիսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 411:

591 Մաշկավեներաբույժ, մշակութային գործիչ Արտաշես Հովհաննեսի Բուղուղյանը ծնվել է 20.12.1864 (1.1.1865) Ախալցխայում, վախճանվել 10(23).4.1915-ին Թիֆլիսում: Սկզբնական կրթությունը ստացել է Մկրտիչ քահանա Գայֆեճյանցի մոտ, այնուհետև ուսումը շարունակել է նախ Թիֆլիսում, ապա Վարշավայի համալսարանի բժշկական ֆակուլտետում: 1890-ական թվականներին կամ Ի դարասկզբին Ախալցխայում բացել է hայոց դպրոց: Բժշկությանը և առողջապահությանը նվիրված աշխատությունների և հոդվածների հեղինակ է (Կենսագրական մանրամասները տե՛ս **Փարսադանյան Ռ.**, Հայ բժշկության պատմությունից, Երևան, 1958, էջ 151-198: **Մինասյան Հ.**, Հարյուր hայ hոգեբույժներ, գիրք Բ, Երևան, 2004, էջ 36: Ով ով է. hայեր, h. 1, էջ 237):

592 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 56:

593 «Համբաւաբեր», 1916, № 8, էջ 243:

1917 թ. օգոստոսի 18-ին քաղաքի Հայ աշակերտաց միության Ախալցխայի «Արփի» մասնաճյուղի անդամները, հօգուտ «Շարժում» թերթի լույս ընծայման, բեմադրվում են «Սուտ ճգնավոր» և «Յաղ աստ» վոդևիլները[594]:

1917 թ. նոյեմբերի 19-ին քաղաքում թատերասերների նախաձեռնությամբ որոշվում է ստեղծել Դրամատիկական ընկերություն. ընտրվում է ընկերության վարչությունը՝ բաղկացած յոթ հոգուց[595]:

**Կինոթատրոն.** հայտնի է, որ 1908 թ. ի պատիվ նորածին Հռիփսիմե դստեր՝ Վարդան Ավետիսյանն իր կառուցած կինոթատրոնն անվանում է Ռիմա[596]: Այն հիշվում է նաև 1917 թ.[597]:

**Ակումբ.** 1917 թ. օգոստոսի վերջին Ախալցխայի զինխորհուրդը որոշում է ընդունել «Ռիմա» կինոթատրոնին կից շինության մեջ բացել Ռեսպուբլիկա անվամբ նոր ակումբ[598]:

**Մանկական ակումբ.** 1917 թ. ամռանը քաղաքի Կանանց բարեգործական ընկերության նախաձեռնությամբ բացվում է Մանկական ակումբ, որտեղ փոքրիկներին պետք է զբաղեցնեին բազմազան խաղերով և մատչելի դասավանդությամբ. ակումբը տեղավորվել էր գիմնազիայի շենքում[599]:

**Խաղեր.** 1876 թ. քաղաքում տարածված խաղերի վերաբերյալ նշվել է. «...Ախալցխայում կան զանազան խաղեր թէ հին և թէ նոր: Հին խաղերը՝ մատանի-խաղ, թուրա, աչքախուփ, լալ-օյին, պուտպուտ և այլն իրանց պարզութեամբ և անմեղութեամբ բաւականին զուարճալի և հետաքրքրական խաղեր են, նամանավանդ իրանց ժողովրդականութեամբ»[600]:

ԺԹ դարավերջին Ախալցխայում տարածված էին առավելապես հետևյալ խաղերը. հայերի շրջանում տարածված էին զուտ հայկական՝ գերի, կարինցի հայերից փոխանցված չըխ-չըխ, գնդակը շրջանում (թուրքերեն՝ ջուզի-թոփի), ռուս վերաբնակիչներից հայերին անցած ռուսական գնդակ, վրացիների շրջանում՝ թուրքերից փոխանցված գլուխկոնծի (վրացերեն՝ մալակի) և զզիր (վրաց.՝ զզիրի), հույների շրջանում՝ բռնոցի (հունարեն՝ իվոլ) խաղերը[601]:

**Բարեգործական միություններ.** տարբեր տարիներին Ախալցխայում ստեղծված բարեգործական զանազան միությունների և կազմակերպությունների գործունեության շրջանակը հիմնականում ներառել է կրթական, տնտեսական և հատկապես արևմտահայ եղբայրներին նեցուկ լինելու ծրագրեր:

1877 թ. ախալցխացի Եղիսաբեթ Մամիկոնյանի նախաձեռնությամբ համաքաղաքացիներից հավաքվել է 40 ռուբլի և որպես օգնություն՝ ուղարկվել նախորդ տարվա դեկտեմբերի 1-ի հրդեհից տուժած վանեցիներին[602]:

Բարեգործական մեկ այլ նախաձեռնությամբ 1879 թ. հիշվում է ախալցխացի վաճառական Գևորգ Ազնավուրյանցը, որը մայիս ամսին Կարսում, հօգուտ «Արարատյան» ընկերության, հավաքել էր 500 ռուբլի[603]: Նույն թվականին ախալցխացիները որոշակի գումար էին հավաքել Զեյթունում բացվելիք ուսումնարանի համար[601]:

1879 թ. մայիսի 7-ին քաղաքում հիմնվում է մասնավոր մի ընկերություն, որի նպատակն էր Արևմտյան Հայաստանում բացել Ախալցխայի հայ հասարակության անվամբ մեկ կամ երկու ուսումնարան: Ընկերության նախագահ է ընտրվում Արքահամ քահանա Ղազազյանցը, ատենադպիր՝ Հովակիմ Գեղամյանցը, գանձապահ՝ Արշակ Սաղաթելյանցը, գանձապահի օգնականներ՝ Հակոբ Ղասաբաշյանցն ու Դավիթ Քուփալյանցը[605]:

Համիդյան ջարդերից հետո Կովկաս գաղթած և արևմտահայերին օգնելու նպատակով 1890-ական թվականներին ԿՀԲԸ մի մասնաճյուղն էլ բացվում է Ախալցխայում[606]:

1916 թ. Պետրոգրադում կայանալիք հայկական համագումարին մասնակցելու համար ԿՀԲԸ-ից ընտրվել է Արմ. Բուդուղյանը[607]:

Համաձայն թղթակից Խաչատուր Թեխմիշճյանի հաղորդման՝ 1916 թ. մարտին ախալցխացի Հովհաննես Աղաբեկյանն իր հոր՝ Մատթեոսի հիշատակը հավերժացնելու նպատակով ԿՀԲԸ քաղաքի մասնաճյուղին է նվիրել 300 ռուբլի, որի տոկոսը պետք է տրվեր Եղիսաբեթյան դպրոցի աղքատ աշակերտուհիներից մեկին կարիքները հոգալու համար[608]:

1917 թ. Ախալցխայում գործում էին Կանանց բարեգործական ընկերությունը և ԿՀԲԸ Ախալցըխայի մասնաճյուղը[609]: Նույն թվականին վերջինիս նախագահն էր Խաչատուր Թեխմիշճյանը[610]:

---

594 «Շարժում», 1917, № 4, էջ 2:
595 «Շարժում», 1917, № 29, էջ 3:
596 **Մաթևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 56:
597 «Շարժում», 1917, № 8, էջ 3:
598 «Շարժում», 1917, № 9, էջ 2:
599 **Արաքո**, Բարեգործութի՞ւն, թէ՞ շահագործութիւն, «Շարժում», 1917, № 12, էջ 1:
600 **Գեղամեանց Ե.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 444:
601 Խաղերի մասին մանրամասն տե՛ս "Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. V, Тифлис, 1886, с. 209-229.

602 «Մշակ», 1877, № 24, էջ 3:
603 *******, Նամակ Ղարսից, «Մշակ», 1879, № 97, էջ 2: **Ախալցըխացի Գէորգ Ազնաւուրեանց**, Նամակ խմբագրին, «Մշակ», 1879, № 98, էջ 1: Նվիրատուների ցուցակը տե՛ս նշվ. հոդվ.:
604 **Գեղամեանց Յ.**, Նամակ խմբագրին, «Մշակ», 1879, № 176, էջ 2:
605 **Տէր-Նիկողոսեանց Գր.**, Նամակ Ախալցխայից, «Մշակ», 1879, № 83, էջ 2:
606 **Թառոյան Կ.**, Արևմտահայ գաղթականությունը և նրա վիճակը 19-րդ դարի 90-ական թվականների վերջերին և 20-րդ դարի սկզբներին, «ԲՀԱ», 1974, № 3, էջ 173:
607 «Համբաւաբեր», 1916, № 19, էջ 588:
608 «Համբաւաբեր», 1916, № 13, էջ 395:
609 **Արաքո**, նշվ. հոդվ., էջ 1:
610 **Մանաւազ**, Մի ողջունելի քայլ, «Շարժում», 1917, № 34, էջ 2:

Հասարակության մեջ անգրագիտությունը վերացնելու նպատակով ԿՀԲԸ Ախալցխայի մասնաճյուղի նախաձեռնությամբ նախատեսվում էր 1917 թ. հոկտեմբերից Ախալցխայում սկսել Ա, Բ դասարաններով և տղամարդկանց ու կանանց առանձին բաժանմունքներով երեկոյան անվճար, միայն կամավոր նվիրատվություններով դասընթացներ[611]: Նույն թվականի նոյեմբերին էլ անգրագետ երեխաների և մեծահասակների համար դասընթացներ են սկսվում Եղիսաբեթյան դպրոցում[612]: Նախատեսված էր ստեղծել նաև Ժողովրդական լսարան տարրական կրթություն ունեցողների համար[613]: Այդ լսարանի բացումը տեղի է ունեցել 1917 թ. դեկտեմբերի 9-ին ԿՀԲԸ Ախալցխայի մասնաճյուղի գրադարանում. «...ողջունելով Ժողովրդական Լսարանի բացումը՝ կուզէինք, որ նա յարատևէ՝ ծառայելու հասարակութեան յառաջադիմական կարիքներին...»[614]:

1918 թ. հունվարի 29-ին կայացած ժողովում ընտրվում է Կանանց բարեգործական ընկերության վարչությունը՝ բաղկացած երեք անդամից (Ե. Չաթալբաշյանց, Ս. Ղարայլանյան, Ա. Բայբուրդցյան) և երեք փոխանդամից (Աղամբեկյան, Ինճիկյան, Քիրիշճյան)[615]:

**Առողջապահություն, համաճարակներ.** ինչպես այլուր, Ախալցխայի բնակչությունը, պատերազմների պատճառած արհավիրքներից զատ, երբեմն կորուստներ է տվել նաև վարակիչ մահաբեր հիվանդությունների հետևանքով: Աղետաբեր է եղել հատկապես 1756 թ. տարածված ժանտախտը[616]:

1829 թ., երբ քաղաքն արդեն գտնվում էր ռուսների տիրապետության ներքո, բռնկվում է ժանտախտի նոր համաճարակ: Դժվարին կացության մեջ հայտնված ժողովրդին որևէ աջակցություն ցույց չի տալիս գեներալ Բեհբությանցի հրամանատարության տակ գործող զինվորական իշխանությունը, ուստի բնակիչները խնդրանքով դիմում են Էջմիածնին՝ հրաշագործ համարվող Գեղարդն Ախալցխա փոխադրելու համար[617]:

Ի դեպ, 1829 թ. հուլիսի 23-ին Ախալցխայի կառավարչի պաշտոնում իշխան Բեհբությանցին փոխարինած գեներալ-մայոր բարոն Օստեն-Սաքենն անմիջապես միջոցներ է ձեռնարկում վարակված բնակիչների բուժումը կազմակերպելու ուղղությամբ (ժանտախտին արդեն զոհ էր գնացել 750 ընտանիքից 450-ը): Առկա վիճակի մասին հուլիսի 30-ին Պասկևիչին հղված գրության մեջ նա նշում է հետևյալը. «Ախալցխայի բնակիչների, որոնցից 300 ընտանիք է միայն մնացել, ...նրանց ամենամեծագոյն մասին ես այնքան չքաւոր տեսայ, որ ստիպուած էին կամ բոյսերով կերակրուելու և կամ կերակրի այն փշրանքներով, որ զինվորները՝ կարեկցաբար՝ վայր էին ձգում նրանց առաջ բերդի պարիսպներից: Նրանցից շատերը միայն չումայից չէ, որ մեռնում էին, այլ նաև քաղցից...»[618]:

1830 թ. Ախալցխայում տարածվում է ժանտախտի նոր համաճարակ[619]: Մեկ տարի անց՝ 1831 թ., քաղաքում տարածում է գտնում խոլերան[620]:

Ականատեսի վկայությամբ՝ կացությունը խիստ անմխիթար էր նաև 1833 թ. «...հաշվել են, որ մահացությունը միջին հաշվով մեկը տասնհինգի հարաբերությամբ է. այն նախկինում է՛լ ավելի մեծ է եղել: Իմ այցելության ժամանակ, որն օգոստոս ամսվա վերջին էր, ինձ իսկապես սարսափեցրեց հուղարկավորությունների շատ լինելը. դրանք տեղի էին ունենում ամեն օր: Մի հին աշտարակի ստվերում նստած, որտեղից ես նկարում էի քաղաքը... ես այն տեսնում էի ամբողջությամբ, և ոչինչ չէր վրիպում իմ հայացքից. ես տեսնում էի, թե ինչպես քաղաքի մի ծայրից մյուսը, մինչև գերեզմանատներ ձգվում են երկար թափորներ, որոնք հանգուցյալներին տանում են վերջին հանգրվան: Խաչերը, դրոշակները և բոլոր հանդերձները մասամբ երևում էին ցածր տների վերևից, և նրանց վշտալի և միապաղաղ երգերի հնչյունները մինչև աշտարակ էին հասնում: Երբ գերեզմանատանը հնչում էր վերջին երգը, ես տեսնում էի, թե ինչպես են քահանաները հուղարկավորության եկեղեցական պարագաներով շտապ վազում մի այլ հանգուցյալի մոտ, որը սպասում էր իր վերջին արարողությանը»[621]:

Ընդամենը մի քանի տարի անց՝ 1838-1839 թվականներին, դարձյալ ժանտախտից մահանում են բազմաթիվ քաղաքաբնակներ, իսկ 1847 թ. մարդկային զոհեր է խլում նաև խոլերան[622]:

---

611 «Շարժում», 1917, № 11, էջ 4:

612 **Եպրակսէ**, Կրթական գործեր, «Շարժում», 1917, № 32, էջ 1:

613 Նույն տեղում:

614 **Մանաւազ**, նշվ. հոդվ., «Շարժում», 1917, № 34, էջ 2:

615 **Եպրաքսէ**, Ախալցխայի հայ կանանց բարեգործական ընկերության ընդհանուր ժողովը, «Շարժում», 1918, № 8, էջ 3:

616 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները..., Գ, էջ 109:

617 **Գեղամեանց Ե.**, նշվ. հոդվ., «Հովիւ», 1908, № 33, էջ 520:

618 **Գեղամեանց Ե.**, նշվ. հոդվ., «Հովիւ», 1908, № 34, էջ 534:

619 **Иванов В.**, Город Ахалцих, Тифлисской губернии, “Сборник материалов для описания местностей и племен Кавказа”, вып. VII, Тифлис, 1889, с. 181.

620 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 430:

621 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 269 (բնագրում՝ “...on a calculé que la moyenne de la mortalité était d’un sur quinze; elle a été plus grande encore. Pendant mon séjour à la fin d’août, je fut vraiment effrayé de la multitude d’enterrements qui se faisaient chaque jour. Assis à l’ombre d’une vieille tour, d’où je dessinais la vue de la ville... j’en dominais l’ensemble et rien n’échapait à mes regards; je pouvais suivre d’un extrémité de la ville à l’autre jusqu’aux cimetières, les longues processions qui conduisaient les morts au repos; les croix, les drapeaux et tous ces costumes se montraient à demi par-dessus ces maisons basses, et leurs chants lugubre et monotones venaient expirer jusqu’au pied de la tour. Le dernier de ces chants terminé sur le cimetière, je voyais la pompe religieuse et les prêtres courir en toute hâte vers un autre mort qui attendait son dernier office”):

622 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 430:

Հակառակ ձեռնարկված խստագույն միջոցների՝ հիվանդությունները թափանցում են նաև Ախալցըխայի կայազոր, որը խաղաղ ժամանակներում կազմված էր միայն մեկ գումարտակից[623]: Այնուամենայնիվ, «Մահացությունն այստեղ շատ ավելի պակաս է, քան Քութայիսում և Կոլխիդայի մնացած մասում. նույնիսկ համեմատության եզր չկա: Ախալցիխեի գումարտակը սովորաբար ունենում է միայն քսան հիվանդ: Օգոստոսին, որն ամենավատ շրջանն է, այդ թիվը հասնում է հիսունի: Նույն գնդի մյուս գումարտակը, որը տեղավորված էր Ախալքալաքում և նրա շրջակայքում, ավելի քիչ հիվանդ ուներ»[624]:

Մանուկների շրջանում առավել վտանգավոր էր համարվում ծաղիկ կոչվող հիվանդությունը: Հակառակ պատվաստման միջոցով բժշկությանն արդեն հայտնի բուժման եղանակի՝ տակավին 1838 թ. նախապաշարված բնակչությունը չէր կարողանում խուսափել բազմաթիվ և միանգամայն անտեղի զոհերից. «...յիմարական ըմբռնման ոմանց քաղաքային ժողովրդաց և գրեթէ բոլոր գիւղականաց, որք պաշարեալ մտօք ոչ ճանաչելով զօգուտ այսր փրկական հնարից մանկական հասակի ’ի չար ախտէն ծաղիկ կոչեցելոյ ոչ մատուցանին զմանկունս ’ի հատումն ծաղկի, նաև հոգևորականք անփոյթ լինին նախ ինքեանք հետևիլ այն ուսման, և ապա արմատախիլ առնել ’ի մտաց բնակչաց զայնպիսի յիմարական զգացմունս հակառակս ծաղկապատուաստման»[625]:

1916 թ. երեխաների շրջանում տարածված էին ոչ պակաս վտանգավոր կարմրուկ, քութեշ և բկացավ (դիֆտերիա) հիվանդությունները[626]:

1917 թ. դեկտեմբերին քաղաքում առավել տարածված հիվանդությունը տիֆն էր[627]:

**Հիվանդանոց.** Ախալցխայի հասարակությունը գործնականում միայն ԺԹ դարավերջին է սկսել մտածել և քայլեր ձեռնարկել քաղաքային հիվանդանոց հիմնելու ուղղությամբ, ընդ որում գործն ընթացել է հետևյալ կերպ:

Տակավին 1877 թ. Հ. Մութաֆյանի կտակած գումարով 1892 թ. կտակակատար Կ. Մութաֆյանին հասցեագրված խնդրագրում առաջարկվել է եկեղեցու փոխարեն քաղաքի համար հիվանդանոց կառուցել. «...խնդրում են, որ ...եթէ կարելի է փոխէ իր հօր կտակը, այն է թողնուի նոր եկեղեցի կառուցանելը, որովհետև Ախալցխայում եկեղեցիների պակասութիւն չէ զգացւում, այլ դրա տեղ հանգուցեալի վրայ մի մատուռ կառուցուի, իսկ մնացած գումարով հանգուցեալի անունով մի հիւանդանոց հիմնուի, որի կարիքը մեծ է Ախալցխայում»[628]:

Ինչպես երևում է, սույն նախաձեռնությունն ի վերջո տեղից շարժվում է, բայց և նյութական միջոցների սղության պատճառով թերի է մնում:

Փորձ է արվում բացը լրացնել բարեգործական նպատակներով կատարված միջոցառումների հասույթի հատկացմամբ: Մասնավորապես, ի նպաստ բացվելիք հիվանդանոցի, 1903 թ. փետրվարի 11-ին քաղաքի ակումբում հայ թատերասերները բեմադրում են «Արշակ Բ» ներկայացումը[629]: Սակայն ախալցխացի դերասան Գայնոխի (Խաչատուր Թեխմիշճյան)՝ նույն թվականի մարտի 19-ի տեղեկատվությամբ՝ հիվանդանոցի շենքի կառուցման անհրաժեշտ գումարի անբավարար լինելու պատճառով կառուցվում է միայն մի համեստ շենք, որն էլ պետք է ծառայեր որպես քաղաքային բուժարան (բժիշկ՝ Հարություն Այվազյան)[630]:

1903 թ. հուլիսի 31-ի լրատվությունից տեղեկանում ենք, որ քաղաքում հիվանդանոց բացելու նպատակով թիֆլիսաբնակ ախալցխացի արհեստավորները հանգանակել և պատկան մարմիններին ուղարկել են 238 ռուբ., 20 կոպ.[631]:

Ի վերջո, նույն թվականի օգոստոսի 12-ին քաղաքում բացվում է բուժարանը[632]:

1903 թ. նոյեմբերի 27-ի լրատվական թղթակցությունից իմանում ենք, որ Ախալցխայում սկսել է գործել հիվանդանոցը, որը «...շնորհիւ քաղաքային խորհրդի և մի քանի սրտացաւ անձանց բացուած է ներկայ թուականից, և չնայելով իւր սուղ միջոցներին՝ նա արդէն ունի իւր սեպհական կոկիկ ու յարմարաւոր շինութիւնը բաւական ընդարձակ բակով, ուր տնկուած են զանազան մանրիկ ծառեր: ...Հիւանդանոցի բժիշկ հրաւիրուած է երիտասարդ Յարութիւն Այվազեան, որ տեղացի լինելով քաջ ծանօթ է տեղական լեզուին, կլիմային, տեղական սովորութիւններին և Ախալցխայում տիրող հիւանդութիւններին»[633]:

Առողջապահության ոլորտում նոր նախաձեռնության մասին տեղեկությունները վերաբերում են

623 **F. Dubois de Montpéreux**, նույն տեղում:
624 Նույն տեղում:
625 Մատենադարան, թղթ. 163ե, վավ. 168:
626 «Համբաւաբեր», 1916, № 7, էջ 208, № 35, էջ 1096; № 52, էջ 1641:
627 «Շարժում», 1917, № 32, էջ 3:
628 «Նոր-Դար», 1892, № 193, էջ 2:
629 «Նոր-Դար», 1903, № 32, էջ 2:
630 «Նոր-Դար», 1903, № 61, էջ 2: Բժիշկ Հարություն (Արտեմ) Գաբրիելի Այվազյանը ծնվել է 1873 թ. Ախալցխայում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Կարապետյան դպրոցում: Ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա Ս.Պետերբուրգի համալսարանի բժշկական ֆակուլտետում և ստացել թերապևտի մասնագիտություն: 1903 թ. վերադարձել է Ախալցխա, որտեղ էլ մի քանի այլ բժիշկների հետ համատեղ ստեղծել է պոլիկլինիկա, ապա հիվանդանոց: 1937 թ. բռնադատվել է և աքսորվել: 1946 թ. արդարացվել է, վերադարձել հայրենի քաղաք և մինչև իր մահը՝ 1950 թ., աշխատել է Ախալցխայի բժշկական կենտրոններում: Ամփոփվել է Ախալցխայի հայկական գերեզմանոցի պանթեոնում: Ախալցըխայի փողոցներից մեկը, որտեղ ապրել է, քաղխորհրդի որոշմամբ անվանակոչվել է Այվազյան (մանրամասն տե՛ս **Մինասյան Հ.**, 111... բռնադատված հայ բժիշկներ. 1920-1954 թթ.: Կենսագրական բառարան, գիրք Ա, Երևան, 2006, էջ 37-38):
631 «Նոր-Դար», 1903, № 133, էջ 1:
632 «Նոր-Դար», 1903, № 148, էջ 2:
633 «Նոր-Դար», 1903, № 221, էջ 3:

1908 թ., երբ թիֆլիսեցի բարեգործ Եգոր Զոհրաբյանը քաղաքում իր անունով հիվանդանոց հիմնելու նպատակով նվիրում է 800 ռուբ.[634], իսկ Գրիգոր և Մարտիրոս Բայբուրդյանց եղբայրները՝ 500 ռուբլի[635]:

**Հակաալկոհոլային ընկերություն.** 1903 թ. մայիսի 29-ին Թիֆլիսի հակալկոհոլային ընկերության ժողովում քննարկվել է Ախալցխայի քաղաքային ավագ Գր. Մովսեսյանի և մի քանի ախալցխացիների խնդրանքը և որոշվել նման ընկերության մասնաճյուղ բացել նաև Ախալցխայում[636]:

**Որբանոց.** հայտնի է, որ 1916 թ. ԿՀԲԸ Ախալցխայի մասնաճյուղը (նախագահ՝ Թեխմիշճյան) նախաձեռնում է արևմտահայ որբերի համար քաղաքում հիմնել 100 տեղանոց որբանոց[637]: Նույն թվականին ընկերության տեղական մասնաճյուղին է փոխանցվում 2000 ռուբլի որբանոցի կահավորման համար [638]:

Հայտնի է, որ մինչ որբանոցի բացումը՝ արդեն հունիսի 6-ին, Ախալցխայի Որբախնամ մասնախումբը ջարդից ազատված 100 որբերի տեղավորել էր Եղիսաբեթյան դպրոցում. «Որբերի համար պատրաստուած են առանձին նոր անկողիններ, կահաւորութիւններ, և այլն հարկաւոր իրեղէններ: Մասնախումբը շնորհիւ տեղիս Հայ-Կանանց Բար. ընկ. և այլ ձեռնհաս տիկինների, օրիորդների ու պարոնների ժրաջան աշխատութեան և աջակցութեան, համարեա 5-6 օրուայ ընթացքում կարողացաւ պատրաստել տալ այդ իրերը և կանոնաւոր կերպով Որբանոցի կահաւորութիւնը գլուխ բերել: Որբանոցի համար հրաւիրուած են ռոճկով ծառայողներ: Երկու վարժուհի, տ. Ան. Մանղինեանը և օր. Եպր. Թէխմիշճեանը ձրիաբար յանձն առան որբանոցի կառավարչուհու պաշտօնը և եռանդուն կերպով մինչև հիմայ տանում են այդ: Հասարակութիւնը շատ սրտագին է վերաբերւում թիրք բռնութեան այս զոհերին և որոշ նուէրներով ու աշխատութիւններով աջակցում որբանոցին: Նորաւարտ տեղացի բժիշկ Մ. Վանցեանը ձրի յանձն առաւ որբերի բժշկութեան պաշտօնը. դրանց մի մասի մէջ տարածուած էր բոր հիւանդութիւնը»[639]:

Որբանոցին փոխանցվում են մասնավոր նվիրատվություններ: Օրինակ, 1916 թ. հունիսի 26-ին Հարություն Պուլղուրյանը, ի հիշատակ իր եղբոր որդու՝ Օննիկի, 25 ռուբլի է նվիրում որբանոցին[640]:

Շուրջ մեկ ամիս անց որբանոցի կառավարչուհի է հրավիրվում տիկ. Ե. Կազմարարյանը, իսկ որպես ուսուցչուհի՝ Յուղ. Մնացականյանը (պետք է երեխաների հետ պարապեր մինչև եկեղեցական-ծխական դպրոցների բացումը)[641]: Ի դեպ, երեխաների մի մասը սովորում էր նաև արհեստներ:

Եղիսաբեթյան դպրոցում դասերը սկսվելուց հետո որբանոցի սաները փոխադրվում են առաջնորդարանի շենք, իսկ դեկտեմբերի վերջերին 700 ռուբլով վարձվում է Հարոյանների բնակարանը[642]:

1916 թ. տարեվերջին, ի հիշատակ բուքեշից մահացած իրենց զավակների, որբանոցին 100-ական ռուբլի են նվիրում Հակոբ Քեշիշյանը և Ար. Վիրաբյանը[643]: Նույնքան գումար է նվիրում նաև Արամ Ծիրացյանը հոր՝ ալրավաճառ Համազասպ Ծիրացյանի հիշատակին[644]:

1917 թ. օգոստոսի 8-12-ը Հանգանակիչ հանձնաժողովի անդամներ Մ. Վանցյանի, Ս. Խնըսցյանի, Ա. Անջելյանի, Ս. Սվաղճյանի և Վ. Ղուպանյանի միջոցով որբանոցի օգտին քաղաքում անցկացվում է հանգանակություն, որի շնորհիվ հավաքվում է 3478 ռուբլի, 50 կոպեկ[645]:

**Դպրոցներ.** ԺԹ-Ի դարերի ընթացքում Ախալցխայում գործել են ավելի քան երկու տասնյակ կրթական հաստատություններ: Բացառությամբ պետական (ռուսական) դպրոցների, որոնց գոյությունն իրականացվում էր կառավարության հատկացրած նյութական կայուն միջոցների հաշվին, մնացած բոլոր դպրոցները, ըստ էության, իրենց գոյությունը պահպանում էին ազգային համայնքային հաստատությունների և առանձին նվիրատվությունների շնորհիվ:

Տեղին է նշել, որ իրապես հավասար պայմաններում (բոլորն էլ զուրկ էին պետական հովանավորությունից) հայտնված քաղաքաբնակ համայնքների մեջ հայերն ուսման հանդեպ տածած ջերմ ձգտումով ի սկզբանե էապես և նկատելիորեն առանձնացել են ազգային մյուս համայնքներից:

**Հայկական դպրոցներ.** եկեղեցական-ծխական դպրոցների գործունեության մասին վավերագրերում առկա տվյալները սկիզբ են առնում Ախալցխայի՝ ռուսների նվաճումից հետո:

Հայտնի է 1832 թ. դեկտեմբերի 28-ին քաղաքի ուսումնարանի վերատեսչի հորդորն ուսումնարանի շենքը նորոգելու վերաբերյալ. «Ուսումնարանս պատիւ համարի ընդ այսմ ցուցանել Ձերդ բարձր սրբազնութեան զպլան նորոգման տեղոյ իւրոյ հնութեանց և ծախս նորա, որով պարտ է նորոգել զտեղիս հնացեալս: Խնդրէ ուսումնարանս խնամածու-

634 «Արարատ», 1908, մայիս-յունիս, էջ 601: Այլ տեղեկության համաձայն՝ նվիրաբերված գումարը կազմել էր ոչ թե 800, այլ 1000 ռուբլի (Օրուան լուրեր, «Կոչնակ», 1909, № 4, էջ 91 և «Հովիւ», 1908, թ. 47):

635 "Кавказ", 1908, № 25, с. 3.

636 «Նոր-Դար», 1903, № 94, էջ 2:

637 «Համբաւաբեր», 1916, № 22, էջ 689:

638 «Համբաւաբեր», 1916, № 24, էջ 752:

639 «Համբաւաբեր», 1916, № 27, էջ 847:

640 «Համբաւաբեր», 1916, № 29, էջ 903:

641 «Համբաւաբեր», 1916, № 29, էջ 903:

642 «Համբաւաբեր», 1916, № 52, էջ 1641:

643 Նույն տեղում:

644 «Համբաւաբեր», 1916, № 50, էջ 1580:

645 «Շարժում», 1917, № 11, ներդիր: Ի դեպ, ներդիրում տրված է նվիրատուների անվանացանկը և գումարի չափը:

քեամբ ձերով յայտնել զայս ժողովրդոց և յորդորել զնոսա օգնել այսմիկ նորոգման 'ի յարդենց իւրեանց, ըստ որում նոքա մինչև ցայսօր ոչ ինչ կերպիւ ընծայաբեր եղեն ուսումնարանիս, զուգէ յորդորանօք Ձեր յանձն առցեն այժմ զծախս նորոգութեանն, որոյ ծախուց գումարն է եօթն հարիւր իննսուն և ութն մանէթ և յիսուն էրեք կապեկ ու կէս արծաք...»[646]:

1831 թ.-ից քաղաքում բացվել են նաև հայ կաթոլիկե դպրոցներ (տես սույն աշխ., էջ 116-117):

1830-ական թվականներից մինչև 1880-ականների սկզբները Ախալցխայում ավելացել են թե՛ դպրոցները՝ հասնելով 8-ի և թե՛ դասավանդող ուսուցիչների և աշակերտության թվաքանակը: Ասվածը փաստենք ստորև ներկայացված աղյուսակով.

| *տարեթիվ* | *դպրոց* | *ուսուցիչ* | *աշակերտ* |
|---|---|---|---|
| 1837[647] | 1 | | 116 |
| 1841[648] | 1 | 4 | 139 |
| 1842[649] | 1 | 5 | 157 |
| 1844[650] | 1 | 5 | 120 |
| 1845[651] | 1 | 5 | 110 |
| 1847[652] | 1 | 5 | 125 |
| 1849[653] | 1 | 4 | 125 |
| 1854[654] | 1 | 5 | 120 |
| 1857[655] | 1 | 7 | 180 |
| 1858[656] | 1 | 7 | 180 |
| 1860[657] | 1 | 9 | 300 |
| 1861[658] | 1 | 9 | 300 |
| 1862[659] | 1 | 9 | 300 |
| 1864[660] | 3 | | |
| 1865[661] | 3 | 16 | 255 |
| 1871[662] | 5 | 22 | 310 |
| 1872[663] | 5 | 20 | 265 |
| 1873[664] | 5 | 20 | 265 |
| 1874[665] | 4 | 17 | 374 |
| 1876[666] | 4 | 20 | 516 |
| 1877[667] | 5 | 18 | 480 |
| 1878[668] | 5 | 18 | 660 |
| 1881[669] | 6 | 24 | 591 |
| 1882[670] | 8 | 30 | 900 |
| 1883[671] | 7 | 29 | 814 |

1877/1878 ուստարում Ախալցխայի հին թաղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց (ո՞ր դպրոցի մասին է խոսքը՝ հայտնի չէ)[672], իսկ 1881 թ. սեպտեմբերին Կարապետյան և Եղիսաբեթյան դպրոցների հոգաբարձության և տեսուչ Մովսես Սամուելյանցի ջանքերով բացվել է ևս 2 նոր ուսումնարան, մեկը՝ Վերին Պլան, մյուսը՝ Բախչիսարայ թաղամասերում[673]:

1884 թ. ախալցխացի Գրիգոր աղա Սաղոյանցը քաղաքի երկսեռ դպրոցների նյութական սուղ վիճակը փոքր-ինչ մեղմելու մտահոգությամբ, որպես հասութաբեր անշարժ միջոց, նվիրում է Երկաթագործների փողոցում գտնվող իր կրպակներից մեկը (տարեկան բերում էր 40 ռուբ. եկամուտ)[674]:

1885 թ. ռուսական իշխանությունների պարտադրմամբ հայկական դպրոցները փակվում են, իսկ 1886 թ. կաթողիկոսական կոնդակով հաստատվում է երկսեռ երկդասյա դպրոցների հոգաբարձուների կազմը (Համազասպ Մինենդյան, Սարգիս Մինասյան, Հարություն Միրունյան և Հովհաննես Նալբանդյան)[675]:

Պետության հովանավորությունից զուրկ հայկական եկեղեցական դպրոցների գոյության համար առաջնային խնդիրը էր նյութական միջոցների հայթայթումը: Այդ իսկ պատճառով հիշատակման արժանի են կրթական գործին մեր բոլոր նվիրատուների անունները:

1889 թ. ախալցխացի Գ. Քուփալյանը և Մկրտիչ Ճարակյանը քաղաքի երկսեռ դպրոցներին նվիրել են 50-ական ռուբլի՝ չքավոր սաների հագուստի և ուսումնական անհրաժեշտ պիտույքների համար[676]:

Ախալցխացի Գասպար աղա Մելքոնյանցը (վախճ. 1893 թ.) քաղաքի երկսեռ դպրոցներին է նվիրել 200 ռուբ.[677]:

646 Մատենադարան, թղթ. 163ե, վավ. 114-I:
647 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 15:
648 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67:
649 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, թ. 76-77:
650 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, թ. 14:
651 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 70-71:
652 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 33:
653 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 39:
654 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, թ. 48: Այլ տեղեկության համաձայն՝ 1881 թ. դպրոցն ունեցել է 271 աշակերտ («Մեղու Հայաստանի», 1881, № 15, էջ 3):
655 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, թ. 27-28:
656 Մատենադարան, թղթ. 157, վավ. 129, թ. 33:
657 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 3:
658 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3839, թ. 14:
659 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3836, թ. 26:
660 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3846, թ. 2-3:
661 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 19-20:
662 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 201-202:
663 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3859, թ. 34: Ի դեպ, նույն թվականին մեկ այլ տեղեկագիր նշել է, թե քաղաքում գործում էին ոչ թե 5, այլ 6 դպրոց՝ Կարապետյան հոգևոր, Եղիսաբեթյան օրիորդաց, Վարդանյան ծխական, Ռաֆայելյան օրիորդաց, Մեծատունյանց ծխական և Ստեփանոսյան ծխական («Մշակ», 1872, № 36, էջ 3):
664 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, թ. 76-77:

665 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3864, թ. 25-26:
666 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 29-30:
667 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, թ. 39:
668 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 204-205: Ի դեպ, մեկ այլ տեղեկագիր նույն թվականին արձանագրել է 349 աշակերտ (**Сегаль И.**, նշվ. հոդվ., “Обзор”, 1878, № 223, էջ 1):
669 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 47:
670 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 105:
671 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:
672 «Մանկավարժական թերթ», 1878, № 2, էջ 63:
673 «Մեղու Հայաստանի», 1881, № 232, էջ 1:
674 «Մեղու Հայաստանի», 1884, № 99, էջ 3:
675 «Արարատ», 1886, հոկտեմբեր, էջ 469:
676 «Արձագանք», 1889, № 16, էջ 243 և № 18, էջ 271:
677 «Նոր-Դար», 1893, № 76, էջ 2:

1913/1914 ուստարվա վերջին լրացել է Կարապետյան և Եղիսաբեթյան դպրոցներում կրոն դասավանդած Մկրտիչ քահանա Գայֆեճյանցի մանկավարժական գործունեության 45-ամյակը. նրա սաներից էին Ստ. Մալխասյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Մխիթար և Մատթեոս եպիսկոպոսները և այլք[678]:

1914 թ. բժիշկ Ա. Բուդուղյանը հայ գրերի գյուտի 1500-ամյակի և հայ տպագրության 400-ամյակի առթիվ իրեն նվիրված գրքերից 530 օրինակ նվիրում է Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցներին (Կարապետյան և Եղիսաբեթյան)՝ աշակերտներին հատկացնելու համար[679]:

1916 թ. հունվարի 15-ի որոշմամբ՝ շարունակվում էր քաղաքի Սբ. Փրկիչ եկեղեցու կալվածական արդյունքներից Ախալքալաքի, Սուլդայի, Կարծախի և Դաղեշի ծխական դպրոցների նպաստավորումը[680]:

Հասարակության կրթության մակարդակն ավելի բարձրացնելու նպատակով 1917 թ. հունիսին քաղաքում ստեղծվում է Ախալցխայի Հայ դպրոցական ժամանակավոր ղեկավար մարմին, որի առաջին քայլերից մեկը Կարապետյան և Եղիսաբեթյան դպրոցները միջնակարգի վերածելն էր:

1917 թ. հուլիսի 25-ին և 30-ին կայացած հասարակական ժողովներում որոշում է ընդունվում Կարապետյան և Եղիսաբեթյան դպրոցները վերածել երկսեռ միջնակարգի[681]: Ի դեպ, դպրոցների տեսչի պաշտոնում վերընտրվում է Մ. Զարաֆյանը:

Նորաստեղծ Հայ դպրոցական ժամանակավոր ղեկավար մարմնի կարևորագույն նպատակներից մեկն էր նյութական աջակցության շնորհիվ ապահովել դպրոցների նորմալ գործունեությունը[682]: 1917 թ. նոյեմբերին Ախալցխայի դպրոցներին օժանդակություն ցույց տալու նպատակով Պետրոս Ղոնդախչյանը, Պարսամ Էնֆիաճյանցը և Հարություն Մախաթճյանը, նշյալ մարմնից թույլտվություն ստանալով, Եկատերինոդարում բնակվող ախալցխացիների շրջանում անցկացնում են հանգանականություն և հավաքում 1270 ռուբլի[683]: Հարկ է նշել, որ Ախալցխայի հայոց դպրոցների տնտեսական վիճակը բավական անմխիթար էր, որի պատճառներից էին եկեղեցապատկան հողերի եկամուտներից զրկվելն ու թոշակների անկանոն գանձվելը[684]:

1917 թ. աշնանը Հայկ, Միհրան, Վահան և Գևորգ Ղազազյանցները 400 ռուբլի են նվիրում Ախալցխայի հայկական դպրոցներին՝ «...իրենց հանգուցեալ մօր շիրիմի վրա գերեզմանաքար դնելու փոխարէն»[685]:

1917 թ. նոյեմբերին Ախալցխայի Հայ դպրոցական ժամանակավոր ղեկավար մարմնին նվիրել են 7000 ռուբլի, 17 կոպեկ Կարապետյան և Եղիսաբեթյան դպրոցների և աղքատ աշակերտների համար[686]:

Նույն թվականի վերջին Ախալցխայից, Թիֆլիսից, Եկատերինոդարից և Ցարիցինից 2008 ռուբլի, 12 կոպեկ է ուղարկվել Կարապետյան և Եղիսաբեթյան դպրոցներին[687]:

1918 թ. փետրվարի 3-9-ը Ախալցխայի Հայ դպրոցական ժամանակավոր ղեկավար մարմինը կազմակերպել էր «Դպրոցական շաբաթ» միջոցառումը՝ վերոնշյալ երկու դպրոցներին նյութական օժանդակություն ցույց տալու նպատակով[688]:

Նույն թվականի փետրվարին Վերոնիկա Մնացականյան-Իճճիկյանը հայոց երկսեռ դպրոցների աղքատ աշակերտների համար նվիրել է 20 ռուբլի[689]:

**Կարապետյան դպրոց.** Կարապետ արքեպիսկոպոսի կարգադրությամբ 1842 թ. Ախալցխայում սկսվում են դպրոցի կառուցման աշխատանքները[690]:

1843 թ. քաղաքում ծխական դպրոց բացելու և նյութապես ապահովելու նպատակով որոշվում է, որ Ախալցխայի առաքելական եկեղեցիները յուրաքանչյուր տարի միասնաբար վճարեն 260 ռուբլի[691]:

1844 թ. տեղի է ունենում դպրոցի հանդիսավոր բացումը[692]:

1858 թ. դպրոցի կացության մասին նշվել է. «...յԱխլցխայ գտանի մի վարժարան, յորում են վարժապետք 7, և աշակերտք 180, ծախքն հատուցանեն յեկեղեցական արդեանց 400 ռուբլի, չունի որպիսի և իցէ աղբիւր արդեանց»[693]:

Նույն թվականին ռուսաց կայսեր այցելության առթիվ՝ Կարապետյան դպրոցը վերանորոգվում է. «...մեծ ուրախութիւն այս էր ազգիս, որ մեր հոյակապ ուսումնարանը քայքայեալ գոլով, հոգունակութեամբ յիշեալ հանդիսագրին վերանորոգեցաւ ամսով յառաջ, այժմ հիւրընկալու պատրաստուեցաւ Կայսերազուն հիւրերու իբրև քաղաքիս շինութեանց մէջ ամէնէն առաջինը և ամէնէն վայելուչը...»[694]:

678 «Հորիզոն», 1914, № 108, էջ 4:
679 «Հորիզոն», 1914, № 36, էջ 3:
680 «Արարատ», 1916, հունվար-փետրվար, էջ 22:
681 «Շարժում», 1917, № 1, էջ 4:
682 «Շարժում», 1917, № 33, էջ 3:
683 Նույն տեղում: Նվիրատուների անվանացանկը տե՛ս «Շարժում», 1917, № 34, էջ 4:
684 Նույն տեղում:
685 «Շարժում», 1917, № 14, էջ 4:
686 «Շարժում», 1917, № 27, էջ 4:
687 «Շարժում», 1918, № 2, էջ 4:
688 «Շարժում», 1918, № 9, էջ 3:
689 «Շարժում», 1918, № 18, էջ 3:
690 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 98, թ. 96:
691 Արևելահայության կրթական գործի վիճակը 1830-1870 թթ., «ԲՀԱ», 1987, № 1, էջ 68:
692 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 442: Այլ տեղեկության համաձայն բացվել է 1836 թ. (**Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 213):
693 Մատենադարան, թղթ. 157, վավ. 129, թ. 33:
694 «Մեղու Հայաստանի», 1858, № 41, էջ 325:

Հայտնի է, որ Սուքիաս վարդապետ Պարգյանցն իր փոխառաջնորդության առաջին իսկ տարում՝ 1869 թ., բարեկարգում է Կարապետյան դպրոցը և հրավիրում նոր ուսուցիչներ, որոնց թվում էր Խաչատուր Աբովյանի որդին՝ Վարդան Աբովյանը[695]: Նա դասավանդել է ֆրանսերեն (գաղղիերեն) և ռուսաց լեզու:

Վարդան Աբովյանի տեսչության տարիներին (1870-71 թվականներ) դպրոցում 4 առարկա է (աշխարհագրություն, թվաբանություն, ազգային և ընդհանուր պատմություն) դասավանդել Ղազարոս Աղայանը[696]:

Վ. Աբովյանին փոխարինել է Գևորգ Բարխուդարյանը[697]:

Դպրոցի նախակրթարանի առնչությամբ գրվել է. «Այցելությունս սկսեցի նախակրթարանից: Այդ դասարանը բուն ուսումնարանի շենքից անջատված էր, ինչպես անջատված է լինում գոմը լավ շենքերից: Եվ հենց գոմի էլ նման էր արտաքուստ, իսկ ներքուստ նման էր խոզանոցի...: Անկարգ, անկանոն, ամեն մեկի ձեռին մի առանձին գիրք կամ տետրակ, իսկ վարժապետը մի կատարյալ վայրենի, ...մի երկայն ճիպոտ ձեռին մեկի գլխին էր խփում, մյուսի ձեռներին: Ինքը սարկավագ էր, տերտերի հագուստով...»[698]:

1872 թ. դպրոցն ուներ երկու դասարան: Ի դեպ, ըստ հոդվածագրի՝ երկրորդ դասարանը, որտեղ ուսանում էր 3 աշակերտ, անհրաժեշտ էր փակել կրկնապատիկ ծախսերից խուսափելու համար (90 աշակերտի համար ծախսվել է 200 ռուբլի, այն դեպքում, երբ մի քանի տարի առաջ 200 աշակերտի համար այդ գումարը կազմել է 1500 ռուբլի)[699]:

1873 թ. դպրոցի նախակրթարանի համար հաստատվել էին Տեր-Ղևոնդյանցի «Մայրենի լեզու» և Օվշինսկու “Родное слово” դասագրքերը[700]:

695 «Մեղու Հայաստանի», 1870, № 9, էջ 67-68: Հավելում ենք մի քանի մանրամասներ Վարդան Աբովյանի կենսագրականից. ծնվել է 1840 թ. Թիֆլիսում: 1849 թ. փոխադրվել է Թիֆլիս, սովորել նախ Գրիգոր Խատիսյանի պանսիոնում, ապա ուսումը շարունակել է Դորպատի համալսարանում՝ ստանալով ռուսաց լեզվի ուսուցչի վկայական: Դասավանդել է Տալլինում, Թիֆլիսում, Ախալցխայում, Երևանի թեմական դպրոցում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և այլուր: Վախճանվել է 1896 թ.-ին և ամփոփվել Էջմիածնի Սբ. Գայանե վանքի բակում (**Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, 1973, էջ 16:

696 **Աղայան Ղ.**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1963, էջ 453:

697 Մանկավարժ, թարգմանիչ, գրող Գևորգ Նիկողայոսի Բարխուդարյանը ծնվել է 1835 թ. Թիֆլիսում: Սովորել է Դորպատի համալսարանում: Մանկավարժական գործունեություն է ծավալել Նախիջևանում, Ագուլիսում, Ախալցխայում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Աշխատակցել է «Հյուսիսափայլ», «Մուրճ», «Լումա», «Փորձ» հանդեսներին և հայտնի է եղել Գ. Բ., Գ. Թ., Վարուժան ծածկանուններով: Մահացել է 1913 թ. Թիֆլիսում (Ով ով է. հայեր, հ. 1, էջ 214: Տե՛ս նաև **Հովակիմյան Բ.**, Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 574):

698 **Աղայան Ղ.**, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 454:

699 «Մշակ», 1872, № 38, էջ 3:

700 «Մեղու Հայաստանի», 1873, № 4, էջ 2:



**Ախալցխա. Կարապետյան դպրոցի երկհարկ շենքը Ի դարի սկզբին**

1877-1886 թվականների ընթացքում դպրոցում սովորել է 4197 երեխա[701]:

1870-ական թվականների վերջերից անհրաժեշտություն էր դարձել դպրոցի վերանորոգությունը:

1879 հոկտեմբերին «...կովկասեան ուսումնարանի շրջանի պ. հոգաբարձուի առաջարկութեամբ հաւաքվեցան մեր քաղաքի առաջաւոր անձինքներից մի քանիսը: Այդ ժողովում առաջարկվեցաւ եկեղեցու գաւթում գտնված ժողովրդական ուսումնարանը փոխադրել մի աւելի յարմարաւոր տեղ, որովհետև յիշեալ ուսումնարանի տեղի դրութիւնը համապատասխան չէ առողջապահական կանոններին: Մեր քաղաքացիները դարձեալ մի տարի ժամանակամիջոց խնդրեցին փոխադրութեան համար և խոստացան հարկաւոր վերանորոգութիւններն անել յիշեալ ուսումնարանի շինութեան մէջ»[702]:

1883 թ. նորընտիր հոգաբարձությունը քայլեր է ձեռնարկում դպրոցի վերանորոգման ուղղությամբ. «...մտադիր է գարնան տեղւոյս Կարապետեան տղայոց ուսումնարանի վերնայարկը շինել, որ ներկայ հանգամանքներում անհրաժեշտ է, որովհետև աշակերտների թիւը անասելի կերպով շատացել է անցեալ տարիների համեմատութեամբ. միևնոյն ժամանակ շինութիւնը հին և քայքայուած լինելով կարօտ է վերանորոգման: Այդ պահանջը վաղուց ի հետէ զգացուել էր...: Նորընտիր հոգաբարձութիւնը քաջ ըմբռնելով թատրոնի, մշտական բեմի կարևորութիւնը և նորա կրթողական նշանակութիւնը ուսումնարանի շինելի վերնայարկում մշտական բէմ կառուցանէ և ինչպէս լսած ենք պլանը արդէն քաշած է»[703]:

1884 թ. հոկտեմբերի 28-ին 800 մարդու և քաղաքի առաջնորդ Խորեն վարդապետ Ստեփանեի մասնակցությամբ հին առաջնորդարանում կայացած ժողովի ընթացքում որոշում է ընդունվում դի-

701 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 213:

702 «Մշակ», 1879, № 187, էջ 2:

703 «Արձագանք», 1883, № 13, էջ 192:

մել Սբ. Էջմիածնի սինոդին Կարապետյան դպրոցը վիճակայինի վերածելու խնդրանքով[704]:

Կարապետյան դպրոցի ուսուցիչների թվում էր նաև ազգագրագետ Երվանդ Լալայանը, որը 1885-1890 թվականների ընթացքում, ի թիվս Ալեքսանդրապոլի և Ախալքալաքի, դասավանդել է նաև Ախալցխայում[705]:

1886 թ. նախատեսված էր կառուցել նոր շենք[706], քանի որ «...Կարապետեան դպրոցի շինութիւնը շատ հնացած է և անպէտք, չը նայելով, որ դպրոցն ունի բաւական նշանաւոր տարեկան արդիւնք»[707]:

Խնդրո առթիվ 1887 թ. գրվել է. «...տեղւոյս Կարապետեան դպրոցը յիսուն տարի է, որ գոյութիւն ունի. նա շինուած է երջանկայիշատակ Կարապետ արքեպիսկոպոսից: Դպրոցի հին շինութիւնը արդի ուսման պահանջի համեմատ 'ի վաղուց հետէ անբաւարար ճանաչուելով՝ հարկ էր համարվում վերանորոգելու: Եւս առաւել այս վերջին տաս տարուայ ընթացքում զգացուեց դպրոցի ընդարձակելու, վերանորոգելու հարցը: Այդ ամեն մի հոգաբարձու վկայում էր, խոստովանում էր, սակայն չէր ձեռնարկում շինութեան գործին, միջոցներ չը լինելու պատճառաւ: Գործը այսօր վաղուան էր թողնում: Աւելի քան զգալի դարձաւ դպրոցի վերանորոգելու, ընդարձակելու հարցը սորանից հինգ տարի առաջ: 1883 թուին գոցուեց Վարդանեանց մասնաւոր դպրոցը, որտեղ բաւականաչափ աշակերտ էր ուսանում: Առաջ Կարապետեան դպրոցի պակասը լրացվում էր թաղական դպրոցներով և յիշուած մասնաւոր դպրոցի գոյութիւնով: Իսկ երբ գոցուեց վերջապէս մասնաւոր դպրոցը, այն ժամանակ հոգաբարձութիւնը ազգային դպրոց ընդունել տալու ցանկացող խնդրատու ծնողներին բացասած չ'լինելու համար՝ մտադրուեց անշուշտ վերանորոգել դպրոցը: Այդ թուի հոգաբարձութեան օրով կազմում է շինելի դպրոցի նախահաշիւը և յատակագիծը: Սակայն այդ թուի հոգաբարձութեան օրով չի իրագործում այդ, միջոցներ չը լինելու պատճառաւ:

Այս հարցը կրկին արծարծվում է դպրոցների գոց դրութեան միջոցին: Արժանապատիւ Խորէն ծ. վ. Ստեփանէի յաջորդութեան ժամանակ ժողով է կայանում այդ մասին, ընտրվում են շինութեան հոգաբարձուներ: Որոշ պայմանով տրւում է դպրոցի ներքնայարկը կապալառուի: Դպրոցների գոց լինելուց խնայվում է եկեղեցապատկան կալուածներից ստացուած տարեկան կապալադրամը, որով միջոց է տրւում անմիջապէս շինութեան ձեռնարկութեան: Շինութիւնը սկսվում է, յանկարծ ինչ-ինչ պատճառներով շինութեան միջոցին կոնսիստորիայից արգելք է տրւում շինութեան շարունակութեանը:

1886 թուին կրկին հրաման է գալիս շինութիւնը սկսելու: Շինութիւնը նորից սկսում է, սակայն նա հոգաբարձուների անհոգութեան և թուլութեան պատճառաւ, ցօրս թերի է մնում»[708]: 1887 թ. հոկտեմբերի 27-ին Ախալցխա ժամանած Թիֆլիսի թեմի առաջնորդ Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանի կարգադրությամբ դպրոցի շինարարարական աշխատանքներն անհապաղ պետք է շարունակվեին և շուտափույթ ավարտվեին[709]:

1889 թ. Կարապետյան դպրոցի տեսուչ է նշանակվում Ստեփանոս Մալխասյանը[710]:

1891 թ.-ից ախալցխացի թատերասերների ջանքերով դպրոցում ներկայացումների համար կառուցվել է բեմ, որը, սակայն, տակավին 1894 թ. «...բաւական աղքատ է, զուրկ ամենաանհրաժեշտ և կարևոր պարագաներից: Թատերասիրաց խումբը որոշել է փետրվարի 6-ին մի ներկայացում տալ յօգուտ դպրոցի բեմի...»[711]: Փետրվարի 17-ին Աղ. Երիցյանի «Սխալ հաշիւը» և Մադաթյանի «Մադոյի կտակը» բեմադրված ներկայացումների արդյունքում նշյալ նպատակի համար հավաքվում է 180 ռուբլի[712]:

1893 թ. դպրոց այցելած ականատեսը նշել է. «Քաղաքը ունի երկու կարեւոր վարժարաններ, որոնցմէ մին կը պատկանի Հայ համայնքին, իսկ երկրորդը՝ Ռուս պետական վարժարան մըն է: Հայոց վարժարանը ունում կուտայ 300ի մօտ պատանիներու և երիտասարդներու և ա՛լ աւելի մեծ թուով աղջիկներու: Թէ՛ լուսաւորչական և թէ՛ կաթոլիկ հայերը այս դպրոցը կը յաճախեն. կրօնքի դասերը իւրաքանչիւր յարանուանութեան պատկանող տղոց առանձինն կը տրուին, իրենց սեպհական ուսուցիչներու կողմէ: Մեզի ըսին, թէ վարժարանին տարեկան եկամուտն է 14.000 րուպլի, առանց հաշուելու աշակերտուհիներէն գանձուած թոշակը. եկամուտի գումարին մէջ հաշուուած է վարժարանին կալուածը եղող թատրոնին հասոյթը»[713]:

Առաջին աշխարհամարտի տարիներին քաղաքի հայկական դպրոցների շենքերը հանգամանքների բերումով տրամադրվում են զինվորականությանը. «...քաղաքիս չորս եկ. ծխ. դպրոցների շէնքերը, ինչպէս և միւս տարրական դպրոցներինը գրաւում են զինուորական կարիքների համար: Մեր դպրոցական շէնքերից Փրկչինը լինելու է ժամանակաւոր հիւանդանոց: Բոլոր շէնքերն էլ ստանալու են վարձատրութիւն, հաշւելով իւրաքանչիւր զինուորին 16 րուբլի տարեկան: Փրկիչ և Գր. Լուսաւորիչ դպրոցները ուսումը շարունակելու են ճա-

704 «Մեղու Հայաստանի», 1884, № 94, էջ 4:

705 **Լալայան Ե.**, նշվ. աշխ., հ. 1, էջ 7:

706 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 213-214:

707 «Մեղու Հայաստանի», 1886, № 54, էջ 3:

708 **Հր.**, Նամակ Ախալցխայից, «Արձագանք», 1887, № 41, էջ 652-653:

709 Նույն տեղում, էջ 653:

710 «Արձագանք», 1889, № 32, էջ 477:

711 «Արձագանք», 1894, № 13, էջ 2:

712 «Արձագանք», 1894, № 22, էջ 3:

713 **Լինչ Ֆ. Պ.**, նշվ. աշխ., էջ 32:

շերից յետոյ տեղիս առևտրական դպրոցում, իսկ օր. Սահականուշեան և Արղութեան դպրոցները՝ իգական գիմնազիայում նոյնպէս ճաշերից յետոյ...»[714]:

Հայտնի է, որ 1915/1916 ուստարվանից, երբ զինվորական իշխանությունները գրավել էին Կարապետյան դպրոցի շենքը, Ախալցխայի հայոց դպրոցները հայտնվում են բավականին անմխիթար դրության մեջ. «Սենեակների սակաւութեան պատճառով հոգաբարձութիւնը հարկադրուեց ձեռքի տակ ունեցած շէնքերի փայտանոցները ու խոհանոցները մի կերպ պատերը սպիտակացնելով դասարանների վերածել: Այսպիսով, ստեղծուեց մի դրութիւն, որ աշակերտները լցուեցին նեղ ու մութ, խոնաւ և միանգամայն անյարմար դասարանների մէջ»[715]:

Ստեղծված կացության մասին նշվել է նաև, որ «...ութհարիւրի չափ երեխաներ թափուեցին միւս երկու փոքր շէնքերը: Դպրոցական պարապմունքները շարունակուեցին այնուհետև չափազանց աննպաստ պայմաններում: Ուսումը և դասաւանդութիւնը կատարւում էր երկնւագ՝ ճաշից առաջ և յետոյ: Որպէսզի օրը մթնելուց առաջ ուսումը վերջանար դպրոցում, կատարուեցին դասերի տևողութեան կրճատումներ. կրճատումներ էին լինում որոշ առարկաների նկատմամբ մանաւանդ աշնանային և ձմեռային ամիսներում»[716]:

1917 թ. օգոստոսին Դպրոցական ժամանակավոր ղեկավար մարմնի և հոգաբարձության միջնորդությամբ Զինվորական խորհրդի գործադիր կոմիտեն որոշում է ընդունում ազատել դպրոցի շենքը և այն վերստին օգտագործել որպես դպրոց[717]:

1918 թ. հունվարին ավարտվում է Կարապետյան դպրոցի շենքի վերանորոգումը[718]:

1968 թ. դպրոցի շենքը քանդել են և տեղում կառուցել շրջանային ուղեպահ-շտաբ[719]:

Ստորև ներկայացնում ենք 1862-1914 թվականների ընթացքում Կարապետյան դպրոցի գործունեության համառոտ վիճակագրությունը[720].

| *տարեթիվ* | *այլ տեղեկ.* | *ուսուցիչ* | *աշակերտ* |
|---|---|---|---|
| 1862[721] | գործել է | | |
| 1863[722] | | 11 | 210 |
| 1864[723] | | 12 | 220 |
| 1866[724] | | 7 | 98 |
| 1870[725] | | 8 | 130 |
| 1871[726] | | 8 | 98 |
| 1872[727] | | | 90 |
| 1873[728] | | 7 | 150 |
| 1876[729] | | 9 | 193 |
| 1877[730] | | 10 | 193 |
| 1878[731] | | 10 | 225 |
| 1881[732] | | 11 | 258 |
| 1884[733] | երեքդասյա | | |
| 1885 | փակվել է | | |
| 1886[734] | վերաբացվել է, երկդասյա | 16 | 428 |
| 1887[735] | | 14 | 446 |
| 1888[736] | | 14 | 344 |
| 1889[737] | | 13 | 328 |
| 1892[738] | | | 277 |
| 1893[739] | | 8 | 316 |
| 1894[740] | | 9 | 405 |
| 1896 | փակվել է | | |
| 1905[741] | վերաբացվել է | | |
| 1907/08[742] | երկդասյա | | 382 |
| 1908[743] | | | 317 |
| 1909/10[744] | բացվել է 5-րդ բաժանմունքը | | |
| 1910[745] | | 11 | 268 |
| 1911[746] | երկդասյա | 11 | 268 |
| 1912[747] | | 18 | 385 |
| 1914[748] | | | 240 |

714 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 390, թ. 48:

715 **Ստեփանեան Մ.**, Ախալցխայի հայոց դպրոցների շուրջը, «Շարժում», 1917, № 13, էջ 3:

716 **Ստեփանեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 2:

717 «Շարժում», 1917, № 6, էջ 2:

718 «Շարժում», 1918, № 6, էջ 3:

719 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 40:

720 1830-ական թվականներից մինչև 1862 թ. լինելով քաղաքի միակ հայոց դպրոցը համապատասխան տվյալները տե՛ս դպրոցների գործունեությունը լուսաբանող ընդհանուր աղյուսակում (սույն աշխ., էջ 105):

721 Տեսութիւն ազգային, «Համբաւաբեր Ռուսիոյ», 1862, № 27, էջ 3:

722 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 60-61:

723 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3844, թ. 38:

724 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 5:

725 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 84: Տե՛ս նաև «Նոր Դպրոց», 1908, № 1, էջ 67:

726 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 32, թ. 16:

727 «Մշակ», 1872, № 38, էջ 3:

728 **Խուդոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Երևան, 1987, էջ 504:

729 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 51: Տե՛ս նաև ֆ. 56, ց. 3, գ. 62, թ. 13:

730 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 99:

731 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 177: Ի դեպ, մեկ այլ տեղեկագիր նույն թվականին արձանագրել է 160 աշակերտուհի (**Сегаль И.**, նշվ. հոդվ., “Обзор”, 1878, № 223, էջ 1):

732 **Խուդոյան Ս.**, նույն տեղում:

733 **Խուդոյան Ս.**, նույն տեղում:

734 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 213: Տե՛ս նաև **Խուդոյան Ս.**, նույն տեղում:

735 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 3-4:

736 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 46-47:

737 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 115-116:

738 **Խուդոյան Ս.**, նույն տեղում: Ի դեպ, այլ տեղեկագրի համաձայն՝ 1892/1893 ուստարում դպրոցն ուներ 8 ուսուցիչ և 297 աշակերտ (ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 11, թ. 17-19: Ուսուցիչներն էին՝ Սարիբեկ Հարությունյանց (ավագ ուսուցիչ, հայոց լեզու), Մկրտիչ քահանա Գայֆեճյանց (կրոն), Խորեն Ասմարյանց (ռուսաց լեզու), Սահակ Սահակյանց (հայոց լեզու և բնագիտություն), Սեդրակ Տեր-Կարապետյանց (ռուսաց լեզու), Գրիգոր Չիլինգարյանց (գծագրություն), Մարտիրոս Սյուտեյանց (թվաբանություն) և Պողոս Տեր-Կարապետյանց (երգեցողություն):

739 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8595, թ. 33-34:

740 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 54-55:

741 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 13:

742 **Խուդոյան Ս.**, նույն տեղում:

743 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 40-41:

744 «Նոր Դպրոց», 1909, № 8-9, էջ 140:

745 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 35-36:

746 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57:

747 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3920, թ. 49:

748 **Խուդոյան Ս.**, նույն տեղում:

**Եղիշե Մեծատունյանցի**[749] **«Բուրաստան» դըպրոց.** գործել է տիրացու Ե. Մեծատունյանցի տանը 1860-1870-ական թվականներին:

| *տարեթիվ* | *այլ տեղեկ.* | *ուսուցիչ* | *աշակերտ* |
|---|---|---|---|
| 1864[750] | նորաբաց | 3 | 35 |
| 1866[751] | | 3 | 45 |
| 1873[752] | | 2 | 29 |

**«Նոր արշալույս» իգական դպրոց.** հիմնել է Ռաֆայել Մնացականյան Սաղաթելյանցը 1863 թ.[753]: Այլ տեղեկագրի համաձայն՝ դպրոցը հիմնվել է 1867 թ. գավառապետ Օռլովսկու և թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոս Սագինյանցի թույլտվությամբ[754]:

Դպրոցի սկզբնական քայլերի մասին ուշագրավ վկայություն է թողել 1867 թ. օգոստոսին կրթօջախ այցելած Գարեգին Ղազազյանցը. «...ահա՛ եօթը ամիս է, որ պ. Ռափայէլ մահտեսի Մնացականեանը յանձնառու է եղել զանազան խոչընդոտների ընդդիմանալ և հիմնել է առաջին անգամը աղջկանց դպրոց Ախլցխոյ մէջ...: Ուսանելու առարկաները են. ուղիղ ընթերցանութիւն և քերականութիւն, վայելչագրութիւն, գեղագրութիւն և թուաբանութիւն. ուսումն քրիստոնէական հաւատոյ և Հայոց պատմութիւն, ուղիղ ընթերցանութիւն հանդերձ թարգմանութեամբ և վայելչագրութիւն Ռուսերէն. քաղաքաւարութիւն և առակախօսութիւն. արհեստ տնտեսական և երգեցողութիւն, ասեղնագործութիւն և պարերգութիւն: Երկու ուսուցիչք սովրեցնում են ասեղնագործութիւն և պարել, իսկ մնացեալ առարկաների սովրեցնողը և դպրոցի կառավարիչը է պ. Ռափայել Սաղաթելյանցը: Թէև ունի շատ պակասութիւններ, համեմատելով այժմեան պահանջմունքներին, բայց ներելի է, որովհետև դպրոցը չունի այնքան դրամական կարողութիւն, որ կարողանայ առանձին առանձին ուսուցիչներ վարձել, առարկաները շատացնել և այլ պակասութիւնները հոգալ»[755]:

1872 թ. դեկտեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ է նշանակվում Եղիշե Մեծատունյանցը, որն այդ պաշտոնը վարում է առնվազն մինչև 1880 թ.:

Հիմնադրի գլխավորությամբ դպրոցի գործունեությունը վկայված է նաև 1873 թ.[756]:

1875 թ. նոյեմբերից դպրոցը գտնվում էր Սբ. Էջմիածնի իրավասության ներքո, որի համար ստանում է հոգևոր կրթօջախի կարգավիճակ, և Գևորգ Դ կաթողիկոսի կոնդակով Ախալցխայի Սբ. Փրկիչ եկեղեցու կալվածքներից հատկացվում է տարեկան 540 ռուբլի[757]:

Ըստ ամենայնի՝ կրթօջախի հիմնադիրն ամեն կերպ ջանում էր դպրոցի համար ապահովել կանոնավոր ընթացք և անձնապես սատարում էր չքավոր սաներին: Հայտնի է, օրինակ, որ 1877 թ. Ռ. Սաղաթելյանցը ստեղծել էր 7 տեսակ ասեղնագործ հայերեն և ռուսերեն տառեր, որոնցից 3 տեսակով էլ կազմել է 3 տեսակ այցեքարտեր. դրանց վաճառքից ստացված գումարից 2 ռուբլին պետք է հատկացվեր դպրոցի աղքատ աշակերտուհիներին[758]:

1879 թ. հոգաբարձուների խորհրդի անդամներ են հիշվում Հովհաննես ավագ քահանա Առվանյանցը (1879 սեպտեմբերին հիշվում է որպես հանգուցյալ), մահտեսի Վարդան աղա Վարդանյանցը, կապիտան Մկրտիչ Վարդապետյանցը և Հովակիմ աղա Ղույումչիպաշյանցը[759]:

1880 թ. նկատի ունենալով դպրոցի հոգաբարձության նյութական չարաշահումները՝ Վրաց-իմերեթյան կոնսիստորիան Սբ. Էջմիածնի սինոդին առաջարկում է կրթօջախը դնել Կարապետյան և Եղիսաբեթյան դպրոցների հոգաբարձության ենթակայության ներքո[760]: Սակայն նույն թվականի օգոստոսի 27-ին մի խումբ ախալցխացիներ դիմում են Ամենայն Հայոց Գևորգ Դ կաթողիկոսին դըպրոցի հոգաբարձությունը պահելու խնդրանքով. «...Սաղաթէլեանցին հրաժարուելէն յետքը վաղ թէ անապահ նոյն դպրոցի գոյութիւնը կոչնչանայ, նայելով այժմեան հանգամանքներուն և ահա այս իսկ է նաև ոմանց ցանկութիւնը, նամանաւանդ և

749 Հայտնի է, որ 1879 թ. Եղիշե Մեծատունյանցը հեղինակել է «Երգարան աղջկանց և աշակերտուհեաց հայկական ուսումնարանաց» գրքի առաջին հատորը, որն էլ տպագրվել է նույն թվականին Թիֆլիսում: Ի դեպ, Ե. Մեծատունյանցն այս աշխատության հասույթը հատկացրել է «Նոր արշալույս» և Եղիսաբեթյան դպրոցներին («Մշակ», 1879, № 99, էջ 1: Տե՛ս նաև Հայ գիրքը 1851-1900 թվականներին, հ. Գ, էջ 265: Ի դեպ, նրա հեղինակությամբ լույս են տեսել նաև «Մասեայ որդւոյն Եղիշէի օրհնութեան քնարը» (1866), «Դաշնագիր աւետարանական սիրոյ եւ միաբանութեան» (1874), «Կոյր առաջնորդ» (1897) գրքերը (տե՛ս նշվ. աշխ., հ. Գ, էջ 121, 207, 574): Հայտնի է նաև, որ 1890 թ. նա հանձն էր առել մեկնել Պոլիս, Հնդկաստան և Լոնդոն հետևելու և Ախալցխա վերադարձնելու ախալցխացի Հարություն Անուշյանցի՝ Հնդկաստանում վախճանված ազգական Հովսեփ Անուշյանցի՝ Լոնդոնի փոխարինական բարձրագույն բանկում կտակով թողած 19 միլիոն ստերլինգ (ռուսական 100 միլիոն ռուբլի) գումարը («Նոր-Դար», 1890, № 99, էջ 3: Տե՛ս նաև «Արձագանք», 1890, № 21, էջ 10):

750 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3844, թ. 38:

751 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 5:

752 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 509:

753 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6910, թ. 16: Այլ տեղեկության համաձայն՝ դպրոցը բացվել էր տակավին 1852 թ. (**Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 506): Տե՛ս նաև **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 113:

754 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 442: Տե՛ս նաև «Արարատ», 1877, էջ 279:

755 «Մեղու Հայաստանի», 1868, № 33, էջ 252-253:

756 “Кавказский календарь на 1874 г.”, с. 112.

757 «Մշակ», 1879, № 165, էջ 1: Տե՛ս նաև **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 64-65:

758 «Մշակ», 1877, № 10, էջ 3:

759 «Մշակ», 1879, № 165, էջ 1:

760 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6910, թ. 7-8: Տե՛ս նաև **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 108-110: Դպրոցի հոգաբարձուներն էին Ռաֆայել Սաղաթելյանը, Եղիշե Մեծատունյանցը և Հովակիմ Ղույումչիպաշյանցը:

հոգաբարձութեան վերտողեալ «Կարապետեան» և «Եղիսաբէթեան» ուսումնարանաց և այժմեան քէմական վերատեսչի...»[761]:

1860-1880-ական թվականներին դպրոցի ուսուցիչների և աշակերտության թվաքանակի մասին տվյալներ պարունակող վավերագրերի համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| *տարեթիվ* | *ուսուցիչ* | *աշակերտ* |
|---|---|---|
| 1868[762] | 3 | 20 |
| 1873[763] | 4 | 56 |
| 1876[764] | 4 | 56 |
| 1878[765] | 5 | 94 |
| 1881[766] | 6 | 85 |

**Սբ. Ստեփանոսյան դպրոց (Գարեգին Ղազազյանցի).** բացվել է 1869 թ.[767] (այլ տեղեկության համաձայն՝ 1870 թ. մարտի 18-ին Գարեգին Ղազազյանցի կառավարության ներքո)[768]:

1869 թ. դպրոցում հայոց լեզու, վայելչագրություն և կրոն է դասավանդել Պետրոս Մուշեղյանցը, իսկ ռուսաց լեզու, վայելչագրություն և թվաբանություն՝ Գ. Ղազազյանցը[769]:

1870 թ. նորաբաց դպրոցն ուներ 3 ուսուցիչ և 20 աշակերտ[770]:

1873 թ. հիշվում են հայոց լեզվի և թվաբանության ուսուցիչ Գ. Ղազազյանցը, կրոնի ուսուցիչ Կարապետ քահանա Տեր-Գրիգորյանցը, ռուսաց լեզվի, երգեցողության և վայելչագրության ուսուցիչ Պ. Ա. Սարայտարյանցը[771]:

**Մարտիրոս քահանա Մեծատունյանցի դպրոց.** կրթօջախի գործունեության մասին առկա խիստ սահմանափակ տվյալները վերաբերում են 1870-ական թվականների սկզբներին.

| *տարեթիվ* | *այլ տեղեկ.* | *ուսուցիչ* | *աշակերտ* |
|---|---|---|---|
| 1870[772] | նորաբաց | 3 | 40 |
| 1873[773] | | 2 | 46 |

**Վարդանանց արական դպրոց.** հայտնի է, որ սեփական միջոցներով կառուցած եկեղեցու հարևանությամբ նաև հայկական դպրոց կառուցելու նպատակով հայր և որդի Վարդան և Համազասպ Վարդանյանցներն այդ ուղղությամբ քայլեր են ձեռնարկել միայն 1864 թ. «...ցանկալով ի պարսպի նորին շինել սենեակս վասն ազգային ուսումնարանի հարիւրաւոր մանկտեաց բնակչաց այնր տեղոյ, որք վասն ի կարի հեռիութեան չկարին գալ ի միւս մեծ ուսումնարանն քաղաքի մեր և մնան զուրկ ի գիտութիւնէ հաւատոյ»[774]: Սակայն, ինչպես փաստում է Ախալցխայի բերդամիջի քանդարանում երջանիկ պատահականությամբ պահպանված դպրոցի շինարարական արձանագրությունը, հաստատությունը հիմնվել է 1865 թ.:

Արձանագրություն, երկայնական նիստին՝ 8 տող.

*[Ա]ռընթեր Վարդանեանց ս(ուր)բ տաճարիս | ...շինեցաւ դպրոցս ՚ի պէտս հայ ազգիս | ...ատակոց հմոց ...ազատ | ...րոյն որդւոյս Համազասպ Վարդան(եանց) | ...պայծառացի ս(ուր)բ եկեղեցին Վ(ա)րդ(ա)նե(ա)նց | [արդե]ամբ զաւակաց ազգիս ՚ի սմին | ...արիացին քաջայոյս մանկունք | ...նի լիցին բարուք եւ վարուք, 4.1.1865:*

Կողային նեղ նիստին՝ 5 տող.

*Ի սու(յ)ն շիրմի...| հանգեաւ առ տէր | մ(ա)հ(տեւ)ի Յակոբեան | մ(ա)հ(տես)ի Վարդանեանց, | 1840... մարտի 7:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Ծանոթ.* այն տեղեկությունը, որ դպրոցը հիմնվել է 1863 թ. («Մեղու Հայաստանի», 1868, № 36, էջ 275: Տե՛ս նաև **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 442) չի հաստատվում դպրոցի շինարարական արձանագրությամբ:



**Ախալցխա. Սբ. Վարդանանց արական դպրոցի շինարարական արձանագրության կողային նեղ նիստը**

1866 թ. Ախալցխայի տոհմական պատվավոր քաղաքացի Համազասպ Վարդանյանցը, սեփական միջոցներից 8000 ռուբ. ծախսելով, կառուցում է դպրոցի շենք և ստանձնում տարեկան մոտ 1000 ռուբ. ծախս պահանջող հաստատության պահպանության հոգսը[775]:

Հայտնի է, որ դպրոցն իր գոյությունը պահել է Սբ. Վարդանանց եկեղեցու արդյունքով, որը, սակայն, «...հազիւ բաւականանում է ուսումնարանի

761 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6228, թ. 16-17: Տե՛ս նաև **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 115:
762 «Մեղու Հայաստանի», 1868, № 33, էջ 253:
763 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 506:
764 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 51:
765 Նշվ. գործը, թ. 177:
766 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 506: Այլ տեղեկության համաձայն՝ նույն թվականին դպրոցն ուներ 94 աշակերտուհի («Մեղու Հայաստանի», 1881, № 15, էջ 3):
767 «Մեղու Հայաստանի», 1870, № 36, էջ 287:
768 «Մեղու Հայաստանի», 1870, № 37, էջ 295:
769 **Ղազազեանց Գ.**, Ախալցխա, «Մեղու Հայաստանի», 1873, № 33, էջ 3:
770 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 84:
771 **Ղազազեանց Գ.**, նշվ. հոդվ., «Մեղու Հայաստանի», 1873, № 33, էջ 3:
772 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 84:
773 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 508:
774 Մատենադարան, թղթ. 157, վավ. 275, թ. 51:
775 ՀԱԴ, ֆ. 355, ց. 1, գ. 329, թ. 3:






**Ախալցխա. Սբ. Վարդանանց արական դպրոցի շինարարական արձանագրությունը (ներկայումս գտնվում է թանգարանի վերածված մզկիթի ներսում)**

պակասութիւններին և ուսուցչաց վարձերին»[776] և հիմնադրի հովանավորությամբ: 1868 թ. թվականի օգոստոսին կրթօջախ այցելած Գարեգին Ղազազյանցի վկայությամբ՝ դպրոցն ուներ մեկ նախապատրաստական և առաջին ու երկրորդ դասարան, 4 ուսուցիչ[777]: Ուսուցանում էին ընթերցանություն, թվաբանություն, կրոն, հայոց և ռուսաց լեզուների վայելչագրություն, բարոյական մանր ուսմունք և երգեցողություն: 1869 թ. դպրոցում դասավանդել են Հովհաննես Հակոբյանցը, Մելիքսեդեկ Մկրտչյանը, Տիգրան Սիսակյանցը, Ղազարոս Բաղդասարյանցը և Մարտիրոս քահանա Մեծատունյանցը. ի դեպ, նշյալ թվականի հուլիսի 1-ից Ախալցխայի առաջնորդ Սուքիաս վարդապետ Պարզյանցի ներկայությամբ սկսվել է դպրոցի աշակերտների առաջադիմության ստուգումը, որը համարվել է բավարար[778]:

1872 թ. Ախալցխայի Մարդա թաղամասի բնակիչներից գրություն է ուղարկվում Ամենայն Հայոց Գևորգ Դ կաթողիկոսին, որտեղ մասնավորապես անդրադառնալով կրթօջախի գործունեությանը՝ խնդրում են խրախուսական որևէ միջոցի արժանացնել դպրոցի հիմնադրին. «Շատ տարիներ մեզ պատել էր մի հոգեկան վիշտ և տրտմութիւն, երբ մենք կը տեսնէինք մեր որդւոց մեզ նման անկիրթ լինելը և ուսման քաղցր պտուղներից զուրկ մնալը, որոյ գլխաւոր պատճառն էր մեր իսկ անուսում լինելը, և նիւթականապէս կարողութիւն չունենալներս: Այս մեր հոգեկան տրտմութեան փարատիչ հանդիսացաւ Վարդան աղա Վարդանեանցի որդի Համազասպն Վարդանեանց, որ 1864 ամի կառոյց շքեղաշուք ուսումնարան իւր սեփական ծախիւքն յիւրքէնէ կառուցեալ, սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մօտ և հրամանաւ առ Տէր հանգուցեալ Մատթէոսի կաթողիկոսի, 4-ն ապրիլի 1864 ամի հաստատեցաւ

776 «Մեղու Հայաստանի», 1868, № 36, էջ 275:

777 Նույն տեղում:

778 «Մեղու Հայաստանի», 1869, № 28, էջ 219: Նույն թվականին դպրոցի հոգաբարձուների թվում հիշվում են մահտեսի Համազասպ Վարդանյանցը և նրա օգնական Գրիգոր աղա Սաղոյանցը, որոնք «...անխոնջ աշխատութեամբ կ'տքնեն ուսումնարանիս բարելաւութեան համար, նմանանաւանդ՝ ազգասէր և ուսումնասէր հիմնադրի՝ որ չի՛ խնայեր ինչպէս աղքատ աշակերտաց գրիչ, թուղթ և գրեանք ուսմանց պարգևելն, նմանապէս և բոլոր վարժապետաց տարեկան ռոճիկներն՝ ըստ արժանեաց հատուցանելն...»:

հոգաբարձու, ուր ճրիապէս դաստիարակութիւն կը ստանան բացի մեր որդւոց և քաղաքի միւս մասերի որդիքը և մոտակայ գիւղօրէից ևս գիւղական ուսանողներ, որ և բոլոր աշակերտաց թիւն հասանէ հարիւր և քսան: Այս ուսումնարանը շուտաքայլ յառաջ կընթանայ ուսումնականոյց յարգոյ Համազասպ աղայ Վարդանեանցի հանապազօրեայ հոգաբարձութեամբ, նամանաւանդ իւր սեփհականութիւնից կը հատուցանէ ցայսօր կանոնաւորապէս ռոճիկ հինգ ուսուցչաց, այլևս չը խնայէ կարօտեալ աշակերտաց բաժանել գիրք, թուղթ, քանաք, մատիտ և գրիչ և այլ ուսման հարկաւոր իրեր, չը մոռանալով նաև հանդերձէղենք վասն աղքատ աշակերտաց...»[779]:

1873 թ. դպրոցի նոր շենք կառուցելու համար հողահատկացում ստանալու ակնկալիքով Հ. Վարդանյանցը դիմում է քաղաքային իշխանություններին[780]:

1875 թ. դպրոց է այցելում կումայրեցի Մարտիրոս Ջիքողլյանը և գոհանալով ու դրվատելով աշակերտների առաջադիմությունը՝ 50 ռուբլի արժաք դրամ է նվիրում գրենական պիտույքներ ձեռք բերելու համար[781]:

Տարիներ անց, սակայն, նյութական անապահով վիճակի պատճառով դպրոցը փակվում է, իսկ շենքը՝ վերածվում զորանոցի. «...մահտեսի Վարդան աղան, որ իր միջոցներով Մարդայ թաղի բարձրունքում շինել տուած է ս. Նշան եկեղեցին և նրա կողքին մի ընդարձակ շինութիւն՝ ուսումնարանի համար, ուր բաւական երկար տարիներ սովորել են քաղաքի արհեստաւոր դասակարգին պատկանող երեխաներ: Դժբաղտաբար հանգուցեալը իր կենդանութեան ժամանակ պէտք եղած հեռատեսութիւնը չէ ունեցել ապահովելու որոշ եկամուտներով իր կառուցած եկեղեցին և ուսումնարանը, այնպէս որ այժմ իր ժառանգների օրով ուսումնարանի յատկացրած շինութիւնը փոխվել է կազարմայի...»[782]:

Դպրոցը փակվել է 1884 թ. «...մահտեսի Վարդան աղա Վարդանեանցը իւր շինած եկեղեցւոյն կից եղած և նոյնպէս քարաշէն դպրոցը փակեց: Դպրոցը պ. Վարդանեանը շինած էր 60-ական թուականներին: Բազմաթիւ հայ մանուկներ այնտեղ տարրական ուսում էին ստանում»[783]:

Մեզ հասու վավերագրերից քաղված դպրոցի 20-ամյա (1864-1884) գործունեությանն առնչվող տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| *տարեթիվ* | *այլ տեղեկ.* | *ուսուցիչ* | *աշակերտ* |
|---|---|---|---|
| 1864[784] | նորահիմն | 4 | 60 |
| 1866[785] | | 4 | 103 |
| 1870[786] | նորակառույց | 5 | 110 |
| 1871[787] | | 5 | 90 |
| 1872[788] | | 5 | 120 |
| 1873[789] | | | 140 |
| 1876[790] | | 4 | 152 |
| 1877[791] | | 4 | 152 |
| 1878[792] | | 4 | 160 |
| 1880[793] | | | 150 |
| 1881[794] | | | 150 |
| 1884[795] | փակվել է | | |

**Ժողովրդական դպրոց.** բացվել է 1869 թ.՝ մեծահասակներին գրագիտություն սովորեցնելու նպատակով: Հիմնադիրն է Սուքիաս վարդապետ Պարզյանցը: Եղել է կիրակնօրյա՝ գործելով նաև տոն օրերին[796]:

**Եղիսաբեթյան դպրոց.** բացվել է 1870 թ. մարտի 2-ին Սուքիաս վարդապետ Պարզյանցի և Կարապետյան դպրոցի հոգաբարձության ջանքերով[797]:

Դպրոցի հիմնադրման համար հետևյալ նվիրատուները հանգանակել են 1051 ռուբլի.

| | |
|---|---|
| «1. Սուքիաս վարդապետ Պարզեանց | 56 ռ. |
| 2. Մկրտիչ Մութաֆեանց | 150 „ |
| 3. Մանուկ Պայպուրտցեանց | 55 „ |
| 4. Մահտեսի Յովհ. Յակոբջանեանց | 50 „ |
| 5. Գրիգոր Մամիկոնեանց | 10 „ |
| 6. Մկրտիչ Յակոբջանեանց | 20 „ |
| 7. Յովհաննէս Պողեանց | 30 „ |
| 8. Մկրտիչ Մուրատեանց | 10 „ |
| 9. Պետրոս Գիստուստուրեանց | 15 „ |
| 10. Զաքարիա Եայլախանեանց | 25 „ |
| 11. Ներսէս Մարդեանց | 10 „ |
| 12. Գրիգոր Ճարակեանց | 25 „ |
| 13. Ստեփանոս Զարիճեանց | 20 „ |
| 14. Սարգիս Յարոյեանց | 25 „ |
| 15. Գասպար Մելքոնեանց | 15 „ |
| 16. Մելքոն Չլնկարեանց | 25 „ |
| 17. Յակոբ Ղանքարճեանց | 20 „ |

779 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6228, թ. 2: Տե՛ս նաև **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 111-112:
780 ՀԱԴ, ֆ. 355, ց. 1, գ. 329, թ. 16:
781 «Արարատ», 1875, օգոստոս, էջ 319:
782 «Մշակ», 1914, № 73, էջ 2:
783 «Մեղու Հայաստանի», 1884, № 61, էջ 4:

784 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3844, թ. 38:
785 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 51:
786 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 84:
787 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 32, թ. 16:
788 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6228, թ. 2: Տե՛ս նաև **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 112:
789 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 506:
790 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 5: Տե՛ս նաև ֆ. 56, ց. 3, գ. 62, թ. 13:
791 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 506-507:
792 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 177:
793 **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 118:
794 «Մեղու Հայաստանի», 1881, № 15, էջ 3:
795 «Մեղու Հայաստանի», 1884, № 61, էջ 4:
796 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 507:
797 «Մեղու Հայաստանի», 1870, № 6, էջ 42: Ի դեպ, մեկ այլ տեղեկագրում դպրոցի բացման ամսաթիվ է նշված 1870 թ. մարտի 9-ը (**Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 442: “Кавказский календарь на 1874 г.”, с. 111): Այլ տեղեկության համաձայն՝ դպրոցը բացվել է 1869 թ. (**Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 213):

18. Աբրահամ Էնքսինեանց 10 „
19. Աղէքսանդր Բորակչեանց 20 „
20. Յակոբ Պաչինեանց 10 „
21. Իսահակ Հազարապետեանց 10 „
22. Նազարէք Ալպիրեանց 30 „
23. Գրիգոր Ղալամքարեանց 10 „
24. Մահտեսի Սահակ Պաղջինեանց 15 „
25. Կարապետ Բաղոյեանց 20 „
26. Յարութիւն Հէկոյեանց 10 „
27. Յոհաննէս Ղարայլանեանց 10 „
28. Կարապետ Աքամեանց 19 „
29. Յակոբ Հայրապետեանց 8 „
30. Յակոբ Չաքալպաշեանց 15 „
31. Յոհաննէս Դաւրանեանց 15 „
32. Յակոբ Սաղաքէլեանց 15 „
33. Մահտեսի Կարապետ Մանուկ. 10 „
34. Համազասպ Մէնմէմտեանց 13 „
35. Կարապետ Գաբոյեանց 10 „

36. Կիրակոս Յարութիւնեանց և Յոհաննէս Ճնարակեանց խոստանամք վասն շինութեան օրհորդաց ուսումնարանին երկու հարիւր վաքսուն փութ քիրած (կիր) հաշուելով մէկ փութն քսանիինգ կ. բոլորի գումարն է 65 „
37. Պետրոս Ոսկանեանց 15 „
38. Սիմէոն Վարդանեանց 8 „
39. Յովհաննէս Մէտէնճեանց 12 „
40. Քութահսաբնակ Գրիգոր Բարամ. 15 „
41. Մահտեսի Կարապետ Ազնաւուր. 25 „
42. Գրիգոր Բազրատունեանց 40 „
43. Մահտեսի Խաչատուր Պաղջին 10 „
44. ՚Ի կողմանէ Ղազազ Ասնաֆ. 50 „»[798]:

Նախապես դպրոցի առանձին շենք չունենալու պատճառով դասընթացները տեղի են ունեցել վարձակալված առանձին տանը[799]: Սակայն շուտով «Ըստ խնդրանաց արժանապատիւ յաջորդի Ախալցխոյ Սուքիաս վարդապետի Պարզեանց և ժողովրդեան քաղաքին՝ Վեհափառ կաթողիկոսը բարեհաճեցաւ շնորհել՝ նոյն քաղաքի մէջ գտնուած Ս. Էջմիածնի սեպհական գետինը՝ Օրիորդաց առաւել ընդարձակ ուսումնարան կառուցանելոյ համար, միայն գետնոյն սեպհականութիւնը միշտ Ս. Էջմիածնին պահելով»[800]:

1870 թ. դպրոցում դասավանդել են հետևյալ անձինք. կրոն և հայոց վայելչագրություն՝ Մեսրոպ քահանա Կանցյանցը, հայոց լեզու՝ Հարություն Ազնավուրյանցը, ռուսաց լեզու և ասեղնագործություն՝ Աղելաիդա Քռասնիկովան, թվաբանություն և ռուսաց վայելչագրություն՝ Վարդան Արովյանը (նաև տեսուչն էր), երգեցողություն՝ դպիր Համբարձում Ջրպետյանցը[801]:

1871 թ. հունվարին վախճանված Հակոբ աղա Չաքալբաշյանցը Եղիսաբեթյան դպրոցին կտակել է 100 արծաթե դրամ, իսկ քաղաքի աղքատանոցին՝ 25 ռուբլի[802]:

Հուրախություն սաների և ուսուցչական խմբի՝ դպրոցի կառուցումն ավարտվում է առանց ձըգձըգումների՝ 1871 թ.[803]:

Հայտնի է նաև, որ հիմնադրման տարում դպրոցն ուներ նախապատրաստական դասարան, մեկ տարի անց՝ առաջին դասարան, իսկ 1872 թ. սեպտեմբերից՝ նաև երկրորդ դասարան[804]:

1873 թ. դպրոցի խորհրդի նախագահ է հիշվում թեմական փոխանորդ Թադեոս եպիս. Չյունակյանը[805]:

1876 թ. ախալցխացի մեծահարուստ Հարություն Մութաֆյանն իր Կարապետ և Մկրտիչ որդիներին կտակում է 14000 ռուբլի, որը պետք է ծախսվեր Ախալցխայում նս մեկ եկեղեցի կառուցելու նպատակով: Նրա որդիները, ընդառաջ գնալով հասարակության խնդրանքին, համաձայնում են գումարը ծախսել դպրոցի նոր շենք կառուցելու նպատակով: Երբ վախճանվում է Կարապետը, կտակի իրականացումը դրվում է վերջինիս որդիների՝ Վահրամի և Հովհաննեսի վրա: Վախճանվում է նաև Վահրամը, իսկ Հովհաննեսը ձգձգում է գործը[806]:

1880 թ. սեպտեմբերին Եղիսաբեթյան դպրոցում բացվում է արհեստագիտական դասարան՝ 24 աշակերտուհիներով, դասավանդում են ամուսիններ Անյանցները: Մեկ տարի անց այդ ամենի առթիվ նշվել է. «Ուսումնական վարչութիւնը ի դէմս պ. Բարխուդարեանցի (թեմական վերատեսչի) ջերմ համակրութեամբ ընդունելով այս միտքը իւր կողմից ամեն միջոց ի գործ ձգեց և անցեալ տարի սեպտեմբեր ամսից արհեստանոցը բացուեցաւ քսան և չորս աշակերտուհիներով: Ի պատիւ այդ աշակերտուհիներից կարողաւորների ծնողներին, պետք է ասել, որ դոքա նս իրանց հերթում նիւթական մեծ զոհաբերութիւն արին և այդպէսով լրացաւ 2200 ռուբլի գումարը, որը հոգաբարձութիւնը յատկացրել էր Թիֆլիզից եկած ձեռագործի ուսուցիչ և ուսուցչուհի այր և կին Անեանցներին»[807]:

1881 թ. փետրվարի 13-ին ախալցխացի գնդապետ Իսահակ Մելիք-Հայկազյանը դպրոցին նվիրում է 100 ռուբլի՝ աղքատ որևէ աշակերտուհու հոգսերի և դաստիարակության համար[808]: Նույն

798 «Մեղու Հայաստանի», 1870, № 6, էջ 43:
799 Նույն տեղում:
800 «Մեղու Հայաստանի», 1870, № 8, էջ 59:
801 Նույն տեղում:
802 «Մեղու Հայաստանի», 1871, № 5, էջ 37: Ի դեպ, Հակոբ Չաքալբաշյանցը վարել է նաև քաղաքագլխի պաշտոն (պաշտոնավարության տարիները ճշտել չենք կարողացել):
803 «Մեղու Հայաստանի», 1873, № 5, էջ 2:
804 Նույն տեղում:
805 “Кавказский календарь на 1874 г.”, с. 111.
806 “Закавказье”, 1910, № 146, էջ 3: Ի դեպ, կտակի կատարման նոր սին խոստումներով Հովհաննեսն ախալցխացիներին հիասթափեցնում է նաև 1914 թ. (տե՛ս «Հորիզոն», 1915, № 32, էջ 4):
807 «Մեղու Հայաստանի», 1881, № 129, էջ 1:
808 «Մեղու Հայաստանի», 1881, № 30, էջ 2:

թվականին դպրոցի հոգաբարձուներ են հիշվում Մկրտիչ Ազնավուրյանը, Հ. Գեղամյանը, Արշակ Հակոբջանյանը, Գասպար Մելքոնյանը և Գրիգոր Պուտուզյանը[809]:

Ի դեպ, բարերար Իսահակ Մելիք-Հայկազյանը 1882 թ. հիշվում է նև 100 ռուբլի նվիրատվության և մեկ տարի անց չքավոր աշակերտուհիներին աշակերտական հագուստով ապահովելու մտադրության կապակցությամբ[810]:

1894 թ. ավագ ուսուցչուհի Եղիսաբեթ Տեր-Մովսիսյանը, դպրոցի 1893/1894 ուստարվա տեղեկագրում անդրադառնալով դպրոցական շենքի հարմարություններին, նշել է. «Դասարանները բազմամարդ են...: Դպրոցի շինութիւնը երկյարկանի է և գաւիթը երկու մասերից բաղկացած, այնպէս որ լաւ հսկել չի կարելի, թէև դպրոցն ունի երկու վերակացու: Դպրոցի շինութիւնը անյարմար է. սենեակները՝ փոքր, այդքան աշակերտուհի զետեղելու համար: Սենեակների մեծ մասը բաւական լոյս չեն և լոյսը ձախ կողմից չէ ընկնում: Նստարանների ձևը շատ հին և չափերն անհամապատասխան են, ուստի հոգաբարձութիւնը որոշել է շինել տալ այս տարի երեք կամ չորս դասարանի համար նոր ձևի նստարաններ, իսկ մնացեալ դասարանների համար միւս տարի»[811]:

1909/1910 ուստարում կրթօջախի 460 աշակերտուհիներից 14-ն ավարտում է դպրոցի վեցամյա դասընթացը: Նույն թվականին հիշվում է ավագ ուսուցիչ Հովյանը[812]:

1914 թ. դեկտեմբերի 30-ին Սոֆյա Ղարայլանյանը դպրոցի հոգաբարձությանն է փոխանցում հանգուցյալ տիկ. Դշխուհի Օնոփյանի կտակով նախատեսված 25 ռուբլին՝ կրթօջախի չքավոր աշակերտուհիներին հագուստով ապահովելու նպատակով[813]:

Նույն թվականին տփղիսաբնակ Հ. Մութաֆյանը խոստանում է ի վերջո իրականացնել դպրոցական շենք կառուցելու նպատակով իր հանգուցյալ պապի կտակը և դեռ իր կողմից էլ լրացնել պակասող գումարը. «Մութաֆեանների ներկայ ժառանգ Յովհ. Մութաֆեանը իր վրա է վերցրել շինել մեր Եղիսաբէթեան օրիորդաց դպրոցի համար մի հոյակապ շէնք, ժամանակակից բոլոր պահանջներին բաւարարութիւն տուող և այդպիսով նա նախ հանդիսանում է իր պապի և հօր թողած կտակի իրագործողը, որի գումարը, ինչպէս յայտնի է, 14.000 ռ. է, և յետոյ ինքն էլ ներկայանում է իբրև նոր նուիրատու, քանի որ ծրագրված շէնքը հազիւ թէ 30.000 րուբլուց պակաս ծախս պահանջէ»[814]:

Հակառակ վերոնշյալ խոստման՝ Հ. Մութաֆյանը հերթական անգամ չի հարգում իր խոսքը: Անդրադարձը է լինում 1915 թ. «Ախալցխայի հայոց Սբ. Փրկիչ եկեղեցու հոգաբարձութիւնը մի ռուբլի է դնում տեղական հայկական կոմիտէի տրամադրութեան տակ՝ ի հիշատակ Եղիսաբէթեան դպրոցի բարերար հանգուցեալ Յովհաննէս Կարապետեան Մութաֆեանի»[815]:

1915 թ. օգոստոսի 5-ին թերթակից Միքայելի (Միքայել Աստվածատրյան) հաղորդման համաձայն՝ Եղիսաբեթյան դպրոցում բացվելու էր յոթերորդ բաժանմունքը. «Այս տարի Եղիսաբէթեան օրիորդաց դպրոցում բացւում է եօթերորդ բաժանմունքը: Հոգաբարձութիւնը մտածում է այդ դպրոցը միջնակարգ դարձնել, իսկ հասարակութիւնը պատրաստակամութիւն է յայտնում ընդառաջ գնալու այդ գեղեցիկ նպատակին»[816]:

1917 թ. օգոստոսին տիկին Հայկանուշ Էլբեկյան Թոփչյանը 50 ռուբլի է նվիրում դպրոցի հոգաբարձությանը[817]:

Ստորև ներկայացնում ենք 1870-1914 թվականների ընթացքում Եղիսաբեթյան դպրոցի գործունեությանն առնչվող տվյալները.

| *տարեթիվ* | *այլ տեղեկ.* | *ուսուցիչ* | *աշակերտ* |
|---|---|---|---|
| 1870[818] | | 6 | 45 |
| 1871[819] | | 5 | 55 |
| 1873[820] | | 6 | 65 |
| 1876[821] | | 9 | 117 |
| 1877[822] | | 10 | 117 |
| 1878[823] | | 11 | 169 |
| 1878/79[824] | վերածվել է չորսդասյա դպրոցի | | |
| 1881[825] | | 16 | 216 |
| 1885 | փակվել է | | |

809 Նույն տեղում:

810 «Արձագանք», 1883, № 13, էջ 191: Ի դեպ, գնդ. Ի. Մելիք-Հայկազյանցի բարեգործություններից հայտնի է նաև, որ 1889 թ. նա ցանկություն է հայտնել սեփական միջոցներով Անիի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համար խաչկալ կառուցել: Թույլտվությունը ստացվել է 1890 թ. (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8582, թ. 1): Կենսագրական այլ մանրամասներ տե՛ս «Մուրճ», 1899, № 1, էջ 144-145:

811 ՀԱԴ, ֆ. 22, ց. 1, գ. 271, թ. 2: Տե՛ս նաև **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 167:

812 «Նոր Դպրոց», 1910, № 6-7, էջ 170:

813 «Մշակ», 1914, № 3, էջ 5:

814 «Մշակ», 1914, № 73, էջ 2: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11627:

815 «Հորիզոն», 1915, № 32, էջ 4:

816 «Հորիզոն», 1915, № 174, էջ 4:

817 «Շարժում», 1917, № 7, էջ 3:

818 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 84: Մեկ այլ տվյալով՝ նույն թվականին դպրոցում սովորել է 19 աշակերտուհի («Մեղու Հայաստանի», 1870, № 6, էջ 43):

819 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 32, թ. 16:

820 **Ղազազեանց Գ.**, Ախալցխայ, «Մեղու Հայաստանի», 1873, № 5, էջ 2: Դպրոցում դասավանդել են կրոն, հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն, գծագրություն, ձեռագործություն, վայելչագրություն, աշխարհագրություն, հայոց և բնական պատմություն, գծագրություն: Ուսուցիչներն էին Մ. Ք. Կանցյանցը, Գ. Կ. Ազնավուրյանցը, Պ. Գ. Բարխուդարյանցը, Գ. Ղազազյանցը, Հ. Կ. Գեղամյանցը, Տ. Եսույանցը:

821 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 51: Տե՛ս նաև ֆ. 56, ց. 3, գ. 62, թ. 13:

822 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 99:

823 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 177:

824 «Մանկավարժական թերթ», 1878, № 2, էջ 63:

825 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 507: Այլ տեղեկության համաձայն՝ նույն թվականին դպրոցն ուներ 226 աշակերտուհի («Մեղու Հայաստանի», 1881, № 15, էջ 3):

| | | | |
|---|---|---|---|
| 1886[826] | վերաբացվել է՝ որպես երկդասյա | | |
| | | 11 | 424 |
| 1887[827] | | 7 | 455 |
| 1888[828] | | 8 | 423 |
| 1889[829] | | 5 | 391 |
| 1891/92[830] | | 8 | 223 |
| 1892/93[831] | | 9 | 291 |
| 1893[832] | | 10 | 297 |
| 1894[833] | | 8 | 326 |
| 1896 | փակվել է | | |
| 1905[834] | վերաբացվել է | | |
| 1907/08[835] | երկդասյա | | 500 |
| 1908[836] | | 9 | 464 |
| 1909/10[837] | վեցդասյա | | 460 |
| 1910[838] | | 16 | 400 |
| 1911[839] | վեցդասյա | 16 | 421 |
| 1914[840] | | | 380 |

**Սբ. Գրիգոր Լուսավորիչ արական դպրոց.** հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ, սակայն բացված պետք է լինի 1830-ական թվականներին. «Ս. Լուսաւորչի եկեղեցին նախնաբար տաճկական մզկիթ մ' էր, ուր Կարապետեան ուսումնարանը շինուելէ առաջ, կը հաւաքուէին հայ մանկտիք, ազգային լեզուն և կրօնագիտութիւն սովորելու համար»[841]:

1881 թ. ուներ 2 ուսուցիչ և 43 աշակերտ[842]:

**Շուշանիկյան դպրոց.** հայտնի է, որ Վարդան աղա Վարդանյանցը 1883 թ., ի հիշատակ նույն թվականին վախճանված իր միակ դստեր՝ Շուշանիկի, ձեռնամուխ է եղել Սբ. Նշան եկեղեցու գավթում նաև օրիորդաց դպրոցի կառուցման գործին, սակայն շինությունը մնացել է անավարտ[843]:

826 **Խուդոյան Ս.**, նույն տեղում: Տե՛ս նաև **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 213:
827 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 3-4:
828 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 46-47:
829 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 115-116:
830 ՀԱԴ, ֆ. 22, ց. 1, գ. 131, թ. 12-15: Տե՛ս նաև **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 144-150: Ուսուցիչներն էին՝ Ե. Տեր-Մովսիսյանը (ավագ ուսուցիչ), Աբրահամ քահանա Ղազազյանցը (կրոն), Շուշանիկ Հարությունյանցը (հայոց լեզու), Նատալյա Տեր-Ղևոնդյանցը (հայոց լեզու և վայելչագրություն), Պեղեգյա Մարտիրոսյանցը (ձեռագործություն), Եպրաքսյա Սողոմոնյանցը (գծագրություն), Սահակ Սահակյանցը (ռուսաց լեզու, պատմություն և վայելչագրություն) և Պողոս Տեր-Կարապետյանցը (երգեցողություն):
831 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 11, թ. 18-19:
832 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8595, թ. 33-34:
833 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 54-55:
834 ՀԱԴ, ֆ. 56, ց. 15, գ. 571, թ. 12:
835 Նույն տեղում: Տե՛ս նաև «Նոր Դպրոց», 1908, № 1, էջ 67:
836 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 40-41:
837 «Նոր Դպրոց», 1909, № 8-9, էջ 140 և 1910, № 6-7, էջ 170:
838 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 35-36:
839 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57:
840 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 507:
841 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 61:
842 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 507: Այլ վկայության համաձայն՝ նույն թվականին դպրոցն ուներ 49 աշակերտ («Մեղու Հայաստանի», 1881, № 15, էջ 3):
843 **Հրազն**, նշվ. հոդվ., «Արձագանք», 1887, № 15, էջ 227:

**Օրիորդ Սահականուշյան դպրոց.** հիշվում է 1914 թ.[844]:

**Արդության դպրոց.** հիշվում է 1914 թ.[845]:

**Հայ կաթոլիկե դպրոցներ.** ԺԹ-Ի դարերի ընթացքում Ախալցխայում գործել է հայ կաթոլիկե 2 դպրոց: Առաջինը հիմնել էր Եփրեմ Սեթյանը՝ 1831 թ., իսկ երկրորդը՝ Պողոս Շահղուլյանը՝ 1851/52 թվականներին:

1834 թ. քաղաքում դպրոցներ են գործել Եփրեմ Սեթյան վարդապետի (2 ուսուցիչ և 36 աշակերտ), 5 դպրոց՝ վեց վարդապետների (6 ուսուցիչ և 69 աշակերտ) և 1 դպրոց՝ երկու սարկավագների (2 ուսուցիչ և 89 աշակերտ) ղեկավարությամբ[846]:

1860 թ. Ախալցխայում գործել է հայ կաթոլիկե երկու դպրոց՝ 3 ուսուցչով և 135 աշակերտով, իսկ 1914-ին՝ մեկ դպրոց՝ 1 ուսուցչով և 73 աշակերտով[847]:

**Սբ. Աստվածածնի Վերափոխման դպրոց.** հիմնադրվել է 1831 թ. Եփրեմ Սեթյանի ջանքերով. «...Մխիթարեան վանատան մէջ դպրոց մը բանալ շուրջ 60 աշակերտներով: Ցաւալի է ըսել, սակայն, որ հազիւ 13 տարուան կեանք կ'ունենայ այդ յառաջադէմ հաստատութիւնը՝ որուն համար մինչեւ իսկ կրթարան-լսարանական ծրագիր կը պատրաստուէր»[848]:

Կրթօջախն իր գոյությունը պահպանել է եկեղեցապատկան կալվածքներից ստացվող եկամուտի և ուսման վարձի (տարեկան 2 ռուբ. 40 կոպ.) շնորհիվ[849]:

Հետագայում (1882 թ.) դպրոցի մասին նշվել է. «Ս. Վերափոխման ուսումնարանի ամենածաղկած ժամանակն էր, երբ հայր Սէթեանցը, դասատու էր այս ուսումնարանում. այդ ժամանակ դաս դաս մանկտիք անխտիր թէ՛ Լուսաւորչական և թէ՛ Հայ կաթոլիկ դիմում էին Հայր Սէթեանցի մօտ և յագեցնում իրեց ծարաւը: Երջանկայիշատակ Հայր Սէթեանցը տիւ և գիշեր աշխատում էր իր աշակերտաց և ուսումնարանի առաջադիմութեան վրայ: Հայր Սէթեանցը և Հայր Եսային առաջինը եղան, որ սերմանեցին Ախալցխայում լուսաւորութեան և ուսումնասիրութեան գաղափարի սերմը՝ ամեն հայ անհատի սրտում. նոցա աշակերտներից է և մեր Աղ. Արարատեանը: –Մեռաւ Հայր Սէթեանցը, նորա հետ մեր ուսումնարանը ընկաւ մի անբուժելի հիւանդութեան մէջ, որովհետեւ Վենետիկից էլ չեկան մեզ վարդապետներ»[850]:

844 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 390, թ. 48:
845 Նույն տեղում:
846 **Երիցեանց Աղ.**, Պատմութիւն 75-ամեայ ..., հ. 1, Թիֆլիզ, 1898, էջ 275:
847 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 508:
848 «Բազմավէպ», 1936, էջ 217: Այլ տեղեկության համաձայն հիմնադրվել է 1832 թ. (**Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 214):
849 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 214:
850 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 60:

Եփրեմ Սեքյանի մահից հետո դպրոցը «...մնաց տիրացուներու ձեռք, և քանի մը տարի ալ փակ. միայն Տ. Սիմոն Շահինեանցի ժամանակ, Միսաք Էօքսիւզեանց ուսուցչի ձեռքով քիչ մը յառաջադիմեց»[851]:

**Սբ. Հովհաննես եկեղեցու հայ կաթոլիկե արականն դպրոց.** բացվել է 1851-1852 թվականներին քաղաքի Ռաբաթ թաղամասում՝ Սբ. Հովհաննես Մկրտիչ հայ կաթոլիկե եկեղեցուն կից[852]: Գոյատևել է նույն եկեղեցուն կտակված 3000 ռուբլու տոկոսների և կալվածքների եկամուտի շնորհիվ[853]:

Այն հանգամանքը, որ հայ կաթոլիկե եկեղեցուն կից այս դպրոցում ուսանել են նաև դավանությամբ վրացի կաթոլիկե խիստ փոքրաթիվ աշակերտներ, տասնամյակներ անց որոշ վրացի հեղինակների հիմք է տվել դիմելու զեղծարարության և հայտարարելու, որ դպրոցը (հետևաբար նաև Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին) պատկանել է ոչ թե հայ, այլ վրացի կաթոլիկեներին[854]:

1876 թ. ուներ 2 ուսուցիչ և 60 աշակերտ[855]:

1877-1886 թվականների ընթացքում դպրոցում սովորում էր 381 աշակերտ (նրանցից 89-ը՝ աղջիկ)[856]:

1886 թ. ուներ 1 ուսուցիչ և 1 ուսուցչուհի, 25 տղա (նրանցից 5-ը՝ վրացի) և 24 աղջիկ[857]:

851 Նույն տեղում: Ի դեպ, իր ողջ պատմության ընթացքում քաղաքարնակ սակավաթիվ վրացի կաթոլիկեների հետ որևէ առնչություն չունեցող դպրոցի մասին ոմն Ն. Սուղաձե հայտարարել է. «այսպես կոչված «հայկական» կաթոլիկական խառը (աղջիկների-տղաների) դպրոց, հիմնված 1832 թվին, որը պահվում էր ուսումնարանին պատկանող հողերի եկամուտով և ուսման վարձով (տարեկան 2ռ. 40 կ.): Տասը տարիների ընթացքում այս դպրոցն ավարտել է 292 տղա և 89 աղջիկ: 1886 թվին այստեղ սովորում էր 49 աշակերտ» (**Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 19):

852 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 18: Ի դեպ, դպրոցում դասավանդում էր Պողոս Շահողուլյանը, որի գրադարանի վերաբերյալ Ջ. Ճիճինաձեն գրել է. «Ես հիացած էի այդ գրքերով: Գրադարանը բաղկացած էր լատիներեն, ֆրանսերեն, իտալերեն և հայերեն հատորներից՝ տպագրված XV-XVIII դարերում: Գրքերից շատերն արշինի չափ և չորս-հինգ վերշոկ հաստություն ունեին: Այդ գրքերը նա ձեռք էր բերել երիտասարդ տարիներին: Դրանք զողացվել են Հովհաննես Մկրտիչ եկեղեցուց տասնիններորդ դարի վերջին» (նույն տեղում, էջ 19):

853 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 214:

854 Նույն Ն. Սուղաձեն, նաև այս դպրոցը վրացի կաթոլիկեներին վերագրելով, նշել է. «այսպես կոչված «հայկական» կաթոլիկական, փաստորեն վրաց կաթոլիկների դպրոց, հիմնված 1851-52 թթ.: Այն գոյատևում էր սեփական հողերի եկամուտով և Հովհաննես Մկրտիչ եկեղեցապատկան հողերի եկամտի տոկոսներով (մոտ 3000 ռ.): Դպրոցը ղեկավարում էր կաթոլիկ քահանա Պողոս (Պավլե) Շահողլյանը (Ճիլիմուզաշվիլի): Ուսուցումը տարվում էր մերթ վրացերեն, մերթ անհասկանալի՝ հայերեն լեզուներով: Ուսումնարանը տասը տարվա ընթացքում ավարտել է 597 տղա: 1886 թվին այստեղ սովորում էր 61 աշակերտ» (**Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 19):

855 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 441:

856 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 214-215: Այլ տեղեկության համաձայն՝ նույն ժամանակահատվածում դպրոցում սովորել է 579 տղա (**Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 441):

857 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 215:

Ի դեպ, 1891 թ. վերոնշյալ հայ կաթոլիկե երկու դպրոցները միավորվում և գոյատևում են մինչև 1921 թ. հունվարի 28-ը, երբ Ախալցխայի լուսբաժինը որոշում է, որ հայ կաթոլիկե դպրոցի աշակերտներն այսուհետ իրենց ուսումը պետք է շարունակեն խորհրդային № 1 դպրոցում[858]: Դրանով իսկ հերքվում է վրացական այս աղբյուրի ստահոդ տեղեկությունը:

**Պետական դպրոցներ.** Ախալցխայում պետական (արքունի, ռուսական) դպրոցների պատմությունը սկսում է քաղաքը թուրքերից նվաճելուց անմիջապես հետո: Մինչև 1918 թ. քաղաքում գործում էր տարբեր դասակարգում ունեցող գրեթե մեկ տասնյակ պետական դպրոց:

**Գավառային (1875-ից՝ Քաղաքային) ուսումնարան.** բացվել է 1831 թ.[859]: Եղել է երկդասյա, ուսուցումը տարվել է հայերեն և ռուսերեն լեզուներով: Մինչև 1835 թ. գտնվում էր Ռաբաթում, որից հետո դպրոցի համար նոր շենք է հատկացվում քաղաքի նոր մասում՝ դառնալով երեքդասյա՝ բաղկացած մեկ նախապատրաստական և երկու հիմնական բաժանմունքներից (բացվել է նաև վրացական բաժին)[860]:

Հայտնի է, որ ժողովրդավորության նախարար Սերգեյ Ուվարովի՝ 1835 թ. կազմած «Անդրկովկասյան ուսումնարանների կանոնադրության» համաձայն՝ Ախալցխայի գավառային ուսումնարանում տեղական լեզուներով դասավանդումը պետք է իրականացվեր հայերեն և թաթարերեն[861]:

Դպրոցում հայոց լեզու և կրոն դասավանդող առաջին ուսուցիչը Մկրտիչ Արվանյանցն էր (վախճանվել է 1834 թ. դեկտեմբերին). «...աւագ սարկաւագ Մկրտիչ Արուանեանց, որ էր ուսուցիչ Հայոց լեզուի և աստուածային օրինաց յԱխալցխայու արքայական ուսումնարանի, ի հիւանդութենէ վախճանեցաւ յանցեալ 1834 ամի, ի դեկտեմբերի ամսոյ...»[862]: Ստեղծված կացության առթիվ դպրոցի վերատեսուչը 1834 թ. դեկտեմբերի 16-ին Կարապետ արքեպիսկոպոսին զեկուցել է. «Առ ի չմնալ աշակերտաց Ախալցխայու ուսումնարանի զուրկ ի դասառութիւնէ հայկաբանութեան, պատճառաւ մահուան ուսուցչին Հայոց լեզուի և օրինաց Մկրտչի Արուանեանց, ես համարձակիմ խոնարհաբար խնդրել ի Ձերդ բարձր սրբազնութենէ կարգել զոք ի հոգևորականաց տեղեակ Հայոց քերականական արհեստի և աստուածպաշտութեան ուսուցիչ ի սոյն ուսումնարանի, ի տեղի հանգուցելոյն...»[863]:

858 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 20:

859 Արևեյան Հայաստանի պետական հիմնարկների պատմության տեղեկատու 1801-1917 թթ., «ԲՀԱ», 1986, № 3, էջ 199:

860 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 13-14:

861 Արևելահայության կրթական գործի վիճակը 1830-1870 թթ., «ԲՀԱ», 1987, № 1, էջ 37:

862 Մատենադարան, թղթ. 1637, վավ. 1457:

863 Մատենադարան, թղթ. 1637, վավ. 1439, թ. 543:

1837 թ. դպրոցում ուսանում էր 70 աշակերտ, որոնցից 62 հայ էր, 6-ը՝ ռուս և 2-ը՝ թուրք[864]:

**Ախալցխայի քաղաքային չորսդասյա ուսումնարան.** սկզբնավորվել է 1875 թ.[865] 1831 թ.-ից գոյություն ունեցող գավառային ուսումնարանի հիմքի վրա: Ուսուցումը եղել է յոթնամյա, բաղկացած նախապատրաստական բաժանմունքից և 4 դասարանից, որոնցից առաջին և երկրորդ դասարանները գործել են երկուական բաժանմունքով[866]:

1878 թ. ուներ 160 աշակերտ[867]:

1877-1886 թվականների ընթացքում ուսումնարանում սովորել է 2114 աշակերտ[868]:

1886 թ. ուներ 10 ուսուցիչ (5 վրացի, 3 հայ, 2 ռուս) և 242 աշակերտ (111 հայ, 96 վրացի, 15 ռուս, 8 հրեա և 12 այլազգի)[869]:

1892 թ. տեսուչն էր կոմս Վ. Ֆ. Տիզենհաուզենը[870]:

1893 թ. այցելուն նշել է, որ քաղաքի կարևոր երկու վարժարաններից երկրորդը պետական վարժարանն է, որը «...ալ ունի 300 աշակերտներ, որոնց 75 առ հարիւրը հայեր են. աղջկանց ճիւղ չունի. ասոր փոխարէն, արհեստագիտական կրթութեան նորագոյն մէթոտներով օժտուած է, բան մը, որ կը պակսի հայկական վարժարանին. իր ուսուցչական մարմինը կը բաղկանայ 15 ուսուցիչներէ. իւրաքանչիւր աշակերտէ տարեկան 12 րուպլի թոշակ կ'առնուի, բայց բազմաթիւ ձրի աշակերտներ կ'ընդունուին. մէկ քանիներ, որոնց ծնողքը հեռու տեղ կը բնակի, գիշերօթիկ ընդունուած են...»[871]:

1902 թ. դպրոցն ուներ 314 ուսանող[872], իսկ 1913 թ. չորսդասյա դպրոցը՝ 442 ուսանող[873]:

**Սբ. Նինայի օրիորդաց դպրոց.** 1872 թ. ապրիլի 1-ին Մարիա Խրուշչևայի նախագահությամբ Ախալցխայում բացվել է Սբ. Նինայի օրիորդաց դպրոցը[874]:

Հայտնի է, որ 1873 թ. իշխանուհի Օլգա Ֆեոդորովնան Թիֆլիսի գավառապետի միջոցով դպրոցին է ընծայել 500 ռուբլի[875]:

**Մասնավոր դպրոց.** հայոց եկեղեցական-ծխական դպրոցների փակվելուց անմիջապես հետո Ախալցխայում ինքնաբերաբար ծավալվում է նոր դպրոցներ բացելու շարժում: Դրանցից էր 1896 թ. կառավարության թույլտվությամբ տիկին Պեզինե Սիմոնյանի՝ Էրզրումյան փողոցում գտնվող սեփական տանը բացած դպրոցը[876]:

**Միջնակարգ դպրոց.** տակավին 1903 թ. քաղաքային վարչությունը ծրագրել էր հիմնել մոտ 40000 ռուբ. շինարարական նախահաշվային ծախս պահանջող միջնակարգ դպրոց, որի համար սկսված հանգանակության արդյունքում գոյանում է, սակայն, միայն 7075 ռուբ.: Գործին սատար են կանգնում Գրիգոր և Մարտիրոս Բայբուրդյանց եղբայրները, որոնք իրենց հանգուցյալ պապի հիշատակին ծրագրի իրականացման համար նվիրաբերում են 25000 ռուբ.[877]:

**Ախալցխայի տարրական բարձրագույն ուսումնարան.** որպես քաղաքային երկսեռ դպրոց՝ բացվել է 1914 թ.: Առաջին տնօրեն է նշանակվել Գրիգոր Ալթունյանը[878]:

1916 թ. հունվարի 1-ի դրությամբ նշյալ դպրոցն ուներ 104 աշակերտ (61 հայ, 23 վրացի, 8 ռուս, 7 այլազգի և 5 թաթար)[879]:

1917 թ. հոկտեմբերի քաղաքային տարրական բարձրագույն դպրոցի տեսուչ է նշանակվել ուսուցիչ Հ. Խաչատրյանը[880]:

**Պրոգիմնազիա (գիմնազիա).** 1910 թ. Կովկասի փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Է. Ա. Վատացիի թույլտվությամբ հուլիսի 1-ին Ախալցխայում բացվում է արական չորսդասյա պրոգիմնազիա[881]: Նույն թվականին աբասթումանաբնակ սղնախեցիներ Միրաքյանցները, ի հիշատակ իրենց հանգուցյալ եղբոր՝ Եսայու, քաղաքում բացված պրոգիմնազիայի օգտին նվիրաբերում են 1000 ռուբ.[882]:

1914 թ. նախատեսվում է Ախալցխայի չորսդասյա պրոգիմնազիան վերածել ութդասյա գիմնազիայի: Այս մասին Թիֆլիսի նահանգապետն Ախալցխայի քաղաքային ավագի միջնորդությունն ուղարկում է Կովկասի ուսումնական մասի հոգաբարձուին՝ խնդրելով բավարարել խնդրանքը[883]:

1916 թ. հունվարի 1-ի դրությամբ ուներ 206 աշակերտ, որոնցից 105-ը հայ էր, 49-ը՝ վրացի, 24-ը՝ ռուս, 20-ը՝ այլազգի և 8-ը՝ թաթար[884]:

Նույն թվականի վերջին որոշվում է արդեն գոյություն ունեցող արական գիմնազիային հավելել նաև օրիորդաց բաժինը, սակայն կարգավորված չէր շենքային հարմարության հարցը, որն էլ լուծ-

864 Արևելահայության կրթական գործի վիճակը 1830-1870 թթ., «ԲՀԱ», 1987, № 1, էջ 50:
865 "Кавказский календарь на 1893 г.", с. 233.
866 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 211: Ուսումնարանում դասավանդել են կրոն, մաթեմատիկա, երկրաչափություն, ֆիզիկա, աշխարհագրություն, պատմություն, բնագիտություն, ռուսաց, վրաց և հայոց լեզուներ, ֆրանսերեն, գծագրություն, նկարչություն, երգեցողություն և մարմնամարզություն:
867 **Сегаль И.**, նշվ. հոդվ., "Обзор", 1878, № 223, էջ 1:
868 Նույն տեղում, էջ 212:
869 Նույն տեղում:
870 "Кавказский календарь на 1893 г.", с. 233.
871 **Լինչ Ֆ.**, նշվ. աշխ., էջ 32:
872 "Кавказский календарь на 1903 г.", с. 389.
873 "Кавказский календарь на 1904 г.", с. 410.
874 "Кавказский календарь на 1874 г.", с. 112.
875 «Մշակ», 1873, № 36, էջ 4:
876 «Արձագանք», 1896, № 125:
877 "Кавказ", 1908, № 25, с. 3.
878 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., , էջ 71:
879 "Кавказский календарь на 1917 г.", с. 292-293.
880 «Շարժում», 1917, № 18, էջ 2:
881 «Նոր Դպրոց», 1910, № 5, էջ 89:
882 «Մշակ», 1910, № 68:
883 «Հորիզոն», 1914, № 49, էջ 3:
884 "Кавказский календарь на 1917 г.", с. 286-287.

վում է՝ շնորհիվ Կարապետ Բայբուրդյանցի[885] նվիրաբերած Նիկոլաևսկայա և Դիվանյուլսկայա փողոցների անկյունում և կից գտնվող սեփական երկու տների[886]: Դպրոցի բացումը պետք է տեղի ունենար 1917 թ. սկզբներին[887]:

Այլ տեղեկությամբ որոշ պատճառներով դպրոցի օրիորդաց բաժնի բացումը հետաձգվել է մինչև 1917 թ. սեպտեմբեր: Կրթօջախը պետք է ունենար երեք բաժանմունք. որպես տեսչուհի՝ հրավիրվել էր Ե. Միակնիչը[888]:

1917/1918 ուստարում Ախալցխայի արական գիմնազիան արդեն վերածվել էր քառամյա երկսեռ դպրոցի[889]:

Ի դեպ, 1917/1918 դժվարին ուստարվա ծախսերը հոգալու համար Քաղաքային խորհուրդն արական գիմնազիային է հատկացրել իր ենթակայության ներքո գտնվող այլուրի ֆոնդի գումարներից 3800 ռուբլի[890]:

**Գյուղատնտեսական-արհեստագիտական դպրոց.** 1914 թ. նախատեսվում է քաղաքում բացել գյուղատնտեսական-արհեստագիտական դպրոց: Խնդրո առթիվ քաղլիհազորների ժողովի միջնորդությունը Թիֆլիսի նահանգապետը հանձնում է Կովկասի ուսումնական մասի հոգաբարձուին՝ խնդրելով աջակցել դպրոցի բացմանը[891]:

**Կրթական այլ հաստատություններ.** հայկական և պետական դպրոցներից զատ՝ Ախալցխայում մեկական դպրոցներ ունեին նաև վրացիներն ու հրեաները:

**Վրաց օրիորդաց ճրիավարժ դպրոց.** հայտնի է, որ վրացազգի աղջիկների համար 1873 թ. անվարձ ուսուցմամբ դպրոց է հիմնել Աննա Մուսխելաշվիլին «...Ա. Վ. Մուսխելովայի գլխավորությամբ քաղաքի հին մասում բացվել էր օրիորդաց բարեգործական դպրոց»[892]:

Սույն հաստատության հիմնադիրը «...մինչև 1875 թուականի վերջերը գեղեցիկ անձնուիրութեամբ թէ ուսումնական և թէ տնտեսական մասը յաջողակ և անսայթաք կերպով յառաջ տարաւ: Այժմ կառավարվում է մի բարեգործական ընկերութեան զոհաբերութեամբ»[893]:

1876 թ. ուներ 3 ուսուցիչ և 59 աշակերտուհի[894]:

1878-1886 թվականների ընթացքում դպրոցում սովորել է 463 աղջիկ (ի դեպ, 1883-1885 թվականներին ուսանել են նաև 12 տղաներ)[895]:

1886 թ. ուներ 6 ուսուցչուհի (4-ը ռուս, 20-ը վրացի) և 52 վրացի աշակերտուհի[896]:

1897 թ. դպրոցի վերաբերյալ նշվել է. «Հին քաղաքում արդեն երկար ժամանակ գործում է երկդասյա իգական վարժարանը, որի կարևորությունը տեղի հասարակության համար ակնհայտ է: Գնալով վերջինիս սաների թիվն ավելանում է: Ժամանակին այս վարժարանին շատ է աջակցել Աննա Մուսխելաշվիլին, իսկ այժմ՝ ոչ որ: Վարժարանը գործում է մեկ հարկանի հին հողածեփ շինության մեջ, որն ամբողջությամբ անձրևաջրերով է հեղեղվում վատ եղանակի ժամանակ: Զարմանալի է, թե ինչպես այս հարյուրամյա շինությունը դեռ կարողանում է ծառայել նպատակին: Քանի որ վարժարանը նման անտանելի վիճակում է գտնվում, չորս տարի առաջ քաղաքի հասարակությունը, որի թվում կային նաև հայեր, որոշում է կայացրել կառուցելու նոր պատշաճ շինություն վարժարանի համար: Սակայն շինության պատերը կանգնեցնելուց հետո բարերարների մեջ եղած անհամաձայնության պատճառով շենքը մնացել է անավարտ»[897]:

**Հրեական դպրոց.** Ախալցխայում հրեաներն առանձին դպրոց չեն ունեցել, սակայն նրանց երեխաները սովորել են ռաբբիի մոտ: 1834 թ. հրեական դպրոցն ուներ 1 ռաբբի և 6 աշակերտ[898]:

1876 թ. դպրոցը գործում էր 5 խախամներով (ուսուցիչ) և 100 աշակերտով[899]:

1878 թ. ուներ 60 աշակերտ[900]:

Ընդհանուր առմամբ՝ 1877-1886 թվականների ընթացքում սովորել է 375 երեխա[901]:

1886 թ. ուներ 2 խախամ, 50 աշակերտ[902]:

1917 թ. դեկտեմբերի 22-ին Ախալցխայի Հայ դպրոցական ժամանակավոր ղեկավար մարմնի նախաձեռնությամբ քաղաքի հրեական դպրոցին օժանդակություն ցույց տալու նպատակով անցկացվել է հանգանակություն[903]:

**Գրադարաններ.** Ախալցխան ունեցել է հայկական, պետական (արքունի, ռուսական) և վրացական գրադարաններ:

**Սբ. Ստեփանոսյան դպրոցի գրադարան.** տակավին 1873 թ. «Գրադարանը դեռ ևս կանոնաւոր ուղղութիւն չունի, նորա մէջ կան միայն 40 հատ աշ-

885 Կարապետ և Գրիգոր Մանուկյան Բայբուրդյանց եղբայրները հիշվում են ևս մեկ նվիրատվության առթիվ, որի համար արժանացել են կաթողիկոսի օրհնությանը («Արարատ», 1906, էջ 104):

886 «Համբաւաբեր», 1917, № 6, էջ 137:

887 «Համբաւաբեր», 1917, № 6, էջ 138:

888 «Շարժում», 1917, № 5, էջ 3:

889 «Շարժում», 1917, № 3, էջ 1:

890 «Շարժում», 1917, № 12, էջ 3:

891 «Հորիզոն», 1914, № 69, էջ 2:

892 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 34 (բնագրում՝ “...благотворительная женская школа, открытая в старой части города и заведываемая А. В. Мусхеловой”):

893 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 442: Այլ տեղեկության համաձայն՝ դպրոցը բացվել էր 1873 թ. (**Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 214):

894 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 441:

895 **Иванов В.**,նշվ հոդվ., նույն տեղում:

896 Նույն տեղում:

897 «ივერია», 1897, № 178, էջ 2-3:

898 **Երիցեանց Ալ.**, Պատմութիւն 75-ամեայ..., հ. 1, էջ 275:

899 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 441:

900 **Сегаль И. Л.**, նշվ. հոդվ., “Обзор”, 1878, № 223, էջ 1:

901 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 215:

902 Նույն տեղում:

903 «Շարժում», 1917, № 37, էջ 2:

խարհաբար գրքեր աշակերտաց ընթերցանութեան համար և գնուած են կառաւարչի փողով...: Ուսուցիչների համար մանկավարժական գրեանք և ամսաթերթեր...»[904]:

Գրքերի հիմնական մասը նվիրել են Պետերբուրգի հայ ուսանողները և բանաստեղծ Մ. Միանսարյանը[905]:

**«Ընթերցարան եկեղեցականաց».** քաղաքաբնակ հայոց շրջանում 1876 թ. մայիսի 30-ին թեմի առաջնորդի վավերացումով քաղաքում բացվում է «Ընթերցարան եկեղեցականաց» առաջին գրադարանը[906]: Այլ տեղեկագրի համաձայն՝ ընթերցարանը բացվում է Սբ. Փրկիչ եկեղեցու գավթում 1876 թ. հունիսի 11-ին. «...զընթերցարան սահմանեալ գլխաւորապէս ի պէտս հոգեւորականաց տեղւոյս...»[907]:

Զանազան անձինք նորաբաց գրադարանին են նվիրել շուրջ 40 հին և նոր գիրք[908]:

Նույն թվականին Եղիա ավագ քահանա Համբարձումյանցն ընտրվում է գրադարանի գանձապահ, իսկ Թադեոս քահանա Տեր-Վարդանյանցը՝ ընթերցարանապետ[909]:

Մեկ տարի անց՝ 1877 թ. ապրիլի 26-ին, գումարվում է գրադարանի մեկամյա գործունեությունն ամփոփող ժողով, ըստ որի՝ հաշվետու ժամանակաշրջանում գրադարանը հավելվում է 93 կտոր գրքով (գնվում է 6 և նվեր տրվում 87 կտոր գիրք), “Иллюстрированная газета” (նվիրատու՝ Գաբրիել արքեպիսկոպոս), «Արարատ» (նվիրատու՝ Աբրահամ քահանա Ղազազյանց), «Փորձ» (նվիրատու՝ Հովակիմ Գեղամյանց) պարբերականների տարեկան լրակազմով և «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Հայկական աշխարհ» և “Тифлисский вестник” թերթերով[910]: Նշյալ թվականին գանձապահ է ընտրվում Կարապետ քահանա Տեր-Գրիգորյանցը, իսկ ընթերցարանապետ՝ Մեսրոպ քահանա Կանցյանցը[911]:

1879 թ. Կարապետ քահանա Տեր-Գրիգորյանցին է փոխանցվում 13 ռուբլի՝ Ախալցխայի ընթերցարանը գրքերով համալրելու նպատակով[912]:

1881 թ. ընթերցարանն արդեն ուներ 300-ից ավելի հայերեն և ռուսերեն գիրք[913]:

**Հայ կանանց միության գրադարան.** 1890 թ. դեկտեմբերի 20-ին Ախալցխայում բացվում է Հայ կանանց միության գրադարանը[914]: Սակայն արդեն Ի դարասկզբին սակավաթիվ ընթերցասերներ ունենալու պատճառով հաստատությունը կանգնում է փակվելու վտանգի առջև: Այդ մասին Եղիսաբեթ Չաքալբաշյանը 1902 թ. գրել է. «Ախալցխան ունէր և ունի այժմ փոքրիշատէ հարուստ գրադարան-ընթերցարան, ուր թէ հայերէն, և թէ ռուսերէն գրքեր բավական թվով կան: Գրադարանը միաժամանակ ունէր և ունի, որպէս մի նորութիւն, տղայոց ընթերցարանին կից նաև օրիորդաց համար և այն էլ այնպիսի հարմարութիւններով, որ օրիորդները կղժուարանային գննել իրենց տանը, բայց մեր քույրերը խորշելով հասարակական կարծիքից և ժողովրդի բամբասանքից քիչ են յաճախում ընթերցարան: Յաճախորդները մեծամասնութեամբ վարժուհիներ էին»[915]:

**ԿՀԲԸ գրադարան.** ԵՒս մեկ գրադարան էլ բացվում է ԿՀԲԸ տեղական մասնաճյուղի հովանավորությամբ 1892 թ., որն ընդամենը 3,5 տարի անց արդեն ուներ 1692 կտոր գիրք (որից 1492-ը՝ ցուցակագրված)[916]: 1895 թ. գրադարանը ստանում էր 29 անուն պարբերական[917]:

Ախալցխացի Վարդան Վարդանյանցը 1913 թ. ԿՀԲԸ Ախալցխայի մասնաճյուղին նվիրում է հայերեն և ռուսերեն 310 կտոր գիրք, ընդ որում, դրանց մի մասը պետք է հատկացվեր Աբասթումանի հայոց գրադարանին[918]:

**Աշակերտական գրադարան-ընթերցարան.** 1917 թ. հոկտեմբերից «...ամառային ակումբի փոխարէն Հայ աշակ. միութեան մեր ճիւղը բաց է արել նախկին հայ կաթոլիկների դպրոցում, Վարանցով-Դաշկովեան փողոց № 13-ում իր գրադարան-ընթերցարանը», որը պետք է ծառայեր որպես ռեֆերատների, զրույցների և ընթերցումների հավաքատեղի[919]:

904 **Ղազազեանց Գ.**, նշվ. հոդվ., «Մեղու Հայաստանի», 1873, № 5, էջ 2:
905 Նույն տեղում:
906 «Արարատ», 1876, նոյեմբեր, էջ 433:
907 «Մեղու Հայաստանի», 1881, № 34, էջ 2:
908 «Մշակ», 1876, № 22, էջ 2:
909 «Մշակ», 1877, № 41, էջ 3:
910 «Մշակ», 1877, № 41, էջ 3: Նվիրատուներ էին՝ Հովակիմ Գեղամյանցը՝ 19 կտոր գիրք և «Հայկական աշխարհի» հատորները՝ 24 տետր, Կարապետ քահանա Տեր-Գրիգորյանցը՝ 2, Կարապետ Բագրատունյանցը՝ 1, Համբարձում քահանա Ջրպետյանցը՝ 2, Մարտիրոս քահանա Մեծատունյանցը՝ 2, Աղեքսանդր Սարայտարյանցը՝ 2, Նիկողայոս Տեր-Գրիգորյանցը՝ 4, Մինաս Վարդանյանցը՝ 1, դպիր Ղազարոս Բաղդասարյանցը՝ 2, Մեսրոպ քահանա Կանցյանցը՝ 2, Մկրտիչ Մարակյանցը՝ 1, Կարապետ Տեր-Հակոբյանցը՝ 1, դպիր Մկրտիչ Բարաղամյանցը՝ 1, Վերոնիկա Գեղամյանցը՝ 2, երիցուհի Փեփրոնե Տեր-Գրիգորյանցը՝ 1, Աբրահամ քահանա Ղազազյանցը՝ 6, դպիր Գարեգին Ղազազյանցը՝ 1, Սահակ Ղազազյանցը՝ 1, Մկրտիչ քահանա Մխիթարյանցը՝1 (հաշվետու ժամանակաշրջանում վախճանվել է), դպիր Մեսրոպ Տեր-Գևորգյանցը՝ 1, Թադեոս քահանա Տեր-Վարդանյանցը՝ 2, Մկրտիչ քահանա Թադոյանցը՝ 1, Մկրտիչ Գայֆեճյանցը՝ 1, երիցուհի Թագուհի Համբարձումյանը՝ 1, Գևորգ Սաղաթելյանցը՝ 1 և Եղիա ավագ քահանա Համբարձումյանցը՝ 2 կտոր գիրք:

911 Նույն տեղում:
912 «Մշակ», 1879, № 159, էջ 3:
913 «Մշակ», 1877, № 41, էջ 3:
914 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 45:
915 «Արտեմիս», 1902, № 7-8:
916 «Արձագանք», 1895, № 100, էջ 2:
917 Նույն տեղում:
918 «Մշակ», 1913, № 7, էջ 4:
919 **Օննիկ**, Ախալցխայի աշակերտների ուշադրութեան, «Շարժում», 1917, № 12, էջ 2:

**Ախալցխայի քաղաքային չորսդասյա ուսումնարանի գրադարան.** 1887 թ. հունվարի 1-ի դրությամբ ուսումնարանի գրադարանում կար 2409 գիրք[920]:

**Վրացական գրադարան.** 1895 թ. մարտին Իլիա Ճավճավաձեի ջանքերով Ախալցխայում բացվում է վրացական գրադարան[921]:

**Հարություն Բայբուրդյանցի մասնավոր թանգարան.** 1920-ական թվականների վերջերին վախճանված Հարություն Բայբուրդյանցը, որ սերում էր Ախալցխայում երբեմնի մեծահարուստ Բայբուրդյանց տոհմից, հնասեր և ուսումնասեր անձ լինելով, տարիների ընթացքում կարողացել է ստեղծել խիստ ուշագրավ և մեծարժեք հավաքածուներով հագեցված հարուստ թանգարան, որի ճակատագիրը նույնքան տխուր վախճան է ունեցել, որքան հանրահայտ Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուներինը[922]: Բայբուրդյանցի մասնավոր թանգարանը վրացական իշխանությունները, ըստ էության, բռնագրավելով պետականացրին. «Սա հնությունների սիրահար էր և հին դրամների մասնագետ: Իր տան սենյակները նա վերածել էր թանգարանի, որտեղ պահում էր հարյուրից ավելի մանր ու խոշոր հայերեն ձեռագիր գրքեր[923], հին դրամների հարուստ հավաքածու, կենցաղային բազմաթիվ առարկաներ, զգեստներ, ոսկերչության ու արծաթագործության հազվագյուտ նմուշներ և ասեղնագործած ծածկոցներ: Բայբուրդյանն այդ ամենը ձեռք էր բերել հորից ժառանգած կալվածքները հետզհետե վաճառելուց ստացված գումարով: Բոլորը ճանաչում էին անթիքաճի[924] Արթեն աղային և ով ինչ հետաքրքիր առարկա ուներ, տանում էր նրան վաճառելու, 20-ական թթ. վերջերին Բայբուրդյանը մեռավ, և նրա թանգարանը պետականացվեց»[925]:

Հայտնի է, որ «...ժառանգ չունենալու պատճառով թանգարանը պետականացվեց (1928 թ.), բայց, դժբախտաբար, տեղում չպահվեց, այլ առարկաները ցրվեցին Վրաստանի մի քանի թանգարանների միջև: Հին դրամների ժողովածուն հանձնվեց Քութայիսի թանգարանին, ձեռագրերը՝ Թբիլիսիի համալսարանին, մանր ձեռագրերը, որոնք մնացել էին Կարապետ Բայբուրդյանի տանը, ձեռք բերվեցին Հայաստանի համար, որոնք այժմ պահվում են Մատենադարանում»[926]:

**Ախալցխան՝ գրչօջախ.** Ախալցխայի զանազան գրչօջախներում կամ այլուր, բայց ախալցխացի գրիչների ձեռքով ստեղծվել, ընդօրինակվել կամ փրկագնվել են մեծ թվով ձեռագրեր, որոնց մի փոքր մասը կա՛մ հասել է մինչև մեր օրերը և կա՛մ գոնե դրանց գոյության մասին պահպանվել են գրավոր հիշատակություններ: Այսպես.

1396 թ. ոմն Ամիր Սարգիս Ախալցխայի Սբ. Քառասունք եկեղեցուն է նվիրաբերել Ավետարան[927]:

1419 թ. հիշվում է գրիչ Գրիգոր Ախալցխեցին, որը Վայոց Ձորի Հերմոնի վանքում հեղինակել էր մի ձեռագիր[928]:

1429 թ. Ախալցխա քաղաքի բնակիչ մահտեսի Ամիր փաշան Երնջակ բերդի մոտ Շահռուխի թաթարական գերությունից ազատել է Սյունյաց աշխարհում Եզեկիել վարդապետի ընդօրինակած ձեռագիր Ճաշոցը և նվիրել Սբ. Թադեոս առաքյալ վանքին[929]:

1438 թ. «...գրեցաւ սուրբ աւետարանս ի Վրացտունս ...յերկիրս Ախալցխոյ, ի վանքս պարոն Յակոբայ ի մեծ թուիս Հայոց ՊՁԷ (1438), ընդ հովանեաւ սուրբ Հրեշտակապետին...»[930]:

1465-1473 թվականների միջակայքում ստեղծված մի բժշկարանի հիշատակարանում նշվել է. «Արդ գրեցաւ գիրք[ս] այս, որ է անուամպ Մաղրայպատինս, որ թարգմանի ի հայ բառս բժշկարան, ի դուռս միջի վանաց սուրբ Աստուածածնիս, ի հայրապետութեան տէր Ըռըստաքիսի, ի թագաւորութեան պարոն Ղաւրղաւրին, ի եպիսկոպոսութեան տէր Գրիգորի, որ է առաջնորդ Սմցխու երկրիս, ի տանուտէրութեան պարոն Ազըզին և պարոն Վարձելին: Այլ ես <տէր> գրեցի գիրքս՝ Ծապրիանի որդիս տէր Յակոբս, որ յայսմ ամի ձեռնայդրեցա...»[931]:

1551 թ. Ամիրխան Ախալցխացին անօրենների ձեռքից փրկագնել է 1497 թ. Աղթամարում ստեղծված Ավետարանը և հանձնել Հովհաննես երեցին[932]:

1607 թ. Ավետարան ստանալու կապակցությամբ հիշվում է. «ի Ախլցխոյ մայրաքաղաքէն, այր ոմն անուն որ կոչի Մաքանդար...»[933]:

1445 թ. ստեղծված ձեռագրի՝ 1619 թ. հավելած հիշատակարանում նշվել է. «Գրեցաւ յիշատակարանս ի մայրաքաղաքս Ախըլցխայ, ընդ հովանեաւ Զարեհնու Ս. Նշանին...»[934]:

920 **Иванов В.**, նշվ. հոդվ., էջ 212:
921 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 45:
922 Մանրամասն տե՛ս **Կարապետյան Ս.**, Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն, Երևան, 2004:
923 Այլ վկայության համաձայն՝ Հ. Բայբուրդյանի թանգարանում պահվել է 250-ից ավելի հայերեն հին ձեռագիր (**Ղաֆադարյան Կ.**, Հայաստանի թանգարանների պատմությունից, «ԼՀԳ», 1972, № 10, էջ 34):
924 Անթիքաճի = հնասեր:
925 **Ղաֆադարյան Կ.**, նշվ. հոդվ., «ԲԵՀ», 1967, № 3, էջ 166:
926 **Ղաֆադարյան Կ.**, նշվ. հոդվ., «ԼՀԳ», 1972, № 10, էջ 34:
927 ԺԴ, էջ 614 (հիշատակարանի խնդրո առարկա հատվածը տե՛ս սույն աշխ., էջ 128-129):
928 ԺԵԱ, էջ 656:
929 ԺԵԱ, էջ 518:
930 ԺԵԱ, էջ 486:
931 ԺԵԲ, էջ 350:
932 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց..., Ա, էջ 643, ձեռ. № 158:
933 ԺԷԱ, էջ 262:
934 ԺԷԱ, էջ 687:

1749-1861 թվականների ընթացքում ստեղծվել է «Մատեան մկրտութեան երեխայից հայոց եւ վրաց կաթոլիկաց յԱխալցխա» ձեռագիրը[935]:

1754 թ. ստեղծվել է «Գիրք սքանչելեաց եւ հրաշից Մարիամու Աստուածածնի» ձեռագիրը («Թարգմանեցեալ յԻտալականէն վրաց բարբառ Անջելոյ կոչեցեալ քահանայք և անդր ածեցեալ ի վրաց լեզուէ ի հայ բարբառ...»)[936]:

Հայտնի է, որ 1762-1792 և 1853, 1861 թվականներին Ախալցխայում կաթողիկե տարբեր հոգևորականներ գրել են «Մատյան մկրտության Ախալցխեի հայ և վրաց կաթոլիկների» երկլեզվյան՝ հայերեն և վրացերեն ձեռագիրը[937]:

1791 թ. Ախալցխայում գրիչ Օհան Ղազարյանը հեղինակել է «Ստեփանոս Դաշտեցի, Ընդդէմ հերձուածողաց» ձեռագիրը[938]:

Տեր-Հովհան հայ կաթողիկե հոգևորականը (ծնվել է 1730-ական թվականներին Ախալցխայում, ուսանել է Հռոմում: 1777 թ.-ից մինչև մահը՝ 1809 թ., ապրել է Ախալցխայում) հեղինակ է ժամանակագրական բնույթի աշխատության[939]:

1810 թ. գրիչ Թերզի Մկրտիչը հեղինակել է մի ձեռագիր Տաղարան[940]:

Հավանաբար 1821 թ.-ից հետո գրիչ Իվան Նեբիեր Ախալցխացին ստեղծել է մի ձեռագիր Բառգիրք, որի մեջ ներառված էր հեղինակի վրացերենռուսերեն և Հարություն Ալամդարյանի ռուսերենհայերեն համառոտ բառարանները[941]:

1823 թ. գրիչ Անտոն Թումանյանը ստեղծել է «Մաշտոց հայոց ուղղափառաց» ձեռագիրը[942]:

1823 թ. փետրվարի 6-ին «...ի տեառնէ Անտօն քահանայէ ի յԱխլցխայ» գրվել է «Մաշտոց հայ կաթոլիկաց» ձեռագիրը[943]:

1831-1862 թվականների ընթացքում գրիչ Հակոբ Սուրենյանցն այլոց հետ ստեղծել է մի ձեռագիր Ժողովածու[944]:

1833 թ. գրիչ Հակոբոս Տեպեճյանը հեղինակել է «Թամիրաս Կուրածին»[945]:

1835 թ. ստեղծվել է Տաղարան[946]:

1837 թ. գրիչ Գրիգոր Շաքարճյան Կարնեցին Ախալցխայում հեղինակել է Տաղարան[947]:

1837 թ. գրիչ Գրիգոր տիրացուն հեղինակն է «Բարոյական աստուածաբանութիւն» ձեռագրի (թարգմանիչ՝ Եփրեմ Սեթ)[948]:

1839 թ. գրիչ Նազարեթ դպիրը ստեղծել է մի ձեռագիր Ժողովածու[949], իսկ 1842 թ. շարունակել է 1664 թ. Սպահանում ստեղծված «Ուրբաթագիրք, Ախտարք» ձեռագիրը[950]:

1843 թ. գրիչ Հակոբ քահանա Տեր-Պետրոսյանը հեղինակել է Ժողովածու[951], իսկ գրիչ Մովսես Վաղարշյանը (Դանիելյանը)՝ «Աստուածաբանութիւն»[952]:

1844-1867 թվականների ընթացքում Տփղիսում և Ախալցխայում գրիչ Հակոբ Տեր-Զաքարյան Սուրենյանցն ու Թագվոր Հովհաննիսյան Թրակացին ստեղծել են մի Ժողովածու[953]:

1849 թ. գրիչ Կարապետ Թորոսյան Չմշկյանցը քաղաքում լրացրել է ձեռագիր Ժողովածուն[954]:

1852 թ. գրիչ Մելքոն Չիլինկարյանցն ընդօրինակել է «Յովհաննէս Արճիշեցի, Մեկնութիւն՝ պատարագի» և «Ներսէս Շնորհալի, Ոլբ Եդեսիոյ» ձեռագրերը[955]:

1855 թ. գրիչ Գևորգ քահանա Գրիգորյանը հեղինակել է «Ազարիա Սասնեցի. վասն ուսուոյլապի արուեստի»[956]:

1857, 1860 թվականներին ստեղծված Ժողովածուի հեղինակն է Կարապետ Սերովբյանցը[957]:

1857-1860 թվականների ընթացքում գրիչ Հակոբ Սուրենյանցն այլոց հետ ստեղծել է ևս մի ձեռագիր Ժողովածու[958]:

Հավանաբար Ախալցխայում մինչև 1858 թ. գրիչ Կարապետ արքեպիսկոպոսը ստեղծել է «Ցուցակ ձեռագրաց»-ը[959]:

1860 թ. գրիչ Կարապետ Սերովբյանցը հավանաբար Ախալցխայում շարունակել է նախկինում ստեղծված մի ձեռագիր Ժողովածու[960]:

1862 թ. գրիչ Մելքոն Չիլինկարյանցը ստեղծել է ձեռագիր «Ղունկիանոս, երգարան»[961]: Նույն գրչի հեղինակությամբ 1860-ական թվականներին ստեղծվել է նաև «Ոտանաւորք» ձեռագիրը, որի մեջ ներառված էին Գ. Այվազյանի, Ս. Շահազիզյանի,

935 Ցուցակ ձեռագրաց, հ. Բ, Երևան, 1970, էջ 1056, ձեռ. № 10150 (այսուհետ՝ ՑՁԲ, համապատասխան էջերով):
936 ՑՁԲ, էջ 1098, ձեռ. № 10341:
937 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. հոդվ., «Բանբեր Մատենադարանի», հ. 4, էջ 402-403:
938 ՑՁԲ, էջ 974, ձեռ. № 9689:
939 **Чобанян П.**, "Дневник" Тер-Иоанна Ходжи-Оганяна, "Кавказ и Бизантия", Ереван, 1980, № 2, с. 87-90.
940 ՑՁԲ, էջ 788, ձեռ. № 8655: Հարկ է նշել, որ գրչության վայրն ու գրչի անունները թեական են:
941 ՑՁԲ, էջ 1052, ձեռ. № 10130:
942 ՑՁԲ, էջ 1059, ձեռ. № 10163:
943 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. հոդվ., «Բանբեր Մատենադարանի», հ. 4, էջ 403-404:
944 ՑՁԲ, էջ 878, ձեռ. № 9138:
945 ՑՁԲ, էջ 666, ձեռ. № 8073:
946 ՑՁԲ, էջ 809, ձեռ. № 8764:
947 ՑՁԲ, էջ 850, ձեռ. № 8990:
948 ՑՁԲ, էջ 1047, ձեռ. № 10102:
949 ՑՁԲ, էջ 982, ձեռ. № 9725:
950 ՑՁԲ, էջ 725, ձեռ. № 8346:
951 ՑՁԲ, էջ 724, ձեռ. № 8341:
952 ՑՁԲ, էջ 945, ձեռ. № 9523:
953 ՑՁԲ, էջ 876, ձեռ. № 9129:
954 ՑՁԲ, էջ 875-876, ձեռ. № 9128:
955 ՑՁԲ, էջ 983-984, ձեռ. № 9735, 9736:
956 ՑՁԲ, էջ 730-731, ձեռ. № 8372:
957 ՑՁԲ, էջ 869, ձեռ. № 9097:
958 ՑՁԲ, էջ 878, ձեռ. № 9137:
959 ՑՁԲ, էջ 814, ձեռ. № 8794:
960 ՑՁԲ, էջ 869, ձեռ. № 9098:
961 ՑՁԲ, էջ 983, ձեռ. № 9731, 9732:

Ռ. Պատկանյանի և անանուն այլ հեղինակների ստեղծագործությունները[962]:

1878 թ. Մարտիրոս Մեծատունցյանցը հեղինակել է «Ի նահատակութեան Վարդանանց» չափածո ձեռագիրը[963]:

1890 թ. հիշվում է «Վեց հազարեակ»-ի ստացող Հովհաննես Աղաճանյան-Կոճայանցը[964]:

**Ախալցխայի եպիսկոպոսությունն ու փոխանորդությունը.** տվյալների սղությունն առայժմ անհայտության մեջ է թողնում Ախալցխայում հայ առաքելական եկեղեցու թեմ հիմնելու ստույգ տարեթիվը կամ ժամանակաշրջանը, սակայն հավաստի վկայությունների համաձայն՝ առնվազն ԺԵ դարից թեմն արդեն ձևավորված էր: Նշյալ ժամանակաշրջանում են պաշտոնավարել Գրիգոր (հիշվում է 1465-1473 թվականների ընթացքում ստեղծված մի բժշկարանի հիշատակարանում) «...ի եպիսկոպոսութեան տէր Գրիգորի, որ է առաջնորդ Սամցխեու երկրիս»[965] և Սրապիոն (հիշվում է 1498 թ.) «...և հայրապետութեան գաւառիս մերոյ Ախլցխոյ տէր Սրապիոնի...»[966] եպիսկոպոսները:

Օսմանյան տիրապետության շրջանում Ախալցխան ենթարկվում էր Կարսի առաջնորդությանը, որի հոգևոր պետերը, ի թիվս Կարսի թեմի իրավասության ներքո գտնվող հայահոծ բնակավայրերի, հաճախ այցելում էին նաև Ախալցխա:

Կարսում նստող Ախալցխան հովվող հայտնի վերջին առաջնորդը, որը պաշտոնավարել է մինչև ռուսների՝ Ախալցխան նվաճելը, *Անտոն վարդապետ Մուրադյանն* էր[967]:

1830-ական թվականներին Ախալցխայի հայոց առաջնորդն է կարգվում սեփական հոտին գաղթեցրած *Կարապետ Բագրատունին*[968]:

1844 թ. «Յաջորդ Ախլցխոյ քաղաքի և սահմանի նորին» հիշվում է *Գևորգ եպիսկոպոս Տեր-Դավթյանը*[969]: Նրա կենսագրությունից հայտնի է, որ 1841 թ. Էջմիածնում ձեռնադրվել է եպիսկոպոս, ապա նշանակվել Ախալցխայի առաջնորդ. «Կարապետ արքեպիսկոպոսի ձեռնասուն և հաւատարիմ աշակերտը լինելով, գործում էր իհարկէ իւր վարժապետի գիտութեամբ և հրահանգով...», և կաշառքով իրականացրել բազմաթիվ անօրինական գործեր, պսակադրություններ և այլն[970]: Վախճանվել է 1847 թ. խոլերայից:

1860-ականների սկզբներից Ախալցխայի առաջնորդ է կարգվում *Գրիգոր վարդապետ Սագինյանը*: 1862 թ. վարդապետի գործուն աջակցության շնորհիվ ձեռք է բերվում Սբ. Նշան եկեղեցու կառուցման թույլտվությունը[971]: 1863-1864 թվականներին Գրիգոր Սագինյանը եպիսկոպոս էր[972], իսկ 1867 թ., երբ նպաստել էր «Նոր արշալույս» իգական դպրոցի հիմնադրմանը, նա արդեն արքեպիսկոպոս էր[973]:

1868 թ. «Ախալցխայու թեմի ժողովրդոց նս չկամելով Վեհափառ կաթուղիկոսն թողուլ առանց հոգևոր հովուութեան, նոյն թեմի փոխանորդ կարգեց հայրապետական կոնդակաւ *Բաբամեան Մկրտիչ եպիսկոպոսն...*»[974]:

1870-1872 թվականներին Ախալցխայի փոխանորդի պաշտոնը վարում է *Սուքիաս վարդապետ*

962 ՑՁԲ, էջ 983, ձեռ. № 9733:

963 Ցուցակ ձեռագրաց, Ա, Երևան, 1965, էջ 1094, ձեռ. № 3837 (այսուհետ՝ ՑՁԱ, համապատասխան էջերով):

964 ՑՁԲ, էջ 1062, ձեռ. № 10180:

965 Մատենադարան, ձեռ. № 415: Տե՛ս նաև ԺԵԲ, էջ 350:

966 ԺԵԳ, էջ 269:

967 **Ավետիս քահանա**, նշվ. աշխ., էջ 29:

968 Հայտնի է, որ ԺԸ դարի վերջերին Էրզրումի ութ դատավորներից մեկը Կարապետ արքեպիսկոպոսի պապը՝ Կարապետ Եղիկօղլին էր, որը «...դատավարությամբ այնքան համբավ էր ստացել, որ օսմանցիք «հայ թագավորազն» էին կոչում դրան և այս տիտղոսը այնքան ոգևորել էր նրան, որ թողել էր յուր Եղիկ-Օղլի ազգանունը և կոչվել Բագրատունի»: Կարապետ (աշխարհիկ անունը՝ Հովհաննես) Բագրատունին ծնվել է 1779 թ. մայիսի 18-ին (հոր անունն էր Գրիգոր, մոր անունը՝ Արեգնազան): Տասը տարեկանում որբանում է. նախ ժանտախտից մահանում են հայրն ու եղբայրը, վեց ամիս հետո՝ մայրը, որն ամուսնու մահից հետո նորից ամուսնացել էր: Խորթ հայրը նրան տանում է մետաքսագործություն սովորելու, սակայն նա փախչում է և մոտ 12 տարեկանում Էրզրումում հանդիպում է Լիմ անապատից մի վարդապետի և նրա հետ գնում Ակնի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոսի մոտ: 1788-1795 թթ. ուսանում է Կ. Պոլսում, վերադառնում է Ակն, նախ ձեռնադրվում դպիր, ապա սարկավագ, 1801 թ. Ակնի Սբ. Գևորգ եկեղեցում Միքայել արքեպիսկոպոսը ձեռնադրում է վարդապետ և տալիս Կարապետ անունը: Որոշ ժամանակ անց Միքայել արքեպիսկոպոսը նրան նշանակում է Էրզրումի և Ակնի եկեղեցական կալվածքների ընդհանուր կառավարիչ: 1811 թ. նոյեմբերի 2-ին Էջմիածնում Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսը ձեռնադրում է արքեպիսկոպոս (**Լալայան Ե.**, նշվ. աշխ., էջ 428-429: Հմմտ. **Երիցեանց Աղ.**, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք, մասն Բ, Թիֆլիզ, 1895, էջ 467): Ի դեպ, 1830-ական թվականներին Կարապետ արքեպիսկոպոսի կերպարը «Նկարագրութիւն ինչ-ինչ գործոց Կարապետ եպիսկոպոսի վիճակաւոր առաջնորդի հայոց գաղթելոց ի Տայս» («Գիտական նյութերի ժողովածու», 1950, № 2, էջ 99-178) կատակերգական ստեղծագործությամբ մարմնավորել է Գալուստ Հարությունյան Շերմազան-Վարդանյանցը (1864-1865 թթ. Թիֆլիսի քաղաքագլուխն էր): Ստեղծագործության համար հիմք էր ծառայել կաշառքով կատարված մի պսակադրություն. «...Ռուսահայոց մէջ գրեթէ անդրանիկ կատակերգութիւնը, որի մէջ կենդանի կերպիւ նկարագրուած էին Կարապետ արքեպիսկոպոսը, իւր կաշառակեր արբանեակները և ձկնապան Մելքոն: Այդ մի հանճարաւոր գրութիւն էր, որի ձեռագիր օրինակներն այն ժամանակուայ բանասիրաց մէջ գաղտնաբար ձեռքէ ձեռք էին անցնում. Կարապետ արքեպիսկոպոսի խնդրանօք ոստիկանութիւնն հետամուտ էր գտնել կատակերգութեան անյայտ հեղինակին, բայց այդ չյաջողեցաւ» (**Երիցեանց Աղ.**, նշվ. աշխ., մասն Բ, Թիֆլիզ, 1895, էջ 472):

969 Մատենադարան, թղթ. 163ե, վավ. 11:

970 **Երիցեանց Աղ.**, նշվ. աշխ., մասն Բ, Թիֆլիզ, 1895, էջ 472-474:

971 «Մեղու Հայաստանի», 1862, № 27, էջ 107:

972 Մատենադարան, թղթ. 157, վավ. 275, թ. 51: Թղթ. 157, վավ. 276, թ. 52:

973 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6910, թ. 16: Տե՛ս նաև **Մելքոնյան Ա.**, Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից, Երևան, 2005, էջ 113:

974 «Արարատ», 1868, յունիս, էջ 9:



**Սուքիաս եպիսկոպոս Պարզյանց**

*Պարզյանցը*[975]: Ի դեպ, արդեն 1869 թ. Պարզյանց վարդապետը տեղի հայերի խնդրանքով նշանակվել էր փոխառաջնորդ[976]:

Հայտնի է, որ պաշտոնավարության հենց առաջին տարում եպիսկոպոս ձեռնադրված առաջնորդը նախաձեռնում և հիմնում է Եղիսաբեթյան օրիորդաց ուսումնարանը[977]:

1872 թ. նոյեմբերի 2-ի լրատվությամբ՝ Սուքիաս եպիսկոպոս Պարզյանցը նշանակվում է Ալեքսանդրապոլի թեմի առաջնորդ: Ախալցխայում նրան փոխարինելու է գալիս ազգային գործերում ոչ պակաս ժրաջան *Թադեոս եպիսկոպոս Չյունակյանը*[978]:

Վերջինս նույն պաշտոնում հիշվում է նաև 1873[979] և 1874 թվականներին[980]: 1873 թ. Չյունակյան եպիսկոպոսը հիշվում է որպես Ախալցխայի Եղիսաբեթյան ուսումնարանի խորհրդի նախագահ[981]:

1875 թ. օգոստոսի 24-ին Թադեոս եպիսկոպոսն օծում է Կոջորի հայոց եկեղեցին[982]: Նույն թվականի այլ տեղեկագրում հիշվում է Խաչատրյան ազգանունով[983]:

1876 թ. թեմական առաջնորդի պաշտոնում փոխարինում է *Գաբրիել արքեպիսկոպոսը*, որը, հակառակ պաշտոնավարության խիստ կարճաժամկետ ընթացքի, Ախալցխայում հոգևորականության համար հասցնում է հիմնել մի գրադարան[984]:

Նույն թվականին Ախալցխայի առաջնորդությունն արդեն երկրորդ անգամ (առաջին անգամ՝ 1860-ական թվականներին՝ մինչև 1867 թ.) ստանձնում է *Գրիգոր եպիսկոպոս Սագինյանցը*, որը միաժամանակ համատեղում է նաև Տփղիսի առաջնորդի պաշտոնը. «...Ախլցխոյ քաղաքին յաջորդ, և Տիփխիսու առժամանակեայ առաջնորդական տեղապահ էր վիճակաւոր առաջնորդին բացակայ լինելուն պատճառաւ...»[985]:

Ի դեպ, 1878 թ. արքեպիսկոպոս Սագինյանցն օծում է Մանգլիսի հայոց եկեղեցին[986]:

1881 թ. Գրիգոր արքեպիսկոպոս Սագինյանցը Ախալցխայի ուսումնարանների տեսուչ Մովսես Սամուելյանցի հետ այցելում է Սազել և Փոքր Պամած գյուղերը և հաստատում բացվելիք կենտրոնական դպրոցի կանոնադրությունը[987]: Գրիգոր Սագինյանցն Ախալցխայի փոխանորդական աթոռը զբաղեցնում է մինչև 1882 թ.[988]:

1883 թ. փոխանորդ է նշանակվում *Մամբրե ծայրագույն վարդապետ Սանասարյանը*[989]:

1884 թ. օգոստոսի 30-ին Էջմիածնի սինոդը Ախալցխայի վիճակի առաջնորդ է նշանակում *Խորեն վարդապետ Ստեփանեին*[990]: Իր պաշտոնա-

975 “Кавказский календарь на 1872 г.”, с. 74. Տե՛ս նաև “Кавказский календарь на 1873 г.”, с. 76.

976 «Մեղու Հայաստանի», 1870, № 9, էջ 67:

977 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 442:

978 «Մշակ», 1872, № 43, էջ 3: Տե՛ս նաև «Արարատ», 1872, Ժ, էջ 420: «Արձագանք», 1889, № 31, էջ 465: Թադեոս Չյունակյանի կենսագրության գլխավոր կետերն են. ծնվել է 1823 թ., 1836 թ. ձեռնադրվել է սարկավագ, 1856 թ.՝ վարդապետ, 1867 թ.՝ եպիսկոպոս, 1885 թ.՝ արքեպիսկոպոս: 1872-1876 թթ. Ախալցխայի թեմի առաջնորդության փոխանորդն էր: Վախճանվել է 1889 թ. հուլիսի 10-ին Էջմիածնում («Արձագանք», 1889, № 31, էջ 465):

979 “Кавказский календарь на 1874 г.”, с. 82.

980 “Кавказский календарь на 1875 г.”, с. 63.

981 “Кавказский календарь на 1874 г.”, с. 111.

982 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 90, թ. 3:

983 “Кавказский календарь на 1876 г.”, с. 66.

984 «Արարատ», 1876, նոյեմբեր, էջ 433: Տե՛ս նաև «Մեղու Հայաստանի», 1881, № 34, էջ 2:

985 **Ուղեւոր Ա.**, Ուղեւորութիւն ի Սուրբ Էջմիածին 1876 յուլիս 20, «Սիօն», 1877, էջ 117:

986 “Кавказский календарь на 1878 г.”, с. 75. Տե՛ս նաև “Кавказский календарь на 1879 г.”, с. 65; “Кавказский календарь на 1880 г.”, с. 74; “Кавказский календарь на 1881 г.”, с. 80; “Кавказский календарь на 1882 г.”, с. 97; “Кавказский календарь на 1883 г.”, с. 83.

987 «Մեղու Հայաստանի», 1878, № 31, էջ 2:

988 «Մեղու Հայաստանի», 1881, № 232, էջ 1:

989 «Արձագանք», 1883, № 17, էջ 1:

990 «Արարատ», 1884, սեպտ., էջ 421: Տե՛ս նաև ֆ. 53, ց. 1, գ. 944, թ. 37: Խորեն վարդապետ Ստեփանեի կենսագրության գլխավոր կետերն են. աշխարհիկ անունը՝ Ստեփանյան Ստեփան Հարությունի, ծնվել է 1840 թ. հունիսի 5-ին Կախեթի Թելավ քաղաքում: Բանաստեղծ, մանկավարժ, թարգմանիչ, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ: Սովորել է Ներսիսյան դպրոցում, 1858 թ. ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, 1862 թ.՝ Մոսկվայի համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետը: 1862-1864 թթ. դասավանդել է Թիֆլիսում, 1864-1879 թթ. հրատարակել է «Հայկական աշ-

վարման ընթացքում վերջինս փորձում է բարձրացնել հայ հոգևորականության և կրթական գործի մակարդակը, հեղինակում է զանազան թղթակցություններ[991]:

1890 թ. Ախալցխայի փոխանորդ է հիշվում *Սահակ վարդապետ Աստվածատրյանցը*[992]:

1891 թ. փոխանորդ է նշանակվում *Հովհաննես վարդապետ Շիրակունին*[993], որը պաշտոնավարում է նաև 1892 թ.[994]:

1894 թ. փոխանորդ է հիշվում *Անանիա վարդապետ Համազասպյանցը*[995]:

1894 թ. նոյեմբերի 1-ից կաթողիկոսական կոնդակով փոխանորդ է կարգվում *Պետրոս վարդապետ Այվազյանցը*[996], որը պաշտոնավարում է առնվազն մինչև 1899 թ.[997]:

1897 թ. մայիսի 11-ին փոխանորդ Պետրոս վարդապետը հիշվում է քաղաքի Սբ. Ստեփանոս եկեղեցու[998], ինչպես նաև նույն թվականին Աբասթումանի եկեղեցու հիմնարկեքը կատարելու կապակցությամբ[999]:

1900 թ. Ախալցխայի փոխանորդ է հիշվում *Կյուրեղ վարդապետ Կյուրեղյանցը*[1000], որը նույն թվականի հուլիսի 2-ին օծում է հիմնովորապես վերակառուցված Սբ. Ստեփանոս եկեղեցին[1001]:

1902-1903 թվականներին Ախալցխայի փոխանորդ է հիշվում *Բարկեն վարդապետը*[1002]: Այս փոխանորդը պաշտոնավարում է մինչև 1904 թ., ապա ազատ արձակվում և ետ կանչվում Սբ. Էջմիածին[1003]:

1905-1910 թվականներին Ախալցխայի փոխանորդ է հիշվում *Սիոն վարդապետ Տեր-Մանվելյանցը*[1004], ծնված 1855 թ.[1005]: Կազմել է 800 բառի բացատրություն պարունակող բառարան[1006]:

1910 թ. Ախալցխայի փոխանորդ ընտրվելու համար տեղի հոգևորականությունը Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի առաջարկությամբ տալիս է 1870-1872 թվականներին Ախալցխայում պաշտոնավարած Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցի թեկնածությունը[1007]: Սակայն վերջինս հրաժարվում է: Նույն թվականի հոկտեմբերի 31-ին՝ երեկոյան ժամը 6-ին, Ախալցխայի առաջնորդարանի դահլիճում տեղի է ունենում փոխանորդի ընտրությունը (ախալքալաքցի պատգամավորները առաջարկել էին Եփրեմ եպիսկոպոսի, ախալցխացիները՝ Իսահակ վարդապետի թեկնածությունը)[1008]: Ի վերջո, Ախալցխայի փոխանորդ է ընտրվում *Եփրեմ եպիսկոպոս Սուքիասյանը*[1009]:

1915 թ. փոխանորդ է հիշվում *Իսահակ վարդապետը*, որն արդեն 3-րդ տարին էր պաշտոնավարում (այսինքն պաշտոնավարել է՝ սկսած 1912 թ.-ից)[1010]:

**Ախալցխա – Սբ. Էջմիածին հարաբերություններ.** հայտնի է, որ 1633 թ. Սբ. Էջմիածնին է նվիրվել 1258 թ. գրված մի ոսկենկար ավետարան. «...տէր Յովհաննէս քահանայս, ի քաղաքէն Ախլցխու, ետու զայս ոսկէնկար Աւետարանս յիշատակ հոգւոյ իմոյ և ամենայն նախնեաց և ծնօղաց իմոց ի դուռն Սուրբ Էջմիածնի, պապուն իմոյ՝ տէր Դաւիթ քահանայի, և հօր իմոյ՝ Խաչատուր քահանայի...»[1011]:

1780-ական թվականներին Սբ. Էջմիածնի վանքըն Ախալցխայից ստանում էր մոմ, մեղր, ճիթապտուղ և թղթի գործարանի համար հին շորեր[1012]:

Պարբերաբար հանգանականություններ իրականացնելու առթիվ Սբ. Էջմիածնից Ախալցխա և շրջակայքի հայազգի բնակիչներին էին հղվում կաթողիկոսական կոնդակներ, հորդորներ կամ այլ գրություններ: Հայտնի է, օրինակ, 1780 թ. Ղուկաս կաթողիկոսի հղած կոնդակը[1013]: Մեկ ուրիշը՝

---

խարհի կռունկ» (1866 թ. վերանվանվել է «Հայկական աշխարհ»), 1869 թ. Թիֆլիսում հիմնել է Մարիամյան օրիորդաց և Հավլաբարի առաջին երկսեռ դպրոցները, ապա դասավանդել է Վաղարշապատում, Երևանում, Շուշիում, Թիֆլիսում, Բաքվում: 1871 թ. ձեռնադրվել է վարդապետ: 1881 թ. նշանակվել է Ախալցխայի և Ախալքալաքի թեմական առաջնորդ: 1884 թ. նախաձեռնել է Ջավախքի Բուռնաշեթ գյուղի Սբ. Մատթեոս ավետարանիչ եկեղեցու նորոգությունը: Վախճանվել է 1900 թ. նոյեմբերի 14-ին Թիֆլիսում («Մշակ», 1877, № 9, էջ 2-3: **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 70: ՀՍՀ, հ. 11, Երևան, 1985, էջ 128: «ԲՀԱ», 1987, № 1, էջ 206: **Հովակիմյան Բ.**, նշվ. աշխ., էջ 723):

991 **Խորէն Ստեփանէ**, Ախալցխայի եւ Ախալքալաքի վիճակի հայ առաքելական քահանաներին, «Մանկավարժանոց», Թիֆլիս, 1884, № 9-10, էջ 337:

992 “Кавказский календарь на 1891 г.”, с. 263.

993 “Кавказский календарь на 1892 г.”, с. 294.

994 «Արձագանք», 1892, № 94: Տե՛ս նաև “Кавказский календарь на 1893 г.”, с. 301.

995 “Кавказский календарь на 1895 г.”, с. 342.

996 «Արարատ», 1895, յունուար, էջ 37:

997 “Кавказский календарь на 1896 г.”, с. 362. Տե՛ս նաև “Кавказский календарь на 1897 г.”, с. 382; “Кавказский календарь на 1898 г.”, с. 406; “Кавказский календарь на 1899 г.”, с. 424. ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 339, թ. 7: ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 346, թ. 138:

998 «Նոր-Դար», 1900, № 125, էջ 2:

999 «Նոր-Դար», 1897, № 147, էջ 1-2:

1000 “Кавказский календарь на 1901 г.”, с. 458.

1001 «Նոր-Դար», 1900, № 125, էջ 2:

1002 “Кавказский календарь на 1903 г.”, с. 471; “Кавказский календарь на 1904 г.”, с. 494. Տե՛ս նաև «Նոր-Դար», 1903, № 20, էջ 2:

1003 «Արարատ», 1904, էջ 492:

1004 “Кавказский календарь на 1906 г.”, с. 293; “Кавказский календарь на 1907 г.”, с. 304; “Кавказский календарь на 1908 г.”, с. 303; “Кавказский календарь на 1909 г.”, с. 165; «Մշակ», 1910, № 26, 68:

1005 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 154:

1006 «Հովիւ», 1908, № 21, էջ 335-336:

1007 «Հովիտ», 1910, № 26, էջ 416:

1008 «Հովիտ», 1910, № 31, էջ 490:

1009 Նույն տեղում, էջ 495:

1010 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 1199, թ. 15, 27-28:

1011 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Ա, Երևան, 1984, էջ 1039, ձեռ. № 234: Տե՛ս նաև ԺԷԲ, էջ 510:

1012 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա, էջ 77:

1013 Նշվ. աշխ., էջ 100:

«Թուղթ օրհնութեան», 1781 թ.-ից է հասցեագրված «...ի վերայ Ախլցխայու միաբնադաւան ժողովրդեանն»[1014]:

1783 թ. փետրվարին Ղուկաս կաթողիկոսը կոնդակ է հղում՝ ուղղված Ախալցխայի և մերձակայքի առաջնորդներին[1015], իսկ 1784 թ.՝ թուղթ Սահակ քահանային[1016]:

1960 թ. հիշվում է քահանա Հովհաննես Դանիելյանը, որը Վրաստանի թեմի առաջնորդ Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի միջոցով Էջմիածնի վանքին է նվիրել ԺԹ դարի մի Գուշակարան[1017]:

**Եկեղեցիներ.** քաղաքի քրիստոնյա բոլոր համայնքներն ունեն իրենց եկեղեցիները: Դրանց ընդհանուր թվաքանակը հասնում է 17-ի:

**Հայ առաքելական եկեղեցիներ.** դարերի ընթացքում Ախալցխայում կառուցված հայկական եկեղեցիներից կանգուն, կիսավեր կամ ավերակ վիճակում ցարդ պահպանվել են Սբ. Աստվածածին, Երևման Սբ. Խաչ, Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Սբ. Ստեփանոս, Սբ. Փրկիչ և Զարեհնու Սբ. Նշան (Սբ. Վարդանանց) եկեղեցիները:

1806 թ. քաղաքում վկայվել է 4 եկեղեցի[1018]: Այլ տեղեկության համաձայն՝ նախքան ռուսաց տիրապետության հաստատումն Ախալցխան «Իր մէջն ունէր Հայոց հինգ եկեղեցի...»[1019]:

1833 թ. ականատեսը նշել է. «Ախալցիխեում կա ութ եկեղեցի: Հունադավան հայերն ունեն երեքը, որոնցից երկուսը հին են: Նրանք մասամբ վերականգնվել կամ վերանորոգվել են բավականին արտասովոր ոճով. որպես շինանյութ՝ օգտագործվել են տապանաքարեր, որոնց վրա շատ արձանագրություններ և արաբանախշեր կամ այլ նկարներ կան: Դրանք վերցրել են շրջակայքի գերեզմանատներից՝ ընտրելով ամենագեղեցիկները, և դա այդ եկեղեցիներին շատ տարօրինակ խճանկարային տեսք է տվել: Փաստորեն դա լավագույն միջոցն էր այդ հուշարձանները փոխանցելու հետագա սերունդներին: Այս եկեղեցիների ներսը մութ է և աղքատ: Լուսամուտներ չկան, լույսը ներս է թափանցում փոքր երդիկներից...: Ինչպիսի՜ ուրախությամբ նրանք շտապեցին իրենց եկեղեցիների կողքը կառուցել զանգակատներ, ինչն արգելված էր նրանց թուրքերի ժամանակ: Այդ զանգակատները բաղկացած են գետնի մեջ տնկված չորս երկար գերանից և փոքր ծածկից: Դրանցում շատ մեծ հանդիսավորությամբ կախեցին զանգերը, և դա ցույց էր տալիս քրիստոնեության հաղթանակը»[1020]:

Հայտնի է, որ 1829 թ.-ից հետո Ախալցխայում հաստատված գաղթական հայերից բաբերդցիները, քաղաքում հայ առաքելականների ձեռքում մնացած եկեղեցիներն անբավարար նկատելով, ցանկություն են հայտնում առանձին «բաբերդցոց» մի եկեղեցի կառուցել, որին գեներալ Օրանցկին 1835 թ. մայիսի 11-ին պատասխանում է. «...որք խոստանան հասարակութեամբ շինել զեկեղեցի, բայց վասն իւրեանց տուն մի ոչ կարեն շինել, յորոց իսկ փախեալ են մետասան տուն յերկիր յօսմանցւոց և ընդ ինքեանց փախուցեալ են ազգտոու ինչ, վասնորոյ ոչ է կարելի անօրք եկեղեցական թողուլ ՚ի ձեռս նցա, որք ոչ կարեն շինել վասն ինքեանց բնակութիւն մի, ո՞րպէս կարող են շինել զեկեղեցի»[1021]:

1839 թ. քաղաքում հիշվում է երեք եկեղեցի (Սբ. Փրկիչ, Սբ. Լուսավորիչ և Սբ. Աստվածամայր)[1022]:

1840-1841 թվականներին Վրաստանի թեմի առաջնորդի և Էջմիածնի սինոդի միջև եղած գրագրությունից երևում է, որ ցանկություն է եղել Ախալցխայի գավառում հայոց վանք կառուցել, սակայն գաղափարն այդպես էլ կյանքի չի կոչվել: Խնդրո առթիվ 1840 թ. մարտի 29-ին թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը Էջմիածնի սինոդին տեղեկացրել է, որ «Վերաբնակիչները Կարինում ունեցել են 4 վանք, ուր կատարում էին իրենց երկրպագութիւնը: Գաղթելուց հետո, Ախալցխայում նրանք այդպիսի ուխտատեղի չունէին, այլ աղոթք էին անում վաղնջական խաչի կամ եկեղեցու նշաններ երևացող ավերակների վրա: Իսկ հոգևոր իշխանութիւնները բազմիցս արգելել են դա: Ելնելով այս խնդրից, ժողովուրդը խնդրում է սինոդից թոյլ տալ կառուցել սբ. Գրիգոր Լուսաւորչի անվան վանք հոգևոր պէտքերը հոգալու համար»[1023]:

1840 թ. մայիսի 25-ին սինոդն առաջնորդին հարցրել է. «...վանքը որտե՞ղ են մտադիր կառուցել Ախալցխայում, թե՞ գիւղերից մեկում, արդեո՞ք ունեն կալվածագիր և ո՞ւմ անվամբ է գրանցված, ունե՞ք արդեոք առձեռն գումար և դա հանգամանկութիւն է, թե՞ եկեղեցական արդիւնք»[1024]: Նույնա-

---

1014 Նշվ. աշխ., էջ 253:

1015 Նշվ. աշխ., էջ 349:

1016 Նշվ. աշխ., էջ 490:

1017 Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, «Էջմիածին», 1963, Բ, էջ 61:

1018 «Նոր-Դար», 1903, № 19, էջ 1:

1019 **Նուրիխան Մ.**, նշվ. հոդվ., էջ 102:

1020 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 264, 266 (բնագրում՝ “Akhaltsikhé renferme huit églises; les Arméniens jacobites en ont trois; deux sont anciennes, elles ont été restaurées ou reconstruites en partie, d’une manière assez baroque; on a pris pour matériaux de construction les pierres tumulaire chargées d’inscriptions et d’arabesques ou d’autres dessins qui couvraient les cimetières d’alentour, en choisissant les plus belles, ce qui donne à ces églises un air de marqueterie très bizarre. Dans le fait, c’était le meilleur moyen de faire passer ces monuments à la postérité. L’intérieur de ces églises est sombre, pauvre; il n’y a pas de fenêtre, le jour n’y donne que par de petits dômes ou darbases... Avec quelle joie ils se sont empressés d’ériger des éspèces de clocher auprès de leurs églises, ce qui leur était défendu du temps des Turcs. Quatre longues poutres plantées en terre avec un petit toit, font la façon de ces clochers. On y a pendu avec la plus grande solennité les cloches, qui prouvaient le triomphe du christianisme”):

1021 Մատենադարան, թղթ. 163ե, վավ. 134:

1022 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 457, թ. 42:

1023 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3316, թ. 1:

1024 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3316, թ. 2:

նման հարցումը կրկնվել է նաև նշյալ թվականի սեպտեմբերի 30-ին[1025]:

1841 թ. ապրիլի 2-ին Կարապետ արքեպիսկոպոսը սինոդին միայն պատասխանում է, որ «...սբ. Գրիգոր Լուսաւորչի անվամբ վանք մտադիր են կառուցել Ախալցխայի գավառի Ախալքալաքի մասում, բայց դեռևս պարզ չէ, թէ ո՞ր գիւղում: Իսկ ինչ վերաբերում է շինութեան համար նախատեսված ծախսին, ապա շինարարութեան ժամանակ ջերմեռանդ ժողովուրդը ինքը կհավաքի դրամը»[1026]:

Նույն թվականի ապրիլի 15-ին սինոդն առաջնորդից մեկ անգամ ևս մանրամասներ է պահանջում[1027] և, ըստ ամենայնի, առկա հանգամանքներն անբավարար գնահատելով, 1841 թ. հունիսի 13-ին կայացնում է հետևյալ որոշումը. «...առայժմ պատրաստի գումար չկա, պարզ չէ վանքի տեղը, ապա առայժմ հետաձգել կառուցումը, մինչև որ հստակորեն որոշվի ամէն բան»[1028]:

1841 թ. հիշվում է 1 մայր և 3 ծխական եկեղեցի, որոնցից մեկը քարաշեն էր, 3-ը՝ փայտաշեն[1029]: Նույնքան եկեղեցի է հիշատակվում նաև 1842 թ., սակայն արդեն 2 քարաշեն և 2 փայտաշեն[1030]:

1843 թ. մարտի 15-ից մայիսի 31-ը գրագրություն է սկսվել հայ առաքելական և հայ կաթողիկե նոր եկեղեցիներ կառուցելու նպատակով[1031]:

1849 թ. քաղաքում գործում էր 6 եկեղեցի, ընդ որում երկուական՝ ուղղափառ, հայ կաթողիկե և հայ առաքելական[1032]:

1850 թ. զինվորական ընդհանուր հրամանատարը Վրաստանի և Իմերեթիայի Հայոց վիճակային կոնսիստորիայից հաղորդել էր «...ի մասին քակտելոյ զեկեղեցին գտանեցեալն մերձ ամրոցին Ախլցըխայ քաղաքի չունելով զայնմանէ ցարդ ի կոնսիստօրէս ծանօթութիւն...»[1033]:

1851 թ. Վրաստանի և Իմերեթիայի Հայոց վիճակային կոնսիստորիան Սբ. Էջմիածնի սինոդին հղած գրությամբ անդրադարձել է Ախալցխայի իշխանատունը 1833 թ.-ից հայոց եկեղեցի ծառայելու խնդրին և նույն թվականից էլ դրա շուրջ ծագած և առ 1851 թ. լուծում չստացած վիճաբանությանը. «...ըստ չորրորդ բաժանման ընդ խկական գործոցն ի մասին բազմախանային կամ քարվանսարային, որ ապա փոխեալ է յեկեղեցի, զորմէ վիճեն կոլէժսկի թէզիստրատոր Սիմէոնն Մէլիսեան, Պաւէլ Խիթարեան և ժառանգն Յովսէփ Դժանկէլեանի Սոֆիայն Վաղամեանց, ի հրամանէ Սինկղիտոսի տեսանի թէ, կառավարիչ Սինկղիտոսն լուեալ զտոմսակազիր յիշեալ գործոյն, ի գետ թէ, ընդ կալուածագրոյն յօրինելոյ ի հոկտեմբեր 1828 ամի ի ներկայութեամբ վկայից: Ախալցիխաբնակ Առիֆբէգ Չախալօղլին, Հասան բէգն և Հիւսէյին բէգն վաճառեալ են ախալցիխաբնակ Յովսէփ Դժանկէլեանին, Սիմէոն Մէփիսեանին և Պաւէլ Մէփիսեանին 1500 արծաթոյ՝ զգտանեցեալ յԱխալցիխայ քաղաքի մերձ ամրոցին պանդոկն կամ քարվանսարայն, որ պարունակէ յինքեան զ48 կրպակ: Հուկ յետոյ յամսեանն յունվարի 1833 ամի Դժանկէլեանն միւսքն դիմեալ են առ նախկին կուսակալն Վրաստանի՝ բարօն Րօզէնն՝ յաղագս դարձուցանելոյ նոցա յիշեալ բազմախանայն, որ խլեալ զոլով ի նոցանէ փոխեալ է ՚ի Հայոց եկեղեցի, Հայոց հոգևորականութիւնն նոյնպէս յիւրմէ կողմանէ վիճէր զյիշեալ շինուածոյն այնու հիմնաւորութեամբ, թէ յորժամ դարձուցաւ այն յեկեղեցի, նոյնն արարեալ է զինչ ինչ նորոգութիւն ի վերայ այնորիկ, և դարձուցեալ է զյիշեալ շինութիւն յեկեղեցի Աստուածապաշտութեան ընդ բանաւոր թոյլատուութեան անցեալ կառավարողի Ախալցիխայի սահմանաց պօլկովնիկ Դրէմէրի...»[1034]: Սույն հարցը մինչև 1851 թ. անարդյունք լավել է տարբեր ատյաններում: Խնդրի վերջնական լուծման համար էլ նշյալ գրությամբ Վրաստանի և Իմերեթիայի կոնսիստորիան ակնկալում էր Սբ. Էջմիածնի սինոդի աջակցությունը:

1851 թ. Ախալցխայում արձանագրվել է 9 եկեղեցի, այդ թվում՝ հայ առաքելական՝ 4, հայ կաթողիկե՝ 2, ուղղափառ՝ 2, հռոմեական կաթողիկե՝ 1[1035]:

Ինչպես վկայված է 1854 թ. մարտի 24-ին քաղաքի հոգևոր կառավարության կազմած հայտարարագրում, 1853 թ. նոյեմբերին թուրքական բանակի՝ Ախալցխայի գավառ ներխուժելու արդյունքում կողոպտվել և ավերվել էին 9 գյուղերի (վավերագրում գյուղերի անունները չեն հիշված) ծխական եկեղեցիները. «...կողոպտելոյ բարբարոս զօրացն օսմանեան ի ժամանակս տալոյ նոցա զպատերազմ ընդ խաչակիր զօրացն մեծազօր կայսերութեան ռուսաց բանդեալ զսեղանս և զամենայն շինութիւնս այնցիկ եկեղեցեաց և պատառեալ զպատկերս սրբոց արարեալ էին զոմանս ի նոցանէ բնակարան երիվարաց...»[1036]:

1867 թ. Վրաստանի և Իմերեթի Հայոց թեմի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսը Ամենայն Հայոց Գևորգ Դ կաթողիկոսին է ներկայացրել թեմի վանքերի, եկեղեցիների, հոգևորականների, ժողովըրդի, դպրոցների, աշակերտների ցուցակը՝ կազմված նշյալ թվականի փետրվարի 24-ին, ըստ որի՝ «ՅԱխլցխայ և ի վիճակին նորին» կար 78 եկեղեցի, 4363 տուն՝ 36441 շունչ՝ 18995 ար. և 17446

1025 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3316, թ. 3:
1026 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3316, թ. 4:
1027 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3316, թ. 5:
1028 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3316, թ. 6:
1029 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67:
1030 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, թ. 76-77:
1031 ՎԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:
1032 "Кавказский календарь на 1850 г.", с. 38.
1033 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 2775, թ. 1:
1034 Նույն տեղում:
1035 **Персваленко В.**, նշվ. հոդվ., էջ 285:
1036 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 306, թ. 19:

իգ. բնակիչ, 2 ուսումնարան՝ 10 ուսուցչով և 273 աշակերտով[1037]:

Հայտնի է, որ Ախալցխան ևս մեկ եկեղեցով հավելելու նպատակով 1877 թ. հուլիսին 95 տարեկան հասակում վախճանված ախալցխացի մեծահարուստ Հարություն աղա Մութաֆյանը 14.000 ռուբլի էր կտակել[1038]: 1884 թ. Հ. Մութաֆյանի ժառանգները կարծես թե ձեռնամուխ էին եղել իրենց հոր ցանկության իրագործմանը. «...Մութաֆեան հանգուցեալ Յարութիւն աղայի ժառանգները այս տարի պարիսպ քաշեցին այն գետնի վրայ, ուր, ի հաշիւ հանգուցելոյն կտակած գումարին, եկեղեցի պէտք է շինուի: ...Յարութիւն աղայի ժառանգները մտադիր են եկեղեցւոյ գաւթումը մի ծխական դպրոց ևս հիմնել կտակած փողի տոկոսով, որ քանի տարուց ի վեր բարդուում է»[1039]: Սույն ծրագիրը մնում է անկատար:

1883 թ. Ախալցխան ուներ հայ առաքելական 6 եկեղեցի՝ 2-ը՝ մայր կամ կաթողիկե, 2-ը՝ ծխական և 2-ը՝ գերեզմանատան[1040]:

1884 թ. այլ տեղեկագիր, անտեսելով գերեզմանատան եկեղեցիները, արձանագրել է հայ առաքելական միայն 4 եկեղեցիների գոյությունը. «Հայք ունին չորս եկեղեցի – ս. Փրկիչ՝ որ և աւագ եկեղեցին, սրբատաշ քարով և հոյակապ, ս. Վարդանանց (նոր քաղաքամասում), ս. Լուսաւորիչ և ս. Ստեփաննոս (վերջինս ուխտատեղի անշուք փայտաշէն)...»[1041]:

1901 թ. ևս Ախալցխայում հիշվում են 4 եկեղեցիներ[1042]:

1905 թ. դարձյալ հիշվում են հայ առաքելական միևնույն 4 եկեղեցիները (Սբ. Փրկիչ, Սբ. Վարդանանց զորավարաց, Սբ. Ստեփանոս և Սբ. Լուսավորիչ)[1043]:

**Սբ. Աստվածածին (Սբ. Աստվածամոր) եկեղեցի.** ի սկզբանե հայ առաքելական, սակայն ԺԸ դարում հայ կաթողիկե համայնքին անցած, ապա 1830-ական թվականներից կրկին հայ առաքելականներին վերադարձված եկեղեցին կառուցվել է 1356 թ.: Գտնվում էր Երևման Սբ. Խաչ եկեղեցուց փոքր-ինչ ավելի ցած. «Մի քիչ ավելի ներքև Աստվածածնի կաթոլիկ եկեղեցին է, որը պարզապես մի սովորական տուն է: Կառուցվել է 1356 թ. և վերանորոգվել 1442 թ.»[1044]:

Եկեղեցում ստեղծված ձեռագրերից մեզ է հասել 1465-1473 թվականների միջակայքում գրված մի բժշկարան (հիշատակարանը տե՛ս սույն աշխ., էջ 121)[1045]:

Դարերի ընդմիջումից հետո եկեղեցին անփոփոխ՝ Սբ. Աստվածամոր անվամբ հիշվում է 1837 թ. մարտին[1046]:

1838-1839 թվականներին քաղաքում բռնկված ժանտախտի ժամանակ եկեղեցին վերածվել է ամբարի և այդպես մնացել մինչև 1843 թ. մայիս ամիսը. «...21-ին ներկայ ամսոյ դատարկեալ զվերին Սբ. Աստուածածնայ եկեղեցին մեր արարեալ յամբարանոց ի ժամանակս ժանտախտի ծագելոյ յԱխլձխոյ յանձնեաց կառավարութիւնս առնել ի նմին զաստուածապաշտութիւն...»[1047]:

*Քահանա.* 1843 թ. փետրվարին Սբ. Աստվածածին եկեղեցու համար քահանա է ձեռնադրվել *Արքահամ Հովհաննիսյանը*[1048]:

*Եկեղեցական իրեր.* 1837 թ. մարտի 20-ին կազմվել է եկեղեցական 95 իրերի ցուցակը. այդ թվում եղել են նաև ծիսական 7 գիրք (երկու Հայսմավուրք, երկու Չայնքաղ շարական, մեկ Ատենի ժամագիրք, մեկ Ճաշոց, մեկ Յուղաբերից ավետարան)[1049]:

*Վիմագրեր.* ներկայումս իսպառ ոչնչացված եկեղեցու որմերին պահպանված մեծարժեք վիմագրերի վերծանությամբ նախկինում զբաղվել է միայն ֆրանսիացի հետազոտող Մ. Բրոսեն.

Սբ. Աստվածածնի եկեղեցու արևելյան պատին.

*Աբրահամ աբեղայ կանգեցի եկեղեցի. Ա(ստուա)ծ ողորմի:*

*Հրատ.* **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 142:

Սբ. Աստվածածնի եկեղեցու նույն պատին. «Ավելի ներքև, մարմարի սալ է՝ ձախ կողմում քայքայված».

*...ազ Շարասլադին շինեաց քե|...ցի թվ ՊԵ (1356) նոր շինեաց ագեստ | ...վ Շրասլաղն. թվ ՊՂԱ (1442):*

*Հրատ.* **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 142:

*Ծանոթ.* անձնանվան խնդրում վերծանությունը սխալ է թվում:

**Սբ. Քառասունք եկեղեցի.** ներկայումս մեզ անհայտ եկեղեցու միակ վկայությունն առնչվում է 1396 թ. ոմն Ամիր Սարգսի՝ եկեղեցուն նվիրաբերած Ավետարանին, որի հիշատակարանում նշված են եկեղեցու և երկու քահանաների անունները. «...ընծայեցաք զսայ ի սուրբ Քառասունքն, ի յԱխալցխու, ի թագաւորութեան Գէորգին, ի պարոնութեան աթապակ Իւանին, ի կաթողիկոսութեան տեառն

1037 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության. Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեճեան կաթողիկոս Ամենայն Հայոց (1866-1882), գիրք ԺԱ, Երեւան, 2004, էջ 81:

1038 «Մշակ», 1877, № 52, էջ 3: Տե՛ս նաև «Կոչնակ», 1914, № 7, էջ 164:

1039 «Արձագանք», 1884, № 61, էջ 4:

1040 ՀԱԳ, ֆ. 2, ց. 2, գ. 10134:

1041 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:

1042 ՀԱԳ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 133-134:

1043 ՀԱԳ, ֆ. 35, ց. 1, գ. 148, թ. 21-22:

1044 **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 140: Տե՛ս նաև **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 61:

1045 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Բ, Երևան, 1958, էջ 350 (այսուհետ՝ ԺԵԲ, համապատասխան էջերով):

1046 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 109:

1047 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 69, թ. 1:

1048 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 1158, թ. 15:

1049 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 109:

Կարապետին, ի հայրապետութեան ի տէր Յակոբսին և տէր Ներսէսին, ի թվ Հայոց ՊԽԵ (1396): Զոր տէր աստուած վայելել տացէ քահանայիցն Տիրատրոյ և Սարգսին, որ բազում աշխատանք կրեցին ի սուրբ Քառասունքն...»[1050]:

**Սբ. Հրեշտակապետաց եկեղեցի.** Ներկայումս մեզ անհայտ եկեղեցու միակ հիշատակությանը հանդիպում ենք 1438 թ. գրիչ Սարգիս վարդապետի ձեռքով տեղում ստեղծված ձեռագիր Ավետարանի հիշատակարանում. «...գրեցաւ սուրբ աւետարանս ի Վրացստունս ...յերկիրս Ախալցխոյ, ի վանքս պարոն Յակոբայ, ի մեծ թուիս Հայոց ՊՁԷ (1438), ընդ հովանեաւ սուրբ Հրեշտակապետին...»[1051]:

**Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի.** Ներկայումս մեզ անհայտ եկեղեցու միակ հիշատակությանը հանդիպում ենք 1464 թ. Տիրացու քահանայի թոռ և Հովհաննես քահանայի որդի Տիրացու ավագերեցի եկեղեցուն կատարված նվիրաբերության կապակցությամբ. «...Տիրացու աւաքէրէցս յԱխլցխոյ, ետու զսուրբ Աւետարանս և զարծաթի սկին իմ յիշատակ ի սուրբ Գրիգոր եկեղեցին...»[1052]:

**Զարեհնու Սբ. Նշան (Սբ. Վարդանանց) եկեղեցի.** հայոց միջնադարյան եկեղեցիներից էր: Հիմնադրման ժամանակը հայտնի չէ: Առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է 1575 թ. «...ՌԻԴ (1575) թուականին ոմն մահտեսի Մկրտիչ ուխտի է գալիս Ախլցխայի Ս. Նշանի դուռը, վերականգնում է նորա խորանը եւ այդ առթիւ թողնում արձանագրութիւն՝ աղերսելով պատարագի մէջ յիշել իրեն»[1053]:

Եկեղեցու հերթական նորոգությունը տեղի է ունեցել 1619 թ., քանի որ «էր աւերեալ ի անօրինաց շատ ժամանակաւ»: Այս տեղեկությունը գտնում ենք 1445 թ. ստեղծված ձեռագրի՝ 1619 թ. հավելած հիշատակարանում. «Եւ նորոգեաց ժամատուն Ս. Նշանիս, որ էր աւերեալ ի անօրինաց շատ ժամանակաւ...»[1054]:

Ի դեպ, նույն՝ 1619 թ., եկեղեցուն նվիրաբերվել են «...Բ (2) խաչ, Ա (1) անձն, լաւ, ոսկէգործ շուրջառ իւր զգեստով, Ա (1) ձնձղէք, Ա (1) բեմի ծածկոց, Ա (1) բուրվառ»[1055]:

Շուրջ երկուսուկես դար անց Զարեհնու Սբ. Նշան հնամենի եկեղեցին այն աստիճան էր քայքայվել և անվերականգնելիորեն ավերակ դարձել, որ հերթական վերաշինության հեղինակները ճիշտ են համարում հնի տեղում բոլորովին նոր եկեղեցի կառուցել: Հատկանշական է, որ ԺԹ դարում եկեղեցուց փոխանցված Սբ. Նշան անունով արդեն առավելապես հայտնի էր այն բլուրը, որտեղ նշմարվել են եկեղեցու հետքերը. «Օծեալ եկեղեցւոյ կոչեալ է ի Սուրբ Նշան, [Հ]ընումն կոչեալ էր ի լեառն Սուրբ Նշան...»[1056] կամ «Ախլցխա քաղաքին մէջ Սուրբ Նշան անուանեալ տեղւոյն վերայ՝ սկսուած է կառուցուիլ նոր եկեղեցի յանուն Սրբոյն Վարդանանց զօրավարաց...»[1057]:

Կառուցվելիք եկեղեցու թույլտվությունը, նախագծի հաստատմամբ հանդերձ, տրվում է 1861 թ.[1058]:

Շինարարության ողջ ծախսը ստանձնում է Ախալցխայի պատվավոր քաղաքացի Վարդան Վարդանյանցը. «...արդեամբք և ծախիւք ազգասէր և բարեպաշտ աստիճանաւոր իշխանին՝ Մահտեսի Վարդանայ Վարդանեանց, որի խորհրդովն ևս նոյն քաղաքի Առաջնորդական Փոխանորդ արժանապատիւ Գրիգոր վարդապետ Սագինեանց՝ խնդրեց և ստացաւ Սրբոյն Էջմիածնի Սրբազան սինոդի բարեհաճութիւնը առ այն՝ զի նորակառոյց եկեղեցւոյ եկամուտը տրուի տեղային Ուսումնարանին՝ աղքատ տղայոց պակասութիւնները լցուցանելու համար»[1059]:

Թեմական առաջնորդի գլխավորությամբ և առաքելադավան հոգևորականության մասնակցությամբ կատարված հիմնարկեքի հանդեսին ներկա են եղել նաև հայ կաթոլիկ, վրացի և ռուս հոգևորականներ, հասարակության հայտնի դեմքեր: Աշխատանքները բուռն թափով սկսվում են 1862 թ. գարնան սկզբին. «...նորոգ կառուցանելի Սուրբ Նշան անուանեալ տեղւոյն յանուն Սրբոց Վարդանանց զօրավարաց եկեղեցւոյ շինութիւնը, որ սկզբնաւորուեցաւ ի 5-ն մարտի սոյն 1862 ամի արդեամբ և ծախիւք ազգասէր և բարեպաշտ աստիճանաւոր իշխանին մահտեսի Վարդանայ Վարդանեանց ի խնդրոյ սրբազան առաջնորդական փոխանորդի քաղաքիս տեառն Գրիգոր վարդապետի

1050 ԺԴ, էջ 614:
1051 ԺԵԱ, էջ 486:
1052 ԺԵԲ, էջ 227:
1053 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 51:
1054 ԺԷԱ, էջ 687:
1055 Նույն տեղում:

1056 Ցուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց, «Բանբեր Մատենադարանի», հ. 13, Երևան, 1980, էջ 331:
1057 «Համբաւաբեր Ռուսիոյ», 1862, № 27, էջ 3:
1058 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6228, թ. 33-34:
1059 «Համբաւաբեր Ռուսիոյ», 1862, № 27, էջ 3: Նույնի մասին վկայվել է նաև. «Տարէց տարի աւելի զգալի եղաւ յիշեալ արուարձանումը նոր եկեղեցւոյ պէտքը, եւ հոգեւոր իշխանութեան այս մասին հնարած զանազան նախագիծներից ո՛չ մինը չյաջողեցաւ, նիւթական միջոցներ չունենալու պատճառաւ: Այս վիճակի մէջ ամէնքը մնում էին մի ընծայաբերի, որ ոգևորեալ բարեպաշտութեամբ կատարէր այդ մեծ գործը: Այսպիսի նախանձաւոր քրիստոնէական բարեպաշտութեան ըստ հրաւիրանաց սրբազան յաջորդի գտնուեցաւ բարեպաշտօն Ախլցխայ քաղաքացի Արզրումի գաղթականներից պրապօրշչիկ Վարդան Վարդանեանցը, որ իւր սեպհական ծախքովը կառոյց սրբատաշ քարով մի հոյակապ եւ գեղեցիկ եկեղեցի սուրբ Նշան անուանեալ ուխտատեղւոյ վրայ, որոյ շինութիւնը երկու տարիից աւելի քաշեց. նրա բարձրութիւնը է 5, երկարութիւնը 7 ու կէս, լայնութիւնը 5 ու կէս կանգուն եւ պատերի հաստութիւնը 5 թզաչափ: Այդ եկեղեցւոյ շինողի, բոլոր հայ հասարակութեան ցանկութեամբ եւ յաջորդ Գրիգոր եպիսկոպոսի միջնորդութեամբ՝ Էջմիածնի Սինոդոսը վճռեց, որ նորա բոլոր արդիւնքը պէտք ածուի Ախլցխոյ Հայոց ուսումնարանի աղքատ աշակերտաց համար» (**Հազարապետեանց Ի.**, նշվ. հոդվ., էջ 148):



**Ախալցխա. Սբ. Վարդանանց եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից (լուս.՝ 1960-ական թթ.)**

Սազինեան այս հետևեալ գովելի պատճառներուն համար: ...սրբազան առաջնորդը կամեցաւ այն աւերակ տեղին վրա տաճար մը կառուցանել (ինչպէս աւանդութեամբ կըսեն, թէ առեն օք հոն տեղ եկեղեցի կայ եղեր...»[1060]:

Շինարարական աշխատանքները տևում են երկու տարուց քիչ ավելի և ավարտվում 1864 թ.: Հանդիսավոր բացումը տեղի է ունենում 1864 թ. փետրըվարի 27-ին. «Նոր եկեղեցւոյ նաւակատեաց հանդէսը նշանակած էր կատարել փետրվարի 27-ին, այսինքն՝ բարեկենդանի հինգշաբթի օրը, երբ Հայոց եկեղեցին սրբոց Վարդանանց տօնն է կատարում. եկեղեցւոյ նաւակատեաց երեկոյին, Ախլցխոյ յաջորդ Գրիգոր եպիսկոպոսը զգեստաւորեալ եկեղեցւոյ բոլոր ուխտի հետ՝ թափօրական հանդիսիւ դուրս գալով սուրբ Փրկիչ եկեղեցիից, դիմեց դէպի նորակառոյց եկեղեցին:

Հոգևորականաց դասակարգութեան ետևից գնում էին Ախլցխոյ բոլոր բնակիչքը եւ դրսից այդ հանդէսի պատճառաւ եկողները. արհեստաւորքը՝ իրանց դրօշակներով ողջ ճանապարհի երկու կողմը կանգնած հիանալի տեսարան էին կազմում, արեգական ճաճանչները՝ այս տեսարանը աւելի շքեղացնելու համար կարմրագոյն ամպերից փայլում էին ոսկեղէն եւ արծաթեղէն սրբազան անօթների վրայ. զանգակների հնչիւնները խառնուում էին բազմաթիւ դպրաց ներդաշնակ երգերի հետ. թափօրի անցանելու ճանապարհի երկու կողմի տանիքները եւ պատուհանները լցուած էին բազմութեամբ կանանց ու մանկանց, որոնք զարդարուած էին ըստ իւրեանց կարողութեան: Հասանելով նոր եկեղեցին, հոգևորականաց դասը կատարեց երեկոյան ժամերգութիւնը եւ նախատօնակ յառաջիկայ հանդէսին: Իսկ փետրվարի 27-ին առաւօտեան ժամը տասին, ի ներկայութեան բոլոր քաղաքական եւ զինուորական աստիճանաւորաց, որոնց հրաւիրել էր եկեղեցւոյ շինող պն. Վարդանեանցը, սրբազան Գրիգոր եպիսկոպոսը հոգևորականց դասու հետ կատարեց եկեղեցւոյ օրհնութեան եւ օծութեան հանդէսը եւ դրոշմեց զայն յանուն սրբոյ զօրավարին եւ մեծի նահատակին Վարդանայ...:

Հոգևորական հանդէսը կատարելից յետոյ Արզերումնու գաղթականներից Ախլցխոյ քաղաքի պրիստաւ պօտպօրուչիկ Իսահակ Հազարապետեանցը ռուս եւ հայոց լեզուաւ ասաց յետագայ ճառը:

«Ողորմած տեա՛րք.

Այս տաճարս, որ սրբազնացեալ նուիրեցաւ յանուն Աստուծոյ, հիմնեալ ի վերայ լերին, որ ի բազմաց հետէ իւրովք կրօնական աւանդութեամբ էր հասարակաց ուխտատեղի...

1060 «Մեղու Հայաստանի», 1862, № 27, էջ 107:











Ախալցխա. Սբ. Վարդանանց եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից, հյուսիս-արևելքից, հատված նույն կողմից և Ախալցխայի պատվավոր քաղաքացի Վարդան Վարդանյանցի և կողակցի գերեզմանաքարերը (լուս.՝ 1988 թ.):







**Ախալցխա. Սբ. Վարդանանց եկեղեցու հատակագիծը (նախագծի բնօրինակը պահվում է ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 125, թ. 55)։**

Յետ արժանայիշատակ պատերազմին ի 1829 ամի, ի թուոյ 90 հազար հայազգեաց, գաղթելոյ ի Կարնոյ, բազումք բնակեցան յԱխլցխայ եւ ընդ հովանեաւ հզօր տէրութեան Ռուսաց գտին զանդորրութիւն եւ բարօրրութիւն, զազատութիւն կատարելոյ զամենայն կրօնական ծէսս, զընդարձակ ասպարէզ ծաղկեցուցանելոյ զվաճառականութիւն եւ զարհեստս, եւ յայնմ իսկ ժամանակի բերին ընդ ինքեանս զկրօնական աւանդ յայս նուիրական լեառն:



Ախալցխա. Սբ. Վարդանանց եկեղեցու հատակագծերն ըստ նախագծի (1861 թ.) և ըստ իրական կառույցի (չափ.՝ Ա. Յակոբյանի)

Ոչ հեռի յայսմ տեղւոջէ, ուր կամք մեք այժմ, ի 1853 ամի զինուորութիւն Ռուսաց կանգնեաց զփառաւոր յաղթանակ մեծ ի գիւղն Ապ ի վերայ Տաճկաց, որք բազմութեամբ զօրաց բանակեալ էին սկսեալ յԱպ գեղջէ ցՍուխլիս: Յայնմ իսկ ժամանակի Հայք Ախլցխոյ ըստ սեպուհ հայկական հաւատարմութեան իւրեանց առ գահն կայսեր ամենայն Ռուսաց կազմեցին աստէն զզօրաւոր զինուորութիւն:



Ախալցխա. Սբ. Վարդանանց եկեղեցու թմբուկն ու հարավ-արևմըտյան ծավալները ներքուստ (լուս.՝ 2007 թ.)

Այժմ այս տեղի կերպարանափոխ եղեւ, վայելչացաւ եւ գերազանցեալ գտաւ յաչս մեր, կառուցմամբ այսր գեղեցիկ տաճարի եւ եղև մեզ վայր սրբութեան եւ յիշատակի. սերունդք մեր յայսմ տեղւոջ անկեալ ի ծունկս ասելոց են, աստէն նոքա լիուլի հաւատարմութեամբ ի յարատեւութիւն եւ ի սեպհականութիւն վաստակոց իւրեանց ընդ պաշտպա-



**Ախալցխա. Սբ. Վարդան զորավար (Սբ. Վարդանանց) եկեղեցու արևելյան ճակատի շինարարական արձանագրությունը**

նութեամբ արդարադատ կայսերն Ռուսաց հիմնեցին զնոր քաղաք, սկիզբն արարին տնտեսական պիտոյից, ձեռն եառուն յերկրագործութիւն, յայգեգործութիւն, ի վաճառականութիւն եւ յամենայն տեսակ արհեստս, եւ վասն ամենայն սեպհականութեանց իւրեանց, զոր շահեալ էին արդար վաստակօք, նոքա յայսմ տեղւոջ մատուցեալ են...: ...տաճարս սրբոյն Վարդանայ, լինելով յիշատակարան նախկին վիճակի Ախլցխոյ եւ ի նմա բնակեալ հայազգի գաղթականաց Կարնոյ, վկայելոց է զապագայ յառաջադիմութեննէ այսր քաղաքի, եւ զզարգացմանէ քաղաքական կենաց նորա...»[1061]:

1957 թ. մարտին ԽՍՀՄ նախարարների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վ. Ի. Գոստևին հղած զեկուցագրում Վրաստանում գործող նույն խորհրդի լիազորված անձ Շալուտաշվիլին նշել է, որ Ախալցխայի «Հայկական Սբ. Նշան եկեղեցին կառուցվել է 1840 թ.: Եկեղեցական շինությունը զբաղեցնում է 107 քառակուսի մետր տարածք: Եկեղեցին փակելու պահից մինչև այսօր օգտագործվում է որպես շրջանային դիվան: 1956 թ. Շրջանային գործկոմը եկեղեցու շենքի ներսում դիվանական գործերի համար տեղադրել է հատուկ երկհարկանի փայտե դարակներ, ինչպես նաև շրջանային դիվանի աշխատակիցների համար կառուցել է աշխատանքային սենյակ: Այդ ամբողջի համար ծախսվել է 15 հազար ռուբլի»[1062]:

1970-ական թվականներին շենքը մասնակի վերանորոգվել է, որի արդյունքում անհետացել է հյուսիսային մուտքի ճակտոնապատի (տիմպանի) արձանագրությունը[1063]:

Խորհրդային տարիներին եկեղեցին օգտագործվել է տարբեր նպատակներով: Նախ այն ծառայել է որպես աղի պահեստ[1064], ապա դիվան, իսկ

1061 **Հազարապետեանց Ի.**, նշվ. հոդվ., էջ 149: Նաև «Ախլցխայ, 27 փետրվարի 1864 ամի: Հայոց եկեղեցւոյ հանդիսաւոր ծէսէրի մէջ առաջին տեղն ունի նորակառոյց եկեղեցւոյ օծումը...» (**Հազարապետեանց Ի.**, նշվ. հոդվ., էջ 147):

1062 «ԲՀԱ», 2001, № 1, էջ 91 (բնագրում՝ "Армянская церковь "Сурб Нишан" построена в 1840 году. Площадь церковного здания составляет 107 квадратных метров. С момента закрытия церкви, здание по настоящее время используется под районный архив. В 1956 году Райисполкомом внутри церковного здания устроены специальные двухэтажные деревянные полки для хранения архивных дел, а также построена рабочая комната для сотрудников райархива. На ве это израсходовано 15 тысяч рублей"):

1063 **Карапетян С.**, **Марутян А.**, **Наатакян Р.**, Церковь Сурб Вардананц (Сурб Ншан) города Ахалцха (документы), «ԼՀԳ», 1990, № 5, էջ 85:

1064 Նշվ. հոդվ., էջ 85:



**Ախալցխա. Սբ. Վարդանանց եկեղեցու հարավային և հյուսիսային ճակատներից բացված մուտքերը և արձանագրությունները. հյուսիսային մուտքինը ոչնչացվել է 1970-ական թվականներին իրականացված մասնակի նորոգման ժամանակ (լուս.՝ 1988 թ.)**

1980-ական թվականներին՝ Ժողովուրդների բարեկամության թանգարան[1065]:

*Ճարտարապետություն.* եկեղեցու ճարտարապետական նկարագրին անդրադարձած այցելուն ԺԹ դարավերջին նշել է. «...վերևում՝ բլրի վրա, բերդի հանդեպ Էջմիածնի տաճարի ոճով հայկական նոր եկեղեցին է՝ ճակտոնների առանցքներին զանգակատներով...»[1066]:

Եկեղեցին ունի դեռևս զարգացած միջնադարում հայ եկեղեցական ճարտարապետության մեջ լայն տարածում գտած արտաքուստ ուղղանկյուն հատակագծով եռանավ կենտրոնագմբեթ հորինվածք: Մուտքերը երեքն են՝ բացված մեկական՝ հյուսիսային, հարավային և արևմտյան ճակատներից: Սրածայր վեղարով ավարտվող վեցանիստ թմբուկը ներքուստ պահում են երկու զույգ բոլորաձև կտրվածքով սյուների վրա հենված թաղակիր կամարները: Արտաքուստ կառուցված է համակ սրբատաշ քարերով, ներքուստ սվաղված է: Արևմտյան ճակատին կից է առաջին և երկրորդ հարկերում քառասյուն, իսկ երրորդում՝ վեց սյուների վրա կանգնած զանգակատունը: Արտաքին չափերն են՝ 15,35 x 10,83 մ:

*Վիմագրեր.* տեղում Սբ. Նշան նախնական եկեղեցուն պատկանող վիմագրեր գոյություն չունեն: Պահպանվածները վերաբերում են նոր եկեղեցուն և տեղեկացնում են եկեղեցու կառուցման մանրամասները.

1065 Նույն տեղում:

1066 “Материалы по археологии Кавказа”, выпуск IV, с. 75 (բնագրում՝ “...наверху на холму, над крепостью, новая армянская церковь в стиле Эчмиадзинскаго храма с пролетными боковыми колоколенками...”).

Սբ. Նշան (Սբ. Վարդան զորավար) եկեղեցի. արևելյան ճակատին՝ 9 տող.

*Տաճարս տէրունեան պանծացի յանուն սրբոց Վարդանանց, | զոր կանգնեաց իւրով սեփական ծախիւք Վարդանն Վարդանեանց | անմահ յիշատակ վասըն իւր հոգւոյն եւ իւր սիրելեաց. | հօրն՝ Աղապապայ, մօրըն՝ Թագուհւոյ, ազնիւ ծընողաց, | կնոջըն՝ Մարեամայ, եղբօրն՝ Ստեփանայ, քեռըն՝ Փեփրոնեայ, | տոհմական ազատ որդւոյն՝ Համազասպայ, դստեր՝ Գայիեանեայ, | հարսին՝ Էրանհւոյն եւ հօրեղբօրն իւր՝ մահտեսի Յակոբայ, | թոռանցն նորաբույս մեծին՝ Հմայեկայ, փոքրին՝ Վարդանայ: | 1861 յամէ սկսեալ եւ օծեալ 1863 եւ աւարտեալ 1868 թ.:*

*Հրատ.* **Карапетян С.**, **Марутян А.**, **Наатакян Р.**, նշվ. հոդվ., էջ 84:

*Ծանոթ.* վիմագիրն ավելի հեշտ ընթեռնելի դարձնելու նպատակով 2002 թ. տեղի հայերը սև ներկով շեշտել են տառերի փորվածքները: Սույն փաստին անդրադարձած պատմական գիտությունների դր-պրոֆ. ոմն Թինա Իվելաշվիլին, սակայն, հնչեցրել է ահազանգ այն մասին, թե իբր Մարդա թաղամասում գտնվող ուղղափառ եկեղեցու արևելյան ճակատին 2002 թ. հանկարծ հայտնվել է ներկով սևացրած 9 տողանոց հայերեն արձանագրություն: Հեղինակը նշել է նաև, որ «Գաղտնի աղբյուրներից մեզ հայտնի դարձավ, որ այդ գրությունը փորագրել են «Ջավախք» ոչ պաշտոնական կազմակերպության անդամները՝ անմիջականորեն Երևանից տրված ցուցումներով» (մանրամասն տե՛ս “ლიტერატურა და ხელოვნება”, 2004, № 2): Ինչպես ասում են, մեկնաբանությունները ավելորդ են:

Արձանագրություն, 9 տող.

*Բարձրագոյն տեսչու(թեամ)բ տ(եա)ռն զորու-թե(ա)նց | կանգնեցաւ այս տաճար սրբ(ո)ց Վարդանանց | յիշ(ա)տ(ա)կ պատուանուն տոհմին Վարդանեանց | քրտնաջան վաստակօք նոյն խսկ Վարդանեանց, | որոց կայ հուպ հանգչիլ յուսով գերազանց | ընդ ս(ուր)բ եկեղեցաւս այս Հայաստանեայց | ի հայրապետու(թ)ե(ան) տ(եա)ռն Մատթէի առաջնոյ ընտիր կ(ա)թուղիկոսի | եւ փոխանորդն տէր Գրիգորիս եպիսկոպոսի Սագինեան տոհմի:*

*Հրատ.* **Карапетян С.**, **Марутян А.**, **Наатакян Р.**, նշվ. հոդվ., էջ 85:

*Եկեղեցու պատկանելությունը վիճարկող տեսակետ.* հակառակ պատմական բազում անվիճելի փաստերի առկայության՝ վերջին տարիներին որոշ վրացի հեղինակներ, առաջ բերելով նորաթուխ «փաստարկներ», փորձում են կասկածի տակ առնել Սբ. Նշան եկեղեցու ազգային պատկանելության հարցը: Սկսելով նրանից, որ եկեղեցուն տրվել է ստահոդ, այն է՝ Իովանե Նաթլիսմցեմելի (Հովհաննես Մկրտիչ) նոր անվանում, ապա նաև իբր միայն նորօրյա փորագրվածք, ըստ այդմ կեղծիք համարելով եկեղեցու արևելյան ճակատի ընդարձակ արձանագրությունը (անկարող ընկալելու վիմագրի առավել քան պարզ շարադրանքը)՝ առանց որևէ փաստարկի եկեղեցին հայտարարվել է վրացական[1067]: Սակայն կան նաև վրացի այնպիսի հեղինակներ, որոնք ի զորու են հաշվի նստել պատմական ճշմարտության հետ: Այսպես, օրինակ, Վրաստանի խորհրդարանում երկրի հանրային պաշտպան (օմբուդսմեն) Սոզար Սուբարին, լինելով Ախալցխայում, նշել է. «...տեսա Սբ. Նշան եկեղեցին, որեւէ կասկած չունեմ, որ դա հայկական եկեղեցի է ե՛ւ ճարտարապետությամբ, ե՛ւ միջավայրով: Գիտեմ նաև, որ կան պատմական տվյալներ այդ եկեղեցու մասին: Ամեն դեպքում, թող հանձնաժողովը աշխատի, իսկ թե ում է պատկանել Սբ. Նշան եկեղեցին, կարելի է պարզել մեկ շաբաթում»[1068]:

*Սբ. Վարդանանց եկեղեցու քահանաներ և երեցփոխ.* 1864 թ. Սբ. Վարդան եկեղեցու քահանա է հիշվում Հովհաննես Առվանյանցը[1069]:

1879 թ. հունվարի 13-ին Սբ. Վարդանանց եկեղեցու համար քահանա է ձեռնադրվել սարկավագ Տիգրան Միսակյանցը, որը «...զարդ կը լինի յիշեալ եկեղեցւոյն և մխիթարութիւն Մարտայ թաղի ժողովրդեան, ինչպէս եղել է 10 տարի Վարդանեան դպրոցին, որի պահպանութեան իւր կարողութեան չափ միշտ նպաստել է»[1070]:

1904 թ. եկեղեցու քահանաներ են հիշվում Գևորգ Տեր-Կարապետյան Միսակյանցը (ծնվ. 1847 թ., ձեռն. քհն. 1879 թ.) և Մինաս Հարությունյան Ազնավուրյանցը (ծնվ. 1858 թ., ձեռն. քհն. 1897 թ. հոկտեմբերի 11-ին)[1071]:

1888 թ. եկեղեցու երեցփոխն էր Ալեքսանդր Բոռակչյանցը[1072]:

*Ջարեհնու Սբ. Նշան (Սբ. Վարդանանց) եկեղեցու կալվածքները.* 1866 թ. մայիսի 23-ին և 1875 թ. փետրվարի 15-ին կազմված ուշագրավ կալվածագուցակներից երևում է, որ Սբ. Նշան եկեղեցու սեփականություն դարձած մի շարք հողամասեր և կառույցներ ազատված էին տնահարկ վճարելու պարտավորությունից: Դրանք էին. «Երկու կրպակներ. պատկանում են Հայոց եկեղեցւոյն յանուն սրբոց Զօրավարաց Վարդանանց: Ընծայած է պրապօրշչիկ Վարդան Վարդանեանցը:

Եկեղեցւոյ տեղ. պատկանում է եկեղեցւոյն յանուն ս. Վարդանանց. տարածութիւնն է երկարութեամբ 30 սաժէն, իսկ լայնութեամբ 35 սաժէն. նորա վերայ սրբատաշ քարից կառուցած է սուրբ եկեղեցին և ուսումնարանը 1864 թուականին:

---

1067 “ალია”, 2003, № 4, էջ 14: Յուրացման նկրտումներն իրենց պատասխանն են ստացել հայ լրատվության էջերում (**Казинян Арис**, Реставрация, или надпись Вардананц, “Голос Армении”, 22.02.2003, էջ 3: **Կարապետյան Ս.**, Ձեր դոկտոր-պրոֆեսոր ասողի..., «Հայոց աշխարհ», 8.02.-2006, № 8):

1068 «Ազգ», 02.03.2006, № 38:

1069 Մատենադարան, թղթ. 157, վավ. 276, թ. 52:

1070 «Մեղու Հայաստանի», 1879, № 7, էջ 4:

1071 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 795, թ. 29, 66:

1072 «Արարատ», 1888, էջ 510:

Քարաշէն մի յարկանի տուն. պատկանում է նոյն եկեղեցւոյն. ունի երկու բաժանմունքներ և ծածկած գաջով. տարածութիւնն է երկայնութեամբ 7 սաժէն իսկ լայնութեամբ 4 սաժէն: Այս տան առաջը կայ դատարկ տեղ տարածութեամբ երկայնութիւնը 7 սաժէն, իսկ լայնութեամբ 5 սաժէն:

Դատարկ տեղ. պատկանում է նոյն եկեղեցւոյն երկայնութիւնն է 30 սաժէն, իսկ լայնութիւնը 15 սաժէն:

Պարտեզ պտղատու ծառներով և երկու բանճարանոցներով. պատկանում է Առաքել Սազինեանցին, որը գնած է մասնաւոր կերպով կազմած թղթով: Տարածութիւնն է երկայնութեամբ 60 սաժէն, իսկ լայնութեամբ 130 սաժ.: Այս պարտեզի կէս մասը նոյնպէս և բանճարանոցների կէս մասը նա ընծայած է ս. Վարդանեանց եկեղեցւոյն, կէս մասին համար որոշում է տարեկան եկամուտ ութն րուբլի:

Քարից շինուած մի յարկանի տուն. ծածկուած ժեստով. կառուցուած է յանուն սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մօտ գտնուած ծխական դպրոցի առաջին յարկին վերայ. պատկանում է պրապօրշչիկ Վարդան Վարդանօվին և նշանակուած է իգական սեռի դպրոցի համար: Ունի եօթը բաժանմունք սպիտակ գաջով ծածկած: Տարածութիւնն է երկայնութեամբ հինգ, իսկ լայնութեամբ ինն սաժէն: Շինուած է 1872 թուականին: Այս տան մէջ այժմ ոչ որ չէ բնակում, բայց եթէ վարձով տրուի կարող է բերել տարեկան եկամուտ մի հարիւր րուբլի:

Դատարկ տեղ. շրջապատած է ցախերից հիւսած պարիսպով. պատկանում է եկեղեցւոյն յանուն սրբոց Վարդանանց: Տարածութիւնն է երկայնութեամբ 81 և լայնութեամբ 35 սաժէն: Նորանում կան հինգ հատ տնկուած հին թթենիներ: Տարեկան եկամուտը որոշում է տասն և հինգ րուբ.:

Քարից շինուած մակազին հացահատիկ լցնելու համար. պատկանում է նոյն եկեղեցւոյն. ճակատի տարածութիւնն է 2 սաժէն, իսկ շինութեան խորութիւնը 4 սաժէն. շինուած է 1869 թուականին: Տարեկան եկամուտը որոշում է տասն և ութն րուբլի:

Կրպակ. պատկանում է նոյն եկեղեցւոյն. ճակատն է 2/2 սաժէն, իսկ խորութիւնը 3 սաժէն 2 արշին: Տարեկան եկամուտը որոշում է երեսուն րուբլի:

Պարտէզ պտղատու ծառերով. թափիրով պատկանում է Գրիգոր եպիսկոպոս Սազինեանցին. ճակատն է 60 սաժէն, իսկ խորութիւնը 50 սաժէն: Այս պարտիզին կից կան երկու կտոր վարելի հող տարածութեամբ մի չէթվէրք սերմ ցանելու չափ: Այս կալուածքները գնած էր յիշեալ եպիսկոպոսը 1868 թուականին սեպտեմբերի 2-ին և ընծայած է Վարդանանց եկեղեցւոյ մօտ կառուցած ուսումնարանին յօգուտ նորանում վարժուող աղքատ աշակերտներին...»[1073]:

**Սբ. Ստեփանոս եկեղեցի.** Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի (1763-1780) գահակալության վերջում Ախալցխայում կառուցվել էր մի եկեղեցի, որի առթիվ 1781 թ. «...զտէր Սահակ քահանայն իւրեանց, որ առ հոգելոյս տէր Սիմէոն հայրապետաւն նորա կոնդակաւն գնացեալ էր ի ժողով՝ վասն նորակերտ եկեղեցւոյն իւրեանց...»[1074]:

Հայտնի է, որ Ախալցխայում հաստատված կարնեցի գաղթականները, ի սպաս դնելով իրենց ամենասուղ միջոցները, 1828 թ. (հավանաբար 1829-30 թվականներ) իրականացրել են պատերազմից տուժած եկեղեցու նորոգությունը[1075]. «...նշանաւոր է իբրև առաջին ուխտատեղի. Կարնոյ գաղթականները այդ տաճարի շուրջը բոլորուել, բնակութիւն են հաստատել 1828 թ.-ից»[1076]:

1872 թ. ականատեսը եկեղեցին նկարագրել է այսպես. «Սբ. Ստեփանոս եկեղեցին ունի հարթ տանիքով հյուղակի տեսք: Վերևում՝ տանիքում, կառուցված է հազիվ նկատելի զանգակատուն: ...տանիքին ցցված են չորս ոչ մեծ փայտե սյուներ՝ ծածկված փոքր հարթ տանիքով, որի ներքո էլ զանգն է: Եկեղեցում 1828 թ. վախճանված ոմն Սիմոնևի գերեզմանն է: Տապանաքարի վերնամասում նախ վրացերեն, ապա հայերեն արձանագրություն է: Սբ. Ստեփանոս եկեղեցին անմիջականորեն կից է ժայռերին, որոնցից առաջին հայացքից դժվար է զանազանել: Եկեղեցու մոտ ընկած են հավանաբար շատ հին երկու գերեզմանաքարեր, որոնց արձանագրությունները բոլորովին ջնջված են»[1077]:

1885 թ. հիշվում է «...ուխտատեղի, անշուք, փայտաշէն...»[1078]:

1891 թ. եկեղեցու ընդհանուր վիճակը բնութագրվել է վթարային, և կարգադրվել է անմիջապես փակել այն[1079]: Նույն թվականին նորոգության գործին ձեռնամուխ լինելու նպատակով գործակալի գլխավորությամբ ծխականները մայիսի 24-ին գումարում են ժողով և ընտրում երեք հոգուց բաղկացած հոգաբարձություն (քաղաքագլուխ՝ Ն. Տեր-Գրիգորյանց, Տ. Տեր-Միքայելյան և Դ. Քուփալյանց)[1080]:

Մեկ տարի անց հոգևոր իշխանությունները տեղեկանում են եկեղեցին նորոգելու ծխականների

1073 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 125, թ. 40ա-40գ:

1074 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, հ. Ա, էջ 254:

1075 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 443:

1076 «Արձագանք», 1895, № 78, էջ 1:

1077 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 20 (բնագրում՝ “Церковь св. Степана имеет вид сакли с плоскою крышею. Наверху, на крыше, устроена едва заметная колокольня... в крышу вбиты четыре небольших деревянных столбика и покрыты маленькою плоскою крышею, под которою и поместился колокол. В церкви гробница какого-то Симоневи, умершаго в 1828 г. На гробнице сверху грузинская надпись, а под нею уже армянская. Церковь св. Степана примыкает непосредственно к скалам, от которых ее трудно отличить с перваго разу. Около церкви лежат два надгробных камня, должно быть очень старинных,- надписи на них совершенно стерты”):

1078 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:

1079 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3333, թ. 1:

1080 «Արձագանք», 1891, № 12, էջ 179:







**Ախալցխա. Սբ. Ստեփանոս եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից և հարավ-արևելքից**

մտադրության մասին. «Քանզի բազումք ի ժողովըրդականաց մանաւանդ հնոյ մասին քաղաքիս թախանձելով թախանձեցին փութացուցանել զկառուցումն Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ...»[1081]: Անհրաժեշտ նորոգությունների ծախսը, ըստ նախահաշվի, կազմել է 5398 ռուբ. 60 կոպ.[1082]:

1081 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3333, թ. 10: Տե՛ս նաև «Արձագանք», 1892, № 26, էջ 2:

1082 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3333, թ. 13-14:

Տակավին 1893 թ. նյութականի սղության պատճառով գործը տեղից չի շարժվել. «Երկու տարի է, ս. Ստեփաննոս եկեղեցւոյ համար հոգաբարձուներ ենք ընտրել, փող չլինելու պատճառով շինութիւնը դեռ չենք սկսել...»[1083]:

1895 թ. նշվել է, որ եկեղեցին խարխուլ վիճակի պատճառով արդեն 3-4 տարի փակ էր, և հակառակ

1083 «Արձագանք», 1893, № 142, էջ 2:



**Ախալցխա. Սբ. Ստեփանոս եկեղեցու զանգակատունը արևմուտքից և հարավ-արևելքից**

եկեղեցական 2500 ռուբ. գումարի և նորոգությունը սկսելու թույլտվության առկայության՝ աշխատանքների սկսվելը ձգձգվում էր[1084]:

Ի վերջո որոշվում է նորոգությունը սկսել 1897 թ. գարնանը[1085]: Ինչպես երևում է վավերագրերից, այս վերջին որոշումը հաջողվում է կյանքի կոչել. «...1897 թ. մայիսի 11-ին, ...յաջորդ արժ. Պ. վ. Այվազեանի ձեռքով օրհնուեց նոր շինութեան հիմքը»[1086]: Աշխատանքները, սակայն, շարունակվում են մի քանի տարի և ամբողջանում միայն 1900 թ. «...շինութիւն Ս. Ստեփաննոս եկեղեցոյ քաղաքի



**Ախալցխա. Սբ. Ստեփանոս եկեղեցու հատակագիծը**

արդէն աւարտեալ է ամենայն մասամբ»[1087]: Ընդ որում, «...բացի կառուցեալ յեկեղեցւոջ և զանգակատան շինեալ է և զերկուս շինութիւնս, զմինն ի հարավային կողմն եկեղեցւոյ ի վերայ գետնոյ գնեալն ի Սամուէլեանցէ վասն գրասենեկի երեցփոխանի և կրպակի մոմավաճառութիւն, իսկ զմիւսն վասն փայտանոցի և կահ կարասեաց և երրորդ՝ արարեալ է զծախս վասն հարթութեան ճանապարհաց եկեղեցւոյն և օծման նորին...»[1088]:

Ինչ վերաբերում է «նորոգ շինութեան» համար առ 8-ը նոյեմբերի 1900 թ. հանգանակված դրամա-

1084 «Արձագանք», 1895, № 39, էջ 3: Ի դեպ, նույն թվականին տրված լրատվական մեկ այլ հաղորդում վկայում է, որ առկա գումարը 3000 ռուբլի էր, իսկ գործը ձգձգվել է հոգաբարձուների մեղքով («Նոր-Դար», 1895, № 96, էջ 3): Այլ տեղեկագիր նշել է, որ եկեղեցին ուներ միայն 2.000 ռուբլի, նույնքան էլ հոգաբարձուները պետք է հատկացնեին, իսկ մնացածը պետք է լրացնեին ծխականները («Արձագանք», 1893, № 49, էջ 2): Նույն թվականին լրատվական այլ աղբյուր նշել է. «...քաղաքիս Ս. Ստեփաննոս Նախավկայ եկեղեցու վերաշինութեան հրահանգները իշխանութիւնից ստացուած են և միւս ամսի սկզբներում սկսելու է շինութիւնը: Մեզանում այս տարի երկու հին եկեղեցիներ են շինուելու. մինը Ս. Ստեփաննոս եկեղեցին, որ ահա 3-4 տարի է, որ վերաշինութեան համար փակ է մնացել, իսկ միւսը՝ քաղաքիս մօտակայքում գտնուած հայոց աւերակ վանքը: Այս երկու եկեղեցիներն ևս շատ հին են» («Նոր-Դար», 1895, № 56, էջ 3): Տե՛ս նաև “Новое обозрение”, 1895, № 3802, с. 2.

1085 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3333, թ. 22:

1086 «Նոր-Դար», 1900, № 125, էջ 2:

1087 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3333, թ. 27:

1088 Նշվ. գործը, թ. 31:



**Ախալցխա. Սբ. Ստեփանոս եկեղեցու ներքին տեսքը դեպի արևմուտք և ներքուստ արևմտյան ճակատում ագուցված խաչքար**

կան միջոցներին, ապա այն կազմել է 6766 ռուբ. 12 կոպ. (նույնքան էլ ծախսվել է)[1089]:

Վերաշինությունը տևում է մինչև 1900 թ. «Սոյն եկեղեցին գոյութիւն ունէր մինչև 1900 թիւը. սա մի հասարակ կոնաձև տանիքով տուն էր, որի տեղ այժմ շինուած է քարուկրեայ եկեղեցի դարձեալ նոյն անուամբ...»[1090]:

1900 թ. ամռանը տեղի է ունենում եկեղեցու օծումը. «Կիրակի, յուլիսի 2-ին թեմիս գեր. առաջնորդ Գէորգ արք. Սուրէնեանի ձեռքով կատարուեց քաղաքիս ս.Ստեփաննոս եկեղեցու նոր շինութեան օծման հանդէսը՝ մասնակցութեամբ տեղիս յաջորդ Կիւրեղ վ. Կիւրեղեանի և բոլոր հայ հոգևորականութեան...»[1091]:

*Ճարտարապետություն.* հին եկեղեցու տեղում հիմնովին վերակառուցված եկեղեցին ունի միանավ դահլիճի հորինվածք: Երկու մուտքերը բացված են արևմտյան և հարավային ճակատներից: Ուղղանկյուն հատակագծով խորանի երկու կողմերում մեկական ավանդատներն են: Լուսավորությունն իրականացված է ինը լուսամուտների միջոցով (4-ը բացված է հյուսիսային, 3-ը՝ հարավային, մեկական՝ արևելյան և արևմտյան ճակատներից): Արևմտյան մուտքին կից է սրածայր վեղարով ավարտվող եռահարկ զանգակատունը: Բացառությամբ եկեղեցու անկյունաքարերի և զանգակատան, որ իրականացված է սրբատաշ քարով, շինության մնացած հատվածներում օգտագործված է անմշակ և կիսամշակ քար: Արտաքին չափերն են՝ 17,17 x 9,58 մ:

Եկեղեցու ներսում՝ արևմտյան ճակատում (արևելահայաց դիրքով), ագուցված է ԺԷ դարին բնորոշ մի փոքրիկ խաչքար (չափերը՝ 60 x 41 սմ):

*Եկեղեցական իրեր.* 1837 թ. մարտի 20-ին կազմվել է եկեղեցական 109 իրերի ցուցակը (արծաթեղենը չէր մտնում). դրանց թվում եղել են նաև երկու Խորհրդատետր, երկու Շարական (մեկը՝ Չայնքաղ, մյուսը՝ նոր), մեկ Ատենի ժամագիրք, մեկ Ճաշոց գիրք «յերկու հատորս բաժանեալ», մեկ Հայսմավուրք[1092]:

*Քահանա.* 1904 թ. եկեղեցու քահանա է հիշվում *Կարապետ Տեր-Կարապետյան Տեր-Մարտիրոսյանցը* (ծնվ. 1849 թ., ձեռն. քհն. 1883 թ. փետրվարի 20-ին)[1093]:

*Վիմագրեր.* Սբ. Ստեփանոս եկեղեցում պահպանված վիմագրերը առնչվում են 1897-1900 թվականներին իրականացված հիմնավոր վերակառուցմանը: Մեզ է հասել միայն 2 վիմագիր.

Սբ. Ստեփանոս եկեղեցի. ներքուստ հյուսիսային պատի մեջ գտնվող մկրտարանի ավազանի ճակատին՝ խաչաքանդակի երկու կողմերում, արձանագրված է.

*Յիշատակ է / հիւսն Գեւոր/գայ Յովհան/նէսեանի / Նազարէթ/եանցի, յամի / տեառն ի 1897:*

*Հրատ.* **Բագրատունի Գ.**, Ախալցխայի մշակութային հա-

1089 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3336, թ. 1-83:

1090 «Նոր-Դար», 1903, № 19, էջ 1:

1091 «Նոր-Դար», 1900, № 125, էջ 2: Նաև «...անցեալ տարի յուլիսի 2-ին օծվեց քաղաքիս նորակառոյց ս. Ստեփանոս եկեղեցին...» («Մշակ», 1901, № 191, էջ 3):

1092 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 110:

1093 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 795, թ. 29, 66:







**Ախալցխա. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տեսքը հարավից, լուսամուտ և լուսամուտի զարդանախշ ճակատակալ քար նույն կողմում (լուս.՝ 1988 թ.)**

մալիրները եւ հոգեւոր օջախները, «Տիեզերք երկիր լույս», 1997, № 3, էջ 3:

Սբ. Ստեփանոս եկեղեցի. «Արեւելյան պատի՝ կտուրն ամբողջացնող եռանկյան մեջ, խաչաձեւ անցքերի միջնամասում, սրբատաշ քարին...»:

*Սուրբ Ստեփանոս Հայոց. 1897 թ.:*
*Հրատ.* **Բագրատունի Գ.**, նշվ. հոդվ., էջ 3:

**Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (ի սկզբանե՝ մզկիթ).** Նախապես մզկիթի շենք լինելով՝ 1832 թ. նորոգվել է և օծվել Սբ. Գրիգոր Լուսավորչի անվամբ՝ որպես ծխական եկեղեցի[1094]:

1876 թ. դրությամբ փակ էր հնության պատճառով[1095]:

1903 թ. սեպտեմբերի 22-ին ցարական իշխանությունները փորձում են բռնագրավել եկեղեցու գույքն ու նյութական միջոցները, ընդ որում, ընդդիմանալու համար մինչև իսկ բանտարկում են եկեղեցու երեցփոխ Պարսամ Էնֆիաճյանցին[1096]:

*Եկեղեցական իրեր.* 1837 թ. մարտի 20-ին կազմվել է Սբ. Լուսավորիչ եկեղեցու 91 իրերի ցուցակը (արծաթեղենը հաշվառված չէ): Դրանց թվում եղել են մեկ Խորհրդատետր, մեկ Յուղաբերից ավետարան, մեկ Ճաշոց գիրք, մեկ Հայսմավուրք, երկու Չայնքաղ շարական, երկու Ատենի ժամագիրք, մեկը՝ հին և այլն[1097]:

1094 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 443:
1095 Նույն տեղում:

1096 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Է, էջ 156-157:
1097 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 109-110:



**Ախալցխա. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևմտյան պատին պահպանված եկեղեցու նորոգության (1837) և զանգակատան կառուցման (1878) արձանագրությունները (լուս.՝ 1988 թ.)**

*Քահանա.* Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն սպասավորած հոգևորականներից վավերագրերում հիշատակված են.

*Մարտիրոս Մնացականյանց.* հիշվում է 1837 թ., ցանկանում էր ուխտագնացության մեկնել Երուսաղեմ[1098]:

1843 թ. փետրվարին Սբ. Լուսավորիչ եկեղեցու համար քահանա է ձեռնադրվել *Ղազարոս Գևորգյանը*[1099], իսկ 1904 թ.՝ ախալցխացի *Հովհաննես Գրիկյանը*[1100]:

*Վիմագրեր.* միայն 1832 թ. եկեղեցու վերափոխված մզկիթի որմերին բնականաբար հայերեն հին վիմագրեր լինել չէին կարող: Չեն պահպանվել նաև մզկիթի կառուցման ժամանակաշրջանին առնչվող արաբատառ թուրքերեն վիմագրեր: Առկա են սոսկ եկեղեցու նորոգության (1837) և զանգակատան կառուցման (1878) մասին պատմող հայերեն երկու վիմագրեր՝ զետեղված կառույցի արևմտյան պատին:

Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի. արևմտյան պատին՝ 6 տող.

*Նորոգեցաւ Սբ. | Լուսաւորիչ եկէղէցիս | այս արդեամբք | բարեպաշտօն ժողովրթոց | Ախալցխայ քաղաքիս. | 8.1.1837 ամի:*

*Հրատ.* առաջին անգամ:

Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի. արևմտյան պատին՝ 7 տող.

*Սոյն զանգակատան | շինութեան ծախք .էզ եւ | արդար վաստակօք Մարտիրոս | Ք[լ]օյեանցի քերց Սրմայի, Մար|ե...ի, որդւոցն՝ Թաթէոսի եւ Ստե-*

1098 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 215, թ. 1:
1099 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 1158, թ. 15:
1100 «Արարատ», 1905, էջ 6:

*փանննոսի, Կարապետ Էփրոնիկյի (՞). 1878 յուլիսի 18-ին ամի:*

*Հրատ.* առաջին անգամ:

**Սբ. Փրկիչ (Սբ. Ամենափրկիչ) եկեղեցի.** եկեղեցու շինարարական աշխատանքները սկսվել են 1835 թ. «Ս. Փրկիչ՝ որ քաղաքիս Հայոց Մայր եկեղեցին կը համարուի, շինուեցաւ 1835-37 թուականներուն, և մէջը զետեղուեցան օսմանեան երկրէն բերուած վանքերու և եկեղեցիներու անօթները, զարդերը, սրբոց մասունքները...»[1101]:

1836 թ. մայիս 20-ին Կարապետ արքեպիսկոպոսին հղված մի գրությունից երևում է, որ ընտրված տեղում հողային աշխատանքները և քարահատության գործը սկսած լինելով հանդերձ՝ տակավին անորոշ կացության մեջ էր կառուցելիք եկեղեցու չափերի հարցը. «Երեք աւուրք յառաջ քան զգրութիւնս բերեալ զերկրաչափին խնդրեցաք նշանակել զտեղի եկեղեցւոյն, որ 'ի նոր քաղաքիս և նա նշանակեաց զնոյն հարեալ զցիցս 'ի շրջակայս որմոցն, բայց ըստ մերումս դիտման փոքր է նշանակեալն տեղի քան զոր խնդրեալ էր Ձերդ բարձր սրբազնութիւն, համաձայնութեամբ երևելեաց և ամենայն հասարակութեան ժողովրդականաց մերոց, զորմէ իրազեկ արարին զմեզ երևելի անձինք, թէ ըստ մերս խնդրանաց պարտ է լինել երկայնութիւն տասն և եօթն սաժն և լայնութիւն ըստ նորին համեմատութեան, բայց այժմեանս ձև սուղ ինչ տարբեր է յառաջնոյն զոր առաքեալ էին, քանզի այժմ ըստ ճիշտ համարոյ վարպետաց հարիւր ութն ոտնաչափ է, երկայնութիւն արտաքին կողմանէ որմոյ խորանի մինչև յառաջին կողմն զանկակատանն, յորմէ 'ի բաց հանեալ զտեղի խորանի բեմի և դասու մնայ միայն վաթսուն ոտնաչափ տեղի կալոյ ժողովրդականաց: Նոյնպէս և լայնութիւն է վաթսուն և չորս ոտնաչափ, յորմէ ութն ոտնաչափ հանեալ 'ի մասն լայնութեան որմոցն, մնայ յիսուն և վեց ոտնաչափ 'ի լայնութիւն: Մեք կասկածեալ 'ի փոքրութենէ սորայ ոչ կամեցաք պեղել զտեղի հիմանցն սպասեալ հրամանաց տեառն: Քարահատ վարպետքն համեմատեալ զհանեալ քարինս փոքրութեան եկեղեցւոյն ասացին՝ եթէ բաւական է զոր հանելս եմք, վասնորոյ յետ երկուց աւուրց քարակոփքն գալոց են յողորկել զքարինս, իսկ քարահատք հատանելոց են տակաւին: Բայց աստէն յոյժ սակաւ են քարակոփ վարպետք առ համեմատութեամբ շինուածոյ, ուստի եթէ բարեհաճեսցի Ձերդ բարձր սրբազնութիւն յորդորեսջիք զվարպետսն, որ 'ի գիւղօրայս են գալ գործել ի քաղաքիս»[1102]:

1836 թ. նշվել է. «...զմնացեալ քարինքն յետ պատերազմի խանգարեալ կամ աւերեալ տանց 'ի հին քաղաքի Ախլցխայի, որք են 'ի աւերակս չեն կարեր լինիլ տուեալ 'ի գործածութիւն շինութեան հայոց եկեղեցւոյ, այնու պատճառաւ զի այնոքիկ քարինք նախասահմանեալ են առ ի գործածել 'ի շինութիւն զքարեայ ամրոցական պատուարս Ախալցըխայու ամրոցի...»[1103]:

Օծումը տեղի է ունենում 1837 թ. թվականի սեպտեմբերի 26-ին. «Շինութիւն նորակառոյց եկեղեցւոյ նորաշէն քաղաքին Ախլցխոյ հիմնարկեալ յանուն Ամենափրկչին Յիսուսի կատարեալ աւարտեցաւ վայելուչ շինուածով արտաքուստ սրբատաշ քար և կիր որմովք, կիսակամար փայտեայ ձեղունիւ անսին ամենևին գործ ճարտարուեստ, զոր քսանվեցերորդում աւուր սեպտեմբերի օրհնեցաք և օծաք շքեղաշուք հանդիսիւ...»[1104]:

Համաձայն Կարապետ արքեպիսկոպոսի Բագրատունու վկայության՝ նորակառույց եկեղեցու օծումը, սակայն, ինքը կատարել է 1837 թ. նոյեմբերի 2-ին. «...յ2 նոյեմբերի օրհնեցի և օծի զնոր եկեղեցին կառուցեալ 'ի Նոր քաղաքի՝ արտաքուստ սրբատաշ քար և կիր որմովք կիսակամար փայտեայ ձեղուամբք անսին ամենևին – գործ ճարտար արուեստի, որ և եղև այլ իմն մեծգոյն մխիթար սրտից նորեկ ժողովրդոց...»[1105]:

1840 թ. մարտի 4-ին Հովհաննես կաթողիկոսը կոնդակով «...վարձատրում է ականակուռ խաչով Տայոց առաջնորդ Յարութիւն վարդապետին ըստ միջնորդութեան Վիրահայոց առաջնորդ և վիճակաւոր կառավարիչ Կարապետ արքեպիսկոպոսի, նրա այն եռանդուն գործունէութեան համար, որ ցոյց էր տուել Ախալցխայի եկեղեցին շինելու, և 1838-1839-ի ժանտախտի ժամանակ...»[1106]:

Իբրև ճարտարապետական կառույց՝ Սբ. Փրկիչ եկեղեցին հիրավի քաղաքի առավել աչքի ընկնող շինություններից էր. «ս. Փրկիչ՝ որ և աւագ եկեղեցին, սրբատաշ քարով և հոյակապ...»[1107]:

Հազիվ 20 տարի անց (1856 թ.) եկեղեցու խարխլված փայտածածկն արդեն կարոտ էր լուրջ նորոգության. «Առաջին ի ի կոնսիստորն զայս բազմաստորագիր վկայութիւն ժողովրդեան Հայոց Ախալցխոյ քաղաքի վասն խախտուեց տանեաց սբ. Փրկիչ եկեղեցւոյն իւրեանց ոյր աղագաւ խնդրեն զտնօրէնութիւն վասն նորոգելոյ զհնութիւն գերանացն և կարկատելոյ զամենայն բեկեալսն...»[1108]: Եկեղեցու առկա վնասները երեքն էին. «Նախ ծածկք եկեղեցւոյն զոլով փայտաշէն ծածկեալ կղմնտրիւ ի տեղիս տեղիս խոնարհեալ պատճառէ զկաթլ, իսկ յարևմտեան կողմն ի պատճառս շինութեան զանգակատան կոխոտեալ ընդ ոտիւք կո-

1101 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 61:

1102 Մատենադարան, թղթ. 163դ, վավ. 1524:

1103 Մատենադարան, թղթ. 163ե, վավ. 163:

1104 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 208, թ. 1:

1105 **Երիցեանց Ալ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 433:

1106 **Թօփճեան Յ.**, Յուցակ ժողովածուաց Ղաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 11:

1107 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:

1108 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 3436, թ. 12:

տորեալ է բոլորովին առ ի կարկատել զայնոսիկ հարկաւոր է ի կիր առնուլ զեօքն հարիւր ռուբլի արծ.: Երկրորդ յատակ եկեղեցւոյն ըստ կիսոյն ծածկեալ է տախտակաւ և ըստ կիսոյն է հողայատակ տախտակքն փտեալ են և գետինն փոստտեալ առ ի միանգամ ազատել ի ծախուց և առնել զեկեղեցին վայելուչ բնակութեան աստուծոյ, պարտէ առնել սալայատակ, որոյ ծախքն հասանեն ցհազար չորս հարիւր մանէթ արծ.»[1109]:

1866 թ. մարտի 7-ին եկեղեցին կողոպտվում է չբացահայտված գողերի կողմից[1110]:

Մայր եկեղեցու շրջափակի մեջ են գտնվել նաև թեմի վարչական շինությունները. «Ս. Փրկչի գաւթում գտնւում են հայոց յաջորդարանն և հոգ. կառավարութիւնը...»[1111]:

1889 թ. հոգևոր իշխանություններին իրազեկվել է եկեղեցու առաստաղը նորոգելու անհրաժեշտության մասին. «Ս. Փրկիչ եկեղեցւոյ առաստաղը խարխուլ վիճակի մէջ գտնուելով սպառնում էր վտանգ եկեղեցում աղոթողներին, ինչպէս որ պատահեց ներկայ տարուայ ծաղկազարդի երեկոյեան ժամերգութեան ատեն, բայց անվնաս»[1112]:

Ախալցխա քաղաքի և մասնավորապես Սբ. Փրկիչ եկեղեցու պատմության մեջ հիշարժան էր 1895 թ. Վեհափառ հայրապետի այցը եկեղեցի («Վեհափառը երէկ այցելեց Ս. Փրկիչ և Լուսաւորիչ եկեղեցիները»)[1113]: Ի դեպ, 1893 թ. հունիսի 14-ին նույն եկեղեցում պատարագ է մատուցվել ի նշանավորումն Խրիմյան Հայրիկի՝ հայրապետական աթոռը ստանձնելուն[1114]:

1898 թ. նախատեսվել է եկեղեցու շենքը քամուց և անձրևից պաշտպանելու նպատակով 2 մուտքերի առջև կառուցել մեկական նախասրահ[1115]: Նյութական միջոցները պետք է վերցնեին եկեղեցուց. «...Ս. Փրկիչ եկեղեցու դռները և նոցա առաջ գմբէթներ, ծախսելով Ս. Փրկիչ եկեղեցու կալուածների կոնսիստորիայում ի պահեստ դրուած կապալադրամներից 2516 րուբլի 29 կոպ.»[1116]: Արդեն 1899 թ. հարկ է եղել գրագրությամբ հստակեցնել այն մտահոգությունը, թե իբր նորոգությունները միտում ունեին շենքն առավել ընդարձակելու. «...չիք խնդիր ընդարձակելոյ զեկեղեցին, այլ անկ է կառուցանել առաջի դրանց եկեղեցւոյն զիովանոցս կամ գմբէթիկս (ПОРТИКИ) ի պաշտպանութիւն ընդդէմ հողմոց և անձրևաց, ի ցրտոց և ի բքոց...»[1117]: Տարածայնությունների առիթ է դարձել նաև նախասրահների շինության համար ընտրելիք քարատեսակը. «...բազմութեան ցանկութեամբ հարկ եղաւ նախահաշւով որոշուած Ծուղրուտի քարերի տեղ շինել Քօպլեանի հանքերի սպիտակ քարերից, որ 40 վերստ հեռու է քաղաքիցս և այդ քարերով է շինուած Ապասթումանի եկեղեցին այնպէս, որ նոցա վերա ծախս եղաւ 3986 ռ. 63 կ.»[1118]:

Սբ. Փրկիչ եկեղեցու արևմտյան կողմում գտնըվում էր Կարապետ արքեպիսկոպոսի սեփական տունը, որի տարեկան հասույթը, համաձայն սրբազանի կտակի, պետք է հավասարապես տնօրինեին Սբ. Էջմիածինն ու Երուսաղեմի հայոց վանքը[1119]:

Եկեղեցու շրջափակի մեջ էր գտնվում նաև 1848 թ. Նունուսցյան եղբայրների կառուցած երեք սենյակից (միջանցքով) բաղկացած միահարկ, հողածածկ տունը, որը պարիսպների հետ մեկտեղ 1899 թ. քանդում են տեղում երկհարկ շենք կառուցելու նպատակով[1120]: 1900 թ. դրությամբ նախահաշվի համաձայն 18000 ռուբլի ծախս ենթադրող հիշյալ տան շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ էին[1121]:

1901 թ. տիրող կացության վերաբերյալ ականատեսը նշել է. «...այս բոլէիս գտնվում է շատ ողորմելի եւ անշուք վիճակի մէջ, պարիսպը քանդված, քայքայված, միջի շինութիւնները կիսաւէր եւ կիսաշէն, ամբողջ զաւիթը՝ քարերի, փայտերի, փլվածքների, հողերի, կիրի ու աւազի մէջ կորել է, իսկ եկեղեցու մէջն էլ պատերը սեւացած ու մրոտած...»[1122]:

1902-1903 թվականներին կազմված նախագծերը և առկա գրագրությունը ցույց են տալիս, որ նույն կողմում՝ եկեղեցու շրջափակի արևմտյան դարպասից հարավ, նախատեսվում էր կառուցել տնտեսական նշանակության միմյանց կից մի քանի սենյակներ[1123]:

Հայտնի է, որ 1903 թ. ընթացքի մեջ էին բակի բարեկարգման աշխատանքները[1124]:

1903 թ. հիշվում է երեցփոխ Խաչատուր Չիլինգարյանը՝ եկեղեցու շարժական ու անշարժ ունեցվածքը և կարևոր փաստաթղթերը պետական հանձնաժողովի կողմից բռնագրավելու առնչությամբ[1125]:

Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո փակված հարյուրավոր եկեղեցիների թվում է հայտնվում նաև Սբ. Փրկիչը (1923 թ. մարտի 20[1126], այլ տեղեկության համաձայն՝ ապրիլի 1-ին[1127]). «...քաղաքական իշխանութիւնը գրաւեց

1109 Նույն տեղում:
1110 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 4806, թ. 1:
1111 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
1112 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8535, թ. 1:
1113 «Արձագանք», 1895, № 78, էջ 1:
1114 «Նոր-Դար», 1893, № 104, էջ 2:
1115 ՎԱԴ, ֆ. 204, ց. 1, գ. 1112, թ. 7:
1116 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3369, թ. 1:
1117 Նշվ. գործը, թ. 13:
1118 Նշվ. գործը, թ. 26:
1119 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 1233, թ. 17:
1120 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3377, թ. 1:
1121 Նշվ. գործը, թ. 30-31:
1122 «Մշակ», 1901, № 181, էջ 2:
1123 ՎԱԴ, ֆ. 204, ց. 1, գ. 1319, թ. 1-8:
1124 Նշվ. գործը, թ. 1-13:
1125 Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Է, էջ 1747, վավ. 151:
1126 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 3145, թ. 32:
1127 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 3146, թ. 5: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 57, ց. 3, գ. 463, թ. 36:



Ախալցխա. Սբ. Ամենափրկիչ եկեղեցու հարավային ճակատը, կտրվածք դեպի արևելք և հատակագիծը (չափ.՝ Ալեքսանդր Իգիթխանյանի, հրատարակության պատրաստող՝ Աշոտ Հակոբյան)

տեղիս ս. Փրկիչ մայր եկեղեցին, նրա գաւթում գտնուած երկյարկանի շինութիւնը, որտեղ զետեղուած են հոգևոր կառավարութիւնը, փոխանորդական տունը, երեսփոխանի գրասենեակը իրանց գոյքերի և գործերի հետ միասին, նոյնպէս և գործակալութեան գործերը: Եկեղեցու ամբողջ գոյքը սկսած վարագոյրից մինչև վերջին շապիկը և բոլոր արծաթեղէնը գրաւուած են»[1128], սակայն շատ չանցած՝ մի կարճ ժամանակահատվածի համար եկեղեցին վերաբացվում է (1925 թ. հունիսի 16)[1129]: Նույն թվականի հուլիսի 19-ին նորաբաց եկեղեցին օծում է Էջմիածնից ժամանած Մեսրովբ արքեպիսկոպոսը: Ընդ որում, նախքան օծումը իրականացվում են մի շարք նորոգություններ (գմբեթին վերըստին տեղադրվում է ցած բերված խաչը, կանգնեցվում է փայտաշեն նոր խաչկալ, վերականգնվում են դռներն ու լուսամուտները. աշխատանքներն անվարձահատույց կատարել է ճարտ. Մկրտիչ Հովհաննիսյանը)[1130]:

1940 թ. Ախալցխայի զինվորական օկրուգի որոշմամբ՝ նախատեսվում է կառուցել Սպայի տուն[1131]: Որոշումը կյանքի է կոչվում առանց հապաղման: Եկեղեցու շենքը ձևափոխվում է և 1953 թ. վերածվում Սպայի տան: Նման կարգավիճակը պահպանվում է ցայսօր[1132]:

Հայտնի է, որ 1955 թ. հողային աշխատանքների ժամանակ Սբ. Փրկիչ եկեղեցու մոտ հայտնաբերվել է 23,5 x 26,5 սմ մակերեսով և 12 կգ քաշով բավական կարևոր արձանագրությամբ արճճե մի սալիկ՝ երեսներից մեկին նոր քաղաքի, մյուսին՝ Սբ. Փրկիչ եկեղեցու հիմնադրմանը նվիրված հիշատակագրություններով (ներկայումս պահվում է Ախալցխայի թանգարանում):

Ա երեսին՝ 12 տող.

*Ի ժամանակս կայսերու(թ)ե(ան) Ռուսաց Ա Նիկաղայոսի / Պաւլովիչի պատերազմ լեալ ը(նդ) օսմանցւոց թա/գ(ա)ւորի Բ (երկրորդ) սուլտան Մահմուտի: Գրաֆ Պասկեւիչ / զօրապետն ռուսաց էառ զԱխալցխայ ի 1828 օգ/ոստոս ԺԵ (15) ը(նդ) նմին զՂարս, զԲայազիտ եւ զԿարին: Ի 1829 / հաշտու(թ)ի(ւն) եղե(ա)լ յետս տուան այնք: Եւ ի 1830 յուլ(իսի) 1 / առաջնորդու(թեամ)բ տ(եա)ռն Կ(ա)ր(ա)պ(ե)տի արքեպ(իսկոպո)սի Կարնոյ ք(ա)ղ(ա)ք(ա)ց(ի)ք / եւ գիւղականք իբր վեց հազար տուն քահանայիւք եւ / ժողովրդովք դիմեց(ա)ք յԱխալցխ(ա)յ եւ զայս յի/շատակագիր եդաք ի ներքոյ հիման Սբ. Փրկիչ / եկեղեցւոյս հայոց ի 1830 օգոս(տոսի) 15 ատւր հանգի/սի առման ք(ա)ղ(ա)քիս:*

Հրատ. **Ղաֆադարյան Կ.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1967, № 1, էջ 123: Տե՛ս նաև **Մաթևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 23-24:

Բ երեսին՝ 12 տող.

*Իսկ ի 1836 յամի ի 4 յունիսի ըստ կայսերա/կան բարձր հրամանի, որ յայտնեցաւ մեզ ի Նոր/ին Բարձր գերազանցութենէ կուսակալին համայն / Վրաստանի ի պարոն Րոզինէ Ա (1) կրկին մեծաւ հան/դիսիւ օծաւ հիմն Սբ. Փրկիչ եկ(ե)ղ(ե)ցւ(ո)յս ի բա/զմարդիւ(ն) Կ(ա)ր(ա)պետ ասպետափառ սրբազան արք/եպիսկ(ոպո)սէ գաղթական Հայոց Կարնոյ եւ յայնմ / օրէ սկիզբն եղեւ շինութեան ս(ո)ք(ո)յ եկ(ե)ղ(ե)ցւ(ո)յս եւ / այս յիշատակագիր գրեալ ի սոյն տախ/տակ եդաւ ի ներքոյ հիման ս(ո)ք(ո)յ եկ(ե)ղ(ե)ցւ(ո)յս ի / պէտս ապագայ ժամանակի. / 1836:*

Հրատ. **Ղաֆադարյան Կ.**, նշվ. հոդվ., «ՊԲՀ», 1967, № 1, էջ 124: Տե՛ս նաև **Մաթևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 24:

---

1128 ՀԱԳ, ֆ. 57, ց. 3, գ. 463, թ. 21:

1129 ՀԱԳ, ֆ. 409, ց. 1, գ. 3145, թ. 28:

1130 Նույն տեղում:

1131 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 62:

1132 **Մաթևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 22, ծնթ. 2:



**Ախալցխա. Սբ. Փրկիչ եկեղեցու կառուցման ժամանակ հիմքում զետեղված արճիճե սալիկի արձանագիր մեկ երեսը**

*Կարապետ արքեպիսկոպոսի գերեզմանը.* եկեղեցու «...հարաւային պատի մօտ ամփոփուած է հանգուցեալ Կարապետ արքեպիսկոպոսը...»[1133]: Վերջինիս աճյունը 1954 թ. փոխադրվել է Մարդայի հայոց գերեզմանոց:

Տապանաքարին եղել է.

*Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք եւ ես հանգուցից զձեզ* (Մատթ. ԺԱ 29):

*Կարնեցի / Կարապետ արքեպիսկոպոս / Բագրատունի / Առաջնորդ Հայոց / Վրաստանի եւ Իմէրէթի, / 1779-1856:*

*Հրատ.* **Քոսեան Յ.**, նշվ. աշխ, հ. Ա, էջ 119:

*Ծանոթ.* Հ. Հակոբյանի ընթերցումը կամայական է. «Այստեղ հանգչում է Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին» (**Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 62):

*Եկեղեցում պահված հնությունները.* որքան էլ որ տարօրինակ է, եկեղեցում պահված իրապես թանգարանային հավաքածուով հայ հետազոտողները ցավալիորեն երբևէ չեն հետաքրքրվել, ուստի ստիպված ենք բավարարվել սոսկ ԺԹ դարավերջին հրապարակված հպանցիկ այն տեղեկագրով, համաձայն որի, ի թիվս բազմաթիվ եկեղեցական իրերի (խաչեր, անոթներ), եղել է նաև հայերեն ձեռագրերի հարուստ հավաքածու (Ավետարաններից երկու թվագրվածները վերաբերում էին 1652 և 1670 թթ.)[1134]:

1837 թ. մարտի 20-ին կազմվել է Սբ. Փրկիչ եկեղեցու 206 իրերի ցուցակը (այդ թվում նաև արծաթյա շապիկով մեծ և փոքր 15 Ավետարան և 14 հատ էլ խաչազարդ կազմով Ավետարաններ)[1135]: Ի դեպ, նույն ժամանակ հաշվառվել են նաև գաղթականների՝ Կարինից բերած իրերը, դրանց թվում եղել են ձեռագիր երկու փոքր Ավետարան, արծաթյա խաչերով մեկ մեծ Ավետարան, արծաթյա շապիկով մեկ փոքր Ավետարան, արծաթյա երեսով մագաղաթե Աստվածաշունչ[1136]: Կարինի Մուտուրկու Սբ. Լուսավորիչ եկեղեցուց բերել են մեծ և փոքր խաչեր, 93 իր, այդ թվում նաև արծաթապատ շապիկով ձեռագիր մեկ մեծ Ավետարան և «ևս մի արծաթեայ և ձեռագիր»[1137], Կարմիր վանքից ևս մեծ և փոքր խաչեր, փոքր աշտանակ, ինչպես նաև 172 հատ տարբեր իրեր, այդ թվում 9 հատ հին ձեռագիր Ավետարան, արծաթակազմ մեկ Ավետարան, իսկ Խաչկավանքից՝ 72 եկեղեցական իր, այդ թվում՝ 4-ական Խորհրդատետր ու Ավետարան[1138]:

1875 թ. կազմվել է եկեղեցական 486 իրերի ցուցակը. դրանց թվում «...արծաթէ շինուած էին 111 խաչ և սրբոց մասունքներ, 7 սկիհ, 17 սաղաւարտ, 6 բուրվառ, 3 զոյգ քշոցներ, 9 զոյգ մեծ մեծ և փոքր աշտանակներ, 2 կանթեղ, 10 գօտի, 7 մասնատուփ և մեռոնատուփ, 13 վակաս, 5 գաւազան, 62 արծաթապատ աւետարան, 13 եպիսկոպոսական թագ՝ երկուքը բաւական թանկագին, մէկ կոնք և ջրաման, 25 հոխայ 203 դրամ (4 փութ 5 ֆ.) ջարդուած արծաթեղէնք»[1139]:

*Սբ. Փրկիչ եկեղեցու կալվածքները.* տակավին 1834 թ. Սբ. Փրկիչ եկեղեցու համար բավականին ընդարձակ կալվածքներ է գնել Կարապետ արքեպիսկոպոսը. «Գիւղօրայք իմ Գարծախ, երկու Տատէշներ, Խաւէտ, Խօզաբին, Կարաւ և Վերանայ Կարծախ, և ընդ նոցին եղեալ լերինք և խոտնոցք, սանմաղին Չլտրոյ, որ անկանի ի կողմն ռուսաց, զորս 1834 ամի գնեալ եմ ի սեփհական արդեանց իմոց...»[1140]: Գործարքը կնքվել է 1841 թ. հայր և որդի Հաջի Նաղի և Թայեր բեկերի հետ և կազմել 44000 ղուռուշ[1141]:

1843 թ. կազմված եկեղեցապատկան կալվածքների ցուցակի համաձայն՝ Սբ. Փրկիչ եկեղեցուն պատկանել է 20 տուն և ավերակ 7 կրպակ, սակայն դրանք ոչ մի եկամուտ չեն բերել, քանի որ «...20 տունքն շինեալ են վասն աղքատաց, յորս և բնակին, իսկ կրպակքն են աւերակք, վասն զի ո՛չ կարին բերել զարդիւնս, թէև շինեցին ընդ սակաւամարդ զոլոյ քաղաքին»[1142], իսկ 1846 թ.՝ արդեն 26 տուն, 17 կրպակ (որից 7-ը՝ ավերակ), 6 անբնակ և 2 բնակեցված գյուղ[1143]:

Ախալցխայի առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Տեր-Դավթյանը մահից առաջ (վախճանվել է 1847 թ.) Սբ. Փրկիչ եկեղեցուն է կտակել «...իւր գնած Սուլդա մեծ գիւղի երկու մասն և մի քանի նշանաւոր աւերակ գիւղատեղեր»[1144]:

---

1133 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
1134 “Материалы по археологии Кавказа”, вып. 4, с. 76.
1135 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 108:
1136 Նշվ. գործ., թ. 110:
1137 Նշվ. գործը, թ. 111:
1138 Նույն տեղում:
1139 **Եփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 61:
1140 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 1233, թ. 17:
1141 **Կարապետյան Ս.**, Ջավախք, Երևան, 2006, էջ 14:
1142 ՀԱԴ, ֆ. 56, ց. 4, գ. 787, թ. 146:
1143 ՀԱԴ, ֆ. 56, ց. 4, գ. 1100, թ. 36:
1144 **Երիցեանց Ա.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 474:





Ախալցխա. Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու մատուռ-տապանատունը և տապանաքարը Մարդա քաղամասի հայոց գերեզմանոցում

1857 թ. «...արդեամբք ս. Փրկիչ եկեղեցւոյ Ախալցխոյ...» Ջավախքի Դադեշ գյուղում կառուցվել է աղբյուր[1145]:

1860 թ. եկեղեցուն էին պատկանում հետևյալ հասութաբեր կալվածքները. «Եկեղեցական մի գիւղ, որ է Յուլտայ և մի ձմերանոց անուն Ալլաղ և Պօզալ ի սահմանին Ախալքալաքայ, գնեալ ի Գէորգ եպիսկոպոսէ Տէր Դաւթեան յանուն սուրբ Փրկիչ եկեղեցւոյ:

Եկեղեցական գիւղօրայք, այն է Կարծախ, Տատէշ, Խաւէթ, Խօզափին և Կարա... ի սահմանին Ախալքալակայ ընդ բոլոր պատկանեալ նոցին վարելայ հողոց, մարգաց, արօտաց, դաշտաց, առուաց, լճից այլոց պատկանելեաց, նոյնպէս ընդ ամենայն եղեալ յայնոսիկ կալուածոց, ամբարանոցաց, փարախաց, հորոց և այլոց շինուածոց՝ գնեալ ի Կարապետ արքեպիսկոպոսէ յանուն սբ. Փրկիչ եկեղեցւոյ»[1146]:

Նոյն թվականին եկեղեցուն էին պատկանում նաև «Ի հին քաղաքի գտանին եկեղեցական քսան և եօթն տուն, յորոց ութն են ի վարձու, իսկ տասն և ինն բնակին աղքատք անվարձ, յորոց տասն և չորսն բաղկանայ երկուց-երկուց սենեկաց, տասն և երեքն մին-մին սենեկաց: Մի կազարմայ ի հին քաղաքի՝ երից սենեկաց: Չորս կրպակք ի վարձու:

Ի նոր քաղաքի եղեալքն՝

Երեք տունք, յորոց մինն բաղկանայ ի վեց սենեկաց, մինն երկուց սենեկաց, մինն երից սենեկաց:

Տասն և վեց կրպակք, յորոց տասն և երեքն են ի վարձու և երեքն վաւերացուցեալ:

Ընծայեալ մի տուն ջուլֆակ Յակոբայ Էսմերեանց, որ բաղկանայ երկուց սենեկաց»[1147]:

1862 թ. վեճ է ծագել եկեղեցապատկան Դիլիվ և Սովուղ-բուլաղ գյուղերի խնդրով[1148]:

Հայտնի է, որ եկեղեցապատկան հինգ գյուղերից ստացվող եկամտի նշանակալի մասով պահվում էր Կարապետյան ուսումնարանը «...գեղերը այժմ տարին երեք հազար մանէթից աւելի արդիւնք են բերում, որով պահպանւում է Ախլցխոյ ազգային ուսումնարանը»[1149]:

Հայոց եկեղեցական-ծխական դպրոցները ցարական իշխանությունների կարգադրությամբ փակելուց (1895 թ.) հետո՝ 1898 թ. մարտի 26-ին, խնդրո առարկա կալվածքները, որոնք այդ ժամանակ գնահատվում էին շուրջ 400000 ռուբլի, գրավում է Կովկասյան ուսումնարանական շրջանի վարչությունը: Գործը ստանում է դատական ընթացք և հակառակ Թիֆլիսի նահանգային դատարանի որոշման, համաձայն որի ճանաչվել էր Հայոց եկեղեցու սեփականության իրավունքը, ցարական պաշտոնյաները խնդրի արդարացի լուծումը հնարավորինս և բացահայտորեն ձգձգում են[1150]:

Ի վերջո, կառավարությունը ստիպված է լինում տեղի տալ և վերադարձնել Սբ. Փրկիչ եկեղեցու կալվածքները:

*Այլ կալվածքներ.* 1848 թ. հիշվում է. «...մահտեսի Գրիգոր Քէշիշեանցն և Ազոլար մահտեսի Ղազարն, նուաճեալ են զերկոտասան գիւղորայս. զորս գնեալ է նա ինքն Բարեւլուսեանցն ի Մէհտան բէգէ և յեղբօրէ նորա յէմին բէգէ առանց իմիք կալուածա-

1145 «Նոր-Դար», 1895, № 161, էջ 3:
1146 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 95-96:
1147 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 94-95:
1148 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 2644, թ. 98:
1149 **Հազարապետեանց Ի.**, նշվ. հոդվ., էջ 148: Ի դեպ, 1875 թ. հոկտեմբերի 30-ին հերքվել էր այն լուրը, թե եկեղեցապատկան Կարծախ և Խավեթ գյուղերը կապալով տրվել են Թայիրյանցին և Օհանջանյանցին («Մշակ», 1875, № 43, էջ 3):
1150 «Մուրճ», 1903, № 3, էջ 202:







Ախալցխա. Սբ. Ամենափրկիչ եկեղեցին ձևափոխված և հարմարեցված «Սպայի տան», հատված եկեղեցու պահպանված սրբատաշ շարվածքից

գրոց: Այլ որովհետև ի դիւանի գործոց դատարանիս տեսանի, թէ զգիւղորայսն Շէլովան, Օրչաշան, Չօրչան, Սաhիմայ, Կլօբլէ, Դժվար, Ցխչէ, Մեծ Չանաւ, Փոքր Չանաւ, Սրէ և Չապալէն յիշեալ բէգին վաճառեալ են պօտպորուչիք Տիգրանեանց, իսկ զգիւղորայսն Շէնմէյդան, Արալ և Բօրատօբուր հայոց եկեղեցւոյն, որոց վասն և ելեալ է հրաման ի տէր գլխաւոր կառավարչէն յայս կոյս Կովկասեան սահմանաց հաստատել զկալուածագիրս, որք չեն հաստատեալ տակաւին, վասնզի վաճառօղքն գտանին յարտաքս սահմանի...»[1151]:

*Քահանա.* հայտնի է, որ 1843 թ. փետրվարին Սբ. Փրկիչ եկեղեցու համար քահանա է ձեռնադրվում *Մկրտիչ Տեր-Սարգսյանցը*[1152]:

1904 թ. քաղաքի մայր եկեղեցին սպասարկում է 4 հոգևորական՝ *Կարապետ վարդապետ Տեր-Կարապետյան Տեր-Գրիգորյանց* (ծնվ. 1847 թ., ձեռն. 1869 թ. դեկտեմբերի 22-ին), *Աբրահամ քահանա Տեր-Աբրահամյան Ղազազյանց* (ծնվ. 1847 թ., ձեռն. 1878 թ. նոյեմբերի 19-ին), *Մկրտիչ Սահակյան Գայֆեճյանց* (ծնվ. 1842 թ., ձեռն. 1879 թ. օգոստոսի 12-ին) և *Ներսես Տեր-Եղիայան Համբարձումյանց* (ծնվ. 1860 թ., ձեռն. 1887 թ. հոկտեմբերի 8-ին)[1153]:

Հայտնի է, որ 1910 թ. Սբ. Վարդանանց եկեղեցու քահանա Գևորգ Սիսակյանցը տեղափոխվում և սկսում է քահանայագործել Սբ. Փրկիչ եկեղեցում[1154]:

1915 թ. հիշվում է արդեն 10 տարի քահանայագործած *Հարություն քահանա Գրիկյանը*[1155]:

**Սբ. Ջրավարաց մատուռ.** 2006 թ. մայիսի 9-ին Մարդս քաղամասում Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ձեռամբ օրհնվում և վերաբացվում է Սբ. Ջրավարաց մատուռը՝ վերակառուցված Ախալցխայի մի խումբ հայ երիտասարդների նախաձեռնությամբ[1156]: Մատուռը կառուցվել է 1851 թ. և տեղացիների շրջանում հայտնի էր «Երկու եղբայրների մատուռ» անվամբ: Քանդվել է 1970-ական թվականներին:

**Հայ առաքելական հոգևորականություն.** առանց եկեղեցու անվան մասնավոր հիշատակման Ախալցխայում քահանայագործել են նաև ներքոհիշյալ հոգևորականները.

1787 թ. հիշվում է տեր Սահակ քահանան[1157]:

1876 թ. քաղաքում քահանայագործած քահանաների թվում եղել են Եղիա ա. քահ. Համբարձումյանցը, Մարտիրոս Մեծատունյանցը, Թադեոս Տեր-

1151 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 2644, թ. 52:
1152 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 1158, թ. 15:
1153 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 795, թ. 29, 66:
1154 «Հովիտ», 1910, № 9, էջ 144:
1155 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 1199, թ. 13:
1156 «Էջմիածին», 2006, Ե, էջ 145:
1157 ԴՀՊ, նոր շարք, գիրք առաջին, h. Բ, էջ 235:

Վարդանյանը, Կարապետ Տեր-Գրիգորյանը[1158], Համբարձում Ջրպետյանը[1159]:

Նույն թվականին կազմված մեկ այլ վավերագիր մեզ է փոխանցել Ախալցխայում քահանայագործած հոգևորականների առավել ամբողջական ցանկ՝ Եղիա ավագ քահանա Համբարձումյանց, Գևորգ Գրիգորյան, Աբրահամ Ղազազյանց, Հովհաննես ավագ քահանա Տեր-Մարգարյան, Հովհան Հարոյանց, Մարտիրոս Մեծատունյանց, Մեսրոպ Կանցյանց, Համբարձում Ջրպետյանց, Կարապետ Տեր-Գրիգորյանց, Կարապետ Տեր-Մարտիրոսյանց, Հովհաննես Կարապետյան, Մկրտիչ Մխիթարյանց, Գրիգոր Վանանդյանց, Թադեոս Տեր-Վարդանյանց, սարկավագ Խաչատուր Տեր-Մկրտչյան, դպիրներ՝ Մարկոս Գասպարյան, Հովհաննես Հակոբյան, Մկրտիչ Բարադամյանց, Ղազարոս Բաղդասարյանց, Տիգրան Միսակյանց, Գարեգին Ղազազյանց, Հարություն Տեր-Մկրտըչյան և Մկրտիչ Գայֆեճյանց[1160]:

1883 թ. քաղաքի հայ առաքելական համայնքն ուներ 18 քահանա և 7 հոգևոր ստորին պաշտոնյա[1161]:

1900 թ. հուլիսի 2-ին Սբ. Ստեփանոս եկեղեցու օծման հանդեսի սպասավորներ են հիշվում Կարապետ ավագ քահանա Տեր-Գրիգորյանը, Գ. քհն. Միսակյանը և Մինաս քհն. Ազնավուրյանը[1162]:

1905 թ. քաղաքի հայ առաքելական համայնքն ուներ 4 քահանա[1163]:

1909 թ. Ախալցխայի հայ առաքելական հոգևորականների կազմում էին Աբրահամ Տեր-Աբրահամյան Ղազազյանը (1895 թ. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով պարգևատրվել է կամիլավկայով)[1164], Ներսես Տեր-Եղիայան Համբարձումյանը, Գևորգ Կարապետյան Միսակյանը, Մինաս Հարությունյան Ազնավուրյանը և Կարապետ Տեր-Կարապետյան Տեր-Մարտիրոսյանը[1165]:

1918 թ. հունվարին հիշվում է Մինաս քահանա Ազնավուրյանն ի հիշատակ իր հանգուցյալ հոր՝ Մկրտիչ Ազնավուրյանցի՝ Կարապետյան և Եղիսաբեթյան դպրոցներին 100 ռուբլի փոխանցելու առնչությամբ[1166]:

**Հայ կաթոլիկե եկեղեցիներ.** սկսած առնվազն ԺԸ դարի կեսերից՝ Ախալցխայի հայ կաթոլիկե համայնքի տիրապետությանն անցած երեք եկեղեցիներն էլ շատ ավելի վաղ (ըստ վիմագրերի՝ առնվազն ԺԳ դարի վերջ) հիմնադրված կառույցներ էին: Սույն փաստի վրա հենվելով՝ Մ. Բրոսեն եզրակացրել է, որ կաթոլիկե քարոզչությունը Ախալցխա թափանցած պետք է լիներ արդեն ԺԳ դարի վերջերին. «Ես չգիտեմ մի հեղինակի, որը մանրամասներ հաղորդած լինի Ախալցիխեի կաթոլիկական հնությունների մասին, ոչ էլ գիտեմ այդքան վաղ դարաշրջանում հռոմեական պաշտամունքի զարգացման պատճառները...: Կաթոլիկության ներմուծումը Վրաստան և վերոհիշյալ եկեղեցիների հիմնումը, հնարավոր է, որ այս փորձերի պտուղները են»[1167]:

Նշյալ ենթադրությունը համակարծիք հետազոտող Զագուրսկին հավելել է. «Դատելով ակադեմիկոս Բրոսեի հավաքած հին արձանագրություններից՝ կաթոլիկեության սկիզբն Ախալցխայում պետք է համարել ԺԳ դարի վերջը: Նույն այդ արձանագրություններից պետք է ենթադրել, որ կաթոլիկե համայնքն Ախալցխայում սկզբնավորել են հայերը: Այս ենթադրության օգտին է նաև այն հանգամանքը, որ Ախալցխայի կաթոլիկե եկեղեցիներում ծիսակատարությունը կատարվել և այժմ էլ կատարվում է հայոց լեզվով: Բացի այդ՝ ծեսերն ու որոշ տոները համընկնում են հայ-գրիգորյանական եկեղեցու ծեսերին և տոներին»[1168]:

Տեղին է նկատել, սակայն, որ քաղաքի մի քանի եկեղեցիների որմերի հայերեն միջնադարյան վիմագրերի առկայությունը, ըստ էության, սոսկ փաստում է ԺԳ-ԺԵ դարերում տեղում հայ առաքելական բազմամարդ համայնքի գոյությունը և որևէ կերպ չի առնչվում դարեր անց այդ եկեղեցիներից մի քանիսի՝ հայ կաթոլիկե համայնքին անցած լինելու խնդրի հետ: Այլ խոսքով՝ հայ-առաքելական հին եկեղեցիներից մի քանիսի՝ ԺԸ դարում հայ կաթոլիկե համայնքին պատկանելու հանգամանքը նույնիսկ մեծ ցանկության դեպքում չի կարող փաստարկ դառնալ կաթոլիկե քարոզչության թափանցումն Ախալցխա ԺԳ դար հասցնելու համար: Ընդհակառակը, ինչպես ստորև կտեսնենք, ԺԸ դարում կաթոլիկե դարձած հայերը սոսկ կարողացել են

1158 1895 թ. Կ. Տեր-Գրիգորյանցին շնորհվել է ավագ քահանայի կոչում («Արարատ», 1895, էջ 316):

1159 «Արարատ», 1876, նոյեմբեր, էջ 433:

1160 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 15:

1161 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:

1162 «Նոր-Դար», 1900, № 125, էջ 2:

1163 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 148, թ. 21-22:

1164 «Արարատ», 1895, էջ 316:

1165 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 171-172: Տե՛ս նաև ֆ. 53, ց. 1, գ. 566, թ. 16:

1166 «Շարժում», 1918, № 2, էջ 4:

1167 **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 143 (բնագրում՝ “Je ne sache pas qu’aucun auteur ait donné de détails sur les antiquités catholiques d’Akhal-Tzikhé, ni sur les causes de ce développement du culte romain à une époque si reculée... L’introduction du catholicisme à Akhal-Tzikhé, la fondation des églises sus-mentionnées, sont peut-être le fruit de ces tentatives”):

1168 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 16 (բնագրում՝ “Судя по старинным надписям, снятым академиком Броссе, начало католичества в Ахалцыхе нужно отнести к концу XIII в. Судя по этим-же надписям, нужно предположить, что начало ахалцихской католической общине положили армяне. В пользу этого предположения говорит и то обстоятельство, что богослужение в ахалцихских католических церквах совершалось и совершается по настоящее время на армянском языке. Кроме того, посты и некоторые праздники совпадают с постами и праздниками армяно-григорианской церкви”):

տիրապետել հնուց ի վեր գոյություն ունեցող և իրենց իսկ առաքելադավան նախնիների ձեռքով կառուցված քաղաքի հայ առաքելական եկեղեցիներից մի քանիսին:

1760-ական թվականներին Ախալցխայում ավելի ու ավելի տարածում գտնող կաթոլիկե քարոզչության դեմ պայքարի ընթացքում Սիմեոն կաթողիկոսն ականկալել էր հայ կաթոլիկեներին անցած քաղաքի հայոց եկեղեցիների վերադարձ դրանք կառուցած իսկական տերերին. «Եվ երեք եկեղեցիները, որ կան Ախալցխայում, հանձնվեն հայ քահանաներին...»[1169]:

1775 թ. հունվարի 1-ին հայ կաթոլիկեների ձեռքն անցած եկեղեցիների վերաբերյալ համանման ակնկալիքով նշվել է. «...ախթարմայքն զեկեղեցիսն Ախլցխայու ի խղճալի ժողովրդենէն մերմէ բռնութեամբ առեալ էին և իւրացուցեալ, և զնոսա յարտաքս թողեալ...: Որոյ աղագաւ և գրեաց սմա, գրել Սուլէյման փաշային, զի զմի զեկեղեցին յախթարմայիցն առեալ, հայոց տացէ»[1170]:

1830-ական թվականների սկզբներին կաթոլիկե հայերն ունեին երկու եկեղեցի, որոնցից մեկում ծառայում էին կապուցինները (կնգուղակիր կաթոլիկե վանականներ): Ականատեսը նկատել է, որ «Հակոբիկ հայերի եկեղեցիները ավելի լավ են կառուցված և ավելի գեղեցիկ են»[1171]:

1845 թ. քաղաքում գոյություն ուներ հայ կաթոլիկե քարաշեն 4 եկեղեցի և 1 մատուռ[1172]:

Նույնքան եկեղեցի արձանագրած այլ վավերագիր հավելել է, որ 1845 թ. հայ կաթոլիկե համայնքը կառավարում էին 6 քահանաներ[1173]:

Ի դարի սկզբներին գործում էր հայ կաթոլիկե 3 եկեղեցի[1174]:

**Երևման Սբ. Խաչ եկեղեցի.** ավանդաբար վկայվում է, որ հիմնադրվել է Է դարում. «Սուրբ Խաչ, Ներսէս Շինող կաթողիկոսից հիմնարկած»[1175]:



Ախալցխա. Երևման Սբ. Խաչ եկեղեցին հարավ-արևելքից Ռաբաթի բարձրադիր մասում

Գտնվում է քաղաքի հին՝ Ռաբաթ կոչված թաղամասի ամենաբարձր մասում. «Հին քաղաքի մէջ եղած Հայ կաթոլիկաց եկեղեցիներէն Ս. Նշան կամ Երեւման Ս. Խաչ, կառուցուած է բարձր բլրան վրայ, Հայոց միջին դարու եկեղեցեաց ձևով, ոչ այնչափ սրածայր կաթողիկէիւ, որ բաւական հնութեան նշան է...: Զանազան ժամանակաց մէջ նորոգուած է եկեղեցիս...»[1176]:

ԺԸ դարի առաջին կեսից տիրել են հայ կաթողիկեները: Շնորհիվ տարբեր դարերում պարբերաբար իրականացված մի շարք նորոգությունների, որոնց հետքերը որմերի՝ տակավին կանգուն հատվածների վրա ցարդ հայտնի են, միանգամայն կանգուն և անվնաս է եղել մինչև ռուսների՝ Ախալցխան գրավելը:

1828 թ. օգոստոսի 15-ին քաղաքն ընդհանուր գրոհով վերցնելու որոշմամբ ռուսական զորամասերից մեկը հազարապետ Բորոդինի գլխավորությամբ թեժ մարտեր է ծավալել եկեղեցում և նրա շուրջ ամրացած թվով 500 թուրքերի դեմ: Ի վերջո ռուսները ստիպված էին օգնության հասցված թնդանոթով ռմբակոծել եկեղեցին, որից և կործանվում է գմբեթը[1177]:

ԺԹ դարի երկրորդ կեսին եկեղեցին նս ենթարկվել է մի քանի հիմնավոր նորոգությունների. «...Ս. Խաչի վերջին նորոգութիւնն եղած է 1866-ին, Ազնաւուրեան եղբարց արդեամբք»[1178], նաև «...ժողովրդապետական քարաշէն հին եկեղեցի, յանուն Վերացման ս. Խաչին, վերանորոգ. յամի 1886, ծախիւք ծխականաց և Ազնաւուրեան եղբարց»[1179]:

---

1169 **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, նշվ. աշխ., էջ 345:

1170 **ԴՀՊ**, գիրք Ը, էջ 311:

1171 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 266 (բնագրում՝ “Les Arméniens catholiques ont deux églises, dont l’une est desservie par les pères capucins; elles ne sont pas mieux construites, ni plus élégantes que celles des Arméniens jacobites”):

1172 ՎԱԴ, ֆ. 16, ց. 1, գ. 8622, թ. 31, 45:

1173 Նույն տեղում:

1174 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 77:

1175 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 443: Ցավոք, սույն ավանդությունը ո՛չ հերքելու և ո՛չ էլ հաստատելու հիմքեր չունենք: Անկասկած, ավանդապատում կամ նույնիսկ մտացածին է նաև սույն վկայությունը. «...բոլորը գտնվում են միմյանցից ոչ հեռու: Ամենից բարձր տեղը զբաղեցնում է Սբ. Խաչ եկեղեցին: Ակադ. Բրոսեն վկայում է, թե այս եկեղեցին կոչվում էր նաև „Կոկոլա„ այսինքն Նիկոլայի եկեղեցի, որն իր անունը ստացել էր հիմնադրի՝ վրացի Նիկոլայ Շալիկովի անունից: Կառույցի արձանագրությունները ներկայումս եկեղեցին Շալիկովին վերագրելու հիմք չեն տալիս: Հին արձանագրությունները հայերեն են» (**Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 18 (բնագրում՝ “...все они находятся в весьма близком разстоянии друг от друга. Самое высшее место занимает церковь св. Креста. Акад. Броссе утверждает, что эта церковь иначе называлась “Кокола”, т. е. церковью Николая, по имени своего оснавателья грузина Николая Шаликова. По надписи о сооружении этой церкви Шаликовым в настоящее время не оказывается,- старинныя-же надписи-армянския”):

1176 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 60:

1177 **Նուրիխան Մ.**, նշվ. հոդվ., էջ 104:

1178 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 61:

1179 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 77:



**Ախալցխա. Երևման Սբ. Խաչ եկեղեցու հարավային ճակատը (լուս.՝ 1988 թ.)**

1903 թ. հին եկեղեցին ընդարձակելու նպատակով կառույցին արևմուտքից կցվել է մի ընդարձակ շինություն[1180]:

Նույն թվականին մահմեդականների կողմից «Սիվրի քիլիսե» կոչված եկեղեցու մասին նշվել է. «...այսինքն սրածայր եկեղեցի, որովհետև ունի միջին դարերի հայկական եկեղեցիների ձևակերպու-

1180 ՎԱԳ, ֆ. 204, ց. 1, գ. 1338, թ. 1-23:



**Ախալցխա. Երևման Սբ. Խաչ եկեղեցու զանգակատունը հարավ-արևմուտքից, հարավից և հատվածներ ներքին ծավալներից (լուս.՝ 1988 թ.)**

թիւնը իր կաթուղիկէով: Այժմ կէս մասը նորոգուած է, բայց կաթուղիկէն կայ կանգուն»[1181]:

*Քահանա.* Սբ. Խաչ եկեղեցուն սպասավորած հոգևորականներից հայտնի է *Պողոս Թաթևոսը*. «որ և կրօնուսոյց է քաղաքական դպրատան մէջ»[1182]:

*Վիմագրեր.* հետազոտողներից Մ. Բրոսեն նշել է. «Մեծ էր իմ զարմանքը, երբ հայկական կաթոլիկ Խաչի եկեղեցում (նաև կոչվում է «Կոկոլայի»), որը լեռան գագաթին է, տեսա *հիշատակի քարեր*՝ խաչքարեր (այսպես են կոչվում քարե սալերի վրա քանդակված խաչերը՝ հայերեն գրություններով, որոնք հավերժացնում են հիմնողի հիշատակը. արձանագրությունը սովորաբար սկսվում է այս բառերով՝ O,

1181 «Նոր-Դար», 1903, № 19, էջ 1:

1182 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 77:





**Ախալցխա. Երևման Սբ. Խաչ եկեղեցու զանգակատունը հարավ-արևմուտքից, հարավից և հատվածներ ներքին ծավալներից (լուս.՝ 1988 թ.)**

խաչ, հիշիր ինձ)՝ ամրացված պատերին, և 1454, 1475, 1491 թվականների տապանաքարեր: Եկեղեցին, ինչպես վկայում է արևելյան ճակատին գրտնըրվող մարմարե մի սալ, որը դժբախտաբար ջարդված է և այլ քարով նորոգված, կառուցվել է 1451թ.»[1183]:

1183 Brosset M., նշվ. աշխ., էջ 139 (բնագրում՝ “A mon grand étonnement je trouvai encastrées dans les murs de l’église catholique arménienne de la Croix, dite aussi “de Cocola”, située au sommet de la montagne, *des croix de Souvenir* (On donne ce nom à des croix sculptées sur dalles de pierres et environnées de légendes arméniennes, destinées à perpetuer le souvenir du fondateur. L’inscription commence ordinairement par les mots: “O croix, souviens-toi de moi...”) et des pierres tumulaires des années 1454, 1475, 1491. L’église elle-même, ainsi qu’en fait foi un marbre, malheuresement brisé, maçonné dans la façade de l’E, fut bâtie en 1451”): Տե՛ս նաև **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 60:



Ախալցխա. Երևման Սբ. Խաչ եկեղեցու զանգակատունը հարավ-արևմուտքից, հարավից և հատվածներ ներքին ծավալներից (լուս.՝ 1988 թ.)



Ախալցխա. Երևման Սբ. Խաչ եկեղեցին հյուսիս-արևելքից (նկարն արտատպված է Ղ. Ս. Էփրիկյանի նշյալ աշխատությունից, էջ 59)



Ախալցխա. Երևման Սբ. Խաչ եկեղեցու հատակագիծը

*Ճարտարապետություն.* եկեղեցին ունեցել է արտաքուստ ուղղանկյուն հատակագծով կենտրոնագմբեթ հորինվածք: Ներկայումս գոյություն չունեցող գմբեթը բաղկացած էր սրածայր վեղարով ավարտվող ութանիստ թմբուկից: Կառուցված էր սրբատաշ և կոփածո քարով, կրաշաղախով:









**Ախալցխա. հատվածներ Երևման Սբ. Խաչ եկեղեցու հարավային կողմում տարածված գերեզմանոցից (լուս.՝ 1988 թ.)**



Ախալցխա. խաչքար ԺԵ դ. (լուս.՝ 1988 թ.)

Հայ միջնադարյան ճարտարապետությանը հարազատ ընդհանուր համաչափությունները տակավին ԺԹ դարավերջի այցելուին հիշեցրել են Վաղարշապատում գտնվող Սբ. Հռիփսիմե եկեղեցին. «...կաթոլիկականը՝ հին քաղաքում, ավելի հին իր տեսքով և չափերով հիշեցնում է Էջմիածնի մոտ գտնվող Սբ. Հռիփսիմեն»[1184]:

Ի դարի սկզբին հին եկեղեցուն արևմտյան կողմից կցվում է արտաքուստ համակ սրբատաշ, ներքուստ կոփածո և անմշակ քարով, արևմտյան և հարավային ճակատներում մեկական մուտքերով կառուցված ընդարձակ սրահ: Վերջինիս հարավային մուտքի առջև կանգնեցվում է նաև կրկնահարկ զանգակատուն, որի առաջին հարկը քառայուն է, իսկ երկրորդը կազմված է սրածայր վեղարի տակ առնված ութ սյուներից: Որպես շինաքար՝ նորակառույցի որմերում, գործածվել են ԺԹ դարին վերաբերող վրացագիր մի քանի տապանաքարերի բեկորներ:

*Գերեզմանոց.* տարածվում է եկեղեցու շուրջը: Միջնադարյան հատվածի մնացորդները զբաղեցնում են եկեղեցուց հարավ և արևմուտք ընկած բլրալանջերը:





Ախալցխա. տապանաքար ԺԵ-ԺԶ դարեր (լուս.՝ 1988 թ.)

Համադրելով հետազոտողների վկայությունները՝ հարկ է նկատել, որ հնավայրում անհամեմատ ավելի մեծ թվով արձանագիր հուշարձաններ են եղել, մինչդեռ այժմ դրանք գրեթե հազվագյուտ են. «...շրջապատված է նախկինում գերեզմանոցի ծառայած ընդարձակ բակով: Նրանում ցրված են բավականին մեծ թվով խոյատապաններ: Այսօրինակ կոթողներ ընդհանրապես հանդիպում են հին հայկական գերեզմանոցներում»[1185]: Ի դեպ, գերեզմանոցում եղել են նաև խոյատապաններ, որոնցից ցարդ տեղում պահպանվել է միայն մեկը. «Եկեղեցու բակի մուտքի եզրերին կանգնած են երկու մեծ խոյատապաններ»[1186]:

---

1184 “Материалы по археологии Кавказа”, выпуск IV, Москва, 1894, с. 75 (բնագրում՝ “...другая католическая в старом городе, более древная, напоминающая по виду и размерам Рипсиме, около Эчмиадзина”).

1185 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 19 (բնագրում՝ “...окружена просторным двором, бывшим в прежнее время кладбищем. На нем разбросано довольно много камней с статуями баранов. Эти статуи встречаются вообще на старинных армянских кладбищах”):

1186 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 20 (բնագրում՝ “У входа на церковный двор стоят по бокам две большия статуи баранов”):

Գերեզմանական կոթողների (խաչքարեր և տապանաքարեր) հիմնական մասը մեզ է հասել տեղահանված վիճակով: Դրանցից է եկեղեցու արևմըտյան կողմում գտնվող ակնհայտորեն ԺԴ-ԺԵ դարերին վերաբերող գեղաքանդակ խաչքարը (214 x 116 x 21 սմ), որը 1812 թ. վերստին գործածվել է իբրև գերեզմանաքար (ստորին մասում ագուցվել է վրացերեն արձանագրությամբ մարմարե սալիկ):

1988 թ. դրությամբ տեղում պահպանվել էին բազմաթիվ խաչքարերի և տապանաքարերի բեկորներ, որոնց թվում մի քանիսը՝ նաև արձանագիր:

Տապանաքար. Երևման Սբ. Խաչ եկեղեցու հարավային կողմում, խոշոր, գեղեցիկ և համաչափ տառերով՝ 6 տող.

*Այս | է հանգ|իստ Խո|շիս որ|դի Գար|ապե|տին:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Ծանոթ.* ժամանակը՝ ԺԵ-ԺԶ դարեր:

Խաչքար. գեղաքանդակ (158 x 90 x 30 սմ), Երևման Սբ. Խաչ եկեղեցու հարավային ճակատին կից զանգակատնից մի քանի մետր հեռավորության վրա տեղահան, սակայն ամբողջական.

*Թվ(ին) | ՊՂ|Զ (1447) | Ես Խ|աչա|տո|ւրս | և իմ |... խ|աչս | յիշա|տա|կ մե|զ և ...:*

*Հրատ.* առաջին անգամ:

Խաչքար. ընկած Երևման Սբ. Խաչ եկեղեցու ներսում (42 x 34 x 13 սմ):

*Յ(ի)շ(ատակ է) | Նուրիջ|ան(ին) | Ռ|ԽԷ (1598):*

*Հրատ.* առաջին անգամ:

Տապանաքարի բեկոր.

*...եզ|...:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Ծանոթ.* գրչությունը՝ ԺԵ-ԺԶ դդ.:

Երեսապատի խաչազարդ քար՝ եկեղեցու հարավային ճակատին.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է խաչ|ս...:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Ծանոթ.* գրչությունը՝ ԺԵ-ԺԶ դդ.:

Նախկին հետազոտողներից Մ. Բրոսեն հնավայրից ընդօրինակել է հետևյալ արձանագրությունները.

Սբ. Խաչ եկեղեցու «արևելյան ճակատի մի մարմարի վրա, որը ձախ կողմից ջարդված էր, կարդացինք».

*Շինող ս(ուր)բ Ա(ստուա)ծնին | Քարիմուլ Վարչես | ...գորագլալ Գրիգոր | ...իս Սարգիս քահանայ Քրիստէսի | սբս չր. թվ :Զ: (1451), ոհն:*

*Հրատ.* **Brosset M.,** նշվ. աշխ., էջ 141:

*Ծանոթ.* վիմագրի վերջնամասում առկա երեք տառերի առնչությամբ, որը, կարծում ենք, «Ոհանէս» անձնանվան հապավված ձևն է, հեղինակը նշել է. «Տարեթվին հաջորդում են երեք տառեր, որոնք չկարողացա տարբերել» (**Brosset M.,** նշվ. աշխ., էջ 141 (բնագրում՝ “Je ne peux me rendre compte des trois lettres qui suivent la date”): Առհասարակ վերծանությունը թվում է ոչ այնքան հմտորեն իրականացված:

Խաչքար. ագուցված է եղել «Կոկոլայի» (Խաչի) եկեղեցու հարավային պատի մեջ.





**Ախալցխա. 1828 թ. օգոստոսի 15-ին զոհված քաջամարտիկ Պետրոս Բեժանովի (հայ կաթողիկե) տապանաքարը (լուս.՝ 1988 թ.)**

*Թվ(ին) ՋԳ(1454) Ես Մամաս գոր... | լա կանգնեցի խաչս յիշատ(ակ):*

*Հրատ.* **Brosset M.,** նշվ. աշխ., էջ 141:

Խաչքար կամ տապանաքար. «Կոկոլայի» (Խաչի) եկեղեցու «ավելի հեռու, արևմտյան մասում».

*Թվ(ին) ՋԻԴ (1475) ...*

*Հրատ.* **Brosset M.,** նշվ. աշխ., էջ 141:

*Ծանոթ.* արձանագրության շարունակության առնչությամբ հեղինակը նշել է. «ավելին չկարողացա կարդալ»:

Եկեղեցու արևելյան ճակատին եղել է.

*Յիշատակ է խաչս | Մուլ Քեջան խաբին | ն... թվ. ՋԽ (1491):*

*Հրատ.* **Brosset M.,** նշվ. աշխ., էջ 141:

Տապանաքար. Սբ. Խաչ եկեղեցու արևմտյան կողմում.

*Здесь храбрый погребенъ; достойный сынъ отчизны | Сославой умеръ онъ, и жиль безъ*



**Ախալցխա. խաչքար (1598 թ.) եկեղեցու ներսում, տապանաքարի բեկոր (ԺԵ-ԺԶ դդ.) գերեզմանոցում և արձանագիր խաչաքանդակ երեսապատի քար եկեղեցու հարավային ճակատում**

*укоризны, | Почтите юноши собрата прахъ съ слезой, | Онь кротокъ сердцемъ быль но мужественъ душой. | Ширванскаго пехотнаго полка прапорщикъ | Петръ Осиповичъ Бежановъ, родился въ 1807, | генваря 6го дня; убитъ въ кровопролитномъ бое | съ Турками, при штурме г. Ахалцыха, | 1828 года, авг. 15го дня, на 22 г. отъ роду.*

*Հրատ.* **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 141:

*Ծանոթ.* «Գերեզմանատանը մի գեղեցիկ սպիտակ մարմարե սալաքար ծածկում է հայ կաթողիկե քաջ ենթասպա Պյոտր Օսի-









**Ախալցխա. տեր Ստեփան Աբինյանի և Պետրոս Մակարյանի տապանագրերը (լուս.՝ 1988 թ.)**

պովիչ Բեժանովի աճյունը: Սպանվել է 1828 թ. օգոստոսի 15-ի հարձակման ժամանակ: Բնակչությունը դեռևս խոնարհվում է նրա հերոսական քաջության առջև: Տապանաքարի վրա երկու գեղեցիկ արձանագրություններ կան՝ ռուսերենով և վրացերենով» (**Brosset M.**, էջ 140 (բնագրում՝ “Dans le cimetière, une belle plaque de marbre blanc couvre le cendre du brave прапорщикъ, Pètre Ossipovitch Béjanof, Arménien catholique, tué lors de l’assaut, le 15 août 1828. Son héroïque valeur est encore l’objet du respect de la population, et deux belles inscriptions, russe et géorgienne, couvrent sa pierre tumulaire”: Հմմտ. **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 61):

Մ. Բրոսեն ունի նաև հայերեն մի քանի արձանագրությունների նկարագրություններ. «Եկեղեցու բարձունքում՝ խաչի վրա, ես կարդացի հետևյալ անունները՝ Սուլթան, Սիթի-Խաթուն, իսկ գերեզմանոցում տեսա Գրապիետի՝ Գոչիի որդու (875-1426), Մարիամի (1151-1702), գերեզմանը...: Անթվագիր, խիստ վնասված խաչերի վրա ես կարդացի հետևյալ անունները՝ Մելքիսեթ, Պապ Գորեցի՝ Զուրաբի որդի. մեկ ուրիշ խաչի վրա կարդացի Մխիթարուհու, Գուլխանի և նրա ամուսնու՝ Ամիրան Մուրատականի անունները»[1187]:

Գերեզմանոցից մեզ հասած տապանագրերից ուշագրավ են հետևյալները.

Տապանաքար. վերին երեսին ագուցված մարմարե սալիկին քառատող վրացերենից հետո՝ քառատող հայերեն.

*Այս է տապան ս(ր)բ(ո)յն Յովհաննու եկ/եղեցոյ կաթօլիկաց հոգնարձան / քահանային Տէր Ստեփան Աբինե/ան, ծնե(ա)լ 1771 եւ 6.9.1842 վ(ա)խճ(անեա)լ:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. 9 տող.

*Յայսմիկ շիրմի / հանգեաւ Պետ/րոս Մակարե(ա)ն, որն կրեց 30 ամ պաշտօն աթոռ... / ծառաեց անվարծ ս(ուր)բ / եկ(ե)ղ(ե)ց(ո)յ ... / ...արժանի (՞) / յուս(ով) ս(ուր)բ յարութ(եան):*

Հրատ. առաջին անգամ:

**Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի.** Ախալցխայի՝ միջնադարում կառուցված այն եկեղեցիներից է, որ նախապես գործել է որպես հայ առաքելական: ԺԸ դարի կեսերին նորոգվելուց հետո պատկանում էր հայ կաթողիկե համայնքին:

Գտնվում է Ռաբաթ թաղամասում՝ Երևման Սբ. Խաչ եկեղեցուց փոքր-ինչ ավելի ցած. «Էլ ավելի ներքև Հովհաննես Մկրտչի եկեղեցին է...»[1188]: Ըստ վկայությունների՝ այն վայրը, որտեղ գտնվում է եկեղեցին, հնում անտառածածկ էր. «Ինձ ասացին, որ այդ եկեղեցին առաջ անտառի մեջ է եղել և շատ փոքր»[1189]:

Այս մասին ակնարկ ունի նաև հետազոտող Զագուրսկին. «...արտաքինից դիտելիս ուշադրություն է գրավում խորանից աջ գտնվող և ողջ կառույցի հետ ամենևին ոչ համահունչ կցակառույցը: Բրոսեն սրան անվանում է խորան, սակայն նշյալ շինությունը չունի այդ նշանակությունը: Տարեցների վկայությամբ՝ այդտեղ ինչ-որ ժամանակ եղել է թավ անտառ: Մի քանի հարյուր տարի առաջ այդ անտառում գտել և վերականգնել են հին մի մա-

1187 **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 141 (բնագրում՝ “Dans le haut de l’église, j’ai trouvé, sur une croix, les noms de Soulthan, de Sithi-Kathoun: et dans le cimetière, la tombe de Grapiet, fils de Gotchi, † en 875-1426: de Mariam, † en 1151-1702... Sur des croix sans date, mais très endommagées, j’ai trouvé, sur une croix, les noms de: Melkiseth; de Pap Gorétsi, i. e. de Gori, Fils de Zourab; une de la femme Mkhitharouhi, de Goulkhan et de son mari; d’Amiran Mouratacan”): Տեղագրության այլ նկարագրության մեջ նշված է «...նշանաւոր էր մանաւանդ Ս. Յովհաննիսի հին եկեղեցին, բարձր բերդին վրայ շինուած» (**Նուրիխան Մ.**, նշվ. հոդվ., էջ 102):

1188 **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 140:

1189 **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 143:







**Ախալցխա. Սբ. Յովհաննես Մկրտիչ եկեղեցու տեսքը արևմուտքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ 1988 թ.)**

տուռ: Դրան պետք է որ կցած լինեին Հովհաննես Մկրտիչ անվամբ եկեղեցին: Այս եկեղեցուց մուտք կա դեպի նշյալ մատուռը»[1190]:

Հնավանդ հայ առաքելական եկեղեցին հայ կաթողիկեի վերափոխելու առնչությամբ գրավոր աղբյուրները մատնանշում են 1743[1191] և 1750[1192] թվականները՝ որպես իրականացված վերակառուցման աշխատանքների ժամանակաշրջան:

Հերթական հիմնավոր վերաշինությունը տեղի է ունեցել շուրջ մեկ դար անց. «...Ժողովրդապետական քարաշէն եկեղեցի, յանուն ս. Յովհաննու Մկրտչի, 1850 ամի...»[1193]:

Ի դեպ, հիշյալ թվականին կատարված աշխատանքների մասին թողնված հիշատակագրությունը, բարեբախտաբար, ցարդ պահպանվել է.

Արձանագրություն. 3 տող.

*Շինեցաւ այս վանքս / յարքիմանտրիտ Պօղոս վարդապետէ / Շահդուլեան, յամի տ(եառ)ն 1850:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. արձանագրությունն այժմ փոխադրված է Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակ, որտեղ և մաս է կազմում հավաքածու քարեդարանի:

Եկեղեցուն առնչվող հաջորդ հիշատակությունը վերաբերում է 1876 թ.[1194]:

Եկեղեցին նորոգելու հերթական անհրաժեշտությունը ծագում է ԺԹ դարավերջին: 1900 թ. կազմվում է վերաշինության նախագիծ. «Ներքին գործերի մինիստրութիւնը հաստատել է Ախալցխայում հայ կաթոլիկաց ս. Յովհաննու Մկրտչի հին եկեղեցու տեղ նոր եկեղեցի կառուցանելու համար ներկայացուած ծրագիրը»[1195]: Թեև 1910 թ. համարվում է եկեղեցու վերաշինության տարեթիվ. «...վերանորոգուած յամի 1910, ծախիւք ծխականաց»[1196], սակայն ընդամենը 3 տարի անց եկեղեցին կրկին հիշվում է «...շատ հին և խարխուլ...»[1197] դրության մեջ:

1916 թ. առաքելական հայ կաթողիկե վարչությունը թույլտվություն է ստանում եկեղեցու նորո-

1190 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 18 (բնագրում՝ “...при осмотре ея снаружи поражает внимание боковая пристройка, находящаяся направо от алтаря и нисколько не гармонирующая с целым зданием. Броссе называет ее ризницею, но означенная пристройка не имеет этого назначения. Там, по сказаниям старожилов, рос когда-то дремучий лес. В этом лесу, несколько сот лет тому назад, отыскали и возобновили ветхую часовню,- к ней, должно быть, пристроили церковь во имя Иоанна Крестителья. Из этой церкви и ведет вход в означенную часовню...”):

1191 «Մշակ», 1888, № 26, էջ 1:

1192 “Кавказский календарь на 1886 г.”, с. 154.

1193 Օրացոյց եւ պատկեր տօնից, 1916, Թիֆլիզ, էջ 77:

1194 «Փորձ», 1876, № 1, էջ 443:

1195 «Նոր-Դար», 1900, № 72, էջ 1:

1196 Օրացոյց եւ պատկեր տօնից, 1916, Թիֆլիզ, էջ 77:

1197 «Նոր-Դար», 1903, № 19, էջ 1:



**Ախալցխա. 1850 թ. Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու վերաշինության կապակցությամբ Պողոս վարդապետ Շահղուլյանի թողած հիշատակագրությունը (լուս.՝ 1988 թ.)**

գության համար մինչև 2000 ռուբլի գումարի սահմաններում հանգանակություն կատարել Ախալքալաքի գավառում[1198]:

*Ճարտարապետություն.* ունի միանավ թաղածածկ, բազիլիկ հորինվածք: Բացառությամբ կառուցողական առավել պատասխանատու հատվածների, օրինակ՝ որմնասյուները, ինչպես նաև արտաքին երեսապատը, որոնք իրականացված են սրբատաշ քարով, մնացած հատվածները կառուցված են անմշակ քարով, կրաշաղախով: Պահպանված միակ մուտքը բացված է հյուսիսային ճակատից: Մինչև 4-5 մ բարձրությամբ առավել բարվոք պահպանվել է խորանին հարող հատվածը: Եկեղեցուց մի քանի քայլ հեռավորությամբ բարձր պատվանդանի վրա կանգնած կրկնահարկ զանգակատունն է: Եկեղեցու արտաքին չափերն են՝ 14, 90 x 6,87 մ:



**Ախալցխա. Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հատակագիծը**

*Քահանա.* 1780 թ. հիշվում է «...տէր Գրիգոր Կրուխիճամիանք Բարօյի եկեղեցւոյ սրբոյն Յօհաննու Մկրտչին տեղոյս Ախցխու (նույնի վրացերենի թարգմանության մեջ՝ «տեր Գրիգոր Կրուխիճամիանք [այսինքն՝ քխսկանակեր], Ախալցիխեի և նրա կաթոլիկ քեմի ավագն ու հաջորդը, Հովհաննես Մկրտչի եկեղեցու միաբանը»)[1199]:

1915 թ. եկեղեցում քահանայագործել է *Գաբրիել Գոզալովը*[1200]:

*Վիմագրեր.* հիմք ընդունելով նախկին հետազոտողների վկայությունները՝ եկեղեցու որմերը պատված են եղել հայերեն բազմաթիվ վիմագրերով: Ցավոք, դրանք անխտիր ոչնչացվել են խորհրդային տարիներին եկեղեցու որմերի մեծագույն մասը քանդելու հետևանքով, ուստի ստորև ստիպված ենք բավարարվել սոսկ նախկին հրատարակությունների հավաքման, համադրման և վերահրատարակման աշխատանքով:

Արձանագրություն. «...խորանի դռան կամարի քարին կա հայերեն տարեթիվ, ...ուրիշ ոչինչ նշված չէ».

*ՉԽԷ (1298):*

*Հրատ.* **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 140: Տե՛ս նաև **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 61:

Արձանագրություն. 5 խաչաքանդակների շուրջ սրբանուններ են. «...խաչերն իրենց ոճով նմանվում են գեորգիևյաններին...» (բնագրում՝ “кресты, по своему очертанию, имеют сходство с георгиевскими), որոնց տակ բուն արձանագրու-

1198 “Кавказ”, 1916, № 231, с. 3 (բնագրում. “Апостольскому администратору армяно-католиков Российской Империи разрешено произвести в Ахалкалакском уезде сбор пожертвований, на ремонт ахалцихской армяно-католической Св. Иоанна Крестителя церкви, в размере 2,000 руб”):

1199 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի, «Բանբեր Մատենադարանի», h. 4, Երևան, 1958, էջ 402-403:

1200 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 77:



**Ախալցխա. Սբ. Յովհաննես Մկրտիչ եկեղեցու տեսքը արևմուտքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ 1988 թ.)**

թյունն է: Բրոսեն սխալմամբ նշում է միայն 4 խաչաքանդակների առկայության մասին, իսկ վիմագրից ունի միայն թվականը. «Մի այլ քարի վրա չորս խաչ է պատկերված և գրված է այս տարեթիվը... *ՌԿ (1511)*»:

*Սբ. Գրիգոր, Սբ. Ածածին, Ամենայփրկիչ, Սբ. Յովհաննէս, Սբ. Գէորգ:*

*Թվին ՌԿ (1511) ին | յիշատակ է | Սաղաթիարին, Դովլաթիարին, Գուլբահարին, Մուրատին, Սպանդիարին:*

*Հրատ.* **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 19: Տե՛ս նաև **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 140 (բնագրում՝ “Sur une autre pierre, ornée de quatre croix *de Souvenir*, on lit la date 1511”.): **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 61:

Տապանաքար. Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գերեզմանոցում.

*ՌԾԱ (1602):*

*Հրատ.* **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 142:

Մ. Բրոսեն ունի նաև իր համար դժվարընթեռնելի արձանագրությունների նկարագրություններ. «Միևնույն քարի վրա չորս խաչ տեսանք՝ հետևյալ անուններով՝ Մադաթիար, Դովլաթիար, Գուլթահար, Մուրատխան, և տարեթիվը.՝ ՌԿ (1511)»[1201]:

1201 **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 142-144 (բնագրում՝ “Quatre croix de souvenir, sur une même pierre, avec les noms: Madathiar, Dovlathiar, Goulthahar, Mouratkhan, et la date: (ՌԿ՝ 1511)”:



**Ախալցխա. Պողոս վարդապետ Շահղուլյանի գերեզմանաքարը (լուս.՝ 2007 թ.)**

Գրեթե երեք տասնամյակ անց եկեղեցու հայերեն վիմագրերին անդրադարձած Զագուրսկին նշել է. «Պատերի այլ տեղերում նկատեցինք հայկական խաչի պատկերներ, որոնց ծայրերն ունեն խոյի ոլորված եղջյուրների տեսք»[1202]:

Տապանաքար. կոթողաձև, արևմտահայաց նիստին եռալեզու՝ վրացերեն (3 տող), հայերեն (3 տող), լատիներեն (8 տող) արձանագրված է.

*ესეა სამარე კავკასიის ამიერ ს(ომეხთა) კ(ათოლიკეთა) წი/ნამძღ(ვ)რის პავლე მ(ამისა) შაჰყულიანისა / შ(ობილი?) 1771 და გ(არდაცვლილი) 25.6.1855*

*Այս է տապան յայսկոյս Կովկասու | հայ-կաթ(ողիկէ) առաջնորդ Պօղոս վ(արդապետ) Շահ|ղուլեան:*

*Hoc monumentum in testemonium venerati|onis praesidi Armeno-Ka|tholicae ecclesiae | Trans Caucasica pro|vincia archimandritae | Paulo Schachuliani | XXV. Junii MDCCCLV.*

1202 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 19 (բնագրում՝ “В других местах на стенах заметили мы изображения армянских крестов, концы которых имеют вид загнутых баранних рогов”):



**Ախալցխա. հատված հին քաղի (Ռաբաթ) հայոց միջնադարյան գերեզմանոցից (լուս.՝ 1988 թ.)**

*Հրատ.* առաջին անգամ:

*Ծանոթ.* ներկայումս տապանաքարը պահվում է թանգարանի վերածված մզկիթի ներսում: Ի դեպ, Զագուրսկին դամբանագիրը ներկայացնում է իբրև երկլեզվյան. («Եկեղեցու մոտ Շահղուլյանի դամբարանն է, որի վրա կա արձանագրություն վրացերեն և լատիներեն լեզուներով: Վերջինում նա կոչված է վարդապետ», բնագրում՝ "Возле церкви-гробница Шахулиана, а на ней надпись на грузинском и на латинском языках. В последней он назван архимандритом", **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 19), մինչդեռ վիմագիրը եռալեզու է: Բնագրի լատիներեն մասում առկա են ուղղագրական սխալներ:

Արձանագրության վրացերեն և լատիներեն բնագրերը գրեթե նույնական են հայերենի հետ, ուստի դրանց թարգմանությունը նկատել ենք ավելորդ:

**Սբ. Աստվածածնի Վերափոխման (Վերափոխման ամենաասուրբ կուսին Մարիամու) եկեղեցի.** գտնվում էր քաղաքի նոր մասում: Կառուցման դրդապատճառ է դարձել հայախոս և վրացախոս հայ կաթողիկեների միջև միմյանց նկատմամբ ծագած անհանդուրժողանության մթնոլորտը, որից ելնելով՝ հայախոս հայ կաթողիկեները որոշում են իրենց համար առանձին եկեղեցի կառուցել. «...տեղացի վրախօս Հայ-կաթօլիկաց ցուցած հակակրութենէն հիմնեալ է այժմեան Ս. Աստուածածնի Վերափոխման եկեղեցին 1833-1834 թուականներու մէջ...»[1203]:

Մի տեղեկության համաձայն՝ կառուցվել է 1836 թ. «...ժողովրդապետական քարաշէն եկեղեցի, յանուն Վերափոխման ամենասուրբ Կուսին Մարիամու, 1836 ամի, ծախիւք ծխականաց»[1204]:

Եկեղեցու օծման հանդեսը կատարել է Եփրեմ վարդապետ Սեթյանը 7 վարդապետների հետ[1205]:

Ի դեպ, որոշ ժամանակ անց հայախոս և վրացախոս հայ կաթողիկեների միջև հակասություն է ծագում նաև այս եկեղեցու խնդրով, բայց այս անգամ հաղթում են հայախոսները. «1875 թուին հին քաղաքէն մի քանի վրախօս Հայ կաթոլիկներ՝ նոր քաղաքը բնակութիւն հաստատելով, կը յաջողին վրախօս քահանայ մը ունենալ Վերափոխման եկեղեցւոյ մէջ, որ և ժամանակ մը հայերէն Աւետարանէ վերջ՝ կը կարդար նոյնը վրացերէն, որով երկար ժամանակ ոչ սակաւ կռիւներու առիթ եղաւ հայ և վրախօս կաթոլիկներու մէջ: Ի վերջոյ, Հայք, որ ջերմ պաշտպան են ազգային ծիսից և արարողութեանց, յաղթող կը հանդիսանան, և Վրաց լեզուն եկեղեցւոյ մէջ գործածուիլը տէրութենէն կ'արգիլուի»[1206]:

Եկեղեցու վերաբերյալ հիշատակություն ունենք նաև 1876 թ.[1207]:

1946 թ. եկեղեցու տեղում կառուցվել է շրջկոմի շենք:

Զանգակատունը կառուցվել է 1843 թ. (ներկայումս ոչնչացված հայերեն վիմագիրը ժամանակին գրի է առել Մ. Բրոսեն).

Արձանագրություն.

*Շինեցաւ զանգակատունս 1843, օգոստ. 15:*

*Հրատ.* **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 144:

*Քահանա.* 1915 թ. քահանայագործել է *Անտոն Գարոյանը*. «որ և կրօնուսոյց է միդասեան վարժարանի»[1208]:

1203 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 60:
1204 Օրացոյց եւ պատկեր տօնից, 1915, Թիֆլիզ, էջ 77:
1205 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 38:
1206 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 60:
1207 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 443:
1208 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 77:



Ախալցխա. խաչքարեր թանգարանի տարածքում, ԺԵ-ԺԶ դարեր (լուս.՝ 2007 թ.)




**Ախալցխա. խոյաձև (փոխադրված Ռաբաթ թաղամասից) և եկեղեցաձև տապանաքարեր Մարդա թաղի հայոց գերեզմանոցից (լուս.՝ 1988 թ.)**

1916 թ. հիշվում է քահանա *Դանիել Ասատուրյանը*[1209]:

**Սբ. Աստվածածնի Վերափոխման (Վերափոխման ամենասուրբ կուսին Մարիամու) կամ Սբ. Ռոզալինա եկեղեցի.** գտնվում էր քաղաքի հին մասում. «Սբ. Խաչ եկեղեցուց ներքև գտնվում է հռոմեականկաթոլիկ Սբ. Ռոզալինա եկեղեցին (պ. Բրոսեն եկեղեցին անվանում է Ամենասուրբ Կուսի), ավելի ներքև Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին է: Այս եկեղեցիների ոճը միանման է...»[1210]:

1903 թ. վկայվել է, որ եկեղեցին «...կապուցինների միաբանութեան ձեռքն է և ժամասացութիւնը լինում է լատիներէն լեզուով և երգեհոն նուագելով...»[1211]:

**Գերեզմանոց.** տարածվում է Ռաբաթ թաղամասի բարձրադիր մասում: Պահպանվել են ինչպես միջնադարյան և ուշ միջնադարյան, այնպես էլ ԺԹ-Ի դարերին վերաբերող գերեզմանաքարեր:

Հնավայրի առաջին այցելուներից մեկը 1833 թ. նշել է. «Անհասկանալի է, թե ինչու են հայերը այդքան շքեղ տապանաքարեր դնում: Դրանք կողք կողքի շարված են նրանց գերեզմանատներում: Ոչինչ ավելի տխուր չէ, քան մահվան այդ լեփ-լեցուն դաշտերը: Այդ տապանաքարերի մեծամասնությունը իրենից ներկայացնում է սալաքարեր կամ զուգահեռանիստ քարեր՝ 4 կամ 5 ոտնաչափ երկարությամբ, որոնք դրված են պատվանդանի վրա. արձանագրությունը արվում է վերևի կողմում: Երբեմն այդ վերևի կողմը կլորացված է կիսագլանի նման... Բայց ամենագեղեցիկ տապանաքարերն այն մեծ սալաքարերն են, որոնք կանգնեցված են զուգահեռանիստի գլխամասում, և որոնց վրա շատ ճաշակով քանդակված են մեծ խաչեր, որոնց հիմքը գեղեցիկ կերպով զարդարված է արաբանախշերով և վարդազարդերով: Երբեմն դրանց վերևի մասը զարդարված է հարթաքանդակներով, որոնց նյութը վերցված է Սուրբ գրքից կամ էլ սրբերի կյանքից»[1212]:

Հարկ է նշել, որ խորհրդային տարիներին գերեզմանոցը քալանդվել է և ինչ-որ իմաստով ցարդ ևս շարունակվում է անխնա ավերվել: Սկսած մասնավոր անհատներից և վերջացրած բերդի ներսում գտնվող թանգարանի վերածված մզկիթի տնօրինությունից՝ հնավայրից շարունակաբար և միանգամայն կամայաբար տեղահանել և հեռացրել են բազմաթիվ գեղաքանդակ և արձանագիր խաչքարեր և տապանաքարեր: Արդյունքում էապես վնասվել և նսեմացվել է հնավայրի պատմական նշանակությունը:

---

1209 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիփլիզ, 1916, էջ 78:

1210 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 18 (բնագրում՝ "Ниже церкви св. Креста находится римско-католическая церковь св. Розалии (названная у г. Броссе церковью Пречистой Девы) и еще ниже-церковь Иоанна Крестителья. Стиль этих церквей одинаков..."):

1211 «Նոր-Դար», 1903, № 19, էջ 1:

1212 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 265 (բնագրում՝ "On ne se fait pas une idée du luxe que les Arméniens mettent dans leurs pierres tumulaires; elles se touchent toutes dans leurs cimetières et sont rangées en ligne. Rien n'est plus triste que ces champs de la mort si encombrés. La majeure partie de ces tombes consiste en dalles ou parallélipipèdes longs de 4 ou 5 pieds, qui reposent sur une base; l'inscription se met sur la face d'en haut. Quelquefois, on arrondit cette face d'en haut comme un demi-cylindre... Mais les plus belles tombes sont de grandes dalles dressées en tête d'un parallélipipède, sur lesquelles on sculpte avec beaucoup de goût, de grandes croix dont les jambages sont joliment ornés d'arabesques, de rosettes, de rosace; on décore quelquefois le sommet de la dalle d'un bas-relief dont le sujet est tiré de l'Ecriture sainte ou d'une légende des saints"):











**Ախալցխա. խաչքարի բեկոր նորաշեն սրբատան բակում (ԺԶ-ԺԷ դդ.) և տապանաքար 1681 թ. (լուս.՝ 2007, 1988 թթ.)**

Ստորև ներկայացնում ենք գերեզմանոցից այլևայլ վայրեր փոխադրված գերեզմանական հուշարձաններից ընդօրինակված վիմագրերի հավաքածուն՝ ներառելով թե՛ նախկին հետազոտողների և թե՛ մեր կատարած աշխատանքը.

Խաչքարի բեկոր (վերնամաս). չափերը՝ 50 x 45 x 27 սմ, մեկ տողով միայն թվականը.

*Թվ(ին) ՊԻԶ (1377) | ...:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Ծանոթ.* պահվում է եկեղեցու ներսում՝ հարավային ավանդատան մեջ: Փոխադրվել է Ռաբաթ թաղի հայոց գերեզմանոցից:

Խաչքարի բեկոր. վերնամասում՝ 3 տող.

*...ես Խոճա... | ...կանգնեց... | ...:*

*Հրատ.* առաջին անգամ:

Ծանոթ. թանգարանի բակ է փոխադրվել Ռաբաթի հայոց գերեզմանոցից:

Խաչքար. վարդյակից ձախ և ստորին մասում՝ 7 տող.

*Թ|վ(ին) | ՊՂԸ (1449), | ես :Ռ:Բ: (1200)... | Էտիլն... | զխ(ա)չս յի...:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Ծանոթ.* գտնվում է գերեզմանոցի հարավային կողմում գոյացած թաղամասի բնակիչներից մեկի տնամերձում:

Խաչքարի բեկոր. 3 տողի մնացորդ.

*Պ(ո)ղ(ո)ս ք(ա)հ(անայ) ...:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Ծանոթ.* գտնվում է Ռաբաթ թաղամասում վերջերս կառուցված սրբատան բակում: Գրչությունը՝ ԺԶ-ԺԷ դարեր:

Խաչքար.

*Տ(է)ր...*

*Հրատ.* առաջին անգամ:

*Ծանոթ.* գրչությունը բնորոշ է ԺԷ-ԺԸ դարերին: Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակ է փոխադրվել Ռաբաթ թաղամասի հայոց գերեզմանոցից:





Ախալցխա. Ռաբաթի հայոց գերեզմանոցից Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի փոխադրված խաչքարի բեկոր 1377 թ. (լուս. 1988)





Ախալցխա. Ռաբաթի հայոց գերեզմանոցից Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի փոխադրված խաչքարի բեկոր 1377 թ. (լուս.՝ 1988 թ.)

Խաչքար.

*ՋԿԶ (1517), սուրբ խաչս պահապան Կալա-Խաթունին:*

*Հրատ.* **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 266:

*Ծանոթ.* ընդօրինակումը կատարվել է 1833 թ.:

Տապանաքար, օրորոցաձև, չափերը՝ 107 x 52 x 20 սմ:

*Այս է հանգուցե(ա)լ Մարքարիտ, թվին ՌՃԼ (1681):*

*Հրատ.* առաջին անգամ:





**Ախալցխա. Ռաբաթի հայոց գերեզմանոցից Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի փոխադրված խաչքարի բեկոր 1377 թ. (լուս. 1988)**





**Ախալցխա. Ռաբաթի հայոց գերեզմանոցի արձանագիր խաչքարերից 1449թ. (լուս.՝ 2007 թ.)**

Խաչքարի բեկոր (47 x 35 սմ).

*Տ(է)ր...*

*Հրատ.* առաջին անգամ:

*Ծանոթ.* գրչությունը բնորոշ է ԺԷ-ԺԸ դարերին: Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակ է փոխադրվել Ռաբաթ թաղամասի հայոց գերեզմանոցից:

Տապանաքար. օրորոցաձև.

*Այս է տապան | Էրզրումցի | ոսկերիչ Շա|հանեանց մ(ա)հ(տես)ի Մկրտչին, | որ հանգեաւ առ Ք(րիստո)ս ՌՄՀԹ (1830) | ս(ե)կտ(ե)մբ(ե)րի ԺԳ (13)|ին:*

*Հրատ.* առաջին անգամ:





**Ախալցխա. նախապես՝ մզկիթ, ապա՝ ռուսական եկեղեցի, այժմ՝ թանգարան (լուս.՝ 1988, 2007 թթ.)**

Տապանաքար. վերնամասում թուրի քանդակ, արձանագրությունը՝ արեւմտյան երեսին.

*Ք(րիստո)ս ա(ստուա)ծ ողորմեա / ծառային քում պը/րապըչիկ Մկրտչին Մ/խիթարեան Ռապետին, / որ կոչեցեր առ քեզ / ՌՄՁԸ (1838), սեպ(տեմբերի) ԺԳ (13):*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար. արձանագրությունը սպիտակ մարմարե սալիկի վրա՝ 11 տող.

*Այս է տապան հանգ/ուցեալ Ախալցխայի / փոյեննի ղօշպիտալի / փոտրատճիկ բիֆլիզցի / պօչեղնի գռաժտանին / պարոն Գէորգ Գասպա/րեանց, որ փոխեց... / պատահողք ասա մ.../.../...առ Քրիս.../ 29.....1844:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար.

*Այս է տապան հանգուցե(ա)լ / բրուտ Կարապետի / Գրիգորեան, որ փոխե/ցաւ առ Ք(րիստո)ս 18.6.1857:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար.

*Այս է տապան հան/գուցեալ դասապ / Մկրտիչի կողա/կից Շողակաթին, / որ փոխեցաւ / առ Ք(րիստո)ս, 5.9.1862:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար.

*Այս է տապան հանգուցեալ / դարբին Մկրտչի / Աշօեանց, որ հանքեաւ / առ Ք(րիստո)ս / 6.5.1870:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար.

*Աստ հանգչի Գրիգոր Գիւլ/բէնկեան, վախճանեալ / 29.7.1885 ամի, 54 ամաց, / ով ընթերցող տուր ողորմիս / եւ ունկնդիր այս խրատիս...:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար.

*Այսմ տապանի / հանգչի մարմին / գոլլեժսկի ասսէ/սօր Մկրտիչ Մով/սէսեանցի, ի հասակի / վաթսուն եւ հինգ / ամաց ... 1887:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար.

*Աստ հանգչի մարմին / կոշկարար Գրիգոր / Շիմշատեանի, վախճ. / 1888 ամի:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար.

*Այս է տապան Գէ/որգայ Յակովբ/եանի, ծնեալ ի Կարին 1811 ամի, / վախճանեալ ի 1891 ամի հոկտեմ/բերի 1-ին:*

Հրատ. առաջին անգամ:

**Մարդա թաղամասի հայոց գերեզմանոց.** հիմնվել է 1830-ական թվականների սկզբներին: Պահպանված բազմահազար շիրմաքարերն էլ վերաբերում են ԺԹ-Ի դարերին:

1962 թ. գերեզմանոցը ցանկապատվել է:

**Այլազգի հոգևոր աղոթատներ. վրաց ուղղափառ Սբ. Մարիամ եկեղեցի.** կառուցվել է նույն տեղում գոյություն ունեցած հին եկեղեցու հիմքերի վրա 1865-1872 թվականներին. «Մարինյան եկեղեցին կառուցվել է 1865 թ., բայց պահպանել է ճարտա-











**Ախալցխա. ԺԶ-ԺԸ դարերի հայկական տապանաքարեր Ռաբաթի հայոց գերեզմանոցում և թանգարանի տարածքում (լուս.՝ 1988, 2007 թթ.)**



Ախալցխա. վրաց ուղղափառ Սբ. Մարիամ եկեղեցու տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ 2007 թ.)

րապետական մի քանի հին մանրամասներ ագուցված բուն շինության և շրջապարսպի որմերում: Ընդ որում, հին քանդակազարդ խաչքարերից, որոնց մասին խոսում է Դյուբուան, հետք իսկ չկա, դրանք բոլորը տեղի քահանայի նախաձեռնությամբ գործադրվել են նոր եկեղեցու շինության մեջ»[1213]:

Այլ տեղեկության համաձայն՝ Սբ. Մարիամ եկեղեցին հիմնովին վերակառուցվել է մոտ 120 տարվա վաղեմություն ունեցող (Հաջի Ահմեդ փաշայի օրոք կառուցված) և խպառ քայքայված եկեղեցու տեղում, որն էլ օծվել է 1872 թ. հուլիսի 16-ին[1214], ուստի կարելի է ենթադրել, որ 1865 թ. նոր եկեղեցու հիմնադրման տարեթիվն է:

Եկեղեցու մասին հիշատակություն ունենք նաև 1876 թ.-ից[1215]:

**Վրաց ուղղափառ Սբ. Աստվածածին եկեղեցի.** կառուցվել է 1875 թ. բերդի հյուսիսարևելյան կողմում:

1930-ական թվականներից մինչև 1985 թ. օգտագործվել է որպես պահեստ, ապա Հնությունների պահպանության ֆոնդի և հանգանակությունների շնորհիվ վերանորոգվել է: Ներկայումս գործում է[1216]:

**Վրաց ուղղափառ Սբ. Գևորգ եկեղեցի.** 1876 թ. հիշվում է որպես նորաշեն և գեղեցիկ շինություն[1217]:

**Ուղղափառ եկեղեցի.** եկեղեցու վերածած մզկիթից զատ՝ 1895 թ. քաղաքային վարչությունը օրթոդոքս նոր եկեղեցի կառուցելու նպատակով սկսել էր հարմար հողակտորի որոնման աշխատանքները և քաղաքի կենտրոնական մասերում չէր կարողանում գտնել[1218]: Հազիվ 1899 թ. պայմանավորվածություն է ձեռք բերվում գնելու 196 սաժեն հողամաս պ. Գրիգոր Կայաբեկովի սեփականությունից[1219]:

**Հունական գերեզմանոց.** գտնվում էր քաղաքի հին թաղի եզրին. «Քաղաքի հյուսիս-արևմուտքում հունական գերեզմանատուն կա՝ մատուռով, որտեղ ես արտագրեցի տապանաքարի հետևյալ երկու արձանագրությունները (վրացերեն).

Ա *Տեր Անտոնի Փանաշվիլի, հայ քահանա, մահացել է 1841թ. փետրվարի 25-ին, 72 տարեկան հասակում:*

Բ *Իոբ Սամադով, Ռաֆայիլ քահանաի որդին, վարդ՝ թառամած հինգ տարեկանում, մահացել է 1845 թ. նոյեմբերի 7-ին[1220]:*

**Մզկիթ.** Ախալցխայում մզկիթների գոյության՝ մեզ հայտնի ամենից հին հիշատակությունը վերաբերում է 1640 թ. «Վերին բերդում կառուցված սուլթան Սելիմ I-ի ջամին հողածածկ հնագույն շինություն է...: Այդ գեղեցիկ ջամիի մինարեն խորտակվել է: Քունբեթ-օղլիի ջամին հողածածկ է և առանց մինարեի: Ստորին բերդում գտնվող Խալիլ Աղայի ջամին նույնպես հին շինություն է, մեծ թվով հասարակություն ունի. սրտառուչ և զվարթ ջամի է»[1221]:

Հայտնի է նաև, որ «Պատերազմից առաջ, 1828 թուին, յիրաւի Ախալցխայում կային երկու մեծ մզկիթներ, մինը արևելեան, միւս արևմտեան կողմում, բայց առաջինի տեղը հիմայ շինուած է շտաբը, իսկ երկրորդի տեղը, միջնաբերդում, մի փառաւոր ռուսաց եկեղեցի...»[1222]:

Ախալցխան ռուսներին անցնելու և մահմեդական բնակչության զանգվածային արտագաղթի հետևանքով քաղաքի մզկիթները հայտնվել էին անտերունչ վիճակում. «Բոլոր մզկիթներն ավերակ կամ լքված վիճակում են, քանի որ քաղաքում միայն մի քանի մահմեդական ընտանիքներ են մնացել: Ինձ նույնիսկ ասացին, որ այն փոքր թիվը, որ ես նշել եմ վերևում բնակչության աղյուսակում, համարյա զրոյի է հավասարվել: Այն ընտանիքները, որ մնացել էին, մեծ մասամբ գաղտնի փախել են Թուրքիա... Մզկիթներից ոչ մեկը որևէ ուշադրու-

1213 “Материалы по археологии Кавказа”, выпуск IV, Москва, 1894, с. 75 (բնագրում՝ “Мариинская церковь построена в 1865 г., но сохранила несколько древних архитектурных деталей, вставленных в самое здание и в ограду. Впрочем, о старых резных крестах, о которых говорит Дюбуа, нет и следов; все они, по отзыву местнаго священника, пошли в дело при постройке новой церкви”).

1214 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 16 (բնագրում՝ “...16 июля 1872 г. происходило освящение новой церкви, совершенное его Высокопреосвященством, экзархом Грузии, Евсевием”):

1215 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 443:

1216 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 39-40:

1217 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 443:

1218 «Արձագանք», 1895, № 59, էջ 3:

1219 «Նոր-Դար», 1899, № 109, էջ 1:

1220 **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 144:

1221 Թուրքական աղբյուրները..., հ. Գ, էջ 111: Ի դեպ, Սելիմ Ա-ն՝ նույն ինքը Սելիմ խանը, գահակալել է 1512-1520 թթ.:

1222 «Մեղու Հայաստանի», 1873, № 6, էջ 3:

թյան արժանի չէ, բացի բերդի մզկիթից, որը ճարտարապետության գլուխգործոց է»[1223]:

Բերդի մզկիթը կառուցվել է 1752 թ. «Այն կառուցվել է Ախալցիխեի նախավերջին փաշայի օրոք իտալացի ճարտարապետի կողմից: Հավասար խորանարդի վրա նա տեղադրել է 49 ոտնաչափ տրամագծով աղյուսե մի գմբեթ` ծածկված կապարով: Ներսը ծեփապատ է և պատված արաբանախշերով: Երկար զարդագոտու վրա շատ պատգամներ կան Ղուրանից: Գմբեթի փոքր լուսամուտները զարդարված են ապակենախշերով: Մահարաբը կամ Միրոբը, որտեղ տեղավորվում է իմամը` աղոթքի համար, կառուցված է մեկ ոտնաչափից ավելի լայնությամբ սալերից: Այդ սալերը կանաչ և կապույտ ողորկ ագաթից են: Մզկիթի հիմնական մասի մեծ լուսամուտները ապակենախշերով են, Ղուրանից հատվածներով: Դրսում` յուրաքանչյուր լուսամուտի վերևում ճենապակյա ջնարակված սալերի վրա, այս գրքից այլ հատվածներ կան»[1224]:

Ի հավելումն վերոնշյալ նկարագրության` նշենք. «Մզկիթներու մէջ ամէնէն նշանաւորն բերդի մէջ կառուցուածն էր, որ արդարեւ ճարտարապետութեան գլուխ գործոց մը կրնայ համարուիլ: ...մզկիթ կառուցուած է, հին աթաբէկաց սերունդ Ահմէտ փաշային, իտալացի ճարտարապետի մը ձեռքով: Կանոնաւոր խորանարդի մը վրայ բարձրացած է կիսաբոլոր 49 ոտք տրամագծով կապարապատ գմբէթն. ձեւով ճիշդ նման է Կ. Պոլսի Ս. Սոփիայի. պատուհանները զարդարուած գունաւոր ապակիներով, որոց նկարներն կը ներկայացնէին Ղուրանի զանազան խօսքերը: Գաւիթն եւս գեղեցիկ է, երեք փոքրիկ գմբէթներ բարձրացած են երկաթաքարէ սեանց վրայ, որոց խարիսխներն և գլուխներն պղնձաձոյլ են: Գաւթի մէջ կայ հայկական խաչարձան մը, հազիւ քանի մը գիր ընթեռնելի արձանագրութեամբ: ...մզկիթի շինութեան համար ալ, որ կառուցուած է 1752-ին, ուրիշ արձանագրութիւն մը կայ գաւթի դրան վրայ: Նշանաւոր էր նաեւ բերդի մինարէն 130 ոտք բարձրութեամբ, սրբատաշ քարէ, զոր Ռուսք կործանեցին: Բերդէն իբրեւ 10 վերստ հեռաւորութենէ, մեծածախ ջրմուղով, վերոյիշեալ Ահմէտ փաշան բերել տուաւ ջուր` մինչեւ մզկիթի գաւիթը: Պատերազմի ժամանակ մզկիթը շատ չվնասուեցաւ և Ռուսք, քանի մը նորոգութիւններ և փոփոխութիւններ ընելով` եկեղեցւոյ վերածեցին զայն»[1225]:

Մզկիթի ճարտարապետական արժեքը մշտապես դեպի իրեն է հրավիրել զանազան այցելուների: 1893 թ. անգլիացի Լինչը նշել է. «Մզկիթը, այժմ եկեղեցի, ...անտարակոյս տեսնել կ'ուզէինք. անիկա պարիսպին որմափակին հիւսիսային կողմը կանգնած է. մինարէին պատուանդանը տակաւին կը մնայ, ու անոր վրայ զետեղուած է պզտիկ գմբէթ մը, գագաթ խաչով մը: Դրան վրայի արձանագրութեան նայելով, շինուած է Հիճրէթի 1116 թուին (Քրիստոսի 1752-53 թուականին): Միջնաբերդը նշանաւոր էր իր գեղեցիկ մզկիթովը, որ ունէր աւելի քան 130 ոտք բարձրութեամբ պատկառելի մինարէ մը, որ մզկիթին նման շինուած էր տաշած քարի կոյտերով. անոր կերտուածքը այնքա՜ն հաստատուն էր, որ ռուսերուն ռմբակոծութեան միջոցին շատ քիչ վնասուեցաւ, հակառակ որ եօթը թնդանօթի ռումբ ինկաւ իր վրայ»[1226]:

**Սինագոգ.** Ախալցխայի հրեական թաղամասում գտնվող սինագոգներն այցելուների ուշադրությանն արժանացել են` սկսած արդեն 1830-ական թվականներից. «Նրանք ունեն իրենց սինագոգը և խախամը[1227]»:

1870-ականներին հավելվել է. «...նոր և գեղեցիկ շինութիւն, որի մէջ իրաւունք չունի մտնելու հրէից իգական սեռը, այլ պարտաւոր է դրան առաջ կամ պատուհանների կշտերին կանգնել և աղոթել»[1228]:

1893 թ. անգլիացի հետազոտողը նշել է. «...մեզի ամենէն աւելի հետաքրքրեց հրէական թաղը իր երկու ստուար սինակոկներով. մենք հիացանք այս օղասուն սրահներուն պարզութեանը վրայ. մէջտեղը կար բեմը, որուն շուրջը շարուած էին նստարանները...»[1229]:

Ի դարի սկզբին նշվել է. «Ունին երկու քարաշէն և երկաթապատ կանաչ ներկուած տանիքներով ժողովարաններ, որոց միոյն մէջ, խնամքով գլաններու վրայ փաթթուած կը պահուին խիստ հին թալմուտներ»[1230]:

**Բերդ.** առաջին նկարագրություններից մեկը վերաբերում է 1640 թ. «Սեպաձև ժայռի վրա կառուցված քարաշեն, ամրակուռ և հաճելի բերդ է: Երկու դարպաս ունի»[1231]:

Անհամեմատ ավելի հանգամանալից և առատ նկարագրությունները, սակայն, մեզ են ավանդվել միայն 1820-1830-ական թվականներից. «Ամրոցը` կառուցված արագահոս Փոցխով գետով ողողվող բավական բարձր ժայռի վրա, ունի անկանոն հնգանկյունու տեսք` համարյա անառիկ երեք` արևելյան, հարավային և արևմտյան ճակատներով...: Մյուս երկուսը` հյուսիսարևելյանը և հարավա-

1223 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 267 (բնագրում` “Toutes les mosquées sont en ruines ou abandonnées, n'y ayant plus que quelques familles mahométanes dans la ville; on me disait même que le petit nombre que j'ai noté plus haut dans le tableau de la population, s'était réduit à rien, la plupart des familles qui restaient, s'étant sauvées en Turquie en secret... Aucune de ces mosquées ne mérite quelque attention, à l'exception de celle de la forteresse, qui est un chef-d'œvre d'architecture”):

1224 Նույն տեղում:

1225 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 58-59: Տե՛ս նաև “Материалы по археологии Кавказа”, выпуск 4, с. 75.

1226 **Լինչ Ֆ.**, նշվ. աշխ., էջ 31, 34:

1227 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 266 (բնագրում` “Ils ont leur synagogue et leur kahal”):

1228 **Գեղամեանց Յ.**, նշվ. հոդվ., «Փորձ», 1876, № 1, էջ 443:

1229 **Լինչ Ֆ.**, նշվ. աշխ., էջ 33:

1230 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 62:

1231 Թուրքական աղբյուրները..., հ. Գ, էջ 111:




**Ախալցխայի բերդի և Ռաբաթ թաղամասի հատակագիծն ըստ** ***“Утверждение русскаго владычества на Кавказе”, под редакцией генерал-майора Потто, том 2, Тифлис, 1901*** **հրատարակության**

ընմտյանը, պաշտպանված են բարձր և հաստ պարսպով: Բաղկացած է երեք մասից՝ միջնաբերդից, վերին ամրոցից և ներքին բակից: Առաջին երկուսը կառուցված են վրացիների կողմից, սակայն մի քանի հավելումներով գլխավորապես վերափոխվել և ուղղվել են թուրքերի կողմից: Բոլոր ներքին կառույցներն այնքան խարխուլ են, որ ավերվում են: Ի դեպ, ռուսների վերակառուցած զորանոցները, Ահմեդ փաշայի կառուցած մզկիթը՝ կից մի քանի շինություններով, ենթակա են հատուկ ուշադրության»[1232]:

Բերդի կառուցվածքն ընկալելի են դարձնում նաև հետևյալ երկու վկայությունները. «Ամրոցը հարկ-հարկ կառուցված էր այս ժայռերից ամենամեծի վրա, իսկ միջնաբերդը նրա ամենաբարձր կատարին էր: Քաղաքը շրջապատող բերդախրամը, պատվարը և մոտ 45 լյո շրջագծով ցցապատնեշը այն դարձնում էին երկրորդ ամրոց»[1233], «Ախալցիխեի ամրոցը բաղկացած է ստորին բերդից, վերին բերդից և միջնաբերդից: Իր ներկա վիճակով այն կարող է դիմակայել միայն թուրքերին, որոնք այնքա՞ն խեղճացել են ռազմական արվեստի մեջ: Եվրոպայում նման բարձրության ամրոցը լուրջ բան չէր համարվի և դժվար թե այն պաշտպանեին՝ համոզված լինելով, որ վաղ թե ուշ հանձնելու են: Որոշվել է այդ ամրոցը բերել այն վիճակի, որ այն կարողանա դիմակայել նույնիսկ եվրոպական ուժերին: Դրա համար մտադիր են բարձրացնել միջնաբերդը, որտեղից լիովին հնարավոր կլինի խփել գետի մյուս՝ վտանգավոր ափին, և միջնաբերդի թնդանոթի տակ՝ հայկական հին եկեղեցու շուրջը, կառուցել մի ամրություն, որը կպաշտպանի այդ դիրքը»[1234]:

1232 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 217 (բնագրում՝ “Крепость, стоя на довольно высокой скале, омываемой быстрою рекою Посхо, имеет вид неправильнаго пятиугольника, котораго три фаса: восточный, южный и западный, почти неприступны... остальные же два: северо-восточный и северо-западный, защищены высокою и толстою каменною стеною. Она состоит из трех частей: цитадели, верхней крепости и нижней. Первые две построены грузинами, но совершенно переделаны и исправлены турками, с некоторыми прибавлемиями. Все внутренния строения столь ветхи, что приходят в разрушение. Впрочем, казармы, выстроенныя русскими, мечеть с некоторыми при ней зданиями, воздвигнутая пашею Ахмедом, заслуживают особеннаго внимания).

1233 **F. Dubois de Montpéreux**, նշվ. աշխ., էջ 257 (բնագրում՝ “La forteresse s’étendait par étages sur le plus grand de ces jets, et la citadelle en couronnait la plus haute cime”):

1234 Նշվ. աշխ., էջ 268 (բնագրում՝ “La forteresse d’Akhaltsikhé est composée de la forteresse basse, de la forteresse haute et de la citadelle. Dans son état actuel, elle ne peut passer pour importante que contre les Turcs si déchus dans l’art de la guerre. En Europe, ce serait peu de chose dominée comme elle est, et l’on se donnerait à peine le soin de la défendre, persuadé de la nécessité de se rendre du jour au lendemain. On se propose de la mettre en état de résister même à des forces européennes, en rehaussant la citadelle qui battrait alors complètement l’autre côté dangereux de la rivière, et en élevant sous le canon de la citadelle, autour de la vieille église arménienne, un fortin que défendrait cette position”):



**Ախալցխա. հատվածներ բերդից**



**Ախալցխա. հատվածներ շրջապարսպից, կառուցման ժամանակ պարսպապատերում ագուցված խաչքարեր**











**Ախալցխա. բերդի դարպասն արտաքուստ և ներքուստ, հատվածներ օժանդակ շինություններից**









**Ախալցխա. բերդի շուրջ և որմերում ագուցված հողմահար արձանագրություններով խաչքարեր, ԺԵ-ԺԶ դարեր (լուս.՝ 2007 թ.)**



**Ախալցխա. շրջապարսպի մեջ ագուցված արձանագիր խաչքարեր, ժԵ-ժԶ դարեր (լուս.՝ 2007 թ.)**







**Ախալցխա. խաչքարեր՝ ագուցված բերդի դարպասի մեջ (լուս.՝ 1988 թ.)**

ԺԹ դարի սկզբներին բերդի պաշտպանական համակարգի մասին նշվել է. «Քաղաքը կրկին ամրութիւն ունէր, նախ միջնաբերդը, յետոյ արտաքին պարիսպները, որոց վրայ 40 հրանօթք զետեղուած էին, ի բաց առեալ Գայա-տաղի վրայ գտնուած թնդանօթքը, ուր էր նաև Հայոց եկեղեցին: Արտաքին պարիսպը աշտարակ մ'ունէր և չորս ամբարտակ, որոնք մէկմէկու հետ կապակցութիւն ունէին ցցապատնէշներով և այս ցցապատնիշից երկու կողմը մեծամեծ փոսեր փորուած էին: Բաց ասոնց՝ կը տեսնուէին դարձեալ հօս հօն փոքր ամբարտակներ և աշտարակներ հրաձգողաց ապաւինի համար»[1235]:

Բազմիցս նորոգված բերդապարիսպները շարված են անմշակ քարով, կրաշաղախով: Ունի մինչև գետը հասնող ստորգետնյա գաղտնուղիներ ինչպես ջրի պաշարն ապահովելու, այնպես էլ պաշարումներից աննկատ խույս տալու նպատակով[1236]:

*Վիմագրեր.* բերդի որմերին պահպանվել են արաբատառ թուրքերեն և հայերեն վիմագրեր: Նախկինում դրանց հետազոտությամբ զբաղվել է միայն ակադ. Բրոսեն: Ստորև ներկայացնում ենք պարըսպաշինության ժամանակ պատերի զանազան հատվածներում սոսկ իբրև շինանյութ գործածված խաչքարերի և տապանաքարերի արձանագրությունները.

1235 **Նուրիխան Մ.**, նշվ. հոդվ., էջ 102:

1236 **Закарая П.**, Древние города и крепости Грузии, Тбилиси, 1982, с. 21.



**Ախալցխա. բերդի տարածքից գտնված խաչքարի բեկոր՝ փոխադրված Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակ, ԺԵ-ԺԶ դարեր (լուս.՝ 1988 թ.)**

Բերդ. հարավային մուտքին, օսմաներեն՝ 4 տող.

*Հանրաճանաչ է դարձել հավերժ անունը, որը հպարտանքն է երկու աշխարհների: | Քո տեղը բարձր դրախտը լինի: | Թող աստված օրհնի Շահնշահի ճոխ առատաձեռնությունը, | որ լցրեց համայն աշխարհը, | որ կառուցեց և զարդարեց Ախսխայի բերդը թվին 1119 (1707-1708):*

*Հրատ.* **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 148:

*Ծանոթ.* արձանագրության ներկայացված թարգմանությունը կատարել է Րաֆֆի Քորթոշյանը: Վիմագրի առնչությամբ Բրոսեն նշել է. «Արձանագրություններից կարելի է եզրակացնել, որ բերդը կարող էր վերականգնված լինել 1707 թ.՝ Իսակ-Փաշայի կամ Ասլան Բ փաշայի կողմից, որոնք հորեղբոր որդիներ էին և իրար բազմաթիվ անգամ փոխարինել են 1701-1718 թթ.» (**Brosset M.**, նշվ. աշխ., էջ 149: Բնագրում՝ “Tout ce que l’on peut conclure de ces inscriptions, c’est que la citadelle aura ntn restaurne en 1707 par Isak-Pacha, ou par Aslan II, pacha, deux cousins, qui se remplacՌrent plusieurs fois l’un l’autre entre 1701 et 1718”): Տե՛ս նաև **Յովհաննիսեան Մ.**, նշվ. աշխ., էջ 604:

Տարընթերցում. ստորև տրվում են Բրոսեի ներկայացրած արձանագրության վերծանության երկու տարբերակները («...Ախալցիխեի մեծ և վեհասքանչ բերդն ասես փոքր քաղաք լինի, որը կարող է մեծ կայազոր տեղավորել: Հարավային կողմի դռան վերևում ես տեսա մի արաբերեն արձանագրություն, որն ինձ համար արտագրեց Օմար էֆենդին՝ կրթված մի մուսուլման՝ մարզի դպրոցում լեզվի և կրոնի ուսուցիչ: Ահա այդ արձանագրության տեքստը և թարգմանությունը՝ կատարված բազմաթիվ արևելագետների միացյալ ջանքերով, թեև վերջիններս համաձայնեցին, որ դրանք շատ տեսակետներից քննադատելի են»: Բնագրում՝ “...la grande et imposante citadelle d’Akhal-Tzikhé, c’est comme une petite ville, qui peut renfermer une nombreuse garnison. Au-dessus de la porte du S. j’y ai vu une inscription arabe, qui a été copiée pour moi par Omar-Efendi, musulman instruit, professeur de langue et de religion à l’école de district. En voici le texte et la traduction, par les soins réunis de plusieurs orientalistes, qui se sont accordés à les trouver fort accessibles à la critique, à beaucoup d’égards.”).

*Քո մաքուր անունը միշտ պահվեց երկու աշխարհների փառքով: Թող ... դրախտը բացվի քո առջև: Թող Աստված օրհնի արքայից արքայի բարեհաճությունը, որը տիրակալն է ամբողջ երկրային բնակության շրջանների: Ախսիխայի բերդը նորոգվեց և զարդարվեց 1119 (1707):*

Կամ՝

*Քո մաքուր անունը՝ աշխարհի փառքը, հայտնի դարձավ: Թող դրախտը միշտ բաց լինի քեզ համար: Թող Աստված օրհնի Շահնշահի գթասրտությունը, որի արդարությունը տարածվում է ամբողջ տիեզերքի վրա: Ախիսխայի բերդը գեղեցկացվեց 1119 (1707):*

Խաչքար. ագուցված է բերդապարսպի այն մասում, որին կից է հիվանդանոցը, արձանագրությունը՝ քիվին քառատող.

*Ես Այիս կ(ա)նգ(նե)ցի... | ս յիշ(ա)տ(ա)կ ինձ եւ ի[մ կո]|ղակցին՝ Արզութանին | թվ(ին) Ջ...*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. անձնանունը հնարավոր է ընթերցել նաև *Եսայիս* ձևով: Ժամանակը՝ ԺԵ-ԺԶ դարեր:

Խաչքար. ագուցված է բերդապարսպի հյուսիսային կողմում՝ դարպասից արևելք, ստորին ձախ կողմում՝ 2 տող.

*Յ(ի)շ(ա)տակ է | Միրզին:*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքարեր. 2 հատ են, ագուցված բերդապարսպի հյուսիսային կողմում՝ դարպասի ներսում՝ պատի շարվածքի ստորին մասում, որի պատճառով էլ երկուսն էլ ավելի քան կիսով չափ մնացել են գետնի տակ: Տեսանելի հատվածներում միայն մեկի վրա նշմարվում է.

*...(Մ)արտիր|(ոս)...:*

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար. գտնվում է բերդապարսպի հյուսիսարևելյան կողմում՝ պարսպից հազիվ 15-20 մ հեռու՝ թեք լանջի վրա .

*Յ(ի)շ(ատակ) է խ|աչս Զ|աքար|...րն է | ...ուն ...| ... յի...|շին | վդր....| ծնո|ղացն | ...:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. խաչքարի գտնվելու վայրը մեզ առաջնորդեց Գ. Գինոսյանը, որի համար շնորհակալ ենք: Գրչությունը և գեղարվեստական-ոճական առանձնահատկությունները բնորոշ են ԺԵ-ԺԶ դարերին:





**Ախալցխա. խաչքար բերդապարսպի հյուսիսարևելյան կողմում, ԺԵ-ԺԶ դարեր (լուս.՝ 2007 թ.)**

**Աղբյուր.** հայտնի է, որ Սբ. Փրկիչ եկեղեցու հարևանությամբ տակավին 1834 թ. Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու ջանքերով մի աղբյուր էր կառուցվել, որը տասնամյակներ անխնամ մնալուց հետո խափանվել և ցամաքել էր. «...նրբաքանդակ արձանագրութեամբ տակաւին կանգուն մնացած է քաղաքիս Ս. Փրկիչ եկեղեցու գաւթում մեծանուն և մեծագործ Կարապետ արքեպիսկոպոսի կառուցած սրբատաշ քարերից հոյակապ աղբիւրը, սակայն խպառ ցամաքած...»[1237]:

Շուրջ 2 կմ (2-3 վերստ) հեռավորությունից հոսող ջրերի հիմքի վրա կառուցված աղբյուրը վերականգնելու նպատակով 1893 թ. Սբ. Փրկիչ եկեղեցու երեցփոխ Տիգրան Տեր-Միքայելյանը ձեռնամուխ է լինում աղբյուրի խաթարված խողովակաշարի նորոգության աշխատանքներին. «...յարգելի պարոնը խորը փորել է տալիս ճանապարհը և հիմնաւոր խողովակների միջոցով բերել է տալու քաղաք ջուրը: ...բացի եկեղեցւոյ և դպրոցի աղբիւրներից, մտադիր է քաղաքիս Վարի Պլան թաղի հրապարակում–Խաբանում էլ աղբիւր շինել և ջուր վազցնել...»[1238]:

Արձանագրություն. եղել է ներկայումս գոյություն չունեցող աղբյուրի ճակատին.

*Արքեպիսկոպոս Հայոց Կարապետ, / Կարնոյ և Տայոց առաջնորդապետ, / կառոյց զայս աղբիւր քաղցրահամ ջրոյ, / յաւերժ յիշատակ իւր անմահ հոգոյ. / արդ, որ զովանայքդ հայցեցէք առ Տէր՝ / կարկառել ի սա զԱջ իւր մարդասէր, / 3.7.1834:*

*Հրատ.* «Արձագանք», 1893, № 142, էջ 2:

*Ծանոթ..* արձանագրության ինքնագով բնույթը հավելյալ արտացոլումն է Կարապետ «անհողինի» եսասեր խառնվածքի:

**Բաղնիք.** թանգարանի բակում պահվող մի հուշաքար վկայում է 1880 թ. քաղաքում բաղնիքի կառուցման մասին.

Արձանագրություն. 3 տող.

*Շինեցաւ բաղնիքս / այս / 1.10.1880:*

Հրատ. առաջին անգամ:

**Հուշարձան-կոթող.** 1861 թ. Նիկոլայ Ա թագավորի հրամանով Ախալցխայում կառուցվել է 1828 թ. քաղաքի գրավման ժամանակ զոհված 23 ռուս սպաների և 213 զինվորների հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթող. «Ախալցխայից երկու վերստ հեռավորության վրա՝ փոստային ճանա-

1237 «Արձագանք», 1893, № 142, էջ 2:
1238 Նույն տեղում:



**Ախալցխա. Սաֆայի վանքը հարավ-արևելքից**

պարիի մոտ, ոչ մեծ բարձրության վրա վեր է խոյանում պատվանդանով պողպատյա յոթանիստ հուշարձան: Վերնամասը հարդարված է բյուզանդական ոճի խաչակիր գմբեթով: Հուշարձանը կանգնեցրել է 1861 թ. գեներալ-ֆելդմարշալ իշխան Բարյատինսկին՝ ի հիշատակ 1828 թ. Ախալցխայի բերդի պաշարման և գրավման ժամանակ զոհված ռազմիկների: Հուշարձանի որմերում ագուցված



Ախալցխա. Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքարը Սարդա քաղամասի բարձրադիր եզրին (լուս.՝ 2007 թ.)

արձանագրությունները հայտնում են, որ քաղաքի թուրքական կայազորում եղել է 15.000 զինվոր, բացի դրանից՝ թուրքական բանակի հրամանատարներ Քյոսա-Մահմատ և Մուստաֆա փաշաները Ախալցխայի պաշտպանության համար փոխադրել էին ևս 25000 զորք: Գեներալ-լեյտենանտ Պասկևիչի հրամանատարության ներքո ռուսական բանակը 12000 էր: Արձանագրված է նաև զոհերի թվաքանակի և ռուսների ձեռքն անցած ռազմավարի մասին»[1239]:

Հուշարձանն խիստ ոչնչացրել են թուրքերը 1918 թ.[1240]:

**Սբ. Սաֆա (Սաֆարայի) վանք.** գտնվում է Ախալցխա քաղաքից 11 կմ հարավ-արևելք՝ Կուր գետի ձախ վտակ Ուրավելի հովտում: 1893 թ. գրվել է. «Ս. Սապա, թէեւ վրացի աթապէկի մը առատաձեռնութեամբը հիմնուած է, հաւանականաբար հայ ճարտարապետի մը գործն է, և անտարակոյս կըրնայ նկատուիլ իբր նմոյշ հայկական ոճի: Եթէ հաւատ ընծայենք ներքնակողմի մէկ ջարդուած արձանագրութեան, զոր Պրօսէ կարդացած է մասամբ, այս եկեղեցին շինուած է ձեռամբ աթապէկ Սարգիսի, որդի Պէքայի, որ իշխեց 1306էն 1334...»[1241]:

1239 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 12-13 (բնագրում՝ “В двух верстах от Ахалциха, около почтовой дороги, на небольшом возвышении, на пьедестале чугунный семигранный памятник, суживающийся кверху. Наверху его украшение, в виге византийскаго купола, ц крестом. Памятник сооружен в 1861 г. генерал-фельдмаршалом км. Барятинским в память воинов, погибших при осаде и взятии в 1828 г. Ахалцихской крепости. Надписи, помещенныя на стенах памятника, гласят, что в ахалцихском гарнизоне находилось тогда 15,000 турецкаго войска, да, кроме того, предводители турецких войск, Кюса-Магомед и Мустафа-паша, привели для защиты Ахалциха еще 25,000 войска. Русских войск, предводимых ген.-лейтенантом Паскевичем, гыло 12,000. На стенах памятника показано число убытых и поименованы трофеи, взятые русскими войсками”).

1240 «Կանչ», 1990, № 78, էջ 4:

1241 **Լինչ Յ.**, նշվ. աշխ., էջ 29:

# ԱԾՂՈՐ (ԱԾՂՎԵՐ, ԱՁՂՈՐ)



**Ածղոր. բերդը**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից 15 կմ հյուսիս-արևելք՝ Կուր գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 890-990 մ բարձրության վրա:

**Այլ անվանում.** հիշատակվել է նաև Ասկուրեթ կամ Սակուրեթ, Վերին Ածխուրի ձևերով[1]:

**Պատմություն.** Ածղորի առաջին հիշատակություններից մեկը վերաբերում է Ժ դարի անցքերին, երբ Սմբատ Բագրատունին այս բերդը Շամշուլդեի հետ հանձնել էր Վասակ և Աշոտ Գնթունի եղբայրների հսկողությանը, որոնք, սակայն, անկախանալու նպատակով ապստամբել էին Աշոտ Բ Երկաթ թագավորի (914-930) դեմ, որն էլ իր «...եղբարբն Աբասայ և երկերիւր յիսուն արամբք երթեալ առկայացեալ դարէր դաղարէր մերձ յամրոցն՝ որ կոչէր Սակուրէթ»[2], խռովությունը ճնշել է, ապստամբներին հաղթել և գրավել Սակուրեթը:

ԺԳ դարում Ածղորը հիշվում է մոնղոլական արշավանքների և դրան հետևած ավերածությունների կապակցությամբ. «Իսկ մեծ ոստիկան Արղունը շատ զորք գումարած գնաց փախած Դավիթ թագավորի հետևից, որ բռնի նրան: Երբ չկարողացավ հասնել նրան, վրաց բազմաթիվ գավառներ անխնայորեն կոտորեց ու գերեց: Այլև վրաց թագավորների գերեզմանատունը՝ Գելաթը սաստկապես կոտրատեց ու քանդեց. նաև Ածղոր կաթողիկոսարանը նույնպես անողորմաբար ջարդուփշուր արեց»[3]:

Վրաց արքայազն Վախուշտի Բագրատիոնի վկայության համաձայն՝ 1745 թ. «...Ածղուրը քաղաք է և մեծաշեն բերդ...»[4]:

---

1 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 25:

2 **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** Պատմութիւն Հայոց, Երևան, 1996, էջ 296: Այս մասին տե՛ս նաև «Ի հիւսի սոյ Ախըլցխայ յաջմէ կամ յելից Կուրայ կայ Ազղոր վիճակ, համանուն ամուր բերդաւանաւ, որ է Ասկուրէթ ըստ նախնեաց, ընդ որով բանակեցաւ երբեմն Աշոտ Երկաթ և եհար զդաւաճան Գնունիս...» (**Ալիշան Ղ.**, Տեղագիր Հայոց..., էջ 61):

3 **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 279:

4 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները..., Գ, էջ 84:



**Ածղոր. բերդը**

Ածղվերի սանջակը «...հյուսիսից սահմանակից էր Իմերեթին, արևելքից՝ Քարթլիին, հարավից՝ Խերթվիսի, Ասպինձայի և մասամբ Ջաջարակի սանջակներին, հարավից՝ Աբասթումանի և Ախալցըխայի սանջակներին»[5]:

Հայտնի է, որ Ախալցխայի գրավման հաջորդ օրը՝ 1828 թ. օգոստոսի 17-ին, ռուսական փոքրաթիվ ջոկատն իշխան Վողբոլսկու գլխավորությամբ առանց կռվի մտնում է Ածղորի բերդ[6]:

Ավելի ուշ Ածղորը նշանավորվել է 1853 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմում ձեռք բերած ռազմավարական կարևորությամբ. «Նոյեմբերի 6-ին թուրքերը նոր, ավելի մեծ ուժերով հարձակվեցին Ացխուրիի վրա, որտեղ կար ռուսական հինգ վաշտ և 600 հոգուց բաղկացած վրացական միլիցիա: Ացխուրիում դրությունը լուրջ էր, որովհետև թուրքերը զգալի ուժերով օղակել էին այն: Այս մասին շուտով տեղեկություն է հասնում ռուսական կայազորի հրամանատար Բուրներին, որը օժանդակ զորքով և տեղական միլիցիայի ջոկատներով շտապ օգնության է հասնում Ացխուրում գտնվող զորքերին և միացյալ ուժերով ետ են շպրտում թշնամուն»[7]:

Մեկ օր անց Կարապետ արքեպիսկոպոսը դեպքերի առնչությամբ գրել է. «...բայց այժմ ամենայն անցք ճանապարհաց իսպառ փակեցան ըստ որում երեց որդին Մութիբէկի Ախլքալակայ հաճի Էմին Աղայն ժողովեալ զեօթն հարիւր հեծելազօրս խաղացեալ է ի կողմն Ածղօրայ, ժողովեալ է և անտի զբազումս և զճանապարհն Ածղօրայ փակեալ է, որպէս զի չկարեսցեն անտի զօրքն մեր գալ մեզ յօգնութիւն...: ...այսօր լսելի եղև յԱծղօրայ յառաւօտէ մինչև ցժամն երրորդ զկնի ճաշուն ձայն թնդանօթից և հրացանից յորմէ ստուգին թէ պատերազմեալ են նոքա ընդ զօրս մեր գտեալս յԱծղօր...»[8]: Արդեն նոյեմբերի 9-ին հերթական նամակում սրբազանն ավետել է Ածղորի մոտ թուրքական բանակի պարտության մասին[9]:

Ածղորի ճակատամարտի մասին հետաքրքրական մանրամասներ ենք գտնում նաև այս պատերազմը լուսաբանող մասնավոր ուսումնասիրություններում: Ըստ այդմ՝ Գորի և Թիֆլիս տանող ճանապարհները փակած ամրոցի և Բորժոմի ձորի պաշտպանների օգնության են գալիս Բրեստի հետևակային գնդի երեք վաշտերը և միասնաբար պարտության մատնում թշնամուն: Մեկօրյա այս

5 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 222 (բնագրում՝ “...граничит к северу с Имеретию, к востоку с Карталинею, к югу с санджаками: Хертвисским, Аспинзским и частию Джаджаракскаго, к западу – с Абас-Туманским и Ахалцихским”).

6 **Потто В.**, Боржомския легенды, “Тифлисский листок”, 1899, № 12, с. 1.

7 **Պողոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 144:

8 ԴՀՊ, գիրք ԺԳ, էջ 28:

9 Նշվ. աշխ., էջ 29:

ճակատամարտում թուրքերը կորցնում են 90 զինվոր, 4 դրոշ, 1 թնդանոթ և մեծ քանակությամբ հրացան և արկ, իսկ ռուսները՝ 4 զինվոր և 2 վրացի ջոկատային[10]: Ածղորի ճակատամարտը եզակի էր ոչ միայն ռազմավարական իմաստով, որով ցույց տրվեց, որ հնարավոր էր հաղթանակ կերտել նաև անհամեմատ փոքրաթիվ ուժերով, այլև որոշիչ էր պատերազմի հետագա ընթացքի համար, քանի որ թուրքերը զրկվեցին դեպի Թիֆլիս առաջանալու հնարավորությունից. «1853 թ. նոյեմբերի 6-7-ի ռուսական հետևակի և վրացական հետևակային աշխարհազորի Ածղորի հաղթանակը կովկասյան ռազմաթատերաբեմի պատմության համար հազվագյուտ օրինակ է, երբ, առանց հեծելազորի և առավելապես հրետանու, բացարձակապես հետևակի ուժերով փոքրաթիվ ջոկատը քիչ կորուստներով կարող է մեկ գիշերվա ընթացքում դիմադրել հրետանու կրակով պաշտպանվող թուրքական կանոնավոր հետևակի և հեծելազորի գերակշիռ ուժերի բազմաթիվ հարձակումներին»[11]:

**1918 թ. մարտի 6-ի Ածղորի ծուղակը.** Ախալցխայի պաշտպանների համար Թիֆլիսից Բորժոմ էր փոխադրվել ռազմամթերք, որը քաղաք հասցնելու համար փոխգնդապետ Չաուսովի հրամանատարությամբ ուղարկվում է Հայկական գումարտակի մի վաշտ և կամավորների մի խումբ (մոտ 60 հոգի): Մարտի 6-ին՝ առավոտյան ժամը 6-ին, Ածղորի մոտ 9 կառքով և 2 ավտոմոբիլով զենքն ու զինամթերքը տեղափոխող այս խումբը հանդիպում է թուրքերի ծուղակին. «...շոսէի վրայ ճանապարհը փակած է լինում մի մեծ գերանով և տախտակներով բարձած մի սայլով: Զինւորներն անմիջապէս ցած են իջնում ճանապարհը բացելու, հենց այդ ժամանակ գործում են թուրքերի համազարկերը և զինւորները մնում են կարկտի նման տեղացող գնդակների տակ: Սակայն նրանք կարողանում են ճողոպրել որոգայթից և մի կողմից կառքին հնարաւորութիւն տալիս փախչելու, միւս կողմից իրենց ճանապարհը մաքրելով առաջ են շարժւում, տալով 9 սպանւած, 7 վիրաւոր և 10 գերի: Կառքի մէկը կոտըրւում է, մի քանի կառքի ձիերը սպանւում են և թուրքերի ձեռքը մնում է չորս կառք և մի քանի հազար փամփուշտ»[12]: Ածղորում զոհվածների թվում էր նաև 22-ամյա Աղասի Կորկոտյանը, որը, 1915 թ. թողնելով քաղաքային դպրոցի վերջին դասարանը, միանում է կամավորական գնդերին, մտնում Քեռու խմբի մեջ և մասնակցում մի



Ածղոր. բնակելի տուն (լուս.՝ Ս. Դարչինյանի)

քանի մարտերի[13]: Մարտի 13-ին տեղի է ունենում Ածղորի զոհերի թաղումը, որին ներկա էին Ախալցխայի գրեթե ողջ բնակչությունը, գեներալ Արչևանիձեն իր շտաբով, քաղաքային վարչության անդամները, հայոց, վրաց և ռուսաց ազգային խորհուրդները, ինքնապաշտպանության, կարմիր գվարդիայի և այլ զորամասերի մասնակիցներ[14]:

1919 թ. մարտի 5-ին Ածղորը գրավել են վրաց զորքերը[15]:

**Կառուցապատում.** 1872 թ. ականատեսը նշել է, որ հին Ածղորը տարածված էր Կուր գետի աջ ափին գտնվող հնամենի բերդի ստորոտին[16]:

Գյուղում աչքի է ընկնում դարբին Հակոբ Հարությունյանի՝ 1929 թ. կառուցած բնակելի տունը:

**Բնակչություն.** առնվազն միջնադարից բազմազգ բնակչություն ունեցող Ածղորի մասին առավել որոշակի առաջին տեղեկությունը 1745 թ. հաղորդում է արքայազն Վախուշտի Բագրատիոնին. «...բնակիչներն են մեսխեր, հայեր և հրեա վաճառականները, իսկ իշխողները մահմեդականներ են...»[17]:

1830-ական թվականներին Կուր գետի աջ ափին գտնվող հողե հյուղակներում ապրում էին բնիկները՝ թուրքերը և հրեաները, իսկ գետի ձախ ափին՝ Կարինից գաղթած հայերը[18]:

Ի դեպ, 1829 թ. տարածված ժանտախտի և թուրքերի՝ Թուրքիա գաղթելու պատճառով 1830-ական թվականներին Ածղվերի սանջակում բնակչությունը նկատելի նվազել էր: Նույն ժամանակ սանջակը բաղկացած էր 18 գյուղից և ուներ 336 հայ (ար. սեռ՝ 672), 31 հրեա (ար. սեռ՝ 57) և 455 մահմեդական ընտանիք (ար. սեռ՝ 1000)[19], իսկ քաղաքն ուներ 461

10 **Ибрагимбейли Х. М.**, նշվ. աշխ., էջ 193-194:

11 Նշվ. աշխ., էջ 194 (բնագրում՝ “Ацхурская победа русской пехоты и грузинских пеэих ополчений 6-7 ноября 1853 г. является редким примером в истории Кавказского театра войны, когда силами исключительно пехоты, без поддержки конницы и тем более в течение целой ночи многократные яростные атаки превосходящих сил регулярной турецкой пехоты и конницы, поддержанной огневой мощью артиллерии”):

12 **Աւագեան Ա.**, Ածխուրի դէպքը, «Ճարժում», 1918, № 17, էջ 2:

13 **Եպրաքսէ**, Աղասի Կորկոտեան, «Ճարժում», 1918, № 17, էջ 2-3:

14 «Ճարժում», 1918, № 17, էջ 3: Տե՛ս նաև **Լիսանեան Գ.**, Դարձեալ մի քանի կորուստ, «Ճարժում», 1918, № 18, էջ 2:

15 «Յառաջ», 1919, № 43, էջ 2:

16 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 11:

17 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները..., Գ, էջ 84:

18 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 224:

19 Նույն տեղում:

ընտանիք (949 ար. սեռի բնակիչ), որից 264-ը հայ էր, 166-ը՝ թուրք և 31-ը՝ հրեա[20]:

1830-ական թվականների սկզբին Ածղորում «...գերիշխում էր հայոց, իսկ գյուղերում՝ մահմեդական կրոնը»[21]:

1873 թ. Ածղորն ուներ 170 տուն բնակիչ, որից 120 տունը թուրք (նրանց կոչում էին օսմանցիներ) էր, 30-ը՝ հայ և 20-ը՝ հրեա[22]:

1884 թ. քաղաքի բնակչության թվաքանակն աճել և հասել էր մինչև 240 տան (200-ը՝ տաճիկ, 40-ը՝ հայ)[23]:

1891 թ. այլ տեղեկագրի համաձայն՝ Ածղորն արդեն ուներ 269 տուն բնակիչ (192 տուն թուրք, 49-ը՝ հայ և 28-ը՝ հրեա)[24]:

Տեղի թուրքերը մահմեդականացած վրացիներ էին, սակայն նույնիսկ քրիստոնյա տերության օրոք ոչ միայն դարձի գալու նշաններ ցույց չեն տվել, այլև բնութագրվել են իբրև մոլեռանդ մահմեդականներ[25]:

1944 թ. տեղի մահմեդական բնակչության տեղահանությունից և աքսորից հետո բնակավայրը վերածվեց առավելապես վրացաբնակ և փոքր չափով նաև հայաբնակ գյուղի:

1983 թ. Ածղորն ուներ 537 տուն՝ 1960 բնակիչ (վրացի և հայ)[26]:

**Զբաղմունքը.** հայերի հիմնական զբաղմունքն արհեստագործությունն էր, թուրքերինը՝ հողագործությունը, իսկ հրեաներինը՝ մանր առևտուրը[27]:

**Հայերն Ածղորում.** Ածղորում հայերի հաստատման ստույգ ժամանակի մասին գրավոր աղբյուրներ մեզ չեն հասել, սակայն կասկածից վեր է, որ տեղում փոքրիկ հայ համայնք գոյություն է ունեցել՝ սկսած առնվազն ԺԵ դարից[28]:

Համաձայն 1595 թ. օսմանյան կառավարության կազմած հարկացուցակի՝ Ածղորն ուներ նաև որոշ թվով հայ բնակիչ: Դա երևում է ցանկում առկա հետևյալ անձնանուններից՝ Աղաջանի որդի Մանվել, Տեր Հակոբ, Վելիջան՝ Խոջախանի որդի, Ազարիա քահանա, Եղիա քահանա, Նարումի որդի Ղազար, Տեր Սիմոն և այլն[29]:

1745 թ. Ածղորի բնակիչների թվում հայերը հիշված են երկրորդ տեղում (մեսխերից հետո)[30]:

1829-1830 թվականներին Ածղորը համալրվել է Կարնո հայ գաղթականության մաս կազմող 277 հայ ընտանիքներով[31], որոնց մեծագույն մասը, ըժգոհ առկա պայմաններից, շատ արագ ցրվել է այլևայլ վայրեր. «...հայերը Կարնից գաղթածներ են, որոնց տների թիւը սկզբից եղած է մօտ 370. բայց վերջը գաղթելով Ախալցխա և ուրիշ տեղեր, այժմ (1891 թ. – Ս. Կ.) մնացել են ընդամենը 49 տուն, որոնք միմիայն պարապում են առևտրով և արհեստներով»[32]:

Տակավին 1831 թ. դեկտեմբերի 24-ին Ածղորում ապաստանած հայ գաղթականների վիճակը մնում էր ծայրահեղ ծանր. «Կամիմք ծանուցանել տէրութեան ձերում, որ Արզրումայ ելած ժամանակներուս յոյժ նեղութիւն կրեցինք թէ Ղարս և թէ Արփաչային մնալով, զամենայն ինչսն մեր վատնեցինք, մնացինք խեղճ ողորմելի, այնչափ մնացինք, որ արևակէզ լինելով և ունեցած թէ փող և հագուստ, բոլորն ոչնչացաւ, վերջը եկանք Ախալցխայ, բնակութիւն չունենալով մնացինք դուրսը, հիւանդութիւն պատահեց, մեռեալն մեռաւ և մնացեալն մէկ էզը Ախլցխայ տեղոյց ըրին գնալ Ազղոր, այս խօսքով թէ ինչ պակասութիւն ունիք ի սէր Աստուծոյ կարող եմք լմնցնել»[33]:

Ի դեպ, Ածղորում հաստատված հայ վերաբնակիչներին ցարական իշխանությունները հենց սկզբից առաջարկել էին նաև հողատարածքներ, սակայն վերջիններս գերադասել էին քաղաքացի գրվել և հրաժարվել էին հողից, ըստ այդմ իրենց հարկերն էլ փոխանցում էին Ախալցխա քաղաքին[34]:

Արդեն 1891 թ. ածղորցի անհող հայերն իրենց ձեռքում էին կենտրոնացրել ավանի առևտուրը (25 կրպակից 22-ը պատկանում էր հայերին)[35]:

*Վիճակագրություն.* միայն հայ բնակչության թվաքանակը ներկայացնող վիճակագրական տվյալների համադրումը ցույց է տալիս, որ ածղորաբնակ հայերի գրեթե կեսը բնակավայրը լքել է 1840-ական թվականների վերջերին և մինչև Ի դարի սկիզբը որոշ աճ արձանագրելով հանդերձ՝ այդպես էլ երբևէ չի հասել 1840-ականների սկզբների ցուցանիշին.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1840[36] | | 201 | 207 | 408 |
| 1841[37] | | 203 | 215 | 418 |
| 1842[38] | | 200 | 225 | 425 |
| 1844[39] | | 209 | 227 | 436 |

20 Նշվ. աշխ., էջ 222:
21 Նշվ. աշխ., էջ 221 (բնագրում՝ "...вероисповедание господствует армянское, а в селениях магометанское").
22 "Кавказ", 1873, № 115.
23 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
24 «Նոր-Դար», 1891, № 77, էջ 3:
25 Նույն տեղում:
26 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 63:
27 **Легкобытов В.**, նշվ. հոդվ., էջ 224:
28 ԺԵԱ, էջ 445:
29 გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი ..., თბილისი, 1941, էջ 89:
30 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները..., հ. Գ, էջ 84:
31 **Դարբինյան Մ.**, նշվ. հոդվ., «ԲԵՀ», 1973, № 2, էջ 214:
32 «Նոր-Դար», 1891, № 77, էջ 3:
33 **Լէօ**, Էրզրումի անցեալից, «Համբաւաբեր», 1916, № 10, էջ 297:
34 «Նոր-Դար», 1891, № 77, էջ 3:
35 Նույն տեղում:
36 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:
37 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67:
38 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, թ. 76-77:
39 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, թ. 14:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1845[40] | | 205 | 200 | 405 |
| 1853[41] | | 108 | 110 | 218 |
| 1854[42] | | 109 | 109 | 218 |
| 1857[43] | | 108 | 86 | 194 |
| 1860[44] | | 117 | 86 | 203 |
| 1861[45] | | 136 | 102 | 238 |
| 1862[46] | | 138 | 107 | 245 |
| 1863[47] | 30 | 120 | 110 | 230 |
| 1864[48] | | 121 | 112 | 233 |
| 1865[49] | | 124 | 115 | 239 |
| 1866[50] | 35 | 120 | 116 | 236 |
| 1867[51] | 37 | 107 | 111 | 218 |
| 1868[52] | 37 | 115 | 120 | 235 |
| 1869[53] | 41 | 109 | 90 | 199 |
| 1870[54] | 37 | 120 | 125 | 245 |
| 1871[55] | | 120 | 125 | 245 |
| 1872[56] | | 136 | 124 | 260 |
| 1873[57] | | 146 | 124 | 270 |
| 1875[58] | մոտ 20 | | | |
| 1876[59] | | 100 | 96 | 196 |
| 1877[60] | | 120 | 114 | 234 |
| 1878[61] | | 145 | 129 | 274 |
| 1880[62] | | 155 | 135 | 290 |
| 1881[63] | | 155 | 135 | 290 |
| 1882[64] | | 158 | 138 | 296 |
| 1883[65] | | 130 | 132 | 262 |
| 1884[66] | 40 | | | |
| 1885[67] | | 140 | 141 | 281 |
| 1886[68] | | 141 | 145 | 286 |
| 1887[69] | | 143 | 149 | 292 |
| 1888[70] | | 148 | 153 | 301 |
| 1889[71] | | 145 | 156 | 301 |
| 1891[72] | 49 | 145 | 156 | 301 |
| 1893[73] | | 157 | 165 | 322 |
| 1894[74] | | 156 | 169 | 325 |
| 1897[75] | | 137 | 125 | 262 |
| 1899[76] | | 131 | 128 | 259 |
| 1900[77] | | 129 | 127 | 256 |
| 1901[78] | | 131 | 128 | 259 |
| 1902[79] | | 141 | 120 | 261 |
| 1905[80] | | 149 | 126 | 275 |
| 1906[81] | | 90 | 85 | 175 |
| 1907[82] | | | | 175 |
| 1908[83] | 36 | 77 | 81 | 158 |
| 1909[84] | | 104 | 96 | 200 |
| 1910[85] | | 46 | 79 | 125 |
| 1912[86] | | 40 | 60 | 100 |
| 1913[87] | | 80 | 60 | 140 |
| 1914[88] | | 35 | 45 | 80 |
| 1916[89] | | 90 | 80 | 170 |

**Դպրոց.** հակառակ գործադրված ջանքերի՝ էլ առավել օտարախոս միջավայրում ազգային ինքնությունը պահպանելու եզակի հաստատության՝ հայկական դպրոցի պատմությունը Ածղորում ուներ միայն երկու տասնամյակի պատմություն:

Վիճակագրական մի քանի աղբյուրներից կրթօջախի գործունեության ընթացքը լուսաբանող տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| *տարեթիվ* | *այլ տեղեկ.* | *ուսուցիչ* | *աշակերտ* |
|---|---|---|---|
| 1873[90] | | 1 | 12 |
| 1878[91] | վերաբացվել է | 1 | 20 |
| 1880[92] | | 1 | 33 |
| 1881[93] | | 1 | 38 |
| 1882[94] | | 1 | 35 |
| 1883[95] | | 1 | 50 |
| 1884[96] | երկսեռ | | |

40 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 70-71:
41 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 37-38:
42 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, թ. 47-48:
43 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, թ. 27-28:
44 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 3:
45 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3839, թ. 14:
46 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3836, թ. 26:
47 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 60-61: Տե՛ս նաև ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 94:
48 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3846, թ. 2-3:
49 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 19-20:
50 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 73:
51 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3851, թ. 19, 24:
52 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3853, թ. 27:
53 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3856, թ. 36-37:
54 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 85-86:
55 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 201-202:
56 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3859, թ. 34:
57 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, թ. 76-77, 94-95:
58 «Մշակ», 1875, № 35, էջ 3:
59 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 29-30:
60 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, թ. 39:
61 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 204-205:
62 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 69, 84:
63 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 47:
64 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 105:
65 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:
66 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
67 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 13:
68 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3878, թ. 57:
69 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 3-4:
70 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 46-47:
71 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 115-116:
72 «Նոր-Դար», 1891, № 77, էջ 3:
73 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 33-34:
74 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 54-55:
75 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, թ. 139-140:
76 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3903, թ. 83-84:
77 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, թ. 58:
78 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 132-133:
79 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, թ. 15-16:
80 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3912, թ. 258-259:
81 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 42:
82 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
83 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 39:
84 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 108-109:
85 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 35-36:
86 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3920, թ. 49:
87 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, 950, թ. 268-269:
88 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, 1020, թ. 169-170:
89 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 43, թ. 16-17:
90 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, թ. 76-77, 94-95:
91 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 178, 204-205:
92 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 84:
93 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 47: Մեկ այլ աղբյուրով՝ նույն թվականին ուներ 50 աշակերտ («Մեղու Հայաստանի», 1881, № 15, էջ 3):
94 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 105:
95 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:
96 «Արձագանք», 1885, № 4, էջ 58 (եկեղեցու կողքին էր «...մի ծխական դպրոց, ուր տղայոց հետ սովորում են և աղջիկներ»):





Ածղոր. բաղնիք





Խորհրդային տարիներին Ածղորում հայկական դպրոց չլինելու պատճառով հայ մանուկները հաճախում էին վրացական դպրոց:

**Բաղնիք**. գյուղի մոտ Բաղնիքի ձոր (վրացերեն՝ Աբանոս ղելե) վայրում գտնվող բաղնիքներից մեկը կառուցել է Սարգիս Ժամկոչյանը, որը համագյուղացիներին հայտնի էր կառուցողի մոր՝ Գարան խանումի անունով:

**Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցի.** Ածղորում հայոց եկեղեցու կամ մատուռի գոյությունը, պայմանավորված առնվազն միջնադարից տեղում հայ համայնքի գոյության հետ, պետք է որ հին պատմություն ունենար, սակայն վավերագրերում նրա մասին առաջին վկայություններին հանդիպում ենք միայն 1830-ական թվականներից: Մասնավորապես 1837 թ. կազմված Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու շարժական գույքի ցուցակից երևում է, որ այդ թվականին այլ իրերի թվում եկեղեցում պահվել են ծիսական 6 գիրք (2 Շարական, 2 Ժամագիրք, 1 Ճաշոց և 1 Հայսմավուրք), ինչպես նաև 238 մսխալ արժողության արծաթե իրեր և այլն[97]:

1840-1842 թվականներին հիշատակվում է որպես փայտաշեն կառույց[98]:

1846 թ. եկեղեցուն էին պատկանում 5 տուն և 3 կրպակ[99]:



Ածղոր. Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու մնացորդները (լուսամուտի չափ.՝ Ա. Յակոբյանի)

Ամենայն հավանականությամբ, այս եկեղեցու գոյությունն է վկայել ֆրանսիացի հետազոտող Մ. Բրոսեն 1840-ականների երկրորդ կեսին. «Ածղուրով անցնելիս տեսանք, որ այնտեղ շուկայի մոտ հայկական փոքր մատուռ կա»[100]:

Տակավին 1863 թ. եկեղեցին դարձյալ հիշվում է որպես փայտաշեն կառույց[101], որի՝ նորոգության կարոտ վիճակը մեկ տարի անց ներկայացվել է այսպես. «...ի գիւղն Ածօր և տեսեալ թէ առաստաղն սբ. Պօղոս և Պետրոս եկեղեցւոյ նոյն գեղջ կիսովին փթեալ է և միոյ հիւսիսային կողման տասն ոտնաչափ որմն խախտեալ երեցփոխան նորին և

97 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 133:
98 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4, գ. 3802, թ. 66-67 և գ. 3805, թ. 76-77:
99 ՀԱԴ, ֆ. 56, ց. 4, գ. 1100, թ. 37: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 56, ց. 4, գ. 1100, թ. 114:

100 **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 118:
101 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 94:

զքանի մի գիտակ վարպետս հաւաքելով բարեհա-ճեալ են շուտով վերանորոգել զայն գնահատելով ի շինութիւն առաստաղին և հիւսիսային կողման տասն ոտնաչափ որմի ծախել յեկեղեցական ար-դեանց զհարիւր յիսուն ռուբլի արծաթ...»[102]:

1875 թ. եկեղեցին Ախալցխայի հայոց հոգևոր առաջնորդի կարգադրությամբ փակվել է[103], սա-կայն նույն թվականի սեպտեմբերի 11-ի լրատվու-թյան համաձայն՝ վերաբացվել միևնույն առաջնոր-դի թույլտվությամբ[104]:

1885 թ. նշվել է, որ «Հայք ունին մի եկեղեցի ան-շուք...»[105]:

ԺԹ դարավերջին արդեն խպառ քայքայված և նորոգության խիստ կարոտ եկեղեցու շենքը վերա-կառուցելու աշխատանքներին ածղորցիները ձեռ-նամուխ են լինում 1901 թ. «Մենք հայ հասարա-կութիւնս Ազղոր գիւղի ձեռնարկեցինք վերանորո-գելու մեր գիւղի սուրբ Պօղոս և Պետրոս եկեղեցին, եկեղեցու շինութիւնը հասցուցինք մինչև պատերը աւարտելն մնաց տանիքը ծածկել միջոցներս հա-տաւ, դիմում ենք Վեհափառութեանդ նպաստ մը հայթայթել եկեղեցին աւարտելու նպատա-կաւ...»[106]:

Ածղորի եկեղեցին միևնույն անվամբ հիշվում է նաև 1906[107] և 1911[108] թվականներին:

Ըստ տեղացիների վկայության՝ 1974 թ. եկեղե-ցին քանդել են երկաթգծի կառուցման ժամանակ:

**Ձեռագրեր.** 1434 թ. հիշվում է «...զՈհանէս Ած-ղաւրեցիս...», որը հեղինակել էր «Մեկնութիւն կա-թողիկէից թղթոց, Սարգսի Շնորհալւոյ» աշխատու-թյունը[109]:

102 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 4429, թ. 7:

103 «Արձագանք», 1875, № 35, էջ 3: Եկեղեցին փակելու պատ-ճառը հետևյալն էր. «Տեղւոյս եկեղեցու համար Ախալցխայի հոգևոր կառավարութենից ուղարկուեցաւ «մի ճաշոց» գիրք, որի համար այստեղի աղքատ ժողովուրդը պէտք է 150 րուբլ. վճարէր: Բայց որովհետև նա կարողութիւն չունէր, իւր քահա-նայի միջոցով յայտնեց հոգևոր իշխանութեանը, որ այդքան մեծ գումար չեն կարող վճարել: Երբ քահանան այս լուրը հասցնում է Ախալցխայի յաջորդին, նրանից պատուէր է ստանում ժամասացութիւնը դադարեցնել և փակել եկեղեցին: Այսպիսով այդ խեղճ մարդիկ քանի ժամանակից եկեղեցու երես չը կարողացան տեսնել: Բացառութիւն չեղաւ մինչև ան-գամ շաբաթ և կիրակի օրերի համար, երբ մեր եկեղեցին ամ-սոյս օգոստոսի 15-ին տօնում էր Աստուածածնայ տօնը: Սրանից երեք օր առաջ, երբ Ախալցխայի յաջորդը գնում էր Թիֆլիս և անցաւ այստեղից, ժողովուրդը շրջապատեց նորա կառքը և խնդրում էր թոյլտուութիւն բաց անել եկեղեցին, բայց յաջորդը, ասում են, պատասխանեց, որ մինչև ժողովուրդը իւր սեպհական գրպանից չը վճարէ 150 ռ. եկեղեցին փակ կը մնայ: Խեղճ մարդիկ յուսահատուած ստիպուած էին ասել, որ եթէ եկեղեցին չը բացուի նրանք օտար դաւանութիւն կընդու-նեն, բայց այնուամենայնիւ եկեղեցին մինչև այժմ մնում է փակուած»:

104 «Մշակ», 1875, № 36, էջ 4:

105 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:

106 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 421, թ. 23:

107 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 42:

108 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 3:

109 ԺԵԱ, էջ 445:



**Ածղոր. աղբյուր 1915 թ. (լուս.՝ Ս. Դարչինյանի)**

1841 թ. Ածղորում Ղունկիանոս քահանան ա-վարտել է տակավին 1831 թ. Ախալցխայում սկսված Ժողովածուն[110]:

**Քահանա.** 1839 թ. գյուղում քահանայագործել է *Հովհան Հովհաննիսյանը* (ծն. 1768 թ., քահանա է ձեռնադրվել Մշո Սբ. Կարապետի վանքում 1805 թ.)[111]:

1863 թ. Ածղորում քահանայագործել է *Գրիգոր Վանանդյանցը*[112]:

1876 թ. գյուղում քահայանագործել է *Մկրտիչ Թադոյանցը*[113]: Նույն թվականին եկեղեցու դպիրն էր Խաչատուր Էփրիանոսյանը:

1879-1881 թվականներին Ածղորը քահանա չի ունեցել[114]:

1904-1909 թվականներին հիշվում է քահանա *Համազասպ Ավետիսյան Մկրտչյանցը* (ծնվ. 1850 թ., ձեռն. 1883-ի հուլիսի 24-ին)[115]: Նրան 1916 թ. թույլ է տրվել փոխադրվել Ախալցխա[116]:

**Աղբյուր.** գյուղի աղբյուրներից մեկը, որն այսօր չի գործում, կառուցվել է 1915 թ.: Այդ է վկայում պահպանված հիշատակագրությունը:

Արձանագիր քար, 4 տող.

*Յիշատակ է / Թագուհի եւ Ալ/րահամ Ըստէ-փոե/անցների: 1915 ամի:*

*Հրատ.* առաջին անգամ:

**Գերեզմանոց, մատուռ.** գյուղից հյուսիս՝ բլրի վրա, հայոց գերեզմանոցն է, որտեղ թաղումներ են կատարում նաև հարևան Ծրիոխի գյուղի հայերը: 2000 թ. հայերի միջոցներով գերեզմանոցը պարըս-պապատվել է:

110 ՑԶՔ, էջ 982, ձեռ. № 9725:

111 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 456, թ. 17:

112 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 4254, թ. 94: Ի դեպ, 1897 թ. հիշվում է «...ծերունի Գրիգոր քահանայի Վանանդեանց միաբանի սբ. Վարդանայ եկեղեցւոյ Հայոց Ախալցխայ քաղաքի» (ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 566, թ. 16):

113 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 15:

114 «Մեղու Հայաստանի», 1881, № 53, էջ 2:

115 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 795, թ. 30, 66 և ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 172:

116 «Արարատ», 1916, էջ 325-326:



Պահպանված արձանագիր տապանաքարերից հները վերաբերում են ԺԹ դարի 2-րդ կեսին: Ահա դրանցից մի քանիսը.

Տապանաքար, 10 տող.

*Այս տապանս է ... / Յարութինիանց ծառ(ա)/ս աստուծոյ, որ ծնաւ 18/29-ին եւ հանգեաւ ամի / 1876-ին, սեգտեմբերի 21-ին / Ք(րիստո)ս ա(ս-տուա)ծ յարուցանէլ զմե/ռլոյ հոգս մեր մեղօք բ/ա-րեխօսութեամբ ս(ուր)բ կու/սին վերացուցէք կեանս անմահին:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար, 5 տող.

*Այս տափանս է Աղանին / Երիանեան Յարու-թունե/անցի ... հանգեաւ ի տէր / 1895, ով որ ընդեռ-նուցէ / ողորմի ասասցէն:*

Հրատ. առաջին անգամ:

Տապանաքար, 6 տող.

*Այս տապանս է Գէո/րգ Աստօեանց / հանգեալ ի տէր 1897 / ... / ... / ...:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. վերջին երեք տողերը դժվարընթեռնելի են:

Տապանաքար, 4 տող.

*Այս է տապան Պապիկ Կարապետեան / Հայ-րապետեանցի, որ է ծնեալ է / 1826 թվիս, վաղճա-նեալ է 1906 թ. / ի յ(ի)շ(ա)տակ սրտոյ իւրոյ:*

Հրատ. առաջին անգամ:

Տարածքում գտնվում է մի մատուռ, որը հայերն անվանում են Վանք, իսկ վրացիները՝ Համբարձում (վրացերեն՝ Ամաղլեբա):









**Ածղոր. տեսարաններ հայոց գերեզմանոցից և նմուշներ արձանագիր տապանաքարերից (լուս.՝ Ս. Դարչինյանի)**

# ԱՐԱԼ



**Արալ. Սբ. Հովսեփ եկեղեցու տեսքը հարավից**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 14 կմ արևմուտք՝ Փոցխով գետի ձախ վտակի՝ Քոբլիանի աջ ափից 5-6 հարյուր մետր հարավ, ծովի մակերևույթից 1080-1190 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** համաձայն 1595 թ. օսմանյան կառավարության կազմած հարկացուցակի՝ Արալն ունեցել է նաև որոշ թվով հայ բնակիչ: Դա երևում է ցանկում առկա հետևյալ անձնանուններից՝ Խաչիկի որդի Ամիրա, նրա եղբայր Շահմուրադ, Կիրակոսի որդի Անանիա և այլն[1]:

1770 թ. հիշվում է արալցի դերձակ Օհաննեսը[2]:

1879 թ. գյուղը հիշվում է որպես զուտ հայ կաթոլիկներից բաղկացած բնակավայր[3]:

1 გურჯისტანის ვილაიეთის დიდი დავტარი..., თბილისი, 1941, էջ 65:

2 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 92:

3 **Նիկողոսեան Գ.**, Նամակ Էրիս-Չալայից, «Մշակ», 1879, № 86, էջ 2:

*Վիճակագրություն.* Արալի բնակչության թվաքանակն արտացոլող մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1824[4] | 12 | | | 105 |
| 1856[5] | | | | 60 |
| 1866[6] | 8 | | | 80 |
| 1884[7] | | | | 379 |
| 1913[8] | 80 | 360 | 328 | 688 |
| 1915[9] | | | | 678 |
| 1916[10] | 88 | 380 | 320 | 700 |

4 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 82:

5 **Դարբինյան Վ.**, Նորշեն-Ծղալթբիլա, h. Ա, Երևան, 2003, էջ 65:

6 Նույն տեղում:

7 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

8 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:

9 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 79:

10 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 31: Տե՛ս նաև Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 79:

**Դպրոց.** 1913 թ. գործում էր և ուներ 35 աշակերտ (15-ը՝ աղջիկ)[11]:

1916 թ. 45 աշակերտով[12] (15-ը՝ աղջիկ) գործում էր նախարարական դպրոց[13]:

**Սբ. Հովսեփ եկեղեցի.** կառուցվել է 1860 թ.[14] կամ 1862 թ.[15] և կամ այդ ընթացքում հասարակության միջոցներով:

Կառուցված է համակ սրբատաշ քարով, կրաշաղախով: Հարավից բացված միակ մուտքին կից ունի բարձր պատվանդանի վրա կանգնած սրածայր վեղարով ավարտվող կրկնահարկ զանգակատուն (խիստ նման Ախալցխայի Սբ. Հովհաննես Մկրտիչ հայ կաթողիկե եկեղեցու զանգակատանը):

**Քահանա.** 1916 թ. Արալում քահանայագործել է *Ալոդիոս Չիլինգարովը*[16]:



Արալ. Սբ.Յովսէփ եկեղեցու զանգակատունը

## ԲՈԼԱՋՈՒՐ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 33 կմ հյուսիս-արևմուտք:

**Բնակչություն.** համաձայն 1595 թ. օսմանյան կառավարության կազմած հարկացուցակի՝ Բոլաջուրն ունեցել է նաև որոշ թվով հայ բնակիչ: Դա երևում է ցանկում առկա հետևյալ անձնանուններից՝ Մկրտչի որդի Կիրակոս, նրա որդի Բասիլ, Ազարի որդի Գարեգին և այլն[17]:

*Վիճակագրություն.* գյուղի բնակչության թվաքանակն արտացոլող մի քանի տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1824[18] | 5 | | | 18 |
| 1884[19] | | | | 42 |
| 1913[20] | 7 | 35 | 34 | 69 |
| 1915[21] | | | | 71 |
| 1916[22] | 8 | 37 | 35 | 72 |

**Աղոթատուն.** տակավին 1916 թ. Բոլաջուրը եկեղեցի չի ունեցել. «...աստուածային պաշտամունք կը կատարուին առանձնական տան մէջ»[23]:

**Քահանա.** 1915[24] և 1916[25] թվականներին գյուղում քահանայագործել է *Թովմաս Իգիթխանովը*:

11 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:
12 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 31:
13 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 80:
14 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 79:
15 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:
16 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 80:
17 გურჯისტანის ვილაიეთის დიდი დავტარი..., თბილისი, 1941, էջ 60:
18 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 82:
19 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:
20 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:
21 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 80:
22 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 31:
23 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 80:
24 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 80:
25 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 80:

# ԻՎԼԻՏԱ



**Իվլիտա. Սբ. Խաչ եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ 1988 թ.)**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից 2 կմ արևմուտք՝ Փոցխով գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 990-1010 մ բարձրության վրա:

**Պատմություն.** ԺԹ դարում Իվլիտան անընդհատ հայտնվել է ռուս-թուրքական պատերազմների թատերաբեմում և հակամարտող կողմերի համար ունեցել ռազմավարական կարևոր նշանակություն[1]:

**Բնակչություն.** Իվլիտայում հայ բնակչության սկզբնավորման ժամանակի վերաբերյալ գրավոր վկայություններ հայտնի չեն, սակայն թե՛ գյուղամիջի ծխական եկեղեցու շինարարական արձանագրությունը և թե՛ ԺԷ դարում կատարված եկեղեցու նորոգության ժամանակ ակնհայտորեն առաքելադավան հայոց գերեզմանոցից հանված[2] և եկեղե-

---

1 1810 թ. հիշվում է “...дер. Ивлиту, которая служит форштатом городу, будучи отделена от города одною каменною горою, называемой кая-паша” (АКАК, т. 4, էջ 808). Իսկ 1853 թ. նոյեմբերի 4-ի դեպքերի առթիվ Իվլիտան հիշվում է Կարապետ արքեպիսկոպոսի՝ Ախալցխայից գրած նամակում. «...յ30-ն ամսոյն յ12-րդ ժամու թշնամիք մեր որոց հեծելազօրաց թիւ հասանէր ցհինգ հազար ըստ հաւաստեաց թող որք հետիոտս էին ընդ նոսա կանոնաւոր և անկանոն զինուորք յարձակեցան ի վերայ Միլիցիայի մերոյ որք էին թուով ութն հարիւր ըստ վաղեմի կարգադրութեան նորին գերազանցութեան յետ բաւական դիմամրցութեանց, յորում անկելոց թիւ յոյժ սակաւ ի մեր կողմ և ի մեր կողմ և ի թշնամեաց թուով իբր 300, կնեազ Քոպուզովն առաջնորդեաց նոցա զոյգ ընդ դիմամրցութեանց խաղալ յետս ի մեր կողմ զորս հասոյց ընդդէմ ամրոցին Ախլցխայ ի դաշտն **Իվլիտայ** և ի լեռնակողմն Սիվրիքիլենց ուր և անկաւ քաջութեամբ կնեազ Փալաւանտովն...» (ԴՀՊ, ԺԳ, էջ 20) կամ «...յայնժամ հետևակ զօրքն դիմամրցեցան ի կողմանէ դաշտին յիշեալ **Իվլիտայի** գեղջ և ի կողմն քարաժայռին որ անկանի յարևմտեան կողմ ամրոցին մերոյ ուր է հին դղեակն, թնդանօթք և զօրականք մեր ի միջի վեց ժամուց ոչ միայն կոտորեցին զբազմութիւն նոցա և դիմամրցեցան այլև ջարդեցին և զմի ի թնդանօթանց նոցին. յ3-րդ ժամու դադարեցաւ պատերազմ...» (ԴՀՊ, ԺԳ, էջ 20):

2 Գեղարվեստական համանման լուծումներ ունեն, օրինակ, Ախալցխայի Ռաբաթ թաղամասի հայոց գերեզմանոցում պահպանված տապանաքարերը (մեկը՝ 1681 թ.):

ցու որմերում ագուցված ԺԶ-ԺԷ դարերին բնորոշ մի քանի տապանաքարերը փաստում են տեղում առաքելադավան հայ բնակչության առկայությունն առնվազն մինչև ԺԷ դարի վերջերը:

ԺԸ դարի վերջերին Իվլիտան հիշվում է որպես զուտ հայաբնակ գյուղ[3]:

Նույն դարում հիշվում են իվլիտացի հայ կաթոլիկե Մուրադխանյան, Խուցյան և Բարիլույան ընտանիքները: Առաջին երկուսը վկայված են Իվլիտայում ձեռագրերի ստեղծման առնչությամբ (տե՛ս սույն աշխ., էջ 197), իսկ վերջինը՝ թռուցիկ հիշատակագրում. «Ի թուին Քրիստոսի 1767 եւ յուլիսի 21-ին մկրտեցի իլիտացի Բարիլուենց Բաղդոյի զուստր Պետրոսը. կնքահայր բառբար Գեւորն էր»[4]:

*Վիճակագրություն.* բնակչության թվաքանակն արտացոլող տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1824[5] | 36 | | | 240 |
| 1847/48[6] | 3 | | | |
| 1884[7] | | | | 272 |
| 1915[8] | | | | 425 |
| 1916[9] | 41 | 93 | 93 | 186 |

**Սբ. Խաչ եկեղեցի.** քարաշեն, գեղազարդ փայտյա խոյակներով ավարտվող չորս փայտե սյուներով և փայտածածկով, արևմտյան ճակատից բացված միակ մուտքով կառույց է:

Արևմտյան ճակատից բացված միակ մուտքի բարավորին փորագրված են երեք տարեթվեր, երկուսը՝ հայոց թվականով՝ ՌՃ (1651) և ՌՃԽ (1691), մեկը՝ փրկչականով՝ 1782[10]: Ենթադրելի է, որ ամենավաղ թվագրությունը՝ 1651 թ., կառուցման, իսկ հետագա երկուսը նորոգությունների տարեթվերը լինեն:

Մինչդեռ տեղեկագրերից մեկում հանիրավի անտեսվել է 1651 թվականի փորագրությունը, և իբրև եկեղեցու կառուցման թվական՝ նշված է 1691-ը. «Իվլիտու ժողովրդապետական քարաշէն եկեղեցի, յանուն ս. Խաչի, յամի 1691, ծախիւք Ախալցխաբնակ Մեփիսով եղբարց»[11]:



Իվլիտա. Սբ. Խաչ եկեղեցու տեսքը հարավից և ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ 1988 թ.)

3 **Ինճիճեան Ղ.**, նշվ. աշխ., էջ 123:
4 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ, էջ 92:
5 Նշվ. աշխ., էջ 82:
6 **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 143:
7 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:
8 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 78:
9 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 31:
10 Երեք տարեթվերն էլ առաջին անգամ հրատարակել է Մ. Բրոսեն (նշվ. աշխ., էջ 140):
11 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիս, 1916, էջ 77-78: Ի դեպ, Մեփիսյան եղբայրները հայտնի են Մխիթարյան միաբանությանը կատարած նվիրատվության կապակցությամբ. «...մեծահարուստ Մեփիսեանները, որոնք յետագայում Վենետիկի Մխիթարեաններին նուիրեցին հայերէն հնագոյն ձեռագրերից մէկը՝ Մլքէ թագուհու Աւետարանը» (**Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 87):



**Իվլիտա. տապանաքար (ԺԶ-ԺԷ դդ.), միջնադարյան եկեղեցու ճարտարապետական բեկորներ՝ ագուցված Սբ. Խաչ եկեղեցու որմերում և հատված եկեղեցու արևմտյան կողմում տարածված գերեզմանոցից (լուս.՝ 1988 թ.)**

1903-1905 թվականներին նահանգային իշխանությունների հետ գրագրություն է եղել Իվլիտայի հին եկեղեցու տեղում նոր եկեղեցի կառուցելու վերաբերյալ[12]:

1911 թ. եկեղեցին ենթարկվել է կողոպտիչների ավազակային հարձակման[13], իսկ 1915 թ. նախատեսված էին 212 ռ. 58 կոպ. ծախս պահանջող նորոգություններ, այդ թվում՝ զանգակատան կառուցում[14]:

**Գերեզմանոց.** եկեղեցու շուրջ տարածված գերեզմանոցի՝ ցարդ պահպանված տապանաքարերի վրացերեն արձանագրությունները վկայում են, որ ԺԹ դարում բնիկ հայ կաթոլիկե բնակչություն ունեցող գյուղերի հիմնական մասի նման Իվլիտայում ևս վրացախոսությունն արդեն դարձել էր գերիշխող:

Տապանաքար. եկեղեցու շուրջ տարածված գերեզմանոցում, արձանագրության բնագիրը՝ վրացերեն.

*Ես՝ Դարեջանս, Գորիից որպես թագուհի եկա Պետրիա Ֆիֆանատի տուն: Ունեցա ութ որդի և ապրեցի հարյուր տարի: Նաև մեկ դուստր ամուսնացրեցի Օսեփա Փիրալանթի հետ: Իմ որդին՝ Տեր Ստեփանը, ինձ մատուցեց բոլոր պատիվները: Ողորմի ասեք ինձ, որպեսզի ոչ մեկը չմնա ձեզ պարտական. 8-րդ ամիս. 14-րդ օր (օգոստոս, կամ 1814՞):*

*Հրատ.* **Brosset M.**, նշվ. աշխ., էջ 143:

*Ծանոթ.* «1-ին տողում թագուհի բառը ակնարկ է այն անունին, որ տրվում է նորապսակ կանանց ամուսնության առաջին երեք օրերին: 4-րդ տողում Տեր բառը ցույց է տալիս, որ Ստեփանը քահանա էր: Ինչ վերաբերում է երկու ազգանուններին, դրանք սեռական հոլովով, հոգնակի թվով են, ինչպես հայերեն՝ Նազարյանց, Զուրաբյանց..., ինչպես ռուսերեն овъ-ով, евъ-ով վերջացող ազգանունները և այլն: Ոճը մաքուր վրացական չէ» (ծանոթ.՝ հրատարակչի):

**Ձեռագրեր.** ամենայն հավանականությամբ՝ Իվլիտայում է ստեղծվել ԺԸ դարով թվագրվող Հայ-վրացերեն բառարանը, որի հիշատակարանում նշված է. «Այս բառարանս Իւլիտացի Մուրադխան տիրացու Ակօբին է»[15]:

Նույն դարաշրջանին է վերագրվում նաև ձեռագիր Գանձարանը, որի հիշատակագրությունների վրացերենով (թարգմ. «Տեր Հովսեփ Խուցիևից նվիրաբերված է Իվլիտայի սուրբ Խաչ եկեղեցուն») և հայերենով («Կազմեցաւ յինէն Յովսեփայ Խուցեանն»)[16] փոխանցված տեղեկությունները թույլ են տալիս ենթադրել, որ այս ձեռագիրը ևս ստեղծված պետք է լինի նույն գյուղում:

**Քահանա.** 1914-1915 թվականներին Իվլիտայում քահանայագործել է *Թովմա Չիլինգարյանը*[17]:

---

12 ՎԱԴ, ֆ. 204, ց. 1, գ. 2298, թ. 3-17:

13 “Курьер-копейня”, 1911, № 83, էջ 3:

14 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 34, թ. 4:

15 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. հոդվ., «Բանբեր Մատենադարանի», հ. 4, էջ 406:

16 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ հոդվ., էջ 407:

17 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 30, թ. 61; գ. 34, թ. 4:




**Իվլիտա. Սբ. Խաչ եկեղեցու բարավորի տարեթվերը (լուս.՝ 1988 թ.)**

# ԽԱԿ (ԽԵԿ, ԽՅԱԿ)



**Խակ (Խեկ, Խյակ). ընդհանուր տեսքը հարավից**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից 4,5 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1410-1450 մ բարձրությամբ (ի դեպ, շրջանի հայաբնակ գյուղերի շարքում առավել բարձրադիր գյուղն է) հյուսիսահայաց լեռնալանջին:

**Բնակչություն.** 1830 թ. Պոտոսենց, Սերգոյենց և Գրիգորենց ընտանիքները Պոտոսենց Պետրոսի գլխավորությամբ փոխադրվել են Կարին (Էրզրում) քաղաքից և հաստատվել Խակում[1]:

*Վիճակագրություն.* ԺԹ-Ի դարերին վերաբերող տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1885[2] | 3 | | | |
| 1891[3] | 3 | | | |
| 1906[4] | | 32 | 23 | 55 |
| 1907[5] | | | | 55 |
| 1908[6] | 5 | 35 | 25 | 60 |
| 1914[7] | | | | 202 |
| 1917[8] | 26 | | | 198 |
| 1983[9] | 42 | | | 146 |
| 2007[10] | 27 | 59 | 61 | 120 |

**Երկրորդ աշխարհամարտ.** գյուղաբնակներից մասնակցել է 15 հոգի, որից 6-ը զոհվել է[11]:

1 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 206:

2 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:

3 **Մուրատեանց Յ.**, Ախալցխայի գաւառի մի քանի հայ գիւղերը, «Մուրճ», 1895, № 2, էջ 326: Նույն թվականին գյուղն ունեցել է նաև փոքրաթիվ թուրք բնակչություն:

4 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 42:

5 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:

6 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 39:

7 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 64, թ. 7: Տե՛ս նաև “Кавказский календарь на 1915 г.”, с. 194. Ի դեպ, բնակիչների մեծ մասը թուրք էր:

8 **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 71: Ի դեպ, 198 շնչից հայ էր միայն 74-ը (մնացածը՝ թուրք):

9 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 231:

10 Ըստ գյուղապետարանի լիազորված անձ Մարտուն Հարությունի Պետրոսյանի:

11 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 206-207:











**Խակ (Խեկ, Խյակ). բնակելի տներ, աղբյուր և խորան (լուս.՝ 2007 թ.)**

**Դպրոց.** 1947 թ. բացվել է տարրական դպրոց[12]: 1994/1995 ուստարում քառամյա դպրոցն ուներ 3 ուսուցիչ և 15 աշակերտ[13], 2000/2001-ին արդեն տարրական դպրոցում կար միայն՝ 3, իսկ 2005/06-ին՝ 6 աշակերտ[14]:

---

12 Նշվ. աշխ., էջ 206:
13 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 124:
14 Նշվ. աշխ., էջ 144:

# ԾԻՆՈՒԲԱՆ



**Ծինուբան. տեսքը հյուսիսից**

**Տեղադրությունը.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 9,5 կմ հարավ-արևմուտք, ծովի մակերևույթից 1300-1370 մ բարձրության վրա:

**Անվան ծագումը.** ստուգաբանորեն նշանակում է դիմացը հարթ[1]:

**Այլ անվանում.** գյուղը անվանվել է նաև Շորաբեթ և Ջեմո-Գլտե[2]:

**Պատմությունը.** գյուղի պատմության նոր, այն է՝ ԺԹ դարի ընթացքում տեղի ունեցած որոշ անցքերի վերաբերյալ տեղեկություններ ենք գտնում ժամանակի մամուլի էջերում. «...բաղկացած է 45 տաճիկ ընտանիքներից, որոց առաջ վրացի լինելուն ապացոյց, ինչպէս նաև այս կողմերու միւս շատ գիւղերու բնակիչներին, այն է որ նոքա մինչև հիմայ խօսում են ըստ մեծի մասին վրացերէն, որ Ծնիպանի մէջ կան մի քանի բակերում թաղուած գինու ահագին կարասներ...: Ծնիպան գիւղը տաճիկներից գնուած է եղել Աշտարխանցի Սերովբէ արքեպիսկոպոսը, նորա մահուանից յետոյ բաւական ժամանակ տիրել են գիւղին հանգուցելոյ ազգական Հայ կաթոլիկ Ալվարեանները, յետոյ Էջմիածինը դատ բանալով վերջիններիս հետ, ինքն է տիրապետել Ծնիպանին, որուն մեծ մասը այժմ համարվում է Էջմիածնի սեփականութիւն, բայց կան մի քանի պարտէզներ, որոնք պատկանում են մասնաւոր անձանց...»[3]:

**Բնակչությունը.** ներկայիս բնակիչների նախնիները փոխադրվել են Կարինի Արծաթի[4] և Կամպիր[5]

---

1 **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 72:

2 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 154:

3 «Մեղու Հայաստանի», 1873, № 45, էջ 3-4:

4 Գտնվում է Էրզրումից 16 կմ հյուսիս՝ Խաչկավանք և Դինարիգոմ գյուղերի հարևանությամբ՝ Ջիթողից հյուսիս: Ներկայումս պաշտոնապես վերանվանված է Յեշիլյայլա (Yeşilyay□la):

5 Գտնվում է Էրզրումից 20 կմ հյուսիս-արևելք՝ Ախոռճուկ և Դավթա գյուղերի հարևանությամբ: Ներկայումս պաշտոնապես վերանվանված է Կըրմըզըտաշ (Kirmizitaş):



**Ծինուբան. Երկրորդ աշխարհամարտի ընթացքում զոհված ծինուբանցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը գյուղի հյուսիսային եզրին**

գյուղերից[6], այլ վկայության համաձայն՝ նաև Ղարակեպակ[7] գյուղից:

**Ազգատոհմեր.** 1830 թ. գյուղում հաստատվել է 7 գերդաստան՝ Աթենք, Ակոյենք, Դուտենք (Փաշայենք), Եղսանենք, Էսխենք, Վարժապետենք և Տեփանենք[8]:

*Վիճակագրություն.* գյուղի՝ միայն հայ կաթոլիկե բնակչության թվաքանակի վերաբերյալ զանազան տեղեկագրերից քաղված տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1884[9] | | | | 189 |
| 1908[10] | | | | 292 |
| 1913[11] | 43 | 229 | 195 | 424 |
| 1914[12] | | | | 332 |
| 1915[13] | | | | 435 |
| 1916[14] | 40 | 206 | 194 | 400 |
| 1917[15] | 90 | | | 321 |
| 1927[16] | 112 | | | 500 |
| 1985[17] | 185 | | | 653 |
| 1989[18] | 177 | | | 576 |
| 1991[19] | | | | 561 |
| 2006[20] | 145 | | | 400 |
| 2007[21] | 148 | 160 | 186 | 346 |

**Երկրորդ աշխարհամարտ.** գյուղաբնակներից մասնակցել է 115 հոգի, որից 56-ը զոհվել է[22]: Հուշարձան-կոթողը կառուցվել է ի հիշատակ ռազմի դաշտում զոհված համագյուղացիների՝ 1988-1990 թվականների ընթացքում (քանդակագործ՝ փոքրըպամաճցի Ռուբեն Բաքոյան, օգնական՝ Հ. Ալեքսանյան): Մուտքի մոտ հուշաղբյուրն է (վարպետ՝ Վարդգես Թորոսյան)[23]:

**Դպրոց.** 1913 թ. դրությամբ գործում էր՝ ունենալով 1 ուսուցիչ և 38 աշակերտ (20-ը՝ աղջիկ)[24]:

1930 թ. բացվել է տարրական դպրոց[25]: Առանձին շենք չունենալու պատճառով պարապմունքները մինչև 1955 թ. անցկացվել են Սողոյենց Սերոբի տանը: 1955 թ.-ից կրթօջախը դարձել է յոթնամյա և զետեղվել Հարություն Պողոսյանի նորակառույց տանը[26]: 1960 թ. գյուղացիների ուժերով կառուցվել է դպրոցի նոր շենք, որն էլ 1965 թ. օծել է Էմմանուել

---

6 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 229:

7 **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ, հ. Ա, էջ 72: Ղարակեպակը գտնվում է Էրզրումից 31 կմ հյուսիս-արևելք՝ Կիրակոսակ և Խան գյուղերի հարևանությամբ: Գավառի հյուսիսարևելյան գյուղերից էր: Ներկայումս պաշտոնապես կոչվում է Կարագյոբեկ (Karagöbek):

8 Նշվ. աշխ., էջ 72:

9 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

10 “Кавказский календарь на 1910 г.”, с. 405.

11 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:

12 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 64, թ. 7: Տե՛ս նաև “Кавказский календарь на 1915 г.”, с. 201.

13 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 79:

14 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 30-31: Այլ տեղեկագրի համաձայն՝ երկու սեռի թվաքանակը կազմել է 444 շունչ (Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 78):

15 **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ, հ. Ա, էջ 72:

16 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 213 (ըստ ծինուբանցի Խաչատուր Սերոբյանի):

17 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 155:

18 Գյուղխորհրդից առնված տվյալները մեզ է փոխանցել ծղալթբիլեցի Մելիք Մկրտչի Մոսիկյանը:

19 Ըստ գյուղապետարանի տվյալների:

20 Ըստ գյուղապետարանի տվյալների:

21 Ըստ գյուղապետարանի լիազորված անձ Պետրոս Միսակի Վարդանյանի:

22 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ, էջ 216, 221-222:

23 Նշվ. աշխ., էջ 240-241:

24 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:

25 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ, էջ 213 (ըստ ծինուբանցի Խաչատուր Սերոբյանի):

26 Նշվ. աշխ, էջ 230:



**Ծինուբան. Սբ. Աստվածամայր եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից (լուս.՝ 2007 թ.)**

վարդապետը: 1968 թ. վերափոխվել է լրիվ միջնակարգի[27]:

1983 թ. գյուղի միջնակարգ դպրոցն ուներ 45 ուսուցիչ և 125 աշակերտ[28]:

1989/1990 ուստարում դպրոցի առաջին դասարանում սովորում էր 8 աշակերտ:

1994/1995 ուստարում դպրոցն ուներ 27 ուսուցիչ և 107 աշակերտ[29], 2000/2001-ին՝ 104, իսկ 2005/2006-ին՝ 73 աշակերտ[30]:

**Սբ. Աստվածամայր եկեղեցի.** կառուցման և անվանակոչման առթիվ հայտնի է. «...յանուն Աստուածամօր, քարաշէն, 1869 թ....»[31]: Այլ վկայության համաձայն՝ եկեղեցին կառուցվել է 1879 թ. «...ժողովրդապետական քարաշէն եկեղեցի, յանուն ս. Աստուածածնին, 1879 ամի, ծախիւք ծխականաց, վերանորոգ. յամի 1908»[32]: Սակայն հաջորդ՝ 1909 թ. շարունակված դրամահավաքը փաստում է, որ շինարարական աշխատանքները դեռ ավարտված չէին. «Թիֆլիսի նահանգի Ախալքալաք գաւառի Ծինուբան գիւղում հայ կաթոլիկ համայնքի նորակառոյց եկեղեցու համար ժողովարարութիւն անելու համար Թիֆլիզ է եկել նոյն գիւղի հայ կաթոլիկ համայնքի ծխատէր արժ. Յակոբ քահ. Սահարեանը»[33]:

Եկեղեցին գործել է մինչև 1936 թ.: 1937 թ. վերածվել է հացահատիկի ամբարի, սակայն մի քանի օր անց կրկին օգտագործվել իր նախնական նշանակությամբ (գյուղացիները դուռը կոտրել են և ողջ հացահատիկը տեղափոխել Պողոս Գրիգորյանի տան վերնահարկը՝ այն ծառայեցնելով որպես ամբար)[34]:

1969 թ. վերանորոգվել է եկեղեցու տանիքը, գմբեթի խաչն էլ վերազոդել է Խաչատուր Գրիգորյանը[35]:

*Ճարտարապետություն.* եկեղեցին ուղղանկյուն հատակագծով, խորանից հյուսիս և հարավ զույգ ավանդատներով, երկթեք տանիքի տակ առնված փայտամած տանիքով, սրբատաշ և կիսամշակ քարով, կրաշաղախով կառույց է: Ներքուստ արևմտյան կողմում փայտաշեն կրկնահարկ կանանց դասն է՝ կանգնած նույնպես փայտե 4 զույգ սյունե-

27 Նշվ. աշխ, էջ 220:
28 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 155:
29 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 124:
30 Նշվ. աշխ., էջ 144:
31 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:
32 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 79:
33 «Հովիւ», 1909, № 17, էջ 271:
34 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ, էջ 237 (ըստ ծինուբանցի Խաչատուր Սերոբյանի):
35 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ, էջ 237: Ի դեպ, ըստ ծինուբանցի Խաչատուր Սերոբյանի՝ եկեղեցու առաջին զանգը, որը 1908 թ. նվիրել են Տեփանանց տոհմի ներկայացուցիչները, բերվել է Կարսից:













Ծինուբան. Սբ. Աստվածամայր եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից (լուս.՝ 1988 թ.), արևելքից, ներքին տեսքը դեպի արևելք, զանգակատան սյունագմբեթը (ռոտոնդան) հարավ-արևելքից և փայտաշեն խաչկալի արձանագրությունը (լուս.՝ 2007 թ.)



Ծինուբան. Սբ. Աստվածամայր եկեղեցու հյուսիսային կողմում եկեղեցածև տապանաքարով հավերժացված հոգևորականների շիրիմներ և եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի)



Ծինուբան. Սբ. Աստվածամայր եկեղեցու զանգը

րի վրա: Մուտքերը երկուսն են՝ բացված հյուսիսային և արևմտյան ճակատներից: Վերջինիս առջևկից է եռահարկ զանգակատունը, որի առաջին երկու հարկերը քառայուն են, իսկ երրորդը կազմված է սրածայր վեղարով ավարտվող վեց բոլորաձև սյուներից: Արտաքին հարդարանքում աչքի է ընկնում եկեղեցու երեք ճակատներով ձգվող (բացառությամբ արևելյանի) ընդհանուր շարվածքից սրբատաշ քարով առանձնացած որմնակամարաշարը: Արտաքին չափերն են՝ 16,63 x 10,18 մ:

Եկեղեցու փայտաշեն խաչկալի արևելահայաց երեսին՝ 6 տող.

*Յիշատակ է Ախալցխայ բնա/կիչ Յովսէփ Յակոբովի եւ / ամուսնոյ Հռեփսիմէ / Բազրկիանօվի Ծինիբան / գիղի Ս(ուր)բ Ա(ստուածա)ծնի եկեղեցնա, / 1882 ամի, 18-ն դեկտեմբերի:*

Հրատ. առաջին անգամ:

Զանգ. մեկ տողով բոլորում է.

*Յիշատակ է տէր Սարգսի կնոջ՝ Թէրեզիայի, 7.3.1901:*

Հրատ. առաջին անգամ:

Եկեղեցու մուտքից վեր կարմիր ներկով արձանագրված է.

Սկի(զբ) 1900 թ. վերջ 1908:

*Հրատ.* առաջին անգամ:

**Նոր գերեզմանոց.** առաջին թաղումները կատարվել են 1964 թ.[36]:

**Քահանա.** *Հակոբ Հովհաննեսի Սերոբյան* (1854-1899). գերեզմանը գտնվում է եկեղեցու հյուսիսային կողմում:

*Հակոբ քահանա Սահարյան.* հիշվում է 1909[37] և 1916[38] թվականներին:

*Պողոս Հակոբի Հովհաննիսյան* (1882-1932). գերեզմանը գտնվում է եկեղեցու հյուսիսային կողմում: Այլ տեղեկության համաձայն՝ տեր Պողոսը վախճանվել է 1935 թ. աքսորավայր Սարատովում[39]:

*Հակոբ վարդապետ Մարգարյան* (1863-1946):

*Սիմոն Խաչատուրյան.* պաշտոնավարել է մինչև 1936 թ.[40]:

*Էմմանուել վարդապետ Տապպաղյան*[41]. նշանակվել է 1994 թ. մարտին: Հովվում էր նաև Աբաթխև, Սուխլիս, Ղուլալիս և Նաոխրեբ գյուղերին մինչև 2003 թ.: Դրանից հետո նշանակվում է Թբիլիսիի հայ կաթողիկեների ժողովրդապետ: 2007 թ. օգոստոսի 4-ին Զմմառի վանքում ձեռնադրվել է եպիսկոպոս:

*Տեր Պողոս Գրիգորյան* (աշխարհիկ անունը՝ Մարտիրոս). ծնունդով Ծինուբան գյուղից է: Հովվում է նաև Աբաթխև, Ղուլալիս և Նաոխրեբ գյուղերին:

**Անվանի ծինուբանցիներ.** Ամրիկյան *Հովհաննես* (1.5.1843 - 5.2.1879). դերասան և գրող: Գրական և բեմական ծածկանունն է Ամերիկյան Միհրդատ: 1863 թ.-ից խաղացել է Պերճ Պռոշյանի, 1864 թ.-ից՝ Գևորգ Չմշկյանի թատերախմբերում: Առաջինն է անձնավորել Զամբախովի, Սարգսի, Զիմզիմովի կերպարները: 1872-1873 թվականներին Չաքուճ ստորագրությամբ տպագրել է ֆելիետոնների շարք և ղեկավարել «Մշակ» թերթի երգիծանքի բաժինը[42]:

**Սրբատեղի.** հայտնի է Կույս Վերոն սրբատեղին՝ կառուցված 1919-1924 թվականների ընթացքում[43]:

**«Սուրբ Խաչ» հիշատակասյուն.** գտնվում է գյուղի դեմ հանդիման՝ բարձունքի վրա: Բացումը տեղի է ունեցել 1996 թ. դեկտեմբերի 9-ին: Իրենից ներկայացնում է 10 մետրանոց փայտե խաչ, որին ամրացված է Հիսուս Քրիստոսի քանդակը՝ պատրաստված կաղնեփայտից (վարպետ՝ Թովմաս Թորոսյան)[44]:

---

36 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ, ջ 239:

37 «Հովիւ», 1909, № 17, էջ 271:

38 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 79:

39 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ, էջ 213:

40 Նշվ. աշխ, էջ 236:

41 Էմմանուել ծ. վ. Տապպաղյանի կենսագրությանն առնչվող մանրամասները տե՛ս «Մասիս», 2007, № 17, էջ 16-17 և «Պատգամաբեր Հայաստանի և Արևելյան Եվրոպայի հայ կաթողիկէ եկեղեցու», 2008, № 1, էջ 10:

42 **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 81: Տե՛ս նաև՝ Հայկական համառոտ հանրագիտարան, հ. Ա, Երևան, 1990, էջ 166: Ով ով է. հայեր, հ. 1, էջ 87: **Հովակիմյան Բ.**, նշվ. աշխ., էջ 557:

43 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ, էջ 235:

44 Նշվ. աշխ, էջ 245-246:

# ԾԻՐԱ



**Ծիրա. ընդհանուր տեսքը**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 10 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1350 մ միջին բարձրության վրա:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները փոխադրված են համարվում «Կարնոյ Գոմաններից»[1] կամ նույն գավառի Սոգութլու[2] գյուղից[3]:

*Վիճակագրություն.* վավերագրերում 1860 թ.-ից ի վեր առկա տվյալների համադրումը ցույց է տալիս, որ շուրջ մեկուկես դարի ընթացքում ընդհանուր առմամբ Ծիրայում արձանագրվել է բնակչության հարատև աճ: Բացառություն են կազմել 1905-1906 թվականների հայ-թաթարական[4] ընդհարումների լարված ժամանակաշրջանում բնակչության նվազումը և ըստ էության խորքային որևէ դրդապատճառ և արդարացում չունեցող վերջին տարիներին ծայր առած արտագաղթը:

Ստորև ներկայացնում ենք առավելապես Վրաստանի և Իմերեթի հայոց կոնսիստորիայի տեղեկագրերից քաղված վիճակագրական տվյալների համադրված պատկերը.

---

1 «Մեղու Հայաստանի», 1873, № 32, էջ 2: Ավելի հայտնի էր ոչ թե Գոմաններ, այլ Գոմք ձևով: Գյուղն այժմ էլ գոյություն ունի, գտնվում է Էրզրումից 17 կմ հյուսիս-արևմուտք՝ Թարգումի և Բազկառիճ գյուղերի հարևանությամբ՝ Ղարարզ գյուղից հյուսիս-արևելք: Կարնո դաշտի և առհասարակ գավառի կենտրոնական գյուղերից էր: Ներկայումս պաշտոնապես վերանվանված է Ալթընթեփե (Altintepe):

2 Գտնվում է Էրզրումից 15 կմ հարավ-արևմուտք՝ Սնկառիճ, Մերդլիկ գյուղերի հարևանությամբ: Գավառի հարավային, Կարնո դաշտի գյուղերից էր: Ներկայումս պաշտոնապես վերանվանված է Սյողյութլյու (Söğütlü):

3 **Դարբինյան Վ.**, Նորշեն-Ծղալթբիլա, հ. Բ, Երևան, 2005, էջ 11:

4 Կովկասյան թաթարները 1936 թ. վերանվանվեցին ադրբեջանցիներ:

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1860[5] | | 45 | 41 | 86 |
| 1861[6] | | 49 | 44 | 93 |
| 1862[7] | | 51 | 46 | 97 |
| 1863[8] | | 52 | 47 | 99 |
| 1864[9] | | 53 | 49 | 102 |
| 1865[10] | | 53 | 47 | 100 |
| 1866[11] | 9 | 53 | 47 | 100 |
| 1867[12] | 10 | 55 | 42 | 97 |
| 1868[13] | 10 | 57 | 43 | 100 |
| 1869[14] | 10 | 49 | 40 | 89 |
| 1870[15] | 10 | 60 | 48 | 108 |
| 1871[16] | | 60 | 48 | 108 |
| 1872[17] | | 50 | 55 | 105 |
| 1873[18] | 12 | 92 | 78 | 170 |
| 1876[19] | | 85 | 92 | 177 |
| 1877[20] | | 100 | 102 | 202 |
| 1878[21] | | 110 | 112 | 222 |
| 1880[22] | | 120 | 122 | 242 |
| 1881[23] | | 116 | 118 | 234 |
| 1882[24] | | 108 | 114 | 222 |
| 1883[25] | | 112 | 120 | 232 |
| 1884[26] | 12 | | | |
| 1885[27] | | 112 | 122 | 234 |
| 1886[28] | | 122 | 124 | 246 |
| 1887[29] | | 124 | 126 | 250 |
| 1888[30] | | 131 | 127 | 258 |
| 1889[31] | | 124 | 126 | 250 |
| 1893[32] | | 131 | 134 | 265 |
| 1894[33] | | 129 | 135 | 264 |
| 1897[34] | | 133 | 109 | 242 |
| 1899[35] | | 137 | 116 | 253 |
| 1900[36] | | 140 | 114 | 254 |
| 1901[37] | | 141 | 115 | 256 |
| 1902[38] | | 143 | 123 | 266 |
| 1905[39] | | 153 | 135 | 288 |
| 1906[40] | | 131 | 110 | 241 |
| 1907[41] | | | | 241 |
| 1908[42] | 28 | 141 | 116 | 257 |
| 1909[43] | | 140 | 119 | 259 |
| 1910[44] | | 143 | 121 | 264 |
| 1912[45] | 35-40 | 160 | 135 | 295 |
| 1913[46] | | 160 | 130 | 290 |
| 1914[47] | | 161 | 140 | 301 |
| 1916[48] | | 129 | 126 | 255 |
| 1923[49] | | | | 268 |
| 1983[50] | 130 | | | 490 |
| 2007[51] | 120 | 200 | 280 | 480 |

**Ծիրան 1918 թ.** ապրիլի 7-ին տարածված լուրի համաձայն՝ գյուղի շրջակայքում հայտնվել էին զինված թուրքեր. ստացված ահազանգը ստուգելու նպատակով Ծիրա ուղարկված խումբը ենթարկվում է հրացանաձգության[52]:

Համաձայն 1918 թ. մայիսի 23-ի տեղեկատվության՝ գյուղաբնակները ապաստան են գտնում Ախալցխայի հին քաղաքամասում[53]:

**Դպրոց.** 1983 թ. գյուղի ութամյա դպրոցն ուներ 16 ուսուցիչ և 35 աշակերտ[54]:

1994/1995 ուստարում քառամյա դպրոցն ուներ 3 ուսուցիչ և 20 աշակերտ[55], 2000/2001-ին արդեն տարրական դպրոցում կար 23, իսկ 2005/2006-ին՝ 20 աշակերտ[56]:

**Սբ. Գևորգ (Սբ. Հրեշտակապետաց) եկեղեցի.** 1860 թ. հիշվում է «նորոգ շինեալ» Սբ. Հրեշտակապետաց եկեղեցին[57]:

5 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 3:
6 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3839, թ. 14:
7 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3836, թ. 26:
8 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 60-61:
9 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3846, թ. 2-3:
10 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 19-20:
11 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 73:
12 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3851, թ. 19, 24:
13 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3853, թ. 27:
14 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3856, թ. 36-37:
15 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 85-86:
16 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 201-202:
17 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3859, թ. 34:
18 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, թ. 76-77, 94-95: Տե՛ս նաև «Մեղու Հայաստանի», 1873, № 32, էջ 2:
19 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 29-30:
20 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, թ. 39:
21 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 204-205:
22 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 69, 84:
23 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 47:
24 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 105:
25 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:
26 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
27 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 13:
28 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3878, թ. 57:
29 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 3-4:
30 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 46-47:
31 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 115-116:
32 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 33-34:
33 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 54-55:
34 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, թ. 139-140:
35 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3903, թ. 83-84:
36 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, թ. 58:
37 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 132-133:
38 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, թ. 15-16:
39 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3912, թ. 258-259:
40 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 42:
41 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
42 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 39: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ 1908 թ. Ծիրան ունեցել է 321 հայ բնակիչ ("Кавказский календарь на 1910 г.", с. 405):
43 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 108-109:
44 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 35-36:
45 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3920, թ. 49: Նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 845, թ. 1:
46 ՀԱԴ, ֆ. Պ-56, ց. 18, գ. 950, թ. 268-269:
47 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, 1020, թ. 169-170: Նաև՝ ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 64, թ. 7 (սույն տեղեկագիրը նույն թվականի համար նշել է 250 շունչ): Նաև՝ "Кавказский календарь на 1915 г.", с. 202.
48 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 43, թ. 16-17:
49 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 157:
50 Նույն տեղում:
51 Ըստ գյուղապետարանի տվյալների:
52 «Շարժում», 1918, № 24, էջ 2:
53 «Շարժում», 1918, № 30, էջ 2:
54 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 157:
55 **Մաթևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 124:
56 Նշվ. աշխ., էջ 144:
57 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 97:





**Ծիրա. Սբ. Գևորգ (Սբ. Հրեշտակապետաց) եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից և հարավ-արևելքից**

1863 թ. հիշվում է որպես փայտաշեն եկեղեցի[58]: 1906[59] և 1912[60] (երեցփոխի ընտրության կապակցությամբ) թվականներին հիշվում է Սբ. Գևորգ եկեղեցին[60]:

58 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 60-61:
59 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 42:
60 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 1286, թ. 9:

Հստակ է, որ եկեղեցու անվանափոխությունը (օծման հանդեսով) տեղի է ունեցել 1860-1906 թվականների միջակայքում: Դրա շարժառիթը, ինչպես հայտնի է, սովորաբար պայմանավորված է լինում կառույցի հետ առնչվող և իրականացված հիմնավոր կամ մասնակի վերակառուցման աշխատանքների հետ: Ինչևէ, խնդրի պարզաբանմանը լույս է



Ծիրա. եկեղեցու շինարարական արձանագրությունը



Ծիրա. Սբ. Գևորգ (Սբ. Հրեշտակապետաց) եկեղեցու հատակագիծն ըստ նախագծի և ըստ իրականում կառուցվածի (չափ.՝ Ա. Հակոբյանի)

սփռում մուտքից վեր 1882 թ. փորագրված շինարարական արձանագրությունը, որից հետևում է, որ եկեղեցու անվանափոխությունը (Սբ. Հրեշտակապետացի փոխարեն Սբ. Գևորգ) տեղի է ունեցել նշյալ թվականին:

2007 թ. փետրվարի 14-ին տեղի է ունեցել գյուղի հասարակության միջոցներով վերանորոգված եկեղեցու բացումը:

Եկեղեցու հարավային մուտքից վեր՝ 2 տող.

Շինեցաւ ս(ուր)բ | եկեղեցիս, 1882:

*Հրատ. առաջին անգամ:*

*Ճարտարապետություն.* եկեղեցին երկքեք ծածկի տակ առնված փայտամած տանիքով համակ սրբատաշ քարով, կրաշաղախով կառուցված, ուղղանկյուն հատակագծով կառույց է: Արևելյան ճակատում խորանը դուրս է շինության հիմնական ծավալներից և շեշտված է կիսաբոլորակ ելուստով: Միակ մուտքը բացված է հարավային ճակատից: Լուսավորությունն իրականացվել է 9 լուսամուտների միջոցով (2-ական՝ հյուսիսային, արևմտյան և հարավային, 3-ը՝ արևելյան ճակատներից): Արևմտյան ճակտոնի գագաթին ունեցել է փոքրիկ զանգակատուն(չի պահպանվել): Արտաքին չափերն են՝ 13,21 x 8,90 մ:

**Եկեղեցական իրեր.** 1908 թ. նորընտիր երեցփոխի տնօրինությանը հանձնված եկեղեցու ունեցվածքի 47 անուն զանազան գրքերի, անոթների, սպասքի, խաչերի և այլնի թվում ուշագրավ էր հատկապես 1786 թ. Պետերբուրգում հրատարակված պատկերազարդ Ավետարանը[61]:

**Քահանա.** 1876 թ. գյուղում քահանայագործել է Ծուղրուքի քահանան՝ *Մկրտիչ Տեր-Սարգսյանը*[62]:

61 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 1286, թ. 5-6:
62 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 15:

# ԾՂԱԼԹԲԻԼԱ



**Ծղալթբիլա. ընդհանուր տեսքը հյուսիսից (լուս.՝ 1988 թ.)**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 12 կմ հարավ-արևմուտք՝ Փոցխով գետի աջ ափից 1,5-2 կմ հեռավորության և ծովի մակերևույթից 1240-1350 մ բարձրության վրա. «Ծղարտբիլայ Ախալցխայի հարաւ-արեւմտեան կողմը կիյնայ, եւ հետիոտս չորս ժամ հեռաւորութիւն ունի քաղքէն: Գիւղս շինուած է ցած բլրակներու վրայ, առաջակողմն ունի դաշտագետիններ՝ ցորենի եւ գարւոյ արտեր, իսկ կռնակը կը բարձրանան անտառաշատ լեռնակներ...»[1]:

**Անվան ծագումը.** Ծղալթբիլայի կենտրոնում բխող հանքային տաք ջրից էլ առաջացել է գյուղանունը, որը վրացերեն բառ է և թարգմանաբար նշանակում է տաք ջուր:

**Կառուցապատում.** գյուղն ունի բավականաչափ խիտ կառուցապատում և չնայած դրան՝ հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք ուղղությամբ ձգվում է մինչև 2 կմ, իսկ լայնությամբ կազմում է շուրջ 1 կմ: Թաղամասերն են՝ Վերին, Միջին, Ներքին, Ռաբաթ, Նախրքաշ (Կազարմա), Խաչքար (Ալչլուղ), Նորաշեն[2]:

ԺԹ դարում կառուցված և առ այսօր պահպանված բնակելի տներից առավել ուշագրավ է Կիզոնների տունը, որն աչքի է ընկնում պատերին պահպանված քանդակներով:

**Բնական հարստություններ.** «Գիւղին ստորոտը կը բխէ հանքային ջուր մը, որ ունի ծծմբոյ հոտ եւ թթու համ...: Գիւղիս մօտ կը գտնուին բլրակներ որոնց տակ ծածկուած է գաճ եւ զոր շահագործելու ձեռք զարկած են»[3]:

**Ալչի քարհանք.** գտնվում է գյուղի արևմտյան կողմում: Այս քարատեսակի մշակումից ստացվում է պատերը ներսից սվաղելու համար օգտագործվող ավազ: Երկրորդ աշխարհամարտից հետո երկրորդ

1 **Քոսեան Յ.**, Ախալցխա, «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 82:

2 Ըստ տեղացիների վկայության:

3 **Քոսեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 82-83:



**Ծղալթբիլա. ընդհանուր տեսքը հյուսիսից (լուս.՝ հայր Վահան Յովհաննիսյանի, 1960 թ.)**

հանքում կառուցվել է ալեբաստրի (սպիտակ, թափանցիկ գաջաքար) գործարան, որի հումքը տեղափոխվել է Վրաստանի տարբեր շրջաններ, հիմնականում՝ Թբիլիսի[4]:

**Բնակչություն.** գյուղի ներկայիս բնակիչների նախնիները 1830 թ. փոխադրվել են Կարնո գավառի Նորշեն[5] գյուղից. «Ի սկզբան անդ իրենց գաղթականութեան 34 տուն եղած կը պատմուի...»[6]: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, ծղալթբիլացի հայր Պետրոս Պողոսյանի վկայությամբ՝ «1829 թուին, Կարնոյ դաշտի Նորշէն գիւղէն երեսուն հայ ընտանիքներ կը գաղթեն Կովկաս: Ախալցխայի շրջանին մէջ կը հիմնեն նոր գիւղ մը եւ զայն կը կոչեն իրենց ծննդավայրի անունով՝ Նորշէն...»[7]:

Ավանդաբար պատմում են, որ Նորշենից դեպի նոր բնակավայր առաջնորդել է Սիմոն քահանա Դիլանյանցը: Նրանից սերել են Սիմոնյանները:

Մեկ այլ տեղեկության համաձայն՝ գյուղի բնակիչների նախնիները փոխադրվել են ոչ միայն Նորշենից, այլև Ռաբատ[8] և Հինձք[9] գյուղերից:

Գյուղում Իսլամենց մահլա թաղամասում բնակվել են նաև մահմեդականներ կամ մահմեդականացած վրացիներ՝ Իսլամենք (ըստ տեղացիների՝ տեղափոխվել են Ճիխեւից) և Բիլալենք՝ յուրաքանչյուրը 25-30 անձով[9]:

1915 թ. Ծղալթբիլայի վերաբերյալ նշվել է, որ «...դարձած է երկու հարիւր կարնեցի ընտանիք հաշուող բարեկեցիկ գիւղ մը, իր հանրային կեանքով եւ մշակոյթային հաստատութիւններով»[10]:

**Ազգատոհմեր.** ավանդաբար վկայվում է, որ 1830 թ. Ծղալթբիլայում են հաստատվել նորշենցի հետևյալ ընտանիքները՝ Աբգարենք, Ազենք, Ալբերտենք, Աղամենք, Աղաջանենք, Այվազները, Ավտիսները, Գոքորները, Դարբնենք-Կարոյենք, Եղզարենք, Երոյենք, Խաչոները, Կիգոները, Կոտոյենք, Ղուրմիկենք, Մեքսեթները, Մոսիկենք, Մոսոները, Մուկուլենք, Յոթենք, Նահապետենք, Նասխաթները, Նիկոյենք, Շիրխանենք, Պապլոյենք, Պիճոյենք, Պողոսենք, Վարդանենք, Տերտերանք, Ուղուզենք, Փոռոյենք, Քոսենք, Ոսկանները, Օվանները[11]:

Հետագայում գյուղում բնակություն են հաստատել նաև Դավիթենք (փոխադրվել են Նաոխրեբից), Աբրիամենք (1860 թ. փոխադրվել են Քութայիսից), Արեզակյանները և Միքայելյանները (փոխադրվել են Կարսից)[12]:

---

4 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 108:

5 Գտնվում է Էրզրումից 22 կմ հյուսիս-արևմուտք՝ Արճիկ և Թարգումի գյուղերի միջև: Կարնո դաշտի կենտրոնական գյուղերից էր: Ներկայումս պաշտոնապես վերանվանված է Կումլույազը (Kumluyazi):

6 **Քոսեան Յ.**,նշվ. աշխ., էջ 83:

7 **Ղազար-Չարըզ**, նշվ. աշխ., էջ 722:

8 Գտնվում է Էրզրումից 45 կմ հյուսիս-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանված է Կեմերկայա (Kemerkaya):

9 Գտնվում է Էրզրումից 18 կմ հյուսիս-արևելք՝ Ղզլվանք և Դինարիգոմ գյուղերի հարևանությամբ: Կարնո դաշտի արևելյան սահմանային գյուղերից էր: Ներկայումս պաշտոնապես վերանվանված է Դումլու (Dumlu):

8 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 131: Տե՛ս նաև **Քոսեան Յ.**, Բարձր Հայք. Կարին քաղաքը, h. Բ, Վիեննա, 1926, էջ 100:

9 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 107:

10 **Ղազար-Չարըզ**, նշվ. աշխ., էջ 722:

11 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 106: Տե՛ս նաև **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., h. Ա, էջ 57-58:

12 **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., h. Ա, էջ 58:



**Ծղալթբիլա. ընդհանուր տեսքը հյուսիսից (լուս.՝ Ա. Մելիքսեթյանի, 2007 թ.)**

*Վիճակագրություն.* առանց այն էլ սակավաթիվ տեղեկագրերից մի քանիսում Ծղալթբիլայի բնակչության թվաքանակը ցույց է տրված մոտակա գյուղի հետ միատեղ, ուստի որոշ դեպքերում հնարավոր չէ նշյալ գյուղերից յուրաքանչյուրի համար առանձին տվյալներ զատել: Այդպիսին է, օրինակ, 1913 թ. տեղեկագիրը, որտեղ Ծղալթբիլայի բնակչության թվաքանակը ներառում է նաև մերձակա Ջուլղա գյուղի բնակչության թիվը: Սրանով հանդերձ՝ ըստ ժամանակագրության ստորև ներկայացնում ենք վիճակագրական տվյալների համադրված պատկերը.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1830[13] | 34 | | | |
| 1884[14] | | | | 675 |
| 1901[15] | 105 | | | |
| 1913[16] | 167 | 758 | 762 | 1520 |
| 1914[17] | | | | 1445 |
| 1915[18] | | | | 1563 |
| 1916[19] | 168 | 804 | 800 | 1604 |
| 1989[20] | 632 | | | 1942 |
| 1991[21] | 628 | | | 1927 |
| 1994[22] | 650 | | | 1905 |
| 2006[23] | 602 | | | 1400 |
| 2007[24] | 597 | 734 | 780 | 1514 |

**Երկրորդ աշխարհամարտ**. գյուղաբնակներից մասնակցել է 328 հոգի, որից 162-ը զոհվել է: Ի հիշատակ ռազմի դաշտերում զոհված համագյուղացիների՝ ծղալթբիլացիները 1985-1990 թվականների ընթացքում կառուցել են կարմիր տուֆից հուշարձան-կոթող (ճարտ.՝ Գևորգ Արամյան, քարտաշ-վարպետ՝ Ալբերտ Չարչյան): Օծվել է 1991 թ.՝ Անատոլի վարդապետի գլխավորությամբ[25]:

**Ջրամատակարարում.** 1928 թ. ծղալթբիլացի Կիգոյենց Կիգոլը (Գրիգորը) կառուցում է գյուղի առաջին աղբյուրը, 1939 թ. Քերոբ Մոսիկյանի ջանքերով Ճառալ տեղամասից առուներով ջուր է բերվում գյուղ, իսկ 1970-1980-ական թվականներին մեծ թափ է առնում աղբյուրաշինությունը բոլոր թաղամասերում[26]:

2000-2001 թվականներին Լեոնիդ Գոգորյանը գյուղում կառուցում է հուշաղբյուրներ: Դրանցից մեկին 10 տողով փորագրված է.

*Գյուղիս / հանգուցյալների / հիշատակին. / Լեոնիդ / Սարգիսի / Գոգորյանից: / Մեր պապերի 170 տարվա / բաղձանքը՝ / կատարված: / 2000:*

*Հրատ.* առաջին անգամ:

13 **Քոսեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 83:
14 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:
15 **Քոսեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 83:
16 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:
17 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 64, թ. 7: Տե՛ս նաև “Кавказский календарь на 1915 г.”, с. 203.
18 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 78:
19 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 30-31:
20 Գյուղխորհրդի տվյալները մեզ է փոխանցել ծղալթբիլացի Մելիք Մկրտչի Մոսիկյանը:
21 Ըստ գյուղապետարանի տվյալների:
22 Ըստ գյուղապետարանի տվյալների:
23 Ըստ գյուղապետարանի տվյալների:
24 Ըստ գյուղապետարանի լիազորված անձ Պետրոս Միսակի Վարդանյանի:
25 **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., էջ 128-132: Տե՛ս նաև **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 122-124 (ըստ հեղինակի՝ զոհվել է 130 հոգի, որը, կարծում ենք, սխալ է):
26 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 109:



**Ծղալթբիլա. Երկրորդ աշխարհամարտում զոհված ծղալթբիլացիների հիշատակը հավերժացնող հուշարձանը**



**Ծղալթբիլա. Սբ. Փրկիչ եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ 1988 թ.)**

**Հիվանդանոց.** 1914 թ. Ծղալթբիլայի գյուղական հիվանդանոցը ծխական դպրոցի շենքից փոխադրվում և հաստատվում է հասարակության միջոցներով մասնավորապես որպես հիվանդանոց կառուցված նոր շենքի մեջ[27]:

**Դպրոց.** 1888 թ. եկեղեցուն կից ջուլղայեցիների հետ համատեղ կառուցել են ծմեռային դպրոց, որտեղ սովորել են երկու գյուղերի երեխաները[28]:

1902 թ. ևս գյուղական վարժարանը գործել է միայն ձմեռային ամիսներին[29]: 1916 թ. եղել է նախարարական դպրոց[30] և ունեցել 100 աշակերտ (40-ը՝ աղջիկ)[31]: Այս դպրոցը գործել է մինչև 1921 թ.[32], երբ նույն տարվա հոկտեմբերից Շիրխան Շիրխանյանի նախաձեռնությամբ բացվել է քառամյա դպրոցի առաջին դասարանը (առաջին ուսուցիչն էր սուխլիսցի Պետրոս Հարությունյանը)՝ 20 աշակերտով[33]:

1932/1933 ուստարում դպրոցը դարձել է յոթնամյա, 1938 թ.՝ ութամյա[34], 1940 թ.՝ տասնամյա[35]:

1978 թ. Ծղալթբիլայում կառուցվել է դպրոցի եռահարկ նոր շենք՝ ծղալթբիլացի և ջուլղացի երեխաների համար:

1976-1980 թվականներին դպրոցում սովորել է 1012 աշակերտ:

1985 թ. դպրոցն ուներ 60 ուսուցիչ և 600 աշակերտ[36]:

1989/1990 ուստարում միջնակարգ դպրոցում ուսանել է 377 աշակերտ, ընդ որում, առաջին դասարանում՝ 36 աշակերտ:

1994/1995 ուստարում դպրոցն ուներ 30 ուսուցիչ և 299 աշակերտ[37], 2000/2001-ին՝ 163, իսկ 2005/2006-ին՝ 96 աշակերտ[38]:

**Գյուղերիտ դպրոց.** բացվել է 1926 թ., առաջին տնօրենն էր գյուղատնտես Արշակ Գրիգորյանը: 1930-1931 թվականներին վերափոխվել է կոլերիտ դպրոցի (առաջին տնօրեն՝ Գրիգոր Քյուրքչյան)[39]:

**Սբ. Փրկիչ եկեղեցի.** գտնվում է գյուղի կենտրոնական մասում. «Եկեղեցին շինուած է բարձր դիրքի մը վրայ, որով աջ ու ձախը գտնուած տներուն եւ տնակներուն վրայ՝ կարծես թէ կիշխէ, քարաշէն եւ բաւական մեծ, կրկին դռներով ամրացուած...»[40]:

Մինչև եկեղեցու կառուցումը գյուղաբնակներն իրենց հոգևոր կարիքները հոգում էին այդ նպատակին ծառայող մի տան մեջ, որը գտնվում էր Գոքորների հին տան տեղում[41]:

Սբ. Փրկիչ քարաշեն եկեղեցու նախնական շենքը կառուցվել է հասարակության ծախսով 1849 թ.[42], սակայն 1886 թ. հիմնովին վերակառուցվել է[43]:

27 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 30, թ. 107:
28 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 156:
29 **Քօսեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 83:
30 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 78:
31 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 30-31:
32 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 156:
33 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 113:
34 Նույն տեղում, էջ 114-115:
35 Ըստ տեղացիների վկայության: Իսկ ըստ Հ. Հակոբյանի՝ տասնամյա է դարձել 1977 թ.:

36 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 156:
37 **Մաքևոսյան Լ.** նշվ. աշխ., էջ 124:
38 Նշվ. աշխ., էջ 144:
39 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 114:
40 **Քօսեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 83:
41 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 107:
42 «Արձագանք», 1885, № 26, էջ 368: Տե՛ս նաև Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 78:
43 **Քօսեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 83:















**Ծղալթբիլա. Սբ. Փրկիչ եկեղեցուն հարող թաղամասը հարավ-արևմուտքից, արձանագրություններ և հարթաքանդակ հարավային ճակատին, ներքին տեսքը դեպի արևելք և հատված բեմի ճակատամասից (լուս.՝ 2007 թ.)**

Նույն թվականին կատարվել է եկեղեցու օծման հանդեսը Սարգիս եպիսկոպոս Աբրահամյանցի և 6 քահանաների մասնակցությամբ[44]:

1938 թ. եկեղեցին փակվել է և վերածվել ակումբի[45]:

Վերջին նորոգությունն ու վերաբացումը տեղի են ունեցել 1991 թ.[46]:

Ծղալթբիլայի Սբ. Փրկիչ եկեղեցին ԺԹ-Ի դարերի ընթացքում երկրամասի գյուղերում կառուցված համանման բազմաթիվ եկեղեցիների շարքում աչքի



**Ծղալթբիլա. Սբ. Փրկիչ եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Դավթյանի)**

է ընկնում նախ առավել ընդարձակ չափերով (22,46 x 12,35 մ), ապա զույգ մուտքերի առկայությամբ (արևմուտքից և հարավից), ինչպես նաև հարդարանքով և առատ լուսավորությամբ:

Արձանագրություն. հարավային մուտքի բարավորին՝ 1 տող.

*1881-1886:*

*Հրատ.* առաջին անգամ:

Արձանագրություն. 3 տող.

*Յ(իսու)ս Փրկիչ | եկ(ե)ղ(ե)ց(իս) շ(ի)նվ(ե)ց | 1886:*

*Հրատ.* **Քուչեան Յ.**, Ախալցխա, «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 83:

*Ծանոթ.* վերակառուցման տարեթիվ ունենք նաև 1888 թ. (Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 78), սակայն կարծում ենք, ստույգ լինելու առումով առավել վստահելի է վիմագիրը:

**Մասունքներ.** Ի դարի սկզբին Սբ. Փրկիչ եկեղեցում պահվում էին հետևյալ մասունքները.

Ա Ձեռաց խաչ.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խաչս տ(է)ր Սիմոնի կողակից Յուրիշանին Նօրշէնի ս(ուր)բ եկեղեցոյն, թվ ՌՄԾՁ (1807):*

*Հրատ.* **Քուչեան Յ.**, Ախալցխա, «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 83:

Բ Ձեռաց խաչ.

*Յիշ(ա)տ(ա)կ է Օւլանեան Գէորք կողակից Զարմանի, 1849:*

*Հրատ.* **Քուչեան Յ.**, Ախալցխա, «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 83:

44 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 112:
45 Նշվ. աշխ., էջ 112:
46 Օրացոյց հայ կաթողիկէ եկեղեցու. Հայաստան-Վրաստան, 2000, Գիւմրի, 1999:



**Ծղալթբիլա. հոգևոր արարողություն Սբ. Փրկիչ եկեղեցում (լուս.՝ Լ. Մոսոյանի, 2007 թ.)**

Գ Ձեռաց խաչ.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Ալէքսան Աղապապովի Ծղալբիլու Յ(իսու)ս Փրկչի եկեղեցուն, 1875:*

*Հրատ.* **Քուչեան Յ.**, Ախալցխա, «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 83:

Դ Կանթեղ.

*Յիշ(ա)տ(ա)կ է կանթեղս Մարիամ Յօվակիմին Ծլխալփիու Յ(իսու)ս Փրկչի եկեղեցու 10.12.1851:*

*Հրատ.* **Քուչեան Յ.**, Ախալցխա, «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 83:

**Քահանա.** *Սիմոն Դիլանյանց.* ծնվել է 1792 թ.: Համարվում է նորշենցի հայ գաղթականությանը Ծղալթբիլայում հաստատողն ու նոր բնակավայրում առաջին հոգևոր հովիվը: Վախճանվել է 1862 թ. և ամփոփվել գյուղի Շիրխանենց տան մոտ գտնվող աղոթարանի բակում: 1982 թ. նրա գերեզմանի վրա կառուցվել է դամբարան:

Մարմարե սալիկին՝ 8 տող.

*Աստ հանգչի գերապայ|ծառ տէր Սիմոն Դիլան|յան նորշենցին արժանա|հիշատակ հիմնադիրը Ծը|ղալթբիլա գյուղի եվ | նահապետը Սիմոնյաննե-րի տոհմի (1792-1862): Երախտապարտ շառավիղներից, 1980:*

*Հրատ.* առաջին անգամ:

Տապանաքար, օրորոցաձև, եկեղեցու բակում, նեղ կողին՝ 11 տող.

*Առ դրան Յ(իսու)ս Փրկչի | եկեղեցւոյ հայ-կաթո|լիկայ քաղեցաւ մ(ա)րմին | մաքրակենցաղ աւագ երեցի | տ(է)ր Սիմոն տ(է)ր Սիմոնեանի Դի|լանեանց սրբակեաց քահա|նայ, որ զրաւեալ զկեանս | իւր զկնի եօթանասուն | ամաց կենդանութ|եան, | ի 25 սեպ. 1862 ամի:*

*Հրատ.* առաջին անգամ:



**Ծղալթբիլա. Բարեկենդանի տոնակատարությունը (լուս.՝ 1989 թ.)**

*Հակոբ Քոսյան.* 1830 թ. իր հետ կարողացել է բերել 2 կտավ, որոնք նախ նվիրել է աղոթարանին, ապա եկեղեցուն[47]: Վախճանվել է 1838 թ.: Ամփոփված է գյուղի գերեզմանոցում:

Սալատապան, գյուղի գերեզմանոցում, երեսին՝ 11 տող.

*Այս է դամբա/րան քրիստոսա/զոր քահանա/յի տ(է)ր Յակոբ / Քօսեանի, ծնե/ալ ի Կարին 1800, / ձեռնադրեալ / 1 մարտին աքսո/րեցեալ ի Լիբանան 1826, / ի տէր հանգեալ / ամի 1838:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Պողոս Պողոսյան.* ծնվել է 1808 թ.: Մեծ ավանդ ունի մանուկների ուսումնառության գործում: Վախճանվել է 1880 թ.: 1905 թ. Սարգիս վարդապետ Աբրահամյանցի թույլտվությամբ նրա աճյունը հին եկեղեցու մոտից տեղափոխվել է նոր եկեղեցու բակ[48]:

Տապանաքար, երեսին՝ խիստ հողմահար 11 տող.

*Յայնմիկ ... / Պող(ո)ս վարդապետ տ(է)ր Պօղոսեան, / ծնեալ ի Կարին, գաղթել յայս երգիրն / առք սուրբ կարգս ք(ա)հ(ա)նա... / ...:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Մկրտիչ Տեր-Սիմոնյանց* (1825-1884). Սիմոն Դիլանյանցի որդին էր: Գերեզմանը գտնվում է եկեղեցու բակում:

Տապանաքար, երեսին՝ 8 տող.

*Յայսմիկ տապա/նի հանգչի հայ/-կաթօլիկ ք(ա)հ(ա)ն(ա)յ / տ(է)ր Մկրտիչ տ(է)ր / Սիմոնեանց / ծնեալ 1825 ամ / փոխե(ա)լ առ ա(ստուա)ծ / 1884 ամ, 16.:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Նազարեթ Տեր-Պողոսյան* (1835-1888). քահանա է ձեռնադրվել 1861 թ.: Գերեզմանը գտնվում է եկեղեցու բակում:

Տապանաքար, երեսին՝ 10 տող.

*Յայսմիկ տապանի / հանգչի հայ-կա/թօլիկ քահա/նայ տէր Նա/զարէթ տէր / Պօղոսեան / ծնեալ 1835 ամ / փոխեալ առ / ա(ստուա)ծ / 1888 ամի, / 27 մարտի:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Պողոս վարդապետ Տեր-Հակոբյան (Պողոս Քոսյան).* (1834-1905):

Տապանաքար, եկեղեցու բակում, երեսին՝ 10 տող.

*Յա(յ)սմիկ տապան/ի հանգչի հայ-կ/աթօլիկ ք(ա)հ(ա)նայ / Պօղոս վար(դապետ) տ(է)ր / Յակոբեան ծն/եալ 1834 ամի / փոխեալ առ ա(ստուա)ծ / 1905 ամի մա/յիս 8 վէրջ: / Գրեաց Գ(րիգո)ր Ղազ(ա)ն(եան)ց:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Պողոս Խաչատուրյան.* (1854-1924). ծխատեր քահանա է հիշվում 1918 թ.[49]: Գերեզմանը գտնվում է եկեղեցու բակում:

Տապանաքար, երեսին՝ 10 տող.

*Յայսմիկ տա/պանի հանգչի / Պօղոս ք(ա)հ(ա)նայ / Խաչատուրե(ա)ն, / ծնե(ա)լ է 1854 1/17 / փոխե(ա)լ առ ա(ստուա)ծ / 1924 թ. 17 յունվ(արի): / Ո՞վ է մարդ, որ / կեցցէ և ոչ / տեսցէ զմահ:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Բագրատ Տեր-Սիմոնյանց* (1873-1937). մեծ դեր է խաղացել գյուղի հոգևոր և մշակութային կյանքը

47 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 107:

48 **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., h. Ա, էջ 108:

49 “Кавказский календарь на 1909 г.”, с. 207.



Ծղալթբիլա. տեր Պողոս Խաչատուրյանի տապանաքարը (լուս.՝ 2007 թ.)



Ծղալթբիլա. տեր Յակոբ Քոսյանի տապանաքարը (լուս.՝ 2007 թ.)

զարգացնելու ուղղությամբ: Սիմոն Դիլանյանցի թոռն էր՝ տեր Մկրտչի որդին: Ստալինյան բռնատիրության զոհերից է: Տապանաքարը գտնվում է եկեղեցու բակում:

Տապանաքար, երեսին՝ 8 տող.

*Այս է տապան / Բագրատ քահանայ / տէր Սիմոնեանի, ծն. 1873 թ. / որ նահատակեցաւ վասն / հաւատոյ 1937 ամի / ձեռամբ անօրինաց. արիւն մարտիրոսաց՝ / սերմ քրիստոնէից:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Քերոբ վարդապետ Տեր-Պողոսյան.* ծնվել է 1875 թ., վախճանվել 1938 թ.: Ստալինյան բռնատիրության զոհերից է: Հայտնի է, որ 1916 թ. գյուղում քահանայագործել է կրոնուսույց Քերոբ Տեր-Պողոսյանը[50], իսկ 1917-1918 թվականներին մեծ դեր է կատարել Ծղալթբիլա և հարակից հայ գյուղերի բնակչությանը կոտորածից զերծ պահելու գործում (տե՛ս Մարտիրոս Ալմասյանի տապանագիրը):

Քերոբ վարդապետը հիշվում է նաև 1918 թ.[51]:

*Հովհաննես Հակոբյան.* (1878-1956). Հակոբ Քոսյանի թոռն էր: Աքսորվել է Միջին Ասիա, վերադարձել քայքայված առողջությամբ և մինչև կյանքի վերջը քահանայագործել գյուղում:

50 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1916, էջ 78:
51 «Շարժում», 1918, № 32, էջ 2:

*Սիմոն Խաչատուրյան.* (1882-1953). 1920 թ.-ից հովվել է Ծղալթբիլային, ապա Ծինուբան գյուղին: 1938 թ.-ից արգելել են քահանայագործել:

*Անատոլի վարդապետ Իվանյուկ.* ծնվել է 1958 թ. Ուկրաինայի Ժիտոմիր քաղաքում: 1990 թ.-ից առ այսօր հովվում է Ծղալթբիլային[52], Ջուլղային և Սուխլիսին (Սուխլիսում հովվել է մինչև 2006 թ.): 2007 թ. նշանակվել է Թբիլիսիի հայ կաթողիկեների ժողովրդապետ:

**Գերեզմանոց.** գյուղի հին գերեզմանոցում պահպանված տապանաքարերից մեկին փորագրված է.

Տապանաքար, երեսին՝ 13 տող.

*Ալմասյան / Մարտիրոս[53] / Ծղա(լթբիլա) եվ շրջա/կա գիւղերին / բարբարոս / Թիւրքիայի / կոտորումից / ազատարար / 1917-18 թ. / ծ. 1859-1926: / Տէր Պողո(սեան) Տէր / Քերոբ վարտա/պէտի մեծ օգն(ու)թ(եամբ):*

*Հրատ.* առաջին անգամ:

**Գյուղատեղիներ և մատուռներ.** մերձակայքում պահպանվել են Վերի Յուսկա, Յուսկա, Ջարալ, Ջաղիսման գյուղատեղիները և Քարի գլուխ, Խաչքար, Յուսկա մատուռները և այլն:

52 **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., էջ 114:
53 Ի դեպ, Ալմասյան Մարտիրոսը (Ալմասի Մադո) եղել է Ծղալթբիլայի գյուղապետը (տե՛ս **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 79):





Ծղալթբիլա. քահանաների տապանաքարեր եկեղեցու բակի գերեզմանոցում (լուս.՝ 2007 թ.)



Ծղալթբիլա. քահանայի տապանաքար (լուս.՝ 2007 թ.)



Ծղալթբիլա. Մարտիրոս Ալմասյանի տապանաքարը (լուս.՝ 2007 թ.)

**Հայ կաթողիկե եկեղեցի.** գտնվում է գյուղից հարավ՝ բարձունքի վրա՝ Յայլա կոչվող վայրում: Կառուցվել է 1996 թ.:

Արձանագրություն, եկեղեցու արևմտյան ճակատին՝ 7 տող.

*Այս հայ կաթուղիկէ եկեղեցին կառուցաւ | ի փառս Ամենակարող Սուրբ Երրորդութեան | եվ մի աստուածութեան եւ ի պատիվ Մովսէս | Մարգարէին ի յիշատակ եւ ի հանգիստ | հանգուցեալ հօր մեր Պողոսեան Մովսիսի. | Երախտագէտ զաւակունք: | ՌՋՂԶ ամի 1996:*

**Անվանի ծղալթբիլացիներ.** ծնունդով Ծղալթբիլա գյուղից են սերում վաստակաշատ հայագետներ, Մխիթարյան միաբանության անդամներ հայր

Վահան Հովհաննիսյանը և հայր Պետրոս Տեր-Պողոսյանը[54]:

*Հակոբյան Պիոն.* (24.10.1926, Ծղալթբիլա-27.09.2000 Երևան, թաղված է Աշտարակում). անվանի գրականագետ, բանասիրական գիտությունների պրոֆեսոր: Մեծ վաստակ ունի աբովյանագիտության բնագավառում: Նրա գրչին են պատկանում «Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը» (1955), «Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը (1809-1836)» (1967), «Վերելք» (1982) և այլ աշխատություններ[55]:

Ազգապահպան մեծ գործ է կատարել Մարտիրոս Ալմասյանը (տապանաքարը գտնվում է գյուղի գերեզմանոցում):

## ԾՐԻՌԽԻ

Գտնվում է Ախալցխայից 14 կմ հյուսիս-արևելք՝ Ածղորից 2 կմ հյուսիս-արևմուտք:

1946 թ. գյուղում է հաստատվել Ջավախքից փոխադրված 120 հայ ընտանիք (ինչպես, օրինակ՝ Մանուկյանները, Հարությունյանները, Մարուքյանները և այլք):

Ծրիռխցի հայերը գյուղում առանձին գերեզմանոց չունեն. թաղումները կատարում են հարևան՝ Ածղոր գյուղի գերեզմանոցում:

Խորհրդային տարիներին՝ Ի. Ստալինի հրամանով Ծրիռխիում կառուցվել է շամպայն-գինիների գործարան:

54 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 88-89:
55 Ով ով է. հայեր, հ. 1, էջ 599-600:

# ԾՈՒՂՐՈՒԹ



**Ծուղրութ. ընդհանուր տեսքը հյուսիսից (լուս.՝ 2007 թ.)**

**Տեղադրությունը.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 5 կմ հյուսիս-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1070-1130 մ բարձրության վրա՝ Փոցխով գետի ձախակողմյան վտակի հարավարևելահայաց ձորալանջին:

**Պատմությունը.** 1873 թ. նշվել է. «Այս գիւղի շրջակայ աւերակ եկեղեցիները կ՛ապացուցեն, որ այստեղ սկզբէն քրիստոնեայք կը բնակէին: Քանի մի անուններ (Գիօրգի Ծմինդայ, Միքայէլ Ծմինդայ) կը սեփականացնեն Վրաց, բայց Հայոց գերեզմանատան հին մատուռի սեղանը բարձր է և ձախակողմեան պատի մէջ կայ ընծայարան և աւազան: Այս մատուռի մէջ այժմ կը պահեն ջաղրը, որոյ վերայ մեռելները դնելով տանում են թաղելու, ջաղրը գործածում են մինչև այժմ և տաճիկները»[1]:

ԺԹ դարում հողը հիմնականում եղել է արքունական, միայն 1873 թ. մի փոքր մասով պատկանել է կալվածատեր Բայբուրդյանցներին[2]: Նույնն էր վիճակը նաև 1875 թ. «Գիւղի 1/4 մասը պատկանում է Ախալցխացի ամենաերևելի կալուածատէր Բայբուրտեանցին, իսկ 3/4 մասը արքունական է...»[3]:

**Ծուղրութը 1918 թ.** մայիսի 3-ին՝ ցերեկվա ժամը 1-ին, թուրքերը հարձակվում են գյուղի վրա: Ինքնապաշտպանական մարտերի համար վաղօրոք կազմակերպված ծուղրութցիներն առանց խուճապի կարողանում են հաջողությամբ դիմագրավել և ետ մղել թշնամու հարձակումը. «Թուրքերի այս անգամվա յարձակումը լինում է աւելի խիզախ և վճռական. սկսւում է տաք կռիւ: Ծուղրութցիները կռւում են մեծ քաջութեամբ, սակայն թուրքերը օգտւելով իրենց գերազանց ուժից, կարողանում են մօտենալ

1 **Ղազազեանց Գ.**, Ծուղրութ գիւղ, «Մեղու Հայաստանի», 1873, № 32, էջ 2:

2 Նույն տեղում:

3 «Մեղու Հայաստանի», 1875, № 50, էջ 2:





**Ծուղրութ. ընդհանուր տեսքը արևմուտքից և հատված կենտրոնական թաղամասից (լուս.՝ 2007 թ.)**

գիւղի թրքական մասին: Կռիւը դառնում է ձեռնամարտի. ծուղրութցիները ձգում են մի քանի ձեռնառումբ: Խմբապէտ Ղևէնը վիրաւորւում է, նրա օգնական Լևոնը սպանւում է, սակայն գիւղացիները շարունակում են մեծ յամառութեամբ: Թուրքերը չկարողանալով կռիւը շարունակել, դիմում են փախուստի՝ թողնելով եօթն սպանւած ծուղրութցիների ձեռքում, իսկ աւելի հեռուներում ընկած սպանւածներին և վիրաւորներին կարողանում են վերցնել, տանել: Ծուղրութցիներից սպանւում են ընդամենը 4 հոգի և վիրաւորւում է 1-ը»[4]:

Դեպքերի հետագա զարգացումները և մասնավորապես օրավուր խտացող թուրք զորքի կուտակումները գյուղի մերձակայքում ծուղրութցիներին ստիպում են ամրանալ Ախալցխայի հին թաղամասում: Համաձայն 1918 թ. մայիսի 23-ի տեղեկա-

4 «Շարժում», 1918, № 29, էջ 1:

տվության՝ ծուղրութցիներն արդեն ապաստանել էին Նշյալ քաղաքամասում[5]:

**Բնակչություն.** գյուղի ներկայիս բնակիչների նախնիները գաղթել են Կարնո գավառի Իլիջա[6] գյուղից[7]:

Բացի հայերից՝ գյուղում մինչև 1944 թ. բնակվել են նաև թուրքեր, որոնք նշյալ թվականին աքսորվել են Ղազախստան[8]: Ծուղրութաբնակ հույներն էլ փոխադրվել են մոտակա հունական Միքելծմինդա (Մուքելծմինդա) գյուղը:

**Ազգատոհմեր.** ստորև ներկայացնում ենք Իլիջայից փոխադրված գերդաստանների անունները՝ Ադամյան, Ալեքսանյան, Անանյան, Ավագյան, Բաբոյան, Գինոսյան, Երանոսյան, Էլիբեկյան, Ինջոյան, Իսկանյան, Իրիցյան, Կարապետյան, Կուզուտյան, Ղազարոսյան, Ղաֆադարյան, Մանասյան, Չախոյան, Պողոսյան, Սաղոյան, Սապոնջյան, Սաֆարյան, Ստեփանյան և Փիլոսյան[9]:

*Վիճակագրություն.* ԺԹ-Ի դարերին վերաբերող տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1840[10] | | 156 | 196 | 352 |
| 1841[11] | | 135 | 164 | 292 |
| 1842[12] | | 155 | 187 | 342 |
| 1844[13] | | 184 | 202 | 386 |
| 1845[14] | | 180 | 198 | 378 |
| 1847[15] | | 173 | 188 | 361 |
| 1849[16] | | 179 | 190 | 369 |
| 1851[17] | 49 | 143 | 163 | 306 |
| 1853[18] | | 190 | 172 | 362 |
| 1854[19] | | 192 | 174 | 366 |
| 1857[20] | | 210 | 198 | 408 |
| 1860[21] | | 156 | 145 | 301 |
| 1861[22] | | 171 | 163 | 334 |
| 1862[23] | | 175 | 168 | 343 |
| 1863[24] | | 175 | 170 | 345 |
| 1864[25] | | 180 | 173 | 153 |
| 1865[26] | | 185 | 174 | 359 |
| 1866[27] | 44 | 185 | 174 | 359 |
| 1867[28] | 42 | 213 | 202 | 415 |
| 1868[29] | 42 | 219 | 203 | 422 |
| 1869[30] | 42 | 189 | 166 | 355 |
| 1870[31] | 44 | 230 | 210 | 240 |
| 1871[32] | | 230 | 210 | 440 |
| 1872[33] | | 288 | 172 | 460 |
| 1873[34] | 50 | 280 | 185 | 465 |
| 1875[35] | 60 | | | |
| 1876[36] | | 300 | 290 | 590 |
| 1877[37] | | 350 | 336 | 686 |
| 1878[38] | | 360 | 345 | 705 |
| 1880[39] | | 375 | 360 | 735 |
| 1881[40] | | 371 | 348 | 719 |
| 1882[41] | | 381 | 347 | 727 |
| 1883[42] | | 408 | 380 | 788 |
| 1884[43] | 70 | | | |
| 1885[44] | | 413 | 382 | 795 |
| 1886[45] | | 425 | 390 | 815 |
| 1887[46] | | 425 | 396 | 821 |
| 1888[47] | | 436 | 392 | 828 |
| 1889[48] | 70-80 | 427 | 404 | 831 |
| 1890[49] | 71 | | | |
| 1893[50] | | 447 | 417 | 864 |
| 1894[51] | | 451 | 423 | 874 |
| 1897[52] | | 384 | 376 | 760 |
| 1899[53] | | 389 | 383 | 772 |
| 1900[54] | | 396 | 391 | 787 |
| 1901[55] | | 406 | 402 | 808 |
| 1902[56] | | 412 | 494 | 906 |

5 «Ճարժում», 1918, № 30, էջ 2:
6 Գտնվում է Էրզրումից 16 կմ հյուսիս-արևմուտք՝ Ղուշչի և Աղվերան գյուղերի միջև: Գավառի կենտրոնական գյուղերից էր: Ներկայումս պաշտոնապես կոչվում է Ըլըջա (Ilica):
7 «Մեղու Հայաստանի», 1873, № 32, էջ 2:
8 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 182:
9 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 181:
10 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:
11 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67:
12 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, թ. 76-77:
13 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, թ. 14:
14 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 70-71:
15 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 33:
16 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 39:
17 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 26:
18 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 37-38:
19 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, թ. 47-48:
20 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, թ. 27-28:
21 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 3:
22 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3839, թ. 14:
23 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3836, թ. 26:
24 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 60-61:
25 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3846, թ. 2-3:
26 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 19-20:
27 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 73:
28 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3851, թ. 19, 24:
29 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3853, թ. 27:
30 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3856, թ. 36-37:
31 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 85-86:
32 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 201-202:
33 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3859, թ. 34:
34 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, թ. 76-77, 94-95: Տե՛ս նաև «Մեղու Հայաստանի», 1873, № 32, էջ 2:
35 «Մեղու Հայաստանի», 1875, № 50, էջ 2:
36 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 29-30:
37 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, թ. 39:
38 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 204-205:
39 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 69, 84:
40 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 47:
41 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 105:
42 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:
43 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
44 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 13:
45 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3878, թ. 57:
46 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 3-4:
47 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 46-47:
48 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 115-116: Տե՛ս նաև «Նոր-Դար», 1889, № 83, էջ 2:
49 «Նոր-Դար», 1890, № 171, էջ 2:
50 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 33-34:
51 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 54-55:
52 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, թ. 139-140:
53 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3903, թ. 83-84:
54 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, թ. 58:
55 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 132-133:
56 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, թ. 15-16:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1905[57] | | 438 | 529 | 967 |
| 1906[58] | | 430 | 415 | 845 |
| 1907[59] | 100-110 | | | 845 |
| 1908[60] | 105 | 440 | 436 | 876 |
| 1909[61] | | 481 | 448 | 929 |
| 1910[62] | | 450 | 456 | 906 |
| 1912[63] | 133 | 480 | 470 | 950 |
| 1913[64] | | 480 | 460 | 940 |
| 1914[65] | | 490 | 470 | 960 |
| 1916[66] | 130 | 432 | 415 | 847 |
| 1922[67] | | | | 785 |
| 1983[68] | 347 | | | 1155 |
| 2007[69] | 416 | 650 | 550 | 1200 |

**Երկրորդ աշխարհամարտ.** գյուղաբնակներից մասնակցել է 132 անձ, որից 53-ը չի վերադարձել[70]: Ի հիշատակ ռազմի դաշտում զոհված համագյուղացիների՝ 1988 թ. Ախալցխա տանող ճանապարհի ձախ կողմում կառուցվել է հուշարձան-կոթող (նախագծի հեղինակ՝ Համբարձում Սապոնջյան, քանդակագործ՝ Սեդրակ Կարապետյան)[71]:

**Դպրոց.** 1873 թ. նշվել է. «Եկեղեցւոյ գաւթի մէջ կայ մի ուսումնարան, որոյ բացման պատիւը պատկանում է գեր. Ս. վ. Պարզեանց: Աշակերտք պարապում են միայն ձմեռը, իսկ ամառը ծնողաց հետ դաշտումն են»[72]:

Ստորև ներկայացնում ենք 1870-1916 թվականների ընթացքում դպրոցի գործունեության համառոտ վիճակագրությունը.

| *տարեթիվ* | *այլ տեղեկ.* | *ուսուցիչ* | *աշակերտ* |
|---|---|---|---|
| 1870[73] | | 1 | 20 |
| 1876[74] | արական | 1 | 9 |
| 1880[75] | | 1 | 28 |
| 1882[76] | | 1 | 46 |
| 1881[77] | | 1 | 39 |
| 1883[78] | | 1 | 48 |
| 1884[79] | միդասյա, արական | | |
| 1885 | փակվել է | | |
| 1888[80] | | 1 | 24 |
| 1896 | փակվել է | | |
| 1905[81] | վերաբացվել է | | |
| 1907[82] | | | 66 |
| 1907/08[83] | միդասյա | 2 | 70 |
| 1908[84] | միդասյա, երկսեռ | | 121 |
| 1909[85] | | 2 | 120 |
| 1910[86] | | 2 | 57 |
| 1911[87] | 3 բաժ., երկսեռ | 2 | 35 |
| 1912/13[88] | երեք բաժանմունք | | 50 |
| 1916[89] | երեք բաժանմունք | 2 | 80 |

Դպրոցի՝ առանց այն էլ նյութապես անապահով վիճակն առանձնապես դժվարացել է հատկապես 1912 թ. «...եկեղեցին փակ լինելով դպրոցի նիւթական եկամուտները սակաւացել են և եթէ այսպէս շարունակուի մեր դպրոցը կարող է փակուել, որովհետև իւր գոյութեան գլխաւոր եկամուտը եկեղեցւոյ արդիւնքից է ստանում»[90]:

Ծուղրութի եկեղեցական-ծխական դպրոցին 1914/1915 ուստարվա համար ԿՀԲԸ նախատեսել էր հատկացնել 200 ռուբլի[91]:

1916/1917 ուստարում դպրոցը պահվել է ԿՀԲԸ-ի նպաստով (250 ռուբ.)[92]:

1924 թ. Ծուղրութում բացվել է տարրական դպրոց, որը 1936 թ. դարձել է յոթնամյա: 1960/1961 ուստարվանից առ այսօր գործում է որպես տասնամյա[93]:

1983 թ. գյուղի միջնակարգ դպրոցն ուներ 45 ուսուցիչ և 272 աշակերտ[94], 1994/1995 ուստարում՝ 30 ուսուցիչ և 205 աշակերտ[95], 2000/2001-ին՝ 254, 2005/2006-ին՝ 201 աշակերտ[96]:

**Գյուղատնտեսական դպրոց.** հայտնի է, որ դեռևս 1908 թ. ծուղրութցի բժիշկ Արտաշես Բուդուղ-

57 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3912, թ. 258-259:
58 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 42:
59 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2: Տե՛ս նաև **Տէր-Ենոքեան Խաչ.**, Ծուղրութի հայերի կեանքից, «Վտակ», 1907, № 25:
60 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 39:
61 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 108-109:
62 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 35-36:
63 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3920, թ. 49: Տե՛ս նաև ֆ. 53, ց. 1, գ. 845, թ. 1:
64 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, 950, թ. 268-269:
65 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, 1020, թ. 169-170: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 64, թ. 7: "Кавказский календарь на 1915 г.", с. 203. Ի դեպ, ըստ վերջին տեղեկագրի, նույն թվականին գյուղն ուներ 1088 բնակիչ:
66 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 43, թ. 16-17: Տե՛ս նաև «Համբաւաբեր», 1916, № 30, էջ 941:
67 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 227:
68 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 227:
69 Ըստ գյուղապետարանի տվյալների:
70 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 186:
71 Նույն տեղում, էջ 188-189:
72 **Ղազազեանց Գ.**, նշվ. հոդվ., «Մեղու Հայաստանի», 1873, № 32, էջ 2:
73 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 201-202:
74 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 51: Տե՛ս նաև ֆ. 56, ց. 3, գ. 62, թ. 13:
75 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 84:
76 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 105:
77 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 509: Այլ տեղեկության համաձայն՝ նույն թվականին դպրոցն ուներ 28 աշակերտ («Մեղու Հայաստանի», 1881, № 15, էջ 3):
78 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:
79 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 509:
80 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 46-47:
81 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 509:
82 **Տէր-Ենոքեան Խաչ.**, նշվ. հոդվ., «Վտակ», 1907, № 25:
83 «Նոր Դպրոց», 1908, № 1, էջ 67:
84 ՀԱԴ, ֆ. 28, ց. 1, գ. 300, թ. 15-16: Տե՛ս նաև **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 509: Դպրոցի 121 աշակերտից 65-ը աղջիկ էր:
85 ՀԱԴ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ. 14: Աշակերտներից 65-ը աղջիկ էր, 55-ը՝ տղա:
86 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 35-36:
87 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 682, թ. 57: Աշակերտներից 5-ը աղջիկ էր, 30-ը՝ տղա:
88 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 509: Ի դեպ, 50 աշակերտներից 30-ը աղջիկներ էին:
89 «Համբաւաբեր», 1916, № 24, էջ 744:
90 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 845, թ. 9:
91 «Հորիզոն», 1914, № 144, էջ 3:
92 «Համբաւաբեր», 1916, № 33, էջ 1033:
93 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 183:
94 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 227:
95 **Սարեւոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 124:
96 Նշվ. աշխ., էջ 144:

յանը նախատեսել էր Ծուղրութում հիմնել գյուղատնտեսական դպրոց[97]:

1910-ական թվականներին բժիշկ Արտաշես Բուղուղյանը համագյուղացիներին հայտնել է իր միջոցներով գյուղատնտեսական դպրոց հիմնելու մտադրության մասին: 1915 թ. Եղիշե քահանա Հակոբյանցի վկայությամբ՝ «Բժիշկ Բուղուղեանը մտածելով իր հայրենի գաւառի Ծուղրուտ գիւղում մի յիշատակ թողնել, անցեալ տարիներում Յովհ. Թումանեանի հետ գալիս է գիւղ և յայտնում հասարակութեան, թէ մտադիր է Ծուղրուտում հիմնել մի գիւղատնտեսական դպրոց իր միջոցներով, միմիայն այն պայմանով, որ գիւղը յատկացնի այդ նպատակի համար յարմար հող և շինութեան համար քար և փայտ: Գիւղի հասարակութիւնը տալիս է իր համաձայնութիւնը և բժիշկը վերադառնալիս ուղարկում է այդ նպատակի համար 120 պտղատու ծառեր»[98]: Նույն թվականին արդեն իրականացվել են որոշ աշխատանքներ: Սակայն, ըստ ամենայնի, դպրոցը կյանքի չի կոչվել՝ 1915 թ. ապրիլի 10-ին բարերարի անսպասելի մահվան պատճառով. «Հայոց դպրոցների հոգաբարձութիւնը, խորապէս ցնցւած յայտնի հասարակական գործիչ և պետական ճշմարտութիւնների ժողովրդականացման ախոյեան բժ. Բուղուղեանի անսպասելի մահով, արտայայտում է իր անկեղծ ցաւակցութիւնը»[99]:

**Սբ. Սիոն (Սբ. Հակոբ) եկեղեցի.** հիմնադրվել է հավանաբար 1830-ական թվականների սկզբներին: Համենայն դեպս, արդեն 1837 թ. գոյություն ուներ Սբ. Հակոբ եկեղեցու շարժական գույքի ցուցակը, ըստ որի՝ այլ իրերի թվում եկեղեցում են պահվել ծիսական 5 գիրք (2 Շարական, 1 Ճաշոց, 1 Ժամագիրք, 1 Հայսմավուրք), ինչպես նաև 290 մխալ արժողության արծաթե իրեր և այլն[100]:

Միևնույն անվամբ եկեղեցին հիշվում է նաև 1839[101] և 1840 թվականներին[102]:

1841-1842 թվականներին հիշատակվում է որպես փայտաշեն կառույց[103]:

Սբ. Հակոբ անվամբ հիշվում է նաև 1846 թ.[104]:

Ի դեպ, 1854 թ. որպես բարի կամքի դրսևորում՝ տյուղյուրցի (Շավշեթ) Օսման Յուսուֆողլին Ծուղրութի եկեղեցուն էր վերադարձրել «...չորս հատ սբ. գրեանք, երկու զանգակք, մէկ արծաթեայ խաչ և մէկ բարձր շամատան»[105]:



**Ծուղրութ. Սբ. Սիոն եկեղեցու տեսքը արևելքից, հարավ-արևմուտքից և շինարարական արձանագրությունը (լուս.՝ 1988 թ.)**

---

97 «Մշակ», 1908, № 127: Հարկ է նշել, որ Ա. Բուղուղյանի միջոցներով գյուղի դպրոցում դասավանդել են նաև շերամապահություն և զամբյուղագործություն (**Փարսադանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 154):

98 «Հորիզոն», 1915, № 77, էջ 4:

99 «Հորիզոն», 1915, № 79, էջ 3:

100 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 134:

101 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 456, թ. 18: Տե՛ս նաև գ. 457, թ. 43:

102 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:

103 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67 և գ. 3805, թ. 76-77:

104 ՀԱԴ, ֆ. 56, ց. 4, գ. 1100, թ. 114:

105 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 306, թ. 21:



**Ծուղրութ. Սբ. Սիոն եկեղեցու հարավային ճակատից բացված միակ մուտքի փայտակերտ դուռը (լուս.՝ 1988 թ.) և հատակագիծը (չափ.՝ Ա. Յակոբյանի, 2007 թ.)**

Հետագա վավերագրերում և մասնավորապես 1858 թ. հիշվում է Սբ. Սիոն անվամբ, ուստի մինչ այդ իրականացվել էին վերակառուցման աշխատանքներ և ի հետևումն վերջինի՝ վերաօծում:

1863 թ. հիշվում է որպես փայտաշեն եկեղեցի[106]:

1875 թ. նշվել է. «...մի եկեղեցի Ս. Սիոն, արդէն հնացած և նեցուկների վրայ կանգնած...»[107]:

Ինչպես վկայում է եկեղեցու հարավային մուտքից վեր ցարդ պահպանված արձանագրությունը, եկեղեցու վերաշինությունը (հնի տեղում միանգամայն նոր շենք է կառուցվել) տեղի է ունեցել 1881 թ.:

Արձանագրություն. 4 տող.

*Շինեցաւ ս(ուր)բ Սիոն եկեղեցիս | ի 5-ն մայիսի 1881 ամի | սկսեալ եւ աւարտեալ | օգոստոսի նոյն ամի:*

*Հրատ.* առաջին անգամ:

1884 թ. վկայվել է. «...եկեղեցի հոյակապ, սրբատաշ քարով և քաղաշէն, որի գաւթում և մի ծխական դպրոց...»[108]:

1889 թ. հիշվում է «...մի նորաշէն եկեղեցի, մաքրուր քարից շինած՝ ս. Սիոն անունով...»[109]:

1916 թ. ստացագրով նորընտիր երեցփոխ Դիվինիսիոս Սապոնջյանցին է փոխանցվել Սբ. Սիոն եկեղեցու ունեցվածքը՝ բաղկացած 98 անուն զանազան իրերից: Դրանց մեջ առավել արժեքավորները գրքերն էին, որոնցից մեկը՝ մագաղաթե[110]:

Եկեղեցում պահվող մի խաչի հորիզոնական թևին՝ եռատող.

*Իշատակ | Ս. Սիօնին Խ. Էլիզիանից, | 1924:*

*Հրատ.* առաջին անգամ:

**Ծուղրութի Ավետարան.** գյուղում ցարդ պահվում է Հովհաննես գրչի ձեռքով 974 թ. ստեղծված 395 էջանոց մագաղաթյա մի Ավետարան, որը գրեթե անխտիր արժանացել է գյուղ այցելողների ուշադրությանը: Ձեռագրի գոյությանն ու նկարագրությանը նվիրված մեզ հայտնի գրավոր առաջին վկայություններից մեկը 1873 թ.-ից է. «Այստեղ կայ մի աւետարան, որ հանգուցեալ Կարապետ եպիսկոպոսը բերել է Կարնոյ մօտ Սպերու սուրբ Յովհաննէս վանքից միւս զարդերի հետ...»[111]: Մեկ այլ տեղեկություն էլ հավելում է, որ գաղթի ժամանակ այս ավետարանը Իլիջա գյուղից Ծուղրութ է հասցրել Անախաս Սապոնջյանը (ի դեպ, այս տոհմի հետագա ներկայացուցիչների մոտ էլ պահվում է առ այսօր)[112]:

1884 թ. վկայություններից մեկի համաձայն՝ ձեռագիրը պահվում է գյուղի Սբ. Սիոն եկեղեցում. «Եկեղեցումս կայ մի աւետարան գրչեայ երկաթագիր, մագաղաթի վերայ, գրուած հայոց ՆԻԳ թվին, որ ունի մեծ բազմութիւն ուխտաւորների»[113]:

1893 թ. նշվել է. «...ոչ միայն ջերմեռանդ ուխտաւորների, այլև հնագէտների ուշադրութիւնն է գրաւած: Հ. Ղևոնդ Ալիշանը մի քանի անգամ խնդրեց և ստացաւ յիշեալ հռչակաւոր Աւետարանի յիշատակարանի պատճէնները: Կոմսուհի Ուվարովան և այլք նոյնպէս լուսանկարներ են վերցրել նորանից»[114]:

106 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 60-61:
107 «Մեղու Հայաստանի», 1875, № 50, էջ 2:
108 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
109 «Նոր-Դար», 1889, № 83, էջ 2:
110 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 1340, թ. 6-7:
111 «Մեղու Հայաստանի», 1873, № 32, էջ 2:
112 «Հայրենիք», 2007, № 4, էջ 7:
113 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
114 «Արձագանք», 1893, № 23, էջ 2:



**Ծուղրութ. 974 թ. մագաղաթե Ավետարանի արծաթե կազմի զույգ երեսները**

Ավետարանի մասնագիտական, թեկուզ և համառոտ առաջին քննությունը ներկայացվել է 1898 թ.[115]:

1930 թ. Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալը փորձ է անում Ծուղրութի հռչակավոր Ավետարանը փոխադրել Էջմիածին. «Ձեզ մօտ գտնւում է մի ձեռագիր Ս. Աւետարան, որը մեր արժէքաւոր ձեռագիրներից մէկն է եւ նրա կորուստը եւ օտարանալը չափազանց մեծ վիշտ կը պատճառէ մեզ: Կորստեան վտանգից ազատելու միակ միջոցն է բերել Ս. Էջմիածին, ուր անկորուստ կը պահպանուի, որպէս աւանդ Ձեր անունով եւ ժամանակին, երբ Ձեր կողմից ցանկութիւն յայտնուի, դարձեալ հնարաւոր կը լինի վերադարձնել Ծուղրութ...»[116]:

Ավետարանը թանգարան փոխադրելու խնդրով մտահոգ՝ 1936 թ. գյուղ են այցելում նաև ազգագրագետ-բանահավաք Ստեփան Լիսիցյանի գլխավորած գիտարշավի մասնակիցները, սակայն նրանք էլ ենթարկվում են «...գյուղի կանանց դագանակներով և քարերով հարձակման վտանգին, որոնք զայրացած էին, իմանալով, որ եկած էի իրենց գյուղից 9-րդ դարի «հրաշագործ» Ավետարանը Երևանի թանգարանը տեղափոխելու համար»[117]:

Այժմ էլ գյուղում պահվող մագաղաթե Ավետարանի նկատմամբ ծուղրութցիները խորին ակնածանքով և երկյուղածությամբ են վերաբերվում, սակայն ակնհայտ է, որ ձեռագիրն արդեն վաղուց մանրէազերծման և հատուկ բուժման կարիք ունի[118]:

**Ծուղրութի Կարմիր Ավետարան.** դեռևս 1893 թ. գյուղաբնակի մոտ գտնվող ձեռագիրը եկեղեցի փոխադրելու ցանկության առնչությամբ նշվել է. «Նոյն գիւղի բնակիչ Խաչատուր Գէնօսեանի մօտ ևս գտնվում է մի մագաղաթեայ գրչագիր Աւետարան...: Յիշեալ գիւղացին կատարեալ ուխտատեղի է դարձրել իւր տունը այդ Աւետարանի պատճառով»[119]:

Ավետարանն առ այսօր էլ պահվում է Գինոսյանների տանը:

**Տպագիր Ճաշոց.** եկեղեցում պահվող տպագիր գրքերի թվում է 1686 թ. Վենետիկում լույս ընծայված «Ճաշոց գիրք գեղեցկատիպ եւ վայելուչ գաղափարեացել ՚ի մատենից հնոց թագաւորացն հայոց տպագրեցեալ ի հայրապետութեան սրբոյն աթոռոյն Էջմիածնի տն. Եղիազարու սրբազան կաթուղիկոսին, ներ տպարանում ճուղայեցի խօճայ Սահրատի որդի պարոն Գասպարին, եւ Թաթէոսի երիցու Երևանցւոյ Համազասպեան, ի թուականու-

115 **Յովսէփեան Գ.**, Ծղրութի հին աւետարանը, «Արարատ», 1898, էջ 519:

116 ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 2661, թ. 22:

117 ՀԱԴ, ֆ. 428, ց. 4, գ. 308: Տե՛ս նաև **Варданян Л.**, Степан Лисициан и истоки армянской этнографии, Ереван, 2005, с. 414.

118 **Վարդանյան Ա.**, Ո՞վ կփրկի հնօրյա ավետարանը, «Հայաստան», օրաթերթ, 1995, № 41 (218.936), 20 ապրիլի:

119 «Արձագանք», 1893, № 23, էջ 2:





**Ծուղրուք. Կարմիր Ավետարանի արծաթե կազմի զույգ երեսները**

թեան Արամեան ՌՃԼԵ, յամսեանն յունվարի ԺԵ, իսկ ի թուի փրկչին 1686, ի Վէնէտիկ»-ը:

Ճաշոցն ուշագրավ է ԺԸ-ԺԹ դարերի մի քանի ձեռագիր հիշատակարաններով.

*«Ես խարբերդցի տ(է)ր Մինասի որդի տ(է)ր Աբրահամս գրեցի: Գրեցաւ գիրս հայոց թ(վի)ն չորս ոբելեանըն ընդ հազարին (1200) հարցմունք... առնին և ոչ գտնին իմի (20) տարին ադաբ (8) գրին: Փառք աւիտեանս արարողին, Աբրահամ անուն էրէցին, 1193 (1779)»*[120]*:*

*«... | որդոյն՝ Ծառուկին, կողակցոյն՝ Եղսիկին... | կողացաքս՝ Անթառին եւ դըստերացն Եւային, Սա... | Համասիկ, տր Գրիգորին կողակցուն Մարգրիտին և ամ յ... | մեր նոցին կարդացողաց և լսողաց, որ զողացի ասէ... | թվին հ(այոց) ՌՄԾ (1801)-ին, որ ծախէ կամ...»:*

*«Այս ճաշոցին չորս տեղ յիշատակութիւն է գրած, | երկուսն կողին, մինն Համբարձման և միւսն Աւագ | Շաբաթին: | Որ էր պապական յիշատակութիւն որդւոց որդի... | յիշատակեալ ի ձեռն որդւոյն Ա(ստուծո)յ շնորհիւն... | որդւոց որդին չունին իրաւունք ծախելոյ կամ ... | որ իւր իսկականն է այս յիշատակութիւնը... | ընթռնուն և յիշէն հոգւոյ... | պապին իւրոյ տ(է)ր Գալուստ ք(ա)հ(ա)ն(ա)յին, որ ընծայեաց իւր... | տոհմից ժառանգաց, ի ծերաց և ի տղայոց անմոռաց... | յիշատակութիւնը, որ է յաւիտեան ամէն, | ١٨٢٠ (1820)»:*

*«Տէր Յ(իսու)ս ողորմեա ծառայիցն քոց տ(է)ր | Գալուստին, կողակցւոյն Խասիկին, որ|դւոցն Ծառուկին, կողակցւոյն՝ Էղ|սիկին, Աստուրին, կողակցւոյն՝ Անթա|ռին և դստերացն՝ Եւային, Սառային, | Համասին, տ(է)ր Գրիգորին, կողակցւոյն՝ | Մարգըրտին, Արզուին, Գրիգորին, կողակ|ցւոյն հանգուցեալ Աննային, Սառա|յին, որդւոցն Յօհաննէսին, Գրիգորին, Մա|րանին, Ծառօյին, Գալօյին: Ով սիրելի | ընթերցօղք միով հայրմերիւ յիշե|ցէք զվերոյ գրեալ անձինքն, որ և | յիշօղքդ և յիշեցեալքս գտցուք | ողորմութիւն ի միւսանգամ գալըս|տեան փրկչին և ա(մենա)յն մերոյ, | ամէն: Ուստի մի իշխեսցէ ոք | ծախել զս(ուր)բ մատեանս և որք | ներհակին այսմ գրոյս ծախելով | և կամ գրաւ տալով պատիժն | Յ(իսու)սն առցէ: | Գրեցաւ ի ՌՄՀԲ (1823) թուոջս և յունվ. ԺԵ (15):*

*«Ով որ այս գիրը կարդայ վասն ա(ստու)ծոյ խաթերն համար մէկ հայր մեղայ ասէ և այլ ասէ թէ տ(է)ր ա(ստուա)ծըն այս գիր գրօղիս վերջն բարի լինի և տ(է)ր ա(ստուա)ծըն արքայութենին արժանի արասցէ ասէ: Ա(ստուծո)յ եխպար և դուն էլ ամէն, որ իմ մեղայորիս յիշես և յիշեալ լինի Ք(րիստո)ս Յ(իսու)ս ի տ(է)ր մեր ամէն»:*

**Եկեղեցական իրեր.** հնասեր ծուղրութցիները, ավետարաններից զատ, իրենց տներում պահում են

120 Հիշատակարանում կիրառված է թվականի առեղծվածագիր տեսակը, այն է՝ «չորս ոբելեանըն ընդ հազարին» (4 x 50 = 200 + 1000 = 1200), «իմի»՝ (20, «Ի» տառի անվանումը), «ադաբ» (1 + 4 + 1 + 2 = 8), այսինքն՝ 1200 + 20 + 8 = 1228 + 551 = 1779 (վերծանությունը՝ Էմմա Աբրահամյանի):



**Ծուղրութ. Սբ. Յակոբ Մծբնա հայրապետի մասնատուփը և խաչվառ (լուս.՝ 1988 թ.)**





նաև եկեղեցական զանազան այլ իրեր՝ մասնատուփ, խաչվառ և այլն:

**Սրբատեղիներ.** Ծուղրութի մերձակայքում են գտնվում Սբ. Հակոբ, Սբ. Գևորգ, Սբ. Կարապետ, Սբ. Մարիամ Աստվածածին մատուռները[121]:

**Սբ. Հայր Հովսեփ մատուռ.** գտնվում է գյուղի հին գերեզմանոցում: Մեկ զույգ որմնասյուների վրա հենված քաղակիր կամարով, արևմուտքից բացված միակ մուտքով, կիսամշակ և անմշակ քարով կառուցված (արտաքին չափերը՝ 5,14 x 3,66 մ) միանավ շինություն է: 1873 թ. նշվել է. «...հայոց գերեզմանատան հին մատուռի սեղանը բարձր է և ձախակողմեան պատի մէջ կայ ընծայարան և աւազան...»[122]:

**Քահանա.** *Ստեփան քահանա Տեր-Նահապետյանը* (ծնվ. 1783 թ.). «Ուսեալ է ուսումնարանի Իլիջէ գեղջ, նահանգին Կարնայ զիասարակ ընթերցումն...»[123]: Քահանա է ձեռնադրվել 1826 թ. Կարնո Սբ. Աստվածածին եկեղեցում և մինչև 1830-ի գաղթը ծառայել է հայրենի գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցում, իսկ գաղթից հետո՝ Ծուղրութի «...ի գիւղն Իլիջէ, ի Սբ. Աստուածածնի եկեղեցւոջ և այժմ ծառայէ յԱխալցխայ քաղաքի Ծուղրութ գեղջ Սբ. Յակոբայ եկեղեցւոջ»[124]: 1839 թ. Տեր Ստեփանը տակավին Ծուղրութի ծխատեր քահանան էր[125]:

121 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 183:
122 «Մեղու Հայաստանի», 1873, № 32, էջ 2:
123 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 456, թ. 18:
124 Նույն տեղում:
125 Նույն տեղում:










Ծուղրութ. Սբ. Գևորգ մատուռի շուրջ տարածված գերեզմանոցը, մատուռի մնացորդներն ու հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի) և տապանաքարի բեկոր գերեզմանոցից, ԺԷ-ԺԸ դդ.



Ծուղրութ. Սբ. Հայր Հովսեփ գերեզմանատան մատուռը (լուս.՝ 1988 թ.)

1851 թ. մարտի 24-ին Ծուղրութի համար քահանա է ձեռնադրվել *Մկրտիչ Տեր-Սարգսյանցը*[126]: 1876 թ. Մկրտիչ Տեր-Սարգսյանցը հոգում էր նաև հարևան Ծիրա գյուղի բնակիչների հոգևոր պահանջները: Նույն թվականին հիշվում է դպիր Հովհաննես Ալեքսանյանը[127]:

Հակառակ համեմատաբար բազմամարդ գյուղ լինելու հանգամանքի՝ Ծուղրութն էլ երբեմն համալրել է քահանայազուրկ գյուղերի շարքը: Այդպես էր 1894 թ., երբ արդեն երկրորդ տարին էր, ինչ գյուղն ապրում էր առանց քահանայի[128]:

1904-1909 թվականների համար վավերագրերը Ծուղրութում քահանա են հիշում *Վարդան Հովհաննիսյան Վարդանյանցին*[129] (ծնվ. 1861 թ., ձեռն. 1896-ի ապրիլի 2-ին)[130]:

1912 թ. մայիսին բնակիչները բողոքագիր են ներկայացնում իրենց բազմամարդ գյուղն ու հարևան Ծիրան արդեն 7 ամիս առանց քահանայի թողնելու և դրա հետևանքով եկեղեցին փակելու փաստի առթիվ[131]: Երկար որոնումներից հետո ծուղրութցիները վերջապես գտնում են քահանա ձեռնադրելու համար միանգամից երկու հարմար թեկնածուների՝ Եղիշե Տեր-Հակոբյանին և Գևորգ Բարսեղյանին, որոնցից ի վերջո ընտրվում է առաջինը[132]:

126 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 2658, թ. 4:
127 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 15:
128 «Նոր-Դար», 1894, № 97, էջ 2:
129 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 795, թ. 66: Տե՛ս նաև “Кавказский календарь на 1909 г.”, с. 208.
130 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 172: Տե՛ս նաև ֆ. 53, ց. 1, գ. 795, թ. 30: Մեկ այլ տվյալով՝ ծնվել է 1862 թ. (ֆ. 53, ց. 1, գ. 795, թ. 66):
131 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 845, թ. 9:
132 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 845, թ. 1, 26:



**Ծուղրութ. Սբ. Հայր Հովսեփ գերեզմանատան մատուռի տեսքը հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից, հարավային և արևմտյան ճակատներից բացված լուսամուտները (լուս.՝ 1988 թ.)**




**Ծուղրութ. Սբ. Հայր Հովսեփ գերեզմանատան մատուռի հատակագիծը**

1917 թ. ծխատեր քահանա է հիշվում *Եղիշե Տեր-Հակոբյանը*[133]:

**Աղբյուր.** գտնվում է գյուղամիջում: Հայտնի է Մեղրաջուր անվամբ:

Արձանագրություն. 4 տող.

*Շինեցաւ աղբիւրս / արդեամբ եւ ջանիւք Մկրտ/չի Չախոյեանցի ի յիշատակ իւր / վաղամեռիկ որդի Տիգրանայ Չախո/եանցի, որք արբցէ ի ջրոյս յասմանէ / ողորմի կարդասցէ յիշեալ Տիգրանա / արդիոյն(՞), 1909 թ.:*

*Հրատ.* առաջին անգամ:

133 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 1340, թ. 13:



**Ծուղրութ. Երկրորդ աշխարհամարտում զոհված ծուղրուքցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը**

**Գերեզմանոց.** 1873 թ. նշվել է. «Գիւղից քիչ հեռու տափարակ բլրակի վերայ կայ գերեզմանատուն և քանի մի ժողոված քարեր, որոնցից մէկի վերա քանդակուած է սուրբ Գէորգի պատկերը, որին նոյնպէս դիմում են...»[134]:

**Քարհանք.** 1875 թ. նշվել է. «Գիւղից քառորդ ժամ հեռաւորութեամբ դէպի հիւսիս կայ մի պատուական արքունական քարահանք...»[135]:

**Անվանի ծուղրուքցիներ.** *Ղաֆադարյան Կարո* (20.4.1907, Ախալցխա - 21.12.1976, Երևան). հնագետ, վիմագրագետ, բանասեր: Հեղինակել է «Հայկական գրի սկզբնական տեսակները» (1939), «Հովհաննավանքը և նրա արձանագրությունները» (1948), «Դվին քաղաքը և նրա պեղումները» (h. 1՝ 1952, h. 2՝ 1982), «Սանահինի վանքը և նրա արձանագրությունները» (1957) և այլ աշխատություններ:

*Տեր-Մկրտչյան Գալուստ* (9.4.1860, Ծուղրութ - 3.7.1918, Էջմիածին). հայագետ, պատմաբան, թարգմանիչ, աղբյուրագետ: 1878-1881 թվականներին դասավանդել է Շամախու և Ախալցխայի դպրոցներում: Հեղինակել է «Հայ մատենագրության թվականները» (1913), «Ուրարտյան բևեռագրերի լեզուն» (1893) և այլ աշխատություններ, հայտնաբերել ու հրատարակել Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան» (1904), Անանիա Նարեկացու «Գիր խոստովանութեան» (1892), «Անանիա Շիրակացի» (1896) բնագրերը և այլն:

134 «Մեղու Հայաստանի», 1873, № 32, էջ 2:
135 «Մեղու Հայաստանի», 1875, № 50, էջ 2:

# ՂՈՒԼԱԼԻՍ



**Ղուլալիս. ընդհանուր տեսքը (լուս.՝ 2007 թ.)**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 5,5 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1200-1250 մ բարձրությամբ մեղմաթեք լեռնալանջին:

**Բնակչություն.** ներկայիս բնակիչների նախնիները (Պետրոսյան և Քրդյան ընտանիքներ) 1830 թ. փոխադրվել են Կարինի Հինձք[1] գյուղից:

*Վիճակագրություն.* առկա տվյալները ցույց են տալիս, որ 1860-ական թվականներից ի վեր Ղուլալիսում արձանագրվել է բնակչության անընդմեջ աճ, և միայն վերջին տասնամյակում ծայր առած արտագաղթի հետևանքով ի հայտ է եկել նվազման միտում.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1867[2] | 1 | 6 | 6 | 12 |
| 1868[3] | 1 | 6 | 6 | 12 |
| 1869[4] | 1 | 7 | 5 | 12 |
| 1870[5] | 1 | 8 | 7 | 15 |
| 1885[6] | 1 | | | |
| 1891[7] | 3 | | | |
| 1906[8] | | 14 | 10 | 24 |
| 1907[9] | | | | 24 |
| 1908[10] | 2 | 14 | 10 | 24 |
| 1913[11] | 9 | 41 | 34 | 75 |
| 1915[12] | | | | 75 |
| 1916[13] | | 48 | 36 | 84 |
| 1983[14] | 69 | | | 253 |

1 **Քոսեան Յ.,** նշվ. աշխ., հ. Բ, էջ 100: Հինձք գյուղի տեղադրությունը տե՛ս սույն աշխ., էջ 212, № 9 ծանոթ.:
2 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3851, թ. 19, 24:
3 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3853, թ. 27:
4 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3856, թ. 36-37:
5 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 85-86:
6 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
7 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., էջ 325: Ի դեպ, 3 տնից մեկը հայ առաքելական էր, իսկ 2-ը՝ հայ կաթողիկե:
8 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 42:
9 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
10 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 39:
11 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:
12 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 80:
13 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 30-31 (վավերագրում ցույց է տրված միայն հայ կաթողիկեների թվաքանակը):
14 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 231:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2006[15] | | | | 163 |
| 2007[16] | 50 | 87 | 92 | 179 |

**Երկրորդ աշխարհամարտ.** գյուղաբնակներից մասնակցել է 28 հոգի, որից 11-ը զոհվել է[17]:

**Ջրամատակարարում.** 1955 թ. Սերգո Քոչյանի նախաձեռնությամբ և գյուղացիների ուժերով Ծնպուռ տեղամասից երկաթե ու չուգունե խողովակներով ջուր է հասցվել գյուղ[18]:

2002 թ.-ին էլ Դուլալիս ջուր է հասցվել Մարտուն և Մաքենս Պետրոսյան եղբայրների նախաձեռնությամբ Օրալ գյուղից վեր գտնվող Վերին Ծակ քար կոչվող տեղամասից[19]:

**Դպրոց.** գյուղում առաջին անգամ հայկական դպրոց (տարրական) բացվել է 1935 թ.: 1978 թ. նույն դպրոցն ուներ 19 աշակերտ և 4 ուսուցիչ[20]:

1994/1995 ուստարում քառամյա դպրոցն ուներ 3 ուսուցիչ և 18 աշակերտ[21]:

**Սբ. Խաչ եկեղեցի.** 1916 թ. սակավաբնակ գյուղը զուրկ էր եկեղեցուց, և հայ կաթողիկեները «աստուածային պաշտամունք կը կատարուին առանձնական տան մէջ»[22]:

Տակավին 1994 թ. դուլալիսցի հայ կաթոլիկները չունեին եկեղեցի և որպես աղոթարան՝ օգտագործում էին գյուղի կենտրոնում՝ Տիգրան Քոչյանի տանը կից գտնվող առանձին շինությունը: 1990-ական թվականների սկզբին Էմմանուել վարդապետ Տապպաղյանի նախաձեռնությամբ դուլալիսցիների շրջանում անցկացվում է հանգանակություն, որի շնորհիվ 1994 թ. գարնանը սկսված եկեղեցու շինարարական աշխատանքներն ավարտվում են 1995 թ. ապրիլին[23]:

Համակ սրբատաշ քարերով կառուցված, ուղղանկյուն հատակագծով պարզ շենք է, որը կառուցելիս տարօրինակ կերպով կարևորվել է տեղանքի հարմարությունը, այլ ոչ ավանդական կարգը, այն է՝ երկայնական առանցքում ունենալ արևելք-արևմուտք ուղղությունը: Արդյունքում խորանը հայտնվել է ոչ թե արևելքում, ինչպես մեր բոլոր եկեղեցիներում, այլ հյուսիս-արևմուտքում, իսկ մուտքի առջև՝ եկեղեցուն կից եռահարկ զանգակատունը հայտնվել է կառույցի հարավ-արևելքում:

Նորաշեն եկեղեցու ճակատին ագուցվել է շինարարության մանրամասները ներկայացնող սույն արձանագրությունը.

*Վերակառուցաւ այս հայ կաթողիկէ Ս. Խաչ փոքր եկեղե/ցին 1994-1995. ժողովրդապետ հայր*







**Դուլալիս. Սբ. Խաչ եկեղեցու տեսքը հարավ-արևելքից, շինարարական արձանագրությունը (լուս.՝ 2007 թ.) և հատակագիծը (չափ.՝ Ա. Յակոբյանի)**

15 Ըստ գյուղապետարանի տվյալների:
16 Ըստ գյուղապետարանի լիազորված անձ Կառլեն Հովհաննեսի Կարախանյանի:
17 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 160-161:
18 Նշվ. աշխ., էջ 159:
19 Ըստ գյուղապետարանի տվյալների:
20 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 231:
21 **Մաքենսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 124:
22 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիս, 1916, էջ 80:
23 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 165-167:

*Էմմանուէլ / վ. Տապպաղեանի նախաձեռնութեամբ: Օծաւ 19.3.1996-ին / ձեռամբ արհ. տէր Ներսէս արքեպիսկոպոս Տէր Ներսէ/սեանի, վիճակաւոր եւ առաջնորդ հայ կաթողիկէ / համայնքի (ի Հայաստան եւ ի Վրաստան): Ծախսից օժան/դակ եղեն գեր. Գրիգոր եպս. Ղապրոյեան, Թորոն/թոյի եկեղեցին եւ զանազան բարերարք: Վարպետ / կառուցող եւ օգնականք եղեն Պետրոսեան Տիգրան / եւ Մարտին եւ Քրղեան Մկրտիչ, Ս. Մովսէս, Ար. / Մկրտիչ Պ., եւ Լեւոն Մ., եւ Մարտին Մ., եւ Գրիգոր / Լ.:*

*Հրատ.* առաջին անգամ:

**Մատուռ.** դուլալիսցի հայ առաքելականներն էլ իրենց հոգևոր կարիքները հոգալու համար հաճախում էին Փոքր Պամաճի և Սազելի եկեղեցիները: Սույն բացը լրացնելու մտահոգությամբ 2000 թ. հա-






**Դուլալիս. նորաշեն մատուռ-աղոթատուն (լուս.՝ 2007 թ.)**







**Դուլալիս. հատված գերեզմանոցից և մի քանի տապանաքար (լուս.՝ 2007 թ.)**

մագյուղացի Ռ. Հարությունյանի հովանավորությամբ գյուղում կառուցվում է մի մատուռ:

Մատուռ. արևմտյան ճակատին ագուցված սալիկին արձանագրված է.

*Այս մատուռ-աղոթարանը | կառուցվել է Ղուլալիս | գյուղի ծնունդ Ռոբերտ | Անդրանիկի | Հարությունյանի | բարերարությամբ | 08.08.2000 թ.:*

*Հրատ.* առաջին անգամ:

**Ձեռագիր.** Պետրոս Պետրոսյանը Հինձքից բերել է կաշվե կազմով և թանկարժեք քարերով զարդարված մի ձեռագիր Ավետարան, որն առ այսօր որպես սրբություն՝ պահվում է նույն գերդաստանի ժառանգների տանը[24]:

**Քահանա.** 1904 թ. Ղուլալիսում քահանայագործում էր *Բարդուղիմեոս Տեր-Հովհաննիսյան Տեր-Նահապետյանցը*, որը պաշտոնավարում էր նաև Սազել և Օրալ գյուղերում[25]:

1915-1916 թվականներին գյուղը կառավարել է *Սիմեոն քահանա Ղևոնդյանը*[26]:

1994-2003 թվականներին գյուղին հովվում էր *Էմմանուել վարդապետ Տապպաղյանը*, որը պատարագ էր մատուցում նաև Աբաթխև, Սուխլիս, Ծինուբան և Նաոխրեբ գյուղերում:

Ներկայումս Ղուլալիսի ժողովրդապետն է տեր Պողոս Գրիգորյանը, որը հովվում է նաև Աբաթխև, Ծինուբան և Նաոխրեբ գյուղերին:

**Գերեզմանոց.** գտնվում է գյուղամիջում: Պահպանված տապանաքարերից հները վերաբերում են ԺԹ դարի առաջին կեսին և իրենցից ներկայացնում են անմշակ սալատապաններ: Ուղղանկյունաձև են մշակված, արձանագիր են նաև ԺԹ դարի երկրորդ կեսի որոշ տապանաքարեր:

Տապանաքար.

*Ահա այս է շիր|իմս ք(րիստո)սադաւան | հայազգի Պետրո|ս Յօհաննէսե(ա)ն | բազմաջան իւր | ... որ հանգեաւ... | տապանի 1864 ամի:*

*Հրատ.* առաջին անգամ:

Տապանաքար.

*Այս է տապան հանգճի մարմին | Կարապետ Պետրոսեան եւ ծէն(աւ) ամի 1845, | որ վաղճանաւ ի 5.11.1874, հանտիպօղացն | խնդրեմ ասի ողորմի:*

*Հրատ.* առաջին անգամ:

**Ամրոց.** ավերակները պահպանվել են գյուղամիջում՝ Բոլբոլա բլրի վրա: Ունի 25 մ երկարություն և 20 մ լայնություն, գաղտնուղի: 1950-ական թվականների սկզբին մերձակա գյուղերի բնակիչները շարվածքի քարերի մեծ մասն օգտագործել են որպես շինանյութ: Քանդվել է նաև 1954 թ.՝ Փոքր Պամաճում գյուղխորհրդի գրասենյակ կառուցելու նպատակով: Հայտնաբերվել են բազմաթիվ կարասներ, կճուճներ, սափորներ և այլն[27]:



**Ղուլալիս. ամրոց (լուս.՝ 2007 թ.)**

Առավելապես պահպանվել են երեսապատի քարերից մերկացած կրաշաղախ ամրակուռ պատերի կմախքացած հատվածները մինչև 3 մ բարձրությամբ:

24 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 158:
25 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 795, թ. 66:
26 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիս, 1916, էջ 80:
27 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 159:

# ԴՈՒՐԱԹՈՒՄԱՆ



**Դուրաթումանը. ընդհանուր տեսքը (լուս.՝ 2007 թ.)**

**Տեղադրությունը.** գտնվում է Ախալցխայից 9 կմ հյուսիս-արևմուտք՝ Ծուղրութից 4 կմ հյուսիս, ծովի մակերևույթից 1450 մ միջին բարձրության վրա:

**Բնակչությունը.** մինչև 1944 թ. թրքաբնակ, այնուհետև վրացաբնակ սակավամարդ գյուղ է:

**Սրբատեղի. Մայր եկեղեցի.** գտնվում է գյուղից շուրջ 300 մ հյուսիս-արևմուտք: Առաջին անգամ հիշվում է 1895 թ. «Ծուղրուտից փոքր ինչ հեռու դէպի հիւսիս, անտառի կողքին գտնվում է և «Մայր եկեղեցի» կոչուած մատուռը, որ այժմ քայքայուած է և աւերակ: Մատուռի մէջ ի միջի այլոց գտնվում է մի հրաշակերտ քանդակագործուած խաչաքար, որի վրայ եղած զուտ հայկական արձանագրութիւնից երևում է, որ մատուռը շինուած է 10-րդ դարում ըստ հայկական տոմարի: Այս արձանագրութիւնը դեռ ամբողջապէս կարդացուած չէ, որովհետև մի մասը թաղուած է հողի մէջ»[1]:

Նույն հնավայրի և մասնավորապես տեղում պահպանված արձանագիր խաչքարի գոյության մասին գրավոր հաջորդ վկայությունը տրվել է միայն ավելի քան մեկ դար անց. «Դուրաթումանին շատ մոտ հյուսիսային մի բլրակի վրա՝ անտառից ներքև, գտնվում է Մայր եկեղեցի կոչվող սրբավայրը, որը Վարդավառի տոնին հնուց ի վեր ամեն տարի լեփ-լեցուն է լինում հայ ուխտավորներով: Թե ինչու է ուխտատեղին Մայր եկեղեցի կոչվել, հայտնի չէ: Դարեր ի վեր խոսք չի եղել, թե որ ազգի ու դավանանքի կառույց է այն: Մուտքը արևմուտքից է, ունի մոտ երեք մետր լայնություն, չորս մետր երկարություն: Բացօդյա է: Մուտքի դիմացի պատին՝ քարե փոքրիկ լուսամուտի տակ՝ ուղղակի գետնի մեջ է գտնվում մի մեծ քար: ...փորեցինք խցի հատակը և մի խաչքար գտանք, վրան հայերեն տառեր: Տառերը պարզ կարդացվում են, բայց բառ կազմելը անհնար է, առանց ծածկագրերի նշանա-

1 «Արձագանք», 1895, № 100, էջ 2:












**Ղուրաթուման. Մայր եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից, հարավ-արևելքից, ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ 2007 թ.) և հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի)**

կությունը հասկանալու: Միայն կարողացանք պարզել ՋԻԷ 927 (1478) թիւ»[2]:

2007 թ. հունիսին մենք ևս առիթ ունեցանք տեսնել համեմատաբար փոքր չափերի (6,10 x 4,12 մ) միանավ հորինվածքով Մայր կոչված եկեղեցին: Ծածկը մասամբ կանգուն էր մնացել սոսկ խորանի վրա: Առավել քայքայված դրության մեջ էր արևմտյան ճակատը: Այդ կողմից էր բացված եկեղեցու միակ մուտքը: Դեպի ներս լայնացող պահպանված միակ լուսամուտը բացված է արևելյան ճակատից: Խորանի մեջ՝ հյուսիսային կողմում միակ

2 **Վարդանյան Ա.**, Խաչքարը շարունակում է սպասել..., «Գիտություն», 1996, № 2 (65), էջ 3:






**Ղուրաթումաճ. Մայր եկեղեցու խորաճի մեջ ագուցված 1476 թ. խաչքարը և գրչաճկարը**



**Ղուրաթումաճ. Մայր եկեղեցու խորաճի մեջ ագուցված խաչքարի թվակիր հատվածը**

խորհրդարանն է: Երկթեք ծածկի տակ առնված երբեմնի տանիքը կանգնած է եղել մեկ զույգ որմնասյուներին խարսխված թաղակիր կամարի վրա: Կառուցված է կոփածո և սրբատաշ քարով: Խորանի մեջ՝ լուսամուտի տակ, ագուցված է գեղաքանդակ, արձանագիր և միանգամայն ամբողջական մի խաչքար (91 x 77 սմ)՝ հարդարված ոճավորված հիմնախաչով և զանազան չափերի ևս 12 խաչաքանդակներով, ինչպես նաև խաղողի ողկույզներով: Տարեթիվն արձանագրված է երկտող: Տառերը զբաղեցնում են քանդակներից ազատ մնացած սեղմ մակերեսները.

*Թվ(ին) / ՋԻԵ (1476) ...:*

*Հրատ.* առաջին անգամ:

# ԾԻԽԵԼ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխա քաղաքից 10 կմ հյուսիս-արևմուտք՝ Փոցխով գետի ձախ ափից 3 կմ հյուսիս, ծովի մակերևույթից 1300 մ միջին բարձրության վրա:

**Պատմություն.** Ծիխելն արդեն միջնադարում գոյություն ունեցած գավառի հայաբնակ գյուղերից մեկն էր:

1481 թ. գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցում ոմն Խաչատուր երեց Ձոլդու Սբ. Աստվածածին վանքի (հավանաբար գավառի հայոց վանքերից մեկն էր) վանահոր պատվերով հեղինակել է գանձարան. «...ի գիւղս որ կոչի Ծիխէլ, ընդ հովանեաւ Ծիրանաւոր Աստուածածնիս, հրամանաւ և ծախիւք սրբասէր և գերալուր անձին Անտոն կրաւնաւորի, որ է հայր վանաց Ձոլդու Աստուածածնին...»[1]:

Ըստ ավանդույթի՝ գյուղի հայ բնակչությունը Սամցխեի քրիստոնյա բնակչության մի նշանակալի մասի հետ մեկտեղ բռնի մահմեդականություն է ընդունել ԺԷ դարի ընթացքում: Համենայն դեպս, 1914 թ. Ծիխելն ուներ 182 մահմեդական բնակիչ[2]: 1944 թ. ծիխելցիները տեղահանվել և աքսորվել են: Դրանից հետո և ցարդ հնամենի գյուղն իրենից ներկայացնում է ամայի գյուղատեղի:

1 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. հոդվ., «Բանբեր Մատենադարանի», հ. 4, էջ 390: Տե՛ս նաև ԺԵԳ, էջ 16: Ցուցակ ձեռագրաց, հ. Բ, էջ 1055-1056:

2 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 64, թ. 7:

# ՃԼՎԱՆ

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից 19 կմ հարավ-արևմուտք՝ Կուրի աջ ափից (նույն ժամանակ Վրաստան-Թուրքիա պետական սահմանից) շուրջ 2,5 կմ հեռու՝ ներկայիս Թուրքիայի Փոսոֆի (Փոցխով) շրջանում, ծովի մակերևույթից 1520-1560 մ բարձրության վրա: Պաշտոնապես վերանվանվել է Էմինբեյ:

**Պատմություն.** 1833 թ. մի վավերագիր պարզում է, որ Ճլվանում հաստատված հայերն անելանելի կացության մեջ են հայտնվել. «Ճըլվանայ բնակեալ գաղթական հայ ժողովուրդքս» խնդրիք էին ղել հետևյալի մասին. «Ինչ ատեն սամանցուց յերկրէն եկանք 'ի հովանաւորութիւն ամէնողորմած տէրութեան կայսերն ամենայն Ռուսաց յերկիրս այս, այն ժամանակին տեղըս եղած կամիտէտը հրաման տըւաւ մեզ գնալ և մնալ 'ի Ճըլվանայ գիւղն. ըսելով թէ Ճըլվանայ ղըռալըղ է և Մուրի բէկն ևս մեզ խոստցաւ թէ՝ եկէք յայս գեղը խարապաներն շինեցէք ձեզ համար տուն և շատ ցանքի տեղեր կայ՝ ձեզի համար արտ քշեցէք հասըլ արէք, գեղը ղռալըղ է, ես ալ թագաւորին յրայեան եմ. տեսանք որ թէ կամիտէտին և թէ Մուրի բէկին խօսքերն երկուքն մէկ է՝ և իրաւ է ըսածնին անոր համար գնացինք խարապաներն տուն շինեցինք և եկեղեցի չըկար՝ եկեղեցի ևս շինել տըվինք. շատ ժամանակ՝ մնացած խամ կօռթերն քակեցինք մեծ աշխատանք քաշելով հասըլ արինք և արտ շինեցինք, գիտնալով թէ՝ ըսած խօսքերնուն մէջ սուտ չըկայ և մեք միշտ հանապազ այն գեղըն պիտիր մնամք, անոր համար աւելի աշխատանքներ քաշեցինք օգնականութեամբ և մեծ ողորմութեամբ հզօր տէրութեան: Իսկ այժմ Մուրի բէկն այն տված խօսքին վրայ չը մնալով մեզի նեղութիւն տայ և ասէ, թէ անպատչառ յիմ գիւղէս պարտիք ելնալ և գընալ յայլ գեղ, չեմ ընդուներ զձեզ մնալ յիմ գիւղիս մէջ:

Ով բարերար մեր, մեք որքան խօսեցաք չը լսեց մեզ և մեք որքան որ կարողութիւն ունէինք, եթէ աղքատներս և եթէ կարողութիւն ունեցողներս հզօր թագաւորին մերոյ ողորմութիւն անելովն աշխատեցաք և խարապան գեղ շինեցինք և պայծառացուցինք եկեղեցիով, տանց և բնակութեանց շինութեամբն և շատ ժամանակէ մնացած կոռթերն հասըլ արինք, թէ այսուհետև հանգիստ պիտիր գըտնեմք:

Արդ, որ այսպէս մեզ վտանգ հասուցանէ և հանէ 'ի գիւղէն յաղքատներս բնաւ ամենևին կարողութենէ ընկած են և կարողութիւն ունեցօղներս աղքատացեր եմք նոր 'ի նորոյ աշխատիլ յայլ տեղ և այնպէս շինութիւն ընելու ոչ ժամանակ ունեմք և ոչ կարողութիւն, եթէ զմեզ յայն գիւղէն հանէ մեք ամենեքեանքս մեռած կը լինիմք. յայլազգեաց ձեռքըն բնական շատ նեղութիւն քաշած մարդիք եմք, եկած եմք ի խնամս հզօր տէրութեան ամենայն Ռուսաց, այստեղս նոյն ցաւն մեզ կրել տալն չէ վայել ամենևին:

Խնդրեմք աղերսիւ, որ քաղցր ակնարկութիւն ձեր բարերար մեծութիւն 'ի վերայ մեր պահելով հրաման անէք յիշեալ Մուրի բէկին, որ յայսպիսի վտանգաւոր և նեղացուցիչ խորհուրդներն մոռնայ և ինչպէս որ յառաջմանէ խօսք տըւաւ և տարաւ գիւղն, նոյնպէս մնալոյ մեզ անդ և շահելոյ առանց վնասու ջանայ 'ի պատիւ ամէնողորմած կայսէր անուանն ամենայն Ռուսաց և հզօր թագաւորին մերոյ, որ մեք մնամք Ձեր Մեծութեան պահպանութեան սպասօղ»[1]:

Ճլվանաբնակ հայերի մասին այլ տեղեկություններ հայտնի չեն:

1 Մատենադարան, թղթ. 163 ե, վավ. 123:

# ՄԻՔԵԼԾՄԻՆԴԱ (ՄՈՒՔԵԼԾՄԻՆԴԱ)

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից 6 կմ հյուսիս-արևմուտք՝ Ծուղրութ և Ծիրա գյուղերի միջակայքում՝ կից Ծիրա գյուղին արևմուտքից, ծովի մակերևույթից 1200-1240 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** վրացաբնակ գյուղում ԺԹ դարի կեսերին (1850[1] և 1851[2] թթ.) բնակվել են նաև 2 հայ ընտանիքներ:

**Քահանա.** 1851 թ. սակավահայ գյուղի հայերին հովվում էր Ածղորի քահանան[3]: Ի դեպ, 1850 թ. քահանա ձեռնադրվելու ցանկություն է ունեցել մուքելծմինդացի *Վարդան Գալստյանը*[4]:

1 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2411, թ. 4:
2 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2658, թ. 10:
3 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2658, թ. 10:
4 ՀԱԳ, ֆ. 56, ց. 1, գ. 2411, թ. 4:

# ՆԱՌԽՐԵԲ (ՄՈԽՐԵԲ)



**Նառխրեբ. ընդհանուր տեսքը հարավից (լուս.՝ 2007 թ.)**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 11 կմ հարավ-արևմուտք՝ մեղմ թեքությամբ արևմտահայաց սարահարթին, ծովի մակերևույթից 1130-1240 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** «Մօխրէպի բնակիչք Կամպերցի եւ Ղարագիւղցի են, եւ ամբողջը Կթղ. Հայ...»[1]:

Ավանդաբար վկայվել է, որ գյուղի ներկայիս բնակիչների նախնիները փոխադրվել են Կարինի Արծաթի[2], Կամպիր[3], Ղարակեպակ[4] և Հինձք[5] գյուղերից[6]:

**Ազգատոհմեր.** հայտնի է, որ Պապոյենք կամպիրցիներ են, Փիլոսենք, Ղազարենք և Մելքոնենք՝ արծաթցիներ, Ղևոնենք՝ ղարակեպակցիներ, իսկ Նազարեթենք և Փաշենք՝ հինձքցիներ[7]:

*Վիճակագրություն.* գյուղի բնակչության թվաքանակն արտացոլող սուղ տվյալների համադրումն ըստ ժամանակագրության ներկայացնում է հետևյալ պատկերը.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1884[8] | | | | 251 |
| 1901[9] | 53 | | | |
| 1908[10] | | | | 409 |
| 1913[11] | 65 | 242 | 228 | 470 |

1 **Քօսեան Յ.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 83:

2 Տե՛ս սույն աշխ., էջ 201, № 4 ծանոթագրությունը:

3 Տե՛ս սույն աշխ., էջ 201, № 5 ծանոթագրությունը:

4 Տե՛ս սույն աշխ., էջ 202, № 7 ծանոթագրությունը:

5 Տե՛ս սույն աշխ., էջ 212, № 9 ծանոթագրությունը:

6 **Քօսեան Յ.**, նշվ. աշխ., h. Բ, էջ 100: Տե՛ս նաև **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 131: **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 150: Հրատարակչի մոտ՝ Կամպիրը՝ Կամպոտա, Հինձքը՝ Հնձուկ:

7 Ըստ Խորեն Ղազարյանի և մեծահասակների վկայության: Տե՛ս նաև **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 150:

8 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

9 **Քօսեան Յ.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 83:

10 “Кавказский календарь на 1910 г.”, с. 333.

11 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1914[12] | | | | 445 |
| 1915[13] | | | | 485 |
| 1916[14] | 70 | 279 | 246 | 525 |
| 1983[15] | 292 | | | 1030 |
| 1989[16] | 299 | | | 982 |
| 1991[17] | | | | 967 |
| 1994[18] | 296 | | | 961 |
| 2006[19] | 300 | | | 900 |
| 2007[20] | 270 | 361 | 282 | 643 |

Որոշ ժամանակ հայտնի էր նաև ուսուցիչ Հովհաննես քահանայի անունով Հովհաննեսի դպրոց[23]:

1901 թ. գործել է «...երկսեռ մանկտւոյն վարժարան մը ծմրան եղանակին համար...»[24]:

1913 թ. գործել է 1 ուսուցչով և 42 աշակերտով (18-ը աղջիկ)[25]:

1916 թ. գործել է 30 աշակերտով (միայն տղաներ)[26]:



**Նառխրեք. Այվազյան-Յովսեփյան ազգի տոհմածառը (կազմողներ՝ Յմայակ և Սոֆյա Յովսեփյաններ)**

**Երկրորդ աշխարհամարտ.** գյուղաբնակներից զոհվել է 54 հոգի[21]:

**Դպրոց.** բացվել է 1838 թ. եկեղեցուն կից. առաջին ուսուցիչներն էին տեր Սահակն ու Պապոյենց տեր Մովսեսը[22]:

1928 թ. գյուղում բացվել է տարրական դպրոց: Այնուհետև աշակերտներն ուսումը շարունակել են կա՛մ Ծղալթբիլայի կա՛մ էլ Վալեի միջնակարգ դպրոցներում:

1953 թ. կառուցվել է գյուղի դպրոցի նոր շենքը: 1954 թ. սկսել է գործել որպես յոթնամյա[27]: Դպրոցի երկհարկանի նոր շենքի կառուցման հետևանքով 1988 թ.-ից ուսուցումը դարձել է տասնամյա:

1989/1990 ուստարում դպրոցի առաջին դասարանն ուներ 20 աշակերտ:

12 "Кавказский календарь на 1915 г.", с. 165.
13 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 79:
14 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 30-31:
15 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 181:
16 Գյուղխորհրդից առնված տվյալները մեզ է փոխանցել ծղալթբիլեցի Մելիք Սկրտչի Մոսիկյանը:
17 Ըստ գյուղապետարանի տվյալների:
18 Ըստ գյուղապետարանի տվյալների:
19 Ըստ գյուղապետարանի տվյալների:
20 Ըստ գյուղապետարանի լիազորված անձ Պետրոս Միսակի Վարդանյանի:
21 Ըստ տեղացիների վկայության: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ զոհվել է 41 նառխրեքցի (**Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 154-155):
22 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 152:
23 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 180-181:
24 **Քոսեան Յ.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 83:
25 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:
26 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 30-31:
27 **Մաքևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 124:









**Նախրեր. Սբ. Փրկիչ եկեղեցու տեսքը հյուսիսից և զանգակատունը (լուս.՝ 2007 թ.)**

**Նախրեր. Սբ. Փրկիչ եկեղեցու տեսքը հարավից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Լ. Մոսոյանի, 2006 թ.)**

1994/1995 ուստարում միջնակարգ դպրոցն ուներ 20 ուսուցիչ և 134 աշակերտ[28], 2000/2001-ին՝ 109, 2005/2006-ին՝ 62 աշակերտ[29]:

Ցավոք, 2007 թ. դրությամբ աշակերտների սակավության պատճառով դպրոցը հայտնվել է փակման վտանգի առջև:

**Սբ. Փրկիչ եկեղեցի.** կառուցվել է 1869 թ.[30]: Հասարակության ծախսով հիմնովին վերակառուցվել է 1886 թ.[31]:

1901 թ. եկեղեցու շենքն արդեն վտանգավոր կերպով խախտված էր. «...երկրաշարժէ վնասուած ըլլալով երկու կողմն բարձրացուած են թեւերուն նման քարաշէն որմեր, որոնք եկեղեցւոյ իր դիրքին մէջ ունեցած արտաքին ձեւին գեղեցկութիւնը նսեմացուցած են: Եկեղեցւոյ կռնակը որմին մէջ զետեղուած կը տեսնուի քար մը, որուն վրայ քանդակուած է 1860, իր շինութեան թուականը»[32]:

Խորհրդային տարիներին Սբ. Փրկիչ եկեղեցին շարունակել է գործել, քանի որ 1937-1938 թվականներին նախրերցիները մեծ աղմուկ են բարձրացրել և շրջանի ղեկավարությանը թույլ չեն տվել իրագործելու իրենց նպատակը: Կոլտնտեսության նախագահ Ներսես Տիգրանի Մելքոնյանի, իսկ հետպատերազմյան տարիներին կոլտնտեսության նախագահ Զաքեոս Մկրտչի Մուրադյանի ջանքերով եկեղեցին չեն փակել[33]:

Հայտնի է, որ մոտակա քարածխի հանքի շահագործման հետևանքով եկեղեցին բավական վնասվել էր և կարոտ էր նորոգության: 1965 թ. այն իրականություն է դառնում. դրանում մեծ էր տիրացու Պետրոս Մուրադյանի և Պողոս Սահակյանի դերը[34]:

1989 թ. եկեղեցին թեև կանգուն, սակայն քայքայված և գրեթե վթարային վիճակում էր: Սողանքի վրա գտնվող եկեղեցին կանգուն պահելու մտահոգությամբ տեղացիները եկեղեցին շրջափակել են մետաղական գոտիների մեջ: Այդպես էր նաև 2007 թ.:

28 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 152-153:

29 Ըստ գյուղապետարանի տվյալների:

30 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

31 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիս, 1916, էջ 79:

32 **Քօսեան Յ.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 83:

33 Համաձայն գյուղի տարեց բնակիչների վկայության:

34 Համաձայն գյուղի տարեց բնակիչների վկայության:







**Նառխրեբ. Սբ. Փրկիչ եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք, հատակագիծը (չափ.՝ Ա. Յակոբյանի) և բանալին (լուս.՝ 2007 թ.)**

**Եկեղեցական իրեր.** տարիներ շարունակ եկեղեցուն նվիրաբերվել են զանազան իրեր, որոնց թվում եղել են նաև արձանագրվածներ: 1901 թ. դրանց մի մասի (ընդամենը 10 միավոր) հիշատակագրերը գրի է առել և հրատարակել է Հ. Քոսյանը[35]: Ահա դրանք.

Խաչվառ.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է խաչվառ... հինին... եւ Եղիսաբեթին Մոխրէպու... 1852:*

Սրբապատկեր.

*Յիշատակ է պատկերս ի գիւղն Մոխրէպու սուրբ Փրկիչ եկեղեցոյ բնակիչ Մուրատ Ղէվէնոսի, 1861:*

Վակաս և սաղավարտ.

*Յիշ(ա)տ(ա)կ է վակաս եւ սաղավարդս Նազարէթ Նահապետին Մուրխէպ գիւղի Յ(իսու)ս Փրկ(իչ) եկեղեցոյն, 1868 ամի, ի 1-ն ապրիլի:*

Ջրի արծաթե բաժակ.

*Իշատակ է Սրբուհինին Մակարեանց, 1870, յ(ու)նվ(ա)ր 1-ն*:

Գինու արծաթե բաժակ.

*Իշատակ է Եղսաբեթ Դարբինով, 1870 յ(ու)նվ(ա)ր 1-ն*:

35 **Քօսեան Յ.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1902 , մարտ, էջ 83:



**Նառխրեբ. հատված եկեղեցու արևելյան կողմում տարածված գերեզմանոցից (լուս.՝ 2007 թ.)**

Արծաթե ձեռաց խաչ.

*Յիշ(ա)տ(ա)կ է Յ(իսու)ս Փրկչի եկեղեցուն Սոֆիայ Յոհանէսօվի կօղակիցըն Գաբրէլի, 1874-ին*։

Արծաթե մասնատուփ.

*Յիշ(ա)տ(ա)կ է Յ(իսու)ս Փրկ(ի)չ եկ(ե)ղ(ե)ց(ուն) Մօխրէբու Մելքոն, Գասպար եւ Բաղտ(ա)ս(ա)ր, Թագուհի, Տիրուհի Մելքոնանց, 1879*։

Պղնձե աշտանակ.

*Յ(ի)շատագեց աշտանակս Սիմոն Տէր Ակովփեանց կոյղ(ակց)ոյն Մոխր(ե)պ(ու) սուրբ Յ(ի)սուս Փրկչի եկեղեց(ոյ)ս յամ(ին) 1880*։

Պողոս-Պետրոս առաքյալների սրբապատկերները.

*Յիշատակ է պատկերս այս Մկրտիչ Պապոյօվի գերդաստանին, որ է ընծայեցին իրեանց գիւղի Նօխրէպայ Յս. Փրկչի եկեղեցուն եւ նկարեցաւ թ. 1880-ն ամի, 5 ապրիլի Ալէքսանդրապօլ քաղաքի*։

Արծաթե ձեռաց խաչ.

*Յիշատակ է խաչս Թէրէզինին Ստեփանոսի որդւոյ, 1882*։

**Տպագիր Ճաշոց.** եկեղեցում ցարդ պահվում է 1686 թ. Վենետիկում լույս ընծայված մեծադիր մի մատյան[36]. «Ճաշոց գիրգ գեղեցկատիպ եւ վայելուչ գաղափարեացել 'ի մատենից հնոց թագաւորացն հայոց տպագրեցեալ ի հայրապետութեան սրբոյն աթոռոյն Էջմիածնի տն. Եղիազարու սրբազան կաթուղիկոսին, ներ տպարանում ճուղայեցի խօճայ Սահրատի որդի պարոն Գասպարին, եւ Թաթէոսի երիցու Երևանցւոյ Համազասպեան, ի թուականութեան Արամեան ՌՃԼԵ, յամսեանն յունվարի ԺԵ, իսկ ի թուի փրկչին 1686, ի Վէնէտիկ», որի սկզբում միևնույն էջի վրա ընթեռնելի են 1726 և 1883 թվականների զույգ հիշատակարաններ.

Ա *«Յիշատակ է սբ. տառս կանպիրցի Յայվազին և կնոչն Սառային և դստերն Մարինոսին և եղբօրն Մովսէսին, որ եթ յիշատակ մշտնջենաւոր ի ձեռն ուղղադաւան քահանայից և ժողովրդոց, զի որքան ընթեռնեցուն զայս սուրբ մատեանս աստուած ողորմի ասասցէն միով հայր մերիւ և միով ողջունիւ և աւուր համբարձման յիշեսցէն 'ի պատարագն վասն այն գրի աստ: Թվին հայոց ՌՃՀԵ (1726)-ին»:*

Բ *«'Ի թւոյն հազար ութը հարիւր ութսուն և երեքին (1883) գիրքս այս, որ էր յոյժ մեծ նորոգեցաւ ի ձեռն ժառանգաց կանպիրցի Այվազի որդւոց՝ Պապօի, Յովսէփի և Միքայէլի Պետրոսովներուն և եղեւ երկու գիրք, որոնք խնդրեն ընթեռնողաց ասել մի-մի հայր մեր և մի մի ողջոյն քահանայից յաւուր Համբարձման առնուլ մի ձայնաւոր պատարագ առ ի հոգևոր օգնութիւն հանգուցեալ նուիրողաց այս մատեանիս»:*

**Քահանա.** գյուղի առաջին քահանան տեր *Սահակ Ղազարյանն* էր[37]: Շիրմաքարը գտնվում է եկեղեցու արևելյան կողմում:

*Աստ / տապանի / հանկչի / մարմին / տէր / Սահակ / Ղազարով, որ փ(ո)խ(եցաւ) / առ / ա(ստու)ծ / 1873 - / 1920:*

1901 թ. քահանայագործել է *Սարգիս Մելքոնյանը*[38]: Շիրմաքարը գտնվում է եկեղեցու արևելյան կողմում:

*Այս տ/ապանի / հանգչի / մարմին տէր / Սարգիս Մելքոն/յան, / ծն. 1860 - / 1936:*

1915 թ. եկեղեցու քահանա է նշանակվում *Բագրատ Տեր-Սիմոնյանցը*[39], որն այդ պաշտոնում հիշվում է նաև 1916 թ.[40]:

1936 թ. հիշվում է *Սարգիս քահանան*: Շիրմաքարը գտնվում է եկեղեցու արևելյան կողմում:

*Աստ / տապանի / հանկչի / մարմին / տէր / Սարգիս / Տէր ..., / որ փ(ո)խ(եցաւ) / առ ա(ստու)ծ ...:*

1965 թ. հիշվում է տիրացու *Պետրոս Մուրադյանը*:

1994 թ. մարտ ամսից մինչև 2003 թ. գյուղին հովվում էր *Էմմանուել վարդապետ Տապաղյանը*, որը պատարագ էր մատուցում նաև Աբաթխև, Ղուլալիս, Ծինուբան և Սուխլիս գյուղերում:

36 Հայտնի է, որ 1936 թ. գյուղի ծխատեր Սարգիս քահանան, անսալով կառավարության պահանջին, իր տանը եղած գրքերը ստիպված հավաքում է մի պարկի մեջ և փոխադրում եկեղեցի՝ շրջանային ղեկավարությանը հանձնելու համար: Նրա եղբոր թոռը՝ 12-ամյա Զաքեոս Մելիքյանը, պարկի միջից կարողանում է երկու գիրք հանել և թաքցնել իրենց թոնրատանը: Ներկա Ճաշոցը փրկված զույգ գրքերից մեկն է: Մատյանի մասին համառոտ, սակայն, բավականին սխալ տեղեկություններ կան Հ. Հակոբյանի նշյալ գրքում (էջ 151):

37 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 152:

38 **Քօսեան Յ.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 83:

39 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 180:

40 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիս, 1916, էջ 79:

Ներկայումս Նաոխրեբի ժողովրդապետն է տեր Պողոս Գրիգորյանը, որը հովվում է նաև Արաքխև, Ծինուբան և Դուլալիս գյուղերին:

**Ներսես Շնորհալու անվան հուշակոթող.** կառուցվել է 1996 թ. Էմմանուել վարդապետ Տապաղյանի նախաձեռնությամբ գյուղից հյուսիս՝ Մեծ Թագավորական խճուղու հարևանությամբ՝ Խարաբա անվամբ հայտնի բլրի վրա: 1997 թ. նույն թվականի մայիսի 26-ին տեղի է ունեցել հուշակոթողի բացումը Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի Հայոց Կաթողիկե եկեղեցիների առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Ներսեսյանի մասնակցությամբ: Այն իրենից ներկայացնում է 9 մետրանոց փայտե խաչ[41]: Հուշակոթողի մոտ տեղադրվել են 24 սրբատաշ քարեր, որոնց վրա փորագրված է Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ» գործը: Բացի այդ՝ հուշակոթողի մոտ կառուցվել է և նույն ժամանակ օծվել նաև մի փոքր մատուռ, որը ստացել է Սբ. Մարիամ Աստվածածին անունը[42]:

**Կամրջի շինարարական ռուսերեն արձանագրություն.** գյուղամիջի մի տան բակում ընկած՝ պահպանվել է քառակող կոթողաձև մի քար (չափերը՝ 94 x 34 x 34 սմ), որի մի երեսին կա ռուսերեն 17 տող արձանագրություն.

*[До]рога ме|жду Суф|лисскимъ и | Бадельски|мъ мостами | разработана и | мостъ этотъ | построенъ | средствами жи|телей обществъ | Валинскаго, Уде|нскаго, Адигенск|аго и Вархан-скаго | подъ руководствомъ | пристава Коплиан|-скаго участка В. Х. Лу|ковскаго, мастером | Иваномъ Фомлиди. | 28 мая 1898 г., | 15 июля 1899 г.*

*Հրատ.* առաջին անգամ:

**Ուխտատեղիներ.** Նաոխրեբցիների և հարևան գյուղերի բնակիչների համար ուխտատեղի են ծառայել Սաֆարայի[43] և Զարզմայի[44] վանքերը, Մառելը, Վերի (Կոլը) ժամը, Մայր եկեղեցին և այլն:



**Նաոխրեբ. կամրջի շինարարական արձանագրությունը (լուս.՝ 2007 թ.)**

41 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 155-156:
42 Նույն տեղում, էջ 156:
43 "Кавказ", 1846, № 40, с. 156.
44 "Кавказ", 1903, № 80, с. 2. **Гордеев Д.**, Из эпиграфических материалов Зарзмы; к обследованию надписи Иване сына Сулы, საისტორიო მოამბე, ტბილისი, 1925, էջ 107-112:

# ՉԵՉԵՐԵԿ (ՃԱԼԱ)



**Չեչերեկ (Ճալա). եկեղեցու մնացորդներ գյուղի հարավարևելյան եզրին (լուս.՝ 2007 թ.)**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից 4 կմ արևելք՝ Կուր գետի ձախ ափից հազիվ 300 մ հեռու, ծովի մակերևույթից 960-1010 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** հայտնի է, որ գյուղի ներկայիս բնակիչների նախնիները գաղթել են 1830 թ. Կարինի Բլուր[1] գյուղից: Հիմնադիրները՝ Սահարյանց, Պողոսյանց, Թորոսյանց, Վարդանյանց, Սալվիյանց, Սաղաթելյանց և Խնգոյանց ազգատոհմերը սկզբում հաստատվում են Ճալա թրքական գյուղում, ապա Չեչերեկ տեղամասում հիմնում են համանուն գյուղը[2]:

*Վիճակագրություն.* սկսած 1840-ական թվականներից՝ մինչև ԻԱ դարի սկիզբը վավերագրերը Չեչերեկի համար արձանագրել են բնակչության հարատև աճ (վերջին տարիներին ծայր է առել նկատելի արտագաղթ, որի պատճառով էլ ավելի քան մեկուկես դար անց գյուղաբնակների թվաքանակն առաջին անգամ սկսել է նվազել).

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1841[3] | | 31 | 35 | 66 |
| 1866[4] | 8 | 26 | 28 | 54 |
| 1867[5] | 10 | 43 | 38 | 81 |
| 1868[6] | 10 | 41 | 37 | 78 |
| 1869[7] | 10 | 43 | 39 | 82 |
| 1870[8] | 10 | 42 | 38 | 80 |
| 1876[9] | | 60 | 57 | 117 |
| 1877[10] | | 98 | 95 | 193 |

1 Գտնվում է Էրզրումից 13 կմ արևմուտք՝ Աղվերան և Արշունի գյուղերի հարևանությամբ: Կարնո դաշտի կենտրոնական գյուղերից էր: Ներկայումս պաշտոնապես վերանվանված է Էոմերթեփե (Ömertepe):

2 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 178-179:

3 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67:

4 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 73:

5 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3851, թ. 19, 24:

6 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3853, թ. 27:

7 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3856, թ. 36-37:

8 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 85-86:

9 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 29-30:

10 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 69, 84:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1878[11] | | 92 | 86 | 178 |
| 1881[12] | | 97 | 95 | 192 |
| 1884[13] | 9 | | | |
| 1906[14] | | 72 | 78 | 150 |
| 1907[15] | | | | 150 |
| 1908[16] | 16 | 72 | 77 | 149 |
| 1914[17] | | | | 163 |
| 1985[18] | 100 | | | 480 |
| 1995[19] | 107 | | | |
| 2007[20] | 117 | 200 | 220 | 420 |

**Երկրորդ աշխարհամարտ.** գյուղաբնակներից մասնակցել է 63 հոգի, որից 22-ը զոհվել է[21]:

**Տնտեսություն.** 1891 թ. նշվել է, որ «Հողերի մի մասը պետական, երկու մասը՝ կալվածական: ...բերքերն ...ցորեն, սիմինդր. պարապում էին և պարտէզպանութիւնով ու բանջարեղէնների մշակութիւնով»[22]:

**Դպրոց.** 1971 թ. կառուցվել է դպրոցի նոր շենք, որտեղ և ուսուցումը տարրականից դարձել է ութամյա[23]:

1983 թ. գյուղի ութամյա դպրոցում ուսանում էր 35 աշակերտ:

1994/1995 ուստարում ինննամյա դպրոցն ուներ 20 ուսուցիչ և 84 աշակերտ[24], 2000/2001-ին՝ 68, իսկ 2005/2006-ին՝ 45 աշակերտ[25]:

**Եկեղեցի.** 1841 թ. հիշատակվում է որպես փայտաշեն կառույց[26]: Եկեղեցուն փոխարինած նշյալ շենքն իրենից ներկայացնում էր բնակելի տուն (գլխատան հորինվածքով), որն առանձնապես աղոթատեղիի համբավ էր ձեռք բերել այդտեղ պահվող ձեռագիր Ավետարանի առկայության շնորհիվ:

**Ձեռագիր.** Չեչերեկը հայտնի է առ այսօր գյուղամիջում գտնվող Սբ. Ավետարան կոչված ուխտատեղի-տան մեջ[27], ապա 2005 թ. նույն շենքի տեղում համագյուղացի Էդվարդ Հակոբյանի նախաձեռնությամբ և նրա միջոցներով վերակառուցված



Չեչերեկ (Ճալա). 2005 թ. կառուցված սրբատունը (լուս.՝ 2007 թ.)

սրբատան մեջ պահվող 1745 թ. նորոգված թղթյա պատկերազարդ ձեռագիր Ավետարանով: Նույն տեղում պահվում են նաև եկեղեցական այլ իրեր, սրբություններ:

Ավետարանի հիշատակարանում նորոգման մասին կարդում ենք.

*«...արդ նորոգեցաւ սրբալոյս աւետարանս ի երկիրս Արզրում, քաղաքի, որ կոչի Կարնուն, որ ի դուռն սուրբ եկեղեցոյս, որ և սուրբ Երուսաղէմի պատրիարք, որ է անուն սուրբ Գրիգոր աստուածայրան վարդապետին և տէր Ակոբ պատրիարքին Կոստանդնուպոլսու և տեառն մերու հայրապետութեան տէր Ղազար կաթողիկոսին և ուղտիս մեր ի տէր Պետրոս առաջնորդն և արհեպիսկոպոսին և աստուած երկան աւուրս պահեսցէ և հաստահիմն ապասցէ ամէն. արդ աղաչեմ զձեզ յիշեցէն և զանարժան և մեղաւորս անարք և անիմայ մեղսամած և փրծուն գրչիս սուտանուն տէր Վարդան, որ չեմ արժան քահանային և որ զանունս ունիմ միայն և գործովս ունայն թողութիւն արէք պակասութեան գրոյս, քանզի ժամանակս դառն էր և դժվար, որ շահ Թահմազն շատ աւերութիւն արար, աստուած վերջն բարին կատարէ, ամէն, ի թվին ՌՃՂԴ (1745)-ին, ամէն, քարօվ վայելէք սուրբ աւետարանս»:*

Արձաքապատ կազմին.

*«Յիշատակ է Արաբկերցի Միք(՞)կանց լուսա|հոգի Կարապետի որդի Գեւորգն եւ իւր | ծնող(ա)ց*

11 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 204-205:
12 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 47:
13 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
14 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 42:
15 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
16 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 39: Ի դեպ, մեկ այլ տեղեկագրի համաձայն՝ 1908 թ. Չեչերեկն ուներ 258 հայ բնակիչ ("Кавказский календарь на 1910 г.", с. 413):
17 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 64, թ. 7: Տե՛ս նաև "Кавказский календарь на 1915 г.", с. 206.
18 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 177: Ի դեպ, 1985 թ. գյուղում բնակությունն են հաստատել նաև Անդայից փոխադրված վրացիներ:
19 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 179: Ի դեպ, բացի հայերից՝ գյուղում բնակվում է նաև մի քանի վրացի ընտանիք:
20 Ըստ գյուղապետարանի տվյալների:
21 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 180:
22 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 326:
23 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 180:
24 **Մաթևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 124:
25 Նշվ. աշխ., էջ 144:
26 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67:
27 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 176, թ. 6:

*լու... եւ կող(ա)կցի Մարք(ա)րտին, 1222 (1807/08 թթ.)»:*

Մտահոգ ոչ թե ձեռագրի պահպանության, այլ նրա հասույթին տիրանալու խնդրով՝ 1896 թ. փետրվարի 12-ին Ախալցխայի հայոց հոգևոր կառավարությունը տեղեկացրել է Վրաստանի և Իմերեթի հայոց կոնսիստորիային ձեռագրի գոյության և հատկապես այցի եկող ուխտավորների թողած նվիրատվությունները տնօրինելու ցանկության մասին, առաջարկել է ձեռագիրը փոխադրել Ախալցխայի Սբ. Փրկիչ եկեղեցի[28], սակայն գյուղացիները մերժել են ձեռագիրը հանձնել եկեղեցուն: Հոկտեմբերի 25-ին կոնսիստորիան Ախալցխայի հայոց հոգևոր կառավարությանը խորհուրդ է տվել ձեռագիրը գյուղացիներից խլել ոստիկանության օգնությամբ[29]:

1897 թ. օգոստոսի 16-ին Ախալցխայի վիճակի հայոց եկեղեցիների գործակալը խնդրել է գավառապետին վարչական ուժի գործադրմամբ բռնագրավել ձեռագիրը[30], սակայն երկու ամիս անց վերջինս զեկուցել է, որ ձեռագրատեր Հմայակ Կիրակոսյանից իրեն որևէ կերպ չի հաջողվել խլել Ավետարանը[31]:

Իր հերթին Ածղորի տեղամասի պրիստավը գավառային վարչությանը հայտնել է, որ Հ. Կիրակոսյանը բնավ մտադիր չէ հանձնել ձեռագիրը, քանի որ այն իր նախնիներից ավանդված շուրջ 800 տարվա վաղեմություն ունեցող ընտանեկան ժառանգություն է[32]:

«Եկամտաբեր» Ավետարանին տիրանալու տենչով համակված հոգևոր իշխանությունների դիմում-խնդրագրերն ի վերջո հասնում են նահանգապետին, որի պատասխանը («ավետարանը անհնարին է վերցնել, քանի որ սեփականություն է») վերջակետ է դնում փայփայված ակնկալություններին:

**Հմայիլ.** Չեչերեկ գյուղի ձեռագիր հնություններից պակաս ուշագրավ չէ 1727 թ. ստեղծված նկարազարդ հմայիլը, որի հիշատակարանում կարդում ենք.

*«Յիշատակ է համայիլս Մաթէոսի որդի պարոն Բունիաթին, որդոյն՝ Մաթէոսին, կողակցին՝ Աղայնանին և քվերն՝ Մաֆտունին, տէր աստուածն բարի վայելումն տացէ ամէն, ՌՃՀՁ (1727)-ին»:*

**Քահանա.** 1884 թ. չուներ սեփական քահանա, հոգևոր կարիքները հոգում էին Ախալցխայի քահանաները[33]:



**Չեչերեկ (Ճալա). հատված գերեզմանոցից (լուս.՝ 2007 թ.)**

**Գերեզմանոց.** տարածվում է գյուղի հյուսիսարևելյան եզրին: Տապանաքարերից հները անարձանագիր են և վերաբերում են ԺԹ դարի կեսերին:

**Եկեղեցատեղ.** գյուղի հարավարևելյան եզրին նկատելի են բյուզանդածես բնակիչներից ավանդված միջին չափերի միանավ եկեղեցու կրաշաղախ հիմնապատերը: Ավերակների մեջ ուշագրավ են քիվազոտու սրբատաշ բեկորները:

**Կամուրջ.** 1835 թ. գյուղի մոտ՝ Կուր գետի վրա, Հովհաննես Պարոնբեկյանն իր միջոցներով կամուրջ է կառուցում. «...նորին բարձր գերազանցութիւնն պարոն կուսակալն ամենայն Վրաստանոյ հրամայեաց տալ իւրն ընդունակութիւն շինեալ կամուրջն ի վերա ջրոյն Քիւռոյ, ի միջի գիւղօրէից Ճէչէրէկի և Սինազայի, ի նահանգն Չէչէրէկու, որ կշինէ տէր Օհանէսն Պարոնպէկեան քահանայն և ընդ այսմ հրամայեաց հրամայագրել, որ ևս առ նուցում 'ի նմանէ ձեռագիր մի, զենայ մինչ ի վերջաւորութիւն այնմ կամուրջին գալողէ կամ գնացողէն...»[34]:

1880-ական թվականներին 12000 ռուբ. ծախսով կամուրջը վերակառուցվում է պետության միջոցներով, որը, սակայն, շարունակում է մնալ վթարային վիճակում: Կամրջի շահագործումն իրականացվում է՝ պարբերաբար արված նորոգությունների համար հատկացվող ժողովրդական տուրքի շնորհիվ[35]:

28 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 176, թ. 1:
29 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 176, թ. 2:
30 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 176, թ. 4:
31 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 176, թ. 3:
32 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 176, թ. 5:
33 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
34 Մատենադարան, թղթ. 163 դ, վավ. 1482-I:
35 «Նոր-Դար», 1888, № 65, էջ 2:

# ՊԱՄԱՃ ՄԵԾ (ՎԱՐԻ ՊԱՄԱՃ)



**Պամաճ Մեծ (Վարի Պամաճ). ընդհանուր տեսքը հարավից (լուս.՝ 1988 թ.)**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 7,5 կմ հարավ-արևմուտք՝ հյուսիսարևելահայաց մեղմ թեքություն ունեցող սարահարթին, ծովի մակերևույթից 1150-1190 մ բարձրության վրա:

**Այլ անվանում.** հիշատակվել է նաև Մամաճ անվանաձևով[1]:

**Բնակչություն.** հայտնի է, որ ներկայիս բնակիչների նախնիները «...գաղթած են Արզրումի Թորթում գաւառից»[2]: Խնդիրն ավելի մանրամասնող մեկ այլ հաղորդման մեջ կարդում ենք. «Նոքա ևս գաղթած են Կարնի Վերն գիւղից...»[3]:

**Ազգատոհմեր.** ավանդաբար վկայվելով՝ մեզ է հասել Մեծ Պամաճում հաստատված 16 տոհմերի անվանացանկը՝ Աբելենք, Ավոյենք, Գաբրիելենք, Գիմիշենք, Թաթոյենք, Թորոսենք, Համբարենք, Հաջիենք, Մշտեսենք, Սահարենք, Սուքիասենք, Տացուենք, Տերտերանք, Փղատենք, Քոչոյենք[4]:

*Վիճակագրություն.* 1840 թ.-ից ի վեր առկա տվյալների համադրումը փաստում է, որ ցարդ ընդհանուր առմամբ Մեծ Պամաճ գյուղում արձանագրվել է բնակչության հարատև աճ.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1840[5] | | 60 | 57 | 117 |
| 1841[6] | | 57 | 51 | 108 |
| 1842[7] | | 61 | 59 | 120 |

1 ԴՀՊ, ԺԳ, էջ 31:

2 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ, «Մուրճ», 1895, № 2, էջ 325:

3 «Մեղու Հայաստանի», 1873, № 22, էջ 3: Վերնգեղ կամ Վերինգեղ բնակավայրն այժմ էլ գոյություն ունի և գտնվում է Թորթումից 34,5 կմ հյուսիս-արևմուտք՝ Ղարաբեկ գյուղի հարևանությամբ: Գավառի արևմտակողմի սահմանային գյուղերից է: Ներկայումս պաշտոնապես վերանվանված է Ուզունկավաք (Uzunkavak):

4 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 191:

5 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:

6 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67:

7 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, թ. 76-77:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1843[8] | | | | 120 |
| 1844[9] | | 70 | 68 | 138 |
| 1845[10] | | 65 | 62 | 127 |
| 1847[11] | | 42 | 58 | 100 |
| 1851[12] | 35 | 118 | 127 | 245 |
| 1853[13] | | 72 | 67 | 139 |
| 1854[14] | | 77 | 71 | 148 |
| 1857[15] | | 92 | 89 | 181 |
| 1860[16] | | 109 | 88 | 197 |
| 1861[17] | | 91 | 93 | 184 |
| 1862[18] | | 94 | 95 | 189 |
| 1863[19] | | 97 | 85 | 182 |
| 1864[20] | | 100 | 85 | 185 |
| 1865[21] | | 103 | 94 | 197 |
| 1866[22] | 16 | 103 | 94 | 197 |
| 1867[23] | 15 | 103 | 93 | 196 |
| 1868[24] | 15 | 102 | 97 | 199 |
| 1869[25] | 15 | 109 | 96 | 205 |
| 1870[26] | 15 | 110 | 100 | 210 |
| 1871[27] | | 110 | 100 | 210 |
| 1872[28] | | 116 | 114 | 230 |
| 1873[29] | 19 | 135 | 115 | 250 |
| 1876[30] | | 165 | 170 | 335 |
| 1877[31] | | 172 | 181 | 353 |
| 1878[32] | | 185 | 192 | 377 |
| 1880[33] | | 200 | 205 | 405 |
| 1881[34] | | 192 | 124 | 316 |
| 1882[35] | | 198 | 128 | 326 |
| 1883[36] | | 185 | 153 | 338 |
| 1884[37] | 23 | | | |
| 1885[38] | | 186 | 165 | 351 |
| 1886[39] | | 190 | 163 | 353 |
| 1887[40] | | 191 | 171 | 362 |
| 1888[41] | | 199 | 169 | 368 |
| 1889[42] | | 195 | 170 | 365 |
| 1891[43] | 24 | | | |
| 1893[44] | | 156 | 145 | 301 |
| 1894[45] | | 158 | 150 | 308 |
| 1897[46] | | 154 | 176 | 330 |
| 1899[47] | | 154 | 178 | 332 |
| 1900[48] | | 159 | 182 | 341 |
| 1901[49] | | 164 | 183 | 347 |
| 1902[50] | | 156 | 190 | 346 |
| 1905[51] | | 170 | 206 | 376 |
| 1906[52] | | 220 | 196 | 416 |
| 1907[53] | | | | 416 |
| 1908[54] | 50 | 223 | 201 | 424 |
| 1909[55] | | 221 | 195 | 416 |
| 1910[56] | | 230 | 193 | 423 |
| 1912[57] | | 250 | 210 | 460 |
| 1913[58] | | 245 | 200 | 445 |
| 1914[59] | | 250 | 210 | 460 |
| 1916[60] | | 270 | 230 | 500 |
| 1917[61] | 74 | | | 513 |
| 1923[62] | | | | 517 |
| 1983[63] | 204 | | | 668 |
| 2006[64] | | | | 636 |
| 2007[65] | 177 | 278 | 354 | 632 |

**Երկրորդ աշխարհամարտ.** գյուղաբնակներից մասնակցել է 103 հոգի, որից 77-ը զոհվել է[66]: Ի հիշատակ Երկրորդ աշխարհամարտում զոհված

8 **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 71:
9 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, թ. 14:
10 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 70-71:
11 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 33:
12 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 26: Ի դեպ, վիճակագրական այս տվյալը ներառում է նաև Փոքր Պամաճի բնակչության թվաքանակը:
13 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 37-38:
14 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, թ. 47-48:
15 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, թ. 27-28:
16 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 3:
17 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3839, թ. 14:
18 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3836, թ. 26:
19 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 60-61:
20 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3846, թ. 2-3:
21 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 19-20:
22 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 73:
23 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3851, թ. 19, 24:
24 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3853, թ. 27:
25 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3856, թ. 36-37:
26 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 85-86:
27 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 201-202:
28 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3859, թ. 34:
29 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, թ. 76-77, 94-95: Տե՛ս նաև «Մեղու Հայաստանի», 1873, № 22, էջ 3:
30 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 29-30:
31 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, թ. 39:
32 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 204-205:
33 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 69, 84:
34 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 47:
35 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 105:
36 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:
37 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
38 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 13:
39 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3878, թ. 57:
40 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 3-4:
41 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 46-47:
42 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 115-116:
43 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 325:
44 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 33-34:
45 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 54-55:
46 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, թ. 139-140:
47 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3903, թ. 83-84:
48 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, թ. 58:
49 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 132-133:
50 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, թ. 15-16:
51 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3912, թ. 258-259:
52 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 42:
53 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
54 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 39: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ 1908 թ. Մեծ Պամաճն ուներ 383 հայ բնակիչ (“Кавказский календарь на 1910 г.”, с. 344):
55 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 108-109:
56 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 35-36:
57 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3920, թ. 49:
58 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, 950, թ. 268-269:
59 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, 1020, թ. 169-170: Այլ տեղեկագրում նշված է 464 բնակիչ (“Кавказский календарь на 1915 г.”, с. 170):
60 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 43, թ. 16-17:
61 **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 71:
62 Նույն տեղում:
63 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 232:
64 Ըստ գյուղապետարանի տվյալների:
65 Ըստ գյուղապետարանի լիազորված անձ Կառլեն Հովհաննեսի Կարախանյանի:
66 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 194:










**Պամաճ Մեծ (Վարի Պամաճ). Սբ. Խաչ եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից, հարավային ճակատից բացված մուտքի փայտակերտ դուռը (լուս.՝ 1988 թ.), արևմտյան ճակատից բացված մուտքի ճակատակալ հատվածը (1908 թ.) և ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ 2007 թ.)**

համագյուղացիների՝ 1983-1985 թվականներին կառուցվել է հուշարձան-կոթող (ճարտ.՝ վանաձորցի Բաբկեն Սարգսյան)[67]:

**Տնտեսություն.** 1891 թ. տրված նկարագրության համաձայն՝ «Մոտաւորապէս 150 դեսեատնից աւելի հող ունէին իրանց ձեռքը. դրանից 4 մասը պետական, 1 մասը կալւածական: Սրանք էլ էին հողի քչութիւնից գանգատւում...: Բերքերն էին՝ ցորեն, գարի, սիմինդր ու կարտոֆիլ: Պարապում էին և պարտէզպանութիւնով (գլխաւորապէս «ճանճուլ», խնձոր և տանձ) ու բանջարեղէնների մշակութիւնով: Պարտէզները գիւղացիների սեփականութիւն էին. իրանց փողով էին գնել»[68]:

**Դպրոց.** կրթօջախի բացման ստույգ տարեթիվը պարզել չի հաջողվել: Գործել է 1880-ականների սկզբներից, սակայն տնտեսական դժվարություններն հաճախ խափանումների պատճառ են դարձել.

| *տարեթիվ* | *այլ տեղեկ.* | *ուսուցիչ* | *աշակերտ* |
|---|---|---|---|
| 1882[69] | | 1 | 27 |
| 1883[70] | | 1 | 48 |

1891 թ. կրթօջախի վերաբերմամբ ականատեսը նշել է. «Առաջ ունեցել են ուսումնարան, բայց իմ գնացած ժամանակը՝ չունէին»[71]:

1909 թ. Բաքվի հայոց մշակութային միության դրամական օժանդակությամբ Մեծ Պամաճում կրկին դպրոց է բացվում, իսկ 1917 թ. կառուցվում է դպրոցի նոր շենք[72]: Այդ է վկայում դպրոցական դրամագլխի տոկոսներից դպրոցներ կառուցող հանձնաժողովին միանվագ 300 ռուբլի տրամադրելու մասին սինոդին ուղղված կաթողիկոսի՝ 1917 թ. կարգադրությունը[73]:

67 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 197:
68 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 325:
69 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 105:
70 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:
71 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 325:
72 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 510:
73 «Արարատ», 1917, էջ 282:



**Պամաճ Մեծ (Վարի Պամաճ). Սբ. Խաչ եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2007 թ.)**

1994/1995 ուստարում ինննամյա դպրոցն ուներ 20 ուսուցիչ և 80 աշակերտ[74], 2000/2001-ին՝ 87, իսկ 2005/2006-ին՝ 53 աշակերտ[75]:

**Սբ. Խաչ (Սբ. Ստեփանոս) եկեղեցի.** 1840 թ. հիշատակվում է Սբ. Փրկիչ անվամբ[76]: 1841-1842 թվականներին հիշվում է որպես փայտաշեն կառույց[77], իսկ 1841 թ.՝ Սբ. Ստեփանոս անվամբ[78]: Նույն անվանաձևով է հիշատակված նաև 1846[79], 1851 թվականների վավերագրերում[80]: 1863 թ. հիշվում է Սբ. Խաչ փայտաշեն եկեղեցին[81], հետևաբար միջանկյալ նշյալ տարիների (1846-1863 թթ.) ընթացքում եկեղեցին վերաօծվել է և անվանափոխվել:

1865 թ. մարտի 20-ին եկեղեցին կողոպտվել է[82]: Գողոնը գնահատվել է 234 ռուբլի և 50 կոպեկ[83]:

74 **Մաթևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 124:
75 Նշվ. աշխ., էջ 144:
76 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:
77 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67 և գ. 3805, թ. 76-77:
78 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3798, թ. 125:
79 ՀԱԴ, ֆ. 56, ց. 4, գ. 1100, թ. 114:
80 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 26:
81 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 60-61:
82 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 4610, թ. 6:
83 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 4610, թ. 7:











**Պամած Մեծ (Վարի Պամած). Սբ. Խաչ եկեղեցու յուղաներկ սրբապատկերների հիշատակագրությունները (լուս.՝ 2007 թ.)**

1884 թ. այլ տեղեկագրում հիշվում է ծխական քարաշեն եկեղեցին[84]:

Ըստ էության, բազմիցս նորոգված հին եկեղեցու տեղում նոր եկեղեցի կառուցելու աշխատանքները ձեռնարկվել են արդեն ԺԹ դարավերջին, սակայն 1903 թ. ընդհատվել են նյութական սղության պատճառով[85]: Տակավին 1909 թ. եկեղեցին կիսաշեն էր, քանի որ այս անգամ էլ շինարարական աշխատանքներին հետևող երեցփոխ Գևորգ Խաչատրյանցն էր Գանձակ փոխադրվել[86]: Այնուամենայնիվ, եկեղեցու արևմտյան մուտքի դռանը քանդակված՝ *«1908 թ.»*-ը համարվում է եկեղեցու կառուցման ավարտի թվականը:

84 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:

85 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3424, թ. 1:

86 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3424, թ. 6:

եկեղեցին համակ սրբատաշ քարով, ներսում անսյուն, արևմտակողմում փայտաշեն դասով, արևմտյան ճակատից բացված միակ մուտքին կից եռահարկ զանգակատնով բավականաչափ ընդարձակ (արտաքին չափերը՝ 18,80 x 11,08 մ) կառույց է:

**Եկեղեցական իրեր.** 1837 թ. կազմվել է Մեծ Պամաճի Սբ. Խաչ եկեղեցու շարժական գույքի ցուցակը, ըստ որի՝ այլ իրերի թվում եկեղեցում են պահվել ծիսական 7 գիրք (Ճաշոց, Ավետարան, Զայնքաղ շարական, Ժամագիրք, Խորհրդատետր, Սիմեոնի տոնացույց, Հայսմավուրք), ինչպես նաև 479 մըսխալ արժողության արծաթե, պղնձե իրեր և այլն[87]: Ըստ նույն ցուցակի՝ եկեղեցուն են պատկանել 1 սոմարանոց մի արտ և փոքր մի արոտավայր:

Եկեղեցու ներսում ցարդ պահպանվում են մի քանի յուղաներկ սրբապատկերներ, որոնցից մի քանիսը կրում են հակիրճ հիշատակագրություններ.

Ա սպիտակ ներկով, 7 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է պատկերս Պարոնին, հ(ա)նգ(ու)ցե(ա)լ / կնոջն Մարիամին, որդւոցն՝ Աննային / Վառվառին, Տիրունին, Ստեփաննոսին, / Վահանին և ամ(ենայն) կենդանեաց և ննջեց/ելոց ի գիւղն Մեծ Պամ(ա)ճ: Ամի 3/12/1883: / Նկարեաց պատուաւոր քաղաքացի / Ստեփաննոս Եայլախանեանց:*

*Հրատ.* առաջին անգամ:

Բ սպիտակ ներկով, 2 տող.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է պատկերս հ(ա)նգ(ու)ցե(ա)լ Եղի... ծընօղացն՝ Ղազարոս ք(ա)հ(ա)ն(ա)յի և Մարիամու Մեծ / Պամաճ գուղի Ս(ուր)բ Խաչի..., ամի 3/15/1883:*

*Հրատ.* առաջին անգամ:

Գ սպիտակ ներկով, 3 տող.

*Յիշ(ա)տ(ա)կ է պատկերս Դիվինիսիոսին և ամուսնոյ նորա Աննայի, ծնողին / Միքէսի Մկրտչե(ա)ն, կենդանեանց և ննջեցելոց, ի գիւղն Մամաճ / եկեղեցուն, 1885 ամի:*

*Հրատ.* առաջին անգամ:

Դ սպիտակ ներկով, 2 տող.

*Յիշ(ա)տ(ա)կ է պատկերս Թօրոսին, հանգուցեալ Յօհաննէսին, Մարամին, Հէրիքն(ա)զին, կենդանեան(ց) և ննջեցելոց, / ի գուղըն Մեծ Մամաճ Ս(ուր)բ Խաչի եկեղեցուն, ամի 1908: Ն. Ս. Եայլախա(ն)եանց:*

*Հրատ.* առաջին անգամ:

Ե սպիտակ ներկով, 9 տող.

*Յիշ(ա)տ(ա)կ է պատկերս Մկրտիչին / և ամուսնուն Շօղակաթին, որդուն՝ / Բարդէղօմոսին, հանգուցեալ / Մարքիրտին, կենդանեն(ա)ց / և ննջեցելոց, ի գուղըն / Մեծ Մամաճ Ս(ուր)բ Խաչի / եկեղեցուն, ամի 6/20/1912: / Նկարեաց պատուաւոր քաղաքացի / Ստեփաննոս Եայլախանեանց:*

*Հրատ.* առաջին անգամ:

**Ձեռագիր.** կաշեկազմ մագաղաթյա ձեռագիրը գտնվում է համագյուղացի Արշակ Մամիկոնի Գիմիշյանի տանը: Հարուստ է մանրանկարներով: Կազմը ձևավորված է թվով հինգ մետաղյա խաչերով, որոնցից ամենից խոշորի թևերին 7 տողով արձանագրված է.

*Յիշատակ / է խաչս / տէր Գեւ/որ(գ)ին, / ի դուռն / ս(ուր)բ Յով/(հ)աննէսին:*

*Հրատ.* առաջին անգամ:

**Տպագիր Ճաշոց.** եկեղեցում ցարդ պահվում է 1723 թ. Կոստանդնուպոլսում հրատարակված «Ճաշոց գիրք զեղեցկատիպ եւ վայելուչ գաղափարեցեալ մատենից հընոց թագաւորացն Հայոց» գիրքը: Ճաշոցի տպագիր հիշատակարանում կարդում ենք. *«...եղև զրաւ տպեցման ամենաքաղցրիկ և վայելչագեղ ճաշոցիս, ի թվականիս մերոյ ՌՃՀԲ-ին (1723), զարնանաբեր յունիս ամսոյն Ժ (10): Ի հայրապետութեան աստուածանկար և տիրակառոյց, քրիստոսաէջ և երկնահանգոյն աթոռոյն Էջմիածնի, արհի և պանծալի վեհապետի, և սրբազան քահանայապետին աստուծոյ, տեառն Աստուածատրոյ ընդհանուր կաթողիկոսի: Եւ ի պատրիարգութեան քրիստոսաժիրին տիեզերահռչակ և ամենաքաղծիկ աթոռոյ սրբոյ առաքելոյն Յակոբայ՝ եղբօր տեառն, արժանապատիւ և սրբազան քարոզչի և աստուածաբան վարդապետի տեառն Գրիգորի արգեպիսկոպոսի: Իսկ և յառաջնորդութեան մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսի, վսեմական հեղինակի և առատաբան քարոզչի տեառն Յօհաննիսի աստուածաբան վարդապետի, որոց կեանս երկարս տացէ տէր աստուած մեր ամէն: Այլև արդեամբք և ձեռնտուութեամբ գոյից գործարանիս, յԱկնայ հողէն Ապուչեխցի մահտեսի Միրիճանի որդի խօճայ Մկրտչին: Որ եղև պատճառ տպեցման ճաշոցիս, օգնութիւն առնելով գործոց գործարանիս՝ ընչիւք և հոգաբարձութեամբ: Ներ տպարանի Կարապետի որդի բազմամեղ և ամենուն ծառայ տրուպ Աստուածատուրի. ի Կոստանդնուպօլիս քաղաքի...»:*

**Գերեզմանատան եկեղեցի.** գյուղամիջում տարածված հին գերեզմանոցում տակավին կանգուն է տեղաբնիկ հայերից ավանդված միանավ քաղածոյ եկեղեցին՝ կառուցված անմշակ քարով, կրա-



**Պամաճ Մեծ (Վարի Պամաճ). գերեզմանոցի եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Յակոբյանի, 2007 թ.)**

87 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 134:







**Պամաճ Մեծ (Վարի Պամաճ). գերեզմանոցի եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից, հյուսիս-արևմուտքից և արևմուտքից (լուս.՝ 2007 թ.)**

շաղախով: Հորինվածքային և հատկապես կառուցողական առանձնահատկությունները բնորոշ են տարածաշրջանի ԺԵ-ԺԶ դարերում կառուցված հուշարձաններին: Հյուսիսային պատի մեջ պահպանված մկրտարանի խորշը վկայում է, որ նախապես եղել է ծխական եկեղեցի և միայն հավանաբար ԺԹ դարում է վերածվել սոսկ գերեզմանատան եկեղեցու: Արտաքին չափերն են՝ 6,18 x 4,63 մ:

**Գերեզմանոց.** տարածվում է հին եկեղեցու շուրջ: Առկա են ԺԵ-ԺԸ դարերին բնորոշ սալատապաններ, ինչպես նաև ԺԹ-Ի դարերի մշակված, նաև արձանագիր տապանաքարեր: Վերջիններից երկուսի վրա ընթերցվում է.





**Պամաճ Մեծ (Վարի Պամաճ). գերեզմանոցի եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք, մկրտարանի ավազանի խորշը հյուսիսային որմի մեջ (չափ.՝ Ա. Յակոբյանի, 2007 թ.)**

Ա *Տապան է / Սարգիս / Խաչատուրեան, / 4.1.1879:*

*Հրատ. առաջին անգամ:*

Բ *Այսմ տա/(պա)նի հանգչի / մարմ(ի)ն Հեղի/նե Պողոսե/ան, որ հան/գե(ա)ւ ի Ք(րիստո)ս / 1899 ամի / եւ ի 8 սեպ(տեմբերի):*

*Հրատ. առաջին անգամ:*

**Քահանա.** 1876 թ. գյուղում քահայանագործել են *Կարապետ Տեր-Մարտիրոսյանցը* և ուրարակիր



**Պամաճ Մեծ (Վարի Պամաճ). Երկրորդ աշխարհամարտում զոհված մեծպամաճցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը (լուս.՝ 1988 թ.)**

*Ղազարոս Ալեքսանյանը*[88]: 1909 և 1910 թվականներին հիշվում է քահանա *Ղազարոս Տեր-Ղազարոսյան Սիմեոնյանցը* (ծնվ. 1837 թ., մեռն. 1880 թ. հունիսի 18-ին)[89]:

88 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 15:

89 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 172: Տե՛ս նաև 53, ց. 1, գ. 3424, թ. 12 և ֆ. 53, ց. 1, գ. 795, թ. 29, 66:

# ՊԱՄԱՃ ՓՈՔՐ (ՊԶՏԻ ՊԱՄԱՃ)



**Պամաճ Փոքր (Պզտի Պամաճ). ընդհանուր տեսքը հարավից (լուս.՝ 1988 թ.)**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 6,5 կմ հարավ-արևմուտք՝ հյուսիսահայաց մեղմ թեքություն ունեցող սարահարթին, ծովի մակերևույթից 1220-1290 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** համաձայն մի վկայության՝ գյուղի ներկայիս բնակիչների նախնիները 1830 թ. գաղթել են Թորթում գավառից[1]: Ըստ մեկ այլ տեղեկության՝ պամաճցիների նախնիները գաղթել են Կարինի Գառն[2] գյուղից. «Ժողովուրդը գաղթել է Կարնի Գառն գիւղից, նոյնպէս Կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեամբ 1829 թուին...»[3]:

**Ազգատոհմեր.** ավանդաբար վկայվել է, որ 1830 թ. Փոքր Պամաճում հաստատվել են հետևյալ ազգատոհմերը՝ Բալոյենք, Գևորգենք, Կուրղինենք, Համբարենք, Մանուկենք, Մովսիսյաններ, Մութալենք, Պապոյենք[4]: Հետագայում գյուղ են փոխադրվել Ախալքալաքի շրջանից Բեգրակյանները ու Քուրդօղլյանները, Ասպինձայի շրջանի Տամալա գյուղից՝ Բալոյանները և Նինոծմինդայի (Բոգդանովկայի) շրջանից՝ Թանգամյանները[5]:

*Վիճակագրություն.* առկա տվյալների համադրումը ցույց է տալիս, որ ԺԹ դարի 40-ական թվականներից ի վեր ընդհանուր առմամբ բնակչության հարատև աճ արձանագրած Փոքր Պամաճ գյուղում ԻԱ դարի սկզբներից հիմնականում դեպի Ռուսաստան ծայր առած անհեռատես և չարդարացված գաղթի հետևանքով գյուղաբնակների թվաքանակը կտրուկ սկսել է նվազել հատկապես վերջին տարիներին:

1 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 325:

2 Հավանաբար խոսքը Դերջան գավառի Գառնբերդակ գյուղի մասին է:

3 «Մեղու Հյաստանի», 1873, № 22, էջ 3:

4 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 199:

5 Նույն տեղում, էջ 200:

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1840[6] | | 60 | 50 | 110 |
| 1841[7] | | 68 | 52 | 120 |
| 1842[8] | | 61 | 58 | 119 |
| 1843[9] | | | | 119 |
| 1844[10] | | 84 | 70 | 154 |
| 1845[11] | | 62 | 68 | 130 |
| 1847[12] | | 68 | 65 | 133 |
| 1853[13] | | 55 | 52 | 107 |
| 1854[14] | | 58 | 52 | 110 |
| 1857[15] | | 66 | 71 | 137 |
| 1860[16] | | 70 | 74 | 144 |
| 1861[17] | | 75 | 73 | 148 |
| 1862[18] | | 75 | 75 | 150 |
| 1863[19] | | 67 | 70 | 137 |
| 1864[20] | | 70 | 73 | 143 |
| 1865[21] | | 86 | 86 | 172 |
| 1866[22] | 14 | 86 | 86 | 172 |
| 1867[23] | 14 | 86 | 89 | 175 |
| 1868[24] | 14 | 98 | 92 | 190 |
| 1869[25] | 14 | 102 | 99 | 201 |
| 1870[26] | 14 | 100 | 98 | 198 |
| 1871[27] | | 100 | 98 | 198 |
| 1872[28] | | 106 | 104 | 210 |
| 1873[29] | 12 | 90 | 85 | 175 |
| 1876[30] | | 130 | 128 | 258 |
| 1877[31] | | 110 | 100 | 210 |
| 1878[32] | | 125 | 120 | 245 |
| 1880[33] | | 140 | 130 | 270 |
| 1881[34] | 25 տնից ավելի | 134 | 121 | 255 |
| 1882[35] | | 138 | 118 | 256 |
| 1883[36] | | 130 | 123 | 253 |
| 1884[37] | 23 | | | |
| 1885[38] | | 134 | 124 | 258 |
| 1886[39] | | 141 | 124 | 265 |
| 1887[40] | | 141 | 126 | 267 |
| 1888[41] | | 145 | 132 | 277 |
| 1889[42] | | 141 | 129 | 270 |
| 1891[43] | 25 | | | |
| 1893[44] | | 209 | 182 | 391 |
| 1894[45] | | 213 | 182 | 395 |
| 1897[46] | | 201 | 161 | 362 |
| 1899[47] | | 211 | 167 | 378 |
| 1900[48] | | 218 | 172 | 390 |
| 1901[49] | | 220 | 180 | 400 |
| 1902[50] | | 219 | 270 | 489 |
| 1905[51] | | 228 | 287 | 515 |
| 1906[52] | | 226 | 180 | 406 |
| 1907[53] | | | | 416 |
| 1908[54] | 53 | 239 | 202 | 441 |
| 1909[55] | | 227 | 181 | 408 |
| 1910[56] | | 223 | 185 | 408 |
| 1912[57] | | 240 | 170 | 410 |
| 1913[58] | | 240 | 210 | 450 |
| 1914[59] | | | | 458 |
| 1916[60] | | 270 | 265 | 535 |
| 1917[61] | | | | 497 |
| 1983[62] | 239 | | | 842 |
| 1995[63] | 245 | | | 880 |
| 2006[64] | | | | 650 |
| 2007[65] | 200 | 283 | 361 | 644 |

**Երկրորդ աշխարհամարտ.** գյուղաբնակներից մասնակցել է 126 հոգի, որից 40-ը զոհվել է[66]:

6 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:
7 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67:
8 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, թ. 76-77:
9 **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 72:
10 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, թ. 14:
11 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 70-71:
12 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 33:
13 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 37-38:
14 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, թ. 47-48:
15 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, թ. 27-28:
16 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 3:
17 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3839, թ. 14:
18 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3836, թ. 26:
19 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 60-61:
20 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3846, թ. 2-3:
21 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 19-20:
22 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 73:
23 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3851, թ. 19, 24:
24 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3853, թ. 27:
25 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3856, թ. 36-37:
26 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 85-86:
27 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 201-202:
28 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3859, թ. 34:
29 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, թ. 76-77, 94-95: Տե՛ս նաև «Մեղու Հյաստանի», 1873, № 22, էջ 3:
30 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 29-30:
31 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, թ. 39:
32 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 204-205:
33 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 69, 84:
34 «Մեղու Հայաստանի», 1881, № 15, էջ 3: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 47:
35 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 105:
36 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:
37 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
38 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 13:
39 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3878, թ. 57:
40 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 3-4:
41 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 46-47:
42 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 115-116:
43 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 325:
44 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 33-34: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ 1908 թ. Փոքր Պամաճն ուներ 35 հայ բնակիչ (“Кавказский календарь на 1910 г.”, с. 344), որը, հավանաբար, տպագրական սխալի արդյունք է:
45 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 54-55:
46 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, թ. 139-140:
47 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3903, թ. 83-84:
48 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, թ. 58:
49 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 132-133:
50 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, թ. 15-16:
51 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3912, թ. 258-259:
52 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 42:
53 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
54 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 39:
55 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 108-109:
56 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 35-36:
57 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3920, թ. 49:
58 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, 950, թ. 268-269:
59 “Кавказский календарь на 1915 г.”, с. 170.
60 ՀԱԴ, ֆ. 196, ց. 1, գ. 43, թ. 16-17:
61 **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 72:
62 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 233:
63 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 200:
64 Ըստ գյուղապետարանի տվյալների:
65 Ըստ գյուղապետարանի լիազորված անձ Կառլեն Հովհաննեսի Կարախանյանի:
66 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 204-205:

**Տնտեսություն.** 1856 թ. թուրքերը, գյուղ մտնելով, ոչնչացրել են մեղվի բոլոր փեթակները, որոնցով բավական հռչակված էին գյուղացիները[67]:

1891 թ. տրված նկարագրության համաձայն՝ «Հողի մեծը թագաւորական, մի մասը կալւածական...»[68] էր:

1873 թ. ականատեսը հիացմունքով է նկարագրել գործող ձիթհանը[69]:

**Դպրոց.** 1881 թ. գյուղի մասնավոր դպրոցում հայոց լեզու է դասավանդել Ախալցխայի Վարդանյան դպրոցն ավարտած մի տիրացու[70]: Ի դեպ, փոքրպամաճցիները հարց են բարձրացրել կենտրոնական դպրոց բացելու ուղղությամբ, որտեղ պետք է ուսանեին նաև Սազել, Օրալ և Մեծ Պամաճ գյուղերի մանուկները:

Նույն թվականին թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոս Սագինյանցն Ախալցխայի ուսումնարանների տեսուչ Մովսես Սամուելյանցի հետ այցելում է Պամաճ և հաստատում բացվելիք կենտրոնական դպրոցի կանոնադրությունը[71]:

Ստորև ներկայացնում ենք դպրոցի գործունեության համառոտ վիճակագրությունը.

| *տարեթիվ* | *այլ տեղեկ.* | *ուսուցիչ* | *աշակերտ* |
|---|---|---|---|
| 1881[72] | | 1 | 20 |
| 1882[73] | | 1 | 25 |
| 1883[74] | | 1 | 20 |

Տակավին 1908 թ. ԿՀԲԸ Ախալցխայի մասնաճյուղի վարչությունը ծրագրել էր Խակ, Սազել, Ղուլալիս, Մեծ Պամաճ, Փոքր Պամաճ և Օրալ գյուղերից մեկում (հավանաբար Փոքր Պամաճում) հիշյալ գյուղերի համար հիմնել մի կենտրոնական դպրոց[75], սակայն նախագիծը մնացել է անկատար:

1916 թ. դպրոցը չէր գործում[76]: Նույն թվականին վերստին արծարծվում է դպրոցից զուրկ Մեծ Պամաճ, Սազել, Ղուլալիս, Օրալ և Խակ գյուղերի համար Փոքր Պամաճ գյուղում կենտրոնական դպրոց հիմնելու հարցը, սակայն դարձյալ ցանկությանը գործնական քայլեր չեն հետևում[77]: Կառույցի համար հողամասը նվիրում է տիրացու Ղազարոս Տեր-Սահակյանցը, իսկ համագյուղացիները ստանձնում են մատակարարել քարը, փայտը, ավազը և աշխատուժը: Սակայն տակավին 1917 թ. գործը գլուխ չի գալիս մոլեգնող պատերազմին զորակոչված մեծ թվով երիտասարդների բացակայության պատճառով[78]:

1917 թ. կաթողիկոսը սինոդին պատվիրում է դպրոցներ կառուցող հանձնաժողովին դպրոցական դրամագլխի տոկոսներից միանվագ տրամադրել 300 ռուբ.[79]:

1932 թ. Փոքր Պամաճում բացվում է տարրական դպրոց, որը 1945 թ.-ից վերափոխվում է յոթնամյայի: 1977 թ. դպրոցի նոր շենքի կառուցումից հետո դառնում է լրիվ միջնակարգ՝ որպես կենտրոնական դպրոց ծառայելով նաև հարևան Ղուլալիս և Օրալ գյուղերի աշակերտների համար[80]:

1983 թ. միջնակարգ դպրոցն ուներ 32 ուսուցիչ և 277 աշակերտ[81]:

1994/1995 ուստարում դպրոցն ուներ 22 ուսուցիչ և 170 աշակերտ[82], 2000/2001-ին՝ 160, իսկ 2005/2006-ին՝ 142 աշակերտ[83]:

**Աղբյուր.** քարակերտ ավազանով ծորակահոս աղբյուրը գտնվում է եկեղեցու հարևանությամբ՝ հարավային կողմում:

Աղբյուր. կամարի ներքո ունի շինարարական քառատող արձանագրություն.

*Կանգնի աղբիւրս անմոռանալի յիշատակ / Փոքր Պամաճ գիւղի յանուն Իսկուհի Կիւ/միւշեանցի տիկին՝ Սահակ Տ(էր) Սահակեանցի, / ի 1900 ամի 1-ն մայիսի:*

*Հրատ.* առաջին անգամ:

**Սբ. Խաչ (Սբ. Հակոբ, Սբ. Աստվածածին) եկեղեցի.** 1837 թ. եկեղեցին հիշվում է Սբ. Հակոբ[84], իսկ 1840 թ. վավերագրում՝ Սբ. Աստվածամայր անուններով[85]:

1841 թ.-ից եկեղեցին կրում է Սբ. Խաչ անունը[86]:

1841-1842 թվականներին հիշվում է որպես փայտաշեն կառույց[87]:

Տակավին 1863 թ. եկեղեցին փայտաշեն էր (այս արտահայտությունը սովորաբար վերաբերում էր սոսկ ծածկին, այլ ոչ ամբողջ շինությանը)[88]:

1965 թ. գյուղացիները նախաձեռնում են վերանորոգել 1940-ական թվականներին՝ տեր Հովհաննեսի մահից հետո ամբողջությամբ խարխլված եկեղեցին: Սակայն այս ցանկությունը, ըստ էության, իրականություն է դառնում շուրջ մեկուկես դար

67 «Մեղու Հյաստանի», 1873, № 22, էջ 3:

68 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 325:

69 «Մեղու Հյաստանի», 1873, № 22, էջ 3:

70 «Մեղու Հայաստանի», 1881, № 15, էջ 3: Հավանաբար խոսքը ուսուցիչ թանգարան տիրացու Ղազարոս Հովհաննիսյան Տեր-Սահակյանցի մասին է:

71 «Մեղու Հայաստանի», 1881, № 232, էջ 1:

72 «Մեղու Հայաստանի», 1881, № 15, էջ 3:

73 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 105:

74 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:

75 ՀԱԴ, ֆ. 28, ց. 1, գ. 300, թ. 15-16:

76 «Համբաւաբեր», 1916, № 24, էջ 746:

77 «Համբաւաբեր», 1917, № 11, էջ 262-263: Տե՛ս նաև «Արարատ», 1917, էջ 430:

78 «Համբաւաբեր», 1917, № 11, էջ 263:

79 «Արարատ», 1917, էջ 282:

80 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 203:

81 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 233:

82 **Մաթևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 124:

83 Նշվ. աշխ., էջ 144:

84 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 134:

85 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:

86 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3798, թ. 126: Տե՛ս նաև ֆ. 56, ց. 4, գ. 1100, թ. 114:

87 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67 և գ. 3805, թ. 76-77:

88 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 60-61:





**Պամաճ Փոքր (Պզտի Պամաճ). Սբ. Խաչ եկեղեցու տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ 1988 թ.) և 1993 թ. իրականացված վերակառուցումից հետո (2007 թ.)**

անց՝ 1993 թ., փոքրպամաճցի Հովհաննես Մանուկյանի նախաձեռնությամբ[89]:

Հիմնավորապես վերաշինված եկեղեցու (արտաքին չափերը՝ 12,85 x 8,0 մ) և կից զանգակատան հարավային որմերին այդ առթիվ զետեղվել են երկու արձանագրություններ.

Ա *Փ. Պամաճի եկեղեցին | վերակառուցվել է | 1993. նախաձեռնող | Մանուկյան Հ. Բ.:*

*Հրատ.* առաջին անգամ:

Բ *Սուրբ Խաչ եկեղեցի | վերակառուցող՝ 1993 թ-ին | Հովհաննես Բագրատի | Մանուկյան:*

*Հրատ.* առաջին անգամ:

**Եկեղեցապատկան իրեր.** 1837 թ. կազմվել է Փոքր Պամաճի Սբ. Հակոբ եկեղեցու շարժական

89 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 201:



**Պամաճ Փոքր (Պզտի Պամաճ). գյուղի գերեզմանոցի հին մասում պահպանված կոթողի կամ խաչքարի պատկերազարդված պատվանդան (լուս.՝ 1988 թ.), աղբյուր, 1900 թ. (լուս.՝ 2007 թ.)**

գույքի ցուցակը, ըստ որի՝ այլ իրերի թվում եկեղեցում են պահվել ծիսական 5 գիրք (Ճաշոց, Ավետարան՝ արծաթե փոքր խաչով, Զայնքաղ շարական, Ժամագիրք, Սիմեոնի տոնացույց), ինչպես նաև 684 մսխալ արժողության արծաթե, բրոնզե իրեր և այլն[90]:

**Ձեռագիր.** Ուխտեց (այժմ՝ Օլթի) քաղաքում 1490 թ. ստեղծված ձեռագիր Ավետարան է պահվում Տերտերանց Աղասի Սահակյանի տանը, որը «1976 թ. սեպտեմբերին բերվել է Մատենադարան, ախտահանվել, վերանորոգվել և կրկին վերադարձվել»[91]:

ԺԵ դարով թվագրվող մի ձեռագիր Ավետարան էլ գտնվում էր համագյուղացի Նոյեմզար Ներսիսյանի մոտ (ծնվ. 1889 թ., գ. Լոմատուրցխ)[92]:

**Քահանա** *Սահակ.* 1846 թ. վախճանվել է 120 տարեկանում: Նրա տապանաքարին արձանագրված է եղել. «Այ այս տապանի տքնի յակն դահանակ, արի երէցն հայոց զգօն տէր է Սահակ, Եօթանասունմէկ ամ սա քահանա էր, հարիւր քսան ամաց առ հարսն աւելաւ, եթող իւր յիշատակ գովելի համբաւ: Արդ, աստ հանդիպիք, բարի մաղթեցէք, զփափագ սրտի իմոյ այսու առլցէք, 28.8.1846»[93]:

---

90 ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 134:

91 Ցուցակ հայերեն ձեռագրաց..., «Բանբեր Մատենադարանի», հ. 13, էջ 328:

92 Նշվ. հատորը, էջ 327:

93 Ցուցակ հայերեն ձեռագրաց..., «Բանբեր Մատենադարանի», հ. 13, էջ 331-332:

*Հովհաննես Մինասյան.* «Ի թւին հազար ութ հարյուր վացըներմէկին (1861) և ունվարի քսանին տիրացու Ոհանէս ուրարակիր և քահանացու Պամաճ գիւղի, շառավիղ Տէր Սահակին որդի Մինասեան առ Աստուած փոխեցաւ»[94]:

*Ղազարոս Հովհաննիսյան Տեր-Սահակյանց.* 1865 թ. հիշվում է «Ուրարակիր Ղազարոս տիրացու Յովհաննեսեան Տէր Սահակենց ծառաեալ է Փոքր Պամաճ գեղջ Սուրբ Խաչ յեկեղեցւոջ ընդ Կարապետ քահանայի, Տէր Մարտիրոսին առեալ է զուրարակրութիւնն ի սրբազան Թադէոս եպիսկոպոսէ 1876 թուին, ի 6-ն ապրիլ ամսոյ: Ուսեալ է զուսումն ի Վարդանեան հոգևոր դպրոցին յԱխալցխա քաղաքին...»[95]:

1876 թ. գյուղում քահայանագործել է վերոհիշյալ ուրարակիր Ղազարոս Հովհաննիսյան Տեր-Սահակյանցը[96]:

1904-1909 թվականներին քահանա է հիշվում *Կարապետ Տեր-Մարտիրոսյան Տեր-Նահապետյանցը* (ծնվ. 1829 թ., ձեռն. 1861 թ. սեպտեմբերի 28-ին)[97]:

1995 թ. Սբ. Էջմիածնից հովվապետ է նշանակվում համագյուղացի *Գարեգին վարդապետ Բալասանյանը* (ծնվ. 1970), որը հոգում էր նաև Մեծ Պամաճ, Սազել և Օրալ գյուղերի բնակչության հոգևոր կարիքները[98]:

94 Նշվ. հատորը, էջ 330:
95 Նշվ. հատորը, էջ 330:

96 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 15:
97 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 172: Տե՛ս նաև ֆ. 53, ց. 1, գ. 795, թ. 29: Մեկ այլ տեղեկությամբ՝ ծնվել է 1827 թ. (ֆ. 53, ց. 1, գ. 795, թ. 66):
98 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 201-202:

# ՋՈՒԼՂԱ (ՃՈՒԼՂԱ)

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 10,5 կմ հարավ-արևմուտք՝ ծովի մակերևույթից 1280-1380 մ բարձրության վրա: Բնակավայրը հարավ-արևմուտքից և հյուսիսից համապատասխանաբար կից է Ծղալթբիլա և Արաքևն գյուղերին:

**Բնակչություն.** գյուղի ներկայիս բնակիչների նախնիները փոխադրվել են 1830 թ. Կարինի Չիֆթլիկ գյուղից[1]:

**Ազգատոհմեր.** ավանդաբար վկայվել է, որ 1830 թ. գյուղում հաստատվել է 7 գերդաստան Սոփերենց Պապիկի գլխավորությամբ՝ Աղաբաբյաններ (նրանցից հետագայում ճյուղավորվել են Քերոբյանները), Բալանյաններ (Բալասանյաններ), Դուրգալյաններ, Յաղիգարյաններ, Սոփերենք (Պապիկյաններ), Սանթրոսյաններ, Փանչոյաններ (նրանցից ճյուղավորվել են Փայլյանները)[2]:

*Վիճակագրություն.* առկա սակավաթիվ տվյալների համադրումը ցույց է տալիս, որ մինչև խորհրդային վերջին տարիները բնակչության աճ արձանագրած Ջուլղայում վերջին տասնամյակում ծայր առած արտագաղթի հետևանքով բնակչությունը գրեթե կիսով չափ նվազել է.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1985[3] | 135 | | | 260 |
| 1989[4] | 135 | | | 450 |
| 1991[5] | | | | 471 |
| 2006[6] | 118 | | | 298 |
| 2007[7] | 124 | 117 | 126 | 243 |

**Երկրորդ աշխարհամարտ.** գյուղաբնակներից ռազմաճակատ է մեկնել 77 հոգի, որից 33-ը զոհվել է:

**Ջրամատակարարում.** 1938 թ. վերակառուցվել է գյուղամիջի բնական աղբյուրը, որի ջուրը բավարարում է ողջ գյուղին:

**Դպրոց.** 1888 թ. ջուլղացի մանուկներն ուսանել են Ծղալթբիլայում եկեղեցուն կից կառուցված ծխական դպրոցում[8]:

Ի դարի 30-ական թվականներից գյուղում գործել է տարրական դպրոց, որը գոյատևել է մինչև 1960-ական թվականները: Այնուհետև ջուլղացի երեխաները սովորել են Ծղալթբիլայի, ապա 1978 թ.-ից հետո երկու գյուղերի համար բացված միջնակարգ դպրոցում[9]:

1989/1990 ուստարում դպրոցի առաջին դասարանն ուներ 5 աշակերտ:

**Մատուռ.** տասնամյակներ շարունակ Ջուլղայի հայերն իրենց գյուղում ոչ թե եկեղեցի, այլ երբևէ նույնիսկ աղոթատուն չեն ունեցել. «...եկեղեցի չկայ. աստուածային պաշտամունք կը կատարուին առանձնական տան մէջ»[10]: 1920 թ. ձեռնարկում են



**Ջուլղա (Ճուլղա). զանգակատուն (լուս.՝ 2007 թ.)**

1 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 131: Տե՛ս նաև **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 68: Չիֆթլիկ գյուղը գտնվում է գավառի արևելակողմում՝ Էրզրումից 7 կմ հյուսիս-արևմուտք՝ Կան և Կես գյուղերի հարևանությամբ: Ներկայումս պաշտոնապես վերանվանված է Չիֆթլիքքյոյ (Çiftlikköy):

2 Ըստ տեղացիների վկայության:

3 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 185:

4 Գյուղխորհրդից առնված տվյալները մեզ է փոխանցել ծղալթբիլեցի Մելիք Մկրտչի Մոսիկյանը:

5 Ըստ գյուղապետարանի տվյալների:

6 Ըստ գյուղապետարանի տվյալների:

7 Ըստ գյուղապետարանի լիազորված անձ Պետրոս Միսակի Վարդանյանի:

8 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 185:

9 Ըստ Սարգիս և Մկրտիչ Բալանյանների վկայությունների:

10 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիս, 1916, էջ 80:

կառուցման աշխատանքներ, քանի որ հայ կաթողիկե հոգևոր կառավարությունը դրական էր արձագանքել խնդրագրին. «Յիրաւի շատ գովելի է անոնց բաղձանքը, իրենց համար առանձին քահանայ և աղոթատուն մը ունենալու և Ատէնիս համար ալ ցանկալի: Ուստի թող լաւ մը խորհրդածեն, թէ արդեօք ներկայիս հնարաւորութիւն կա՞յ արդեօք այս իրենց բաղձանքը իրականացնելու. և եթէ այո այն ատէն պարտուպատշաճ թոյլտուութիւնները ստանալէն ետքը, կրնան սկսիլ մատրան շինութիւնը...»[11]:

**Ավետումն Մարիամ Աստվածածնա եկեղեցի.** կառուցվել է 1990-ական թվականներին գյուղի գերեզմանոցին կից հայր Անատոլի վարդապետի նախաձեռնությամբ (ըստ նախագծի՝ պետք է լիներ երկհարկանի. կառուցված է միայն առաջին հարկը): Այժմ գործող եկեղեցի է:

**Քահանա.** 1915 թ. գյուղում քահանայագործել է *Քերոբ Տեր-Պողոսյանը*[12]:

**Գերեզմանոց.** ըստ տեղացիների վկայության՝ մինչև 1930-ական թվականները ջուղացիները թաղումները կատարել են հարևան Ծղալթբիլա գյուղի գերեզմանոցում:

Գյուղի հին գերեզմանոցի շիրմաքարերից մեկին ընթերցվել է.

*Այս է շիրիմս Պապիկ Սահարի:*

**Հաջա զեղի հնավայր.** ավերակները գտնվում են Ջուղայից 500 մ հարավ-արևելք: Տարածքում պահպանվել են եկեղեցի, խաչքարեր, ճիատապաններ[13]:

11 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 83, թ. 1:

12 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 80:

13 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 185: Տե՛ս նաև **Դարբինյան Վ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 69:

# ՍԱԶԵԼ



**Սազել. ընդհանուր տեսքը հարավից (լուս.՝ 1988 թ.)**

**Տեղադրությունը.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 4 կմ հարավ-արևմուտք՝ հարավարևմտահայաց ձորալանջին, ծովի մակերևույթից 1190-1240 մ բարձրության վրա:

**Բնակչությունը.** համաձայն 1595 թ. օսմանյան կառավարության կազմած հարկացուցակի՝ Սազելն ուներ նաև որոշ թվով հայ բնակիչ: Դա երևում է ցանկում առկա հետևյալ անձնանուններից՝ Պարսամ քահանա, նրա որդի Դաթունա, եղբայր Դեմետրե, Իվանի որդի Մխիթար, նրա եղբայրներ Զաքար ու Սաբիա, Զաքարի թոռ, նրա որդի Խախուտ, Կիրակոս և այլն[1]:

Սազելում բնիկ հայերի գոյության մասին ունենք նաև 1770 թ. հետևյալ վկայությունը. «Թուին 1770 եւ սեպտեմբերի Դ (4)-ին սածելցի Օսէփի դուստր Աղամը մկրտեցի, որ էր կնքահայր Դեմուրենց ղազազ Պետրէն»[2]:

Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները սերում են 1830 թ. Կարին գավառից, սակայն համաձայն լրատվական մի հաղորդման՝ նրանք մերթ համարվել են Գառն[3], մերթ էլ Հինձք[4] գյուղի գաղթականներ, ընդ որում «Սկզբում նրանք շատ են եղել, բայց վերջը նրանցից մի հատուած փոխադրվել է Ախալքալաքի (Մեծ Խանչալ) կողմերը»[5]: Վկայություն կա նաև այն մասին, որ ներկայիս գյուղի բնակիչների նախնիները գաղթել են 1830 թ. Կարինի Իլիջա գյուղից[6]:

Հայտնի է, որ Միքելծմինդայում հաստատված 3, Ծուղրութից 2 ընտանիքներ հետագայում տեղափոխվել են Սազել, իսկ Յաղիկարենց և Սոփերենց

1 გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი..., էջ 39:

2 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 92:

3 **Ղազազեան Գ.**, «Մեղու Հայաստանի», 1873, № 22, էջ 3: Գառն գյուղի մասին տե՛ս սույն աշխ., էջ 260, № 2 ծանոթ.:

4 Տե՛ս սույն աշխ., էջ 212, № 9 ծանոթ.:

5 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 326:

6 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 139: Հրատարակչի մոտ՝ գյուղանունը՝ Ունջա: Իլիջա գյուղի մասին տե՛ս սույն աշխ., էջ 223, № 6 ծանոթ.:

ընտանիքներն էլ 1840-ական թվականներին գյուղից հեռացել են և վերաբնակվել Ջուղայում[7]:

**Ազգատոհմեր.** Սազելում բնակություն հաստատած առաջին ազգատոհմերն են եղել Ազատենք, Ալեքսանենք, Թումասենք, Խաչոյենք, Կապուտենք, Յաղոյենք, Պապինենք և Ուռոմողլենք[8]:

*Վիճակագրություն.* առկա տվյալների համադրումը ցույց է տալիս, որ ընդհանուր աճի պայմաններում 1850-ական թվականների սկզբներին, 1905-1906 թվականներին և 3-րդ հազարամյակի սկզբներից ի վեր արձանագրվել է նաև բնակչության նվազում:

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1840[9] | | 98 | 78 | 176 |
| 1841[10] | | 55 | 47 | 102 |
| 1842[11] | | 59 | 53 | 112 |
| 1844[12] | | 65 | 57 | 122 |
| 1845[13] | | 63 | 57 | 117 |
| 1847[14] | | 88 | 82 | 170 |
| 1849[15] | | 82 | 89 | 177 |
| 1851[16] | 22 | 84 | 77 | 161 |
| 1853[17] | | 44 | 38 | 82 |
| 1854[18] | | 46 | 39 | 85 |
| 1857[19] | | 48 | 40 | 88 |
| 1860[20] | | 57 | 56 | 113 |
| 1861[21] | | 52 | 50 | 102 |
| 1862[22] | | 53 | 53 | 106 |
| 1863[23] | | 53 | 52 | 105 |
| 1864[24] | | 55 | 54 | 109 |
| 1865[25] | | 57 | 52 | 109 |
| 1866[26] | 10 | 57 | 52 | 109 |
| 1867[27] | 10 | 61 | 55 | 116 |
| 1868[28] | 10 | 61 | 57 | 118 |
| 1869[29] | 10 | 65 | 58 | 123 |
| 1870[30] | 10 | 65 | 60 | 125 |
| 1871[31] | | 65 | 60 | 125 |
| 1872[32] | | 76 | 74 | 150 |
| 1873[33] | 18 | 80 | 65 | 140 |
| 1876[34] | | 94 | 82 | 176 |
| 1877[35] | | 86 | 80 | 166 |
| 1878[36] | | 100 | 98 | 198 |
| 1880[37] | | 110 | 100 | 210 |
| 1881[38] | | 105 | 98 | 203 |
| 1882[39] | | 107 | 97 | 204 |
| 1883[40] | | 116 | 108 | 224 |
| 1884[41] | 14 | | | |
| 1885[42] | | 116 | 107 | 223 |
| 1886[43] | | 130 | 124 | 254 |
| 1887[44] | | 133 | 123 | 256 |
| 1888[45] | | 140 | 131 | 271 |
| 1889[46] | | 135 | 126 | 261 |
| 1891[47] | 21 | | | |
| 1893[48] | | 144 | 133 | 277 |
| 1894[49] | | 149 | 136 | 285 |
| 1897[50] | | 272 | 249 | 521 |
| 1899[51] | | 280 | 264 | 544 |
| 1900[52] | | 288 | 272 | 560 |
| 1901[53] | | 293 | 284 | 577 |
| 1902[54] | | 295 | 274 | 569 |
| 1905[55] | | 311 | 294 | 605 |
| 1906[56] | | 189 | 173 | 362 |
| 1907[57] | | | | 362 |
| 1908[58] | 40 | 195 | 180 | 375 |
| 1909[59] | | 190 | 182 | 372 |
| 1910[60] | | 194 | 185 | 379 |
| 1912[61] | | 200 | 120 | 320 |

7 Նույն տեղում, էջ 139:
8 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 139:
9 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:
10 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67:
11 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3805, թ. 76-77:
12 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, թ. 14:
13 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3811, թ. 70-71:
14 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3814, թ. 33:
15 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3818, թ. 39: Ի դեպ, Սազելի բնակչության թվաքանակի մեջ ընդգրկված են նաև Օրալի բնակիչները:
16 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 2596, թ. 26:
17 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 37-38:
18 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3825, թ. 47-48:
19 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3830, թ. 27-28:
20 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3833, թ. 3:
21 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3839, թ. 14:
22 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3836, թ. 26:
23 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3843, թ. 60-61:
24 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3846, թ. 2-3:
25 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 19-20:
26 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3848, թ. 73:
27 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3851, թ. 19, 24:
28 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3853, թ. 27:
29 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3856, թ. 36-37:
30 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 85-86:
31 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3857, թ. 201-202:
32 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3859, թ. 34:
33 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3862, թ. 76-77, 94-95: Տե՛ս նաև «Մեղու Հայաստանի», 1873, № 22, էջ 3:
34 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 29-30:
35 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3869, թ. 39:
36 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3850, թ. 204-205:
37 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3872, թ. 69, 84:
38 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3873, թ. 47:
39 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3874, թ. 105:
40 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 30-31:
41 «Արձագանք», 1885, № 4, էջ 58:
42 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3877, թ. 13:
43 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3878, թ. 57:
44 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3880, թ. 3-4:
45 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 46-47:
46 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 115-116:
47 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 326: Ի դեպ, նույն աղբյուրը վկայում է, որ իրականում գյուղն ուներ ոչ թե պաշտոնապես արձանագրված 21, այլ 30 տուն:
48 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 33-34:
49 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3895, թ. 54-55:
50 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3899, թ. 139-140:
51 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3903, թ. 83-84:
52 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3905, թ. 58:
53 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 132-133:
54 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, թ. 15-16:
55 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3912, թ. 258-259:
56 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3915, թ. 42:
57 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 240, թ. 2:
58 ՀԱԴ, ֆ. 35, ց. 1, գ. 559, թ. 39: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ 1908 թ. Սազելն ուներ 281 հայ բնակիչ ("Кавказский календарь на 1910 г.", с. 355):
59 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 108-109:
60 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3917, թ. 35-36:
61 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3920, թ. 49:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1913[62] | | 200 | 190 | 390 |
| 1914[63] | | 225 | 200 | 425 |
| 1916[64] | | 230 | 210 | 440 |
| 1983[65] | 194 | | | 745 |
| 1995[66] | 150 | | | |
| 2006[67] | | | | 611 |
| 2007[68] | 168 | 311 | 300 | 611 |

**Հուշարձան-կոթող.** 1983-1984 թվականներին, ի հիշատակ Երկրորդ աշխարհամարտում զոհված 57 համագյուղացիների, կառուցվել է հուշարձան-կոթող, որի բացումը տեղի է ունեցել 1985 թ. մայիսի 9-ին[69]: Կոթողին արձանագրված է.

*1941-1945 Հայրենական Մեծ պատերազմին Սազել գյուղից մասնակցել են 104 մարդ, որոնցից վերադարձել են միայն 47-ը:*

**Տնտեսություն.** 1891 թ. վկայության համաձայն՝ «Հողը կալածական...: Խմելու լաւ ջուր չունէին...: Հողը բերրի էր, միայն ջրի պակասութիւնն էր վնասում: Բերքերն էին՝ ցորեն և գարի գլխաւորապէս. ցանում էին և կարտոֆիլ, բայց քիչ, աւելի իրանց համար: Ունէին և պարտէզներ»[70]:

**Ջրամատակարարում.** 1905 թ. ուստա Ղատիմը քարե խողովակներով ջուր է հասցրել գյուղ, որի անբավարար լինելու պատճառով 50-55 տարի անց Մամիկոն Սիմոնյանի նախաձեռնությամբ Ճոպուռ տեղամասից ևս ջուր է հասցվել Սազել[71]:

**Դպրոց.** 1881 թ. թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոս Սազինյանցն Ախալցխայի ուսումնարանների տեսուչ Մովսես Սամուելյանցի հետ այցելում է Սազել և հաստատում բացվելիք կենտրոնական դպրոցի կանոնադրությունը[72]: Կրթօջախը, իրոք, բացվում է, բայց, անկասկած, նյութական սղության պատճառով կարճ ժամանակ անց փակվում է, քանի որ 1891 թ. ականատեսը նշել է, որ «...առաջ ունեցել են ուսումնարան, բայց իմ գնացած տարին չունէին»[73]:

1908 թ. դպրոցը հիշվում է ԿՀԲԸ-ից նպաստ ստացող կրթօջախների թվում[74]:

62 ՀԱԴ, ф. 56, ց. 18, 950, թ. 268-269:

63 ՀԱԴ, ф. 56, ց. 18, 1020, թ. 169-170: Այլ տեղեկագրի համաձայն՝ նույն թվականին Սազելն ուներ 426 բնակիչ (“Кавказский календарь на 1915 г.”, с. 176):

64 ՀԱԴ, ф. 196, ց. 1, գ. 43, թ. 16-17:

65 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 211:

66 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 141:

67 Ըստ գյուղապետարանի տվյալների:

68 Ըստ գյուղապետարանի լիազորված անձ Մարտուն Հարությունի Պետրոսյանի:

69 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 143-144:

70 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 326:

71 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 140:

72 «Մեղու Հայաստանի», 1881, № 232, էջ 1:

73 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 326:

74 «Նոր Դպրոց», 1908, № 3, էջ 85:







**Սազել. Երկրորդ աշխարհամարտում զոհված սազելցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը (լուս.՝ 1988 թ.)**

ԿՀԲԸ-ն, ի թիվս հայոց այլ դպրոցների, 1908/1909 ուստարվա համար Սազելի եկեղեցական-ծխական դպրոցին հատկացնում է 250 ռուբլի[75]:

Ստորև ներկայացնում ենք գյուղի դպրոցի մի քանի տարիների գործունեության համառոտ վիճակագրությունը.

| *տարեթիվ* | *այլ տեղեկ.* | *ուսուցիչ* | *աշակերտ* |
|---|---|---|---|
| 1882[76] | | 1 | 30 |
| 1909[77] | 3 բաժանմունք | 1 | 45 |
| 1910[78] | | 1 | 41 |
| 1911[79] | 3 բաժանմունք | 1 | 30 |

75 **Խուդոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 510:

76 ՀԱԴ, ф. 53, ց. 1, գ. 3874, թ. 105:

77 **Խուդոյան Ս.**, նույն տեղում:

78 ՀԱԴ, ф. 53, ց. 1, գ. 3917, թ. 35-36:

79 ՀԱԴ, ф. 35, ց. 1, գ. 682, թ. 57: Աշակերտները՝ միայն տղաներ:









**Սազել. Սբ. Խաչ եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից, արևելքից, հարավային ճակատից բացված մուտքը և կառուցման տարեթիվը (լուս.՝ 1988 թ.)**

1910 թ. վերոնշյալ ընկերությունը գյուղի դպրոցին է հատկացնում 200 ռ.[80]: 1916 թ. չէր գործում[81]:

1931/1932 ուստարում Սագելում բացվում է տարրական դպրոց (առաջին ուսուցիչներն էին Սիմոնյան Երվանդը և տիկին Արուսյակը): 1949-1970 թվականներին այն դառնում է ութամյա, իսկ 1971 թ.-ից առ այսօր՝ լրիվ միջնակարգ[82]:

1983 թ. գյուղի միջնակարգ դպրոցն ուներ 30 ուսուցիչ և 180 աշակերտ[83]:

1994/1995 ուստարում դպրոցն ուներ 20 ուսուցիչ և 124 աշակերտ[84], 2000/2001-ին սովորում էր 83, իսկ 2005/2006-ին՝ 44 աշակերտ[85]:

**Սբ. Խաչ եկեղեցի.** եկեղեցու կառուցման ստույգ ժամանակն անհայտ է: Առաջին վկայություններից մեկը՝ Սբ. Խաչ անվամբ, վերաբերում է 1839 թ.[86]:

Այդ անվամբ հիշվում է նաև 1840 թ.[87]:

1841-1842 թվականներին հիշվում է որպես փայտաշեն կառույց[88]: Միևնույն անվամբ եկեղեցու գոյությունը Սագելում վկայված է նաև 1846 թ. վավերագրերից մեկում[89]: 1863 թ. եկեղեցին դեռևս հիշվում է որպես փայտաշեն, իսկ 1885 և հետագա տարիներին՝ քարաշեն կառույց:

1872 թ. վերակառուցվում է[90]: 1909 թ. կազմված տեղեկագրի համաձայն՝ եկեղեցու ծածկերը քայքայված էին և նորոգության կարոտ. «...մեր գիւղի ս. Խաչ եկեղեցւոյ տանիքը հողածածկ լինելով՝ գերանները փթել են և կոտրատվել, ուստի ապագայում վտանգի առաջն առնելու համար, որոշել ենք տանիքը անել թիթեղեայ, պատերը փոքր ինչ բարձրացնելով»[91]: Տեղում կատարված քննությունը հաստատել է նորոգության անհրաժեշտությունը. «...ի պատճառս փտութեան յարկածածք գերանիցն կայր ի ծանրութենէ զարնանայինն անձրևաց դիպիլ իջանելն առաստաղին ամբողջովին»[92]:

1909 թ. ապրիլին կազմված նախահաշիվը ենթադրում էր մինչև 1115 ռուբլի ծախս[93], մինչդեռ նույն թվականի նոյեմբերի 21-ին ցույց տրված ամփոփագրից երևում է, որ նորոգություններն ամբողջացվել են 2238 ռ. 80 կոպ. ծախսով[94]:

1910 թ. եկեղեցին օծվում է Բարդուղիմեոս քահանայի գլխավորությամբ[95]:

80 «Հովիտ», 1910, № 34, էջ 543:
81 «Համբաւաբեր», 1916, № 24, էջ 746:
82 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 142:
83 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 211:
84 **Մաթևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 124:
85 Նշվ. աշխ., էջ 144:
86 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 457, թ. 44:
87 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:
88 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3802, թ. 66-67 և գ. 3805, թ. 76-77:
89 ՀԱԴ, ֆ. 56, ց. 4, գ. 1100, թ. 114:
90 **Հարություն Հովնաթան**, Նոր մատուռ Սագելում, «Վրաստան», 1998, № 69-70, 28 օգոստոս, էջ 7:
91 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 1295, թ. 14:
92 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 1295, թ. 13:
93 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 1295, թ. 12:
94 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 1295, թ. 17:
95 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 140:





**Սագել. Սբ. Խաչ եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք և հատակագիծը (չափ.՝ Ս. Յակոբյանի, 2007 թ.)**

1936 թ.-ից փակվում է, իսկ եկեղեցական իրերը՝ սրբապատկերներ, բուրվառներ, քահանաների զգեստներ, թասեր և այլն, բռնագրավվում է պետության կողմից և անվերադարձ անհետանում: 1988 թ. վերանորոգվում է և գործում է առ այսօր[96]:

Եկեղեցին հարավային ճակատից բացված միակ մուտքով, անսյուն, զույգ ավանդատներով, 13,10 x 8,48 մ արտաքին չափերով քարաշեն կառույց է:

**Ձեռագրեր.** 1826-1841 թվականների ընթացքում գրիչ և ստացող Մարտիրոս Տեր-Նահապետյանցը կազմել է Ժողովածու[97]:

Եկեղեցում առ այսօր պահպանվում է Իլիջայից բերված 5 աղոթագիրք (մեկ Շարական, 2 հատ Գործք առաքելոց և 2 հատ Սաղմոս)[98]:

**Եկեղեցական իրեր.** 1837 թ. կազմվել է Սագելի Սբ. Գևորգ անունով հիշվող եկեղեցու շարժական գույքի ցուցակը, ըստ որի՝ այլ իրերի թվում եկեղեցում են պահվել ծիսական 5 գիրք (Ճաշոց, Ձայնքաղ շարական, Ժամագիրք, Մաշտոց և

96 Նույն տեղում:
97 ՑՁԲ, էջ 989, ձեռ. № 9771:
98 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 140:



**Սազել. Տեր-Նահապետյան տոհմին պատկանող արձանագիր տապանաքարեր Սբ. Խաչ եկեղեցու հարավային կողմում (լուս.՝ 2007 թ.)**

Խորհրդատետր), ինչպես նաև 50 մսխալ արժողության արծաթյա մեկ սկիհ և այլն[99]:

1908 թ. նորընտիր երեցփոխ Հարություն Պողոսյանին ստացագրով փոխանցվել է եկեղեցապատկան 69 անուն շարժական և անշարժ գույք[100]:

**Գտածո.** հողային աշխատանքների ժամանակ սազելցի Ղևոնդ Սիմոնյանը հայտնաբերել է կարասներ, որոնք պահվում են Ախալցխայի գավառագիտական թանգարանում[101], իսկ 1981 թ. Սազանաուրենց արտեր տեղամասում ջրատար առուներ անցկացնելիս Խաչատուր Քրդյանը հայտնաբերել է պղնձյա քառակուսի մի կնիք՝ հետևյալ հիշատակագրությամբ.

*Մանուկ աղա Գրիգորյան:*

*Հրատ.* **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 141:

99 ՀԱԳ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 133:

100 ՀԱԳ, ֆ. 53, ց. 1, գ. 1295, թ. 4-5:

101 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 211:



**Սազել. Սբ. Խաչ եկեղեցու հարավ-արևելյան կողմում գտնվող մենհիր (լուս.՝ 2007 թ.)**

**Ուխտատեղի.** Սբ. Խաչ եկեղեցուց քիչ հեռու՝ հարավարևելյան կողմում, գտնվում է մենհիր հիշեցնող մի ժայռազանգված, որի մոտ՝ նաև Թ-ԺԱ դարերին բնորոշ քառակող կոթողի պատվանդան: Վերջինիս արևմտահայաց երեսին բոլորաձև շրջանակի մեջ առնված հավասարաթև խաչի քանդակ է: Այս ամենի վրա կառուցվել է մատուռանման մի պարզ շինություն:

**Մատուռ.** 1990-ական թվականներին Սազելի տարածքում՝ Փոս արտեր տեղամասից հայտնաբերված և սուրբ համարված մի քարի վրա կառուցվել և սուրբ Հռիփսիմեի անվամբ է օծվել մի նոր մատուռ[102]:

**Քահանաներ.** *Մարտիրոս Տեր-Նահապետյանց.* քահանայագործել է մինչև իր մահը՝ 1844 թ. : 1826-1841 թվականներին հեղինակել է մի Ժողովածու (տե՛ս ձեռագրերի բաժնում): Թաղվել է եկեղեցու հարավային կողմում տարածված գերեզմանոցում: 1873 թ. հանգուցյալի կողքին ամփոփվել է նաև կինը՝ Վարդուհին.

Տապանաքար. գտնվում է եկեղեցու հարավային կողմում տարածված գերեզմանոցում, ուղղանկյունաձև, արևմտահայաց նեղ կողին՝ 7 տող, որոնցից սկզբի երկու տողերը՝ հողմահար.

*... /տին քաւար ...ա / տապան գերեզմանի Տ(է)ր / Մարտիրոս Տ(է)ր Նահապետ/եան տոհմի, որ փոխեցաւ / առ ա(ստուա)ծ Ք(րիստո)սի, 1844 ամի, / ի 1 հոկտեմբերի:*

*Հրատ.* առաջին անգամ:

Տապանաքար. գտնվում է եկեղեցու հարավային կողմում տարածված գերեզմանոցում, ուղղանկյունաձև, երեսին խաչաքանդակի տակ՝ 9 տող.

*1873, / այս տապան / եղեւլ հանգչի / տեար Վարդո/ւհոյ տիրամօրի / ըն[?] կողակցւ/ոյ տէր Մարտիրոսի / միովն առ ա(ստուա)ծ / փոխեց(ա)ւ, 6.10:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Հովհաննես Տեր-Մարտիրոսյան Տեր-Նահապետյանց.* հավանաբար քահանայագործել է հոր մահից հետո: Ծխատեր հովվի պաշտոնում հիշվում է 1876 թ.[103]: Քահանայագործել է մինչև մահը (1880): Թաղվել է եկեղեցու հարավային կողմում տարածված գերեզմանոցում:

Տապանաքար. գտնվում է եկեղեցու հարավային կողմում տարածված գերեզմանոցում՝ կից նախորդին, ուղղանկյունաձև, արևմտահայաց նեղ կողին՝ 7 տող.

*Աստ հանգչի մար/մին Յօվհաննէս / ք(ա)հ(ա)ն(այ)ի Տէր-Մարտիրո/սեան Տէր-Նահա/պետեանց, որ փո/խեցաւ առ Ք(րիստո)ս, / 1880.2.20:*

*Հրատ.* առաջին անգամ:

*Հարություն Տեր-Հովհաննիսյան Տեր-Նահապետյանց.* հիշվում է 1876 թ.[104]:

1891 թ. դրությամբ Սազելի քահանայի հովվության ներքո էին նաև Խակ, Ղուլալիս և Օրալ գյուղերը[105]:

*Բարդուղիմեոս քահանա Տեր-Հովհաննիսյան Տեր-Նահապետյանց.* հիշվում է 1902 թ. (ծնվ. 1844 թ., ձեռն. 1874-ի մարտի 11-ին)[106]: Հիշվում է նաև 1904-1909 թվականներին (հովվում էր նաև Օրալ և Ղուլալիս գյուղերի առաքելադավան հայ բնակչությանը)[107]:

1995 թ.-ից գյուղի հասարակության հոգևոր կարիքները բավարարում է *Գրիգոր վարդապետ Բալասանյանը* (հովվում էր նաև Փոքր Պամաճ և Օրալ գյուղերում)[108]:

102 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 139-140:

103 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 15:

104 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3868, թ. 15:

105 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 326:

106 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 9920, թ. 1: Տե՛ս նաև ֆ. 53, ց. 1, գ. 795, թ. 30, 66:

107 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 172: Տե՛ս նաև ֆ. 53, ց. 1, գ. 1295, թ. 18:

108 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 140:

# ՍՈՒԽԼԻՍ (ՍՈՒՖԼԻՍ)



**Սուխլիս (Սուֆլիս). ընդհանուր տեսքը հարավից (լուս.՝ 1988 թ.)**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 4 կմ արևմուտք՝ Փոցխով գետի աջակողմյան հյուսիսահայաց ձորակողերին, ծովի մակերևույթից 980-1050 մ բարձրության վրա. «Դիրքը՝ բարձր և քարքարոտ, ժայռերի տակին, ամֆիթէատրի ձևով շինւած, Փոցխով գետի աջ կողմը»[1], «...գիւղիս կռնակը բռնած են բլրակներ եւ ցած ու քարոտ լեռանց շարքեր, աջակողմը տարածուած է դաշտավայր մը որուն մէջտեղէն կը սողոսկի Կուրը...»[2]:

**Հաղորդակցության ուղիներ.** 1897 թ., ի պատիվ ռուս թագաժառանգ Գեորգի Ռոմանովի, կառուցվում է Մեծ թագավորական ճանապարհը, որը ձգվում է գյուղի դաշտերից մեկի միջով դեպի Աբասթուման[3]:

1 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 323:

2 **Քոսեան Յ.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 83:

3 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 127:

**Պատմություն.** 1850-ականներին գյուղը հիշվում է ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ծավալված մարտական գործողությունների առնչությամբ[4]:

ԺԹ դարավերջին ականատեսը նկատել է. «Երևում էր, որ մի ժամանակ բաւական մեծ գիւղ է

4 Կարապետ արքեպիսկոպոսի՝ 1853 թ. նոյեմբերի 4-ին Ախալցըխա քաղաքից գրած նամակում հիշվում է. «...և հրամայեաց նորին գերազանցութիւն Միլիցիայից դառնալ ի գիւղն Սուխլիս ի 29-ն այնր ամսոյ ի հասանել թշնամեաց մերոց ի Սուխլիս յիշատակեալ Միլիցիայի մեր պահպանէր զանցս գետոյն Փոցղովու մերձ կամրջին Սուխլիսու» (ԴՀՊ, ԺԳ, էջ 19-20): Կարապետ արքեպիսկոպոսի՝ 1853 թ. նոյեմբերի 16-ին Ախալցխայից գրած նամակում նոյեմբերի 14-ին տեղի ունեցած դեպքերի մասին նշվել է. «...պատշաճագոյն կարգադրութեամբ արձակեցան ի Սուխլիս ուր գտանիւր մեծ բանակն թշնամեաց մերոց...» (ԴՀՊ, ԺԳ, էջ 31): Տե՛ս նաև **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 35 (բնագրում՝ “...служило не раз операционным базисом при движении турок на Ахалцихе (в последний раз в 1854 г.)”):



**Սուխլիս (Սուֆլիս). ընդհանուր տեսքը արևելքից (լուս.՝ Ա. Շաղյանի, 1930-ական թթ.)**

եղել. մինչև անգամ, ինչպէս մեզ պատմեցին, այդտեղ տաճկաց փաշա է եղել նստելիս»[5]: Այս տեղեկությունը փաստվում է 1810 թ. վերաբերող մեկ այլ վկայության շնորհիվ. «...Սուփլիս գյուղում, որտեղ էր փաշայի քաղաքից դուրս գտնվող տունը...»[6]:

1890 թ., առաջնորդ և ուղեկից ունենալով ախալցըխացի պ. Մութաֆյանին, գյուղ է այցելում ֆրանսիացի հետազոտող տիկ. Շանթրը, որն իր ճամփորդական նոթերում տալիս է Սուխլիսի համառոտ նկարագրությունը. «Մենք ավարտեցինք մեր աշխատանքները (Ախալցիխեում), և պ. Մութաֆյանը մեզ ուղեկցեց Գիորկլիս գյուղ, որը գտնվում է Ախալցիխեից 3 վերստ հեռու: Այս գյուղը մասամբ բնակվեցված է մուսուլմաններով, մասամբ էլ՝ հայերով... Ախալցիխի շրջակայքը շատ հարուստ է այգիներով, որտեղ մասնավորապես հրաշալի խնձորներ են աճում: Գիորկլիս գյուղը կառուցված է Փոցխով գետից ոչ հեռու՝ դարավանդների վրա: Կիսով չափ թաղված լինելով կանաչի մեջ՝ այն հրաշագեղ տեսք ունի: Սա Ախալցիխեի բնակիչների սիրած զբոսավայրն է: Նրանք կիրակի օրերն ընտանիքով գալիս են այստեղ զվարճանալու»[7]:

**Կառուցապատում.** «Գիւղը կը բաժնուի երկու մասի՝ Վերի Սուխլիս եւ Վարի Սուխլիս անուններով, որոնք բաժնուած են իրարմէ ձորակով մը, որուն մէջէն կ’անցնի կարկաջասահ վտակ մը»[8]:

1893 թ. գյուղին տրված նկարագրականում նշվել է. «Դէպի Ախլցխա մեր ճամբուն վրայ, առաջին քաղաքը կամ մեծկակ գիւղը, որ տեսանք՝ Սուֆլիսն էր, որ գետին աջ եզերքին վրայ մրգաստաններուն մեջէն կը բարձրանայ... Սուֆլիսի ետին կը կանգնին լերկ լեռներ, տափարակ տանիքները, կարգով շարուած, հազիւ կը զանազանուէին գետնի հողէն, իսկ մինարէներու ուղղահայաց գիծերը հեռուէն կը նշմարուէին»[9]:

ԺԹ դարավերջին այցելուն նշել է. «Սուխլիս գիւղակը, ոչ հեռի Փոսքով–չայէ, աստիճանաձև շինուած է, և կիսով չափ դալարներու մէջ ծածկուած. շատ գեղեցիկ երևոյթ մ’ունի...»[10]:

**Բնակչություն.** համաձայն 1595 թ. օսմանյան կառավարության կազմած հարկացուցակի՝ Վերին Սուխլիսում հայ բնակիչներից հիշվում է Եղիայի որդի Կյուրիկեն[11]:

---

5 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 323:

6 Բնագրում՝ “...в дер. Суплиси, где был загородный пашинский дом...”, АКАК, том 4, Тифлис, 1870, с. 808.

7 Madame B. Chantre, նշվ. աշխ., էջ 344 (բնագրում՝ “Nos opétations termineés, M. Moutaffuian nous emmène à 3 verstes de là, visiter le village de Giorklis, habité en partie par des musulmans, en partie par les Arméniens...Les environs d’Akhaltzikh sont très
en partie par les Arméniens...Les environs d’Akhaltzikh sont très
riches en vergers, qui produisent notamment des pommes magnifiques. C’est le lieu de promenade favori des habitants d’Akhaltzikh, qui y viennent le dimanche prendre leurs ébats en famille.”):

8 **Քօսեան Յ.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 84:

9 **Լինչ Ֆ.**, նշվ. աշխ., էջ 25:

10 «Բազմավէպ», 1896, էջ 365:

11 გურჯისტანის ვილაიეთის დიდი დავტარი..., էջ 41:



**Սուխլիս (Սուֆլիս). ընդհանուր տեսքը արևելքից (լուս.՝ Ա. Շաղյանի, 1930-ական թթ.)**

Թեև հայտնի է, որ «Հայերը գաղթել են այդտեղ 30-ական թուերին, Արզրումի նահանգի մի քանի գիւղերից (Արծթեցիք, Հնձեցիք)[12], սակայն տակավին 1851 թ. Սուֆլիսը հիշվում է որպես հնամենի մզկիթով թաթարաբնակ մրգավետ գյուղ[13]:

Վերաբնակիչ հայերի թվաքանակը հասնում էր երկու տասնյակի[14]:

ԺԹ դարի վերջին ֆրանսիացի հետազոտող պ. Շանթրը նշել է. «...բնակիչներէն մաս մը թուրք են՝ մաս մ'ալ հայ»[15]:

Մինչև 1944 թ. գյուղի Վերին թաղը թուրքաբնակ էր. «Վերի Սուխլիսի բնակիչք են մահմետական եւ 45 տուն կը հաշուին»[16]:

**Ազգատոհմեր.** հայտնի են 1830 թ. Սուխլիսում հաստատված ազգատոհմերն իրենց ավագներով՝ Ահարոնենք՝ Ահարոն, Բաղչողլենք՝ Հովակիմ, Բայաղրենք՝ Ստեփան, Բրուդենք՝ Հովհաննես, Գորգիկենք՝ Գրիգոր, Դամուռչենք՝ Հարություն, Լորիկենք՝ Պողոս, Կակոյենք՝ Կիրակոս, Կնյազենք՝ Միքայել, Հաջի ամին՝ Կարապետ Երեզյան, Մաղաքենք՝ Մկրտիչ, Մարաբոնք՝ Պողոս, Նահապետենք՝ Սարգիս, Շահինենք՝ Գրիգոր, Պոզոյենք՝ Գրիգոր, Պոզոյենք՝ Խաչատուր, Սարուխանենք՝ Հովհաննես, Վարդապետենք՝ Աբրահամ և Քյոքյաչենք՝ Հարություն[17]:

*Վիճակագրություն.* ԺԹ-Ի դարերին վերաբերող տվյալների համադրումը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ արձանագրվել է բնակչության աներնդմեջ աճ: Դրական սույն ցուցանիշը բեկվել է սոսկ վերջին տարիներին ծայր առած և տակավին շարունակվող անհեռանկար և անխոհեմ արտագաղթի հետևանքով.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1884[18] | | | | 326 |
| 1891[19] | 44 | | | |
| 1901[20] | 67 | | | |
| 1908[21] | | | | 301 |

12 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 323: Արծաթի և Հինձք գյուղերի մասին տե՛ս սույն աշխ., էջ 201, № 4 և էջ 212, № 9 ծանոթագրությունները:

13 **Персваленко В.**, նշվ. հոդվ., էջ 290:

14 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 128:

15 «Բազմավէպ», 1896, էջ 365:

16 **Քօսեան Յ.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 84:

17 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 128:

18 “Кавказский календарь на 1886 г.”, с. 154. Տե՛ս նաև «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

19 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 323: Ըստ որում, «Պաշտօնապէս նրանք 44 տուն հայ էին, բայց իսկական գիւղի հաշւով նրանց տների թիւը 55-ի էր հասնում. բոլորն էլ կաթոլիկ: Հայերի հետ համարեա միատեղ միևնոյն գիւղում մնում էին և 39 տուն թուրքեր, որոնցից 6 տունը բոլորովին գիւղի մէջ, հայերին մօտիկ, իսկ 33 տունը գիւղից մի քիչ դուրս, 1/2 վերստաչափ հեռու, ճանապարհի վրայ» (**Մուրատեանց Յ.**, նույն տեղում):

20 **Քօսեան Յ.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 84:

21 “Кавказский календарь на 1910 г.”, с. 370. Հարկ է նշել, որ համադրելով աղյուսակում առկա բնակչության թվաքանակի փոփոխությունները՝ սույն տեղեկությունը թվում է ոչ այնքան հավաստի:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1913[22] | 105 | 336 | 307 | 643 |
| 1914[23] | | | | 733 |
| 1915[24] | | | | 675 |
| 1916[25] | 110 | 400 | 317 | 717 |
| 1983[26] | 540 | | | 1800 |
| 1995[27] | 540 | | | 2000 |
| 2007[28] | 450 | 800 | 920 | 1720 |

**Երկրորդ աշխարհամարտ.** պատերազմին մասնակից 238 սուխլիսցիներից զոհվել է 72 հոգի[29]: Ի հիշատակ Երկրորդ աշխարհամարտում զոհված համագյուղացիների՝ Սուխլիս-Ախալցխա ճանապարհին 1978 թ. կառուցվել է հուշարձան-կոթող (ճարտ.՝ Գ. Թամանյան, քանդակագործ՝ Դանիելյան):

**Տնտեսություն.** Սուխլիսը գավառի առավել սակավահող գյուղերից էր: Եղածի մի նշանակալի մասն էլ կալվածատիրական էր. «Հողից շատ գանգատում էին, հողային խնդիրը նրանց մոտ վատ վիճակի մէջ էր. հող քիչ ունէին. իրանց ասելով՝ տան գլուխ մօտաւորապէս մինչև 1,5 դեսեատին: Հողերի մի մասը պետական, երեք մասը կալւածական. կալւածատէրերը հայ կաթոլիկներն էին: ...Ապօտատեղ հօ իսկի չկար համարեա, եթէ չհաշւենք գիւղի յետևն ընկած ժայռերը, որ համարեա չոր ու մերկ քարեր էին...: Գլխաւոր բերքերն էին ցորեն, գարի, սիմինդր, «քիւշնա», վերջինս աւելի անասուններին և մասամբ իրանց ուտելու համար: Հնդեղէններից աւելի շատ ցանում էին ոսպ: Հացաբոյսերից ցորենը աւելի գործածական էր իրանց համար. իսկ սիմինդրը ծախելու համար էր. ծախելիս են եղել աւելի թուրքերի վրայ, որոնք հայերից աւելի են սիմինդրը գործածում: ...բնակիչներից մօտ 10 հոգի միայն ունէին իրանց համար սեփական պարտէզ. գետափի մնացած բոլոր պարտէզները կալւածատէրերին էին: Մեղւապահութիւնը շատ տարածուած էր նրանց մէջ. 40 փեթակից աւելի ունեցող չկար. սովորաբար պահելիս են եղել 20-30 փեթակ: Մեղրը ծախելիս են եղել քաղաքում և գիւղերում:

Արհեստներից ամենից աւելի տարածուած էր նրանց մէջ կաւէ ամաններ շինելը: Բրուտները գլխաւորապէս կանայք են: Շատ քիչ պարապում էին և կտաւագործութիւնով (շալւար, կտաւ), բայց մեծ մասը քաղաքից էին առնում»[30]:

**Ջրամատակարարում.** 1930 թ. գյուղի հասարակության ջանքերով անցկացվել է 6 կմ երկարությամբ կավե խողովակաշար, որի շնորհիվ գյուղն ապահովվել է ջրով[31]:

22 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:
23 “Кавказский календарь на 1915 г.”, с. 184.
24 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 78:
25 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 30-31:
26 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 215:
27 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 129:
28 Ըստ գյուղապետարանի տվյալների:
29 Ըստ Խնկիանոս Արսենյանի:
30 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 324:
31 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 129:



**Սուխլիս (Սուֆլիս). Երկրորդ աշխարհամարտում զոհված սուխլիսցիների հիշատակը հավերժացնող հուշահամալիրը (լուս.՝ 1988 թ.)**



**Սուխլիս (Սուֆլիս). եկեղեցամերձ թաղը հարավ-արևելքից (լուս.՝ 1988 թ.)**

**Դպրոց.** նոր եկեղեցու կառուցումից (1900 թ.) հետո նրան գրեթե կից գտնվող հին եկեղեցու շենքը ծառայում է որպես դպրոց:

Երկամյա դպրոցի առաջին ուսուցիչը եղել է Արիստակես Շահանյանցը: Դպրոցում հիմնականում ուսուցանվել են կրոն, եկեղեցական շարականներ և այլն: 1910 թ. գյուղացիների ցանկությամբ բացված նոր դասարանում դասավանդվել է նաև մայրենի լեզու:

1916 թ. գործել է 50 աշակերտով (միայն տղաներ), ուներ 2 ուսուցիչ[32]: Կրոնուսույցն էր ժողովրդապետ Սիմեոն Դևոնյանը:

1932 թ. եկեղեցու նախկին օժանդակ կառույցում և վարձու մի սենյակում գործել է տարրական (քառամյա) դպրոց՝ 50-60 աշակերտով և 6 ուսուցչով, 1937/1938 ուստարում բացվել է հինգերորդ դասարանը, 1940 թ. դարձել է յոթնամյա[33]:

1970-ական թվականների սկզբներին դպրոցում սովորում էր շուրջ 250 աշակերտ:

1983 թ. դպրոցն ուներ 25 ուսուցիչ և 350 աշակերտ[34]:

Տակավին 1988 թ. ուսումնառությունն ընթանում էր առանց դպրոցական շենքի գոյության: Արցախյան ազատամարտի և ազգային համընդհանուր զարթոնքի ազդեցության ներքո 1988/1989 ուստարում դպրոցի աշակերտության թվաքանակը, ի հաշիվ այլուր, մասնավորապես Ախալցխայի ռուսական դպրոցներ այլևս չհաճախող դպրոցականների, գրեթե կրկնապատկվում է (նախքան այդ ուներ 130 աշակերտ):

Սուխլիսցիներին խիստ մտահոգում էր դպրոցի նոր շենքի խնդիրը, քանի որ 1950 թ. կառուցված շենքն այլևս պիտանի չէր մանուկների ուսուցման համար: Այդ հարցը լուծվում է հարևան գյուղի՝ Ծղալթբիլայի բնակիչ Լեոնիդ Սարգսի Գոգոլյանի մեկենասության և շինարարությամբ մեծապես օժանդակած սուխլիսցիների շնորհիվ: Նախատեսվում է կառուցել երկհարկանի, 20 դասարանով, 264 աշակերտական տեղով և կից մարզական համալիրով դպրոցի շենք:

2005 թ. հոկտեմբերի 20-ին տեղի է ունենում դպրոցի հիմնարկեքի (մասնակցում են Լ. Գոգոլյանը, պատգամավորներ Վան Բայբուրդյանն ու Նուգզար Պարոնաշվիլին, նահանգապետ Գ. Խաչիձեն, Հարավային Ռուսաստանում Հայաստանի հյուպատոս Արարատ Գոմցյանը և այլք)[35], իսկ մեկ տարի անց՝ հոկտեմբերի 1-ին, բացման հանդիսավոր արարողությունը:

1994/1995 ուստարում դպրոցն ուներ 289 աշակերտ և 30 ուսուցիչ[36], 2000/2001-ին՝ 237, 2005/2006-ին՝ 173[37], իսկ 2006/2007-ին՝ 164 աշակերտ:

**Սբ. Աստվածածին եկեղեցի.** տակավին 1840 թ. գյուղում հաստատված հայ կաթողիկեները եկեղեցի չունեին, ուստի աստվածապաշտական արարողությունները կատարում էին նույն թվականին գնված մի մասնավոր տան մեջ. «Սիղլիս գեղն եղեալ թագաւորական տունը առի ես՝ Խնկօ Ռափայէլովս քաան մանէթ քառսուն զարէք արծաթ փողով...»[38]:

Եկեղեցու նախնական շենքի կառուցումը, սակայն, իրականացվում է միայն 3 տարի անց. «...յանունն Աստուածամօր, քարաշէն, 1843 թ.»[39]: «Եկեղեցին կառուցուած է հնագոյն եկեղեցւոյն տեղ, տներու վերին կողմը, քարաշէն եւ հաստատուն...»[40]:

Եկեղեցու մուտքին՝ մարմարե սալիկին արձանագրված է.

*Կառուցաւ եկեղեցիս | հայ կաթոլիկաց, յանի/ունն անարատ յղու(թ)ե(ան) ս. | Ա(ստուա)ծածնի գումարաւ հի/րով եւ աշխատութեամբ Ս(ուֆլիս) գ(իւղի) |*

32 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 30-31:
33 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 132:
34 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 215:
35 **Քոչյան Մ.**, Օրինյալ լինի սկիզբը, «Ասպնջակ», 2005, № 10, էջ 18:
36 **Մաթևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 124:
37 Նշվ. աշխ., էջ 144:
38 ՎԱԴ, ֆ. 1105, ց. 1, գ. 396, թ. 6:
39 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:
40 **Քոսեան Յ.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 84:








**Սուխլիս (Սուֆլիս). Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը հարավ-արևելքից, հարավից, հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից և մկրտարանի ավազան (լուս.՝ 1988 թ.)**



**Սուխլիս (Սուֆլիս). հատվածներ Սբ. Աստվածածին եկեղեցու հարավային և արևելյան ճակատներից, հարավային մուտքին ագուցված շինարարական արձանագրությունը, մկրտարանի ավազանը և ներքին տեսքը դեպի արևմուտք (լուս.՝ 2007 թ.)**

*ժողովրդոց, սկիզբն շի/նութեան ի 1892 եւ ա/ւարտ 25.3.1900:*

*Հրատ.* **Քօսեան Յ.**, «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 84:

Հաջի ամին և իր կինը՝ Զմրուխտը, Հինձքից իրենց հետ կարողացել են բերել եկեղեցու զանգը, որն էլ, որպես այդպիսին, ծառայել է բավական երկար և միայն ճաքելուց ու նորոգվելուց հետո դադարել է ղողանջել[41]:

Եկեղեցին վերանորոգվել է 1990 թ. ազգությամբ լեհ Հովսեփ վարդապետ Կորնաշևսկու հովվության օրոք[42]:



**Սուխլիս (Սուֆլիս). Սբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Յակոբյանի, 2007 թ.)**

41 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 129:

42 Օրացոյց հայ կաթողիկէ եկեղեցու. Հայաստան-Վրաստան, 2000, Գիւմրի, 1999: Ի դեպ, Օրացոյց եւ պատկեր տօնից տարեգրքում (Թիֆլիս, 1916, էջ 78) եկեղեցու նորոգության ավարտի թվականը (1900 թ.) սխալմամբ վերագրվել է կառուցմանը:



**Սուխլիս (Սուֆլիս). Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցման նախագիծը (բնօրինակը պահվում է եկեղեցում, լուս.՝ 2007 թ.)**

**Եկեղեցական իրեր.** 1901 թ. ականատեսը եկեղեցապատկան իրերից գրի է առել հետևյալ արձանագրությունները[43].

*Յիշատակ է սաղավարդս դարբին Պօղոսի եւ որդոցն՝ Խչոյի եւ Մկրտչի սուրբ եկեղեցուն Աստուածածնօր անարատ յղութեանն 1852 ի գիւղն Սուխլիսու:*

*Յիշատակ է ճառագայթս Սիխլիսույ Աստուածածնօր եկեղեցւոյն այրի Թագուհինի եւ եղբօրն՝ Մկրտչի Նալպանտենցի 1868ին:*

*Յիշատակ է սկիհս այս Սրբուհին Կարապետե(ա)նի եւ Մարիամ Քէրոբե(ա)նին ի գիւղն Սիխլիս Աստուածածնօր եկեղեցւոյ 1871 ամի:*

**Ձեռագիր.** 1890 թ. գրիչ Սիմեոն Մանասյանն ընդօրինակել է ԺԸ դարի մի Մաշտոց[44]:

**Քահանա.** 1891 թ. Սուխլիսն ուներ 1 վարդապետ[45]:

Մինչ 1898 թ. գյուղում քահանայագործել է *Արիստակես Հովակիմյան Շահնյանցը* (1820-1898 թթ.): Ժողովուրդը վկայում է, որ նա եղել է գյուղի առաջին հովվապետը[46]: Թաղված է եկեղեցու հարավային պատին կից: Տապանաքարը տեղադրվել է ավելի ուշ, և 7 տողով փորագրվել է հետևյալ արձանագրությունը.

*Աստ հանգչի շիրիմն / վարդապետ տեր / Արիստակես / Հովակիմի / Շահնյան, / ծ. 1820-1898 վ.: / Սիմոն Հովակիմյանից:*

1901 թ. հիշվում է «ալեզարդ քահանայ մը՝ Տէր Միքայէլ Աբրահամեան»[47]: Ի դեպ, այս հոգևորականի մարմինն ամփոփվել է նորաշեն եկեղեցու հարավային պատին կից: Ավելի ուշ զետեղված տապանաքարին արձանագրված է.

*Աստ հանգչի շիրիմն / վարդապետ / տէր Միքայել Աբրահամի / Աբրահամյանի / ծնված 1820 թ., վախճանված 1904 թ. / ..., ի գյուղն Սուխլիս 1862 թ.:*

1916 թ. դրությամբ ժողովրդապետ է եղել *Սիմեոն Ղևոնդյանը*[48]:

1925-1927 թվականներին քահանայագործել է հայր *Ղևոնդ Մովսիսյանը* (1896-1979 թթ.): Շիրմաքարին 13 տողով հետագայում արձանագրվել է.

43 **Քօսեան Յ.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 84:

44 ՑՁԲ, էջ 1050, ձեռ. 10114:

45 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 325:

46 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 129:

47 **Քօսեան Յ.**, նշվ. հոդվ., «Հանդէս Ամսօրեայ», 1902, մարտ, էջ 84:

48 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիս, 1916, էջ 78:














**Սուխլիս (Սուֆլիս). Հոգևորականների արձանագիր շիրմաքարեր Սբ. Աստվածածին եկեղեցու բակում (լուս.՝ 2007 թ.)**

*Ի հիշատակ / հայր վարդապետ / Ղեվոնդ Գ. / Մովսեսյանի, / Սուֆլիս 1896, / ձեռնադրվեց / քահանայ՝ 1919 / Վիեննա, / թաղվեց 1983:/ Հանգիստ / յավիտենական / պարգեւեա / նմա տեր:*

Հիշվում է նաև քահանա *Մկրտիչ Պողոյանը* (1872-1935 թթ.): Ավելի ուշ շիրմաքարին արձանագրվել է.

*Աստ հանգչի ոսկերս քահանա / տէր Մկրտիչ Պօզոյան, / 1872-1935, եթէ ոչ հատէ ցորենայ անկեալ երկիր / մեռանիցի ինքն միայն կայ, ապա / եթէ մեռանիցի բազում արդիւնս աղցէ / յիշատակ Խաչատուրից եւ / Վերոնիքայից:*

1980-1994 թվականներին հովվել է *Հովսեփ (Իոսիֆ) վարդապետ Կորնաշևսկին*: Ծնվել է Լատվիայի Դաուգավասպիլս քաղաքում, ուսանել Ռիգայի հոգևոր սեմինարիայում: Թբիլիսիում և Մերձբալթյան երկրներում հովվելուց հետո 1982 թ.-ից ծառայության է անցել Սուխլիսի եկեղեցում[49]:

1994 թ. մարտ ամսից մինչև 2003 թ. գյուղին հովվում էր ծնունդով սիրիացի *Էմմանուել ծայրագույն վարդապետ Տապպաղյանը*, որը պատարագ էր մատուցում նաև Աբաթխև, Ղուլալիս, Ծինուբան և Նաոխրեբ գյուղերում:

Էմմանուել վարդապետին հաջորդել է հայր *Անատոլի վարդապետը*, որը հովվել է մինչև 2006 թ.:

2006 թ.-ից գյուղին ժամանակավորապես հովվում է հայր *Գրիգոր վարդապետ Միքայելյանը*:

**Մզկիթ.** «...նոյնպես Հաջի Ահմեդ փաշայի կառուցած մզկիթն ու մինարեն լավագույնն են գավառում»[50]:

ԺԹ դարավերջին գյուղում տակավին կանգուն էր մզկիթը. «Անցած փառքի մնացորդներից մինչև այսօր էլ վկայ է մնացել գիւղի կիսաւէր, բայց փառաւոր ու կամարակապ մզկիթը՝ լուսինը վրան»[51]: Մոտավորապես նույն տարիներին գյուղ այցելած ֆրանսիացի հետազոտող պ. Շանթրը նշել է. «Կայ հոն մզկիթ մի, որ ներկայապէս նորոգութեան մէջ է»[52]:

Մզկիթի տեղում կառուցվել է եկեղեցուն կից օժանդակ շինություն:

**Կամուրջ.** կառուցվել է 1898 թ. Փոցխով գետի վրա[53]:

1991 թ. Սուխլիսի դպրոցի տնօրեն Խ. Արսենյանի ջանքերով և ինժ. Ավթանդիլ Տապատաձեի օգնությամբ Փոցխով գետի վրա կառուցվում է կախովի կամուրջ՝ դաշտավայրեր ու արոտավայրեր ավելի դյուրին և արագ հասնելու համար:

49 **Խաչվանքյան Վ.**, Եկեղեցին միշտ գործող է եղել, «Վրաստան», 28.03.1992, էջ 4:

50 **Загурский Л.**, նշվ. հոդվ., էջ 35 (բնագրում՝ "...мечеть и минарет, лучшие теперь в уезде, построенные тоже Хаджи-Ахмед-пашею"):

51 **Մուրատեանց Յ.**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1895, № 2, էջ 323:

52 «Բազմավէպ», 1896, էջ 365:

53 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 127:

# ՎԱԼԵ (ՎԱԼ, ՎԵԼ)



**Վալե. Սբ. Աստվածամոր եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ 2007 թ.)**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 10 կմ հարավ-արևմուտք՝ Փոցխով գետի աջ ափից 1 կմ հեռու, ծովի մակերևույթից 1120-1240 մ բարձրության վրա:

**Անվան ծագում.** «...ըստ տեղական աւանդութեան՝ գիւղանունը ծագել է հայերէն վարել բառի աղաւաղումից»[1]:

**Վարչական.** 1962 թ. ստացել է քաղաքի կարգավիճակ:

**Պատմություն.** ավանդաբար պատմում են, որ «Նախնիքը գաղթել են Գորի քաղաքից, իսկ վերջինս, ինչպէս յայտնի է Մաթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւնից», հիմնադրել է Թամար թագուհին Անիից գաղթած հայերի համար: Նշանակում է Վալէի հայերը հին անեցիների շառաւիղներն են»[2]:

1853 թ. Վալեն հիշվում է ռուս-թուրքական պատերազմի առնչությամբ. «...մինչ ի 28-ն Հոկտեմբերի նոքա յարձակեցան ի Վալայ...»[3]:

1918 թ. մայիսի 23-ին վալեցիներին հաջողվում է ետ մղել թուրքերի հարձակումները[4]:

**Բնակչություն.** համաձայն 1595 թ. օսմանյան կառավարության կազմած հարկացուցակի՝ Վալեն ուներ նաև որոշ թվով հայ բնակիչ: Դա երևում է ցանկում առկա հետևյալ անձնանուններից՝ Փասիայի որդի Վարձել, նրա որդի Սարգիս, Աբրահամի որդի Կյուրիկե և այլն[5]:

Վալեում հայ բնակչության առկայությունը վկայված է նաև ԺԸ դարի երկրորդ կեսի մի շարք վավերագրերում. «Չիլէնց Գասպարի զուստր Էլիզ-

1 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 87:
2 Նշվ. աշխ., էջ 87:

3 ԴՀՊ, ԺԳ, էջ 19:
4 «Շարժում», 1918, № 30, էջ 2:
5 გურჯისტანის ვილაიეთის დიდი დავტარი..., էջ 25:

պ(ա)րը մկրտեցի 1768 եւ ապրիլի 18-ին. կնքահայր վալէցի Պէտրէն Մելիքեանց»[6]:

«1769 եւ յունիսի 21-ին մկրտեցի Գասպարի Ստեբանը, որ էր կնքահայրը մամասախլիս Պէտրէն»[7]:

«Թուին 1770 եւ սեպտեմբերի ԺԲ (12)-ին վալեցի դուրգար Օհաննեսի ... մկրտեցի, որ էր կնքահայր արալցի դերձակ Օհաննէս»[8]:

1851 թ. Վալեի բնակիչներ են հիշվում վրացիները, կաթողիկեները և թաթարները[9]: Վերջիններս Վալեում շարունակել են բնակվել մինչև 1944 թ. աքսորը:

*Վիճակագրություն.* առկա տվյալները ցույց են տալիս, որ ԺԹ դարում և մինչև Ի դարի սկզբները Վալեի հայ բնակչության թվաքանակն անընդհատ աճել է.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1824[10] | 26 | | | 202 |
| 1884[11] | | | | 509 |
| 1913[12] | 128 | 539 | 515 | 1054 |
| 1915[13] | | | | 1070 |
| 1916[14] | 148 | 510 | 487 | 997 |
| 1979[15] | | | | 1782 |

**Դպրոց.** 1916 թ. գործում էր 116 աշակերտով (60-ը՝ աղջիկ)[16]: Կրոնուսույցն էր ժողովրդապետ տեր Սերովբե Սերաքաշվիլին:

Հայկական դպրոցը բացվել է 1959/1960 ուսումնական տարում:

1978 թ. Վալեում գործում էր 3 միջնակարգ դպրոց՝ հայկական (ուներ 45 ուսուցիչ և 262 աշակերտ), վրացական և ռուսական, ինչպես նաև մեկ ութամյա և մեկ գիշերային դպրոց[17]:

1994/1995 Վալեի հայկական թիվ 3 դպրոցն ուներ 30 ուսուցիչ և 104 աշակերտ[18], 2000/2001-ին՝ 53, իսկ 2005/2006-ին՝ 87 աշակերտ[19]:

Ինչ վերաբերում է Վալեի իննամյա դպրոցին, ապա 1994/1995 ուստարում այս դպրոցն ուներ 22 ուսուցիչ և 85 աշակերտ[20], 2000/2001-ին՝ 53, իսկ 2005/2006-ին՝ 21 աշակերտ[21]:

**Սբ. Աստվածամայր եկեղեցի.** «Յանուն Աստուածամօր, քարաշէն, 1862 թ.»[22]: Այլ տեղեկագրի համաձայն՝ եկեղեցին կառուցվել է 1879 թ. «Ժողովրդապետական քարաշէն եկեղեցի, յանուն ս. Աստուածամօր, 1879 ամի, ծախիւք ծխականաց»[23]:

Եկեղեցու հարավային ճակատից բացված մուտքի բարավորին արձանագրված է.





**Վալե. Սբ. Աստվածամոր եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից և ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ 2007 թ.)**

6 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 91:
7 Նույն տեղում:
8 Նշվ. աշխ., էջ 92:
9 **Перcваленко В.**, նշվ. հոդվ., էջ 288:
10 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ., էջ 82 (ցույց է տրված միայն հայ կաթողիկեների թվաքանակը):
11 «Արձագանք», 1885, № 26, էջ 368 (ցույց է տրված միայն հայ կաթողիկեների թվաքանակը):
12 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9 (վավերագրում ցույց է տրված միայն հայ կաթողիկեների թվաքանակը):
13 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 79:
14 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 31 (վավերագրում ցույց է տրված միայն հայ կաթողիկեների թվաքանակը):
15 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 228: Ի դեպ, 1979 թ., 1782 շունչ հայերից զատ, Վալեն ուներ նաև 3821 վրացի, 481 ռուս և 134 այլազգի բնակչություն, ընդամենը՝ 850 տուն:
16 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 31:
17 **Դավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 228-229:
18 **Մաթևոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 124:
19 Նշվ. աշխ., էջ 144:

20 Նշվ. աշխ., էջ 124:
21 Նշվ. աշխ., էջ 144:
22 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:
23 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիս, 1916, էջ 79:



**Վալե. Սբ. Աստվածամոր եկեղեցու՝ վրացերենով փորագրված շինարարական արձանագրությունը, հյուսիսային պատի մեջ գտնվող մկրտարանի ավազանը, ներքին տեսքը դեպի արևմուտք և եկեղեցածև տապանաքարեր եկեղեցու հարավակողմում (լուս.՝ 2007 թ.)**

10. 1. 1862:

აღგენდა ეკვლესია ესე ჴ(მიდ)ა ღ(ვ)თის მშობლის სა|ხელობასა ზედა, რომელთა იშრომეს ამის აღგენე|ნებასა ზ(ედ)ა ღ(მერ)თ(მ)ა საუკუნო დიდება დაუმკვიდროს მათ | კათოლიკეთა ეკლესია არის

*Թարգմ.* Կառուցվեց այս եկեղեցին հանուն Սուրբ Աստվածածնի. Հռոմեական [կաթոլիկները] աշխատեցին սրա կառուցման վրա. Աստված նրանց հավիտենական փառքը պարգևի. Սա կաթոլիկների եկեղեցին է:

*Ծանոթ.* արձանագրության ներքո շեշտված բառերում առկա տառերի շփոթն (აღგენდა և აღგენე|ნებასა) ամենայն հավանականությամբ արդյունք է փորագրողի վրացերենի թերի իմացության, քանի որ քերականորեն սպասելի էին (აღშენდა և აღშენე|ნებასა) ձևերը:

**Քահանա.** 1916 թ. հիշվում է ժողովրդապետ տեր Սերովբե Սերաբաշվիլին[24]:

24 Նույն տեղում:

# ՈՒՂԵ



**Ուղե. ընդհանուր տեսքը արևելքից (լուս.՝ 2007 թ.)**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 17 կմ արևմուտք՝ Փոցխով գետի ձախ վտակ Քոբլիանի աջակողմում, ծովի մակերևույթից 1070-1260 մ բարձրության վրա:

**Պատմություն.** դատելով եկեղեցու շրջապարըսպի մեջ ագուցված ԺԴ-ԺԶ դարերին վերաբերող մի քանի խաչքարերի առկայությունից, որոնք փաստում են տեղում, ըստ ամենայնի՝ վերակառուցման արդյունքում անհետացված հին եկեղեցու շուրջ տարածված հայկական (առաքելադավան հայերի) գերեզմանոցի գոյությունը նշյալ ժամանակաշրջանում, կարելի է եզրակացնել, որ նշյալ ժամանակաշրջանում գյուղն ունեցել է նաև առաքելադավան հայ բնակչություն[1]:

1 Հայտնի է, որ հայ կաթոլիկները շարունակում էին կերտել նույնպիսի խաչքարեր, ինչպիսիք, սկսած Ը-Թ դարերից, կերտում էին նրանց առաքելադավան ազգակիցները, ուստի Ուղեում պահպանված խաչքարերն այս իմաստով հավելյալ լույս չեն սփռում տեղի հայերի կաթոլիկե դառնալու ժամանակաշրջանը որոշելու խնդրում:

**Բնակչություն.** համաձայն 1595 թ. օսմանյան կառավարության կազմած հարկացուցակի՝ Ուղեն ունեցել է նաև որոշ թվով հայ բնակիչ: Դա երևում է ցանկում առկա հետևյալ անձնանուններից՝ Սավի որդի Աստվածատուր, Զատիկի որդի Գրիգոր, նրա որդի Ազար, նրա եղբայր Անանիա, Շահմիրանի որդի Մանվել, Ազարի որդի տեր Հակոբ, նրա եղբայր Անանիա, Էմանեթի որդի Աստվածատուր, Աղդարի որդի Աստվածատուր, նրա եղբայր Խաչատուր, Ատոյի որդի Աստվածատուր և այլն[2]:

Ուղեցի հայերի մասին գրավոր հիշատակություններ ունենք նաև ԺԸ դարի երկրորդ կեսից. «Ի թուին Քրիստոսի 1762 եւ դեկտեմբերի 16 մկրտեցի ուղեցի Պօղոսի զուստրըն Յակօբն, որ էր կնքահայր բիթլիզցի Օվանէսըն»[3], նաև «Ի թուին 1767 եւ օգոստոսի 12-ին մկրտեցի ուղեցի բառբար Մարտի-

2 გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი..., էջ 55-56:
3 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ, էջ 91:



**Ուղե. Սբ. Աստվածամայր եկեղեցին վերակառուցման ընթացքում (լուս.՝ 1912 թ.)**

րոգի զուստրը՝ Պետրոսը, որ էր կնքահայր ժամկոչ «Պ(էտ)րէն»[4]:

1879 թ. Ուղեն հիշվում է որպես զուտ հայ կաթոլիկներով բնակեցված գյուղ[5]:

*Վիճակագրություն.* ուղեաբնակ հայ կաթողիկե բնակչության թվաքանակին առնչվող ԺԹ-Ի դարերի վիճակագրական սուղ տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1824[6] | 65 | | | 320 |
| 1884[7] | | | | 964 |
| 1913[8] | 273 | 1200 | 1055 | 2255 |
| 1915[9] | | | | 2220 |
| 1916[10] | 309 | 1293 | 1146 | 2439 |

**Դպրոց.** 1916 թ. 45 աշակերտով (միայն տղաներ)[11] գործել է նախարարարական դպրոցը:

**Սբ. Աստվածամայր եկեղեցի.** քարաշեն այս եկեղեցու հիմնադրման ստույգ ժամանակն անհայտ է: 2007 թ. երջանիկ պատահականությամբ պահպանված արձանագրությունից հայտնի դարձավ եկեղեցու՝ 1842 թ. իրականացված մեզ հայտնի առաջին նորոգության մանրամասները:

Եկեղեցու երեսապատի սրբատաշ քար, չափերը՝ 49 x 26 սմ, 4 տող.

*Նորոգեցաւ այս եկե/ղեցի ծախիւք Պետրոսի / Միրաբովին, յամի տեառն 1842: / Տ(է)ր Մխ(իթար):*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. 1990-ական թվականներին տեղի ունեցած վերանորոգման ժամանակ սույն արձանագրությունը, ըստ էության, սոսկ հայերեն լինելու պատճառով որմից հանել և դեն էին շպրտել: 2007 թ. հունիսին ճարտարապետական այլ մանրամասների հետ մեկտեղ (օրինակ՝ մկրտարանի ավազանը) երեսապատի քառատող արձանագրությամբ այս քարը պատահաբար գտանք եկեղեցու հարավային կողմում գտնվող կիսավեր շինության մեջ:

Հասարակության միջոցներով եկեղեցին հիմնավոր վերակառուցվել է 1860 թ.[12]: Վերակառուցումներ տեղի են ունեցել նաև 1894[13] և 1905 թվականներին[14]: Սակայն այլ տեղեկագրերից երևում է, որ վերջին վերակառուցումը տևել է նշյալ տարիների ողջ միջակայքում և դեռ ավելի երկար: 1898 թ. իշխանություններից ստացվել է հայ կաթողիկե նոր եկեղեցի կառուցելու թույլտվությունը[15], իսկ 1912 թ. վկայված է. «Ախալցխայի գաւառի Ուղէ

4 Նշվ. աշխ., էջ 92:
5 **Նիկողոսեան Գ.**, նշվ. հոդվ., «Մշակ», 1879, № 86, էջ 2:
6 **Յակոբեան Պ.**, նշվ. աշխ, էջ 82:
7 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:
8 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 26, թ. 9:
9 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 79:
10 Համաձայն մեկ այլ տեղեկագրի (Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիս, 1916, էջ 79)՝ նույն թվականին Ուղեն ուներ 2284 բնակիչ:
11 ՀԱԴ, ֆ. 316, ց. 1, գ. 65, թ. 31:
12 «Արձագանք», 1885, № 26, էջ 368: Տե՛ս նաև Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիս, 1916, էջ 79:
13 ՎԱԴ, ֆ. 204, ց. 1, գ. 957, թ. 1-61:
14 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիս, 1916, էջ 79:
15 «Նոր-Դար», 1898, № 196, էջ 1:













**Ուդե. Սբ. Աստվածամայր եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից, արևելքից, հյուսիս-արևմուտքից, հարավարևելյան անկյունը և գմբեթը (լուս.՝ 2007 թ.)**







**Ուղե. Սբ. Աստվածամայր եկեղեցու արևմտյան ճակատի վրացերեն արձանագրությունը, 1990-ական թթ. իրականացված նորոգությունների ընթացքում «ավելորդ» և «անպետք» նկատված ճարտարապետական բեկորներ նրանց մեջ և 1842 թ. իրականացված եկեղեցու նորոգության մասին պատմող հայերեն արձանագրությունը, երկատված մկրտարանի ավազանի բեկոր և հատված միջնադարյան հայկական խաչքարերով զարդարված եկեղեցու շրջապարսպից (լուս.՝ 2007 թ.)**

գիւղի բնակիչների լիազօրների խնդրանաց համաձայն Կովկասի փոխարքան թոյլ տուեց Կովկասեան երկրում, երկու տարվայ ընթացքում կամաւոր հանգանակութիւն կատարել, մինչև 6.000 րուբլի գումարի, յիշեալ գիւղում հայ-կաթօլիկաց եկեղեցի կառուցելու գործի համար»[16]:

16 «Մշակ», 1912, № 67: Տե՛ս նաև “Закавказье”, 1912, № 81, էջ 3:



**Ուդե. խաչքար (ԺԴ-ԺԶ դդ.) ագուցված Սբ. Աստվածամայր եկեղեցու շրջապարսպի մեջ (լուս.՝ 2007 թ.)**

Եկեղեցու արևմտյան ճակատին խաչաքանդակի թևերի միջև և ստորին մասում արդի վրացերեն գրչությամբ.

პაპი | პიო X | იეპისკოპ(ო)ზ | კესლერ |
უდის | მღვდ(ელი) | სიმონ

1901 წ. აჰშენდა 1909 წ. | სამც[ე-საატაბაგოს მესხ | ქართველებმა უდის | 272 მოსახ(ლეობა) კათოლიკებ შ(ეწევნით)ა

Թարգմ. 1901 թ. կառուցվեց 1909 թ. Սամցխե-Սաաթաբագոյի մեսխ վրացիները Ուդեի 272 կաթոլիկե բնակչի աջակցությամբ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. արձանագրության շարահյուսական շեղումները բնագրային են:

**Մատուռ Սբ. Գևորգ.** 1860 թ. հիշվում է Սբ. Աստվածամոր եկեղեցուն կից[17]: Մատուռի գոյությունը վկայված է նաև 1885 թ.[18]:

**Մատուռ Սբ. Սարգիս.** 1916 թ. հիշվում է «Գոյ նաև վաղեմի քարաշէն մատուռն յանուն ս. Սարգսի»[19]:

**Քահանա.** 1842 թ. Ուդեի հայ կաթոլիկե համայնքին հովվել է *տեր Մխիթարը*[20]:

1909 թ. հիշվում է հայ կաթոլիկե ծխատեր քահանա Ստանիսլավ Կաճկաճյանցը[21]:

1915 թ. հիշվում է Թովմաս Իգիթխանյանը՝ որպես «...ժողովրդապետ Ուդէ գեղջ հայ կաթողիկեայ ս. Աստուածամօր եկեղեցւոյ»[22]:

**Ձեռագիր.** հայտնի է, որ 1899 թ. փետրվարի 25-ին տիրացու Պողոս Թաքենովը (քահանա՝ Պողոս Թունաշվիլի) «...ի գիւղ Ուտէ» կազմել է 740 էջանոց Հայ-վրացերեն բառարան[23]:

17 «Արձագանք», 1885, № 26, էջ 368:

18 Նույն տեղում:

19 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիս, 1916, էջ 79:

20 Համաձայն եկեղեցու նորոգման արձանագրության:

21 “Кавказский календарь на 1909 г.”, с. 204.

22 Օրացոյց եւ պատկեր տօնից, Թիֆլիզ, 1915, էջ 70:

23 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. հոդվ., «Բանբեր Մատենադարանի», հ. 4, Երևան, 1958, էջ 404-405:

# ՕՐԱԼ



**Օրալ. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ 1988 թ.)**

**Տեղադրություն.** գտնվում է Ախալցխայից ուղիղ գծով 6 կմ հարավ-արևմուտք՝ հյուսիսարևմտահայաց մեղմ թեքություն ունեցող սարահարթին, ծովի մակերևույթից 1300-1360 մ բարձրության վրա:

**Բնակչություն.** գյուղի ներկայիս բնակիչների նախնիները սերում են Բարձր Հայքից, որոնք, 1829-1830 թվականներին հետևելով հայրենադավ գաղթի կազմակերպիչ Կարապետ եպիսկոպոսին, բնօրրանից արմատախիլ եղան: Հայտնի է, որ 1830 թ. ապագա օրալցիներին առաջնորդել են Հակոբ Կարախանյանն ու Նազարեթ Նազարեթյանցը[1]: Նրանք նախ կանգ են առնում Ծալա գյուղի մոտ՝ Ծալայի տյուզ վայրում, ապա որոշում են հիմնել ներկայիս գյուղը[2]:

**Ազգատոհմեր.** ներկայիս բնակիչներն ավանդաբար հիշում են նորահիմն գյուղում հաստատված առաջին ազգատոհմերին՝ Ավետիսենց, Բաբոյենց, Գրիգորենց, Խաչոյենց, Կիրակոսենց, Հովսեփենց, Մալխասենց, Նազարեթենց, Սահակենց, Սիմոնենց, Տիրացենց և Սրապենց[3]:

*Վիճակագրություն.* ԺԹ-Ի դարերից մեզ հասած վիճակագրական տվյալների համադրումը ցույց է տալիս, որ Օրալը նշյալ ողջ ժամանակահատվածում մշտապես եղել է սակավաբնակ: Երևույթ, որն անշուշտ պայմանավորված էր լեռնային գյուղից թեև քիչ, սակայն անընդմեջ առկա արտագաղթով.

| *տարեթիվ* | *տուն* | *արական* | *իգական* | *միասին* |
|---|---|---|---|---|
| 1840[4] | | 30 | 27 | 57 |
| 1853[5] | | 56 | 53 | 109 |

1 **Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 145:

2 Նշվ. աշխ., էջ 145-146:

3 Նշվ. աշխ., էջ 145: Ի դեպ, ըստ Հ. Հակոբյանի՝ ներկայիս գյուղի բնակիչներն իբր գաղթել են Կարին գավառի Օրալ գյուղից, մինչդեռ այդ անվամբ գյուղ (նաև Արալ կամ Առալ անուններով) ոչ միայն Կարին գավառում, այլ նաև ողջ Բարձր Հայքում գոյություն չի ունեցել:

4 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 4:

5 ՀԱԴ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 37-38:

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1854[6] | | 55 | 53 | 108 |
| 1857[7] | | 42 | 42 | 84 |
| 1860[8] | | 36 | 34 | 70 |
| 1861[9] | | 42 | 37 | 79 |
| 1862[10] | | 42 | 36 | 78 |
| 1863[11] | | 35 | 33 | 68 |
| 1864[12] | | 37 | 33 | 70 |
| 1865[13] | | 41 | 36 | 77 |
| 1866[14] | 8 | 42 | 38 | 80 |
| 1867[15] | 9 | 39 | 36 | 75 |
| 1868[16] | 9 | 37 | 36 | 73 |
| 1869[17] | 9 | 41 | 39 | 80 |
| 1870[18] | 9 | 40 | 42 | 82 |
| 1871[19] | | 40 | 42 | 82 |
| 1872[20] | | 54 | 48 | 102 |
| 1873[21] | | 64 | 48 | 112 |
